



ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ ЯЗЫКОВ И СОЦИАЛЬНЫХ НАУК
ИМЕНИ В. БРЮСОВА
YEREVAN "BRYUSOV" STATE UNIVERSITY OF
LANGUAGES AND SOCIAL SCIENCES

ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ЯЗЫКОВ И
СОЦИАЛЬНЫХ НАУК ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF YEREVAN "BRYUSOV" STATE UNIVERSITY OF LANGUAGES AND
SOCIAL SCIENCES

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ФИЛОЛОГИЯ
PHILOLOGY

Լեզվաբանություն
Лингвистика
Linguistics

1(32)

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2015

Բանբերը հրատարակվում է տարեկան երկու անգամ ԵՊԼՀ գիտական խորհրդի որոշմամբ:

Вестник издается два раза в год по решению ученого совета ЕГУЯСН.

Bulletin is published twice a year by the decision of YSULS Scientific Council.

Խմբագրական խորհուրդ՝

<i>Գայանե Գասպարյան</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Լուսինե Ֆլջյան</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Կառլեն Միրումյան</i>	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Աիրա Թոփուզյան</i>	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խմբագրական կազմ՝

<i>Գայանե Գասպարյան</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Լուսինե Ֆլջյան</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Լիլիթ Արզումանյան</i>	Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Դիանա Համբարձումյան</i>	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
<i>Գայանե Գևորգյան</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Գայանե Եղիազարյան</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Նարինե Հովհաննիսյան</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Նաիրա Մանուկյան</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Էլլա Ղազարյան</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
<i>Լևոն Մարկոսյան</i>	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Տեխնիկական խմբագիր՝ Հասմիկ Փիլավջյան

Редакционный совет:

Гаяне Гаспарян, доктор филологических наук, профессор
Лусине Флджян, доктор филологических наук, профессор
Карлен Мирумян, доктор философских наук, профессор
Аида Топузян, доктор педагогических наук, профессор

Редакционная коллегия:

Гаяне Гаспарян, доктор филологических наук, профессор
Лусине Флджян, доктор филологических наук, профессор
Лилит Арзуманян, доктор филологических наук, профессор
Диана Амбардзумян, доктор филологических наук, профессор
Гаяне Геворгян, кандидат филологических наук, доцент
Гаяне Егиазарян, кандидат филологических наук, доцент
Нарине Оганнесян, кандидат филологических наук, доцент
Наира Манукян, кандидат филологических наук, доцент
Элла Казарян, кандидат филологических наук, доцент
Левон Маркосян, кандидат филологических наук, доцент

Технический редактор: *Асмик Пилавджян*

Editorial Council:

Gayane Gasparyan, Doctor of Sciences (Philology), Professor
Lusine Fljyan, Doctor of Sciences (Philology), Professor
Karlen Mirumyan, Doctor of Sciences (Philosophy), Professor
Aida Topuzyan, Doctor of Sciences (Pedagogy), Professor

Editorial Board:

Gayane Gasparyan, Doctor of Sciences (Philology), Professor
Lusine Fljyan, Doctor of Sciences (Philology), Professor
Lilit Arzumanyan, Doctor of Sciences (Philology), Professor
Diana Hambarzumyan, Doctor of Sciences (Philology), Professor
Gayane Gevorgyan, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Gayane Yeghiazaryan, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Narine Hovhannisyan, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Naira Manukyan, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Ella Ghazaryan, Candidate of Sciences (Philology), Associate Professor
Levon Markosyan, Candidate of Sciences (Philology), Associate Professor

Technical Editor: *Hasmik Pilavjyan*

Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվափոխարկագիտական համալսարանի: Բանասիրություն, Լեզվաբանություն: 1(32) – Երևան, Լինգվա, 2015, 418 էջ
Вестник Ереванского государственного университета языков и социальных наук имени В. Брюсова. Филология, Лингвистика. 1(32) – Ереван, Лингва, 2015, 418 с.
Bulletin of Yerevan “Bryusov” State University of Languages and Social Sciences, Philology, Linguistics 1(32) – Yerevan, Lingva, 2015, 418 pages

ISSN 1829-3107

© Լինգվա, 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

СОДЕРЖАНИЕ

CONTENTS

ԴԻԱՆԱ ԱԴԻԿՅԱՆ	Ոճական որոշ ֆիգուրների վերլուծությունը՝ ըստ Չ. Դիքենսի «Օլիվեր Թվիստ» վեպի	
ДИАНА АДИКЯН	Анализ некоторых стилистических фигур на основе романа Ч. Дикенса «Оливер Твист»	14
DIANA ADIKYAN	The analysis of some stylistic figures based on the novel “Oliver Twist” by Ch. Dickens	
ԴԻԱՆԱ ԱԴԻԿՅԱՆ	Հասկացությունների տեսական ըմբռնումներն ու նախատիպային ձևերը և դրանց դրսևորումները գեղարվեստական խոսքում	
ДИАНА АДИКЯН	Теоретическое восприятие концептов, их архетипические формы и проявление в художественной литературе	23
DIANA ADIKYAN	Theoretical perceptions of concepts, their archetypal forms and manifestation in fiction	
ՍՎԵՏԼԱՆԱ ԱԶԻԶՅԱՆ	Անգլերենի ըղձական ներկայի և հայերենի ըղձական ապառնիի զուգահրական նկարագիրը	
СВЕТЛАНА АЗИЗЯН	Сравнительный анализ английского subjunctive present и армянского ըղձական ապառնի	32
SVETLANA AZIZYAN	Semantic, structural and functional peculiarities of the English subjunctive present and Armenian ըղձական ապառնի	
ՄԱՆԱՆ ԱԴԱԲԵԿՅԱՆ	Բազմախոսությունը որպես հաղորդակցման ձև և դրա կարգավիճակը	
МАНАН АГАБЕКЯН	Полилог как форма коммуникации и его статус	45
MANAN AGHABEKYAN	Polylogue as a form of communication and its status	

ՍՈՆՅԱ ԱՊՐԵՍՈՎԱ	Կերպարանափոխության մոտիվը Ֆ.Կաֆկայի և Ֆ.Ռոթի ստեղծագործություններում («Կերպարանափոխություն» նովելի և «Կուրծքը» վիպակի օրինակով)	
СОНЯ АПРЕСОВА	Мотив превращения в произведениях Ф.Кафки и Ф.Рота (на примере новеллы «Превращение» и повести «Грудь»)	57
SONYA APRESOVA	Motif of transformation in the works of F. Kafka and Ph. Roth (on the example of "The Metamorphosis" and "The Breast")	
ԱՆԱՇԻՏ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ	<<Ուրախություն>> իմաստային դաշտի միջմշակության վերլուծությունը անգլերենում և հայերենում	
АНАИТ АЛАВЕРДЯН	Лингво-культурологический анализ семантического поля “радость” в английском и армянском языках	64
ANAHIT ALAVERDYAN	A cross – cultural survey of the semantic field of JOY in English and Armenian	
ԼԻԼԻԹ ԲԱԴԱԼՅԱՆ	<<Պատերազմ>> հասկացության իրացումը փոխաբերական կաղապարներում (անգլերեն և հայերեն քաղաքական ելույթների և լրագրային հոդվածների նյութի հիման վրա)	
ЛИЛИТ БАДАЛЯН	Реализация концепта <i>война</i> в метафорических моделях (на материале английских и армянских политических речей и газетных статей)	77
LILIT BADALYAN	The realization of the concept <i>War</i> in metaphoric models (on the material of English and Armenian political speeches and newspaper articles)	
ՍԵԴԱ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ	Առոգաբանական փոխաբերականացման բնութագիրը կինոպատումներում	
СЕДА БАГДАСАРЯН	Тембральная метафоризация в кино нарративах	94
SEDA BAGDASARIAN	Timbral metaphorisation in film narratives	

ՍԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	Թեմա -ռեմատիկ հարաբերությունների առոգաբանական ցուցիչները գեղարվեստական խոսույթում Просодические индикаторы тематических отношений в художественном дискурсе (контрастивный анализ)	102
СЕДА БАГДАСАРЯН		
SEDA BAGDASARIAN	Syntax-intonation interface in English and Armenian (on the basis of fictional texts)	
ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ	Նորաբանությունների իմաստային դաշտի և ձևաբանության վերլուծությունը անգլալեզու առցանց լրագրային հոդվածներում Анализ семантического поля и морфологии неологизмов в английских виртуальных газетных статьях	118
ГАЯАНЕ БАРСЕГЯН		
GAYANE BARSEGHYAN	The Analysis of the Semantic Field and Morphology of Neologisms in English Virtual Newspaper Articles	
ՔՐԻՍՏԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՋԵՄՄԱ ՍԱՖԱՐՅԱՆ	Առևտրային վեբ տեքստերի կառուցվածքային հիմնատիպերը (forever21.com և charlotterusse.com ամերիկյան հագուստի կայքերի հիման վրա) Основополагающие проблемы структурирования электронной торговой платформы (на материале коммерческих сайтов forever21.com и charlotterusse.com)	126
КРИСТИНЕ ГРИГОРЯН ДЖЕММА САФАРЯН		
CHRISTINE GRIGORYAN JEMMA SAFARYAN	Fundamental problems of structuring electronic trading platforms (based on the American trade sites forever21.com and charlotterusse.com)	

ՄԱՐԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲԱԴՐԱՄՅԱՆ	Իսպաներենի որոշ դարձվածային միավորների ծագման պատմական ակնարկ Исторический экскурс к истокам возникновения некоторых фразеологизмов испанского языка A historical review of the origin of some phraseological units in Spanish	137
МАРИНА ГРИГОРЯН МАРГАРИТА БАГРАМЯН		
MARINA GRIGORYAN MARGARITA BAGHRAMYAN		
ԿԱՐԻՆԵ ԳՈՒԼԱՆՅԱՆ	Ջ. Ֆաուլզի «Դանիել Մարտին» վեպի պոետիկայի որոշ առանձնահատկություններ Некоторые особенности поэтики романа Д. Фаулза «Дэниел Мартин» Some peculiarities of poetics in J. Fowles' novel «Daniel Martin»	146
КАРИНЕ ГУЛАНЯН KARINE GULANYAN		
ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ	Քերականական բազմիմաստության դրսևորումները հայերենում Проявления грамматической полисемии в армянском языке Grammatical polysemy in the tense and mood system of Armenian language	152
ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ	Խիղճ հասկացության լեզվամշակութային որոշ վերացարկումներ անգլերենում, ռուսերենում և հայերենում Некоторые лингво-культурные абстракции концепта <i>совесть</i> в английском, русском и армянском языках Some lingvo-cultural abstractions of <i>conscience</i> in English, Russian and Armenian	159
ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԲԵԼԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	Վրեժ հասկացության լեզվականացման առանձնահատկությունները գեղարվեստական տեքստում Лингвистические особенности актуализации понятия <i>месть</i> в литературном тексте The peculiarities of lexicalization of the	165
ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԲԵԼԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ GAYANE YEGHIAZARYAN		

BELA MARGARYAN	notion <i>revenge</i> in fiction	
ՀԱՍՄԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ	Սահմանի խնդիրը Ու. Էկոյի «Վարդի անունը» վեպում	
АСМИК ЕГИАЗАРЯН	Проблема границы в романе У. Эко «Имя розы»	175
HASMIK YEGHIAZARYAN	The problem of the borderline in the novel by U. Eco «The name of the rose»	
ԱՆՆԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ	“Ser” և “estar” բայերի գործածությունն ու արժեքը և դրանց թարգմանությունը անգլերենում	
АННА ТУМАСЯН ЛУСИНЕ КАЗАРЯН	Значение и использование глаголов “ser” и “estar” и их перевод на английский	181
ANNA TUMASYAN LUSINE GHAZARYAN	Value and usages of the verbs “ser” and “estar” and their translation into English	
ՍՈՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ	Ցեղասպանության ճանաչման խոսույթային ռազմավարությունները (ԱՄՆ պաշտոնական ապրիլյան ճորայան խոսույթի հիման վրա)	
СОНА АКОБЯН	Дискурсивные стратегии принятия геноцида (на базе официального дискурса США 24-го апреля)	193
SONA HAKOBYAN	Discursive strategies of genocide recognition (based on the USA official discourse on april 24)	
ՍՈՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ	Իրադարձությունները որպես քերականական օբյեկտներ (ԱՄՆ քաղաքական խոսույթում ներկայացված 1915թ. Իրադարձությունների լեզվական ուսումնասիրություն)	
СОНА АКОБЯН	События как грамматические объекты (лингвистические изучения событий 1915 года, представленные в американском политическом дискурсе)	206
SONA HAKOBYAN	Events as grammatical objects (linguistic study of the 1915 events represented in the American political discourse)	

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	«Շուն» հասկացույթի ճանաչողական և կերպարասխեմատիկ արտապատկերումը անգլոամերիկյան քաղաքական խոսույթում Концептуальная и образно-схематическая изображения концепта 'собака' в американском и британском политическом дискурсе Conceptual and image-schematic mapping of the concept “dog” in American and British discourse	220
АНИ АРУТЮНЯН		
ANI HARUTYUNYAN		
ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՌԱՖԻԿ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ	Պատճառականությունը որպես պատումակառուցման միջոց դատալսման բացման ելույթներում Казуативность как средство нарративизации топоса подсудимого Causativity as a narrativization mechanism in trials	230
НАРИНЕ ОГАННЕСЯН РАФИК САНТРОСЯН NARINE HOVHANNISYAN RAFIK SANTROSYAN		
ՖՐՈՒՆԶԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԲԵԼԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ	Գոյականի թվային ենթակարգերի կառուցվածքային գործառական հարաբերակցությունները ժամանակակից իտալերենում, հայերենում , անգլերենում և ռուսերենում Структурно-семантические особенности категории числа имени существительного в итальянском, армянском, английском и русском языках Semantic-structural characteristics of the category of number of nouns in Armenian, Italian, Russian and English	240
ФРУНЗЕ ОГАННЕСЯН БЕЛА МАРГАРЯН		
FRUNZE HOVHANNISYAN BELA MARGARYAN		

ՖՐՈՆԶԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍՈՆԱ ԱՎԱԳՅԱՆ	Սննդանուն պարունակող դարձվածքների իմաստագործառական առանձնահատկությունները ժամանակակից իտալերենում և արդի արևելահայերենում	
ФРУНЗЕ ОГАННЕСЯН СОНА АВАГЯН	Семантико- функциональные особенности фразеологизмов с <<пищевым>> компонентом в итальянском и армянском языках	251
FRUNZE HOVHANNISYAN SONA AVAGYAN	The semantic-functional peculiarities of food idioms in Italian and Armenian	
ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Գերմաներենի doch եղանակավորող մասնիկի իմաստագործառական առանձնահատկությունները և դրանց արտահայտման միջոցները հայերենում	
КАРИНЕ ОГАНЕСЯН	Семантико-функциональные особенности модальной частицы doch и возможные варианты ее перевода	259
KARINE HOVHANNISYAN	The semantic and the functional characteristics of the doch MP and possible ways of its translation	
ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ	Աշխատատեղի հայտարարությունների գործառույթները տեքստի տիպաբանության համակարգում	
АСМИК КАЗАРЯН	Функции текста “Объявления о приеме на работу” в системе типологии текстов	271
HASMIK GHAZARYAN	Functions of the text “Recruitment advertisements” in the system of text typology	
ԷԼԻԶԱ ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Նախածանցավոր կամ բարդ բայեր. դրաց կառուցվածքն ու գործառույթները գերմաներենում և հայերենում	
ЭЛИЗА КАЗАРЯН СОНА АРУТЮНЯН	Префиксальные или сложные глаголы: структура и функции в немецком и армянском языках	281
ELIZA GHAZARYAN SONA HARUTYUNYAN	Prefixal verbs or complex verbs: structure and functions in German and Armenian	

ԷԼԻԶԱ ՂԱԶԱՐՅԱՆ ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ	Heim/Օջախ հասկացույթի լեզվական առկայացման միջոցների զուգահրոթյունը գերմաներենում և հայերենում	
ЭЛИЗА КАЗАРЯН СИРАНУШ ПАПОЯН	Сопоставительный анализ концепта «очаг» в немецком и армянском языках	298
ELIZA GHAZARYAN SIRANUSH PAPOYAN	Contrastive linguistic analysis of the concept “Home” in German and Armenian.	
ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱԼԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ	Ճանաչողական փոխաբերության գիտական հայեցակետերը բժշկագիտության ոլորտում	
СВЕТЛАНА МАРКАРЯН АЛИНА ПЕТРОСЯН SVETLANA MARGARYAN ALINA PETROSYAN	Научные концепции когнитивной метафоры в медицинской сфере	312
SCIENTIFIC CONCEPTIONS OF COGNITIVE METAPHOR IN THE MEDICAL SPHERE		
ՆԱԻՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	Բառիմաստային և բառաոճական տեղաշարժերի առանձնահատկությունները գեղարվեստական թարգմանությունում (Օ. Հենրիի պատմվածքների նյութի հիման վրա)	
НАИРА МАРТИРОСЯН	Лексико-семантические и стилистические особенности трансформаций в литературном переводе (на материале рассказов О. Генри)	319
NAIRA MARTIROSYAN	The characteristic features of lexico-semantic and lexico-stylistic transformations in translating fiction (on the material of short stories by O. Henry)	
ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ	Իտալերենի արվեստի եզր պարունակող դարձվածային միավորների և դրանց հայերեն համարժեքների իմաստագործառական առանձնահատկությունները	
АНАИТ МКРЯН	Итальянские фразеологические единицы с элементом искусства и семантические и функциональные особенности их эквивалентов в армянском языке	325

ANAHIT MKRYAN	The semantic-functional peculiarities of the idioms containing art terms in Italian and Armenian	
ԱՐԱՄ ՄԿՐՅԱՆ	Կազմաբանական բառերով կայուն արտահայտությունների իմաստագործառական առանձնահատկությունները արվեստագիտության տերմինաբանության մեջ (իտալերենի և հայերենի նյութի հիման վրա)	
ԱՐԱՄ ՄԿՐՅԱՆ	Семантические и функциональные особенности фразеологических единиц с соматическим компонентом в лексике искусствоведения (на материале итальянского и армянского языков)	335
ԱՐԱՄ ՄԿՐՅԱՆ	The semantic-functional peculiarities of the idioms containing somatic components in art terminology (on the material of Italian and Armenian)	
ԱՆԻ ԶԱՆԻԿՅԱՆ	Օրեստեսի միթոսի վերաիմաստավորումը ժան-ժակ Վարուժանի «Քաղաքը բլրի բարձունքում» դրամայում	
ԱՆԻ ԴՋԱՆԻԿՅԱՆ	Переосмысление мифа об оресте в драме «Город на вершине холма» Ж.-Ж.Варужана	346
ԱՆԻ ԴՋԱՆԻԿՅԱՆ	Reinterpretation of the myth of orestes in "City on the hilltop" by Jean- Jacques Varoujean	
ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈՂԻԿՅԱՆ ԱՆՆԱ ՇԱՀԲԱԶՅԱՆ КРИСТИНЕ СОГИКЯН АННА ШАХБАЗЯН KRISTINE SOGHIKYAN ANNA SHAHBAZYAN	Թարգմանության տեսության փիլիսոփայական հայեցակարգը Философские аспекты теории перевода Philosophical aspects of translation theory	355
ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈՂԻԿՅԱՆ ՆԱՐԻՆԵ ԳԻՇՅԱՆ КРИСТИНЕ СОГИКЯН НАРИНЕ ГИШЯН	Համարժեքությունը որպես թարգմանության առանցքային խնդիր Эквивалентность как центральная проблема перевода	371

KRISTINE SOGHIKYAN NARINE GISHYAN	Equivalence as a central problem in translation theory	
ԼՈՒՍԻՆԵ ՎԱՆՅԱՆ	Ռիթմիկ կառույցների քերականական կազմը գիտական արձակում (զուգադրական վերլուծություն)	
ЛУСИНЕ ВАНЯН	О соотношении ритмико-структурной организации и ее грамматического состава в научном дискурсе (контрастивный анализ)	380
LUSINE VANYAN	On the correlation of rhythmic and grammatical structure in academic discourse (a contrastive study)	
ԿԱՐԵՆ ՎԵԼՅԱՆ	Հանրալեզվաբանական տիպաբանության շուրջ: անգլերենի և հայերենի գենդերային բարբառների շարահյուսական հայեցակերպը	
КАРЕН ВЕЛЯН	К социолингвистической типологии: синтаксические особенности гендерных диалектов в английском и армянском языках	390
KAREN VELYAN	On sociolinguistic typology: syntactic features of gender dialects in English and Armenian	
ՍՈՒՍԱՆՆԱ ՏԵՐ-ԱՎԱԳՅԱՆ	Խորհրդանիշների մեկնաբանությունը Չարլզ Սանդերս Փիրսի և Ֆերդինանդ դը Սոսյուրի կողմից առաջադրված նշանային մոդելների շրջանակներում	
СУСАННА ТЕР-АВАГЯН	Интерпретация символов в рамках знаковых моделей предложенных Чарльзом Сандерсом Пирсом и Фердинаном де Соссюром	401
SUSANNA TER-AVAGYAN	The Interpretation of Symbols within the Framework of the Sign Models suggested by Charles Sanders Peirce and Ferdinand de Saussure	
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ INFORMATION ABOUT THE AUTHORS		409

**ՈՃԱԿԱՆ ՈՐՈՇ ՖԻԳՈՒՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝
ԸՍՏ 2. ԴԻՔԵՆՍԻ “ՕԼԻՎԵՐ ԹՎԻՍ” ՎԵՊԻ**

ԴԻԱՆԱ ԱԴԻԿՅԱՆ

Հիմնաբառեր՝ հերմենևտիկա, գործաբանական նշանակություն, գործառույթ, պերլոկուտիվ, հոնտորական հարց, դարձույթ

Արդի շրջանում վերանում են գեղարվեստական տեքստի զուտ լեզվաբանական կամ զուտ գրականագիտական ընկալումների շրջանակները, քանի որ այդ շրջանակները ակնհայտորեն <<մտնում են>> մեկ և միևնույն մի լայն շրջանակի մեջ, և տեքստի ընկալման զուտ լեզվաբանական կամ զուտ գրականագիտական ընկալումների միջև, պարզվում է, չկա որևէ <<չինական պարիսպ>>, ընդհակառակը, այդ ընկալումները հարկ է դիտարկել իրենց փոխադարձ կապվածության և ամբողջականության մեջ: Ինչպես նշում է տեքստի վերլուծության լեզվաբանաստեղծական մեթոդի ակնառու ներկայացուցիչներից Ս. Ք. Գասպարյանը՝ տեքստը պետք է վերլուծել ոչ թե մեկուսացված ձևով՝ ինքն իր մեջ կամ ինքն իր համար, իբրև ինքնաբավ մի կառույց, այլ իբրև մարդկային էության ծալքերը ներթափանցող մի այնպիսի միջոց, որը բանասերին հնարավորություն է ընձեռում տեքստը ենթարկել հերմենևտիկական մշակման՝ բառիս ամենալայն իմաստով [Гаспарян 2008:5]:

Տեքստի, բառի հերմենևտիկ իմաստների ապակողավորման միջոցներից մեկն էլ դրանց գործաբանական-գործառույթային նշանակությունների բացահայտումն ու արժեվորումն է՝ գործաբանական ոճագիտության լույսի ներքո, որով առանցքային դեր է հատկացվում հեղինակ-տեքստ-հասցեատեր եռամիասնությանը և տեքստի հաղորդակցական-գործաբանական նպատակաուղղվածությանը, քանի որ, յուրաքանչյուր տեքստ (ուստի և յուրաքանչյուր տեքստային միավոր) նախևառաջ ունի հաղորդակցական նշանակություն և, ինչպես նշվում է գործաբանական ոճագիտությանը վերաբերող արձարծումներում, հարկ է տեքստային լեզվաոճական միջոցները (օրինակ՝ փոխաբերությունները) բառերի ոլորտից տեղափոխել մտածողության ու գործողությունների ոլորտ կամ ընկալել այդպես՝ իբրև շարժիչ ուժեր կամ ազդակներ [Lakoff, Johnson 1980]:

Կարևորվում է լսողի, ընթերցողի վրա ներգործելու պարագան, լեզվական տարրերի գործաբանական – արտահայտչական կողմի նշանակցումը դրանց

իրական և քերականական բովանդակության հետ, թիրախ ունենալով ներգործման գործառույթի իրականացումը մարդ-անհատի և հասարակության մեջ [Остин 1986:22-130, Сазонова 1983:218-229]:

Այս առումով ելակետային նշանակություն ունի Ջ.Սերլի դիտարկումը, որ յուրաքանչյուր ասույթ օժտված լինելով իլոկուտիվ՝ խոսողական կատարողական ուժով՝ կարող է օգտագործվել տարբեր հաղորդակցական նպատակներով [Searle 1969]:

Ինչպես նշում են հետազոտողները՝ հաղորդակցման հասնելու առաջին եղանակը խոսքն ընթերցողի կամ լսողի/ընկալողի հոգևոր դաշտում ցանկալի շարժ առաջացնելն է: Դրանում է բառախմբերի (գործաբանական մակարդակում՝ ասույթների) դրանց նշանակությունն ու նպատակադրումը՝ այսինքն, գործաբանական ոճագիտության եզրութավորմամբ ասած՝ խոսքային ակտի կանխամիտումը՝ իլոկուտիվ կամ խոսողական – կատարողական շարժընթացի հարուցումը [Austin 1962, Searle 1969, Levinson 1983, տես Հարությունյան 2008:16-17] :

Գործաբանական ոճագիտությունը միտված է պատկերավորման և լեզվաարտահայտչական միջոցների առավել համապարփակ և համակողմանի ուսումնասիրության, հիմք ունենալով այն ճշմարիտ կանխադրույթը, որ դրանք, դիցուք՝ փոխաբերությունները, կարող են ոչ միայն գիտատեսական նշանակություն ունենալ, այլև վերհանել սոցիալական կյանքի տարբեր դրսևորումները, այլև ներազդել դրանց առաջացման ու զարգացման վրա [Lakoff, Johnson 1980]:

Գործաբանական ոճագիտության տեսակետից քննարկելով թե՛ հին-դասական, թե՛ պոստպոստմոդեռնիստական գեղարվեստական տեքստերը, գալիս ենք այն եզրակացության, որ թե՛ այդ տեքստերը, թե՛ դրանց բաղադրիչ տարրերը (ինչպիսիք են փոխաբերությունը, համեմատությունը, մեղմասույթը, հեգնանքը, չափազանցությունը, հոետորական կամ ճարտասանական հարցը և այլն), պատկերավոր ասած, ավելին են, քան սոսկ տեքստային միավորները կամ դրանց բաղադրիչ տարրերը, քանզի դրանք լեզվաբանական կամ գրականագիտական բառարաններում ամփոփված մեռյալ հասկացություններ չեն, այլ ունեն կենդանի - հաղորդակցական ուժ, կարող են առաջացնել հոգևոր-բարոյագեղագիտական ու գաղափարական շարժումներ. դրանք կարող են դառնալ սոցիալական շարժընթացների ազդակ և մոտիվացնել այդ շարժընթացները, մարդկային - անհատական և հասարակական գիտակցությունն ուղղորդել դեպի այս կամ այն նպատակը:

Այդպիսի ուղղորդիչ, ազդակող նշանակություն են ունեցել (և ունեն) դասականների, ինչպես նաև պոստմոդեռնիստական գրականության

ներկայացուցիչների ստեղծագործությունները, գեղարվեստական արժեք ներկայացնող տեքստերը: Ինչպես նշվում է գրականագիտական - վերլուծական բնույթի աշխատություններում և գրականագիտական բառարաններում՝ նման տեքստերի համար բնորոշ են գեղագիտական, ճանաչողական և գաղափարական նշանակությունները, որոնք հանդես են գալիս իբրև մեկ-միասնական ասելիքի օրգանական և անանջատելի մասերը. ըստ այդմ՝ գեղարվեստական տեքստը չի կարող արժեք ներկայացնել, եթե բացակայում են այդ մասերը, կամ, նվազագույնը, այդ մասերից մեկն ու մեկը, քանի որ այն, ինչը գեղագիտական է՝ նաև ճանաչողական ու գաղափարական նշանակություն ունի, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է գեղարվեստական տեքստին, որի բաղադրիչները՝ գեղագիտականը, ճանաչողականը և գաղափարականը, իրենց մեջ կրում են հենց վերը նշված խոսքային ակտի կանխամիտումը՝ իլոկուտիվ ուժը՝ որոշակի շարժընթացի հարուցումը մարդ – անհատի և հասարակության մեջ [Чакобская 1986]:

Պետք է նշել, որ թեև գեղարվեստական լեզուն միշտ էլ, բոլոր դարաշրջաններում, հետամտել է նշյալ <<որոշակի շարժընթացի հարուցմանը>>, սակայն ինքը՝ լեզուն, որպես ուսումնասիրման օբյեկտ, կարծես անջատվել է իր ներգործուն ,շարժիչ ուժից այն առումով, որ լեզուն քննարկվել է հիմնականում իր քերականական՝ ձևաբանաշարահյուսական յուրահատկությունների սահմաններում, իսկ լեզվի ներգործուն և շարժիչ ուժի քննարկումը հիմնականում վերապահվել է գրականության տեսության, պոետիկայի բնագավառին, մինչդեռ այդ երկուսը իրականում կազմում են դիալեկտիկական մեկ ամբողջություն և որպես այդպիսին, պատասխանում են մի կարևորագույն խնդրի, որը Ս. Գասպարյանը դիպուկ կերպով հարցադրել է այսպես՝ ինչպես է լինում, որ ոճի վերլուծությունից անցում է կատարվում դեպի երկի գաղափարային վերլուծությունը, և ինքն էլ պատասխանում է այս հարցադրմանը՝ նշելով, որ այդ հայեցակերպի միջև եղած կապը ի հայտ է բերվում լեզվաբանաստեղծական վերլուծության միջոցով [Гаспарян 2008: 40]: Սա իսկապես կարևորագույն դիտարկում է ,որ պատասխանում է շատ հարցերի և, մասնավորապես, վերհանում լեզվի, ոճի և ստեղծագործության գաղափարի միջև եղած փոխադարձ կապը: Եթե գրողի կիրառած պատկերավորման միջոցները չեն դիտարկվում այդ փոխադարձ կապի, առնչության համատեքստում, ապա ունայն են լեզվի, խոսքի պրագմատիկ նշանակության մասին քննարկումները, քանի որ միայն վերոնշյալ փոխապայմանավորված, ամբողջական խոսքն է, որ կարող է ունենալ որոշակի ներգործություն ընթերցողի վրա և նրա մեջ հարուցել որոշակի գաղափարներ ու զգացումներ առանց այդ փոխադարձ կապի առկայության՝ խոսքը կորցնում է իր իլոկուտիվ ուժը:

Ասվածը կարող ենք դիտարկել տարժամանակյա կտրվածքով՝ թե՛ դասական, թե՛ նորագույն շրջանի գեղարվեստական տեքստերի հիման վրա՝ ի սկզբանե նշելով, որ լեզվի գործաբանական նշանակությունը ամենաանմիջական և ամենաթափանցիկ կերպով ի հայտ է գալիս լեզվաարտահայտչական այնպիսի միջոցներով, ինչպիսիք են խոսքին հուզական, զգացական բնույթ հաղորդող միջոցները, արտահայտչականությամբ համակված դարձվածքները, դարձույթներն ու բանադարձումները [Խլղաթյան 1976: 65]՝ փոխաբերություն, փոխանունություն, համեմատություն, նվազատույժ, շրջատույժ և այլն: Հատուկ նշանակություն ունեն ոճական կամ շարահյուսական ֆիգուրները՝ (լատ. figura-պատկեր, տեսակ) ելևէջավորումը, հռետորական (ճարտասանական) հարցը, բացականչությունը, աստիճանավորումը, օքսիմորոմը և այլն (Ջրբաշյան , Մախչանյան), որոնք գեղարվեստական տեքստում ոճական գործառույթ իրականացնելով՝ վեր են ածվում գաղափարական նշանակություն ունեցող կորավորումների և երևան են բերում ոճական ու գաղափարական հայեցակերպերի միջև եղած փոխադարձ կապերը: Ասվածը փաստարկելու համար կարելի է համապատասխան օրինակներ բերել գեղարվեստական ամենատարբեր ստեղծագործություններից, ընդ որում՝ այնպիսիներից, որոնք իրենց գաղափարագեղագիտական ու բովանդակային որոշակի առանձնահատկություններից ելնելով՝ հագեցած են հուզական, զգացմունքային նշանակություն ունեցող ոճական ֆիգուրներով:

Այդպիսի ստեղծագործություններից են 2. Դիքենսի կենցաղագրական բնույթի վեպերը՝ «Հոմբի և որդին», «Պիկվիլյան ակումբի հետմահվան հուշերը», «Օլիվեր Թվիստի արկածները», «Մեր ընդհանուր բարեկամը» և այլն, որոնք, ըստ Ա. Լունաչարսկու բնութագրման՝ իրենց գաղափարական ներքին ուղղվածությամբ ««դառնում են Անգլիային ուղղված խորապես գեղարվեստական, կյանքով լի, հուզիչ մանիֆեստներ»» [Լունաչարսկի 1948: II]: Այդ վեպերը գրված են մանկան անմիջականությամբ, դրանցում շատ են բացականչությունները, դիմումները, հռետորական հարցը և մյուս արտահայտչամիջոցները, որոնք ստեղծագործության համատեքստում լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդով քննարկելիս, ի հայտ են բերում այն իրողությունը, որ, դիցուք, հռետորական տվյալ հարցի մեջ իմանենտորեն մեկտեղվում են ոճական և գաղափարական նշանակությունները. գաղափարը ներթափանցված է ոճի մեջ, և ոճը պայմանավորված է գաղափարական ազդակումով: Բերենք օրինակներ հուզական բարձր լիցքով օժտված «Օլիվեր Թվիստի արկածները» վեպից:

Որք երեխան՝ Օլիվերը, ականատես է, թե ինչպես է <<հաղթանդամ ծերունի ջենտլմենը>>՝ <<մուտք գործում>> միստր Բրաունլոյի տունը և ձեռքին նարնջի մի փոքրիկ կտոր բռնած՝ դժգոհ ու ջղագրգիռ բացականչում.

“Look here! do you see this? Isn't it a most wonderful and extraordinary thing that I can't call at a man's house but I find a piece of this poor surgeon's friend on the staircase ? I've been lamed with orange –peel once, and I know orange-peel will be my death at last. It will, Sir: orange –peel will be my death or I'll be content to eat my own head, Sir! .”

[Dickens Ch. 1955:147]

<<Այստեղ նայե՛ք, տեսնում եք այս նարնջի կեճալը: Մի՞թե անչափ զարմանալի և տարօրինակ բան չէ, որ ես ում տունը որ այցելության գնամ, պետք է անպայման սանդուղքների վրա գտնեմ աղքատ վիրաբույժի այս բարեկամին: Նարնջի կեճալը եղավ պատճառը իմ կաղության և նարնջի կեճալից էլ մահանալու եմ վերջապես: Այո՛, սրբ, նարնջի կեճալից էլ մահանալու եմ: Եթե այդ ճիշտ չէ, ես իմ գլուխը կուտեմ, սրբ>>:

Այս հատվածում, որպես գործաբանական ակտի դրսևորումներ, աչքի են ընկնում <<նարնջի կեճալը>>, <<նարնջի կեճալից>> կրկնությունները, որոնք, լինելով սոցիալ-բարոյական <<լուրջ>> կարգավիճակի՝ ջենտլմենի լեզվաոճական “բացահայտիչները”, կոչված են ընթերցողի մոտ հարուցելու այն գաղափարը, որ այդ ջենտլմանական լրջությունն ուղղակի ծիծաղելի է և անլուրջ, ինչպես սանդղահարթակին թափված նարնջի կեղև, որի վրա սայթաքել է կամ կարող է սայթաքել <<ծերունի ջենտլմենը>>, որին, ով զվարճանք, մահվան երկյուղ է պատճառում նույնիսկ դեռ նետված “ նարնջի կեղևը”: Գրողը, այդպիսով, ոճական նշյալ ֆիգուրին՝ կրկնությունը, հաղորդում է գաղափարական <<ուղղվածություն>>՝ հող ստեղծելով հասարակական-սոցիալական <<լրջագույն>> կարգավիճակների նկատմամբ ընթերցողի երգիծական վերաբերմունքի, ծիծաղի համար: Իսկ այդ ծիծաղը, որը կարելի է մակդրավորել իբրև դիքենսյան, հաճախ անչար է, և ինչպես նշում է Ա.Լունաչարսկին՝ <<Ծիծաղը երբեմն մերկացնում է և խոցում, բայց երբեմն էլ այն մխիթարում է և հաշտեցնում դժվարին մղձավանջների հետ>> [Լունաչարսկի 1948: 7]:

Ահա այդպիսի մխիթարող, ապաքինող, քրիստոնեաբար ներող բնույթ ունի դիքենսյան հումորը:

Հաջորդ ոճական ֆիգուրը, որը բնորոշ է առհասարակ դիքենսյան արձակին, վերոնշյալ հատվածում առկա ճարտասանական , հռետորական հարցն է՝

“Look here! Do you see this? Isn't it a most wonderful and extraordinary thing that I can't call at a man's house but I find a piece of this poor surgeon's friend on the staircase?”

Անշուշտ, այստեղ զվարճալի է այն “պայքարը”, որ <<ծերունի ջենտլմենը>> մղում է <<նարնջի կեղևի>> դեմ՝ <<Մի՞թե անչափ զարմանալի և տարօրինակ բան չէ, որ ես ում տունը, որ այցելության գնամ, պետք է անպայման սանդուղքների վրա գտնեմ աղքատ վիրաբույժի այս բարեկամին>>: Նմանօրինակ ճարտասունական հարցերին բնորոշ է հաստատումը, այսինքն՝ այն, որ հարցն առաջադրողը ինքը նախապես գիտի՝ ինչն ինչոց է: Նա, այսպես ասած, հռետորություն է անում՝ հանուն հաստատման: Ուստի հռետորական հարցը համարվում է հաստատական(statement) ասույթ:

<<Նպատակ ունենալով ուժեղացնել խոսքի հուզական շեշտը,- նշում են ոճաբանները,- հռետորական հարցը հաճախ իր մեջ պարունակում է նաև պահանջվող պատասխանը>> [Զրբաշյան, Մախչանյան 1980: 191], ինչպես որ վերը նշված հատվածում է . <<ծերունի ջենտլմենը>> գիտի, ինչպես և ինքն է նշում, որ մահանալու է <<նարնջի կճեպից>>: Այստեղ՝ հարց ու պատասխանի այս գործընթացի մեջ երևակվում է Չ.Մորիսի(որը լեզվաբանության մեջ ներմուծել է pragmatics՝ գործաբանություն եզրը) ելակետային գաղափարը, որ գործաբանությունը ցույց է տալիս լեզվական նշանի և այն կիրառողի՝ խոսողի կամ մեկնաբանողի փոխհարաբերությունը (Моррис 1983): Հետագայում այս ելակետային գաղափարը զարգացվել է այլ լեզվաբանների կողմից՝ խոսքի գործառույթների համակարգում մասնավորապես կարևորելով հաղորդման և ներգործման գործառույթները [տե՛ս Чаковская 1986, Հարությունյան 2008: 35]: <<Պատահական չէ,-նշում է Գ.Ռ. Հարությունյանը,-որ վերջին տարիներին լեզվաոճաբանական հետադոտություններում ընդունված է զուգահեռ անցկացնել խոսքային ակտի և գեղարվեստական հաղորդակցման միջև: Սա պայմանավորված է նրանով, որ <<ինչպես ամենօրյա մարդկային հաղորդակցմանը, գեղարվեստական հաղորդակցմանը նույնպես հատուկ են այնպիսի գործաբանական պարամետրեր (չափորոշիչներ), ինչպիսիք են հեղինակի խոսքը, նրա հաղորդակցական նպատակաուղղվածությունը հասցեատիրոջը և վերջինիս հետ կապված պերլոկուտիվ էֆեկտը (գեղագիտական ներագդեցությունը)>> [Հարությունյան 2008: 28]:

“Օլիվերի” հերոսներից մեկը՝ Ֆեգինը, մյուսի՝ Բիլլի հետ խոսելիս, վերջինիս տարհամոզելու համար, դիմում է հռետորական հարցադրման.

“There now,Bill ,” remonstrated Fagin, eagerly catching at the word.”If it hadn't been for the girl ! Who but poor old Fagin was the means of your having such a handy girl about you?”

[Dickens Ch. 1955: 386]

–<<Այ՛, տեսնու՛մ ես,Բիլլ>>,-վրա բերեց Ֆեզինը,իսկույն կառչելով այդ բառերից: Դու ասում ես՝ <<եթե չլիներ այս աղջիկը>>: Իսկ ու՛մ միջոցով ձեռք բերեցիր այդ ճարպիկ ու խելացի աղջկան, եթե ոչ խեղճ Ֆեզինի>>:

[Դիքենս Չ. 1958: 320]

Այստեղ ուշագրավն այն է, որ <<խեղճ ծերուկ Ֆեզինը>> հարց է ուղղում Բիլլին և ինքն էլ պատասխանում է, որ այո, ինքը՝ ծերուկ Ֆեզինն է այդ խելացի աղջկան <<ձեռք բերել>> Բիլլի համար: Նաև ուշագրավ է այն, որ հոետորական այս հարցն իր բնույթով համոզական է (պերսուազիվ), ինչը հիմք է տալիս փաստելու, որ նման հոետորական հարցերը նախ կատարում են համոզական գործառույթ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դիկկենս Չ., Օլիվեր Թվիստի արկածները, Ե.,<<Հայպետերատ>>,1958:
2. Լունաչարսկի Ա., Առաջաբան Դիկկենս Չ.:Պիկվիկյան ակումբի հետմահվան հուշերը,Ե.,<<Հայպետերատ>> 1948,էջ 5-16:
3. Խլղաթյան Ֆ.Հ., Ոճաբանական տերմինների բառարան տեղեկատու,Ե.,<<Լոյս>>1976:
4. Հարությունյան Գ.Ռ., Պատկերավոր արտահայտչամիջոցները գործաբանական ոճագիտության լոյսի ներքո, Բ.գ.թ.ատենախոս., Ե.,2008:
5. Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան,Ե.,<<Լոյս>>,1980
6. Austin J.L., How to do things with words. Oxford. Clarendon Press,1962,pp.6-29.
7. Dickens Ch., The Adventures of Oliver Twist, M., 1955.
8. Lakoff G., Jonson M., Metaphors we live by. Chicago: University of Chicago Press, 1980.
9. Levinson S.G, -Pragmatics, Cambridge,1983.
- 10.Searle J.R, Speech Acts, an essay in the philosophy of language, London,1969.

11. Гаспарян С.К., Лингвопоэтика образного сравнения, Е., <<Лусакн>>, 2008.
12. Моррис Ч., Основания теории знаков. <<Семиотика>>, М., 1983, С.37-89.
13. Остин Дж.Л., Слова как действие. Новое в зарубежной лингвистике. Вып.17. Теория речевых актов, М., <<Прогресс>>, 1986, С.22-130.
14. Сазонова Т.А., Прагматическая направленность сложных слов в художественном тексте: Сборник научных трудов вып.215, М., 1983, С.218-229.
15. Чаковская М.С., Текст как сообщение и воздействие, М., МГУ, 1986.

ДИАНА АДИКЯН - АНАЛИЗ НЕКОТОРЫХ СТИЛИСТИЧЕСКИХ ФИГУР НА ОСНОВЕ РОМАНА Ч. ДИКЕНСА “ОЛИВЕР ТВИСТ”

Целью статьи является анализ некоторых стилистических особенностей. При анализе текста необходимо исследовать прагматико-практическое и функциональное значение. Текстовые, стилистические средства нужно воспринимать как импульс, которые направлены на реализацию различных целеустановок. Для текста типичными являются когнитивные, эстетические значения. Лингво-стилистические значения, использованные автором, должны быть рассмотрены посредством языкового стиля, иначе автор не может оказать должного влияния на читателя, и не будет проведен никакой прагматический анализ. Прагматическое средство языка может быть выявлено различными экспрессивными средствами.

DIANA ADIKYAN - THE ANALYSIS OF SOME STYLISTIC FIGURES BASED ON THE NOVEL “OLIVER TWIST” BY CH. DICKENS

The article deals with the analysis of some figures of speech. In the analysis of texts, it's very important to value the pragmatic, practical and functional meanings. One must accept the textual stylistic means as impulses,

which can acquire different communicative purposes. Aesthetic, cognitive and ideological meanings are typical of texts. The lingo-stylistic means used by authors must be revealed through the style of languages or creative idea, otherwise the authors can't have any impact on the readers, or no pragmatic analysis can be conducted. The pragmatic meaning of a language can be shown by different expressive means.

**ՀԱՍԿԱՑՈՒՅԹՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ՆԱԽԱՏԻՊԱՅԻՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ**

ԴԻԱՆԱ ԱԴԻԿՅԱՆ

Հիմնաբառեր՝ եզրույթ, գաղափարագեղագիտական ազդակ, իրականություն, արտեֆակտ, դարձվածք, գիտակարգ, գերհասկացույթ

Գեղարվեստական լեզվում առկա հասկացույթների լեզվաոճական ու լեզվաբանաստեղծական արժեվորման առումով շատ կարևոր է հասկացույթ եզրույթի իմաստային ընդգրկման շրջանակների ճշգրտումը՝ տեսական ըմբռնումների հիման վրա, ավանդական- սկզբնատիպային նշանակություն ունեցող հասկացույթների գեղարվեստական կիրարկումների գաղափարագեղագիտական ազդակների վերհանումը, ժամանակաշրջանի, գրողի աշխարհայացքի և մի շարք այլ գործոնների ազդեցությամբ տվյալ հասկացույթի ձեռքբերած իմաստային նոր երանգավորման և առնչանակության մատնանշումը:

Ինչպես նշվում է փիլիսոփայական հանրագիտարանային բառարանում, առանձին, եզակի առարկաների մեջ առկա է ինչ-որ ընդհանուր բան, որի հիման վրա էլ ծագում, ի հայտ է գալիս հասկացույթը, այսինքն՝ այդ ընդհանուրը բնորոշող անվանումը: Այլ խոսքով ասած՝ հասկացույթը հասկացության (հասկացությունների) վերացարկումն է, առարկայական նշանակության՝ նշանակալի անվանումը, որը ինչ-որ տեղ, փիլիսոփայական և տրամաբանական առումներով, հանդես է գալիս իբրև միտք, նշանակություն, իմաստ բառերի հոմանիշը: Ասվածն ավելի շոշափելի կդառնա, եթե բերենք կոնկրետ օրինակներ: Վերցնենք **հաց** հասկացույթը: Ակնհայտ է, որ այն հացի տարբեր տեսակների անվանումն է և իր մեջ վերացականորեն կրում է այդ ամենը: Հաց ասելով հասկանում ենք ոչ միայն առօրյա սեղանի հացն իր տարատեսակներով, այլև հացահատիկային բույսերը (ցորեն, գարի), աղացած ցորենի ու գարու ալյուրը, խմորը, սնունդն առհասարակ: Հայերենի դարձվածային միավորները, տալիս են **հաց** հասկացույթի իմաստային դրսևորման կերպերը՝ **<<հացով մարդ է, միասին հաց ենք կերել>>**, **<<Աստված օրհնի քո հացն ու ջուրը>>** և այլն: Բնականաբար, այստեղ հաց ասելով հասկացվում է ոչ միայն, ասենք, թխված ցորենհացը, այլև հացով դրսևորված ճաշի սեղանը, հյուրասիրությունը: Հացն այստեղ հանդես է գալիս փոխանվան դերով, երբ ամբողջ բազմազանությունից

(սեղանի վրա դրված ուտեստեղենից) վերցվում է, առանձնացվում մարդու կյանքի համար էական նշանակություն ունեցող առաջնային բարիքը՝ հացը: Կարելի է նույնիսկ ասել, որ հասկացոյթն ինչ-որ տեղ, իր լեզվաոճական դրսևորումներում նույնանում է փոխանունության կամ նրա տարատեսակներից մեկի՝ համըմբռման հետ (հունարեն synecdoche – միասին հասկացվել, ըմբռնվել). օրինակ, <<Նա իմ ընկերն է, ես նրա հետ շատ եմ հաց կերել>> արտահայտության մեջ, որտեղ մասը (հացը) գործածվել է ամբողջի (այն ամենը, որ դրվել է սեղանի վրա) փոխարեն:

Հասկացոյթները ինչ-որ մի տեղ համեմատության եզրեր են ի հայտ բերում համընդհանրությունների (լատիներեն *universalis* – ընդհանուր)՝ ընդհանուր հասկացությունների հետ, որոնց ընկալումը, փիլիսոփայական առումով, առնչվում է որոշ ելակետային հարցերի հետ՝ թե ինչպե՛ս են միմյանց փոխհարաբերվում մտածողությունը և իրականությունը, ընդհանուրը և մասնակին, ինչ տեսքով գոյություն ունի իդեալականը (հիմք ունենալով պլատոնյան տեսությունը՝ իդեաների՝ մասին և արիստոտելյան հայեցակերպ ձևի և մատերիայի վերաբերյալ): Սակայն հասկացոյթների մասին արդի ըմբռնումներն այսօր առավելապես առնչվում են ոչ թե պլատոնյան իդեաների՝ կամ դրանց մարմնավորումների (զգայելի առարկաների) մասին գաղափարների, այլ հասկացոյթների ընդհանուր և վերացական, դրանց առասպելական-կրոնաբարոյական, ազգա-լեզվամշակութային, իրավաքաղաքական, սոցիալական և այլ գործոնների հետ: Ընդհանուր առմամբ՝ հասկացոյթները դիտարկվում են իբրև ազգամշակութային կյանքի արտահայտիչներ կամ բաղադրիչներ: Ինչպես ճիշտ նկատում է Ա. Մաթևոսյանը՝ վկայակոչելով Հ. Բաղդասարյանին, մշակութային բաղադրիչի մեջ են մտնում ոչ միայն, ասենք, լեզվի ձևաբանաշարահյուսական առանձնահատկությունները, այլև՝ տվյալ լեզվին բնորոշ հատկանվան (անձնանուն, տեղանուն), էթնիկական ու ազգագրական յուրահատուկ գծերը, գեղագիտական ըմբռնումների ու պատկերավորման՝ սերնդից սերունդ փոխանցվող պատկերացումները, սոցիալպատմական փոփոխությունները, գիտական ու բանահյուսական ընկալումները, որոնք, այսպես թե այնպես, տեղ են գտնում գեղարվեստական ցանկացած երկում, մտնում համատեքստի մեջ՝ Ասվածի վառ օրինակներից կարող են լինել ազգամշակութային կյանքի այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են, օրինակ, 'տունը', 'հացը', 'ծեսը', 'ջուրը', 'ընկերը', 'բարեկամը', 'տարազը', 'կյանքը', 'մահը', 'պարտեզը' և այլն, որոնցից 'տունը', օրինակ, իբրև հասկացական և արժեքային բաղադրիչ, ուշագրավ դրսևորումներ է ցուցաբերում հայկական և անգլաամերիկյան լեզվամշակոյթներում՝ լեզվամտածողության, հոգեկերտվածքի և կենսափիլիսոփայության առումով, հանդես բերելով ինչպես ունիվերսալիաներին բնորոշ ընդհանրություններ, այնպես էլ որոշակի

տարբերություններ՝ գաղափարի ընկալման ազգային յուրահատկությունների պատճառով, որոնք առանձնապես ցայտուն, առարկայականորեն շոշափելի կերպով ի հայտ են գալիս դարձվածային մի շարք արտահայտություններում: Այստեղ, կապված հասկացությունների առավել հստակ սահմանազատման և բնութագրման հետ, արժե նշել, թե ինչո՞վ են դրանք ընդհանրանում համընդանրությունների, արտեֆակտների և իրականությունների հետ և ինչո՞վ են տարբերվում: Հարկ է նշել, որ հասկացությունները, համընդանրություններին մերձենում են իրենց ընդհանրացվածության ու տարածվածության առումով, տարբերվում՝ ազգամշակութային գաղափարական ‘կնիքի’ և յուրօրինակության առումով: Հասկացությունների մեջ կարող է լինել՝ թե՛ ընդհանրացվածությունը, թե՛ տարբերակիչ ազգամշակութային ‘կնիքը’: Ինչ վերաբերում է արտեֆակտերին, օրինակ՝ ‘տուն’ հասկացության, ապա պետք է նշել հետևյալ հիմնարար, առանցքային ընդհանրությունը, որն առկա է արտեֆակտների և հասկացությունների միջև, այն է՝ դրանք ինչ-որ մի մակարդակում նույնանում են՝ ‘տուն’-ը կամ ‘դպրոց’-ը, որպես նյութական մշակույթի կերտվածքներ՝ կարող են հանդես գալ իբրև արտեֆակտեր՝ ձեռքի գործեր, մարդկային ստեղծումներ, բայց ոչ իբրև ‘հասկացութաբանական’, գաղափարաբանական ոլորտի դրսևորումներ:

Ասվածը լավագույնս կարող են ի ցույց դնել դարձվածային արտահայտությունները, օրինակ, հայերենի հետևյալ դարձվածային միավորները՝ 1) ‘Արեգնազանենց գեղջկական տանը տուն չի հասնի’ և 2) ‘Թորգոմա տունը հավերժ կանգուն է’. առաջինում խոսքը վերաբերում է ռեալ տանը՝ Արեգնազանենց տանը, որը կարող է ընկալվել իբրև արտեֆակտ, իսկ երկրորդում խոսվում է հայոց տան, այսինքն՝ հայոց թագավորության կամ պետականության մասին, մի փոխաբերական կառույցի մասին, որն ավելի շուտ գաղափարական, հասկացութային օբյեկտ է, քան արտեֆակտ, թեև, ինչ խոսք, հիմնված է կոնկրետ արտեֆակտի՝ ‘տան’ փոխաբերականացման վրա:

Հասկացությունների և իրականությունների միջև ընդհանուր է այն, որ երկուսն էլ կարող են լինել նյութական մշակույթի կոնկրետ, յուրատեսակ դրսևորումներ (դուռ, տանիք, ճանապարհ, բաղարջ, պուդինգ, գոգնոց, պողոտա, հովանի և այլն), մինչդեռ հասկացությունները առավելապես ընդհանրացված, ինչ-որ չափով խորհրդանշանային-գաղափարական հասկացություններ են, որոնք իրենց լավագույն դրսևորումները գտնում են լեզվամշակութային բնույթի այնպիսի խտացումներում, ինչպիսիք դարձվածքներն են, որոնցում արտահայտություն է ստանում լեզու-ճանաչողություն կապը, որով զբաղվում է ճանաչողական լեզվաբանությունը: Վերջինիս առանցքային խնդիրն է՝ ճանաչողության հիերարխիկ կառույցի (բանականություն-լեզու-հասկացութայնացում-կարգայնացում-ընկալում) վերհանումն ու բնութագրումը:

Այսպիսով, հասկացոյթն իբրև եզրոյթ, ունի իր բովանդակային (բովանդակութեան պլան) և ձևային (արտահայտութեան պլան) դրսևորումները՝ այս կամ այն համատեքստի կամ արտահայտութեան շրջանակներում: Հասկացութեաբանութիւնն առնչվում է հիմնականում առասպելաբանական-կրօնական, լեզվամշակութային և փիլիսոփայական (ճանաչողական)-լեզվաբանական գիտակարգերի հետ, որովհետև հասկացոյթներն ուսումնասիրելիս հաճախ հարկ է լինում դիմել այդ ոլորտների օգնութեանը՝ վերհանելու և բնութագրելու դրանց նախատիպային (architype) և հիմնատիպային (prototype) տարբերակները: Օրինակ, հենց այդ տեսակետից՝ վերհանելու համար նոյն 'տուն'-ը նախատիպարային և հիմնատիպարային տարբերակները, որոնք առնչվում են տվյալ ժողովրդի առասպելական, կրօնական պատկերացումների ու ճանաչողական գիտելիքների հետ: Նման վերլուծութիւնը երևան է բերում այն նախնական ընկալումը, որ 'տունը' ոչ միայն նյութական մշակոյթի արտահայտութիւն է, այլև միկրոտիեզերքի խորհրդապատկերը և մարդու հոգևոր աշխարհի առարկայական-տեսանելի դրսևորումը: Դա առավել ընդգծված ձևով առկա է հայկական ավանդական **թոնրաբան** կառոյցում, որտեղ երդիկը խորհրդանշում է երկինքը, թոնրի ակը՝ կապը կյանքի հոսքի հետ, թոնիրը՝ **կրակը** և այլն: Այդպիսի նախատիպային և հիմնատիպային հենք ունեցող և տիեզերաբանական նշանակութիւն ունեցող հասկացոյթներից է նաև կրակը, որի ծիսապաշտամունքային ձևերը նոյնութեամբ կամ փոփոխված ձևով պահպանվել են շատ ժողովուրդների (հայեր, պարսիկներ, ռուսներ, անգլիացիներ, գերմանացիներ և այլն) կյանքում ու կենցաղում: Ուսումնասիրութիւնները վկայում են, որ նմանատիպ հասկացոյթները վաղնշական ժամանակներից ի վեր համարվել են նվիրագործական և աստվածային: Նման աստվածութիւն է համարվել նաև 'հացը': Դեռևս հին հունական առասպելներում Դեմետրան ու Պերսեփոնեն ընկալվել են իբրև մեռնող և հառնող բուսականութեան, մասնավորապէս՝ ցորենի, հացահատիկի տիրակալ դիցուհիներ: Պատահական չէ, որ երբ ստորերկրայքի տիրակալը՝ Պլուտոնը առևանգում է Դեմետրայի դստերը՝ Պերսեփոնէին, Դեմետրան իր 'ցորենահյուսքերը' (հացաբոյսերի խորհրդանշանը) ծածկում է սգո սև հագուստի ներքո: Պերսեփոնէի՝ մեռյալների ստորերկրյա թագավորութիւնում գտնվելու ժամանակ (երեք ամիս, այլ տվյալներով՝ վեց ամիս) բոյթիւնը 'մահանում է', 'գարու հատիկները ծածկված են հողում, իսկ մերկ դաշտերը ընկած են հարոսի տակ. իսկ երբ նա վերադառնում է, հողը սկսում է պճնվել տերևների ու ծաղիկների հանդերձանքով և ծլարծակել': Այն, որ այս դիցուհիները հացաբոյսերի (գարի, ցորեն, ոլոռ) մարմնավորումներ էին՝ կասկած չի հարուցում: Ինչպէս գրում է Ջ. Ջ. Ֆրեզերը՝ դա են հաստատում ոչ միայն առասպելական

սյուժեի հատկանշական դրվագները, այլև Էլևսիյան խորհրդածիսությունների մասին մեզ հասած տվյալները.

Մենք անտեսենք բոլոր տեսությունները և հետևենք բացառապես Էլևսիյան խորհրդածիսությունների մասին հին հեղինակների կողմից մեզ հաղորդած փաստերին, ապա, հավանաբար, ստիպված կլինենք համաձայնել անտիկ մեծագույն գիտակի՝ հռոմեացի Վառոնի կարծիքին: Ինչպես հաղորդում է Ավգուստինոս [Օգոստինոս] Երանելին, նա՝ զտնում էր՝ որ Էլևսիյան խորհրդածիսությունները ամբողջապես նվիրված էին Յերերայի (Դեմետրայի) հայտնաբերած հացահատիկին և Պլուտոնի կողմից Պրոզերպինայի (Պերսեփոնեի) առևանգմանը: Իսկ Պրոզերպինան, նրա կարծիքով, անձնավորում է սերմերի բերրիությունը՝:

Հասկացոյթների, տվյալ դեպքում՝ հացի՝ նախատիպային և հիմնատիպային՝ կերպարանքը՝ որոշելու առումով պետք է հաշվի առնել ոչ միայն վերը նշված տեղեկատվությունը՝ հացահատիկը պարզևող դիցուհիների վերաբերյալ, այլ նաև անիմաստական այն պատկերացումը կամ հավատալիքը, որ այդ դիցուհիները կամ աստվածուհիները ոչ միայն, ասենք, Գարու կամ Հացի մայրերն են, այլև հենց իրենք են ապրում գարու կամ հացի մեջ: Այսինքն՝ գարին կամ ցորենը, հացն առհասարակ՝ կենդանի աստվածություններ են, որոնց ճաշակումը մարդկանց կյանք է տալիս: Հյուսիսային Եվրոպայում հացի մոր կամ հացի կույսի մասին պատկերացումներում, կարելի է ասել, միաձուլվում էին, ասենք, հացի (հացահատիկի) մայրն ու հացը (հացահատիկը): Ըստ Ջ. Ջ. Ֆրեզերի ազգագրական տվյալների՝ Գերմանիայում հացաբույսերը հաճախ մարմնավորվում են Հացի մոր կերպարում: Այսպես, տեսնելով, թե գարնանը ինչպես են ծիլերը քամուց ծփում, գյուղացիները ասում էին.՝ Գալիս է հացի մայրը՝ կամ՝ Հացի մայրը վազում է դաշտով՝ կամ՝ Հացի մայրը անցնում է ցանքսերով՝: Երբ երեխաները ցանկանում էին դաշտերում երկնագույն տերեփուկ կամ ալ կակաչներ հավաքել, դա արգելում էին, որովհետև այնտեղ նրանց կարող էր բռնել հացահատիկի հասկերում թաքնված Հացի մայրը՝ :

Շարունակելով՝ հացի հասկացոյթի մասին դիտարկումները՝ պետք է անպայման նշել այն ուշագրավ փաստը, որ հնդկացիական, հնդկական և աֆրիկյան ցեղախմբերի մոտ եղել են հացով՝ իբրև աստծո մարմնով հաղորդվելու սովորույթներ: Մինչև իսպանացիների կողմից Մեքսիկան հայտնաբերելը և նվաճելը՝ ացտեկները պահպանում էին հացով (աստծո մարմնով) ծիսական հաղորդման սովորույթը: Տարեկան երկու անգամ՝ մայիսին ու դեկտեմբերին, նրանք խմորից պատրաստում էին մեքսիկական մեծ աստծու՝ Գուիտցիլոպոչտլիի կամ Վիտցիլիպուցթլիի պատկերը, որը հավատացյալները բաժանում էին մասերի և ուտում՝ :

Իհարկե, բազմաթիվ են հացով (ծխահացով) հաղորդվելու վաղնջական սովորությունները և դրանց նկարագրությունները: Այդ ամենը ապացուցում են մեկ բան՝ հաց հասկացության ներքո 'թաքնվել է' աստված: Ուշագրավ է, որ նա՝ հացի մեջ 'թաքնված' աստվածը, հանդես է գալիս որպես քավության նոխազ. ովքեր ուտում են այդ հացը՝ նրանք մաքրվում են, քանի որ իրենց մեջ ընդունում էին աստծուն, ինչպես ացտեկները, որ 'սպանում էին' իրենց աստծու՝ Գուիտցիլոպոչտլիի արձանը (պատրաստված ակացիայի բնափայտից) և մանր մասերի՝ կտորների բաժանելով՝ ուտում: Ֆրեզերը նշում է, որ այդ ծեսը կոչվել է troqualo, այսինքն՝ 'աստված կերտված է':

Հաց հասկացության հետ կապված հին պատկերացումներում հացը սրբազան բնույթ ունի. նա աստված է: Հին Կտակարանում այդ սրբազան բնույթը հատկացվում է առաջնաբերքին, որն անպայման պետք է ընծայվեր Եհովա աստծուն: Նոր Կտակարանում, Հիսուսի մատնությունից և խաչելությունից առաջ, զատկական ընթրիքի ժամանակ հացով հաստատվում է հաղորդության խորհուրդը: 'Եվ մինչ նրանք [աշակերտները] դեռ ուտում էին, Յիսուս հաց վերցրեց, օրհնեց ու կտրեց եւ տուեց աշակերտներին ու ասաց. 'Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինը': Եւ բաժակ վերցնելով՝ գոհութիւն յայտնեց, տուեց նրանց ու ասաց.

'Խմեցէ՛ք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է նոր ուխտի իմ արհնը, որ թափում է շարերի համար՝ իրենց մեղքերի թողութեան համար' (Մատթ. 26: 26-28): Բացի 'հաց'-ից, այստեղ սրբազան նշանակությունների դաշտում են հայտնվում նաև բաժակը, գինին, մեղքը, թողությունը, արյունը:

Ի՛նչ խոսք, ժամանակի ընթացքում, պայմանավորված փիլիսոփայական, սոցիոլոգիական և հոգեբանական գիտությունների զարգացմամբ, նման դոգմատիկ ընկալումները որոշակի փոփոխությունների են ենթարկվել իմաստային ընդգրկման և նույնիսկ հնչերանգային (ինտոնացիոն) առումներով: Դրա համոզիչ ապացույցը կարող են լինել այդ տիպի հասկացությունների (դոգմաների) կիրարկումները, օրինակ, հայ և բրիտանական գեղարվեստական գրականության մեջ (Ֆրիկ, Նահապետ Քուչակ, Գրիգորիս Աղթամարցի, Քրիստոֆեր Մառլո, Վիլյամ Շեքսպիր, Ջորջ Բայրոն և ուրիշներ՝ ուշ միջնադարից մինչև նոր և նորագույն շրջանի գրողները): Ինչպես դոգմատիկ բնույթի, այնպես էլ տարատեսակ այլ հասկացությունների գեղարվեստական դրսևորումների նկատմամբ հետաքրքրությունը մեծանում է արդի շրջանում: Ի հայտ են գալիս հոդվածներ ու առանձին աշխատություններ, որոնցում հասկացությունները քննարկվում են տարբեր կտրվածքներով՝ որպես 1) հայեցակերպային՝ հասկացության նշանակություն ունեցող լեզվական միավորներ , 2) ազգային կյանքի և ազգային ինքնության տեղեկություններ , 3) ճանաչողական արժեք ունեցող լեզվամշակութային դրսևորումներ, 4) ինստիտուցիոնալ խոսույթին հատուկ

բաղադրիչներ, 5) մոդելավորված սոցիալական անձնավորության լեզվամշակութային բնութագրիչներ, և այլն:

Բացի նշյալ տարաբնույթ կտրվածքներով քննարկումներից, գնալով առավել ակտուալ են դառնում դարձվածային զանազան միավորների լեզվահասկացոյթները և իմաստաբանական շերտավորումները: Առանձին խումբ են կազմում լեզվաբանական հետազոտություններում առկա 'հասկացոյթ' եզրույթի (գիտաբանի) կիրարկումների վերաբերյալ քննարկումները:

Պետք է ընդգծել, որ ներկայումս, ազգային ինքնությունների և համաշխարհայնացման գործընթացների փոխներթափանցման, ինչպես նաև ընդդիմադիր, հակամարտ միտումների ուժգնացման պարագայում, առավել ակտուալ են դառնում հասարակության տարբեր շերտերին բնորոշ խոսույթների ուսումնասիրումը, սոցիալական, վարչաքաղաքական ու տնտեսագիտական հասկացոյթների դիտարկումները: Այս առումով ուշագրավ են 'փող' ('փողեր') հասկացոյթի սոցիալական որոշակի տիպեր (օրինակ, ռուսերեն ասած՝ 'английский чыдак') ցույց տվող լեզվամշակութային հասկացոյթների սոցիալական-փիլիսոփայական բնույթի վերլուծությունները և այլն:

Ի հավելումն վերն ասվածի, թե ինչպիսի՜ կտրվածքով են ուսումնասիրվում հասկացոյթները կամ էլ ինչպիսի՜ հասկացոյթներ կան, կարող ենք հավաստել, որ հասկացոյթների կողքին առկա են, կան նաև, այսպես ասած, գերհասկացոյթներ, որոնք սերում են էթնոսների վաղնջական-առասպելաբանական անցյալից և կրոնամիստիկական պատկերացումներից: Դրանք, հնարավոր է այդպես բնորոշել, մեծ մասամբ ունիվերսալիաներ են՝ ունիվերսալ հասկացոյթներ, որ բնորոշ են գրեթե բոլոր ազգերին ու ժողովուրդներին. Ն. Լ. Հարությունյանը նշում է դրանցից մի քանիսը՝ 'հավատ', 'աստված', 'հոգի', 'սեր', 'հույս', հասկացոյթներ, որոնք բնութագրվում են նաև անդենական և կենտրոնական մակդիրներով, ռուսերենով՝ трансцендентные:

Նշյալ տիպի գերհասկացոյթները, ճիշտ է, համընդհանրություններ են, բայց և ժամանակի ընթացքում օժտվել են նաև ազգային ինքնություններին բնորոշ գծերով ու երանգավորումներով, ուստի չի կարելի միանշանակ կերպով պնդել, որ այսօր դրանք վերազգային համընդհանրություններ են: Մինչդեռ դրանց բանահյուսական-դարձվածային և տարալեզու գեղարվեստական կիրառումները հստակ կերպով ապացուցում են հակառակը՝ համընդհանրություններ ևս հագեցած են սոցիոլեզվամշակութային այն մթնոլորտով, որի մեջ նրանք հայտնվել են և գործածվել՝ իրականացնելով իրենց լեզվական բոլորաշրջանը՝ ինքնություն-հասկացոյթ-խոսույթ ուղեծրով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աստուածաշունչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994 – ՌՆԽԴ:
2. Բաղդասարյան Հ., Ազգամշակութային բաղադրիչը որպես թարգմանական խնդիր (Սերվանտեսի 'Դոն Կիխոտ' վեպի հիման վրա), աստենախոսություն, Ե., 1996:
3. Խլղաթյան Ֆ. Հ., Ոճաբանական տերմինների բառարան տեղեկատու, Ե., 'Լույս', 1976:
4. Ֆրեզեր Զ. Զ., Ոսկե ճյուղը. մոգության և կրոնի ուսումնասիրություն, Ե., 'Հայաստան', 1989:
5. Агаркова Н. Э., Концепт 'деньги' как фрагмент английской языковой картине мира (на материале американского варианта английского языка), диссертация..., Иркутск, 2001.
6. Арутюнян Н. Л., Лингвокультурологический анализ трансцентричных сверхконцептов, Ե., «Зангак-9»7, 2008.
7. Бабушкин А. П., Типы концептов в лексикофразеологической семантике языка, Воронеж, ВГУ, 1996.
8. Карасик В. И., Модельная личность как лингвокультурный концепт.//Филология и культура. Материалы третьей международной конференции, ч. 2, Тамбов, 2011.
9. Карасик В. И., Язык социального статуса, М., «Гнозис», 2002.
10. Карасик В. И., Лингвокультурный типаж «английский чудак», М., «Гнозис», 2006.
11. Карасик В. И., Языковой круг; личность, концепты, дискурс, 2-е изд., М., «Гнозис» 2004.
12. Слышкин Г. Г., Концептологический анализ институционального дискурса.//Филология и культура. Материалы..., 2001, с. 34-36.
13. Степанов Ю. С., Концепт культуры «в разрезе». /Когнитивная семантика: Материалы второй международной школы-семинара по когнитивной лингвистике, 11-14 сент., ч. 1, Тамбов, 2000, с. 18-22.
14. Стернин И. А., Попова И. М., Отдельные статьи, Концепт и значение, 2003, с. 191, <http://Sternin, adeptis, ru/articles, html> 20.01.2011.

15. Тер-Погосян А., Семантический анализ лингвокультурологического концепта §дом¹ на основе английских фразеологических единиц. //Մանրագրեր 22-23, Ե: << Մահալ Պարթև>> 2012-2013, էջ 234-239:
16. Тер-Погосян А., Концепт « дом»¹ в армянской и англо-американской лингвокультурах, диссертация на соискание ученой степени канд. Фил-х наук, 2013.
17. Попова З. Д., Стернин И. А., Понятие « концепт » в лингвистических исследованиях, Воронеж, 1999.
18. Приходко Г. В., Концепт « огонь»¹ в картине мира русского народа. //Материалы шестой научной конференции, Новосибирск, 2005, с. 86-89.
19. Философский энциклопедический словарь, М., « Советская энциклопедия », 1983, с. 278.

ДИАНА АДИКЯН - ТЕОРЕТИЧЕСКОЕ ВОСПРИЯТИЕ КОНЦЕПТОВ, ИХ АРХЕТИПИЧЕСКИЕ ФОРМЫ И ПРОЯВЛЕНИЕ В ХУДОЖЕСТВЕННОЙ ЛИТЕРАТУРЕ

В данной статье рассматриваются концепты, их и типы и смысловые границы. Концепты воспринимаются в качестве компонента культурной жизни и могут иметь сходства или различия с универсалиями и реалиями. Концепты имеют свое содержательное и формальное выражение. Актуальными становятся концепты различных фразеологических единств, их семантическое расслоение и концептуальные исследования ,характерные для различных социальных слоев.

DIANA ADIKYAN - THEORETICAL PERCEPTIONS OF CONCEPTS, THEIR ARCHETYPAL FORMS AND MANIFESTATION IN FICTION

The article aims at studying the notion of concepts, their types and semantic scopes. Concepts are used as cultural life components and can have similarities and differences with universalias and realias. They have their context and their formal ways. Different concepts of phraseological units and their semantic layers, many other conceptual observations, typical to different social layers, are becoming urgent.

**ԱՆԳԼԵՐԵՆԻ ԸՂՁԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԸՂՁԱԿԱՆ
ԱՊԱՌՆԻԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

ՍՎԵՏԼԱՆԱ ԱԶԻՉՅԱՆ

Հիմնարաներ՝ Present Subjunctive, ըղծական ապառնի, իմաստա-գործառական, կառուցվածքային, վերլուծություն

Լեզուն մարդուն ծառայում է խոսքային գործունեության համար: Կապակցելով բառերը մարդը կարող է միլիոնավոր տարբերակներ ստեղծել տարբեր լեզուներում, որտեղ լինում են ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Խոսքի կազմության հարցում հիմնական դերը պատկանում է բային իր քերականական կարգերով, առանց որի նախադասություն հնարավոր չի կազմել, բացառությամբ (անդեմ և միակազմ նախադասությունների):

Անգլերենի և հայերենի քերականական համակարգի հետազոտությունը մշտապես եղել է և մնում է անգլո-ամերիկյան և հայագիտության հիմնախնդիրներից մեկը: Թե՛ անգլերենի և թե՛ հայերենի քերականական կառուցվածքի մեջ ուրույն և հիմնական տեղ է գրավում եղանակի կարգը: Ուստի և միանգամայն բնական է, որ թե՛ անգլո-ամերիկյան և թե՛ հայ քերականները սկսած զուգադրվող երկու լեզուների՝ անգլերենի և հայերենի ուսումնասիրության հնագույն ժամանակներից, ի թիվս քերականական այլ իրողությունների իրենց ուշադրության կենտրոնում պահել են բայի եղանակի համակարգի խնդիրները: Այս հարցում լեզվաբանների և դասավանդողների մոտ մեծ տարակարծություններ կան: Ընդհուպ մինչև այսօր հրատարակված քերականություններում, դասագրքերում, մենագրություններում, հոդվածներում ներկայացվում են երեք և ավելի եղանակներ: Տարակարծություններ եղել են ոչ միայն հին, միջին, այլև նոր ու ժամանակակից անգլերենի և հայերենի եղանակների ըմբռնման մեջ:

Տեսական և փաստական բազմազան ու բազմատարր նյութի մանրակրկիտ հետազոտությունը մեզ բերել է այն անխախտ համոզման, որ արդի անգլերենն ու հայերենը ունեն 6 եղանակ, որոնցից մեկը անգլերենի ըղծական ներկան է, իսկ մյուս՝ հայերենի ընծական ապառնին, որոնց համեմատությանը նվիրված է այս հոդվածը:

Անգլերենի և հայերենի զուգադրական համեմատությունը կատարվում է բովանդակային և ձևի անխախտ միասնության հիմունքով, որը կառուցվածքա-իմաստային կամ կառուցվածքատրամաբանական դասավանդման ելակետային սկզբունքն է [Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան 2003: 287]:

Իմաստային առումով ըղձական ապառնին ցույց է տալիս ենթադրվող մի գործողություն, որը վերաբերում է ներկային կամ ապագային [Հ. Թոքմաջյան 1995: 108]: Իրականում խոսողն անտեղյակ է, գործողությունը տեղի կունենա, թե ոչ: Նա վստահ է, որ գործողությունը տեղի չի ունենա, բայց և չի բացառում գործողության, եղելության կատարման հնարավորությունը:

Կառուցվածքով անգլերենում ըղձական ներկան համընկնում է անորոշ դերբայի հետ առանց *to* նշույթի: Բոլոր դեմքերի համար հատկանշական է եղանակային *O* վերջույթը, որը խոսում է այն մասին, որ այս եղանակն ունի միայն մեկ ձև բոլոր դեմքերի՝ եզակիի և հոգնակիի համար (*go, come, be*): Բացառություն է կազմում միայն *be* բայը, որի ըղձականի կազմությունը կարելի է անմիջապես ճանաչել քանի որ այն հստակորեն տարբերվում է մյուս բայերից:

He demanded that all *be present*. / That all *come*. / That all *take part in the conversation*.

Մյուս ստորադասական եղանակների նման այս եղանակաձևն էլ գործածվում է տարբեր ոճերում, ինչպես խոսակցական, այնպես էլ պաշտոնական, ձևապատշաճ խոսքում, պոեզիայում, ժողովրդական հեքիաթներում, աղբյուրներում: Ըղձական ներկան կարող է գործածվել ինչպես պարզ այնպես էլ բարդ նախադասություններում, կարող է վերաբերել ներկայում, ապառնիում և անցյալում կատարվող գործողությանը: [Mark Folley and Diana Hall 2009:130]

Be all my sins remembered. (Shakespeare – պարզ նախադասություն):

It is necessary that all my sins be remembered. (բարդ նախադասություն է)

Ըղձական ներկան ավելի հաճախ գործածվում է ամերիկյան անգլերենում, մինչդեռ բրիտանական անգլերենում խոսողը նախընտրությունը տալիս է *should*+անորոշ դերբայ կառուցվածքին, որտեղ՝ *should*-ը ենթադրական եղանակի նշույթն է՝ նրա օժանդակ բայը: Այս եղանակը հիմնականում գործածվում է տարբեր տիպերի կախյալ նախադասություններում և նրա գործածությունը սահմանափակվում է որոշակի ածականների, բայերի գոյականների ու շաղկապների գործածությամբ:

Հայերենում ըղձական եղանակն արտահայտում է ցանկալի գործողություն, որի կատարման իղձը վերաբերում է խոսողին, խոսակցին և երրորդ անձանց [Ֆ. Խլիլյան 2010: 168]: Հայերենի ըղձական ապառնիի ձևերը, ինչպես անգլերենում համադրական են. Կազմվում են անորոշ դերբայի լի փոխարեն ավելացնելով բայական դիմային վերջավորությունները. *-մ, -ս, -օ, -նք, -ք, -ն* (գրեմ, գրես, գրի, գրենք, գրեք, գրեն): Ինչպես տեսնում ենք տարբեր նշույթներ են գործածվում, տարբեր դեմքերի համար:

Կառուցվածքային համեմատությունը անգլերենի և հայերենի ցույց է տալիս որ նշված զուգադրվող լեզուներում ըղձական ներկան և ըղձական ապառնին ունեն համադրական կառուցվածք. Օ վերջույթ անգլերենում և որոշակի դիմային բայական վերջույթներ՝ (-՛մ, -ս, -օ, -նք, -ք, -ն) հայերենում: Հայերենում էլ ըղձական ապառնին կարող է գործածվել ինչպես պարզ, այնպես էլ բարդ նախադասություններում:

Թող հիշվեն իմ բոլոր մեղքերը (պարզ նախադասություն):

Զուգադրվող երկու լեզուներում էլ նրանք արտահայտում են ցանկալի անիրական գործողություն, որի իրականացման հնարավորությունը սակայն չի բացառվում: Հնարավորության իմաստը լրացվում է նաև տարբեր երանգներով՝ ցանկալի, կասկածելի, անհրաժեշտության, կարևորության, հետևանքիզման, նպատակի երանգներով:

Ընդհանրապես եղանակների մասին խոսելիս, նրանց և մասնավորապես ըղձականի գործառույթային կաղապարները վեր հանելիս կարելի է տարբերել ազատ և կայուն կաղապարներ: Ազատ են այն կաղապարները, որոնք խոսակցական գործընթացում ամեն անգամ նորովի են ստեղծվում յուրաքանչյուր խոսող անհատի կողմից ըստ խոսքի պահանջի: Կայուն են այն կաղապարները, որոնք պատրաստի գոյություն ունեն լեզվում և խոսողական գործընթացում պարզապես գործածվում են որպես պատրաստի բանաձևեր, ինչպես ժամանակակից անգլո-ամերիկյան, այնպես էլ հայ լեզվաբանության մեջ: Այսպես օրինակ՝ God bless you! ըղձական ներկայով և «Հողեմ ձեր գլուխը» ըղձական ապառնիով կառույցները կայուն են, քանի որ վերարտադրվում են որպես մեկ ամբողջություն, չեն մասնատվում համաձայն լեզվական կանոնների, ունեն քերականական և շարահյուսական կայուն կառուցվածք [Օ. Еснерсен, А. Смирницкий 1958: 22-23] և նույն ձևով պահպանվում են խոսողի հիշողության մեջ: Լեզվի բանաձևային խոսքին տիրապետելը մեծ չափով նպաստում է լեզու սովորողների թե ընկալողական և թե վերարտադրողական հմտությունների զարգացմանը [Wong-Fillmore 1976; 640-641]

«Long live the Queen! Կեցցե մեր ժողովուրդը»: Չնայած այս նախադասություններն ունեն կայուն քերականական և շարահյուսական կառուցվածք և անմասնատելի են, բայց նրանցում կարելի է փոխել the *Queen* և *ժողովուրդ* բառերը, ստանալ մասամբ նոր բանաձևեր, ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում:

Long live our president! (our republic)

Կեցցե՛ն մեր երեխաները: (ծնողները)

Եվ կարելի է տարբերել մասամբ կամ մասնակիորեն կայուն կաղապարներ զուգադրվող երկու լեզուներում:

«It is necessary that you be present at the meeting.

«Անհրաժեշտ է, որ ներկա գտնվեք հավաքին» նման կաղապարում կայուն է միայն գերադաս նախադասությունը, եղանակի գործածությունը նրանում, ինչպես նաև կախյալ նախադասություններում կայուն է գործածվող կառուցը և եղանակը, բայց ամեն խոսող անհատ այն կարող է շարունակել իրավիճակից, համատեքստից, պահանջից ելնելով, օգտագործելով պահանջվող կայուն եղանակաձևերը:

“If he be present, have a talk with him” տիպի կաղապարները կարելի է անվանել ազատ, որովհետև յուրաքանչյուր խոսող նորովի է կառուցում իր միտքը:

Եթե ստորադասական եղանակների գործածությունը կարող է և ազատ լինել, և կայուն՝ մասնակի կամ ամբողջական, ապա սահմանական, հրամայական եղանակի կաղապարները կարելի է ազատ համարել:

Ըղծական ներկան անգլերենում գործածվում է արտահայտելու համար անեծք, օրհնանք, երդում, ուղերթ՝ որոշ քարացած արտահայտություններում, որոնք մեզ են հասել հին անգլերենից և նրանց պետք է ընդունել, որպես մեկ ամբողջական միավոր [H. Kobrina, и др. М. 1985:86]:

If he doesn't want to see us, then so *be it!* (=let it happen)

Bless you! (=God bless you).

Long *live* the republic!

I'll take it all the way to the Supreme Court if need *be.* (=If it is necessary)

[Mark Foley and Diane Hall, 2009:131]

Նույն իմաստով գործածվում է հայերենի ըղծական ապառնին արտահայտելու համար անեծք, օրհնանք, մաղթանք, երդում, ուղերթ:

Արևդ փորդ *մնա*, էլի տարավ հավերիցս մեկը: (Հայկական, ժողովրդական հեքիաթներ)

Հողեմ ձեր գլուխը:

Անիծվեք դուք: *Չրկվես*: Լոյսդ *խավարի*:

Գետինը *մտնեք* դուք, գետինը... (Հ.Թ. 336)

-Վո՛ւյ, անտեր մնաս դու, անտե՛ր: (Հ.Թ.)

Աստվա՛ծ փրկի մեր թագավորին:

Թեպետ օրհնանքները, անեծքները, մաղթանքները դարերի ընթացքում ավանդական բանաձևերի տեսքով են փոխանցվել սերնդե-սերունդ, նրանց կիրառությունները խիստ սահմանափակ են, քանի որ գործածվում են առանձնահատուկ իրավիճակներ արտահայտելու համար. ոչ բոլորի կողմից և երկու նպատակով՝ տրամաբանական և ոճային [Ս. Հարությունյան 1975 : 123-145]:

Չնայած հավատքի և մշակութային տարբերություններին, ինչպես տեսնում ենք թե՛ անգլիացիները, և թե՛ հայերն օրհնում, անիծում և մաղթանք, ուղերթ են

հղում միևնույն ձևով, նույն կաղապարներով, միևնույն իմաստով, հաջողության և անհաջողության դեպքում, բայց տարբեր եղանակաձևերով են դա իրականացնում:

Անգլերենի ըղձական ներկայի և հայերենի ըղձական ապառնիի այս գործածությունը հանդիպում ենք խոսքի բոլոր տիպերում՝ պոեզիայում, հեքիաթներում, պաշտոնական փաստաթղթերում, որոշակի դարձվածներում, աղոթքներում, օրհնանքներում և արտահայտում են խոսողի բարի կամքը, ցանկությունը, մաղթանքը:

Անգլերենի ըղձական ներկան և հայերենի ըղձական ապառնին գործածվում են նաև հռետորական հարցական նախադասություններում:

Why he *invite* everybody? Ինչո՞ւ *հրավիրի* բոլորին:

Անհրաժեշտության, կարևորության, հավանականության հնարավորության և այլն իմաստով ըղձական ներկան գործածվում է *that*-ով սկսվող կախյալ ենթակայական այն նախադասություններում, որոնք հաջորդում են ձևական *it*-ենթակայով սկսվող անդեմ նախադասություններին, որտեղ *it*-ը ոչ մի իրական անձ կամ իր ցույց չի տալիս, այսինքն գրոյացված ենթակա է, որի բովանդակությունը պարզապես պարզաբանում է կախյալ նախադասությունը [A. Смирницкий 1957:157], և որին հաջորդում են այնպիսի ածականներ ինչպիսիք են՝ (un) necessary, (un) important, advisable, anxious, desirable, eager essential, preferable, willing, appalling, (in) sppro-priate, (in) conceivable, crucial, essential, imperative, urgent, vital: surprising, obvious, likely և այլն, որոնք նշված են քերականության բոլոր դասագրքերում:

It is unappropriate that he *receive* the award again.

- It is necessary that I *change* my frok! - Yes, you'd better.

Նույն ձևով, հայերենում ըղձական ապառնին գործածվում է նշված ածականներից հետո, որը սակայն որպես գործածության առանձին դեպք չի առանձնացվում, բայց ինչպես ցույց են տալիս անգլերեն նախադասությունների թարգմանությունները և հայերեն օրհնակները կախյալ նախադասություններում նշված ածականներից հետո գործածվում է ըղձական ապառնին:

Կարևոր է, որ երիտասարդ գիտնականները ողջ և առողջ *վերադառնան* վտանգավոր գիտարշավից:

Ավելի լավ չէ, *թքես* այդ բոլորի վրա, քարվանդ ուղիղ *քշես* (Գ.Ա.):

Տարօրինակ է, որ նա ոչ մեկին վրաերթի *չենթարկի*, նա սովորաբար շատ արագ է վարում մեքենան:

Անգլերենում ենթակայական կախյալ նախադասությունը կարող է չնշույթավորված կամ նշույթավորված լինել *that* շաղկապով, իսկ հայերենում՝ *որ*, *թե*:

Եվ արժե, որ հայ ժողովուրդը երբեմն-երբեմն էս հարազատ, գեղեցիկ ու մեծ անունները հանդես *բերի*: (<. Թ.)

Անգլերենում ենթակայական կախյալ նախադասություններում առանձնացվում են երկու տիպի նախադասություններ՝ ներկային և ապագային վերաբերող մի կողմից, իսկ մյուս կողմից՝ անցյալին վերաբերող: Բայց քանի որ ըղձական ներկան անգլերենում միայն մեկ ձև ունի, ուստի անցյալին վերաբերող նախադասություններում անգլիացին գործածում է *should+անորոշ դերբայի վաղակատար ձևը՝ have taken*, կամ էլ սահմանական եղանակի ժամանակաձև, իսկ հայն էլ կօգտագործի սահմանական եղանակի ավարտվածություն արտահայտող ժամանակաձև:

It is strange that he *should have given up* smoking.

(Ենթադրական եղանակ, անցյալի ձև)

It is strange that he *has given up*. (Սահմանական եղանակ, վաղակատար ժամանակաձև)

Տարօրինակ է, որ նա թողել է ծխելը. (Սահմանական եղանակ, վաղակատար ժամանակաձև)

Խորհուրդ, խնդրանք, երաշխիք, պահանջ, առաջարկ և այլ իմաստներով անգլերենի ըղձական ներկան է գործածվում՝ խնդրային կախյալ նախադասություններում. կամային իմաստ արտահայտող որոշակի բայերից հետո՝ *advise, request, recommend, order, demand, insist suggest, arrange, urge, pro-pose, direct, prefer, stipulate, urge, warn*, ինչպես նաև նշված բայերի ու գոյականի՝ գործածությամբ, որոնք դիտվում են մեկ դարձվածաբանական միավոր (issue an order, give a warning, give an order), *give instructions* և այլն, իսկ հայերենում՝ նման բայերից հետո՝ *առաջարկել, խնդրել, երաշխավորել, պնդել, հրամայել, պահանջել* և այլն, գործածվում է ըղձական ապառնին, չնայած, որ նման բայերի, գործածության հատուկ դեպքեր չեն առանձնացվում հայերենում:

I suggested that he *give up golf*. [M. Hewings 2005: 78-79]

At yesterday's hearing the judge *insisted* (that) Mr. Grand *give evidence* despite his relationship to the accused.

The weather forecast *gave a warning* that people *prepare* for heavy snow.

Ինչո՞ւ են բժիշկները *խորհուրդ տալիս*, որ երեխաներին ծնողները հաճախ մաքուր օդի դուրս *բերեն*:

Բոլոր օֆիսներն *առաջարկում են*, որ իրենց *դիմեն* առաքիչներ, որոնք ունեն իրենց սեփական մեքենաները:

Նույն ձևով անգլերենի ըղձական ներկան և հայերենի ըղձական ապառնին կարող են գործածվել անիրական, բայց հնարավոր գործողության իմաստով նաև այն ածականներից հետո, որոնք հանդես են գալիս որպես ստորոգելիական

վերադիր գլխավոր կամ գերադաս նախադասության մեջ (sorry, glad, pleased, vexed, anxious, determined, amazed, amused, asfounded) և իրենցից հետո նույնպես ընդունում են խնդրային երկրորդական նախադասություններ և նշում են խոսողի վերաբերմունքը նշված գործողության նկատմամբ:

I am sorry he not be present.

I am concerned that she think, I stole the money.

Ըղծական ներկան անգլերենի և ըղծական ապառնին հայերենի կարող են գործածվել նաև բացահայտիչ կախյալ նախադասություններում արտահայտելու համար հրաման, խնդրանք, վճիռ, առաջարկ արտահայտող գոյականներից հետո, որոնք գործածվում են գերադաս նախադասություններում:

Orders were given that we start at 9. [M. Ganshina, N. Vasi-levskaya 1964:217]

The demand that someone come out of the inner room made nobody out.

The child's insistence that I not appear before him that way was something new for me.

Տուր ինձ քամի ձին, *հասնեմ* փափագիս: Որոշումս՝ բլբուլը *բերեմ* հասցնեմ այգիս, հայտնի էր բոլորին:

Պարտքը ետ վերադարձնելու կամ բանտ գնալու վճիռը բարկացրեց նրան: Արքայի *հրամանը*, որ որդիները *շրջեն* աշխարհից աշխարհ, երկրից երկիր և իրենց համար համապատասխան կին *գտնեն* մի փոքր տխրեցրեց որդիներին, բայց երեքն էլ ճանապարհ ընկան:

Որոշակի գոյականներից հետո, որոնք համապատասխանում են վերը նշված բայերին (*the advice, order, suggestion, demand, arrangement request; խորհուրդ, հրաման, կարգադրություն, պահանջ, խնդրանք, առաջարկ և այլն*) անգլերենում գործածվում է ըղծական ներկա, իսկ հայերենում՝ ըղծական ապառնի ստորոգելիական կախյալ նախադասություններում: Եթե անգլերենում հստակ նշվում են այս գոյականները, հայերենում՝ ի տարբերություն անգլերենի դրանք պարզապես չեն առանձնացվում, բայց համապատասխան հայերեն նախադասություններում գտնում ենք ըղծական ապառնի գործածությունը նշված գոյականներից հետո:

The suggestions are that the only sensible answers be accepted.

The order is that you not smoke inside.

Ոստիկանության *խնդրանքն է*, որ մարդը *չսպանի* անմեղ մարդկանց, որոնց պատանդ է վերցրել:

Խորհուրդս է, որ յոթ *չափես*, մեկ *կտրես* և *որոշում կայացնես* ինքնուրույն ու շատ *չսես* ուրիշներին: Ոչ ոք իրավիճակը քեզնից լավ *չգիտի*:

Արքայի *հրամանն է*, որ արթուն *մնաք* և թշնամուն *հսկեք*:

Ըղծական ապառնին հայերենում կարող է գործածվել նաև սահմանական ապառնի, կամ սահմանական ներկայի փոխարեն:

- Դե հիմի ի՞նչ տամ, - հարցրեց ուստեն ծոցից քսակը հանելով:

Ինչպես ըղծական ներկան անգլերենում, այնպես էլ ըղծական ապառնին հայերենում կարող են նպատակ ար-տահայտել և համապատասխանաբար գործածվել նպատակի կախյալ նախադասություններում. վախ, ամոթ արտահայտող բայերից հետո: Նման կախյալ նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները նրանք են, որ բացահայտում են, որ ցանկալի հիմունքը, որն արտահայտվում է անգլերենում ըղծական ներկայով, իսկ հայերենում ըղծական ապառնիով, դառնա իրական: Նպատակի կախյալ նախադասությունները կարող են նշոյթավորված և աննշոյթ լինել: Անգլերենում նրանք նշոյթավորված են *lest, that* շաղկապներով, իսկ հայերենում *թե, որպեսզի թե, չի՛նի թե*, և *որ* ընդհանրական շաղկապով, որի կիրառման ոլորտն ավելի լայն է և ընդգրկում է նաև ժողովրդախոսակցական կենդանի լեզուն:

Անգլերենում այսպիսի նախադասությունների գերադաս բաղադրիչում գործածվում են վախ, ամոթ, անհանգստություն, սարսափ արտահայտող բայեր, գոյականներ կամ կապակցություններ – fear, worry, be afraid, dissatisfied, to be in terror, որոնք առանձնահատուկ չեն առանձնացվում հայերենում:

I *fear* he be present and *hear* our talk.

I *feared* lest I see him one day, which followed.

I *am afraid* it be a mistake.

Քեզ կանչում եմ, որ *նորոգես* մեր վայելքը վաղանցով: (Հ.Թ.)

Հազար մանեթ *չունեք*, թե *տար*, հոգին ազատ *անեք*: (Հ. Թ.)

Անգլերենի ըղծական ներկան կարող է գործածվել զիջման կախյալ նախադասություններում, իսկ հայերենում՝ ըղծական ապառնին է գործածվում ներքին վճիռ, մտածում արտահայտելու համար: (Ս. Աբրահամյան, 1975:53)

Whoever you *be* you have no right to do such a thing.

Whatever he *say* we must not change our plan [M. Ganshina, N. Vasilevskaya 1964:220]

Վեր *կենամ*, ասի մեկի մոտ *գնամ*: (Հ. Թ.)

Գլուխս *առնիմ*, երթամ *կորիմ*: (Ավ. Ի.)

Ասում եմ՝ հենց *լինի* մի քիչ տեղ *հեռանա*, *վեր կենամ*, փախչեմ:

Ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում if - եթե, when - երբ և նման շաղկապներով (կամ անշաղկապ) պայմանի կախյալ նախադասություններում ըղծական ներկան և ըղծական ապառնին համապատասխանաբար գործածվում են անիրական բայց հնարավոր, պրոբլեմատիկ պայման արտահայտելու համար:

Պայմանի կախյալ նախադասությունները նշում են այն պայմանը, որի առկայությամբ միայն կարող է կատարվել գերադաս բաղադրիչի բայ-լրացյալի արտահայտած գործողությունը կամ եղելությունը: Պայմանի առկայությունը կախյալ նախադասությունում ենթադրում է հետևանքի գոյություն, որը դրսևորվում է գերադաս նախադասությամբ:

Պայմանի երկրորդական նախադասությունները հիմնականում նախադաս են, բայց կարող են նաև հետադասվել, իսկ սակավ դեպքերում նաև միջադասվել:

If he *be* here, phone us.

If all these people *come* and *spit* at me what will you do?

Եթե ոստիկանությունը *թերանա* հարկ կլինի կտրուկ միջոցներ ձեռնարկել՝ չվճարվող դրամը հավաքելու համար: (Հ.Մ.)

Կնիկ, այ կնիկ, թե որ բախտ *ունենամ*, մեծ մարդ *կդառնամ*: (Ավ. Ի.)

Եթե պատահաբար հարցին լուծում *չկարողանաս* տալ, հույսդ մի կորցնի, լույսը կբացվի, բարին հետը:

Պայմանի հարաբերություն արտահայտող պայմանի կախյալ նախադասություններին կարող են հաջորդել ինչպես պայմանական, այնպես էլ հրամայական եղանակով արտահայտված նախադասություններ, որոնք էլ հայերենում հանդես են գալիս սահմանական ապառնիի իմաստով:

Երբեմն պայմանի հարաբերություն արտահայտող կախյալ նախադասություններում ըղձական ներկան գործածվում է համընդհանուր, հայտնի ճշմարտություններ արտահայտելու համար, սահմանական ներկայի իմաստով.

If the plant *be* rare, the discovery gives me joy.

If in this heart a hope *be* dear.

That sound shall charm it forth again;

If in these eyes there *lurk* a tear,

“Twill *flow* and *cease* to burn my brain”: (Byron)

Գանշինան և Վասելյակայան անգլերենի սահմանական ներկայի և ըղձական ներկայի տարբերությունը բացատրում են ոճական տարբերությամբ:

Անգլերենում՝ ըղձական ներկան և հայերենում՝ ըղձական ապառնին կարող են գործածվել ինչպես *ներգործական*, այնպես էլ *կրավորական* սեռում:

Members of the committee suggested England *be* excluded from future international tournaments. (կրավորական սեռ)

Իմ առաջարկն է, որ հեռագիրն անմիջապես ուղարկվի:

Ինչ վերաբերում է կրավորական բայաձևին, հարկ է նշել, որ այն միշտ չէ որ արտահայտվում է հայերենի կրավորականով:

Զուգադրվող երկու լեզուներում անգլերենի ըղձական ներկան և հայերենի ըղձական ապառնին կարող են գործածվել նաև խոսքային տարբեր ոլորտներում՝

թե՛ Ժողովրդախոսակցական լեզվում, թե՛ գրական-գեղարվեստական խոսքում, թե՛ գիտահրապարակախոսական աղբյուրներում, թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում:

Անգլերենի ըղձական ներկան և հայերենի ըղձական ապառնին կարող են գործածվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խոսքում, հիմնականում կասկած արտահայտելու համար, ասույթի գործողության վերաբերյալ: Եվ այստեղ անհրաժեշտ է, և շատ կարևոր է նշել, որ ներկա ըղձականի արտահայտած գործողությունը ժամանակների համաձայնեցման կանոնին չի ենթարկվում:

She insisted that Ann *pay* her own way.

We require that all receipts *be submitted* to the committee for approval.

Ասում են, որ գնամ մի բաժակ ջուր բերեմ:

Ասում են, որ տան հիմքը լավ դնեմ, որ հետո չփոշմանեմ:

Հայերենում ըղձական ապառնին, երբեմն գործածվում է անորոշ դերբայի փոխարեն [Ս. Աբրահամյան 1975:153]:

Ուզում է տեղ հասցնի: Կարող ես դու առաջ *բերես* և հետևանքը ցանկալի: (Հ.Թ.)

Անգլերենում ըղձական ներկան և հայերենում ըղձական ապառնին կարող են գործածվել ինչպես *հաստատական* այնպես էլ *ժխտական* նախադասություններում:

Regulations require that officers not enter the crime scene without protective clothing.

Դուք ասում եք, որ ես *չգնեմ* այս տունը:

Ոչ *ունենամ* քեզ պես ընկեր:

Հանձնաժողովը պահանջում է, որ մասնակիցները ելույթներով նախկինում հանդես *եկած չլինեն*:

Այսպիսով, անգլերենի ըղձական ներկայի և հայերենի ըղձական ապառնիի իմաստագործառական և կառուցվածքային զուգադրումը ցույց է տալիս, որ նրանք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ.

ա) նրանք կարող են գործածվել պարզ նախադասություններում (տես օրինանք, անեծքի, հրամանի դեպքերը).

բ) հիմնականում գործածվում են որոշակի տիպի կախ-յալ նախադասություններում.

գ) գործածվում են իրենց բնույթով տարբեր նախադասություններում, ինչպես պատմողական, հարցական, այն-պես էլ բացականչական.

դ) իմաստային առումով ըղձական եղանակը երկու լեզուներում էլ արտահայտում է ցանկություն. անիրական բայց հնարավոր գործողություն.

ե)կառուցվածքային առումով համադրական են երկուսն էլ, ունենք Օ վերջույթ անգլերենում՝ բոլոր դեպքերի համար, հայերենում՝ բազում զարգացած դիմային վերջույթներ, կախված դեմքի, թվի կարգերից.

զ)ժխտում կազմում են երկուսն էլ, բայց անգլերենի ժխտական *not* մասնիկը գործածվում է անմիջապես դրվելով բայածևից առաջ որպես անկախ բառ և առանց օժանդակ բայի առկայության, իսկ հայերենում չ ժխտական սուկածացն ավելանում է բայասկզբին կազմելով մեկ բառ.

է)նրանց երկուսի արտահայտած գործողությունը վերաբերում է ներկային և ապառնիին.

ը)հիմնականում զուգադրվող երկու լեզուներում էլ այս եղանակները գործածվում են կախյալ նախադասություններում՝ որոշակի բայերից, գոյականներից, ածականներից հետո, որոնց գտնում ենք գերադաս նախադասություններում և որոնք էլ արտահայտում են եղանակավորություն: Կրկնակի եղանակավորության գործածությունը ոչ մի դեպքում չի նսեմացնում ըղձական եղանակի դերը.

թ)կախյալ նախադասությունները կարող են կապվել գերադաս նախադասությունների հետ կապակցության տարբեր ձևերով. շաղկապով և անշաղկապ (զեղչելով շաղկապը), ինչպես նաև շարահարությամբ.

ժ)կախյալ նախադասությունները երկու լեզուներում էլ կարող են լինել նախադաս, միջադաս և ետադաս.

ի)զուգադրվող երկու լեզուներում էլ նշված եղանակածևերը կարող են գործածվել, ինչպես ներգործական, այնպես էլ կրավորական սեռում.

յ)զուգադրվող երկու լեզուներում էլ նշված եղանակածևերը կարող են գործածվել ինչպես արձակում, նաև փաստաթղթային և վերամբարձ ոճում, հեքիաթներում, այնպես էլ պոեզիայում:

խ)զուգադրվող երկու լեզուներում կարող են գործածվել՝ ենթակայական, ստորոգելիական, խնդիր, բացահայտիչ, նպատակի, պայմանի, զիջման կախյալ նախադասություններում միևնույն գործառույթով.

ծ)զուգադրվող երկու լեզուներում էլ նշված եղանակածևերը կարող են գործածվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խոսքում.

կ)կարող են երկու եղանակներն էլ երբեմն գործածվել անորոշ դերբայի փոխարեն.

հ)հայերենում ըղձական ապառնի կարող է երբեմն գործածվել սահմանական ապառնիի կամ սահմանական ներկայի փոխարեն.

ձ)չնայած նշված ընդհանրություններին նրանք մնում են տարբեր, քանի որ ներկայացնում են կառուցվածքով տարբեր լեզուներ իրենց յուրահատուկ օրինաչափություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ֆ. Խլիլյան, Ժամանակակից հայոց լեզու, 2010, Երևան, էջ 168
2. Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, 2003, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, էջ 287
3. Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան. 1975, Հայոց լեզու, էջ 151-153
4. Հ. Թորմաջյան, 1995, Անգլերենի քերականություն, էջ 108
5. Смирницкий, 1957, Синтаксис английского языка, Москва 157
6. В. Гак. 2000, Теоретическая Грамматика французского языка. 315.
7. M. Foley and D. Hall, 2009, Advanced Learner's Grammar, Longman, 131
8. M. Ganshina, N. Vasilevskaya, 1964, English Grammar, 217-220
9. M. Hewings, 2005, Advanced Grammar in use. Cambridge, 78-80
10. N. Kobrina, E. Korneyeva, M. Ossovskaya, K. Guzeyeva, 1985, An English Grammar, Moscow, Morphology.
11. Prodromou, 2000, Grammar and Vocabulary for First Certificate, Longman.

SVETLANA AZIZYAN - SEMANTIC, STRUCTURAL AND FUNCTIONAL PECULIARITIES OF THE ENGLISH SUBJUNCTIVE PRESENT AND ARMENIAN ԸՂՁԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

The contrastive analysis says that different people in different languages usually express the same idea using different means peculiar to their languages. The comparison of those means in different languages helps the learner become aware of the regularities of the corresponding grammatical system in foreign and his own languages. Basically the same extralinguistic pieces of reality, are used and the semantic relationship acquires grammatical expressions, common to mankind in general. The semantic, structural and functional similarities and differences of present *subjunctive and ըղձական սպառնի* have been pointed out in this article.

СВЕТЛАНА АЗИЗЯН - СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ АНГЛИСКОГО SUBJUNCTIVE PRESENT И АРМЯНСКОГО ԸՂՁԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

В данной работе дается сопоставительный анализ двух наклонений в разноструктурных языках: английском и армянском. Анализ английского *Present Subjunctive* и армянского *ըղձակա՛ն ապառնի՛ի* проводится в семантическом, структурном и функциональном планах, что дает возможность студентам выявить сходства и различия между этими структурами, хорошо усвоить данные грамматические формы и свободно употребить их в речи.

**ԲԱԶՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՁԵՎ
ԵՎ ԴՐԱ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ**

ՄԱՆԱՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ

*Հիմնաբառեր՝ երկխոսություն - մենախոսություն - բազմախոսություն
եռամիասնություն, եռախոսություն, հաղորդակցման ձևեր, հասցեագրում*

Սույն հոդվածը անդրադարձ է բազմախոսությունների՝ որպես խոսքային գործունեության ձևի կարգավիճակի սահմանմանը խոսքային գործունեության մյուս ձևերի շարքում:

20-րդ դարի կեսից հաղորդակցական լեզվաբանության զարգացմանը զուգընթաց լեզվաբանների ուշադրության կենտրոնում հայտնվեց խնդիրների մի ամբողջ համախումբ, որը ներառում էր նաև խոսքային գործունեությունը: Վերջին տասնամյակների ընթացքում այն դիտարկվում է շփման, հաղորդակցման տեսանկյունից: Խոսակցության բնույթի ուսումնասիրությունը ենթադրում է խոսքային գործունեության ձևերի ուսումնասիրություն: Խոսքային գործունեության ձևերի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է լեզվի նկատմամբ մարդակենտրոն մոտեցմամբ՝ ուղղված մարդուն, սոցիումին, մշակույթին: Խոսքային գործունեության ձևերը կարելի է համարել հաղորդակցման կաղապար, որտեղ հաշվի են առնվում մասնակիցների դերերը և նրանց փոխազդեցության բոլոր հնարավոր տարբերակները:

Խոսքային գործունեության ձևերի ուսումնասիրության ոլորտում այսօր գերիշխող է երկու մոտեցում: Ըստ առաջին մոտեցման՝ հակադրվում են խոսքային գործունեության երկու ձև՝ մենախոսություն և երկխոսություն: Հակառակ տեսակետը մերժում է այդ երկատումը՝ համարելով, որ այն չի արտահայտում խոսքային իրականությունը: Երկրորդ մոտեցման կողմնակիցները խոսքային գործունեությունը համարում են եռամիասնություն, որը մենախոսությունից և երկխոսությունից բացի ներառում է նաև բազմախոսությունը:

Երկու մոտեցման ներկայացուցիչներն էլ բերում են բազմաթիվ փաստարկներ իրենց տեսակետն ապացուցելու համար:

Մասնագիտական գրականության մեջ խոսքային գործունեության ձևերի վերաբերյալ երկար ժամանակ գերիշխող է եղել այն մոտեցումը, համաձայն որի գոյություն ունեն խոսքային գործունեության երկու ձև՝ մենախոսություն և

երկխոսություն: Մենախոսության և երկխոսության հակադրությունը հիմնվում է հաղորդակցական դերերի փոխանակման առկայության կամ բացակայության փաստի վրա: Մենախոսությունն ակտիվ խոսքային գործունեություն է, որին հատուկ է պասիվ և միջնորդավորված ընկալում: Այն բովանդակային և կառուցվածքային առումով միմյանց կապակցված ասույթների ամբողջություն է, որն ունի անհատական կոմպոզիցիոն ամբողջականություն և իմաստային ավարտվածություն [Винокур 1998: 310]:

Մասնագիտները համարում են երկխոսությունը շփման բնական և առաջնային տեսակ: Այն խոսքային գործունեության ձև է, որը բաղկացած է այնպիսի ասույթների փոխանակումից, որոնց լեզվական բովանդակության մեջ ներառվում է հասցեագրողի՝ խոսքային գործունեության գործընթացում հասցեատիրոջն ակտիվացնող անմիջական ընկալումը [Винокур 1998: 135]:

Մ. Բախտինը, անդրադառնալով երկխոսությանը, նշում է, որ այն՝ իր պարզությամբ և հստակությամբ, խոսքային գործունեության դասական ձև է [Бахтин 1979: 251]: Ըստ նրա՝ յուրաքանչյուր պատասխան մենախոսական բնույթ ունի (հնարավորինս փոքր մենախոսություն), սակայն յուրաքանչյուր մենախոսություն հանդիսանում է մի մեծ երկխոսության մաս: Մենախոսությունն ուղղված չէ որևէ մեկին, հետևաբար՝ չի պահանջում պատասխան: Ինչ վերաբերում է երկխոսական հարաբերություններին, ապա դրանք խոսքային գործունեության ցանկացած արտահայտությունների միջև իմաստային հարաբերություններն են [Бахтин 1979: 259]:

Երկխոսական խոսքի հիմնական կառուցվածքային-իմաստաբանական միավորը երկխոսական միասնությունն է, որը բաղկացած է կառուցվածքով և բառապաշարով կապված երկու կամ ավելի դիտողությունից, որոնք ունեն մեկ միասնական իմաստային կենտրոն՝ խոսակցության առարկան: Այս դիտողությունները բառապաշարով, քերականապես, առոգանությամբ և հաղորդակցական տեսանկյունից փոխապայմանավորված են:

Մեկ այլ տեսակետի համաձայն մենախոսության և երկխոսության տարանջատումը նույնպես ինչ-որ չափով պայմանական է: Այս ձևերի առանձնացումը բխում է որոշ հետազոտողների կողմից մենախոսության՝ ինքնուրույն գոյության փաստի ժխտումից [Бахтин 1979, Винокур 1998]:

Չնայած այն հանգամանքին, որ մասնագետները համարում են մենախոսությունը խոսքի արհեստական ձև, այն այնուամենայնիվ խոսքային գործունեության հիմնական և բնական ձև է: Այն խոսողի ինքնարտահայտման առաջնային եղանակն է: Մենախոսությունը հաղորդակցական-խոսքային ակտ է, որը չի ենթադրում արձագանք, սակայն այնուամենայնիվ ուղղված է լսարանին, և

լսարանի արձագանքը պարտադիր նախապայման է մենախոսության նպատակին հասնելու համար:

Մենախոսության և երկխոսության միջև ընկած անցումային տեսակներին անդրադառնալիս լեզվաբանները դրանք ներառում էին երկխոսությունների մեջ: Խոսքային գործունեության ձևերը չտարբերակելու պատճառ կարող է հանդիսանալ այն փաստը, որ կան բազմաթիվ խառնածին ձևեր, ինչը կասկածելի է դարձնում խոսքային գործունեության ձևերի միանշանակ, «մաքուր» և տարբերակիչ հատկանիշների գոյությունը: Խոսքային գործունեության ձևերը հստակ չեն սահմանազատվում մեկը մյուսից, այլ փոխարկվում են մի ձևից մյուսը:

Հասարակության զարգացման արդի փուլում հետզհետե աճում է հետաքրքրությունը խոսքային գործունեության ևս մեկ տեսակի, այն է՝ բազմախոսության նկատմամբ: Վերջինս ուսումնասիրվում է տարբեր գիտակարգերի կողմից, ինչպիսիք են հոգեբանությունը, հասարակագիտությունը, հաղորդակցման տեսությունը, փիլիսոփայությունը, գործաբանությունը և այլն: Վերջին տասնամյակներում ձևավորված մարդակենտրոն մոտեցումը հնարավորություն տվեց մանրակրկիտ կերպով ուսումնասիրել բազմախոսությունների տիպաբանությունը, դրանց հիմնական առանձնահատկությունները, միավորները, բազմախոսություններում կիրառվող խոսքային ակտերը և մասնակիցների միջանձնային հարաբերությունների ազդեցությունը նրանց ընտրած լեզվական միջոցների վրա:

Բազմախոսությունները բնույթով բարդ են: Դրանք կարող են լինել ա) նախապես պատրաստված, ինչպես, օրինակ, թատերական պիեսները, բ) հանպատրաստից, ինչպես, օրինակ, ուսանողական խոսքը, գ) հանպատրաստից, որը սակայն ենթադրում է նաև մասամբ պատրաստվածություն, ինչպիսին է հեռուստատեսային խոսքը:

Բազմախոսություններն ուսումնասիրվել են տարբեր լեզուների նյութի հիման վրա, մասնավորապես՝ դիտարկվել են բազմախոսությունները հարացուցային շարահյուսության տեսանկյունից անգլիական պիեսների հիման վրա [Крылова 1997], ուսումնասիրվել են բազմախոսությունները և դրանց տարատեսակ եռախոսությունները ժամանակակից ֆրանսիական դրամայի հիման վրա [Читахова 2001], եռախոսությունները ժամանակակից ռուսերենում [Зильберман 2009] և այլն:

Ակնհայտ է, որ ավելի մանրամասն ուսումնասիրվել է բազմախոսության գրավոր տարբերակը: Բազմախոսության բանավոր տարբերակն սկսել է ուսումնասիրվել ավելի ուշ, օրինակ՝ դիտարկվել են գերմանական հանպատրաստից բազմախոսական խոսքի առանձնահատկությունները

[Яковлева 2004], խոսող-լսող փոխհարաբերությունները բազմախոսություններում ամերիկյան *Friends* հեռուստասերիալի հիման վրա [Dynes 2010], խմբային բազմախոսական շփումը անգլերենում [Маковецкая 2012] և այլն:

Որոշ լեզվաբաններ խոսքային գործունեության հիմնական տեսակ են համարում երկխոսությունը, քանի որ այն հաղորդակցման հնագույն ձևն է: Մենախոսությունը, հետևաբար, երկխոսության համեմատ երկրորդական է: Առաջարկվում է նաև խոսքային գործունեության տարատեսակներն առանձնացնելիս շեշտը դնել ոչ միայն հաղորդակցման մասնակիցների քանակի վրա, այլև դիտարկվող հաղորդակցական ձևերի միջև առկա հարաբերությունները բնորոշող հատկանիշների վրա, ինչպիսիք են՝ տարածաժամակային հարաբերությունները, հաղորդակցման առարկան, հաղորդակցման միջոցները: Խոսքային գործունեության ձևերի մեջ գլխավորը համարելով երկխոսությունը՝ մենախոսությունը և բազմախոսությունը տարբերվում են երկխոսությունից վերոնշյալ հատկանիշների պակասելու կամ ավելանալու շնորհիվ: Նմանատիպ մոտեցման համաձայն՝ խոսողն է որոշում՝ տվյալ խոսքային գործունեության ձևը մենախոսություն է, երկխոսություն, թե բազմախոսություն [Kloepfer 1981: 313-333]:

Մեկ այլ մոտեցման համաձայն՝ բազմախոսությունը պետք է համարել երկխոսության տարատեսակ: Բազմախոսությունը երկխոսությունից չառանձնացնելու պատճառ է հանդիսանում այն, որ բազմախոսությանը հատուկ են այն նույն հատկանիշները, որոնք հատուկ են երկխոսությանը, իսկ երկուսից ավելի մասնակիցների առկայությունը բավարար հիմք չի հանդիսանում այն երկխոսությունից տարբեր համարելու համար: Այս տեսակետն ապացուցելու համար առաջ են քաշվում հետևյալ փաստարկները՝

- Բառարաններում «երկխոսություն» եզրույթն ունի հստակ սահմանում՝ խոսքային հաղորդակցություն երկու և ավելի մասնակիցների միջև, մինչդեռ բազմախոսություն հասկացությունը բառարաններում չկա [Яковлева 2004: 22]:

- Մյուս կողմից նշվում է, որ երկու անձանց միջև խոսքային փոխազդեցությունը շփման բնական և հիմնական ձևն է: Սակայն այս մոտեցումն անտեսում է այն փաստը, որ բազմաթիվ իրավիճակներում հաղորդակցումն իրականանում է երկուսից ավելի անձանց միջև:

- Կարևորագույն փաստարկ է համարվում նաև տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների միջև փոխընթացման մասին խոսելիս մշակութային երկխոսություն հասկացության առկայությունը: Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ այդ հասկացության կողքին կա մեկ ուրիշը՝ բազմակարծություն, որն արդեն ամրապնդել է իր դիրքերը տարբեր լեզուներում՝

որպես տարակարծության նկատմամբ հանդուրժողականության արտահայտում, որը նույնպես ի վերջո հանգեցնում փոխըմբռման:

Մեկ այլ տեսակետ համարում է բազմախոսությունը խոսքային գործունեության առանձին ձև՝ իր կարգավիճակով մենախոսությանն ու երկխոսությանը հավասար:

Թե արդյոք անհրաժեշտ է առանձնացնել երկխոսությունները բազմախոսություններից, կախված է բազմախոսություններում՝ երկխոսություններից տարբեր հատկանիշների առկայությունից: Հիմնվելով լեզվաբանության և այլ հարակից գիտությունների տվյալների վրա՝ լեզվաբանների մի մասը բազմախոսությունը համարում խոսքային գործունեության ինքնուրույն տարատեսակ, որը հակադրվում է և՛ մենախոսությանը, և՛ երկխոսությանը:

Բազմախոսություն եզրույթի հայտնվելը հանգեցնում է բազմախոսության և երկխոսության տարբերակման հստակ չափանիշներ սահմանելու անհրաժեշտությանը:

Անդրադառնալով խոսքային գործունեության ձևերի գործաբանական առանձնահատկություններին՝ Է. Յակովլևան հակառակվում է այն կարծիքին, որ մասնակիցների քանակը որոշիչ դեր չի կատարում խոսքային ձևերի առանձնացման համար: Չի կարելի անտեսել մասնակիցների քանակը՝ հաշվի առնելով միայն մասնակիցների դերերը և դիտողությունների նպատակաուղղվածությունը: Մասնակիցների քանակը անհրաժեշտ նախապայման է երկխոսականից բազմախոսական խոսքային ակտի անցման համար: [Яковлева 2004: 24] Համաձայնելով այս մտքի հետ՝ պետք է նշել, որ ամեն հաջորդ մասնակցի ավելանալը բարդացնում է խոսքային գործունեության պատկերը:

Է. Յակովլևայի պնդմամբ խոսքի մենախոսական և երկխոսական ձևերի ուսումնասիրությունը չի արտահայտում բազմախոսությունների առանձնահատկությունները: Մասնավորապես հեղինակը նշում է արտալեզվական գործոնների կարևորությունը, ինչպիսիք են մասնակիցների քանակը, հաղորդակցման իրավիճակի առանձնահատկությունը, դրա ստորակարգությունը խոսակիցների հասարակական կարգավիճակի անհամաչափության դեպքում և այլն, որոնք չեն ներառվում մենախոսության և երկխոսության տիրույթներում [Яковлева 2007: 83]:

Փորձելով համեմատել բազմախոսությունը և երկխոսությունը՝ կարելի է նշել, որ երկուսն էլ համարվում են շփման խմբային ձևեր և այդ կերպ հակադրվում են մենախոսությանը: Երկխոսական միասնության հիմնական միավորը թեմատիկորեն կապակցված մի քանի ասույթների ամբողջություն է, որը

կարող է լինել տեղեկատվություն, կարծիքների փոխանակում: Ամեն հաջորդ ասույթ սերտ կապված է նախորդի հետ կառուցվածքային և բովանդակային տեսանկյունից: Այս առանձնահատկությունը դրսևորվում է նաև բազմախոսություններում:

Բազմախոսություններում ասույթների կապակցվածությունը, սակայն, առավել բարդ է և ազատ: Այն կարող է պայմանավորված լինել մասնակիցներից մի մասի ակտիվությամբ, մյուսների պասիվությամբ: Բազմախոսության մասնակիցների մի մասն առավել մեծ ներդրում ունի հաղորդակցման գործընթացում, մյուս մասը նախընտրում է լռել և մասնակցել խոսակցությանը՝ միայն մեկ-երկու դիտողություն անելով:

Ե՛վ երկխոսություններում, և՛ բազմախոսություններում գերիշխող է հաղորդակցական ակտերի կազմակերպման երկխոսական սկզբունքը: Երկխոսության դեպքում առկա է մեկ խոսող և մեկ լսող, բազմախոսություններում խոսողների և լսողների թիվը սահմանափակ չէ: Երկխոսությունում և բազմախոսությունում հաղորդակցական դերերը հավասարազոր են, այսինքն՝ յուրաքանչյուրը կարող է դառնալ խոսող կամ լսող [Зильберман 2009: 12]: Բազմախոսական փոխազդեցություններն ավելի անկանխատեսելի, ճկուն և փոփոխական են, քան երկխոսականները: Եթե երկխոսությունում կարելի է առանձնացնել մասնակիցների երկու դեր՝ ա. վարող (նախաձեռնող) և բ. գործընկեր (հակազդող), ապա բազմախոսություններում մասնակիցների դերերի բաշխումն ավելի բարդ բնույթ ունի: Խոսքափոխանակման հերթականությունը սահմանվում է քանակական, միջանձնային և դերային հարաբերություններով [Яковлева 2007: 86]:

Բազմախոսության և երկխոսության տարբերություններին անդրանդառնալիս նշվում է նաև միջամտության գործառույթը, որը խոսողի համար ի սկզբանե կանխենթադրված է: Խոսողի միջամտությունը բազմախոսություններում չի փոփոխում խոսքային գործունեության ձևը, մինչդեռ երկխոսություններում խոսողը կարող է միայն արձագանքել խոսակցի ասածին կամ ընդհատել նրան՝ հանդիսանալով խթան հետագա խոսքի համար: Միջամտողի նպատակն է փոփոխել խոսքային գործունեության ներկայիս վիճակը: Երկխոսության մասնակիցը կատարում է իր ներդրումը խոսակցության մեջ այնպես, որ հաղորդակցման ընթացքը չխափանվի: Բազմախոսության դեպքում միջամտողի նպատակն է մասնակցել խոսակցությանը, դառնալ հաղորդակցման անդամ:

Ինչպես նշում է Է. Յակովլևան, խոսակիցների փոխադարձ կախվածությունը բազմախոսությունում առանձնահատուկ է: Մի կողմից՝ բազմակողմանի հաղորդակցական գործընթացը կախված է խոսքային ակտի

բոլոր մասնակիցների ակտիվությունից, մյուս կողմից՝ խոսակիցներից յուրաքանչյուրը հնարավորություն ունի որոշ ժամանակ չմասնակցել խոսակցությանը, այլ միանալ քննարկմանը կանխավ մտածված ելույթով [Яковлева 2004: 41]:

Յուրաքանչյուր երկխոսական միասնություն բնութագրվում է կառուցվածքային և բովանդակային ամբողջականությամբ, շարահյուսական և հաղորդակցական ավարտվածությամբ: Այն հետազոտողները, ովքեր խոսքային գործունեության ձևերի մեջ ներառում են բազմախոսությունները, համարում են, որ բազմախոսությունները, նաև դրանց տարատեսակները (մասնավորապես՝ եռախոսությունները) նույնպես օժտված են այս առանձնահատկություններով [Науменко 2012: 6]:

Երկխոսության և բազմախոսության առանձնահատկություններին անդրադառնալիս կարևորվում է նաև թեմատիկ բազմաձայնությունը (պոլիֆոնիան), այն է՝ թեմատիկ բազմազանությունը: Ա. Ժուռավյովը նշում է, որ թեմատիկ բազմազանությունը, որ հատուկ է բազմախոսությանը, հատուկ է նաև երկխոսությանը, ինչ հետևանքով նա չի առանձնացնում բազմախոսությունը՝ որպես խոսքային գործունեության առանձին տարատեսակ [Журавлев 1988]:

Պետք է նշել, որ չնայած այն փաստին, որ թեմատիկ բազմազանությունը հատուկ է խոսքային գործունեության և՛ երկխոսական, և՛ բազմախոսական ձևերին, այնուամենայնիվ այն տարբեր կերպ է դրսևորվում խոսքային գործունեության այս երկու ձևերում: Երկխոսության դեպքում միայն երկու խոսակից են ազդում երկխոսության թեմայի զարգացման ընթացքի վրա, հետևաբար այդ թեման ունի զարգացման միայն սահմանափակ թվով հնարավորություններ: Մինչդեռ որքան շատ լինեն հաղորդակցման մասնակիցները, այնքան ավելի շատ ու բազմազան կլինեն խոսակիցների ներդրումները, իսկ բազմախոսության թեման կունենա ամենատարբեր զարգացումներ և կներառի զանազան ենթաթեմաներ:

Փաստորեն, բազմախոսությունը մարդկային հաղորդակցման ավելի բարդ ձև է, քան երկխոսությունը:

Այնուամենայնիվ չպետք է անտեսել այն, որ հաղորդակցման բոլոր ձևերը գտնվում են փոխկապակցվածության մեջ, այսինքն՝ մենախոսությունը հատուկ է և՛ երկխոսությանը, և՛ բազմախոսությանը, երբ հաղորդակիցներից միայն մեկն է խոսում: Երկխոսությունները բաժանվում են մենախոսությունների, իսկ բազմախոսությունները՝ երկխոսությունների: Սակայն երկխոսությունները մենախոսությունների մեխանիկական հանրագումար չեն, իսկ բազմախոսությունների մաս կազմող երկխոսությունները ապակողավորվում են միայն բազմախոսությունների մեջ. դրանք բազմախոսություններից դուրս

իմաստային արժեք չունեն/ մասամբ ունեն: Ինչպես նշում է Է. Յակովլևան, նվազագույն աղավաղումներով բազմախոսությունը երկխոսության փոխարկելու փորձերը հանգեցրել են իմաստաբանական բնույթի առանցքային փոփոխությունների [Яковлева 2007: 189]:

Հետաքրքրական է, որ խոսքային գործունեության ձևերի ուսումնասիրության ժամանակ փորձեր են արվում մասնատել բազմախոսությունները՝ բաժանելով դրանք եռախոսությունների, քառախոսությունների և այլն՝ հիմնվելով հաղորդակցման մասնակիցների քանակական ցուցանիշի վրա: Ուսումնասիրողները նշում են, եռախոսությունները նույնպես հակադրվում են մենախոսությանն ու երկխոսությանը, և երրորդ անձի ավելանալը էականապես փոփոխում է խոսքային գործունեության պատկերը: Մասնավորապես հիշատակության արժանի է Լ. Չիտախովայի տեսակետը այս հարցի վերաբերյալ, ով, դիտարկելով եռախոսությունները ժամանակակից ֆրանսերենում, նշում է, որ լեզվաբանության և այլ գիտությունների կուտակած տվյալները հնարավորություն են տալիս առանձնացնել բազմախոսությունը՝ որպես խոսքային գործունեության ինքնուրույն ձև և այն հակադրել ոչ միայն մենախոսությանը և երկխոսությանը, այլև իր տարատեսակներին, առաջին հերթին՝ եռախոսություններին [Читачова 2001]:

Եռախոսությունը խոսքային գործունեության ձև է երեք մասնակիցների միջև՝ լինելով շարահյուսական տեսանկյունից փակ կառուցվածքային-իմաստաբանական ամբողջություն՝ միասնական թեմայով, բաղկացած երկու (եթե երրորդ մասնակիցը լռում է) կամ երեք դիտողությունից, որոնք փոխկապակցված են բառային, քերականական և հաղորդակցական տեսանկյունից և պարունակում են հաղորդակցման երրորդ մասնակցի լեզվական ցուցիչները [Haymenko 2012: 5]:

Եռախոսությունների ուսումնասիրության կարևորությունը պայմանավորված է դրանց հարաբերական պարզությամբ, ինչի շնորհիվ եռախոսություններն առավել ցայտուն են դարձնում երկխոսությունների և բազմախոսությունների տարբերությունները: Եռախոսությունն, իր հերթին, երկխոսությունից էականապես տարբերվում է երրորդ մասնակցի առաջ բերած փոփոխությունների շնորհիվ, մասնավորապես՝ երրորդ անձի միջամտությունը փոփոխության է ենթարկվում լեզվական միջոցների ընտրության սկզբունքները և հաղորդակցման մասնակիցների դերերի բաշխումը:

Եռախոսությունում լսողները կարող են ունենալ ուղիղ հասցեատիրոջ, կողմնակի հասցեատիրոջ և պատահական լսողի կարգավիճակ: Խոսողն է իրականացնում լսողների կարգավիճակի բաշխումը զանազան լեզվական և ոչ լեզվական միջոցներով. դրանք են՝ դիմում, խոսքի եղանակը (տոնը), խոսքի բովանդակությունը, հայացքները, ժեստերը, տարածական դասավորությունը:

Երեքից ավելի մասնակից ներառող բազմախոսություններում ուղիղ հասցեատեր, կողմնակի հասցեատեր և պատահական լսողի կարգավիճակ կարող են ունենալ մեկից ավելի անձինք, ինչի հետևանքով կարգավիճակների բաշխման գործընթացը դառնում է ավելի բարդ երևույթ: Կարգավիճակների փոփոխություն կարող է տեղի ունենալ բազմախոսության զարգացման ցանկացած փուլում, ինչի հետևանքով բազմախոսությունները երկխոսություններից առավել անկանխատեսելի են [Читцова 2001]:

Ն. Ջիլբերմանը, նույնպես ընդունելով, որ եռախոսությունը խոսքային գործունեության ինքնուրույն ձև է, միևնույն ժամանակ նշում է, որ եռախոսությունը խոսքի երկխոսական ձևերից մեկը, որը կազմավորվում է հետևյալ տարբերակիչ հատկանիշների հիման վրա՝ հաղորդակցական դերերի փոխանակումը և բաշխումը, հաղորդակցական դեր իրականացնող մասնակիցների քանակը: Բացի հաղորդակցման մասնակիցների քանակից կարևոր է նաև խոսքային գործունեության ընթացքում նրանց ակտիվությունը կամ պասիվությունը [Зильберман 2009: 13]:

Այսպիսով, ուսումնասիրելով խոսքային գործունեության վերաբերյալ առկա տեսակետները՝ հանգում ենք հետևյալ եզրակացության. բազմախոսությունը պետք է համարել խոսքային գործունեության ինքնուրույն տարատեսակ՝ իր կարգավիճակով հավասար երկխոսությանն ու մենախոսությանը: Այն չի կարող համարվել երկխոսության տարատեսակ, քանի որ վերջինից ունի մի շարք որակական տարբերություններ: Ի տարբերություն երկխոսությունների՝ բազմախոսություններում դիտվում է խոսքային ակտերի նոր ուրվագծում: Երկխոսությունն ու բազմախոսությունը կարծր ձևեր չեն. դրանց հատուկ է հարաշարժություն և կառուցվածքային ու թեմատիկ ճկունություն:

Ինչ վերաբերում է եռախոսությունների առանձին կարգավիճակին, ապա պետք է նշել, որ եռախոսությունները, ըստ էության, հանդիսանում են միկրոբազմախոսություններ, քանի որ դրանցում առկա են բոլոր այն որակները, որոնցով օժտված են բազմախոսությունները: Եռախոսությունը բազմախոսությունում դիտվող ստորակարգության ամենացածր աստիճանն է: Եռախոսությունները դիտարկումը՝ որպես խոսքային գործունեության առանձին տարատեսակ կհանգեցի խոսքային գործունեության ձևերի մասնատվածությանը:

Խոսքային գործունեության ձևերի կարգավիճակների դիտարկումը բավականին բարդ խնդիր է և հնարավոր չէ իրականացնել մեկ գիտության շրջանակում: Հարցի լեզվաբանական (այդ թվում՝ առոգանական) կողմի անտեսումը չի տա խնդրի ամբողջական պատկերը: Բազմախոսության և դրա տարատեսակների ուսումնասիրությունը ժամանակակից լեզվաբանության

ամենահեռանկարային ուղղություններից է, և այդ հարցը դեռևս չի ստացել իր վերջնական լուծումը:

Ավելացնենք նաև, որ չնայած այն փաստին, որ վերջին տարիներին մեծ թափ է առել բազմախոսությունների ուսումնասիրությունը, դրանք հիմնականում դիտարկվել են գրավոր տեքստերի հիման վրա, իսկ հանպատրաստից բազմախոսական խոսքային գործունեությունը նմանատիպ ուշադրության քիչ է արժանացել: Վերացարկվելով բազմախոսության տարբեր տեսակներից (գրավոր և բանավոր)՝ պետք է նշել, որ խոսքային գործունեության այս ձևը ուսումնասիրվել է գերմաներեն և ֆրանսերեն նյութի հիման վրա ավելի մանրամասն, քան անգլերենի:

Նկատի ունենալով, որ օրեցօր ավելանում են այն իրավիճակները, որտեղ կիրառվում են բազմախոսությունները (ուսանողական խոսք, հեռուստատեսություն, գիտաշոյովներ, բանավեճեր և այլն), բազմախոսությունների ուսումնասիրությունը դառնում է հոյժ կարևոր: Ավելի խորը ուսումնասիրությունը կարող է ընդլայնել բազմախոսություններում հասցեագրումների կառուցվածքի և տեսակների մասին մեր ունեցած տեղեկատվությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Бахтин М. (1979). *Эстетика словесного творчества*. Искусство, Москва. [<http://ceasefiremagazine.co.uk/in-theory-bakhtin-1/>]
2. Винокур Т.Г. (1998). *Диалогическая речь, Монологическая речь, Полилог // Языкознание*. Большой энциклопедический словарь. Москва. С. 135, 310, 415.
3. Журавлев А. Ф. (1998). *Опыт квантативно-типологического исследования. разновидности устной речи// Разновидности городской устной речи*. Москва. Наука.
4. Зильберман Н. Н. (2009). *Место и статус трилога в системе типов и форм речи*. УДК. 1751.81. Филология. [<http://sun.tsu.ru/mminfo/000063105/328/image/328-012.pdf>].
5. Науменко М. Г. (2012). *Трилог как структурно-семантическое и коммуникативное единство (на материале английского и русского языков)*. Автореферат. Ростов-на-Дону.

6. Читахова Л. Л. (2001). *Трилог как форма общения коммуникантов в современном французском языке*. Москва. [<http://www.dissercat.com/content/trilog-kak-forma-obshcheniya-kommunikantov-v-sovremennom-frantsuzskom-yazyke>].
7. Яковлева Э. Б.. (2004). *Специфика немецкой полилогической речи. Монография*. Москва. Московский государственный лингвистический университет.
8. Яковлева Э.. (2007). *Полилог - третья форма речи?*, Журнал, известия высших учебных заведений. Поволжский регион. Гуманитарные науки, Выпуск № 1. [<http://cyberleninka.ru/article/n/polilog-tretya-forma-rechi>]
9. Dynel M. (2010). *Not hearing things – Hearer/listener categories in polylogues*. University of Łódź.
10. Kloepfer R.. (1980). *Das Dialogische in Alltagssprache und Literatur*. In: Dialogforschung, Jahrbuch 1980 des Instituts für Deutsche Sprache, Düsseldorf, 313-333.

МАНАН АГАБЕКЯН - ПОЛИЛОГ КАК ФОРМА КОММУНИКАЦИИ И ЕГО СТАТУС

The contextual status of communicative units functioning as themes proper and as diathemes / Firbas/ are analysed within the concept of retrievability. The theme proper is by definition retrievable (and deeply integrated in the context of communication). diathemes, however, may be retrievable as well as irretrievable. Some retrievable diathemes are not easily recognized. It seems that the distinction between themes proper and diathemes has to be described more precisely, taking into consideration retrievability / irretrievability, lexical form (pronoun / noun phrase), repetition patterns, presence of contrast, and perhaps other factors. A more detailed description of the diatheme would facilitate the separation of diathemes (often irretrievable) from rhematic phenomena (always irretrievable) (Chamonikolasová and all 2014). So it is seen there is a certain amount of subjectivity in solving the problem of the status of communicative units within FSP. All these questions do not certainly favour the study of the syntax-intonation interface.

Admittedly, the initial part of the succeeding phrase in the microtext, whether a theme or a rheme, is in retrospective relations with previous context: depending on the type of linking with the previous context it receives the corresponding tonal alignment. The analysis deals with two basic types of linking: contact and distant. The contact or chain linking is associated with the incidence of theme in the initial position. The initial position of the theme fosters its intonational highlighting by a kinetic tone. /Hedberg, Sosa / English thematic – rhematic or focus-background structure is mostly expressed by intonational highlighting, while languages with free syntax rely to a greater extent on distinct structural positions. /Steedman 2003/


The pivotal role of information packaging in discourse semantics has conditioned the explosive surge of interest around its intonational expression. This resulted in a whole array of opinions. In discursive approaches / Brazil / focus or rhematic accent is typically assigned to a falling movement, while theme or topic accent is realized by means of a fall-rise. According to structural studies of rhematic-thematic relations actualization reflects strong intonational status of rheme as opposed to its semantically less salient and therefore intonationally deflated counterpart. The analysts studying the intersentential intonational linking and their cohesive functions point that the theory fails to account for the cases where contextually given theme is still prominent. Therefore a complementary pragmatic explanation was introduced which advocated intonational prominence of theme as long as it evokes interest of the speaker / Bolinger /. Also, thematic prosody is significantly reinforced in case of conveying contrastive relations. The concept of strong theme was adopted in works on

intersentential cohesion. It assigned the rheme a fall, a rise-fall or a levelled-out contour. / Brasil / The first two types are associated with the adverbial modifiers in the sentence-initial position. In fictional texts thematic linking is marked by a rise, a fall-rise, a rise-fall and a rise-fall-rise and a high incomplete fall./ Pinaeva 1975/ If the initial position is occupied by a pronoun in the case of contact linking in English the theme is prosodically unmarked. In some works based on autosegmental analysis the analysts stress the role of diapasonic variation in prosodic marking of theme and rheme./ Steedman 2003/

It is supposed that in the analysis of the intonation-information interface the typological and stylistic-discursive perspective may reveal the details which otherwise pass unnoticed. The study aims at revealing the prosodic markers of both types of links in fictional texts .The research into the problem is based on the analysis of 80 microtexts of fictional discourse, realized by six readers, carriers of LEA /Literary Eastern Armenian/ and SE /Standard English/ subjected to autosegmental analysis. The unit of the study was considered relevant for the analysis of the task as the depth encompassed by the unit allows studying the intersentential links.


In the material analysed the contact or chain linking in English with the initial theme was predominantly expressed by unmarked ,falling or falling tone with an initial rise and a falling-rising movements. The distant linear linking with the rheme in the initial position exhibits a tendency to falling movement and to a lesser extent , rising patterns

Table 1 Prosodic arrangement of intersentential links in fictional texts in English




As it is seen from the table the thematic part is marked by a rising falling, falling-rising and falling tones, in a number of cases with an initial rise,while the rhematic part is marked by a fall or a rise-fall.

The following picture of a pitch contour shows the case of a marked theme .




The local spy—and there was one—might thus have deduced that these two were strangers, people of some taste, and not to be denied their enjoyment of the Cobb by a mere harsh wind. *On the other hand / rheme, falling-rising movement /* he might, focusing his telescope more closely, have suspected that a mutual solitude interested them rather more than maritime architecture; and he would most certainly have remarked that they were people of a very superior taste as regards their outward appearance.

The young lady / theme, fall with an initial rise/ was dressed in the height of fashion, for another wind was blowing in 1867: the beginning of a revolt against the crinoline and the large bonnet. / *The French lieutenant's woman, John Fowles /*




In cases of marked thematic basis / diathemes/ the most frequent tones are falling tones, in unmarked cases a slight tonal rise or a slide is traced.

To assess the difference, compare the pitches in the following pictures:




In Sicily/ theme, fall -rise /Michael Corleone learned about the root from which his father grew, that the word mafia/ rheme , rise-fall / originally meant a place of refuge, then it became the name of a secret organization that sprang up to fight against the ruler who would crash the country and its people for centuries. Sicily was a land that had been more cruelly raped than any other in history. The inquisition had tortured rich and poor alike. The landowning barons/ rheme, , fall /and the princes of the Catholic church excersized absolute power over the shephards and farmers. / Puzo M., The God father. Origin of Mafia /



The informational content of the components is also conveyed by a dynamic diapason. The widest diapason is detected on the rheme, comparatively narrow on the theme,



the minimal on the thematic basis and on the unmarked theme. The rheme is also marked by a temporal contrast between the stressed and unstressed syllables.



The colors of the young lady's clothes (theme , fall with an initial rise) would strike us today as distinctly strident; but the world was then in the first throes of the discovery of aniline dyes. And what the feminine, by way of compensation for so much else in her expected behavior, demanded of a color was brilliance, not discretion.


But where the telescopist(rheme, rise-fall ,) would have been at sea himself was with the other figure on that somber, curving mole. It stood right at the seaward most end, apparently leaning against an old cannon barrel upended as a bollard. Its clothes were black. The wind moved them, but the figure stood motionless, staring, staring out to sea, more like a living memorial to the drowned, a figure from myth, than any proper fragment of the petty provincial day.

In that year (1851) , (theme, fall with an initial rise) there were some 8,155,000 females of the age of ten upwards in the British population, as compared with 7,600,000 males. Already it will be clear that if the accepted destiny of the Victorian girl was to become a wife and mother, it was unlikely that there would be enough men to go round. / *The French lieutenant's woman, John Fowles* /




The eye in the telescope might have glimpsed /rheme, /a magenta skirt of an almost daring narrowness—and shortness, since two white ankles could be seen beneath the rich green coat and above the black boots that delicately trod the revetment; and perched over the netted chignon, one of the impertinent little flat “pork-pie” hats with a delicate tuft of egret plumes at the side—a millinery style that the resident ladies of Lyme would not dare to wear for at least another year; while the taller man, impeccably in a light gray, with his top hat held in his free hand, had severely reduced his dundrearies, which the arbiters of the best English male fashion had declared a shade vulgar—that is, risible to the foreigner—a year or two previously. ***The colors of the young lady’s clothes*** would strike us today as distinctly strident; but the world was then in the first fine throes of the

discovery of aniline dyes. And what the feminine, by way of compensation for so much else in her expected behavior, demanded of a color was brilliance, not discretion. *(The French lieutenant's woman, John Fowles)*



The inquisition had tortured rich and poor alike. *The landowning barons* and the princes of the Catholic church exercised absolute power over the shepherds and farmers. *Police /Rheme /were* the instrument of their power and so identified with them that to be called a policeman is the foulest insult one Sicilian can hurl at another. *Faced with the savagery* of this absolute power the suffering people learned never to betray their anger and their hatred for fear of being crushed. They learned never to make themselves vulnerable by uttering any sort of threat since giving such a warning would ensure a quick reprisal. / Puzo M., *The God father. Origin of Mafia* /




And a greatest crime any member of the mafia could commit would be to tell the police the name of the man who had just shot him or done him any kind of injury.


Omerta was the religion of the people. **A woman/ rheme, a fall with an initial rise** /whose husband had been murdered would never tell the police the name of her husband's murderer, not even of her child's murderer. Justice had never been forthcoming from the authorities and so the people had always gone to the Robin Hood mafia and to some extent mafia still fulfilled this role. / *Puzo M., The God father. Origin of Mafia* /

In Armenian the beginning of the phrase in the case of a contact-linking bears predominantly a rise, high or low falls are also met but they are not of frequent occurrence in the fictional text. In a limited number of cases a level tone is used. Opposed to English where pronouns in the function of a theme are prosodically unmarked, Armenian allows a certain extent of prosodic variation in the prosodic arrangement of pronouns. The tonal alignment in the latter case may be either unmarked or bear a kinetic movement depending on the type of the pronoun.


So, the initial theme in Armenian is marked by a rising movement, the intonational marker of a contrastive theme is a widened diapason of the ff and in a number of cases the tendency to a temporal modifications in the realization of stressed and unstressed syllables. This tendency is less expressed on the diathemes.. Unlike theme and diathemes, the rheme is characterized by a prolongation of stressed and unstressed syllables and a less expressed diapason of ff.

Prosodic arrangement of intersentential links in fictional texts in Armenian







Ընդմիջմանը պետք է հասցնի շուկա մտնել: Շուկան մեր արվեստանոցին շատ մոտիկ է: Լավ աղջիկ է Արամուհին: Երեկոյան էլի հյուր ունենք: Տեսես խաղողի թարմ թուփ կլինի, - փսփսում է ականջիս: / **rhetic linking** / **Հասմիկն ու Սեդան** նոր բնակիչներ են մեր աշխարհամասում: / *Վարդգես Պետրոսյան, "Օր և կյանք"* /




Ծխում է նաև Մերին, բայց նա սիրում է դա անել ցուցադրաբար՝ սրճարանում կամ ժողովների ժամանակ: «Կանանց կարելի է, չէ», - ասում է: Միշտ լավ սիգարետներ է ունենում: Միանգամ էլ ինձ տվեց, փորձեցի: «Սալեմ» էր կարծես սիգարետի անունը, անշուշտ հատուկ կանանց համար: Մերին հիմա ոգնու վրա նստածի նման է: Անընդհատ շարժվում է աթոռի վրա աչքը դռներին: / *Վարդգես Պետրոսյան, "Օր և կյանք"* /




Այդ երեկո, երբ Շարմաղ բիբին դուռը քաշեց և ոտքը շեմքին դրեց, հանկարծ ետ քաշվեց մի ահարկու ձայնից, որ անակնկալ որոտաց հենց նրանց կտուրի վրա և խռպոտ աղմուկով խլացրեց զանգերի ծանոթ դողանջը:

Տանեցիները, որոնք սփռոցի չորս բոլոր նստած լուռ ընթրում էին, արձանացած, զարմացած իրար նայեցին: Ահ կար նրանց աչքերում: **Նույնիսկ փոքրիկ Երեմը /rhematic linking/** բնազդով զգաց, որ խռպոտ ձայնը բոթ է գուժում: /Ակսել Բակունց՝Սպիտակ ծի՝/




Աշխատանքային օրվա ամենաերանելի պահը ընդմիջումն է, ընդամենը 45 րոպե, բայց մենք սարի ծամոնի պես ձգում, երկարացնում ենք: Չանգից տասը, տասնհինգ րոպե առաջ արդեն հանդիսավոր ցած ենք դնում մատիտ ու քանոն, սպասում ենք նորին մեծություն ընդմիջմանը, որ սովորաբար գալիս է զանգով ու գնում է զանգով: **Անտանելի չեմ սիրում /rhematic linking/**զանգի ձայնը, կարծես թե աշխարհում ժամացույց չկա: /Վարդգես Պետրոսյան, "Օր և կյանք"/




Այդ երեկո, երբ Շարմաղ բիբին դուռը քաշեց և ոտքը շենքին դրեց, հանկարծ ետ քաշվեց մի ահարկու ձայնից, որ անակնկալ որոտաց հենց նրանց կտուրի վրա և խռպոտ աղմուկով խլացրեց զանգերի ծանոթ դողանջը:

Տանեցիները, որոնք սփռոցի չորս բոլոր նստած լուռ ընթրում էին, /thematic basis/ արձանացած, զարմացած իրար նայեցին: Ահ կար նրանց


աչքերում: Նույնիսկ փոքրիկ երեմը բնազդով զգաց, որ խռպոտ ձայնը բոթ է գուժում: /Ակսելի Բակունց՝Սպիտակ ձի՞/




The following picture shows parallel linking intoned



Չանգից տասը, տասնհինգ թույլ առաջ արդեն հանդիսավոր ցած ենք դնում մատիտ ու քանոն, սպասում ենք նորին մեծություն ընդմիջմանը, որ սովորաբար գալիս է զանգով ու գնում է զանգով: Անտանելի չեմ սիրում զանգի ձայնը, կարծես թե աշխարհում ժամացույց չկա: Չանգը մեր շեֆի գյուտն է: Նրան որ թողնես ամեն բան զանգով կանի. Չանգով կծնվենք, զանգով կամուսնանանք, զանգով կտխրենք, համապատասխան զանգը եղավ՝ կարբենք մեր աչքի արտասուքը, զանգով կբաժանվենք մեր ամուսիններից: /Վարդգես Պետրոսյան, "Օր և կյանք"/



Քո փառքը շա՛տ, էսօր էլ զանգերը զարկին, մրմնջում էր այդ լուսերես կինը, որին իրիկնապահի զանգերն ավետում էին անանձնական անդորր: *Նա կանգնում էր / unmarked theme, level/ դռան շեմքին, աչքը դեպի ներքև ի բլուրները, որոնք անսահման հեռվում ծուլվում էին մայրամուտի մուգ կապույտ երկնքի հետ և կազմում եզրը... /Վարդգես Պետրոսյան, "Օր և կյանք"/*



Chain and linear linking prosodically is more dispersed in English, as compared with Armenian, yet it follows privileged contours. Structural positioning of information-packaging considerably diminishes its prosodic expression and accounts for higher percentage of sentence-initial rheme in Armenian.

The experimental evidence reflects higher proportion of contact linking both in Armenian and English due to its cohesive potential. In English it is characterized by falling movement, falling with an initial rise contour, falling- rising contour, rises and unmarked in conformity with the stated expectation. Initial rhemes most frequently carry falling tones. In Armenian in case of contact linking the dominant use of rises is detected on the initial themes, rhemes may receive both falling and rising tones.

In case of intersentential linking thematic basis in English it is marked by a variety of tones, while the dynamic indices display has a tendency to decrease. In Armenian the corresponding structure is characterized by a prevailing use of rises. The dynamic indices on the theme are more expressed than in English. Higher diapasonic indices are more characteristic of rheme in English. The dynamic and temporal indices may also be considered relevant indices in both languages.

Structural parallelism is represented by a complete or partial *intonational parallelism*. The initial part of subsequent sentence bears a completely or partly analogous intonation pattern. In fictional text it is often enhanced by esthetic impact of the piece.

On the whole, information-intonation interface has different typological manifestation. Further analysis may bring forth other types of links and extend the data on the focal point and its prosodic arrangement in fictional texts in the languages analysed.

REFERENCES

1. Hedberg, Nancy, Sosa, Juan. The Prosodic Structure of Topic and Focus in Spontaneous English Dialogue. Proceedings of the Workshop on Topic and Focus, Santa Barbara, Ca. 2001.
2. Steedman, Mark. Information-Structural Semantics for English Intonation. University of Edinburgh, 2003.
3. Calhoun Sasha . Information Structure and the Prosodic Structure of English: a Probabilistic Relationship. PhD thesis, University of Edinburgh, 2006
4. Chamonikolasová Jana, Martin Adam, Headlandová Irena and al. Creating a System of Annotation for FSP, Masaryk University, Brno, Czech Republic Chamonik@phil.muni.cz, martinadamcz@gmail.com, irenahk@gmail.com martin.drapela@phil.muni.cz.

ՍԵՂԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ- ԹԵՄԱ-ՌԵՄԱՏԻԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈԳԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

Հոդվածում դիտարկվում է հնչերանգային և շարահյուսական միավորների փոխազդեցության դերը գեղարվեստական տեքստի կառուցման մեջ: Հնչերանգը դիտվում է որպես ասույթի՝ թեմատիկ և ռեմատիկ բաղադրիչների տրոհման ավելի բարձր մակարդակ, որը հնարավորություն է տալիս միավորել տարբեր շարահյուսական կառույցներ:

Զուգադրական վերլուծության շնորհիվ վերհանվել են նախադասությունների հարակցության առոգանական ձևավորման օրինաչափությունները ժամանակակից անգլերենում և հայերենում:

СЕДА БАГДАСАРЯН - ПРОСОДИЧЕСКИЕ ИНДИКАТОРЫ ТЕМА-РЕМАТИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ В ХУДОЖЕСТВЕННОМ ДИСКУРСЕ (КОНТРАСТИВНЫЙ АНАЛИЗ)

В статье рассматривается взаимодействие интонационных и синтаксических единиц в структурировании художественного текста. Интонация трактуется как более глобальный уровень членения высказывания на тематический и рематический компоненты, позволяющий объединять разные синтаксические структуры. Проведенный контрастивный анализ выявил определенные закономерности в вопросе о просодическом оформлении межфразовой когезии в современном английском и армянском языках.

**ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ԵՎ
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ԱՌՑԱՆՑ
ԼՐԱԳՐԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ**

ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵԴՅԱՆ

Հիմնաբառեր՝ նորաբանություններ, լրագրահոդված, իմաստային դաշտ, նախաձանցավոր նորակազմություններ, վերջաձանցավոր նորակազմություններ, համադրական բարդություններ, հարադրություններ, զուգակցվող ձևեր անգլալեզու բառարաններ, խոսքամասային պատկանելություն

Ձանգվածային լրատվամիջոցների լուրերի հաղորդումը արմատներ է առնում իրականությունից, իրադարձությունների վերլուծությունը օժտում պատկերաստեղծ միջոցների շաղախմամբ և միահյուսմամբ: Մամուլի կարևորագույն գործառույթը տեղեկատվական գործառույթն է, լեզվինը՝ հաղորդակցականը: Լրագրողների լեզվակրթական մակարդակը, հարուստ բառապաշարը, խոսքի անթերի կառուցումը, պատկերավորման-արտահայտչական միջոցների գործածությունը, ընդգծված գրական լեզուն կամ ժողովրդախոսակցական ոճին բնորոշ բառերը, բառերի փոխաբերական գործածությունները, կրկնությունները, մակդիրները, օտարաբանությունները, դարձվածքներն ու համեմատությունները ամբողջացնում են հաղորդվող նյութի ներկայանակը:

Սույն հոդվածում մեր առջև դրված խնդիրը անգլալեզու լրագրահոդվածներում ուսումնասիրված նորաբանությունների իմաստակառուցվածքային առանձնահատկությունների, դրանց խոսքամասային պատկանելության վերհանումն է:

Ինչպես հայտնի է, մամուլը պարարտ միջավայր է նորաբանությունների ստեղծման և բացահայտման խնդրում: Հաճախ լրագրող-հեղինակների քննությանն են արժանանում բառարաններում ընդգրկված մերօրյա նորաբանությունները, կամ անգլախոս հանրություն լայնորեն կիրառվող նորաստեղծ բառեր, որոնք դեռևս չեն համալրել բառարանների բառաֆոնդը:

Ուսումնասիրված լրագրանյութերից (4 լրագրային հոդված՝ *The Daily Mail*, *The Guardian* պարբերականներից) առանձնացրել ենք **83 նորաբանություն**. al desko (adv/adj), algorithmic trading (n), arancini (n, pl.), babymoon (n), blegging (n),

cappellacci (pl. n.), carne asada (n), catfish (n), celebutante (n), challenger bank (n), chandelier earring (n), chile con queso (n), cool beans (exclam.), crony capitalism (n), crowdfunding (n), defriend (v), digital detox (n), digital footprint (n), double denim (n), duck face (n), eco-bling (n), economic man (n), fauxhawk (n), five-second rule (n), flash crash (n), flatform (n), fomo (n), fone (n), food baby (n), fracking (n), freegan (n), fresh-air fiend (n), gamification (n), glamping (n), hashtag (n), hawt (adj), Hongkonger (n)/Hong Kongese (n/adj), IDC (abbrev.), internet of things (n), intoxicated (adj), jel (adj.), lolcat (n), mahoosive (adj), mamil (n), man crush (n), marmite (n), misery index (n), network marketing (n), Obamacare (n), omnishambles (n), oversharer (n), peng (adj), permadeath (n), phablet (n), pho (n), PMSL (abbrev), poutine (n), precariat (n), respawn (v), ringxiety (n), Secret Santa (n), selfie (n), shabby chic (n), shiny bum (n), silvertail (n), simples (exclam.), social networking (n), sticker licker (n), tech wreck (n), the ant's pants (n), tiki-taka (n), tomoz (adv), trofie (pl. n), unlike (v), vom-worthy (v/n informal), WRT (abbrev.), WTAF (abbrev.), xlnt (adj), yooper (n):

Այսպիսով, վերը առանձնացրած նորաբանություններից **նախածանցավոր նորակազմությունները** բաղադրվել են ինչպես պարզ հիմքով մասնակաղապարներով (**respawn, defriend, unlike (v)**), այնպես էլ բաղադրյալ հիմքով մասնակաղապարով (**over+sharer**): Նախածանցավոր նորակազմությունների բաղադրմանը մասնակցում են անգլերենի **re-, de-, un-over-** նախածանցները: Նշենք, որ առկա են նաև **omni-** և **eco-** զուգակցվող ձևերով (combining forms) նորաստեղծ բառ-միավորներ (**omnishambles, eco-bling**): **Վերջածանցավոր նորակազմությունները** բաղադրվել են **-er, -ie, -ine, -ation, -ive, -ed** վերջածանցներով.

- **-er** – Yooper, Hongkonger
- **-ie** – trofie, selfie
- **-ine** – poutine
- **-ation** – gamification
- **-ive** – mahoosive

Թվարկված նորաբանություններից ուշագրավ են ‘cool beans’ և ‘simples’ նորահայտ բացականչությունները: Առաջինը արտահայտում է հավանություն կամ հիացմունք (*used to express approach and delight*), երկրորդը հաղորդում է որևէ բանի պարզ, շիտակ լինելու մասին (*used to convey that sth. is very straightforward*):

Առանձնակի ուշադրության են արժանի 2014թ.-ին «OED»-ի (Oxford Dictionaries Online) բառացանկում ընդգրկված **al desco, arancini, cappellacci, carne asada, chile con queso** **փոխառությունները**: Առաջինը՝ **al desco**, վերաբերում է գրասենյակում գրասեղանի մոտ աշխատելուն (*while working at*

one's desk in an office): Մնացյալ չորս բառերը **սննդանուններ** են. **arancini** (/pl. n./ an Italian dish consisting of small balls of rice stuffed with a savory filling, coated in breadcrumbs and fried) և **cappellacci** (/pl.n./ pieces of pasta stuffed with a filling of pumpkin, or other squash, and cheese and folded as to resemble a hat) բառերը իտալերեն փոխառություններ են, մինչդեռ **carne asada** (beef that has been marinated and grilled, typically served sliced in thin strips as a main course or as a filling in tacos, burritos, etc.) և **chile con queso** (a thick sauce of melted cheese seasoned with chilli peppers, typically served warm as a dip for tortilla chips) իսպաներենից մեքսիկական սննդանունների փոխառություններ են:

Նշենք բնորոշ ևս մի հանգամանք: Թվարկված նորակազմություններում գերակշռում են գոյություն ունեցող միավորների համակցություններից առաջացած բարդ բառերը՝ արդեն շրջանառվող կամ նոր իմաստի մեջ: Նշյալ բարդությունների մեջ մեծաթիվ են հարադրությունները, փոքրաթիվ՝ համադրական կազմությունները. **երկբաղադրիչ հարադրություններ՝** *digital detox, double denim, chandelier earrings, food baby, algorithmic trading, challenger bank, crony capitalism, digital footprint, duck face, economic man, flash crash, man crush, misery index, network marketing, Secret Santa, shabby chic, shiny bum, sticker-licker, teck wreck, tiki-taka*; **եռաբաղադրիչ հարադրություններ՝** *internet of things, five-second rule, fresh air fiend, the ant's pants*; **երկբաղադրիչ բարդություններ՝** *hashtag, catfish, flatforms, freegan, lolcat, fauxhawks, Obamacare, silvertail, notspot, dumbphone*:

Վերոհիշյալ բառերի մի մասն ընդգրկվել են անգլերեն միալեզու բացատրական բառարաններում (Oxford English Dictionary, Merriam-Webster's Unabridged Dictionary, Collins English Dictionary) 2012-2014 թթ.-ին: Նկատենք, որ 2012թ.-ին «OED»-ում ընդգրկվել են **omnishambles, dumbphone, flexitarian** և **sillage** բառերը: Նույն թվականին «Collins» բառարանում տասնյակ նոր բառերի և գիտաբառերի հետ միասին ընդկրկվել են **blootered, amazeballs** և **mummy porn** բառերը: Այդ մասին է վկայում «BBC» պարբերականը՝ *“Collins online dictionary adds mummy porn and blootered”* վերնագրված հոդվածում [<http://www.bbc.com/news/uk-scotland-glasgow-west-19557542>]: Նշվածներից **omnishambles, selfie, vom-worthy, unlike (v), phablet, internet of things, digital detox, double denim, chandelier earrings, flatforms, fauxhawks, FOMO, food baby, babymoon** բառերը գրանցվել են «OED»-ում 2013թ.-ին [<http://www.theguardian.com/science/2013/aug/28/omnishambles-new-words-oxford-dictionaries>]:


Տեղեկանում ենք, որ բրիտանական *Guardian* (24 Dec 2014) պարբերականում հրապարակվել են 46 բառ-միավոր, որոնք համալրել են «OED»-

ի բառացանկը 2014թ.-ին [<http://www.theguardian.com/science/2014/dec/04/mamil-shinybum-new-words-oxford-dictionaries>]: Հրապարակված 46 բառերից առանձնակի ուշադրության են արժանի «**hawt**» ածականը, «**fone**», «**lolcat**» գոյականը: Դիտարկումները ցույց են տալիս, որ «**hawt**» բառը անգլերենի *hot* ածականի ոչ գրական գրելաձևն է, «**fone**» բառը ստեղծվել է անգլերենի *phone* բառի արտասանական համաբանությամբ: Ինչ վերաբերում է «**lolcat**» բարդությանը, ապա սույն բաղադրությունը թյուր բառաստեղծման օրինակ է: Բանն այն է, որ այս երկբաղադրիչ համադրական բարդությունը բաղադրվել է «հապավում+գոյական» մասնակաղապարով, որն անընդունելի է անգլերենի բառակազմության մեջ: Ավելին, **LOL (laughing out loud)** հապավումը ընդգրկվել է « OED » -ում 2012 թ.-ին՝ սոցիալական ցանցերում լայնորեն կիրառման արդյունքում: Կարևոր և նշանակալի է նաև այն, *Guardian* պարբերականում հրապարակված բառերից երեքը ավստրալական ծագման են, ինչպես օրինակ՝ **silvertail** (*a person who is socially prominent or who displays social aspirations*), **shiny bum** (*office worker*), **ant's pants** (*an outstandingly good person or thing*), **sticker licker** (*an issuer of parking fines*). Տվյալ լրագրանյութում քննության առնված նորակազմություններում գրեթե բացակայում են բառահատման օրինակները, առկա է միմիայն **jel** բառ-միավորը՝ **jelous** բառից: Առցանց հաղորդակցման արդյունքում երևան եկած **xlnt** (*excellent*), **apols** (*apologies*) բառ-միավորները, **IDC**, **MAMIL**, **WRT**, **WTAF** հապավական բաղադրությունները ևս համարել են Օքսֆորդի միալեզու բացատրական բառարանները 2014թ.-ին:

Նկատենք, որ **turducken**, **steampunk**, **tweep**, **crowdfunding**, **fracking**, **freegan**, **hashtag**, **Yooper**, **catfish**, **pho**, **poutine**, **gamification**, **social networking** բառերը ընդգրկվել են «**Merriam-Webster**»-ի բառարանի բառացանկում 2014 թ.-ին, մինչդեռ դրանցից մի քանիսը շատ ավելի վաղ են կիրառվում խոսքում: Ինչպես օրինակ, **tweep** բառը կիրառվում է 2008թ.-ից, իսկ **steampunk** բառը կիրառվում է մի քանի տասնամյակ [<http://www.theguardian.com/science/shortcuts/2014/may/20/hownew-are-merriam-webster-new-words>]:

Գծապատկեր 1-ում ներկայացնում ենք թվարկված 83 նորաստեղծ բառերի խոսքամասային պատկանելությունը:


Գծապատկեր 1



Ինչպես երևում է Գծապատկեր 1-ից, անգլերեն նորաբանություններում քանակական առումով գերակշռում են **գոյականները**, փոքրաթիվ են ածականներն ու մակբայները, իսկ առավել սակավաթիվ են բայերը, բացականչություններն ու հայավումները:

Լեզվանյութի քննությունը թույլ է տալիս 83 *նորաբանությունները ներառել տարբեր իմաստային դաշտերում*: Ստորև ներկայացնում ենք ստացված տվյալները:

Գծապատկեր 2



Ինչպես երևում է Գծապատկեր 2-ից, քանակական առումով գերակշռում են «մարդիկ/հասարակություն», «սնունդ/ խոհարարություն», «տեղեկատվական տեխնոլոգիաներ» իմաստային դաշտերում ընդգրկված նորաբանությունները: Ավելի փոքրաթիվ են «տնտեսություն/շուկայավարում», «գիտություն/ տեխնիկա», «սպորտ/հոբբի/խաղեր» իմաստային դաշտերում ընդգրկված նորաբանությունները: Ավելին, «աշխատանք/բիզնես», «ազգություններ», «ժամանակակից հարաբերություն», «եղանակ/շրջակա միջավայր», «օրենք» իմաստային դաշտերն ամենացածր առկայացումն ունեն: Ընդ որում, յուրաքանչյուր իմաստային դաշտում ներառել ենք հետևյալ նորաբանությունները.

1. **Տնտեսություն/շուկայավարում**՝ 6 բառ-միավոր - algorithmic data, challenger bank, crony capitalism, flash crash, misery index, tech wreck
2. **Գիտություն/տեխնիկա**՝ 8 բառ-միավոր - dumbphone, overchill, fracking, fone, hashtag, phablet, ringxiety, eco-bling
3. **Աշխատանք/բիզնես**՝ 2 բառ-միավոր - al desko, shiny bum
4. **Մարդիկ/Հասարակություն**՝ 27 բառ-միավոր - breadsinner, omnishambles, babymoon, blursing, precariat, idiot, oprahcide, bironical, selfie, vom-worthy, celebutante, fresh-air fiend, IDC, PMSL, WTAF, xInt, ish, jel, mahoosive, mamil, man crush, marmite, Secret Santa, silvertail, simples, the ant's pants
5. **Սնունդ/խոհարարություն**՝ 12 բառ-միավոր - arancini, capellacci, carne asada, chile con queso, five-ruled rule, guanciale, trofie, freegan, pho, poutine, flexitarian, food baby
6. **Տեղեկատվական տեխնոլոգիաներ**՝ 16 բառ-միավոր - digital footprint, digital detox, internet of things, crowdfunding, fomo, hashtag,

- catfish, social networking, oversharer, notspot, intoxicated, defriend, blegging, digippear, unlike, lolcat
7. **Ազգություններ**² բառ-միավոր - Yooper, Hongkonger/Hong Kongese
 8. **Ժամանակային հարաբերություն**¹ բառ-միավոր - tomoz
 9. **Եղանակ/շոջակա միջավայր**¹ բառ-միավոր - hawt
 10. **Նորաձևություն/դիզայն**¹ 7 բառ-միավոր - sillage, chandelier earrings, flatforms, fauxhawks, shabby chic, peng, butters
 11. **Սպորտ/Հոբբի/Խաղեր**¹ 5 բառ միավոր - gamification, glamping, permadeath, respawn, tiki-taka
 12. **Օրենք**¹ բառ-միավոր - Obamacare

Ամփոփելով ուսումնասիրված լեզվանյութը՝ կարող ենք եզրակացնել, որ դիտարկված նորաբանություններում գերակշռում են երկբաղադրիչ և եռաբաղադրիչ հարադրությունները, փոքրաթիվ են համադրական բարդությունները: Ինչ վերաբերում է նորաբանությունների խոսքամասային պատկանելությանը, ապա քանակական առումով գերակշռում են գոյականները, սակավաթիվ են՝ բայերը, հապավումներն ու բացականջությունները: Ի վերջո, դիտարկված նորաբանություններում *հասարակություն* բառիմաստային դաշտի միավորները քանակական առումով գերակշռում են:

Այսպիսով, անգլերենի բառագանձն օրըստօրե հարստանում, համալրվում է նորանոր բառերով, որոնք անգլախոս հանրային լեզվամտածողության արտացոլումն են: Դրանք քաղաքակրթության վերընթացին զուգահեռ դեռևս կփորձվեն ժամանակների հոլովույթներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Brugen, S., What new words were created in 2012?: Available at: <http://www.bbc.com/news/education-20869405c>. Last retrieved on March 24 2015
2. Dasgupta, S., Oxford dictionary adds 'Hongkonger': Available at: <http://timesofindia.indiatimes.com/world/uk/Oxford-dictionary-adds-Hongkonger/articleshow/32634526.cms>. Last retrieved on March 24 2015
3. <http://www.bbc.com/news/uk-scotland-glasgow-west-19557542>. Last retrieved on March 24 2015

4. Kaufman, A., Why we need to invent new words: Available at: <http://www.theguardian.com/culture/2013/mar/11/why-we-need-invent-new-words>. Last retrieved on March 24 2015
5. Kennedy, M., Omnishambles among new words added to Oxford Dictionaries online: Available at: <http://www.theguardian.com/science/2013/aug/28/omnishambles-new-words-oxford-dictionaries>. Last retrieved on March 24 2015
6. Leach, R., Coxall, B., & Robins, L., *British Politics*, Palgrave macmillan, 2006.
7. Poole, S., Just how new are the Merriam-Webster dictionary's new words?: Available at: <http://www.theguardian.com/science/shortcuts/2014/may/20/how-new-are-merriam-webster-new-words>. Last retrieved on March 24 2015
8. Tran, M., From Mamil to shiny bum: new words added to OxfordDictionaries.com: Available at: <http://www.theguardian.com/science/2014/dec/04/mamil-shiny-bum-new-words-oxford-dictionaries>. Last retrieved on March 24 2015

**ГАЯНЕ БАРСЕГЯН - АНАЛИЗ СЕМАНТИЧЕСКОГО ПОЛЯ И
МОРФОЛОГИИ НЕОЛОГИЗМОВ В АНГЛИЙСКИХ ВИРТУАЛЬНЫХ
ГАЗЕТНЫХ СТАТЬЯХ**

Данная статья посвящена изучению семантически-структурных особенностей неологизмов, представленных в английских газетных статьях, в “*The Guardian, The Daily Mail, The Telegraph*”.

**GAYANE BARSEGHYAN – THE ANALYSIS OF THE SEMANTIC FIELD AND
MORPHOLOGY OF NEOLOGISMS IN ENGLISH VIRTUAL NEWSPAPER
ARTICLES**

The given article aims to reveal the semantic-structural peculiarities of a number of neologisms dwelt on in English newspaper articles, namely those of *The Guardian, The Daily Mail, The Telegraph*.

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՎԵՐ ՏԵՔՍՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ՀԻՄՆԱՏԻՊԵՐԸ
(FOREVER21.COM ԵՎ CHARLOTTERUSSE.COM ԱՄԵՐԻԿԱՆ
ՀԱԳՈՒՍՏԻ ԿԱՅՔԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

**ՔՐԻՍՏԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՋԵՄՄԱ ՍԱՖԱՐՅԱՆ**

Հիմնաբառեր՝ առևտրային վեբ տեքստեր, գերտեքստ (հիպերտեքստ), տեքստերի ծնակերպում, կայքէջի հիերարխիկ մակարդակներ, գլխավոր էջ, լեզվագործարանական միջոցներ, երկրորդ մակարդակի էջեր, նախադասության կառուցվածքի մակարդակներ, ներգործական սեռ, կրավորական սեռ, հրամայական եղանակի բայեր, դերանուններ, հակիրճ ոճ

Հիմնական տարբերությունը տեքստի թղթային և առցանց ներկայացման միջև դրա կառուցվածքն է: Թղթի վրա տեքստն ունի հստակ կառուցվածք, և եթե ընթերցողը ցանկանում է ընկալել բովանդակությունը, նա պետք է հետևի հեղինակի կողմից սահմանված հերթականությանը և կարդա տեքստը սկզբից մինչև վերջ: Վերում տեքստը բաժանված է բազում էջերի, որոնք միմյանց կապված են գերտեքստային կապերով: Սա ունի հետևյալ ազդեցությունները վեբ կայքի բովանդակության կառուցվածքի վրա. յուրաքանչյուր էջ պետք է լինի անկախ և պետք է աշխատի առանց որևէ հղման այլ էջերի: Անհնար է իմանալ արդյոք օգտատերը կարդացել է նախորդ էջը, քանզի վերում կանխատեսելի հերթականություն չկա: Յուրաքանչյուր էջի թեման այդպիսով պետք է բացատրվի առանց կայքում ներկայացված այլ ինֆորմացիայի վերաբերյալ ենթադրությունների: Այդ պատճառով յուրաքանչյուր գործառնում է միայն իր բովանդակության սահմաններում (Նիլսեն, 1996): Մյուս կողմից գերտեքստային հնարավորությունները տրամադրում են մեծ քանակությամբ հավելյալ տեղեկություն: Սա հնարավորություն է տալիս ստեղծել լայնածավալ, դյուրակիր և ինֆորմացիոն տեսանկյունից փոխկապակցված տեղեկատվական բազա: Այսպիսի տեքստերը կարող են լինել բազմամոդալ և ներառեն տեսողական, լսողական, գրաֆիկական և լեզվական տեղեկություն: Այն հերթականությունը, որով անհատը կդիտի կայքը, չի կարող կանխատեսվել (Նիլսեն, 1996): Ինչպես երևում է, յուրաքանչյուր վեբ կայք պետք է հստակ կառուցվածք ունենա: Վեր

կայքի կառուցվածքը որոշելիս պետք է միշտ պատկերացնել կայքն օգտատիրոջ տեսանկյունից և միշտ հիշել օգտատիրոջ ամենակարևոր նպատակը՝ ստանալ համապատասխան տեղեկություն որքան հնարավոր է արագ:

Սույն հոդվածի *նպատակն է* ուսումնասիրել առևտրային վեբ տեքստերի կառուցվածքային հիմնատիպերը, այն է՝ տեքստերի ձևակերպումը կայքէջի տարբեր մակարդակներում, նախադասության կառուցվածքը, գրելաճի նրբությունները, սեռի ազդեցությունը և բայերի կիրառությունը առևտրային վեբ տեքստերում:

Սկզբնական էջը կամ կաղապարը պետք է օգտատիրոջը տա ընդհանուր պատկերացում, թե ինչի մասին է այդ կայքը և որն է ամենաարագ ճանապարհը որևէ կետի հասնելու համար: Հղումները ամենաարագ միջոցներն են համապատասխան և փնտրվող ինֆորմացիան տրամադրելու համար:

Յուրաքանչյուր էջ պետք է նախ և առաջ համառոտ ներկայացնի իր բովանդակությունը և միայն հետո անցնի մանրամասներին: Էջը կարող է ունենալ մի քանի հիերարխիկ մակարդակներ, որոնք բոլորը փոխհղումներ ունեն: Սա օգտատիրոջը հնարավորություն է տալիս որոշել, արդյոք նա ցանկանում է ավելին գտնել տվյալ թեմայի մասին, թե նա ցանկանում է մեկ այլ նյութ ընթերցել:

Վիրտուալ իրականության հիմնական նորույթ է համարվում մարդկանց փոխգործողությունների համար պայմանների փոփոխությունը, այդ թվում և լեզվային մակարդակում: Լեզվաբանական ասպեկտում խոսքը գնում է տեքստագիտություն նոր երևույթի՝ գերտեքստի (հիպերտեքստ) մասին, որը սկզբունքով էլ կազմակերպված է ինտերնետի ողջ լեզվային տարածությունը: Գերտեքստը ունակ է բազմաթիվ տրանսֆորմացիաների, տեղափոխման, տարբեր եղանակներով իր բովանդակության մեկնաբանման: Հիպերհղումները ապահովում են տեղեկատվությունը կտորներով կառուցվածքավորելու հնարավորություն, որոնք և կապված են և միաժամանակ միմյանցից անկախ են: Սյուժեյի զարգացման տարբերակների առկայությունը թույլ է տալիս ներգրավել հաղորդակցման բոլոր մասնակիցներին տեքստի ակտիվորեն ստեղծմանն ու զարգացմանը:

Առևտրային վեբ կայքերում տեքստն ընտրվում է ապրանքի կամ ծառայության առանձնահատկություններին համապատասխան: Բայց քանի որ ապրանքները էկրանին հայտնվում են մի քանի աղյուսակներով կամ սեկցիաներով, կազմակերպման որևէ հստակ կաղապար նշելը դժվար է: Հղումները, այնուհանդերձ, կիրառվում են հավելյալ տեղեկության ձեռքբերման նպատակով, օրինակ՝ ապրանքի տվյալները, ընդհանուր տեքստը և այլն: Հղումները հիմնականում տեղակայված են ձախ էջեզրերին և գլխավոր էջի վերևում: Չնայած վեբ տեքստերի շատ ուսումնական ձեռնարկներում տրվում է, որ

մենյուի կետերը պետք է լինեն հինգից տասի սահմաններում՝ կայքերի մեծամասնությունը շատ ավելի հղումներ են պարունակում գլխավոր էջերում: Ներքոհիշյալ օրինակները գլխագիր հղումներ են, որոնք տեղակայված են գլխավոր էջում: Դրանք իրենցից ներկայացնում են ապրանքների անվանումները, որոնց վրա սեղմելով հաճախորդը հայտնվում է նոր էջում, որտեղ ներկայացվում է տվյալ ապրանքի նկարագրությունը: Օրինակ՝

<http://www.forever21.com>

FREE SHIPPING OVER \$50

[SEE DETAILS](#)

€EXTRA 30% OFF SALE

USE CODE: EXTRA30 [SHOP SALE>](#)

<http://www.charlotterusse.com/>

Snow Day Special! Free Ship \$25 & up! [Details](#)

Pretty Tops: Buy 1, Get 1 for \$5! >

HAPPY HOUR

Ամենատարածված առանձնահատկությունը վեբ կայքերի մեծմասում *գլխավոր էջերում ընդարձակ պարբերությունների բացակայությունն է*: Հիմնականում տեքստերում նկատվում են հակիրճ գլխագրերը կամ հայտնվող տեքստեր, որոնք տեղակայված են անմիջապես ապրանքի նկարի վերևի կամ ներքևի մասում:

Գոյություն ունի մեկ այլ շատ կարևոր հատկանիշ վերոհիշյալ առևտրային վեբ կայքերում, որոնք մենք ուսումնասիրում ենք: Ցանկացած նոր էջ կամ նոր հղումով գնալու դեպքում, մենք նկատում ենք, որ էջի վրա կան հատուկ մասեր, որոնք կարծես անշարժ միշտ գտնվում են այնտեղ: Դրանք են՝ որոնման համակարգը, այն հատուկ ցուցակը, որտեղից այցելուն սկսում է կատարել իր ընտրությունը և իհարկե էջի ամենաներքևում գտնվող այն տեղեկությունը, որտեղ նշվում է կազմակերպության մասին լրացուցիչ ինֆորմացիան, օգտակար խորհուրդներ գնորդներին, հետադարձ կապը, ինչպես գտնել տվյալ խանութը սոցիալական այլ ցանցերում, ինչպես նաև լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, այցելուն կարող է գրանցել իր էլեկտրոնային հասցեն և թարմ տեղեկություններ, որոնք ստանալ անմիջապես կազմակերպությունից: Նշենք, որ վերը նշված կետերը վերաբերում են և՛ www.forever21.com, և՛ www.charlotterusse.com ուսումնասիրվող կայքերին:

Տվյալ աշխատանքի ուսումնասիրության առարկա հանդիսացող forever21.com և charlotterusse.com ամերիկյան հագուստի կայքերում գլխավոր էջում տեսնում ենք վերը նկարագրված պատկերը. չկան ծավալուն տեքստեր, միայն ներկայացվող ապրանքի բնութագիրը նկարի աջ կողմում կամ ներքևում: Երկու կայքերում էլ նախ գլխավոր էջի վերևի մասում տրված է որոնման դաշտը, իսկ դրանից անմիջապես հետո, կրկին վերևում գտնվում է նաև ցանկն ըստ կատեգորիաների:

Էջը սկսվում է օրվա գլխավոր առաջարկներով, և հայտվում են տարբեր բնույթի և կատեգորիայի ապրանքներ, որոնցից յուրաքանչյուրը նկարագրվում է տվյալ էջում հակիրճ գլխագրի միջոցով, որն իր մեջ ներառում է ապրանքի անվանումը և գինը: Իհարկե, գլխագրի ներկայացման և կազման լեզվագործաբանական միջոցներն առանձնահատուկ դեր ունեն կայքի հաջողության գործում: Ցանկը շարունակվում է, որքան ցանկանա կայքի այցելուն: Ամբողջական նախադասություններ և տեքստեր այս էջում չկան: Բերված օրինակները, այսինքն՝ ապրանքների գլխագրերը հղումներ են այլ էջերի, որտեղ ավելի մանրամասն են նկարագրվում տվյալ ապրանքները:

Վեր տեքստերի աշխատանքի հիմքում այն է, որ հաճախորդները չեն կարողում, այլ ընդհանուր աչքի են ակնցկացնում ներկայացված տեղեկատվության զգալի մասը: Մինչդեռ գլխավոր էջում տեքստերի մեծամասնությունը հայտնվում է գլխագրերի տեսքով, էջերի մյուս մակարդակները պարունակում են էապես ծավալուն տեքստեր:

Շատ կայքերում, ինչպես նաև forever21.com կայքում, *երկրորդ մակարդակի էջերում տեղակայված են տեքստեր*: Սրանք մեծամասամբ ներկայացնում են ապրանքների թվարկումներ կամ հայտնվող գլխագրերի առանձնահատկություններ:

SHOP YOUR STYLE

A collection of curated shops, inspired by you!

Bohemian

For the chic nomad. Wild, effortless, driven by wanderlust. Glamorous and ethereal, with a bit of an edge.

[SHOP BOHEMIAN >](#)

CAPSULE 2.1

For the fashion-forward. Outside- the-box and on the edge. Cutouts, bold silhouettes and statement pieces.

[SHOP CAPSULE >](#)

Սակայն charlotterusse.com կայքում, առաջին էջից հետո, բոլոր մնացած էջերը անփոփոխ են, այսինքն՝ ձախ կողմից սյունակով ներկայացնում են կատեգորիաները, իսկ ամբողջ էջով սփռված են ապրանքատեսակները, որոնք կհետաքրքրեն պոտենցիալ հաճախորդին:

Երկրորդ մակարդակի էջում կայքէջի այցելուն մանրամասն տեղեկություն է գտնում տվյալ ապրանքի վերաբերյալ: Վերոնշյալ օրինակից պարզ է դառնում, որ այս մակարդակում առկա են արդեն ամբողջական նախադասություններ: Իհարկե դրանք չեն կազմում մեծ պարբերություններ, սակայն այս մակարդակում մենք տեսնում ենք տեքստի մոտավոր սահմաններ և արտահայտչամիջոցների լայն կիրառում՝ տեքստն ավելի ընկալելի և ազդեցիկ դարձնելու նպատակով:

Տեքստային պարբերություններ առևտրային վեբ կայքերում այդքան էլ նկատելի չեն, բացառություն են այն հղումները, որոնք ներկայացնում են ապրանքների ընդհանուր ծանուցում և խորհուրդներ գնորդներին: Վեբ կայքերում պարբերությունների նախընտրելի ծավալը հինգից վեց նախադասությունն է: Հաճախ ընդլայնված նկարագրությունների համար կարելի է հատկացնել առանձին հղումներ:

Այս առևտրային կայքերում գոյություն ունի երկու տարբերակ ապրանքատեսակը դիտելու համար: Առաջին տարբերակը “quick view” – արագ դիտում կամ “quick shop” – արագ առևտուր տարբերակն է, որը ոչ թե նոր հղում է տալիս և տանում այցելուին մեկ այլ, նոր էջ, այլ փոխարենը բացում է ավելի փոքրիկ պատուհան՝ ամենաառաջին անհրաժեշտ տեղեկություններով:

Երկրորդ տարբերակը, ինչպես արդեն հասկանալի է, դա այն է, երբ ընտրելով որևէ իր, նոր հղումով բացվում է թարմ պատուհան և այնտեղ արդեն տեղակայված է ամբողջ տեղեկությունը տվյալ ապրանքի վերաբերյալ:

Նշենք նաև, քանի որ հետազոտության աղբյուր էին հանդիսանում հազուստի կայքերը, մանրամասն տեղեկությունների մասում նաև գոյություն ունի տեղեկություն հազուստի չափսերի մասին, և եթե հաճախորդը երկմտանքի առջև է կանգնել, ապա նա կարող է օգտվել այս տեղեկատվությունից և շատ արագ կողմնորոշվել ու կատարել իր գնումները:

Քանի որ վեբ տեքստերում, որոնց բնորոշ է կարճ և հակիրճ գրելաոճը, գործածվում են կարճ պարբերություններ, առևտրային վեբ կայքերում գերադասում են կարճ նախադասությունները: Ընդունված են նախադասության կառուցվածքի հետևյալ մակարդակները.

1. Կարճ նախադասություններ կամ պարզ բառակապակցություններ:
Garden Terrace Shift Dress, LOVE 21, Crochet Open Knit Sweater, Get Excited.

New must-haves are in.

2. Ընդարձակ նախադասություններ:
Effortlessly cool pieces for free spirits everywhere. It's everything you need to look fresh, fun & totally flirty!
Get the party started with our selection of cute wedges, shorts and spring break-approved dresses!
3. Բարդ նախադասություններ. Գլխավոր նախադասություն (ենթակա + բայ) + ստորադասական նախադասություն (հարաբերական դերանուն + բայ)
By providing your personal information to Charlotte Russe, you are consenting to the manner in which we collect, use, disclose, protect and otherwise manage that information.
4. Բարդ ստորադասական նախադասություններ. երկու գլխավոր նախադասություններ, որոնցից մեկը լրացված է ստորադասական նախադասությամբ:
If you aren't completely happy with your purchase, you may return it within 30 days of the delivery date to a store near your or by mail.

Շատ վեր կայքերում գլխավոր էջերում և երկրորդ մակարդակի էջերում երկար տեքստեր չեն տեղադրվում, ինչպես արդեն նշվել է, հիմնականում այստեղ տեքստերը բացվող պատուհանների տեսքով են հանդես գալիս: Վեր տեքստերի մոտ ութսուն տոկոսը կազմված է պարզ նախադասություններից: Որոշ դեպքերում նաև գործածվում են ընդարձակ և բարդ նախադասություններ, ինչպես նաև ավելի սակավ են բարդ ստորադասական նախադասությունները, բայց այս տեսակները հիմնականում հանդիպում են ներածություններում:

Կրավորական կառույցները սովորաբար գործածվում են ակադեմիական և տեխնիկական ոճում, քանզի այն օբյեկտիվություն է հաղորդում տեքստին: Վեր կայքերում բոլոր տեքստերում կիրառվում է ներգործական սեռ: Կրավորական սեռը վերում արհեստական է և անտեղի: Սակայն որոշ կայքերում, որոնք ապահովում են հետադարձ կապ հաճախորդների հետ, կրավորական կառույցներ երբեմն կիրառվում են: Բայց դա վերին հարիր տեքստի ոճ չէ, քանզի օգտատերերը չունեն նույն մտադրությունները և նպատակները, ինչ էլեկտրոնային առևտրի ձեռնարկատերերը:

Չնայած ընդհանուր կանոններին՝ ուսումնասիրության թիրախ հանդիսացող forever21.com և charlotterusse.com առևտրային վեբ կայքերում նկատվում են կրավորական սեռի շատ կիրառություններ: Այս առումով կարող ենք

ասել, որ այս կայքերի որդեգրված ոճի բաղկացուցիչ մաս է կազմում կրավորական սեռի գործածումը:

We're sorry, one or more items needs *to be removed* from your cart because they have sold out. New Items *are added* daily. All store purchases *may only be returned* to Forever 21 Stores within the country of original purchase.

Վեր տեքստերում հիմնականում կիրառվում են գործողություն մղող (հրամայական եղանակի) բայեր: Սա համընդհանուր կանոն է վեր կայքերի համար, սակայն հիմնականում հանդիպում է թվարկումներում և հայտնվող պատուհաններում: Նմանատիպ օրինակներ են՝

Decide (strong verb) today//Make (weak verb) a decision today փոխարեն

Allow for//Make allowance for փոխարեն

Explains//Serves to explain փոխարեն (հաճախ կիրառվում է գործնական ոճում)

Review//Do or perform a review փոխարեն

Այս բայերը, որոնք գործածված են հրամայական եղանակով, որոշ չափով հրաման են արտահայտում՝ կարծես թե իրենց գործողություններում շտապեցնելով պոտենցիալ հաճախորդներին: Այդ իսկ պատճառով վեր կայքերում գերիշխում են հրամայական եղանակով կիրառությունները: Add to Bag. Remove. Checkout. Get Excited. Shop all Dresses. Shop all Clothes. Add one more. Add to my Faves. Apply a promotion. Continue Shopping. Add to Wishlist. View Full Details

Գրելաճը ներառում է այն բառերի ընտրությունը, որոնք արտացոլում են մարդկանց հասարակական դիրքը և աշխարհայացքը (Կիլիան, 1999): Քանի որ այս տեսակի կայքերը ոչ միշտ են նախատեսված միայն մասնագիտացված օգտատերերի համար, ժարգոնային լեզուն որոշակիորեն հարիր չէ առևտրային վեր կայքերին, համենայն դեպս ոչ գլխավոր էջի կամ առաջին և երկրորդ մակարդակի էջերի համար:

Գլխագրերը, մենյուի կետերը (հղումներ) և կարճ վերնագրերը այդքան էլ շատ ստեղծագործական ձևավորում չեն պահանջում: Առևտրային վեր կայքերի հիմնական մասի լեզվական ոճավորման խնդիրները նույնն են, ինչ ավանդական գովազդի ու վաճառքի դեպքում: Գրաֆիկաները և ֆլեշ թվային վիդեոները միանշանակ թիրախային են առևտրային վեր կայքերում, բայց փաստը, որ դրանք շատ երկար են բեռնվում, կարող է օգտատերերին վանել:

Դիտարկենք հետևյալ օրինակը.

- FOREVER 21

Forever Cool Faux Leather Jacket

\$15.00

- LOVE 21

Life in Progress Denim Remixed Hoodie

\$32.80

Ինչպես տեսնում ենք, յուրաքանչյուր ապրանքի համար այստեղ տրված է ապրանքի հակիրճ ու պարզ անվանումը՝ հասկանալի գործածողների և այցելուների համար, և նկարը, որը ֆլեշ անիմացիայի միջոցով կուրսորդ վրայով սահեցնելու ժամանակ մեծանում է ու ավելի մանրամասն տեղեկություն և ավելի արտահայտիչ պատկեր է ներկայացնում: Իհարկե այս ամենը charlotterusse.com և forever21.com կայքերում արվել է բարձր մակարդակով և հմտությամբ, բարձրագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, այս իսկ պատճառով եթե օգտատերը չունի խնդիրներ իր կապի հետ, ֆլեշ անիմացիաների և գրաֆիկաների բեռնման հետ կապված խնդիրներ չեն առաջանա: Հիմնական նկարի կողքին նաև գտնվում են մի քանի այլ նկարներ, որոնց օգնությամբ հաճախորդը կարող է դիտել և ավելի մանրամասն ուսումնասիրել տվյալ ապրանքը տարբեր կողմերից:

Վեր բովանդակությունը մշակողը պետք է տեքստի միջոցով առավելագույնը հետաքրքրի, գրավի վեր կայքի այցելուներին և մոտիվացնի նրանց քայլերը: Սա հենց ամենակարևոր լեզվագործաբանական խնդիրներից մեկն է, որի շնորհիվ կայքը, եթե ճիշտ կատարի իր քայլերը, միայն կշահի ավելի մեծ քանակությամբ հաճախորդների: Օրինակ՝

Celebrated by many style conscious and trend-savvy shoppers, Forever 21 has quickly become the source for the most current fashions at the greatest value.

Forever 21 is growing quickly, featuring new and exciting store environments, a constant flow of fun and creative clothing designs and the accessories to make your look come together at the right price.

A phenomenon in the fashion world, Forever 21 provides shoppers with an unprecedented selection of today's fashions, always changing and always in style.

Named after the delicious French dessert, Charlotte Russe began its sweet journey in 1975 with the first store opening in Carlsbad, California. Putting a spotlight on women in their teens and early twenties, our store offered access to major fashion

trends at value-oriented prices. And over a few exciting decades, the mall-based chain

went from 35 stores in Southern California to 500+ stores across the United States and Puerto Rico.

Ինչպես ցույց են տալիս օրինակները, տեղեկությունը մատուցվում է մատչելի, հասկանալի կերպով, այն ամբողջական է և համոզիչ ու վստահելի մի շարք լեզվական միջոցների կիրառման շնորհիվ: Դիտարկենք մեկ այլ օրինակ,

որտեղ տեսնում ենք դերանունների առատ կիրառություն, որի նպատակն է երկխոսության էֆֆեկտը:

Returns and Exchanges

If *you* aren't completely happy with *your* purchase, *you* may return it within 30 days of the delivery date to a store near *your* or by mail. Charlotterusse.com does not accept returns on jewelry, electronic gift cards, physical gift cards, swim, intimates, fragrance, nail polish, and anything noted as final sale. If *your* item is damaged, defective or incorrect upon arrival, please contact us to arrange for *your* return. Merchandise purchased online can be returned to *your* local store or to our warehouse, address listed below. We will refund the purchase price and sales tax. If *you* would like to exchange an item, *you* may do so at *your* nearest store. Unfortunately, we do not accept exchanges via mail.

Հաճախորդի վստահությունը շահելու համար նրա համար ստեղծվում է միջավայր, որտեղ նա հստակ տեսնում է իր քայլերի հերթականությունը: Վերոնշյալ օրինակներում ներկայացված են հենց այդ քայլերը:

Առևտրային վեբ կայքերում ապրանքի նկարագրությունը հիմնականում մատչելի է, ոչ ծավալուն, սակայն ամբողջական, պատկերավոր, համոզիչ ու միաժամանակ դյուրըմբռնելի, ինչը տեսնում ենք հաջորդ օրինակում:

Charlotterusse.com

Style: 301560124

PRODUCT DETAILS

This trendy, crepe fabric blouse is printed with our favorite pattern... chevron! Scoop neckline dips low in back, where crisscrossing straps add a cute, cut-out effect. Puff sleeves are cuffed with a single button for serious style!

How it fits: Size small measures 24" from shoulder to hem.

Fabric & care: 100% polyester / hand wash / Made in USA.

Religious views on *conscience* usually see it as linked to a “morality, inherent in all humans and may be thought of as the ‘voice of God’, speaking within the individual and even as a direct revelation from God.³¹ The term *conscience* is not found in the Old Testament. In the New Testament *conscience* /syneidesis/ is used 31 times, and refers to “*the pain suffered by one who goes against his or her moral principles, and positively as having a ‘good conscience’ before God*”. In the Christian tradition, on the one hand, it is sinful to act against one’s *conscience*; on the other hand, *conscience* can deceive, since we can be mistaken about what is required or forbidden. The Dictionary of the Bible states that “*The modern understanding of conscience is a faculty by which past actions or dispositions are assessed or future actions evaluated, leading to experiences of guilt or of innocence*” (cf. 1 Sam. 24: 5). Human beings are regarded as morally

³¹ <http://www.mel-thompson.co.uk/lecture%20notes/Conscience.pdf>

responsible, and, **conscience** is the painful reaction felt when one's ordered human nature is violated. Conscience therefore comes into operation after a wrong deed has been initiated.

The importance of conscience is obvious when we recall blessed **John Henry Newman**, who was an important figure in the religious history of England: "***I shall drink to the Pope, if you please, still, to Conscience first, and to the Pope afterwards.***"³²

The word **conscience** is perceived differently in three languages from the philosophical perspective as well. In the *Oxford Dictionary of Philosophy* the main emphasis is laid on the "consciousness of **actions** morally required or forbidden, and **conscience** is defined as "the name for a number of norms of behaviour a society expects from the individual people that make up this society",³³ in Russian it is the <<*moral responsibility for your actions before the society and before yourself*>>,³⁴ while *The Armenian Philosophical Dictionary* claims that **conscience** is merely a **moral** category which expresses the ability of an individual of **moral self-vigilance**, and it is the highest form of **self-consciousness**. **Conscience** can be displayed not only through the awareness of the moral significance of one's **actions**, but also via integrity of one's **emotional experiences**.³⁵

Anyway, today from a religious and philosophical category **conscience** has become an ethical value and is included in the value system of a society.

In the constitutions of different countries the phrase **freedom/liberty of conscience** (**խղճի ազատություն** in Armenian, **свобода совести** in Russian) is used.

It is commonly assumed that to objectively identify and describe linguo-cultural phenomena, we should go through the analysis of dictionary definitions, value-labeled universal statements and the individual content of notions, considering their etymology, too. When comparing the etymology of the word **conscience** in English, Russian and Armenian it becomes quite obvious that even here we have some differences. In English the main meaning lying in the root of the word is that of "**knowledge, awareness** of a moral sense of right", and **mind** is of importance here. In Russian, as P. Y. Chernich states, the word **conscience** comes from the Old Slavonic language and the word indicates "joint knowledge" (со and весть -

³² <http://www.rsrevision.com/Alevel/ethics/a2conscience/index.htm>

³³ Oxford Advanced Learner's Dictionary of Current English by A. S. Hornby, 7th ed., OUP, 2006.

³⁴ <http://so.witext.ru/docs/2401/index-228-1.html>

³⁵ Մ. Մ. Ռոզենտալի - «Փիլիսոփայական բառարան»

совместное знание).³⁶ In Russian dialects it is not easy to separate the words conscience and shame, and V. I. Dall brings the following example: **A person having shame has conscience as well.**³⁷ In Armenian, the etymology of the word manifests the importance of *feeling* and *heart*: “**pain of conscience, pain of heart, vulnerability, sympathy, etc**”.³⁸

In English the word *conscience* has the following means of actualization: **breast, character, morals, moral sense, qualm, scruples, sense of right and wrong, shame, duty, compunction, censor, demur, inner voice, superego, principles, small voice, squeam** (17), in Russian the word *совесть* has the following meanings: **стыд, застенчивость, ответственность, убежденность** (4), and in Armenian the word *խիղճ* is actualized by the following words: **գուր, կարեկցանք, կարեկցություն, խղճմտանք, խղճմտություն, սիրտ, հոգի, կրոնական համոզմունք, դավանանք** (8).

According to the lexical means of the word *conscience* we suggest four lexico-grammatical groups in English, three in Russian and three lexico-grammatical groups in Armenian.

The first group in English are the words indicating moral values, such as **morals, moral sense, censor, principles**, the second lexico-semantic group in English are the words manifesting the meaning of **doubt** and **incertainty**, such as **qualm, scruples, sense of right and wrong, squeam**, the third group is formed with the words having the meaning of shame and regret: **shame, regret, compunction, superego**, and the fourth group include the words showing the meaning of judging and directing one's actions: **inner voice, small voice**:

In Russian the lexical unit *совесть* can form the following lexico-semantic groups: 1. words indicating the meaning of shame and shyness: **стыд, застенчивость**, 2. words having the meaning of responsibility for one's actions: **ответственность**, 3. words with the meaning of fixed and convinced outlook and opinion: **убежденность**.

In Armenian in the semantic framework of the the word *խիղճ* we can separate three lexico semantic groups as well: 1. words having the meaning of sympathy, empathy: **գուր, կարեկցանք, կարեկցություն**, 2. Words indicating feelings: **սիրտ և հոգի**, and 3. Words of religious meaning: **համոզմունք դավանանք**.

³⁶ <http://so.witext.ru/docs/2401/index-228-1.html>

³⁷ Даль В. И. Толковый словарь живого великорусского языка: В 4 т. М., 1989.

³⁸ Աճառեան Հ., Հայերեն արմատական բառարան: «Երեւանի Համալսարանի Հրատարակչություն», Ե., 1926. <http://www.nayiri.com/>: 12.11. 2012

According to various British, American Russian and Armenian dictionaries, the noun **conscience** has the following similar meanings in three languages: 1. **the sense of right and wrong that governs a person's thoughts and actions**, 2. **regulation of one's actions in conformity to this sense**, 3. **a supposed universal faculty of moral insight**. Nevertheless in English it has some other meanings which are not fixed in Russian and Armenian dictionaries, that is: 1. **conscientiousness; diligence**, 2. **a feeling of guilt or anxiety**, 3. **the part of the superego in psychoanalysis that transmits commands and admonitions to the ego**, 4. **sensitive regard for fairness or justice**. The following definitions are fixed only in **Russian**: 1. **Shyness**, 2. **disgrace, dishonor**, 3. **Ignominy, blemish**, and the following definitions of the noun **conscience** are present only in Armenian dictionaries: 1. **a feeling of sympathy and empathy, compassion**, 2. **a religious belief**.

Thus, **conscience** is an abstract multidimensional concept, characterized by a high potential of evaluation and certain situational dependence. The difficulty of assessing perceptions of **conscience** that make cognitive psychological basis of the concept, cause a variety of links that this concept has with other notions in English and Armenian consciousness. In the linguistic "filter" of the fragments in the conceptual field of **conscience**, we see the presence of differentiating signs that have a close connection with value-assessment and formal-logical components of cognitive activity during the formation of the conceptual core of the concept of **conscience**. In both languages the basic core of **conscience** are the cognitive signs of **the moral consciousness, reflected in assessing one's own and others' actions, a sense of moral evaluation for one's behavior to themselves and the society**. But the peripheral zones differ: in English the meanings of **shame, guilt, remorse, regret, contrition, scruple, self-reproach, self-condemnation**, etc., **with regard to truth and justice** are represented, " as in the phrases: **in (all good) conscience**-in all truth and fairness, **in conscience, in all conscience, on one's conscience, a pang of conscience, conscience clause** (which is a clause in a law providing for exemption or other allowances on the grounds of moral or religious conscience), **conscience money** (which is the money paid because of feelings of guilt, especially about a payment that one has evaded), **social conscience** (a sense of responsibility or concern for the problems and injustices of society), and in sayings: **A guilty conscience needs no accuser. A good conscience is a soft pillow, etc.** In Russian the peripheral zones of the concept are those of **shame, dishonor, disgrace, responsibility** and **certainty** as in **Есть совесть, есть и стыд, а стыда нет, и совести нет**-**If there is conscience, there is shame; со спокойной совестью**- **with clear conscience, etc.**

In Armenian the peripheral zones of the concept are the cognitive signs of feelings such as *sympathy, compassion, empathy, and heart and soul*. Armenian idioms supersede their English and Russian counterparts and mainly demonstrate pain of heart, sufferings and spiritual discomfort when losing one's conscience (*խիղճը աղաղակել, խիղճը փանջել, խիղճը լվացքատուն փայ, խիղճը դուլարով ծախել, խիղճը մեռնել, խիղճը կտրվել, խղճի ձայնը լռեցնել, խիղճն ուրանալ, խղճի գալ, խղճի առաջ/առջև/, դեմ մեղանշել, խղճի ձայնը լռեցնել, խեղդել, խղճի վրա ծանրանալ, խիղճը հանգստացնել, խղճի հետ հաշտվել, etc.*)

The word *conscience*, presents a wide range of metaphors underlying the phraseological units, idioms, sayings and proverbs in both languages. In three languages *conscience* can be *clear or guilty* (Чистая совесть, Մաքուր խիղճ, Нечистая совесть, Մեղավոր խիղճ), both Russians, Armenians and the English can feel a *pang/pricks of conscience* (*узрызнения совести, խղճի խայթ*); *can gain conscience* (*совесть зазрела /совесть заговорила, խիղճը փանջել /արթնանալ*); *can lose one's conscience* (*потерять совесть, խիղճը կորցնել*); *can have something on one's conscience* (*Иметь что-л. На своей совести, խղճի վրա որևէ բան ունենալ, զանցանք կատարած լինել*); *can calm (ease, relieve, soothe) one's conscience* (*для очистки (успокоения) совести-հանուն խղճի հանգստության*), *can have bargain (deal) with one's conscience* (*Сделка с совестью, խղճի հետ գործարքի մեջ մտնել*); *can have something on one's conscience* (*Иметь что-л. На своей совести, խղճի վրա որևէ բան ունենալ, զանցանք կատարած լինել*), etc.

But only in Armenian one can *sell, can kill, can awaken, can make asleep, can become friends with his/her conscience*. Only in Armenian *conscience* is associated with heart and soul (*խիղճ ու հոգի չունենալ, խիղճ ու սիրտ չունենալ, խղճի ձայնը-սրտի, հոգու ձայնը*, etc.; Ամենասուրբ զորություն, որ բառերի ցուցակի մեջ կոչվում է խիղճ-Պարույր Սևակ).

In Armenian it displays significant capabilities of word-formation: *խղճալ, խղճալի, խղճալիորեն, խղճալիություն, խղճական, խղճակորույս, խղճահանգիստ, խղճահար, խղճահարական, խղճահարանք, խղճահարել, խղճահարեցնել, խղճահարվել, խղճահարություն, խղճահարում, խղճամեռ, խղճամիտ, բարխիղճ, խղճամություն, խղճմտանք, խղճմտավոր, խղճմտորեն, խղճմտոք, խղճովին և այլն*:

The British, Americans and Russians associate *conscience* with **external** human behaviour, and *conscience* is mainly associated with *the sense or consciousness of the moral goodness or blameworthiness of one's own conduct, intentions, or character together with a feeling of obligation to do right or be good, as*

a faculty, power, or principle enjoining good acts. The perception of **conscience** is more leisurely and it can be subordinated to factors that are more important for a person from a Western background. The individualism and self-reliance ethic characteristic to British and American, as well as to Russian cultural identity are reflected in the definitions and perception of **conscience**, that is a “sensitive regard for fairness or justice”. For them **conscience** does exist mainly as a social phenomenon: American world view is based on principles of independence, on social attitudes to self-serving, catchy self assessment and self-evaluation.

Most Asian nations, among them Armenians, that traditionally place a higher value on interpersonal relations see **conscience** and its significance diametrically opposed. In Armenia **conscience** is venerated and displays a variation in 'value' conceptualization. Armenian **conscience**, suggests that **it** is bordered with **empathy, sympathy, compassion**, and not only with shame or guilt. Armenian **conscience** is “fixed” in the heart, the soul of the individual. The systems of values, moral and ethical standards and regulators of life that exist in Britain, America, Russia and Armenia, introduce and fix certain patterns and behaviours, and shape identities.

Nevertheless, to our mind, these are words that are true in all cultures, for all cultures and for everybody: *A clear conscience is the sure sign of a bad memory” (Mark Twain).*

ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ – ԽԻՂԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԼԵԶԿԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈՐՈՇ ՎԵՐԱՑԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է խիղճ հասկացության լեզվական առկայացումներն անգլերենում, ռուսերենում և հայերենում, վեր են հանվում դրա հասկացական ընկալումները, նմանություններն ու տարբերությունները երեք լեզուներում.

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН - НЕКОТОРЫЕ ЛИНГВО-КУЛЬТУРНЫЕ АБСТРАКЦИИ КОНЦЕПТА *СОВЕСТЬ* В АНГЛИЙСКОМ, РУССКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

В статье рассматриваются лингвистические особенности понятия **совесть** в английском, русском и армянском языках, анализируется понятийное содержание и концептуальное осмысление совести, выявляются сходства и различия ее восприятия в трех языках.

**ՎՐԵԺ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԼԵՉՎԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՏԵՔՍՏՈՒՄ**

**ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԲԵԼԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Հիմնաբառեր՝ վրեժ, ճանաչողական փոխաբերություն, համարժեք թարգմանություն, փոխակերպում

Ժամանակակից լեզվաբանության առաջնային խնդիրներից մեկն այսօր լեզվի և մշակույթի աղերսների ուսումնասիրությունը և նկարագրությունն է: Այս հիմնախնդիրը լուսաբանելու ուղիներից մեկը գեղարվեստական տեքստում այս կան այն հասկացության լեզվականացման առանձնահատկությունների համապարփակ ուսումնասիրությունն է, որտեղ կարևորվում է ոչ միայն տվյալ ազգի, էթնոսի մտածելակերպի, այլև գրողի աշխարհընկալման յուրահատկությունը: Առավել հետաքրքիր է, երբ ուսումնասիրվում է այս կամ այն հասկացության լեզվական առկայացումը ոչ միայն բնագրում, այլ նաև դրա թարգմանության մեջ, քանի որ բացահայտվում են հասկացության թարգմանության համարժեքության որոշակի մակարդակներ, որն էլ հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել տարբեր մշակութայինների լեզվամտածողության նմանությունների և տարբերությունների մասին:

Քանի որ գոյություն չունեն բացարձակապես նույնանման լեզուներ՝ ոչ բառային, ոչ էլ շարահյուսական մակարդակներում՝ «բնական է, որ լեզուների միջև չի կարող լինել բացարձակ համարժեքություն»:³⁹

Դեռևս 1932 թ. Ուեսթը հետևյալ կերպ է նկարագրել այս խնդիրը՝ «Թարգմանության գործը ձեռնարկողը պարտքի տակ է ընկնում և նա պարտավոր է վճարել այդ պարտքը՝ սակայն արդեն այլ փոխարժեքով»:⁴⁰

Թարգմանաբանական շատ ուսումնասիրություններ շեշտադրում են այն փաստը, որ համարժեք թարգմանության հասնելու համար օտար և թարգմանված տեքստերի միջև լեզվական տարբեր մակարդակներում ու կարգերում «տեղաշարժ» (shift) է տեղի ունենում: Ըստ Ա. Պոպովիչի՝ նման

³⁹ Naida Eugene. *Toward a Science of Translation. 1964. pp. 155-171.*
⁴⁰ West Constance B. 1932. *La theorie de la traduction an XVIII science.* Revue Litterature Comparee 12, pp. 330-355.

<<տեղաշարժերը>> արդյունքն են այն իրողության, որ թարգմանիչը ջանում է որքան հնարավոր է <<հավատարմորեն վերարտադրել բնագրի ասելիքը>>:⁴¹ Հարկ է թարգմանությունը հասցնել այնպիսի մակարդակի, որ այն որքան հնարավոր է մոտ լինի բնագրին, և չտուժի թարգմանվածքի ո՛չ ձևը, և ո՛չ էլ բովանդակությունը: Ուստի թարգմանաբանների մեծ մասը փաստում է՝ թարգմանությունը պետք է համարժեք լինի բնագրին ոչ այնքան և ոչ միայն իր ձևով և բովանդակությամբ, այլև իր թողած ազդեցությամբ, այն է՝ այս կամ այն լեզվով թարգմանված երկը ընթերցելիս պետք է զգալ նույն համն ու հոտը, ինչ բնագրին ընթերցելիս:⁴² Առավել բարդ է հասնել նման ազդեցության, եթե թարգմանվող և թարգմանող լեզուներն ունեն ոչ միայն լեզվական, կառուցվածքային, այլև մշակութային տարբերություններ, և թարգմանության համար, հատկապես գեղարվեստական գրականության, մեծ դժվարություն է ներկայացնում հուզական-գնահատողական և արտահայտչական նրբերանգների հաղորդումը: Հայտնի է, որ նման դեպքում կարևոր է ոչ միայն հեղինակի՝ աշխարհապատկերման հնարավորինս ճշգրիտ ընկալումը, այլև դրա հնարավորինս ճշգրիտ վերստեղծումը թիրախ լեզվով: Շատ հաճախ լեզվամշակութային հասկացությունների համարժեք թարգմանության հասնելու լավագույն եղանակը տվյալ համատեքստում առկայացած ո՛չ թե բառարանային համարժեքներից օգտվելն է, այլ տվյալ հասկացության և դրանով առկայացած ճանաչողական փոխաբերության գործաբանական արժեքի համարժեքության վերստեղծումը:

Անհերքելի է այն փաստը, որ գեղարվեստական թարգմանության համարժեքության ապահովման համար ամենագլխավոր դերը վերապահված է բառի տարբեր իմաստներից անհրաժեշտ տարբերակի ընտրությանը՝ համատեքստի բովանդակությունը համարժեքորեն վերարտադրելու նպատակով: Համատեքստի դերն առանձնակի մեծանում է, երբ գործ ունենք լեզվամշակութային հասկացությունների և դրանցով առկայացած փոխաբերական կաղապարների թարգմանության հետ: Ջ. Լակոֆֆի և Մ. Ջոնսոնի տեսանկյունից՝ փոխաբերություններն ընգրկուն, հզոր և բազմագործառույթ գործիքներ են, որոնք ներթափանցում են մեր առօրյա կյանք՝ ոչ միայն լեզվական, այլև մտածողության և գործունեության ոլորտ: Ամերիկացի լեզվաբան Ջ. Լակոֆֆը և ամերիկացի փիլիսոփա Մ. Ջոնսոնը գտնում են, որ <<փոխաբերությունը մի բանի հասկանալն է մեկ այլ բանի միջոցով: Ոչ միայն լեզուն և մարդկային գործունեությունն է

⁴¹ Տե՛ս Սեֆերյան Ս. Խաչատրյան Ա., Գաբրիելյան Ս. Համառոտ ակնարկ թարգմանաբանության, Եր., Սահակ Պարթև, 2006, 112 էջ:

⁴² Бархударов Л. С., *Язык и перевод*. М., “Международные отношения”, 1985.

կառուցված փոխաբերաբար, այլև մարդկային մտածողության գործընթացները>>:⁴³

Սույն հոդվածի ուսումնասիրության առարկան ամերիկացի մեծանուն գրող Ֆ. Ս. Ֆիցջերալդի «Գիշերն անուշ է» վեպում առկայացած ճանաչողական փոխաբերություններից մեկի՝ **վրեժ** հասկացությամբ առկայացած փոխաբերական կաղապարի վերլուծությունն է բնագրում՝ հայերեն թարգմանության զուգադրությամբ:

Վրեժը վնասաբեր գործողություն է, որի շարժառիթ է հանդիսանում ինչ-որ մեկին պատժելու անհազ ծարավը՝ իրական կամ երևակայական անարդարության, վիրավորանքի և այլնի համար:

Վրեժ բառն անգլերեն բառարաններում ունի հետևյալ սահմանումները՝ 1. *the action of hurting or harming someone in return for an injury or wrong suffered at their hands*, 2. *the desire to repay an injury or wrong*, 3. *punishment inflicted or retribution exacted for an injury or wrong*, 4. *an opportunity to retaliate or gain satisfaction* և առկայանում է *revenge, vengeance, vindictiveness, avenge, retaliation բառային միավորներով*: Հայերեն բացատրական բառարաններում այն ունի հետևյալ իմաստները՝ 1. *կանխամտածված չարիք՝ վնաս՝ որպես հատուցում իրեն պատճառված անպատվության՝ չարիքի փոխհատուցում*, 2. *փոխհատուցման բուռն ցանկություն*, 3. *Քեն*, 4. *արած չարիքի փոխարեն հասցրած պատիժ*, 5. *չարիք, հանցանք, ոճիր* և առկայանում է *վրեժ, վրիժառություն, վրեժխնդրություն, փոխհատուցում* բառային միավորներով:⁴⁴

Մեր վերլուծությունն իրականացնելիս որպես ճանաչողական փոխաբերության հիմք ընդունել ենք թե՛ անգլերենում և թե՛ հայերենում առկա **վրեժի** բառարանային այն սահմանումը, որ այն *կանխամտածված վնաս է՝ որպես հատուցում իրեն պատճառված անպատվության համար, փոխհատուցման բուռն ցանկություն, բավարարվածություն* և զուգորդել ենք **վրեժ** և **բավարարվածության** զգացում գաղափարները՝ կառուցելով «**վրեժը բավարարվածությունն է**» փոխաբերական կաղապարը, որի լեզվական առկայացումը կուսումնասիրենք բնագրում և հայերեն թարգմանության մեջ՝ որոշ կոնկրետ օրինակների հիման վրա:

⁴³ Lakoff G., Johnson M. *Metaphors We Live by*, Chicago: The University of Chicago Press, 2003. p. 224

⁴⁴ Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հրատարակչություն, 1976, 1641 էջ:

1. *Nicole, going downstairs, heard the end of the conversation. She knew, as she had always known, that Tommy loved her; she knew he had come to dislike Dick, and that Dick had realized it before he did, and would react in some positive way to the man's lonely passion. This thought was succeeded by a moment of sheerly feminine satisfaction. She leaned over her children's breakfast table and told off instructions to the governess, while upstairs two men were concerned about her.*

Later in the garden she was happy; she did not want anything to happen, but only for the situation to remain in suspension as the two men tossed her from one mind to another; she had not existed for a long time, even as a ball (p. 276).

Աստիճանների վրա Նիքոլը լսեց նրանց խոսակցության վերջին մասը: Նա գիպեր, որ Թոմմին միշտ էլ սիրել է իրեն, գիպեր նաև, որ Թոմմին սկսել էր չսիրել Դիքին, որ Դիքը հասկացել էր ամեն ինչ, և որ Դիքը անպարասխան չէր թողնի Թոմմիի անպարասխան կիրքը: Այդ միտքը նրան մի պահ սուկ կանացի բավականություն պատճառեց: Նա հենվեց երեխանների նախաճաշի սեղանին և կարգադրություններ արեց դաստիարակչուհուն, մինչ երկու տղամարդիկ վերևում զբաղված էին իրենով:

Քիչ անց պարտեզում Նիքոլն իրեն երջանիկ էր զգում: Նա որևէ նոր իրադարձություն չէր ուզում, միայն թե շարունակվեր այդ անորոշ վիճակը, երբ հիմա, երկու տղամարդիկ մտովի զբաղված են իրեն մեկից մյուսը նետելով, չէ որ նա երկար ժամանակ գոյություն չէր ունեցել, նույնիսկ որպես գնդակ(էջ 435):

Նշված օրինակում *This thought was succeeded by a moment of sheerly feminine satisfaction* նախադասությունը և *she did not want anything to happen, but only for the situation to remain in suspension as the two men tossed her from one mind to another* հատվածը նպաստել է վրեժ հասկացության առկայացմանը: Նիքոլին կանացի բավականություն է պատճառում միայն այն միտքը, որ Դիքը գիտի Թոմմիի զգացմունքների մասին, չէ՞ որ Դիքին թվում էր Նիքոլով այլևս ոչ մի տղամարդ չի հետաքրքրվում: *This thought was succeeded by a moment of sheerly feminine satisfaction* նախադասության թարգմանության մեջ օգտագործվել է բառային փոխակերպման հնարը՝ *succeeded/պատճառեց*, որի արդյունքում նշված բառը ոչ միայն պահպանել է իր գործաբանական արժեքը, այլև ավելի ուժգին է արտահայտում բավարարվածության զգացումը: *She did not want anything to happen* հատվածի թարգմանությունից հասկանալի է, որ թարգմանիչը դիմել է բառային փոխհատուցման և կրճատման հնարների

օգնությանը՝ որևէ նոր իրադարձություն չէր ուզում, որտեղ հավելել է **իրադարձություն** գոյականը և **to happen**-ը կրճատվել: Հաջորդ հատվածի թարգմանչական խնդիրը հաղթահարվել է բառային փոխակերպման շնորհիվ՝ **remain/ շարունակվեր: The two men tossed her from one mind to another** հատվածի թարգմանության մեջ **գրադված են** ստորոգյալի հավելումը: Այդ հատվածի համար կառաջարկեինք հետևյալ տարբերակը՝ **երկու տղամարդիկ իրեն մտքի մեկից մյուս էին նետում:**

2. **"Why, I'm almost complete," she thought. "I'm practically standing alone, without him." And like a happy child, wanting the completion as soon as possible, and knowing vaguely that Dick had planned for her to have it, she lay on her bed as soon as she got home and wrote Tommy Barban in Nice a short provocative letter (p. 289).**

-Այո, ես արդեն լիարժեք մարդ եմ,-մտածեց Նիքոլը:-Ես հիմա կարող եմ կանգնել ուղքերիս վրա մենակ, առանց նրա:-Եվ երջանիկ երեխայի պես, ցանկանալով հնարավորին չափ շուտ ձեռք բերել սեփական լիարժեքությունը այն անորոշ զգացումով, որ Դիքի ուզածն էլ հենց այդ էր, Նիքոլը սույն գալով անկողին մտավ և Թոմմի Բարբանին հրավիրող նամակ գրեց (էջ 448-449):

Այս օրինակում վրեժ հասկացության առկայացմանն են նպաստել **"Why, I'm almost complete," / Այո, ես արդեն լիարժեք մարդ եմ , "I'm practically standing alone, without him"/ Ես հիմա կարող եմ կանգնել ուղքերիս վրա մենակ, առանց նրա, wrote Tommy Barban in Nice a short provocative letter/ Թոմմի Բարբանին հրավիրող նամակ գրեց** հատվածները: Բնագրից հասկանալի է, որ Նիքոլի նպատակն է ձեռք բերել ինքնուրույնություն, որպեսզի Դիքին ապացուցի իր լիարժեք մարդ լինելը: **"Why, I'm almost complete,"** հատվածի հայերեն տարբերակում **why-ը** փոխակերպվել է **այո** բառով, **almost-ը՝ արդեն** բառով, **practically-ն** բառի փոխակերպումը **հիմա** բառով և տեղի է ունեցել **մարդ** բառի հավելում: Բնագրից հասկանում ենք, որ Նիքոլը ձեռք է բերել կիսով չափ ինքնուրույնություն և ձգտում է հնարավորինս շուտ դառնալ լիարժեք մարդ, որի վկայությունն է **wanting the completion as soon as possible** հատվածը: **I'm practically standing alone** նախադասության թարգմանության մեջ գործ ունենք ամբողջական փոխակերպման հնարի հետ. այն փոխարինվել է **ես հիմա կարող եմ կանգնել ուղքերիս վրա մենակ** հատվածով, որը հարմարեցվել է հայ լեզվամտածողությանը՝ չխախտելով բնագրի գործաբանակն իմաստը: Բնագրի **Dick had planned for her to have it** հատվածի հայերեն տարբերակը ևս

ամբողջական փոխակերպման օրինակ է՝ **որ Դիքի ուզածն էլ հենց այդ էր**: Կրճատման և բառային փոխակերպման հնարների կիրառման ազդեցությունը նկատելի է նաև **a short provocative letter** հատվածի թարգմանության մեջ: Համամիտ չենք **provocative** բառը հրավիրող բառով փոխարինելու հետ, քանի որ **provocative**-ը հայերեն թարգմանվում է՝ **սադրիչ, դրդիչ, գրգռիչ** բառերով, և այստեղ խաթարվել է Նիքոլի ենթադրվող լիարժեքությանը նպաստող գործոններից մեկի ազդեցությունը:

3. **Nicole did not want any vague spiritual romance—she wanted an "affair"; she wanted a change. She realized, thinking with Dick's thoughts, that from a superficial view it was a vulgar business to enter, without emotion, into an indulgence that menaced all of them. On the other hand, she blamed Dick for the immediate situation, and honestly thought that such an experiment might have a therapeutic value. All summer she had been stimulated by watching people do exactly what they were tempted to do and pay no penalty for it—moreover, in spite of her intention of no longer lying to herself, she preferred to consider that she was merely feeling her way and that at any moment she could withdraw...**(p. 291-292).

Նիքոլը չէր ուզում հոգեկան անորոշ սիրախաղ ունենալ: Հարկավոր էր սիրեկան, նրան հարկավոր էր փոփոխություն: Նա գիտակցեց, մտածելով Դիքի պես, որ առերևույթ լպիրշ կլիներ առանց զգացմունքի սկսել բոլորին չարիք սպառնացող մի գործ: Մյուս կողմից նա մեղադրում էր Դիքին՝ ստեղծված իրավիճակի համար, և անկեղծորեն մտածում էր, որ նման փորձը կարող էր բուժիչ հետևանք ունենալ: Ամբողջ ամառը նա խրախուսվել էր՝ դիտելով մարդկանց, որոնք անում էին իրենց սրտի ուզածը և մնում անպատիժ, դեռ ավելին, չնայած այլևս չխաբվելու մտադրությանը, նա հակված էր համոզելու իրեն, որ ինքը սուկ ճանապարհ էր հարթում և ցանկացած պահին կարող էր նահանջել...(էջ 451)

Տվյալ օրինակում վրեժ հասկացության առկայացմանն են նպաստել **she wanted an "affair"/ հարկավոր էր սիրեկան, she wanted a change/ հարկավոր էր փոփոխություն, from a superficial view it was a vulgar business to enter, without emotion, into an indulgence that menaced all of them/ առերևույթ լպիրշ կլիներ առանց զգացմունքի սկսել բոլորին չարիք սպառնացող մի գործ, on the other hand, she blamed Dick for the immediate situation/ մյուս կողմից նա մեղադրում էր Դիքին՝ ստեղծված իրավիճակի համար**, հատվածները: Համամիտ չենք **Nicole did not want any vague spiritual romance**

Նախադասության *spiritual* ածականի թարգմանության հետ, որը բառացի է հնչում: Այն կարելի էր փոխարինել **զգացմունքային** բառով: Բառային փոխակերպման հնարի կիրառման օրինակ է **հարկավոր էր սիրեկան, նրան հարկավոր էր փոփոխություն** նախադասության մեջ **հարկավոր էր** ստորոգյալը, որը փոխարինել է **wanted** ստորոգյալին: Կարծում ենք թարգմանիչը չի հաղթահարել թարգմանչական որոշ խնդիրներ **from a superficial view it was a vulgar business to enter, without emotion, into an indulgence that menaced all of them** հատվածը թարգմանելիս՝ չնայած դիմելով մի քանի հնարների օգնությամբ: Կրճատել է **superficial view** բառակապակցությունը՝ **աներևույթ**, ինչպես նաև՝ **vulgar business** բառակապակցությունը՝ **լպիրշ, to enter... into an indulgence** հատվածը փոխակերպել է **սկսել ... մի գործ, menaced** ստորոգյալը ընդլայնել է՝ **չարիք սպառնացող**: Այս հատվածի համար կառաջարկեինք մեր թարգմանությունը՝ **ակնհայտ լպիրշություն կլիներ առանց զգացմունքի փրվել հաճույքների, որը նրանց բոլորին չարիք կբերեր**: Իր համարժեք թարգմանությունն է ստացել **immediate situation** բառակապակցությունը՝ **սրեղծված իրավիճակի**, որը ևս բառային փոխակերպման հետևանք է: Ամբողջական փոխակերպում է տեղի ունեցել **she preferred to consider that she was merely feeling her way/ նա հակված էր համոզելու իրեն, որ ինքը սուկ ճանապարհ էր հարթում** հատվածի թարգմանական տարբերակում: Այս հատվածում <<վրեժը բավարարվածություն է>> ճանաչողական փոխաբերությունն առկայացել է **she wanted an "affair"** նախադասությամբ, որը, սակայն, հայերեն թարգմանվել է **հարկավոր էր սիրեկան**՝ իրապես առավել ուժգնացնելով ասելիքը:

4. *She wandered about the house rather contentedly, resting on her achievement. She was a mischief, and that was a satisfaction; no longer was she a huntress of corralled game. Yesterday came back to her now in innumerable detail—detail that began to overlay her memory of similar moments when her love for Dick was fresh and intact. She began to slight that love, so that it seemed to have been tinged with sentimental habit from the first. With the opportunistic memory of women she scarcely recalled how she had felt when she and Dick had possessed each other in secret places around the corners of the world, during the month before they were married. Just so had she lied to Tommy last night, swearing to him that never before had she so entirely, so completely, so utterly... (p. 300).*

Նիքոլը գոհ թափառում էր տան շուրջը, ուրախանալով իր հաջողությունից: Նա մեղավոր էր, և դա նրան բավականություն էր պատճառում: Նա այլևս

արգելված որսով չէր զբաղվում: Երեկվա օրը այժմ վերակենդանացել էր իր անթիվ-անհամար մանրամասներով, որոնք դուրս էին մղում նույնանման մանրամասները այն անցած-գնացած ժամանակների, երբ իր սերը Դիքի հանդեպ նոր էր ու անաղարտ: **Նա սկսեց անտեսել այդ սերը, և թվաց, որ այն ի սկզբանե եղել էր սոսկ զգացմունքային կապ:** Անհավատարիմ կնոջ նրա հիշողությունը հազիվ թե մտաբերեր, թե ինչ գերագույն հաճույք էր ստանում ինքը Դիքից, երբ հարսանիքից առաջ աշխարհի զանազան վայրերում նրանք գաղտնի ճաշակում էին միմյանց: **Հենց այդպես էլ նա սպեց Թոմմիին անցյալ գիշեր, երբ երդվեց, որ երբեք կյանքում նման լիարժեք, նման ամբողջական, նման անկրկնելի...**(էջ 460)

Այս հատվածը <<վրեժը բավարարվածություն է>> փոխաբերական կաղապարի առկայացման խտացումն է, այսպես կոչված <<քվինթեսենցիան>>, քանի որ նկարագրվում է Նիքոլը՝ իր հաջողության բերկրանքը վայելելիս: Նա բավականություն է ստանում՝ նույնիսկ գիտակցելով իր մեղավոր լինելու փաստը, և դա բխում է Դիքից վրեժ լուծելու ծարավից: Հետևաբար այստեղ գործ ունենք նաև <<կանացի դավաճանությունը վրեժի դրսևորում է>> խորքային գաղափարի հետ: Ուշագրավ է *resting on her achievement* հատվածի թարգմանությունը. *resting on*-ը փոխակերպվել է **ուրախանայով** բառով: Դատելով համատեքստից և հիմնվելով *resting on*-ի բառարանային իմաստների վրա՝ մենք կփոխարինեինք այն **մտորելով** բառով: Թարգմանության **դա նրան բավականություն էր պատճառում** հատվածից պարզ է, որ տեղի է ունեցել բառային փոխհատուցում: Հարմարեցման հնարի միջամտությունն է նկատվում **նա այլևս արգելված որսով չէր զբաղվում** նախադասության մեջ, և կարծում ենք այն շատ տիպիկ ընտրված տարբերակ է: Վրեժ հասկացության առկայացմանն է նպաստել նաև **she began to slight that love** հատվածը, այսինքն՝ Նիքոլը սկսեց անտեսել Դիքի հանդեպ տածած սերը, քանի որ վրեժի կանչը բթացրել էր նրա զգացմունքները: Ինչ վերաբերում է այդ հատվածի համարժեքությանը՝ ապա այն բնագրից պատճենում է թարգմանության լեզվում: Վրեժից դրդված Նիքոլը խաղում է Թոմմիի զգացմունքների հետ: Թոմմին նրան պետք է ընդամենը որպես սիրեկան՝ Դիքին ցույց տալու, որ իրենով հետաքրքրվող տղամարդ կա: Վրեժի այս տեսակ դրսևորումն առկայացել է՝ **Հենց այդպես էլ նա սպեց Թոմմիին անցյալ գիշեր, երբ երդվեց, որ երբեք կյանքում նման լիարժեք, նման ամբողջական, նման անկրկնելի** նախադասության մեջ, որտեղ **անկրկնելի** ածականը բնագրի **utterly** մակբայի փոխակերպված տարբերակն է: Կարծում ենք, վերջինս համահունչ է այս համատեքստում, առավել ևս, որ **utterly** բառն ունի փոխակերպված բառին մոտ իմաստներ:

Այսպիսով, «Գիշերն անույշ է» վեպի և դրա հայերեն թարգմանության վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ *վրեժ* հասկացության առկայացմանը մեծապես նպաստել է <<վրեժը բավարարվածություն է>> փոխաբերական կաղապարը: Գեղարվեստական թարգմանության մեջ բառերից ու նախադասություններից առավել կարևոր թարգմանության միավորներ են պատկերներն ու փոխաբերությունները, քանի որ հենց դրանց միջոցով է բացահայտվում բնագրի հեղինակի աշխարհայացքը:

Հնարավոր է, որ աղբյուր լեզվի բառը կամ բառակապակցությունը չունենա նույն փոխաբերական նրբերանգը թարգմանող լեզվում: Հետևաբար թարգմանչի խնդիրն է ընտրել այնպիսի միավորներ, որոնք հարազատ մնալով բնագրի ոգուն՝ միաժամանակ նույն ազդեցությունը կթողնեն թիրախ լեզվում, և թարգմանական փոխակերպումները/հնարները ծառայում են որպես թարգմանության մեջ բնագրի ճանաչողական, գործաբանական և հաղորդակցական արժեքների համարժեք վերստեղծման միջոցներ:

Քննության ենթարկված ստեղծագործության հայերեն թարգմանությունը հինականում կարելի է հաջողված համարել, թեպետ, երբեմն, ելնելով թարգմանության համարժեքության մեր ընկալումներից՝ առաջադրել ենք թարգմանության մեր տարբերակը: Բնականաբար հաջողված է համարվում այն թարգմանությունը, որտեղ հաշվի են առնում ոչ միայն լեզվական, այլ նաև մշակութային և ճանաչողական շերտերը:

ՎԵՐԼՈՒԾՎԱԾ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Fitzgerald F. S. Tender is the Night, New York, Charles Scribner's Sons, 1933.
2. Ֆիցջերալդ Ֆ.Ս. Գիշերն անույշ է (թարգմ. Ս. Սեֆերյան), Երևան, «Սովետական գրող» հրատ., 1981:

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН, БЕЛА МАРГАРЯН - ЛИНГВИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ АКТУАЛИЗАЦИИ ПОНЯТИЯ МЕСТЬ В ЛИТЕРАТУРНОМ ТЕКСТЕ

Статья посвящена изучению когнитивных метафор в романе Ф. С. Фицджеральда <<Ночь нежна>> и проблемам эквивалентности их перевода на армянский язык. Анализируется когнитивная метафора

<<*Местъ это сатисфакция*>> и лингвистические средства ее актуализации в английском и армянском языках.

GAYANE YEGHIAZARYAN, BELA MARGARYAN - THE PECULIARITIES OF LEXICALIZATION OF THE NOTION *REVENGE* IN FICTION

The article aims to study the cognitive metaphors in the novel “Tender is the Night” by F. S. Fitzgerald and the equivalence of their translation into Armenian. It touches upon some issues on lexicalization means of the cognitive metaphor “*Revenge is satisfaction*” in the source and target languages.

ՍԱՀՄԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՈՒ. ԷԿՈՅԻ «ՎԱՐՂԻ ԱՆՈՒՆԸ»
ՎԵՊՈՒՄ

ՀԱՄՄԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ սահման, աղանդ, հերետիկոսություն, Միջնադար, եկեղեցի, հավատաքննություն, ֆրանցիսկյաններ

Ու. Էկոյի հանրահայտ «Վարդի անունը» վեպում, ինչպես նաև այլ՝ գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստերում հաճախ է արծարծվում սահմանների խնդիրը. ե՞րբ է սկսվում այս կամ այն երևույթը, ո՞ր պահին է այն վերածվում այլ երևույթի, ո՞րն է այն սահմանագիծը, որ բաժանում է սրբերին՝ հերետիկոսներից, հավատարմությունը գաղափարին՝ մոլեռանդությունից և այլն: Այս հարցը հուզում է հատկապես վեպի գլխավոր հերոս Վիլիելմ Բասկերվիլցուն, որի մտածելակերպը վեպի մյուս հերոսների՝ Խորխե Բուրգոսցու կամ Ուբերտինո Կազալացու նման կտրուկ ու ծայրահեղական չէ, կաղապարված չէ այս կամ այն գաղափարախոսությամբ: Վիլիելմին խորթ չէ կասկածը, նա չի վախենում այլախոհությունից: Վեպի երիտասարդ և միամիտ հերոսի և միևնույն ժամանակ պատումն իրականացնողի՝ Ադոլֆի միջոցով, հեղինակը բարձրացնում է այս բոլոր խնդիրները և անտիկ փիլիսոփաների երկխոսությունների ձևով հասցնում ընթերցողին:

«Վարդի անունը» վեպում սահմանի խնդիրը կապված է առավելապես հերետիկոսության և աղանդների խնդիրների հետ: Ուշ միջնադարում եկեղեցու ճնշումները սաստկանում էին, եկեղեցու և ժողովրդի միջև եղած անջրպետը գնալով մեծանում էր, մինչդեռ աղանդավորները մեծ ժողովրդականություն էին վայելում, հաջողությունների հասնում լայն զանգվածների շրջանում: «Վարդի անունը» վեպում արտահայտված^a Միջնադարի հեղինակային հայեցակարգում մեծ տեղ է հատկացված եկեղեցու և ժողովրդի հարաբերություններին: Այս կապակցությամբ Էկոն հաճախ է հիշատակում աղանդներից մեկի առաջնորդ Դոլչինի⁴⁵ անունը և մեծ ուշադրություն հատկացնում նրա ղեկավարած շարժմանը,

⁴⁵ **Fra Dolcino** (1250 – 1307) իտալացի քարոզիչ, առաքյալների՝ *Apostolici* աղանդի, իսկ հետագայում՝ դոլչինյան շարժման առաջնորդ: Երկար հետապնդումներից հետո Դոլչինի և նրա կողմնակիցների հետ դաժան հաշվեհարդար է տեսնում սրբազան հավատաքննությունը:

որի ազդեցության մասին վկայում է նաև այն, որ Դուլչինի մասին իր անմահ ստեղծագործության մեջ գրում է Դանտեն (Դժոխք, երգ XXVIII):

Երիտասարդ Ադոն, որն իր ուսուցչից հասցրել էր որոշ չափով վարակվել հետաքրքրասիրությամբ նման հարցերի նկատմամբ, գտնում է Դուլչինոյին վերաբերող ձեռագրեր: Կարդալով նրա տանջանքների մանրամասն նկարագրությունները՝ անգամ աստվածավախ Ադոն սկսում է կասկածել⁴⁶ արդյո՞ք նույնիսկ Դուլչինոյի պես հերետիկոսը արժանի էր նման տանջանքների: Ֆրանցիսկյան Վիլիելմը փորձում է բացատրել աշակերտին, որ ցանկացած հերետիկոսության ետևում մարդու վտարված լինելն է, որ միշտ կան մարդիկ, որոնց վանում են, և նրանք միավորվում են: Նրանց պատժելով չէ, որ պետք է չարիքը վերանա. «Կարծում եմ սխալը կարծելն է, թե նախ առաջանում է հերետիկոսությունը և ապա՝ այն միամիտ մարդիկ, որոնք ընկնում են դրա ազդեցության տակ: Իրականում առաջնայինը այդ մարդկանց կյանքի պայմաններն են, հոգեվիճակը և հետ նոր հերետիկոսությունը»⁴⁶: Ի տարբերություն այլ հոգևորականների՝ Վիլիելմը չի շտապում դատապարտել և կրակին հանձնել բոլոր նրանց, ովքեր աղանդավոր են եղել: Հիշեցնենք, որ Վիլիելմ Բասկերվիլցին ժամանակին եղել է հավատաքննիչ, սակայն հետագայում հրաժարվել է այդ պաշտոնից: Որպես մտածող, գիտությանը նվիրված, տրամաբանող անգլիացի ֆրանցիսկյան՝ նա չէր կարող աշխատել այնպիսի մի հաստատությունում, ուր Աստծուն փառաբանում են մոլորված մարդկանց արյան գնով:

Ըստ Էկոյի՝ հերետիկոսները նրանք են, ովքեր դուրս են մնացել Աստծո հոտից, օգտագործելով Մ.Բախտինի տերմինը⁴⁷ «պաշտոնական» մշակույթից: Վանականների նկարագրություններից հասկանալի է դառնում, որ Դուլչինյանների շարքերում բացակայում է դասային բաժանումը (քանի որ ազնվական ընտանիքից սերող Մարգարիտան և անհայտ ծագում ունեցող Սալվատորեն հավասար են), և այնտեղ չկան կրավորական մասնակիցներ՝ բոլորը մասնակցում են խնջույքին, չկան տերեր ու ծառաներ: Ըստ Ռեմիգիոսի՝ Դուլչինոյի աղանդը «մի ապրելակերպ էր, նոր փորձ», այլ ոչ թե «սատանայի կողմից ներշնչված» մտածելակերպ, ինչպես պնդում էր հավատաքննությունը⁴⁷: Սակայն մի՞թե երկնային արքայությունը չի խոստանում հավասարություն բոլորի միջև:

Էկոյի վեպում պաշտոնական մոդել հանդիսացող եկեղեցին պարզապես պատժում է աղանդավորներին, քանի որ նրանք ի սկզբանե դուրս են մոդելից՝ եկեղոցուց: Երբեմն, սակայն, մոդելի և հակամոդելի մասին պատկերացումները

⁴⁶ Eco U., “Il nome della rosa” Bibliotex, S.L., Barcellona , 2002, p. 188.

⁴⁷ Eco U., “Il nome della rosa” Bibliotex, S.L., Barcellona , 2002, էջ 258:

խառնվում են: Այսպես, Ադսոն նկատում է, որ այն, ինչին կոչ էին անուն դուլչինյանները և նրանց նախորդող կեղծ առաքելականները, գրեթե համընկնում է Սուրբ Ֆրանցիսկոսի ուսմունքի հետ, որը ընդունված էր Կաթոլիկ Եկեղեցու կողմից: Ուբերտինն ընդունում է, որ, թեև աղավաղելով, չափազանցելով կամ էլ սխալ մեկնաբանելով, բոլոր աղանդներն էլ ինչ-որ բան վերցնում էին Ֆրանցիսկոսից. «*Գիտե՛ս, տղաս, այս ամենից գլուխ հանելն այնքան էլ հեշտ չէ: Բարին չարից բաժանող սահմանն այնքան նուրբ է...*»⁴⁸: Բայց աղանդավորների ամենամեծ սխալը Ուբերտինոն տեսնում է եկեղեցուց անջատվելու և այն չընդունելու մեջ: Այսպես, յուրաքանչյուր ամենաազնիվ գաղափար կենսագործելիս կորսվում է դրա առաջնային մաքրությունը, աղավաղվում է իմաստը: Դուլչինոյի մասին պատմությունը սկսելիս Ուբերտինոն ասում է. «Սա շատ տխուր պատմություն է, որի մասին խոսելն ինձ ցավ է պատճառու, քանի որ այն ցույց է տալիս, թե ինչպես ապաշխարելու և աշխարհը մաքրագործելու ուժեղ ցանկությունից կարող է հեղվել արյուն և կոտորվեն մարդիկ»⁴⁹: Նման օրինակներ հանդիպում են պատմության բոլոր փուլերում, նույնը կարելի է ասել ուզած հեղափոխության մասին:

Հավատաքննության մասին գրուցելիս պարզվում է, որ Ուբերտինոն խաբեությամբ բացահայտել էր և հավատաքննությանը հանձնել մի աղանդի անդամների: Նույն դատավարության ընթացքում քննարկվում էին նաև նույն խմբին հարող Կյարա Մոնտեֆալկոյի⁵⁰ կատարած հրաշքերը: Սակայն Կյարան դասվեց սրբերի շարքին, իսկ նրա համախոհները հերետիկոս ճանաչվեցին և այրվեցին: Ըստ Վիլիելմը Քրիստոսի հանեղ միստիկ սերը, որ արտահայտվում է էքստատիկ ծայրաստիճան գրգռվածությամբ և մեղսագործությունն իրարից բաժանված եմ մի քայլով: Սակայն ու՛մ է վերապահված որոշելու այդ սահմանը, այդ մի քայլը անելու իրավունքը: Ուբերտինոն համոզված է, որ տարբերում է սրբազան ներշնչվածության և ցանկասիրության միջև սահմանը: «*Վախենում եմ, որ այլևս ի վիճակի չեմ տարբերել, Ուբերտինո: Մի՞թե քո Անջելա Ֆոլինյացին*⁵¹ չէր, որ պատմում էր թե ինչպես ոգշնչման պահին հայտնվել Տիրոջ դագաղի մոտ: Չէ՞ր ասում թե համբուրել է նախ Նրա կուրծքն ու տեսել, թե ինչպես է Նա ննջում փակ աչքերով, ապա համբուրել է Նրա շուրթերն ու զգացել մի աննկարագրելի

⁴⁸ Նույն տեղում, էջ 209

⁴⁹ Նույն տեղում, էջ 208

⁵⁰ **Chiara da Montefalco** (1268 –1308) Կյարա Մենտֆալկոյի, կին հոգևոր գործիչ, որը 1881- ին սրբացվել է Լեոն XIII պապի կողմից:

⁵¹ **Angela da Foligno** (1248 –1309) Անջելա Ֆոլինցի կին հոգևոր գործիչ, միստիկ, սրբացվել է 2013 -ին Ֆրանցիսկոս I պապի կողմից:

քաղցր բույր, որ գալիս էր այդ շուրթերից, որոշ ժամանակ անց դրել էր իր այտը Քրիստոսի այտին, և Քրիստոսն իր ձեռքով սեղմել էր այտը կրծքին, և այդ պահին նրա ցնծությունը, կարծես հենց այդպես էլ ասաց, հասել էր բարձրագույն կետին»⁵²: Ըստ Վիլիելմի՝ Աստծո հանդեպ սերը, որն արտահայտվում է «գրգռված մարմնի ցնցումներով», ավելի մոտ է ցանկասիրության, մինչդեռ Ուբերտինն այդ վիճակը կոչում է «Խաչված Քրիստոսի հանդեպ վեհ սիրո էքստազ»⁵³: Ադսոն անկեղծ հավատում է պաշտոնից հեռանալու^a Վիլիելմի բացատրությանը. «Եկավ մի պահ, երբ ես դադարեցի հասկանալ թե ով է մեղավորը: Միտքս ասես... ասես մթազնել էր, գտնվում էի երկու հակառակորդ ճամբարների միջև՝ սրբերի, որ քարոզում էին ապաշխարանք, և մեղսագործների, որոնք կյանքի էին կոչում այդ քարոզը, հաճաղ ուրիշների հաշվին»⁵⁴: Մինչդեռ Ուբերտինին միամիտ Ադսոն համարում է օժտված այս ձիրքով, այն պարզ պատճառով, որ նա այդպես է պնդում և իր որոշումները կասկածի տակ չի դնում: Վիլիելմին հուզում է նաև այն փաստը, որ հաճախ հավատաքննիչները, կամ էլ պարզապես հոգևորականները չեն էլ փորձում պարզել, թե ո՞քն է այս կամ այն աղանդի գաղափարախոսությունը, որը շատ դեպքերում բավականին նման է պաշտոնական եկեղեցու տեսակետին: «Ղովտը շատ ավելի պակաս մեղսագործ էր քան նրա համաքաղաքացիները, որոնք անաքուր մտքեր ունեին նույնիսկ Աստծո կողմից ուղարկված հրեշտակների հանդեպ, և Պետրոսի դավաճանությունը ոչինչ էր^a համեմատած Հուդայի դավաճանության հետ, հենց այդ պատճառով էլ առաջինը ներում ստացավ, մյուսը՝ ոչ: Չի կարելի պատարհաններին ու կատարներին նույն արջինով չափել»⁵⁵:

Հարկ է նշել, որ վեպի առաջին տարբերակում, որը հեղինակը վերանայել 2014 թ աղանդների մասին խոսելիս Վիլիելմն ու Ուբերտինը հիշատակում են նաև հայ աղանդավորների՝ պավլիկյանների շարժումը և այն սարսափազդու ծեսերը, որոնք վերագրվում էին նրանց⁵⁶: Հայտնի է, որ VII դարի երկրորդ կեսին առաջ եկած, դուալիզմ քարոզող պավլիկյան շարժումը մի շարք աղանդների՝ կատարների, այբիգոյականների, պատարհանների ստեղծման հիմքն է հանդիսացել:

Երբ Ադսոն, մտահոգված կնոջ բնության հարցով, գաղտնի կերպով գնում է գրադարան, գրքերից մեկում հանդիպում է երկու կնոջ՝ Տիրամոր և Բաբելոնյան

⁵² Eco U., “Il nome della rosa” Bibliotex, S.L., Barcellona , 2002, էջ 57

⁵³ Նույն տեղում, էջ 58

⁵⁴ Նույն տեղում, էջ 113

⁵⁵ Նույն տեղում, էջ 143

⁵⁶ Նույն տեղում, էջ 58

անառակի պատկերներին: Աղսոյին համակում է կասկածը. «... սա նոյնպէս կին է, ինչպէս այն առաջինը, բայց սա չարիքի մարմնացում է, իսկ նա՛ առաքինության: Ամեն դեպքում երկուսի կազմվածքն էլ չափազանց կանացի էր, և ինչ-որ պահի ես դադարեցի հասկանալ, թե որն է նրանց տարբերությունը: Ես նորից ներքին ուժեղ գրգռվածություն զգացի: Տիրամոր կերպարն իմ մտքում միաձուլվում էր գեղեցկուհի Մարգարիտայի (Դուլինի ընկերուհու Հ.Ե.) կերպարի հետ: ...Ես խելագարվում եմ, ասացի ինքս ինձ»⁵⁷:

Այսպէս սահմանի, անցման խնդիրը, որը հուզում է հեղինակին, իր արտահայտությունն է գտնում «Վարդի անունը» վեպում և ներկայացվում Աղսո Մելքոն կերմարի միջոցով, որի հետ իրեն նոյնացնում է ընթերցողը: Այս խնդրին անդրադառնալը սկսունքային է վեպի համար քանի որ անհրաժեշտ է Միջնադարյան բարդ կրոնական կյանքը պատկերացնելու համար և մյուս կողմից անշուշտ սա մի խնդիր է, որ արդիական է բոլոր ժամանակներում:

АСМИК ЕГИАЗАРЯН - ПРОБЛЕМА ГРАНИЦЫ В РОМАНЕ У. ЭКО «ИМЯ РОЗЫ»

В данной статье рассматривается проблема границы, которая не раз затрагивается в текстах У.Эко, в том числе и художественных. В романе “Имя розы” она в основном связана с проблемой ересей, которые играли немаловажную роль в Средневековой Европе XIII-XIV веков. Герои романа Вильгельм Баскервильский и Адсон из Мелька часто обсуждают данный вопрос, пытаются понять, где проходит та грань, которая отделяет святость от ереси, похоть от возвышенной любви, и кто решает, где она должна проходить.

HASMIK YEGHIAZARYAN - THE PROBLEM OF THE BORDERLINE IN THE NOVEL BY U. ECO «THE NAME OF THE ROSE»

The article deals with the problem of the borderline, which is a central issue for U. Eco and is often raised in his literary and non-literary works. In the novel “The Name of the Rose” it is mainly connected to the

⁵⁷ Նոյն տեղում, էջ 227

problem of the heresies that marked the life of the medieval Europe in the period of the XIII-XIV centuries. The heroes of the novel William of Baskerville and Adso of Melk often discuss this theme trying to understand where is the borderline that divides the sanity from a heresy, the lust from the real love and who is to decide where the borderline passes.

LOS USOS Y VALORES DE LOS VERBOS SER Y ESTAR Y SUS
TRADUCCIONES AL INGLÉS

ANNA TUMASIÁN
LUSINE GHAZARIÁN

Palabras claves: verbo, traducción, uso

Unos de los verbos más usados en castellano son los verbos *ser* y *estar*. No cabe duda de que estos tienen distintos usos y además muchos valores. En este artículo vamos a hablar sobre sus usos, valores y sus equivalentes en las traducciones al inglés.

El verbo *ser* primero se utiliza para definir e identificar el sujeto. El verbo *ser* describe al sujeto en sí mismo. Es decir, sirve para identificar al sujeto o para expresar sus cualidades propias. Tanto la identificación como las cualidades pueden ser temporales o permanentes (aunque las cualidades y las identificaciones pueden ser con frecuencia permanentes).

Podemos identificar cualquier realidad con una realidad concreta (individuo) o con una clase (conjunto de cualidades). El verbo *ser* se complementa gramaticalmente con su sustantivo, un nombre propio o algo equivalente. (J. A. Molina Redondo 1987: 21)

En algunos casos con sustantivo la diferencia entre identificación y cualidades es difícil de establecer. Aquí el sustantivo menciona una clase en la que el sujeto resulta incluido, es un miembro de ella. Los ejemplos de este tipo son numerosísimos, por lo cual no merece la pena insistir en ellos.

En las traducciones al inglés se puede ver que se utiliza el verbo *to be* porque en inglés también este verbo con los sustantivos se utiliza para definir e identificar el sujeto.

**Cinco mujeres han venido a verme, porque todas *han sido* mis amas.
(Juan Valera: 6)**

**Five different women have come to see me, all of whom *were* my
nurses, and have embraced and kissed me. (Juan Valera: 14)**

***Era* hija de doña Francisca Gálvez. (Juan Valera: 8)**

She was the daughter of Doña Francisca Galvez ... (Juan Valera: 14)

Era un fugitivo de cuantas plagas y catástrofes habían flagelado al género humano. (Gabriel García Márquez: 14)

He was a fugitive from all the plagues and catastrophes that had ever lashed mankind. (Gabriel García Márquez: 6)

José Arcadio Buendía tuvo la certidumbre de que aquel era el principio de una gran amistad. (Gabriel García Márquez: 15)

... José Arcadio Buendía had the certainty that it was the beginning of a great friendship. (Gabriel García Márquez: 6)

Es el olor del demonio. (Gabriel García Márquez: 15)

"It's the smell of the devil," she said. (Gabriel García Márquez: 7)

Al principio, José Arcadio Buendía era una especie de patriarca juvenil. (Gabriel García Márquez: 18)

At first José Arcadio Buendía had been a kind of youthful patriarch (Gabriel García Márquez: 9)

Los únicos animales prohibidos no sólo en la casa, sino en todo el poblado, eran los gallos de pelea. (Gabriel García Márquez: 18)

The only animals that were prohibited, not just in his house but in the entire settlement, were fighting cocks. (Gabriel García Márquez: 9)

Era en verdad una aldea feliz donde nadie había muerto. (Gabriel García Márquez: 19)

It was a truly happy village where no one was over thirty years of age and where no one had died. (Gabriel García Márquez: 9)

El verbo *ser* también se usa para atribuir cualidades (físicas y de carácter). La mayor complejidad en los usos de *ser* se da, sin duda, cuando como atributo aparece un adjetivo. La clase objetiva que la lengua «se limita» a reflejar, está representada por los sustantivos; de ahí que cuando es un sustantivo el que funciona como atributo sólo sea posible emplear *ser*. Igualmente, los adjetivos que significan algo que se aplica, sin excepción a todos los individuos o elementos de la especie designada por el sustantivo al que se unen, constituyen una clase objetiva, y, en consecuencia, se construyen con *ser*: (J. A. Molina Redondo 1987: 117)

La casa de mi padre, que en mi imaginación *era* inmensa, *es* sin duda una gran casa de un rico labrador; pero más pequeña que el Seminario. (Juan Valera: 5)

My father's house, which in my imagination *was* immense, *is*, indeed, the large house of a rich husbandman, but still much smaller than the seminary. (Juan Valera: 13)

Lo mismo ocurre cuando el adjetivo expresa una cualidad o propiedad del sujeto que relaciona a éste de modo necesario con un complemento del adjetivo, como por ejemplo en “el oxígeno es indispensable para los seres vivos” o “el agua es necesaria para la vida.” (J. A. Molina Redondo 1987: 117)

Cuando el atributo es un adjetivo calificativo que indica una propiedad esencial, una definición del sujeto, se utiliza el verbo *ser*.

En este caso en inglés se puede encontrar el verbo *to be* que se utiliza para expresar cualidades, especialmente junto con los adjetivos.

Como atributo tenemos ahora un sintagma nominal. Para justificar la idea de clasificación podemos argumentar que ahora no se trata de los médicos en general, sino sólo de la clase de los médicos muy conocidos, en la cual se adscribe igualmente el sujeto. En este caso, sin embargo, pueden emplearse tanto *qué* como *quién* en la pregunta: (J. A. Molina Redondo 1987: 100)

¿Quién / Qué es Juan? – Es un médico muy conocido.

Las prendas de su vestido *eran* viejas, pero muy limpias. (Juan Valera: 8)

The articles of his modest wardrobe *were* somewhat worn, but carefully brushed and without a stain. (Juan Valera: 15)

D. Gumersindo *era* muy aseado y cuidadoso de su persona. (Juan Valera: 8)

Don Gumersindo, always extremely neat and clean in his person, *was* an old man who did not inspire repugnance. (Juan Valera: 15)

***Era* alegre y amigo de burlas. (Juan Valera: 8)**

Her mother *was* a vulgar woman of limited intelligence and coarse instincts. (Juan Valera: 15)

Llora la muerte de su marido como si *hubiera sido* un hermoso joven. (Juan Valera: 9)

... she lamented the death of her husband as much as though he *had been* a handsome young man. (Juan Valera: 17)

La tierra *es* redonda como una naranja. (Gabriel García Márquez: 13)
The earth *is* round, like an orange.” (Gabriel García Márquez: 5)

***Era* lúgubre con una mirada asiática que parecía conocer el otro lado de las cosas. (Gabriel García Márquez: 15)**

That prodigious man, ... , *was* a gloomy man, enveloped in a sad aura, with an Asiatic look that seemed to know what there was on the other side of things. (Gabriel García Márquez: 6)

Su casa *fue* desde el primer momento la mejor de la aldea. (Gabriel García Márquez: 18)

Since his house from the very first *had been* the best in the village, (Gabriel García Márquez: 9)

El verbo *ser* se utiliza en las expresiones temporales. Constatación, mediata o inmediata, de un momento más o menos amplio ligado al trascurso del tiempo: el día, la noche, el mediodía, la medianoche, las estaciones del año. En las expresiones temporales en inglés se utiliza el verbo *to be*.

Le recordé que *era* lunes. (Gabriel García Márquez: 16)

“I reminded him that it *was* Monday,” she told me. (<http://www.ipad-ebooks-online.com/233/text/part1.html>)

Como los adverbios de tiempo *pronto*, *temprano*, *tarde*. Los tres son relativos y suponen una finalidad (verbalizada como término de *para* o no), como “*Es tarde*”, “*Es pronto para comer*”, “*Es demasiado temprano para levantarse*” o “*Ya es tarde*. ¡Vámonos!”

El verbo *ser* se utiliza para preguntar y decir la hora. Expresión de la fecha; los puntos de referencia pueden ser el mes, el año o los días de la semana o del mes.

***Era* una buena noche de junio, fresco y con luna. (Gabriel García Márquez: 34)**

It was a fine June night, cool and with a moon, (Gabriel García Márquez: 22)

Con el nombre hora (que puede ir acompañado de algún adjetivo, pero no de un determinante) se expresa el tiempo o momento apropiado para algo, como por ejemplo “Aunque *eran* ya las 10 de la noche, hora en que todos los jóvenes tienen que regresar a casa, el chico ni se lo pensaba hacer”.

La cantidad de información acumulada depende, como es lógico, de la situación comunicativa. Consideramos que estas expresiones son «impersonales»: el verbo aparece inmovilizado en tercera persona de singular o a veces de plural.

El verbo *ser* se utiliza para situar un proceso en el tiempo o el espacio. La indicación temporal con *ser* puede también aplicarse a sujetos no referidos, aparentemente al menos, a sucesos, acciones, actividades, etc.; así se comprueba en los siguientes ejemplos: (J. A. Molina Redondo 1987: 31)

¿Cuándo es mi coche? _Será dentro de unos momentos.

¿Cuándo soy yo? _ Enseguida, tan pronto como salga este paciente.

Míre: primero la cocina, después el salón y luego la terraza.

¿Y cuándo es el baño?

¿Ah, el baño?, sí: es antes que la cocina.

Estas construcciones con *ser* se refieren al momento u ocasión en que determinada acción ocurre o es llevada a cabo. De ahí que, reconstruyendo los contextos apropiados, el primero de los ejemplos pueda ser parafraseado como en “¿Cuándo le toca a mi coche?” refiriéndose al hecho de ser lavado, por ejemplo; el segundo, muy apropiado en la sala de espera de un médico, puede serlo en los términos de “¿Cuándo me toca a mí?” o “¿Cuándo voy a entrar yo?” (J. A. Molina Redondo 1987: 29)

En otros casos, y siempre que el contexto lo permita (esto es, la acción consabida), cabe interpretar la pregunta como mecanismo consultivo y la respuesta como instrucción; así ocurre con el ejemplo tercero, que podemos interpretar de este modo: «A le dijo a B que primero limpiara la cocina, después el salón y luego la terraza; B le preguntó cuándo debería limpiar el baño; A contestó diciendo que lo hiciera antes que la cocina». (J. A. Molina Redondo 1987: 30)

El verbo *ser* se utiliza para valorar un proceso. Expresa una valoración general, sobre todo con adjetivos que hacen referencia a los sentidos. En todos estos

casos en inglés se emplea el verbo *to be* porque éste forma una parte del predicado compuesto.

Es extraordinaria la multitud de pajarillos que alegran estos campos y alamedas. (Juan Valera: 6)

The multitude of birds that enliven grove and field *is* marvelous. (Juan Valera: 13)

El verbo *estar* se utiliza para situar personas, animales y objetos en el espacio. De manera más o menos explícita, todas las gramáticas y trabajos monográficos que se ocupan de los usos «no atributivos» de *estar* consideran como su valor básico el de indicar “situación en el espacio” o “localización”. Esta opinión, sin embargo, sólo refleja una verdad a medias; en relación con ella hay que hacer al menos dos precisiones, que son las que examinamos a continuación.

En primer lugar, es necesario tener en cuenta las características del referente (la cosa designada) por el nombre que se quiere situar en el espacio o lugar: *estar* se emplea obligatoriamente cuando tal referente puede ser incluido en el grupo de las que llamamos “entidades” (es decir, personas, animales, objetos). (J. A. Molina Redondo 1987: 25)

Para expresar “situación en el espacio” en inglés podemos utilizar diferentes verbos, empezando con el verbo *to be* en las oraciones, como “The table is in the room” o la construcción “there is, there are” en las oraciones “There is a table in the room” y otros verbos como *to be situated* si hablamos sobre un objeto que está en el espacio, especialmente sobre los países, ciudades, sitios, estatuas, museos, etc., u otros verbos como *lay* si hablamos sobre vegetación, bosques, desiertos, etc. En los casos cuando “situación en el espacio” refiere a una persona o un animal utilizamos el verbo *to be* o cualquier otro verbo que se considera correcto en el contexto.

Cada día siento más deseo de *estar* a su lado. (Juan Valera: 11)

I confess that I begin to have some curiosity to *know* this woman, so much do I hear her spoken of! (Juan Valera: 18)

Sólo un minuto *ha estado* aquí Antoñona. (Juan Valera: 22)

Antoñona *remained* here only for a moment. (Juan Valera: 58)

Él sabía que hacia el oriente *estaba* la sierra impenetrable. (Gabriel García Márquez: 20)

**He knew that to the east there *lay* an impenetrable mountain chain
(Gabriel García Márquez: 10)**

**Al sur *estaban* los pantanos cubiertos de una eterna nata vegetal.
(Gabriel García Márquez: 20)**

**To the south *lay* the swamps, covered with an eternal vegetable scum
(Gabriel García Márquez: 11)**

El verbo *estar* se utiliza para expresar una situación temporal en un oficio o estado. En segundo lugar, hay que recordar que la localización no se da sólo en el espacio, sino que puede ser también “temporal”. (J. A. Molina Redondo 1987: 26)

**La mujer *estaba* en el cuarto mes de embarazo.
The woman *was* in the fourth month of pregnancy.
Mi libro *está* en las primeras fases de elaboración.
My book *is* in the initial writing phase.**

En el primer ejemplo, la sucesividad temporal, el marco, está construido por los nueve meses que normalmente dura el embarazo . En el segundo, se hace referencia a las diversas fases que conlleva la elaboración de un libro. De las traducciones al inglés se ve que aquí otra vez se emplea el verbo *to be*.

***Estuvo* un largo rato sentada en la hamaca. (Gabriel García Márquez: 15)
She *sat* in the hammock for a long time, (<http://www.ipad-ebooks-online.com/233/text/part1.html>)**

El verbo *estar* se utiliza para expresar continuidad de una acción. Uno de los usos exclusivos del verbo *estar* lo constituye su combinación con el gerundio de otros verbos. (J. A. Molina Redondo 1987: 45)

Para expresar una acción que se continua utilizamos el verbo *to be* más Participio I en inglés.

Esta construcción es interpretada de dos modos en la gramática del español bien como “perífrasis verbal”, cuyo rasgo de contenido propio es insistir en la duración de lo expresado por el verbo que aparece en gerundio; bien como una posibilidad más de la flexión de los verbos españoles (en esta segunda interpretación ha pasado lo que ocurre en otras lenguas, especialmente el inglés). La primera interpretación es la más adecuada, y ello porque no todos los verbos admiten la

combinación aludida; en efecto, frente a la aceptabilidad de casos como: (J. A. Molina Redondo 1987: 46)

**Los niños *están* viendo la televisión.
The children *are* watching TV.**

**La situación *está* evolucionando según lo previsto.
The situation *is* developing as it was thought.**

**El mes que viene todavía *estarán* esperando una respuesta.
They will still *be* waiting for an answer the coming month.**

Pese a lo afirmado en las líneas anteriores, como siempre, es necesario tener muy en cuenta la situación, los factores pragmáticos, que pueden hacer que algunas de las oraciones dadas como inaceptables se conviertan en oraciones normales; por ejemplo:

***Está* apreciando mucho a sus hijos en los últimos tiempos.**

Mediante la introducción de la indicación temporal apropiada nos hace ver que se trata de un proceso que desde un momento anterior llega hasta el presente en que se encuentra el verbo. Lo mismo, aunque por razones diferentes, podemos decir de:

José Arcadio Buendía entró en el dormitorio cuando su mujer se *estaba* poniendo el pantalón de castidad. (Gabriel García Márquez: 34)

José Arcadio Buendía went into the bedroom as his wife *was* putting on her chastity pants. (Gabriel García Márquez: 22)

Debe *estar* sufriendo mucho. (Gabriel García Márquez: 35)

“He must *be* suffering a great deal,” he said to Úrsula. (Gabriel García Márquez: 23)

No se sorprendió, porque sin saberlo lo *había estado* esperando. (Gabriel García Márquez: 41)

He was not surprised, for without knowing, he *had been* expecting it. (Gabriel García Márquez: 27)

El verbo *estar* se utiliza para preguntar y decir la fecha. Como ya hemos señalado para el verbo *ser*, también el verbo *estar* se usa para indicar localización

temporal con nombres de horas, días, meses, años y, en general, los que indican periodos tradicionalmente establecidos de tiempo (era, época, edad, etc.). (J. A. Molina Redondo 1987: 33)

Lo que se refiere al inglés para preguntar o decir la fecha, además sea localización temporal o expresión temporal generalmente se utiliza el verbo *to be*.

Estamos a (día) cinco de agosto.

It is the fifth of August.

Estábamos en abril cuando te conocí.

We got acquainted in April.

It was April when we got acquainted.

Dentro de un par de semanas estaremos ya en invierno.

Winter comes in several weeks.

Aunque la situación no sea frecuente en la realidad, la persona del verbo puede cambiar dadas las circunstancias adecuadas. Así, si hablamos con una persona por teléfono, y aquella se encuentra en un lugar con la diferencia horaria correspondientemente, podemos emplear una expresión como en “¡Ah, claro!, aquí *estamos* a domingo, pero vosotros *estáis* a lunes.”

El verbo *estar* se utiliza para indicar estados de ánimo o situaciones. Cuando el atributo es un adjetivo calificativo que indica un estado, una situación debida a circunstancias externas, se utiliza el verbo *estar*:

Mi hijo no salía nunca por la puerta de atrás cuando estaba bien vestido. (Gabriel García Márquez: 23)

My son never went out the back door when he was dressed up. (<http://www.ipad-ebooks-online.com/233/text/part1.html>)

Yo estoy encantado con las huertas y todas las tardes me paseo por ellas un par de horas. (Juan Valera: 6)

I am enchanted with the orchards and I spend a couple of hours walking in them every afternoon. (Juan Valera: 13)

El verbo *estar* se utiliza para valorar un proceso. Expresa una valoración que resulta de haber experimentado algo, como por ejemplo “Este café no *está* bueno, a mí me gusta más fuerte.”

Este verbo sirve para expresar una característica actual, comparada con otro momento o con lo que se considera normal.

Mi padre no *está* más feliz que los demás pretendientes. (Juan Valera: 9)

My father, according to the general opinion, has not *succeeded* better than her other suitors. (Juan Valera: 17)

Si lo que vamos a decir del sujeto está representado por los que se consideran típicos adverbios de modo, bien, mal, es el verbo *estar* el que empleamos. En inglés otra vez el verbo *to be* se utiliza con *good, bad, well, fantastic*, etc.

Esta buena gente me dice que ser sacerdote *está* bien para los pobretones. (Juan Valera: 7)

These good people tell me, with rustic candor, that I ought to throw aside the clerical garb; that to be a priest *is* very well for a poor young man; (Juan Valera: 14)

El mismo comportamiento cabe esperar del adverbio regular (semánticamente intermedio entre *bien* y *mal*); las posibles dudas vienen suscitadas por el hecho de que mientras *bien* y *mal* tienen como adjetivos correlativos (con variaciones de género y número) a *bueno* y *malo*, respectivamente, el adverbio *regular* lo tiene en su homófono *regular* (con variación de número solamente); pese a ello, creemos que el comportamiento es el mismo, como puede comprobarse en los ejemplos del tipo: (J. A. Molina Redondo 1987: 104)

Las reuniones *han estado* regular.

Tus amigos *han estado* regular.

Lo que hemos dicho de *bien*, *mal* y *regular* debe aplicarse a algunos adverbios en – mente que, en registros informales, expresan lo mismo que aquéllos, normalmente con un valor ponderativo, enfático o expresivo; en realidad, encontramos más equivalentes de *bien* (estupendamente, magníficamente, etc.) que de los otros dos (pésimamente, normalmente, etc.).

Después de examinar todos los usos y valores de los verbos *ser* y *estar* hemos llegado a unas conclusiones. Primero el verbo *ser* se utiliza para definir, identificar al sujeto, expresar cualidades físicas y de carácter, preguntar y decir la hora, para situar un proceso en el tiempo o el espacio, valorar un proceso. En mayoría de los casos el verbo *ser* está traducido al inglés por el verbo *to be*.

Segundo el verbo *estar* usan para situar personas, animales y objetos en el espacio, expresar una situación temporal en un oficio o estado, expresar continuidad de una acción, preguntar y decir la fecha, indicar localización temporal con nombres de horas, días, meses, años, indicar estados de ánimo o situaciones, valorar un proceso. En este caso también mayoría de las oraciones con diferentes valores del verbo *estar* fueron traducidos al inglés por el verbo *to be*. Solo en el uso de ese verbo para situar animales y objetos, cosas en el espacio además del verbo *to be* se puede utilizar otros verbos como *to be situated*, *lay*, *remain*, etc.

CONTENIDO

1. J. A. De Molina Redondo y J. Ortega Olivares «Usos de ser y estar», Sociedad General Española de Librería, S. A., 1987
2. Gramática Práctica Superior de Español (Lengua Extranjera), Julián Tomás Fernández Cuesta, Marta Alonso Ayuso, Salamanca, 2000
3. Gabriel García Márquez «Cien años de soledad», RBA, 2004
4. Gabriel García Márquez «Crónica de una muerte anunciada», RBA, 2004
5. Gabriel García Márquez. One Hundred Years of Solitude, Penguin Classics 2000
6. Juan Valera «Pepita Jiménez», 1973
7. Juan Valera. *Pepita Jimenez*. Vol. XX, Part 1. Harvard Classics Shelf of Fiction. New York: P.F. Collier & Son, 1917; Bartleby.com, 2001. www.bartleby.com/320/1/
8. http://roble.pntic.mec.es/acid0002/index_archivos/Gramatica/verbos_ser_estar.htm
9. <http://zachary-jones.com/zambombazo/infografia-usos-de-los-verbos-ser-y-estar/>

ԱՆՆԱ ԹՈՒՄԱՅԱՆ, ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ - “SER” ԵՎ “ESTAR” ԲԱՅԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԺԵՔԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Սույն հոդվածում քննարկվում են իսպաներենի երկու կարևոր բայերը՝ “ser” և “estar”- ը, դրանց գործածությունը և արտահայտած իմաստները: Ներկայացվում են նաև, թե իսպաներենի այդ երկու բայերի արտահայտած իմաստները ինչպես, ինչ բայերի միջոցով են թարգմանված անգլերեն:

ANNA TUMASYAN, LUSINE GHAZARYAN - VALUE AND USAGES OF THE VERBS “SER” AND “ESTAR” AND THEIR TRANSLATION INTO ENGLISH

The article deals with the verbs “ser” and “estar” of the Spanish language, their main usages and various meanings. Ways of translating their different meanings in English are considered in the article as well.

АННА ТУМАСЯН, ЛУСИНЕ КАЗАРЯН - ЗНАЧЕНИЕ И ИСПОЛЬЗОВАНИЕ ГЛАГОЛОВ “SER” И “ESTAR” И ИХ ПЕРЕВОД НА АНГЛИЙСКИЙ

В данной статье представлены наиболее часто употребляемые глаголы испанского языка “ser” и “estar”, а так же даны разные использования этих глаголов. Авторы проводят сопоставительный анализ использования этих глаголов в испанском языке и их эквивалентов в английском языке.

Значение и использование глаголов “ser” и “estar” и их перевод на английский

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԽՈՍՈՒՅԹԱՅԻՆ
ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱՄՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՊՐԻԼՔՍԱՆԶՈՐՍՅԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

ՍՈՆԱ ՀԱԿՈՐՔԱՆ

Հիմնաբառեր՝ քաղաքական խոսույթ, մոդել, համատեքստ, իրադարձություն, ցեղասպանություն, պաշտոնական, իրավիճակ

1915 թվականի պատմական իրադարձություններն այսօր գտնվում են ինչպես պատմաբանների և քաղաքագետների, այնպես էլ հոգեբանների, հասարակագետների և լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Այս անագորույն իրադարձությունների պատմական փաստն անհերքելի է, իսկ դրանց միջազգային ճանաչումն ու դատապարտումը՝ օրհասական:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել ԱՄՆ՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունները, վճիռ-բանաձևերը և ամենամայա ապրիլքսանչորսյան նախագահական ուղերձները և վեր հանել դրանցում ներկայացված համատեքստային և իրադրային մոդելները, որոնց հիման վրա էլ կարելի է կատարել լեզվական տարբեր մակարդակների վերլուծություն: Այստեղ թերևս գործ ունենք քաղաքական խոսույթի արդյունավետության և դրա տարբեր եղանակների հետ, իսկ խոսույթի արյունավետության համար խոսողները կառուցում են իրենց անձնական մտային մոդելները տվյալ իրադարձության վերաբերյալ: Տ.Վան Դեյքը նշում է, որ քաղաքական իրավիճակները ոչ թե պատճառ են հանդիսանում, որ քաղաքական գործիչները խոսեն որոշակի ձերով, այլ դրա համար «անհրաժեշտ է համատեքստ, այսինքն՝ տվյալ իրավիճակի և տեքստի ճանաչողական համագործակցություն»(Van Djik 2006:733): Նմանատիպ համատեքստերը սահմանում են այն եղանակները, որոնցով մասնակիցները փորձարկում, մեկնաբանում և նկարագրում են քաղաքական իրավիճակի համապատասխան հայեցակետերը:

Մտային մոդելների գաղափարը սկզբնապես կիրառվել է ճանաչողական հոգեբանության բնագավառում, հետագայում վերջիններս ընկալվել են որպես թեմա հանդիսացող իրադարձությունների, իրավիճակների, գործընթացների էպիզոդային հիշողություն, որին մասնակցում են անհատներ (Ehrlic,Tardieu & Cavazz 1933): Տեքստին վերաբերող տեսություններում նմանատիպ մոդելներն

ունեն կարևոր դեր, այն է՝ ծառայում են անհրաժեշտ հիմք մտքի կապակցման համար (Albrecht & O Brien 1993):

Լեզվօգտագործողները ոչ միայն կառուցում են հաղորդակցմանը ենթակա իրադարձության կամ իրավիճակի մոդելը, այլև հենց հաղորդակցական իրադարձության մոդել, որին նրանք մասնակցում են: Խոսքային իրադարձությունը կամ իրավիճակը. այսինքն՝ համատեքստը, անհրաժեշտաբար չի տարբերվում այլ իրադարձություններից կամ գործունեություններից, որում մասնակցում են մարդիկ: Համատեքստային մոդելները, ըստ Տ.Դեյքի, վճռական դեր են կատարում խոսույթում և առհասարակ հաղորդակցական գործընթացում: Այս մոդելները ներկայացնում են իրադարձություններ, իրավիճակներ, ինչպես նաև՝ գործիչներ: Այսինքն՝ թերթ կարդալու ընթացքում ես կառուցում եմ տվյալ թերթի մոդելը՝ նոր հոդվածների հեղինակներին, ինձ՝ որպես ընթերցող, ինչպես նաև այլ համատեքստային առանձնահատկություններ, ինչպես օրինակ՝ տվյալ թերթը կարդալու նպատակը (T. Dijk 2000:193):

Համատեքստային մոդելներն էպիգոդիկ են, անձնական, ուստի և ներկայացնում են խոսքային իրադարձության կամ համատեքստի սուբյեկտիվ մեկնաբանություններ: Այսինքն՝ հաղորդակցության մասնակիցները սովորաբար պետք է ունենան միանման և համընկնող մոդելներ այն իրադարձության համար, որի մասնակիցն են, բայց նրանց մոդելները թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն յուրօրինակ են և զանազանվող, քանի որ վերջիններս ունեն տարբեր նպատակներ, հեռանկարներ, կարծիքներ տվյալ տեքստի կամ խոսքի մասին: Համատեքստային մոդելների միջոցով մեկնաբանվում և հակադրվում են բավականին մեծ թվով իրադարձային կառույցներ և ապացուցում են, թե որքան կարևոր է հասարակական իրադարձությունն ու վերջինիս մեկնաբանությունը խոսույթի և հաղորդակցության համար: Ճանաչողական գործընթացները, որոնք ներառված են համատեքստային և իրադարձային մոդելների կառուցման, ակտիվացման, օգտագործման կամ փոփոխության մեջ, ռազմավարական են: Այսինքն՝ նրանք մի գծի վրա են, նպատակաուղղված, վարկածային գործողություններ են, որոնք մշակում են տարբեր մակարդակների տեղեկատվությունը միևնույն ժամանակ (T, Dijk 1991: 217):

Մի քիչ ավելի բարդ մտային մոդելներ են հանդիսանում այսպես կոչված *իրադարձային մոդելները*: Իրադարձային մոդելները ներկայացնում են խոսույթի անհատական մեկնաբանությունը, արդյունավետության մտային սկզբնակետը, և այն, թե ինչ են հետագայում հիշում մարդիկ այդ խոսույթից: Այն տեղեկատվությունը, որ ներկայացվում է իրադարձային մոդելներում ընդհանրացման և վերացարկման միջոցով, հանդիսանում է հասարակայնորեն ընդհանուր գիտելիքի հիմքը: Հասկացողության ընթացքում այս մոդելները կառուցվում են այն

տեղեկատվությունից, որը սերվում է խոսույթից և սոցիալ-մշակութային գիտելիքից: Ակնհայտ համատեքստային պատճառներից ելնելով՝իրադրային մոդելները ավելի հարուստ են տեղեկատվությամբ: Իրադարձության մասին ամենահայտնի տեղեկատվությունը հնարավոր է լինի անհետաքրքիր, ոչ տեղին կամ արդեն իմանալի մասնակիցների կողմից ու հետևաբար կարող է մնալ անորոշ: Սա նշանակում է, որ մեզ անհրաժեշտ են կարգեր համատեքստային մոդելներում, որոնք կարող են մեկանաբանել նման չափանիշները:

Ամերիկայի Միացյալ Նահանգները, զբաղեցնելով առաջնային դիրք պետությունների քաղաքական դիրքորոշումներում, ցեղասպանության իրադարձություններին անդրադարձել ու անդրադառնում է տարբեր քաղաքական և պետական բանաձևերով, վճիռներով և ամենամյա ապրիլքսանչորյան նախագահական ելույթներով: Սրանցից յուրաքանչյուրում հստակ արտահայտված են ԱՄՆ պետության քաղաքական դիրքորոշումները և գաղափարախոսությունը: *Ամերիկայի Միացյալ Նահանգները* հրապարակել է տարբեր պաշտոնական փաստաթղթեր, որոնք անդրադառնում են 1915 թվականի պատմական իրադարձություններին: Մեր հետազոտության մեջ ներկայացնում ենք կարևորագույն ԱՄՆ վճիռ-որոշումները 1915 թվականին տեղի ունեցած պատմական իրադարձությունների վերաբերյալ, այդ վիճիռների արդյունքում հաստատված ամենամյա նախագահական ելույթներ և այլ հրապարակախոսական տեքստեր՝ ԱՄՆ քաղաքական դիտակետից: 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ ԱՄՆ քաղաքական խոսույթում կիրառվող ռազմավարությունները սերտորեն առնչվում են համընդհանուր քաղաքական նպատակներին, որոնք և մատնանշում են ամերիկյան արժեքները: Ինչպես հայտնի է S. Դեյքի հոդվածներից, քաղաքական խոսույթը ճանաչողականորեն հարաբերում է քաղաքական բնագավառի տարբեր մակարդակներ և ուղղություններ: Հենքային մակարդակը բաղկացած է անհատական քաղաքական գործիչներից, ինչպես նաև վերջիններիս քաղաքական համոզմունքներից: Միջին մակարդակը հիմնվում է հենքային մակարդակի վրա, որն իր մեջ ներառում է քաղաքական խմբերն ու կազմակերպությունները, ինչպես նաև նրանց համար ընդհանուր նկարագրությունները, հավաքական խոսույթը, հարաբերությունները և փոխազդեցությունները: Բարձր մակարդակը, որն էլ իր հերթին բաղկացած է միջին մակարդակից, իր մեջ ներառում է քաղաքական համակարգերը և վերջիններիս նկարագրությունները, խոսույթի կարգերը, սոցիալ-քաղաքական, մշակութային և պատմական գործընթացները: Անշուշտ այս մակարդակները փոխկապակցված են այնպես, որ մի կրո և մակրո մակարդակները կարծես հանդես են գալիս նրանցում միևնույն ժամանակ: Այսպես, ելույթ ունեցողը՝ որպես

անհատ, արտահայտում է իր սեփական համոզմունքները՝ յուրօրինակ ձևով և յուրօրինակ համատեքստում: Մինևույն ժամանակ այդ անձը խոսում է որպես կառավարության ներկայացուցիչ՝ արտահայտելով իր խմբի վերաբերմունքներն ու գաղափարախոսությունները; Եվս մի անգամ ապացուցվում է այն փաստը, որ քաղաքական ճանաչողականությունը տեսականորեն հանդիսանում է քաղաքական խոսույթի հիմքը:

Մեր հետազոտության կենտրոնում գտնվող գործերում քննարկվող 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ նախագահներն արտահայտում են իրենց վերաբերմունքները, ներկայացնում ԱՄՆ կառավարության և առհասարակ իրենց ազգի գաղափարախոսությունները: Մոդելները կազմում են քաղաքական գործունեության ճանաչողական հիմքը, և խմբի ու կազմակերպությունների ընդհանուր նկարագրությունների քաղաքական մակրոկառուցվածքները հարաբերում քաղաքական գործիչների գործունեությունների քաղաքական միկրոկառուցվածքին:

Ենթադրվում է, որ խոսողները սկսում են իրենց՝ տվյալ իրավիճակի և իրադարձության մտային մոդելից: Գրեթե բոլոր նյութերում և ելույթներում մոդելները հիմնվում են հայ-թուրքական հարաբերությունների և 1915 թվականի ողբերգական ու ցավալի իրադարձությունների վրա: Վերջիններս արտահայտում են իրենց սուբյեկտիվ վերաբերմունքը այդ ցավալի դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև՝ իրենց կարծիքները:

Սենատի 12-րդ համատեղ վճիռ-որոշման խոսույթում, օրինակ, հստակ արտահատված է ԱՄՆ գաղափարախոսական մոդելը՝ **Միացյալ Նահանգները խորապես ճնշված է ներկայումս Հայաստանում առկա քաղցի, անապահովության, դժբախտության պայմաններից:**

Խոսություն ներկայացված իրադարձությունը ունի հետևյալ պատկերը.

Խոսքային իրադարձություն՝ փետրվար, 1916 սենատի համատեղ որոշում: Սույն վճռում կառուցվում է մի համատեքստային մոդել՝ խոսքային իրադարձություն, որը տեղի է ունենում 1916 թվականի փետրվարի 10-ին և իր արտահայտումն է գտել Սենատի 12-րդ համատեղ որոշման մեջ: Խոսույթն իրականանանում է Ներկայացուցիչների պալատում, մասնակիցներն են 64-րդ համագումարի առաջին նստաշրջանի մասնակիցները:

Պատմական իրադարձություն՝ Այդ ժամանակաշրջանում Հայաստանում առկա անապահովության, քաղցի, դժբախտության թշվառ իրավիճակ: Իրադրային մոդելը կառուցվում է Միացյալ Նահանգների ընդհանրական գաղափարախոսությանը՝ *մենքի* անունից: Մոդելը կաղապարվում է Միացյալ Նահանգների՝ տվյալ իրադարձության վերբերյալ ունեցած վերաբերմունքի ու կարեկցանքի մտային մոդելով (..the people of the United States of America have

learned with sorrow of this terrible plight of great numbers of human beings and have most generously responded to the cry for help whenever such an appeal has reached them.): Մեծաթիվ մարդկային էակների այդ թշվառ կացությունը մեծ վիշտ և տխրություն է պատճառել Միացյալ Նահանգների ժողովրդին և վերջիններս մեծահոգաբար առաջարկում են իրենց օգնությունը:

Սենատի 359-րդ վճռի խոսույթում առկա է նույն հաղորդակցակ հրավիճակը, այսինքն՝ կա խոսքային իրադարձություն, որտեղ ներկայացված համատեքստը ներառում է խոսույթի իրականացման վայրը՝ Միացյալ Նահանգների սենատ, տարեթիվն ու ամսաթիվը՝ մայիսի 11, 1920 թվական: Վճիռը հրապարակել է արտաքին հարաբերություններ հանձնաժողովի անդամ պարոն Հարդինգը: Իրադրային մոդելում սույն պատմական իրադարձությունները ներկայանում են որպես կոտորածներ և այլ դաժանություններ ու անգթություններ, որի հետևանքվ տառապել են հայերը (...the Senate of foreign relations have clearly established the truth of the reported massacres and other atrocities from which the Armenian people have suffered...): (U.S Senate resolution 359):

Միացյալ Նահանգների Ներկայացուցիչների Պալատի 148 միացյալ որոշման խոսույթի մեջ համատեքստային մոդելը կադապարում է այն հաղորդակցական իրադարձությունը, որտեղ ըստ միացյալ որոշման ապրիլի 24-ը հիշել որպես «Մարդու անմարդկայնությունը մարդու նկատմամբ ազգային հիշատակման օր»: Սույն խոսքային իրադարձությունը տեղի է ունենում ապրիլի 9-ին, 1975 թվականին Միացյալ Նահանգների սենատում: (...Resolved by the Senate and House of Representatives of the United States of America in Congress Assembled, that April 24, 1975, is hereby designated as “National Day of Remembrance of Man’s Inhumanity to man” and the President of the United States is authorized and requested to issue a proclamation calling upon the people of the United States to observe such day as a day of remembrance for **all the victims of genocide**, especially those of **Armenian ancestry who succumbed to the genocide perpetrated in 1915...**)

1915 թվականի իրադարձությունները հիմք են հանդիսացել սույն վճռի համար և այն որակել որպես մարդու անմարդկայնություն մարդու նկատմամբ: Խոսքային իրադարձությունը տանում է պատմական իրադարձությունների քննարկմանը՝ 1915 թվականի ցեղասպանության զոհերի հանգամանքին: Այդ իրադարձության ժամանակ ոչնչացվել, մահացել են հայոց նախնիները:

Իսկ 2007 թվականի հունվարի 30-ին **ԱՄՆ 110-րդ համաժողովում** ժողովրդավարական կուսակցության անդամ Ադամ Շիֆի կողմից ներկայացված Հայոց ցեղասպանության մասին որոշման խոսույթում, որը պաշտոնապես կոչվում

է նաև H. Res. 106, տեղ են գտել հետևյալ իրադարձությունները.(...*Affirmation of the United States Record on the Armenian Genocide Resolution - Calls upon the President: (1) to ensure that U.S. foreign policy reflects appropriate understanding and sensitivity concerning issues related to human rights, ethnic cleansing, and genocide documented in the U.S. record relating to the Armenian Genocide and the consequences of the failure to realize a just resolution; and (2) in the President's annual message commemorating the Armenian Genocide to characterize the systematic and deliberate annihilation of 1.5 million Armenians as genocide, and to recall the proud history of U.S. intervention in opposition to the Armenian Genocide.*)

Սույն իրադարձությունը կաղապարվում է մի համատեքստային մոդելով, որը ներկայացնում է Միացյալ Նահանգների արձանագրության հաստատումը Հայոց ցեղասպանության որոշման վերաբերյալ: Վերջինիս խոսքային իրադարձությունը ներառում է այն համապատեքստը, որում տեղի է ունենում սույն իրադարձությունը՝ 110-րդ համաժողով, 2007 թվական, հունվարի 30, որը հղված է նախագահին; Իսկ իրադրային մոդելում, ի հավելումն ամողջական իրադարձությանը՝ կարող ենք առանձնացնել երկու ենթաիրադարձություն՝ ըստ որոշման երկու ենթակետերի.

Ենթաիրադարձություն 1:

խոսքային իրադարձություն՝ Ներկայացնող՝ Ադամ Շչիֆ 110-րդ Համաժողով, հունվարի 30, 2007 թ., ԱՄՆ արտաքին քաղաքականության ընդհանուր դիրքորոշումները, ազգի վերաբերմունքը մարդու իրավապաշտպանության պահպանման, էթնիկական խտրականությունների և ցեղասպանությունների վերաբերյալ արձանագրությունները՝ հատկապես մատնանշելով Հայոց ցեղասպանությունը:

Ենթաիրադարձություն 2: Համատեքստային մոդել: Խոսքային իրադարձությունը նույնանում է առաջին ենթարկադարձության մեջ ներկայացված համատեքստային մոդելի հետ, քանի որ ողջ իրադարձությունը ներկայացվում է նույն հանագամանքերում և նույն անահատի կողմից: Միայն մի հավելմամբ, որ այստեղ խոսքային ակտը ուղղվում է նախագահներին:

ԱՄՆ՝ ցեղասպանության վերաբերյալ որոշումներում և արձանագրություններում մեծապես շեշտվում է նախագահների՝ սույն հարցի վերաբերյալ դիրքորոշումների կարևորությունը և վերջիններիս ամենամյա ապրիլյան չորսրյան ելույթների կարևորությունը իրենց որակմամբ նաև այս դաժան ու վայրագ իրադարձությունների վերաբերյալ:

Տարբեր ժամանակաշրջաններում բոլոր ԱՄՆ նախագահները իրենց նախագահության օրոք ցեղասպանության յուրաքանչյուր տարելիցին ընդառաջ կառուցում են իրենց դիրքորոշումներ մտային մոդելը 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ՝ արտահայտելով իրենց անձնական

վերաբերմունքը, կարծիքները, ինչպես նաև *մենքի՝* ԱՄՆ ազգի գաղափարախոսությունը սույն իրադարձությունների վերաբերյալ :

Այսպես, ԱՄՆ 28-րդ նախագահ **Վուդրո թոմաս Վիլսոնը** 1918 թվականին հանդես եկավ 14 կետեր պարունակող խաղաղության ծրագրով՝ ի նպաստ ճնշված և իրավազուրկ ժողովուրդների: 1919-20 թթ նա մեծապես անդարդարձել է հայերին, Հայաստանին և հայոց ցեղասպանությանը վերաբերող հարցերի: Ներկայացուցիչների պալատի 66-րդ համաժողովի երկրորդ նստաշրջանում, մայիս 24, 1920 թվական, ընթերցվում է Հայաստանի հանձնակատարությունը ստանձնած նախագահ Վիլսոնի ուղերձը, որտեղ քննարկվում է Հայաստանի սահմանների հարցը և հայոց ցեղասպանությունը: Այս ամենը, թերևս, մեր ուսումնասիրության շրջանակներում ներկայցնենք *խոսքային իրադարձության* մեջ, որտեղ նշված է համատեքստը և հանգամանքները, որում տեղի է ունենում իրադարձությունը՝ 1915 թվականի պատմական իրադարձությունների վերաբերյալ: Սույն ուղերձում իրադարձությունների մոդելը կկառուցենք հետևյալ հաջորդականությամբ.

1. *Կոտորածների և գազանությունների հետևանքով հայ ժողովրդի տառապանքը:* Whereas the testimony adduced at the hearings conducted by the subcommittee of the Senate Committee on Foreign Relations have clearly established the truth of the reported massacres and other atrocities from which the Armenian people have suffered;

Համատեքստային մոդելում ներկայացված խոսքային իրադարձությունը ներառում է լուսմների վկայությունը, որոնք իրականացվել են Սենատի Հանձնաժողովի արտաքին հարաբերությունների ենթահանձնաժողովի կողմից: Խոսքային իրադարձության մեջ ընդունվում է կոտորածների ճշմարտությունը, իսկ իրադարձային մոդելը կաղապարվում է հենց այդ կոտորածներով, դաժանություններով, որոնց արդյունքում հայ ժողովուրդը տառապել է:

2. *Անապահովության, քաղցի և թշվառության պայմանները , որ առկա են Հայաստանում:* Whereas the people of the United States are deeply impressed by the deplorable conditions of insecurity, starvation, and misery now prevalent in Armenia;

Համապեքստային մոդելում ներկայացված *խոսքային իրադարձությունը* կաղապարվում է Միացյալ Նահանգների վերաբերմունքով, որում արտահայտված է, վերջինիս խոր ցավակցությունը Հայաստանում առկա իրադարձությունների վերաբերյալ, իսկ իրադարձային մոդելում առկա են քաղցի, անապահովության, թշվառության իրադարձություններ, որոնք առկա են Հայաստանում:

ԱՄՆ 38-րդ նախագահ **Գերալդ Ֆորդի** ուղերձը ներկայացնում է մի համատեքստային մոդել, որում, նախագահը դիմում է Ներկայացուցիչների

պալատին՝ իր խոսքային իրադարձությունը կաղապարելով ցեղասպանության 50-րդ տարելիցի անորոշ զգացմունքներով: Տեղի է ունեցել ցեղասպանության իրադարձություն, նախագահի ուղերձում այդ ցեղասպանությունը որակվում է որպես թուրքական ցեղասպանություն հայ ժողովրդի նկատմամբ: Համատեքստային մոդելում ներկայացված խոսքային իրադարձության մեջ նախագահը հիշում է այդ պատական իրադարձությունը մեծ վշտով: Նկատենք, որ նախագահի խոսույթում, ինչպես բնորոշ է ԱՄՆ ազգին, վերբեմունքը և զգացմունքները արտահատվում են ԱՄՆ գաղափարախոսական *մենք* –ի մոդելում (*In taking notice of the **shocking events** in 1915, we observe this anniversary with sorrow in recalling **the massacres** of Armenia...*):

Համատեքստային մոդելում ներկայացված խոսքային իրադարձության լայն կաղապարներ են ներկայացվում ԱՄՆ 39-րդ նախագահ **Ջիմի Կարտերի** ուղերձում և ողջ ուղերձի միայն մի նախադասությունն է հպանցիկ ներկայացնում իրադարձային մոդել: Ըստ նախագահի ելույթի՝ ունենում ենք իրադարձությունների արտապատկերման հետևյալ մոդելները.

խոսքային իրադարձություն՝ Մայիսի 16, 1978 թվական, Հայ-ամերիկյան համայնքի պատվո ընդունելություն, հայերի ուեցած ներդրումները ԱՄՆ ազգի կատարելագործման համար, Քրիստոնյա ազգին նկատմամբ ուեցած սրտակից վերաբերմունքը, Բալկանյան ու սրտակից վերաբերմունքը հայության տառապանքերի նկատմամբ

40-րդ նախագահ **Ռոնալդ Ռեգանի** ուղերձը կաղապարվում է մի համատեքստային մոդելով, որում խոսքային իրադարձության մեջ ներկայացված են 1981 թվականի ապրիլի 22—ի 4838 հայտարարությունը և հոլոքոստյան զոհերի հիշատակման օրը: Նախագահն իր ուղերձում ներկայացնում է ընդհանրացված իրադարձություններ՝ միլիոնավոր մահեր, անմարդկային դիակախումներ, գազային հարձակումներ: Իր խոսույթում տեղ գտած խոսքային իրադարձության մեջ նա կարեկցանքով խոսում է հոլոքոստյան աղետի մասին՝ նշելով, որ Հոլոքոստի դասերը չպետք է մոռացվեն, և դա կաղապարում է 1915 թվականի իրադարձությունների մասին հիշատակմամբ՝ հայ ժողովրդի ցեղասպանությունը Հոլոքոստից առաջ, իսկ մյուս մասում՝ կաթոցիացիների ցեղասպանությունը Հոլոքոստից հետո (“The Congress of the United States established the United States Holocaust Memorial Council to create a living memorial to the victims of the Nazi Holocaust”.....(Like the Genocide of the Armenians before it and the genocide of the Cambodians which followed it – and like too many other such persecutions of two many other peoples – the lessons of the Holocaust must never be forgotten”.):

41-րդ նախագահ **Ջ. Հ. Վ. Բուշի** ուղերձը ևս կաղապարվում է մի համատեքստային մոդելով, որում խոսքային իրադարձությունը ներկայացնում է ապրիլի 20-ը, 1990 թվականը և Հայոց հիշատակման օրը: Խոսքային իրադարձության մեջ ներկայացվում է նախագահի և Ամերիկայի Միացյալ Նահանգների ունեցած վերաբերմունքն ու կարծիքը հայ ժողովրդի ունեցած ավանդի վերաբերյալ: Կարող ենք ասել, որ ինչպես բոլոր ԱՄՆ նախագահների խոսույթային մոդելները, սա ևս վերահսկվում է գաղափարախոսության կողմից, քանզի այս ելույթը կառուցում է Ամերիկայի Միացյալ Նահանգների անունից ու որոշակիորեն ներկայացնում է այդ ազգի արժեքներն ու նորմերը: Նախագահն իր ելույթը կաղապարում է երկու իրադրային մոդելներով, մեկը հիմնվում է 1988 թվականի երկրաշարժի դեպքերի վրա, իսկ մյուսը՝ 1915-1923 թվականների սարսափելի կոտորածների վրա (“Those tragedies include the Earthquake of 1988, and most prominently, the terrible massacres suffered in 1915-1923 at the hands of the rulers of the Ottoman Empire”): Նախ և առաջ նախագահի խոսույթում տեղ գտած խոսքային իրադարձության մեջ նա ներկայացնում է հայ ժողովրդի պատմությունը՝ ցավով մատնանշելով այն ողբերգությունները, որոնք հայի հաղթանակի և ուժեղության գրավականն են:

Նախագահ **Ջ. Հ. Վ. Բուշին** հաջորդող **Քիլ Քլինթոնը** նախագահական ելույթները կաղապարվում է անձնական մտային մոդելով, որը ներկայացնում է ԱՄՆ (*իրենց*) ցավակցական ու կարեկից վերաբերմունքը: Համատեքստային մոդելը, որը կաղապարում է այդ վերբերմունքերը ու ազգային գաղափարախոսությունը, խոսքային իրադարձության մեջ ներառում է Հայոց հիշատակման օրը և համապատասխան թվականները.

“On this solemn day, I join Armenians from around the world in remembering the victims of the 1915 massacres in the Ottoman Empire”/1994/: Նախագահ Քլինթոնն իր ելույթի անձնական մտային մոդելի շրջանակներում հայությանը կոչ է անում կառուցել մի աշխարհ, որում նման իրադարձությունները պարզապես չեն թույլատրվում պատահել: Լայն իրադրային մոդելին զուգահեռ Քլինթոնը կառուցում է ևս մի նեղ մոդել, որում կաղապարված է Հայստանի և նրա հարևան երկրների հարաբերությունները: “The united States fully supports the efforts of Armenia and its neighbors to make lasting peace with one another and to begin the era of security and cooperation in the Caucasus region”/. Խոսելով իր և Միացյալ Նահանգների անունից՝ նախագահ Քլինթոնը կարծես հանդես է գալիս որպես հաշտարար և փորձում դրական ազդեցություն ունենալ ունկնդիրների վրա: Սա ապացուցում է, թերևս, նրա ելույթի վերջին նախադասությունը (“On behalf of the American people, I extend my best wishes to all Armenians on this

solemn day of rememberanc”) և այս վերջինը համատեքստային մոդելում կաղապարբող հստակ խոսքային իրադարձություն է:

ԱՄՆ 43-րդ նախագահ կրտսեր **Ջ. Վ. Բուշի** նախագահական ուղերձները ևս աշխատում են վերը նշված կաղապարով և ներկայացնում են բարդ իրադարձություններ: Նախագահի խոսույթը կաղապարվում է վերջինիս անձնական մտային մոդելով՝վերբերմունքով, որը, սակայն, կրկին գաղափարախոսական է և ազգի անունից է հանդես գալիս: Ջորջ Բուշի ապրիլիքսանչորսյան նախագահական ուղերձներում կարող ենք առանձնացնել իրադարձություններ, որոնք ներկայանում են որպես առանձին իրադարձություններ, որոնք կատարվել են հայ ժողովրդի հետ: Այդ իրադարձությունները պարունակում են բռնի տարհանումներ, բնաջնջում, մարդասպանություն, մասսայական սպանություններ: Ջ. Բուշը իր 2004 և 2005 թվականի ելույթները կաղապարում է ևս մի իրադարձային մոդելով՝ 1991 թվականի անկախության և Լեռնակին Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ՝ արտահայտելով իր սուբյեկտիվ համոզմունքներն ու կարծիքը: (“Today, our Nation remains committed to a peace settlement in the Nagorno-Karabakh conflict and is grateful for Armenia’s continuing cooperation in the war on terror”./2004/ “We remain committed to a lasting and peaceful settlement of the Nagorno-Karabakh conflict”/2005/)

Ներկայիս նախագահ **Բ. Օբամայի** ուղերձները շարունակաբար կաղապարվում են տարիներ առաջ տեղի ունեցած դաժան իրադարձությունների վերաբերյալ անձնական մտային մոդելներով: Համատեքստային մոդելում ներկայացված են նախագահի պաշտոնավարած համապատասխան թվականները, ուղերձի ամսաթվերը և հանգամանքերը: Ինչպես գրեթե բոլոր նախագահների մոտ՝այստեղ ևս համատեքստային մոդելում առկա խոսքային իրադարձության մեջ ներկայացված են հայ-ամերիկյան համայնքին վերաբերող դրույթներ և սովյալ իրավիճակին վերաբերող խոսքային իրադարձություններ: Ուշագրավ է, որ բարդ իրադարձության մեջ հանդես եկող պատմական իրադարձություններին Բ. Օբաման տալիս է ‘վատագույն կամ մեծ դաժանություն անունները՝որպես խոսքային իրադարձություն: (1.5 million Armenians were massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire;...Each year, we pause to remember the 1.5 million Armenians who were subsequently massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire): Ելույթների երկրորդ մասում Օբաման կառուցում է անձնական մտային մոդել, որում փորձում է վարել հաշտարարական քաղաքականություն: Փորձում է հաշտության եզրեր մշակել Հայաստանի և Թուրքիայի միջև՝ այդպիսով զերծ մնալով կողմնապահությունից: Նա իր ելույթում արտահայտում է իր

վերաբերմունքը Մեծ Եղեռնի ժամանակ զոհվածների հիշատակին և իր մողելում փորձում կաղապարել հայ ժողովրդի ունեցած ավանդը, ձիրքը, տոկունությունը, ինչպես նաև ամերիկահայ համայնքի ունեցած ներդրումն իրենց պետության վրա/”The United States of America is a far richer country because of the many Americans of Armenian descent who have contributed to our society, many of whom immigrated to this country in the aftermath of 1915”. Today, I stand with them and with Armenians everywhere with a sense of friendship, solidarity, and deep respect./:

Այսպիսով, ԱՄՆ քաղաքական գործիչները թե՛ սենատի վճիռ-բանաձևներում, թե՛ նախագահական ուղերձներում 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ նախ և առաջ արտահայտում են իրենց սուբյեկտիվ վերաբերմունքը այս ցավալի իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև իրենց կարծիքներն ու համոզմունքները: Այս ամենը պարփակվում է ԱՄՆ ազգի գաղափարախոսությամբ, որը հստակ երևում է նախագահների կիրառած բառապաշարային միավորներից, և որը թույլ է տալիս եզրակացնել, որ ԱՄՆ ազգը միասնական ազգ է, որից էլ հենց բխում է ԱՄՆ-ի համաշխարհային առաջնորդ և ժողովրդավարական երկիր լինելը:

Քաղաքական խոսույթի լեզվաբանական վերլուծությունները և հատկապես քաղաքական ելույթների մեկնաբանությունը կարող ենք հաջողված համարել, եթե լեզվաբանական վարքագիծը հարվում է քաղաքական վարքագծին: Սա կարող է արվել երկու մոտեցմամբ. Առաջին՝ կարող ենք սկսել լեզվաբանական միկրո մակարդակից՝ ներկայացնելով, թե ինչ ռազմավարական գործառույթներ են իրականացնում որոշակի կառույցները (օրինակ՝ բառերի ընտրություն, հատուկ շարահյուսական կառուցներ և այլն): Համատապասխանաբար կարող ենք սկսել նաև մակրո մակարդակից, այինքն՝ հաղորդակցական իրավիճակից և տեքստի հիմնական գործառույթից՝ ներկայացնելով, թե ինչպիսի լեզվական կառույցներ են ընտրված տվյալ գործառույթի իրականացման համար: Լեզվի կիրառությունը, խոսույթը, խոսքային փոխազդեցությունը և հաղորդակցությունը ըստ այսմ կղասակարգենք միկրո մակարդակին, իսկ ուժը, իշխանությունը, հասարակական խմբերի միջև անհավասարությունը բնորոշ են մակրո մակարդակի վերլուծություններին: Այստեղ, թերևս, արժեվորվում է քաղաքական խոսույթի մոդելավորումը՝ մտային մոդելների հայեցակետից: Մոդելները ներկայացնում են ոչ միայն այն, թե ինչպես են մարդիկ մեկնաբանում և ներկայացնում իրադարձությունները, այլև նրանց կարծիքը տվյալ իրադարձության վերաբերյալ: Ըստ այս, կարող ենք եզրակացնել, որ անհատական վերաբերմունքից, կարծիքներից և համոզմունքներից գատ գաղափարախոսական վերաբերմունքը ևս իր մեծ ազդեցությունն ունի իրադրային մոդելների ձևավորման հարցում, իսկ իրադրային մոդելների շրջանակներում ներկայացվում են բարդ

իրադարձությունների գոյությունը, այսինքն՝ այն իրադարձությունները, որոնք հանդիսանում են խոսքային իրադարձության թեման և որոնք վերլուծվում և նկարագրվում են լեզվաբանության մեջ վերջերս ի հայտ եկած տեսության՝ իրադարձությունների իմաստաբանության շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Albrtecht, J.E. & E.J. O'Brien, Updating a mental model; Maintaining both local and global coherence//Journal of Experimental Psychology; Learning, memory and cognition, 1993
2. Van Dijk T.A. Cognitive context models and discourse , In M. Stamenow (Ed.), Language Structure, Discourse and the Access to Consciousness: Amsterdam, Benjamins, 1997
3. Van Dijk T.A. Politics, Ideology and Discourse//the Encyclopedia of Language and Linguistics; Elsevier, 2006
4. Van Dijk T.A. Political discourse and Political Cognition 1997//<http://www.let.uva.nl/~teun/>
5. Weiyun He. Agnes, Discourse Analysis//The Handbook of Linguistics, Mark Aronoff, Janie Rees-Miller: Blackwell Publishers, 2003
6. <http://www.anca.org/genocide/index.php> 31.03.2015
7. <http://www.armeniangenocide.org/> 31.03.2015

СОНА АКОБЯН - ДИСКУРСИВНЫЕ СТРАТЕГИИ ПРИНЯТИЯ ГЕНОЦИДА (НА БАЗЕ ОФИЦИАЛЬНОГО ДИСКУРСА США 24-ГО АПРЕЛЯ)

Статья посвящена дискурсивным стратегиям, применяемым в политическом дискурсе США. В основном статья представляет мысленные модели, т.е. контекст и модели событий, включенные в официальный дискурс США 24 го апреля. Цель статьи рассмотреть официальные высказывания и резолюции США о геноциде армян, а так же предоставить контекст и модели событий для дальнейшего исследования.

**SONA HAKOBYAN - DISCOURSIIVE STRATEGIES OF GENOCIDE
RECOGNITION (BASED ON THE USA OFFICIAL DISCOURSE ON APRIL
24)**

The article touches upon the discursive strategies used in the USA political discourse. It particularly presents the mental models, i.e. context and event models in the USA official discourse on April 24. The purpose of the article is to study the US official statements and resolutions about the Armenian genocide and present the context and event models for further analyses.

**ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՕՔՅԵԿՏՆԵՐ
(ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ 1915Թ.
ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵՁՎԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)**

ՍՈՆԱ ՀԱԿՈՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ իրադարձություն, իմաստաբանություն, քերականական օբյեկտ, քաղաքական խոսույթ, արտապատկերում, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 1915 թվականի իրադարձություններ

«Իրադարձություն» հասկացությունն ամենաընդհանուր իմաստով ներկայանում է որպես իրերի ու դեպքերի հաջորդականություն, որոնք տեղի են ունեցել և ունենում իրական աշխարհում; Իրադարձությունները հասարակական կամ անձնական կյանքում տեղի ունեցած կարևոր եղելություններ ու պատմական իրողություններ են: Ըստ Ստենֆորդի համալսարանում զետեղված փիլիսոփայական հանրագիտարանի՝ «իրադարձություններն իրական կյանքում տեղի ունեցող երևույթներն են. դա կլինի հարսանիք, փոթորիկ, պայթյուն, կայծակ, երկրաշարժ, թե պարզապես ժպիտ, քայլ ու երգ: Մտածելով ժամանակային, պատճառային ու նպատակային երևույթների մասին՝ անհրաժեշտություն է առաջանում դրանք վերլուծել և ուսումնասիրել հենց իրադարձությունների հայեցակետից: Լեզվաբանական այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են բայի ժամանակը, կերպը, վերագրվում են իրադարձություններին և դրանց կառուցվածքին»:{Stanford Encyclopedia of philosophy, 2006]

Իրադարձության՝ որպես լեզվական միջոցի հանդես գալն ի սկզբանե ունեցել է փիլիսոփայական հիմք: Դեռևս Արիստոտելն իր հայտնի «Մետաֆիզիկա» աշխատության մեջ խոսում էր իրադարձությունների տիպաբանության մասին՝ հիմնվելով դրանց ներքին ժամանակային կառուցվածքի վրա: Արիստոտելն առանձնացնում էր իրականություն (energeia) և գործողություն (kinesis) հասկացությունները:⁵⁸ Այս բաժանումը, թերևս, վերջնանպատակ ունեցող և չունեցող իրադարձությունների սահմանազտումն է: *Սովորել, քայլել, կառուցել* գործողությունները չունեն վերջնակետ ու վերջնանպատակ, այնպես՝ ոչ

⁵⁸ Aristotle Metaphysics, The Complete Works of Aristotle, book 9 (ed. Jonathan Barnes –Princeton) Princeton University Press, 1984, ch. 6, 1048b18– p. 37

ամբողջական գործողություններ են, իսկ իրականությունն արտահայտում է «իրերի գոյությունը»:

Ի հակադրություն գործողությունների՝ իրականություն արտահայտող իրադարձությունները մշտապես գոյություն ունեցող էություններ են. «Մենք տեսնում ենք, հասկանում ենք, մտածում ենք, սակայն վերջիններս չեն նույնանում սովորում ենք, քայլում ենք, կառուցում ենք գործողությունների հետ»:[Aristotle 1048b:28-30]

Գաղտնիք չէ, որ ժամանակը, պատճառականությունը, տարածությունը, ծավալն ու փոփոխությունը հիմնականում հանդես են եկել ֆիզիկայի բնագավառում՝ ֆիզիկական հետազոտությունների շրջանակներում: Այն, որ սույն հասկացությունները կարող են արտապատկերվել մարդկային լեզվի քերականության մեջ, ավելի կոնկրետ՝ իմաստաշարահյուսական նկարագրություններում, դեռևս նոր գաղափար է լեզվական հետազոտությունների շրջանակներում: Այս նոր գաղափարը կաղապարվում է *իրադարձություն* եզրույթով, որը ներկայնում է որպես քերականական օբյեկտ՝ հանդես գալով որպես նկարագրման և մեկնաբանման միջոց: Մինչև 20-րդ դարը քերականության մեջ կարծես անտեսված լինել *հայեցակերպ* հասկացությունը՝ քողարկված լինելով *ժամանակ* հասկացության տակ: Սակայն իրադարձությունների, իրադրային քերականության ներմուծմամբ առաջ են քաշվում բայիմաստի հայեցակերպային դասակարգումները, որոնք մատնանշում են, թե ինչպիսի հատկություն ունի գործողությունը ներկա, անցյալ և ապագա ժամանակների նկատմամբ: Հայեցակերպային դասակարգումները սերում են 2. Վենդլերի քառակողմ դասակարգումներից, և մինչ օրս սույն դասակարգումը հիմք է ծառայում զանազան դասակարգումների համար:⁵⁹ Առհասարակ առանձնացվում են իրավիճակներ, կատարված, կատարվող և կատարվելիք գործողություններ:

Սույն հոդվածում ներկայացվում են իրադարձությունները՝ որպես քերականական օբյեկտներ, որոնք փորձել ենք արտապատկերել քաղաքական խոսույթում: Հիմնական նպատակն է ցույց տալ իրադարձության և քերականության հարաբերությունը՝ կիրառելով հիմնականում իմաստաշարահյուսական նկարագրման միջոցներ: Վերջինիս համար հիմք է ծառայում այն գաղափարը, որ իրադարձությունների՝ որպես քերականական օբյեկտների կիրառումը մեկտեղում է իմաստաբանական/ընդ որում՝ տրամաբանական և բառային/ և շարահյուսական մոտեցումները՝ հանդես

⁵⁹Vendler Z. (1957) “Verbs and Times” the Philosophical review, Vol 66, No 2 pp. 143-160

բերելով նկարագրման տարբեր եղանակներ: Հիմնական խնդիրն է տեսնել՝ արդյո՞ք իրադարձությունները կատարում են հստակ քերականական դեր նախադասության կառուցներում: Բայը մեկնաբանվում է տրամաբանական իմաստաբանության մեջ առկա պրեդիկատների միջոցով: Այստեղ կիրառության մեջ են մտնում նաև արգումենտային կառուցները, և իրադարձության արգումենտում պրեդիկատը վերլուծվում է որպես մեկից ավելի արգումենտային տեղեր ունեցող միավոր: Նախադասությունները հաստատում են իրադարձությունների գոյությունը, և սա իրականացվում է բայով ներկայացված իրադարձության արգումենտի շուրջ կառուցված տրամաբանական գոյության քվանտորի միջոցով: Վերջինիս պատկերավորության համար ներկայացնենք մեր իսկ ուսումնասիրության կենտրոնում գտնվող՝ ԱՄՆ նախագահ Ջորջ Վ. Բուշի ապրիլյան չորսյան ուղերձից վերցված մի օրինակ.

We commemorate an appalling tragedy, the massacre of as many as 1.5 million Armenians through forced exile and murder at the end of the Ottoman Empire. ⁶⁰

Այստեղ ներկայացված է *հիշելու* իրադարձությունը: Գոյություն ունի երկտեղանի հարաբերություն *մենք* ենթակայի և *սարսափելի ողբերգություն* ուղիղ խնդրի միջև:

Commemorate բայով արտահայտվում է մի իրադարձություն, որը կներկայացվի հետևյալ կերպ.

COMMEMORATE (WE, AN APPALING TRAGEDY)

Այստեղ ներկայացված է ենթական՝ *անհատները*, ովքեր *հիշում են* և այն օբյեկտը, որը հիշվում է: Սա, թերևս, ավանդական քերականական նկարագրությունն է՝ ենթակա-ստորոգյալ հարաբերությամբ: Իրադարձությունների իմաստաբանության դիտակետից, սակայն, այս ավանդական հարաբերությունը խախտվում է, և իրադարձությունը ներկայացվում է թեմատիկ դերերի միջոցով՝ բուն իրադարձության խորքային իմաստի բացահայտման համար: Տվյալ պարագայում ցեղասպանության իրադարձությունների համատեքստում տեղի են ունեցել ողբերգական իրադարձություններ: *Սարսափելի ողբերգության և կոտորածի* իրադարձությունները, թերևս, կմեկնաբանվեն և կներկայացվեն հետևյալ կերպ.

⁶⁰ http://www.anca.org/genocide_resource/bush.php Presidential Message: Armenian Remembrance Day, April 24, 2002

Appaling Tragedy

Tragedy- a very sad event or situation, especially one involving death or suffering:

Tragedy

Suffer, die **Massacre - kill, annihilate**

Սույն իրադարձության իմաստաբանական նկարագրությունը ներկայացվում է հետևյալ կերպ.

*Տեղի է ունեցել սարսափելի ողբերգություն, այդ ողբերգության ենթիմաստներում որսալի են տառապելու և մահվան իրադարձությունները: Նախագահի ուղերձում, սակայն, բացակայում է գործողության կատարողը՝ ազենտը, որը պատճառ է հանդիսացել 1.5 մլն հայերի մահվան ու տառապանքի, այս դաժան կոտորածների իր՝ որոշակի գործողություններով: Փոխարենը, ուղերձում հիշատակվում է **օսմանյան կայսրության վերջում ժամանակի պարագան, որն իր պատմական ենթատեքստում արդեն բացահայտում է իրադարձության էությունը: Տվյալ դեպքում, տեղի է ունենում ազենտի մի մակարդակ իջեցում, այսինքն՝ ժամանակի պարագայով արտահայտվում են իրադարձության իրականացման պատճառը և դրա հետևանք հանդիսացող գոհերը՝ պացիենտի դերով:***

Ոլորտի վաղ հետազոտողներից մեկը՝ ամերիկացի փիլիսոփա Դ.Դեյվիդսոնը, խոսելով իրադարձությունների մասին, նմանատիպ հարաբերություններին վերագրում է եռատեղ հարաբերություն: Նա մատնանշում է տառապանքի, կոտորածի իրադարձությունները և երկու կողմերը՝ ազենտ և պացիենտ:

Ξe[kill, suffer (e, at the end of Ott. Emp. 1.5 MLN ARMENIANS ,)]

Բայական պրեդիկատին ավելացված դեյվիդսոնյան լրացուցիչ արգումենտը հանդես է գալիս որպես e փոփոխական մեծություն, և այդ փոփոխակը կարող է փոխազդել քերականական կառույցներում առկա այլ կառուցվածքային բաղադրիչների հետ: Իրադարձությունների իմաստաբանության շրջանակներում, փաստորեն, բայերը ներկայանում են որպես իրադարձության պրեդիկատներ: Բառիմաստային խմբում միտքը նշում է գործընթացի տեսակը, որն ընկալվում է որպես իրադարձություն՝ ըստ իմաստաբանական դերերի: Այսինքն՝ մի դեպքում ունենում ենք դասական քերականություններում ներգործական սեռին համապատասխանող գործընթաց, որն ազենտից անցնում է պացիենտին, իսկ

մյուս դեպքում գործընթացը մնում է ագենտի ոլորտում: Առաջին դեպքում գործ ունենք տելիկ բայերի հետ/telic verbs/, որոնք, փաստորեն, պահանջում են թեմա, որը իրավիճակային փոփոխության է ենթարկվում՝ մատնանշելով իրադարձության ավարտը:⁶¹ Իսկ երկրորդ դեպքում՝ ոչ ամբողջական գործընթացների՝ատելիկ բայերի հետ /atelic verbs/:

Բայի տելիկությունը կամ ատելիկությունը կախված է աշխարհից ստացված իրադարձության բնույթից, քանի որ աշխարհ շարժման մեջ է, և լեզվի խնդիրն է արձանագրել յուրաքանչյուր շարժումը: Երբ բայը տելիկ է, իմաստաճանաչողական կողմը հաստատում է այն պահերը, որոնց միջոցով հետագայում հնարավոր կլինի մտովի վերականգնել ողջ իրադարձությունը: Օրինակ՝ *գնալ* բայը մատնաշում է գնալու պահը և տեղը՝ կանխենթադրելով հասնելու վայրը և պահը: *Օրաման գնաց* կապակցությունը նշում է տեղը և անուղղակիորեն հասկացնում, որ նա պետք է հասնի ինչ-որ տեղ, ժամանակի ինչ-որ պահի: Մինչ իրադարձությունների՝որպես քերականական օբյեկտների ի հայտ գալը, բայը ընկալվել է որպես միայն մի փակ ու ամբողջական երևույթ, սակայն բանն այն է, որ բայը կազմող ներքին գործընթացները կարելի է ուսումնասիրել խնդրառության միջոցով՝ ամբողջական գործընթացին այդ ներքին գործընթացների մասնակացությամբ: Այսպիսի խնդրառությունը Դ. Դոուլթին անվանում է ավելացված թեմա /incremental theme/[Dowty,1991]:

Բ. Օրաման խոսեց հայերի ավանդի մասին:

խոսելու գործընթացը կապվում է *հայերի ավանդ* խնդրի հետ, և ցանկացած այլ խնդրի ավելացում առաջխաղացում է տալիս իրադարձությանը: /Օրաման խոսեց հայերի ավանդի մասին և մատնաշեց հայ-ամերիկյան համայնքի գործունեությունը:/

Իրադարձությունների տեսության շրջանակներում մեծ դեր են կատարում պատճառական բայերը, որոնք ունեն հետևալ կազմությունը՝ CAUSE x BECOME y: Ատելիկ բայերը հարում են իրավիճակներին, որոնք, ըստ էության, պատճառ չեն նշում:

Լեզվի համակարագում ընդունվում է բարդ իրադարձությունների գոյությունը, որը կազմված է արտաքին և ներքին իրադարձություններից: Արտաքին իրադարձությունը ներկայացնում է միջոցը և պատճառը, իսկ ներքինը՝ խնդրառությունը, որը ներկայացնում է իրավիճակի փոփոխություն CAUSE պրեդիկատի արգումենտում: Արգումենտը մի արտահայտություն է, որը թույլ է

⁶¹ telicity (from the Greek τέλοσ, meaning "end" or "goal") is the property of a verb or verb phrase that presents an action or event as being complete in some sense.

տալիս ամբողջացնել պրեդիկատի իմաստը: Պրեդիկատը և վերջինիս արգումենտները⁶² կազմում են իրադարձության արգումենտային կառույցը/ARG-structure/:

Քաղաքական երևույթները մաս առ մաս պարփակում են մեր իրականության՝ հատված առ հատված ներկայացող տարբեր բնագավառները: Այսօր քաղաքականությունը կարծես առօրեական նշանակություն է ստացել և իր հետքն է թողնում մեր կյանքի այս կամ այն իրադարձության վրա: Այս հետագծից անմասն չեն մնում նաև հայոց պատմության՝ իրականության մեջ անպատկերացելի, բայց և իրականության փաստացի մաս կազմող 1915 թվականի իրադարձությունները, իրադարձություններ, որոնց հետևանքը 1,5 մլն անմեղ զոհերն էին՝ պատճառային ամենատարբեր դրսևորումներով: Մասսայականացված հիմնահարց է այսօր սույն իրադարձությունների ճանաչումը և գիտակցումը հետագայում նմանատիպ իրադարձություններից խուսափելու համար: Աշխարհը յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին ընդառաջ ամենաբարձր ամբիոններից հնչեցնում է անագորույն իրադարձությունների ճանաչման կարևորությունը՝ իր բուն իմաստով և պատճառահետևանքային կապերով: Ամերիկայի Միացիալ Նահանգներն այն հզոր խթանն է միջազգային հանրության համար, որն իր հզորության «թևերը» սփռել է գրեթե ողջ աշխարհի քաղաքական դիրքորոշումների և քաղաքական հայացքների արտահայտման «թոփքների» վրա: Ամենատարբեր ձևերով ու ամենատարբեր դիտակետերից ԱՄՆ-ը ճախրել է

⁶² Արգումենտ եզրույթը հարվում է այն իրողություններին, որոնք ամբողջացնում են պրեդիկատի իմաստը: Այն նույնանում է ակտանտ եզրույթի հետ, որն առաջին անգամ կիրառել է Տենիերը (1959) նշանակելու նախադասության գլխավոր շարահյուսական դերերը, որոնք անմիջականորեն կապվում է գլխավոր բայի հետ: Դրանք են շարահյուսական ենթական, ուղիղ խնդիրը, անուղղակի խնդիրը: Հետագայում այս տեսակետը զարգացվել է և “արգումենտային կառույց” հասկացությունը ավելի շատ տրամաբանական կիրառություն է ստացել և մտել իմաստաբանության կիրառության բնագավառ:

⁶² Մասնագիտական գրականության մեջ թեմատիկ դերերը հանդես են գալիս որպես իրավիճակները մասնակիցների հետ հարաբերակցելու միջոցներ: Մասնագիտական եզրույթներով ասած՝ թեմատիկ դերերի միջոցով բացատրվում է պրեդիկատի և իր արգումենտների միջև եղած հարաբերությունները: Թեմատիկ հարաբերությունները ներկայացվել են սերող քերականության շրջանակներում 1970-ականների վերջում, Գրուբերի, Ֆիլմորի, Ջեկենդոֆֆի աշխատություններում: (Gruber,1976, Fillmore, 1968, Jackendoff,1972)

այս իրադարձությունների «երկնակամարում» և միգուցե երկնչել՝ մոլորվելու սարսափելի ցասումը հորիզոնում ունենալով:


Ամերիկայի Միացյալ Նահանգները, զբաղեցնելով առաջնային դիրք պետությունների քաղաքական դիրքորոշումներում, այնուամենայնիվ, 1915 թվականի իրադարձություններին անդրադարձել ու անդրադառնում է տարբեր քաղաքական և պետական բանաձևերով, վճիռներով և ամենամյա ապրիլքսանչորսյան նախագահական ելույթներով: 1915 թվականին տեղի ունեցած իրադարձությունները ԱՄՆ քաղաքական խոսույթում ներկայանում են որպես ցնցող, տպավորող, դաժան և սարսափելի իրադարձություններ՝ հիմնականում արտահայտվելով massacre բայի միջոցով: ԱՄՆ պաշտոնական արձանագրություններում և նախագահական ամենամյա ուղերձներում 1915 թվականի իրադարձությունները մեծապես ներկայացված են անուղղակի կերպով, քանի որ բուն իրադարձությունը ներկայացված չէ, և մեզ մնում է, հետքերը որոնելով, մեկնաբանել վերջիններս: Բայական անվան ենթակա-խնդիր հարաբերությունը կորցնում է իր դիրքը, և գործողություններն իրականացնողները մնում են չբացահայտված: Իրադարձային իմաստաբանության մեջ գործորդը մեկ մակարդակով իջնում է և ներկայանում ժամանակի, տեղի պարագաներով կամ էլ բացարձակապես չի ներկայանում: / the Senate of foreign relations have clearly established the truth of the reported massacres and other atrocities from which the Armenian people have suffered./⁶³

Անուղղակիորեն արտահայտվում է այն ճշմարտությունը, որ հայ ժողովուրդը տառապել է կոտորածներից և դաժանություններից: Տառապանքի իրադարձությունը իրավիճակային բայով է ներկայանում, այսինքն՝ ատելիկ է, ամբողջականություն չի արտահայտում և քերականական գործընթաց չի ներկայացնում: Խոսողը միանշանակ տեղյակ է՝ ինչ է պատահել, բայց ուղիղ ձևով չի արտահայտում այն: Այսինքն՝ CAUSE պրեդիկատի արգումենտում պատճառ հանդիսացողը բացակայում է: *Այս օրերին, այսօր. հիմա* ժամանակի պարագաները՝ որպես քերականական հնարքներ, մատնանշում են, որ խոսողը տեղյակ է սույն իրադարձության մանրամասներից, բայց ուղղակի կերպով դրանք չի արտահայտում: / ..the people of the United States to observe such day as a day of remembrance for **all the victims of genocide**/ /The people of the United States are deeply impressed by the deplorable conditions of insecurity, starvation and misery now prevalent in Armenia. (*U.S. Senate Concurrent Resolution 12 February 9, 1916*) / Ինչպես նշում է Տ. Ա. վան Դեյքը, ցուցային արտահայտությունները/հիմա, այստեղ, այնտեղ/ կարող են ներկայացնել ինչպես գործողության վայրն ու


⁶³ U.S Senate resolution 359

ժամանակը, այնպես էլ՝ հասարակակն դերեր, հարաբերություններ, վերաբերմունք: [T.A,van Dijk, 1991:141]

Վերը նշված օրինակում այս դերերը կատարում է *հիմա* մակբայը՝ իր վրա կրելով իմաստաբանական ազենտի /գործողությունն իրականացնողի/ դերը՝ անուղղակիորեն ներկայացնելով ամբողջական իրադարձությունը: Ընդունելով բարդ իրադարձությունների գոյությունը՝ կարող ենք ասել, որ արտաքին իրադարձությունը, որը հիմնականում կապված է գործողության տրամաբանական կատարողի և այդ գործողության պատճառ հանդիսացողի հետ, ներկայանում է ժամանակի պարագայով, իսկ ներքին իրադարձությունը՝ այն իրավիճակի փոփոխության, որ տեղի է ունենում Հայաստանում: Եթե փորձենք ներկայացնել սույն վճռի համատեքստային մոդելը, ապա կունենանք հետևյալ պատկերը.




Ըստ համատեղ որոշման մեջ տեղ գտած իրադարձությունների *հիմա* Հայաստանում առկա է անապահովության, քաղցի, դժբախտության թշվառ իրավիճակ: Իրադրային մոդելը կառուցվում է Միացյալ Նահանգների ընդհանրական գաղափարախոսությամբ՝ *Մենքի* անունից: Մոդելը կաղապարվում է Միացյալ Նահանգների՝ տվյալ իրադարձության նկատմամբ ունեցած վերաբերմունքի ու կարեկցանքի մտային մոդելով:



Հիմա Հայաստանում առկա է քաղց, տառապանք,անապահովություն.

1. Starvation is prevalent in Armenia now.



Իրադարձությունը ներկայացված է to starve-քաղցել բայով: Ընդարձակ իրադրային կառուցում բայի իրադրային փոփոխակը սահմանվում է առանձին արգումենտային տրամաբանական պարամետրի միջոցով և կոնկրետ տրամաբանական պրեդիկատով: Ունենք մի արգումենտային կառույց, որը կարող ենք ներկայացնել հետևյալ կերպ.

1. Starve

ARDSTR = ARG1 = State

ARG2 = place


S-ARG1 = people

CAUSE պրեդիկատի առաջին արգումենտում ներկայացվում է քաղցի իրավիճակ, երկրորդ արգումենտում՝ վայրը, որտեղ առկա է այդ իրավիճակը, իսկ արդեն սովերային/թաքնված/ արգումենտում ունենք քաղցած ժողովուրդ:

X CAUSE y(Armenian people) BECOME (starved)

Իմաստաբանական գործորդը մեկ մակարդակով իջնում է, և հանգում ենք իրավիճակային քերականության այն մտքին, որ ցուցչային արտահատությունները կարող են ներկայացնել ինչպես գործողության վայրն ու ժամանակը, այնպես էլ՝ հասարակակն դերեր ու հարաբերություններ:

2. Insecurity is prevalent in Armenia now.



Ստեղծված անապահով իրավիճակը ներկայացրել ենք to endanger-վտանգել բայով: Ընդարձակ իրադրային կառույցում վերը նշված բայի իրադրային փոփոխակները ևս ներկայացնում ենք տրամաբանական CAUSE և BECOME պրեդիկատներով՝տարրալուծելով բայիմաստը ավելի խորքային բաղադրիչների: Արգումենտային կառույցում ունենում ենք հետևյալ պատկերը.

ARDSTR = ARG1 = State

⁶⁴ New Webster's dictionary and Roget's Treasures, New York:1991

ARG2 = place


S-ARG1 = people FORMAL

X CAUSES y /Armenian people/ BECOME insecure & endangered

Նույն իրադարձության մեջ ներկայացված է նաև թշվառության, տառապանքի իրավիճակը: Հայաստանում հիմա առկա է թշվառության/տառապանքի իրավիճակ:

Ունենում ենք վերը նշված նույն արգումենտային կառուցվածքը, անուղակի կերպով արտահայտված իրադարձության փաստը, իսկ թշվառության (misery) իրավիճակի արտահայտման համար ընտրել ենք *to suffer բայը*:


Նախագահ Զ. Բուշի ուղերձում 1915 թվականի ողբերգական իրադարձություններն իրականացվել են միջոցի պարագայով: Այսինքն՝ գործողին փոխարինում է միջոցի պարագան, որը ներկայացնում է կորոտորածի և տառապանքի իրադարձությունները: /“Those tragedies include the terrible massacres suffered in 1915-1923 at the hands of the rulers of the Ottoman Empire”.⁶⁵



Բայական պրեդիկատը ներկայանում է որպես բազմատեղանի պրեդիկատ՝ ողբերգությունները, 1915-1923թթ. Օսմանյան կայսրության ղեկավարներ: Կոտորածներն ընկալվում են որպես ողբերգություն, իրականացվել են Օսմանյան կայսրության ղեկավարների ձեռքով՝ 1915-1923թթ-ին: Այստեղ ներկայացված են **կատարված** գործողություններ, և կոտորել բայի համար բառային իմաստաբանության շրջանակներում ընտրել ենք հետևյալ հոմանիշային և համապատասխան հականիշային միավորները պատճառ հանդիսացող արգումենտում ներկայացված իրադարձությունը նկարագրելու համար.

⁶⁵ Armenian Remembrance Day, April 20, 1990

Massacre	SYN .bloodbath, bloodshed, carnage , killing murder, slaughter, annihilation , decimation ANT. Alive, truce, protect, save, help, revive
----------	--



Alive, protected, saved, helped, revived

Armenian people

'The association of Mount Ararat and Noah, the staunch Christians who were massacred periodically by the Mohammedan Turks':⁶⁶ Կատարված գործողությունը՝ կոտորածը և ներկայանալի է վերոնշյալ շարահյուսական ծառով և բառային միավորներով: Այնուամենայնիվ, նախագահ Գ. Հուվերի հիշողություններում կոտորման իրադարձությունը ամբողջական տեսք ունի, և եթե ներկայացնենք ենթակա-խնդիր հարաբերությամբ, ապա այստեղ չենք տեսնի որևէ շեղում, իմաստաբանական գործորդի մի մակարդակ իջեցում:

Հիմնական իրադարձությունն է հետևյալն է.


Mohammedan Turks massacred the staunch Christians.

⁶⁶ The Memoirs of Herbert Hoover, 1952

CAUSE պրեդիկատի արգումենտում ունենք հստակ նշված գործորդ, և հարկ էլ չկա հետքեր որոնելու կամ անուղղակի նկարագրության դիմելու: Ավելին՝ *կոտորել* բայը ներկայանում է որպես երկտեղանի պրեդիկատ, որի առաջին արգումենտը ենթակայով արտահայտված գործորդն է, իսկ երկրորդը՝ ուղիղ խնդիրը՝ կրորդը: ԱՄՆ նախագահական ուղերձերից սա, թերևս, եզակին է: Գերակշիռ մասը շեղվում է ենթակա-խնդիր չափանիշից և ենթարկվում գործորդի մեկ աստիճան իջեցման: / In 1915, 1.5 million Armenians were massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire./ ⁶⁷:

Նախագահ Բ. Օբամայի ելույթում էլ գործորդը ներկայանում է *Օսմանյան կայսրության վերջին օրերը* ժամանակի պարագայով: Իսկ քաղցի, անապահովության և աղետի իրադարձությունները, ի տարբերություն կոտորածների և բռնի տարհանումների, ընկալվում են որպես իրավիճակներ: /..the deplorable conditions of insecurity, starvation and misery now prevalent in Armenia/.

Հայաստանում առկա քաղցի, անապահովության և աղետի իրադարձություններում կարող ենք առանձնացնել հետևյալ բայական կառույցները.



Deplorable conditions **CAUSE** people in Armenia **BECOME** not fed, not secure.

Այստեղ չունենք քերականորեն կատարված գործողություններ, որոնք ապահովում են իրադարձության առաջխաղացումը:

Այսպիսով, ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ իրադարձությունների՝ քերականական ոլորտ ներմուծմամբ լուծվել է

⁶⁷ Statement of President Barack Obama on Armenian Remembrance Day - April 23, 2011,12

հայեցակերպի խնդիրը, բայական վերլուծությունները առավել ամբողջական են ներկայացվում, և իրադարձությունների իմաստաբանության մուտքը լեզվաբանական հետազոտությունների դաշտ ծնունդ է տալիս *իրադրային քերականություն* հասկացությանը, իրադարձություններն ընկալվում են որպես քերականական օբյեկտներ, որոնց վերլուծության շրջանակներում փոխազդում են բառային և տրամաբանական իմաստաբանությունները, ինչպես նաև շարահյուսական կառուցվածքային ծառերը: Այս քերականության առավելությունն այն է, որ այն թույլ է տալիս զարգացնել բայիմաստի վերլուծման մի շարք եղանակներ, ցույց տալ՝ ենթակա-խնդիր հարաբերության շեղման ժամանակ ինչպես է մեկնաբանվում խնդրառական իրադարձությունը՝ գործորդի դերում հանդես բերելով ժամանակի, տեղի, միջոցի պարագաներ: Եթե բուն իրադարձությունները ներկայացված չեն, մենք կարող ենք դիմել անուղղակի նկարագրության՝ *massacres, atrocities, starvation, etc.* գոյականներից սերելով կատարված գործողությունները, իրադարձությունները և իրավիճակները, ինչպես նաև *հիմա, այս օրերին, ներկայումս, առկա* մակբայների կիրառումից հասկանալ ուղղակիորեն չարտահայտված իրադարձության բովանդակությունը: Իրադարձության կառուցվածքը փոխազդում է թեմատիկ դերերի նշանակման, պատճառականության և գործորդության հետ: Թեմատիկ դերերը ներկայանում են որպես երկտեղանի հարաբերություններ, որոնք հարաբերակցում են արգումենտները բայով արտահայտված իրադարձությունների հետ: Յուրաքանչյուր նախադասություն արտահայտում է որոշակի իրադարձություն, իրադրություն և իրավիճակ: Արտաբերված յուրաքանչյուր նախադասության մեջ իրականում ներկայացված են որոշակի տարրեր, որոնք մատնանշում են, թե ինչ տեսակի իրադարձության կամ իրավիճակի հետ գործ ունենք, ինչպես նաև այնպիսի տարրեր, որոնք ներկայացնում են, թե ինչպիսի երևույթներ և մասնակիցներ են ընդգրկված տվյալ իրադարձության մեջ: Այն իրողությունը, որը վերաբերում է իրադարձության կամ իրավիճակի տեսակին, հանդես է գալիս *պրեդիկատ* եզրույթով, իսկ իրադարձությունների մասնակիցները հանդես են գալիս տվյալ պրեդիկատի արգումենտներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Davidson D. (1967) “The logical form of action sentences”, in his essays on Actions and Events (Oxford; Oxford University Press)
2. Dowty, D (1991) “ Thematic Proto-Roles and Argument seleycion” Language 67, 546-619

3. Pustejovsky J. & Tenny C. (2000) "Events as grammatical objects" (The converging perspectives of Lexical semantics and Syntax)
4. Pustejovsky J. (1996/2000) "The Generative lexicon" MIT press Cambridge, Massachusetts
5. Vendler Z. (1957) "Verbs and Times" the Philosophical review, Vol 66, No 2 pp. 143-160
6. http://www.anca.org/genocide_resource/president_statements.php

**СОНА АКОПЯН - СОБЫТИЯ КАК ГРАММАТИЧЕСКИЕ ОБЪЕКТЫ
(ЛИНГВИСТИЧЕСКИЕ ИЗУЧЕНИЯ СОБЫТИЙ 1915 ГОДА,
ПРЕДСТАВЛЕННЫЕ В АМЕРИКАНСКОМ ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ)**

В данной статье представлена концепция событий в лингвистических теориях. Благодаря исследованиям выдвинулась идея, согласно которой события выступают в роли грамматических объектов. В рамках нашего исследования мы попытались проанализировать ужасающие события 1915 года, представленные в американском политическом дискурсе, выявляя при этом характерные дискурсу ситуативные структуры.

**SONA HAKOBYAN - EVENTS AS GRAMMATICAL OBJECTS (LINGUISTIC
STUDY OF THE 1915 EVENTS REPRESENTED IN THE AMERICAN
POLITICAL DISCOURSE.)**

The article deals with the events as grammatical objects. It is a relatively new idea in the linguistic studies. According to this theory there has been accepted the notion of event grammar and the point that language models events as grammatical objects. We tried to represent this notion in the political discourse, our study has mainly been focused on the American political discourse about the horrible events of 1915 Armenian genocide.

«ՇՈՒՆ» ՀԱՍԿԱԳՈՒՅԹԻ ՃԱՆԱՀՈՂԱԿԱՆ ԵՎ ԿԵՐՊԱՐԱՍԽԵՄԱՏԻԿ ԱՐՏԱՊԱՏԿԵՐՈՒՄԸ ԱՆԳՆՈՒՄԵՐԻԿՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հիմնաբառեր՝ ճանաչողական լեզվաբանություն, հասկացական փոխաբերություն, ակունք ոլորտ, թիրախ ոլորտ, ճանաչողական արտապատկերում, քաղաքական գործիչ, քաղաքական համակարգ

Ավանդական լեզվաբանության շրջանակներում փոխաբերությունն ընկալվում էր որպես լեզվի զարդ, խոսքը գեղեցկացնող միջոց⁶⁸:

Ի տարբերություն այս մոտեցման, ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից փոխաբերությունն ընկալվում է ոչ միայն որպես լեզվի պատկերավոր արտահայտչամիջոց, այլ նաև ճանաչողական մեխանիզմ, ճանաչողական միաձուլման գործընթաց, որի արդյունքում ի հայտ է գալիս մի նոր իմաստ⁶⁹:

Այս հոդվածի նպատակը «շուն» հասկացույթի ճանաչողական ուսումնասիրությունն է, դրա առկայացման և դրսևորման հետազոտությունը անգլոամերիկյան քաղաքական խոսույթում:

Ուսումնասիրության լեզվանյութ են ծառայել անգլոամերիկյան մամուլից և համացանցային զանազան կայքերից (The Guardian, The New York Times, The Independent, The New York Daily News, The Washington Post, The Washington Times, The Times և այլն) վերցված մի շարք քաղաքական հոդվածներ (մոտավորապես 100), որոնց ուսումնասիրության արդյունքում ձևավորվում է «շուն» հասկացույթի ճանաչողական պատկերը:

Սույն հոդվածում «շուն» հասկացույթը ուսումնասիրվում է երկու տեսանկյունից՝ ճանաչողական լեզվաբանության և լեզվամշակութաբանության:

⁶⁸ Ungerer F., Schmid H.J. An Introduction to Cognitive Linguistics. L. and N.Y.: Longman, 1997.

⁶⁹ Fauconnier, G. and Turner, M. "Conceptual Integration Networks." *Cognitive Science*. Volume 22, number 2 (April-June 1998), pages 133-187.

Հասկացույթը՝ որպես ճանաչողական լեզվաբանության ուսումնասիրության հիմնական առարկա, ձևավորվում է մի շարք գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են, կենսափորձը, մշակույթը, արժեհամակարգը:⁷⁰

Դիտարկելով հասկացույթը լեզվամշակութաբանության տեսանկյունից՝ հարկ է նշել Վ. Ի. Կարասիկի տեսակետը, համաձայն որի հասկացույթը եռաչափ համակարգ է, որը բաղկացած է հասկացական, պատկերային և արժեքային բաղադրիչներից⁷¹: Ըստ նրա, հասկացույթի պատկերային բաղադրիչն արտացոլվում է հենց փոխաբերություններում:

Փոխաբերությունը, ըստ Լակոֆի և Ջոնսոնի, մի յուրահատուկ կամուրջ է՝ կոնկրետ ծանոթ երևույթից դեպի անծանոթ երևույթ՝ ակունք ոլորտից դեպի թիրախ ոլորտ: Ինչպես նրանք նշում են, փոխաբերությունը թիրախ և ակունք ոլորտների արտապատկերումն է, իսկ արտապատկերումը՝ երկու ոլորտների միջև եղած նմանությունների ամբողջությունը: Մեր առօրյա ճանաչողական համակարգը, որի միջոցով մենք մտածում և գործում ենք, իր բնույթով հիմնականում փոխաբերական է⁷²:

Ճանաչողական լեզվաբանությունը նոր լույս է սփռում աշխարհի քաղաքաքական պատկերի ընկալման և մեկնաբանման գործընթացի վրա:

20-րդ դարի վերջին տարիներից սկսած լեզվի և քաղաքականության կապը գտնվում է ժամանակակից լեզվաբանների ուսումնասիրությունների կիզակետում: Ինչպես նշում է Ջ. Օրվելը, լեզուն մեծ ազդեցություն ունի քաղաքական գիտակցության ձևավորման գործում, հետևաբար, քաղաքական լեզուն հենց քաղաքականության արտացոլումն է իրականության մեջ⁷³:

Խոսելով քաղաքական խոսույթում հանդիպող կենդանուններով փոխաբերությունների մասին՝ անհնար է չհիշել Ջորջ Օրվելի «Կենդանիների ագարակ» աշխատությունը⁷⁴: Ենթադրվում է, որ հենց այս աշխատությունից է սկիզբ առել քաղաքական կյանքի և բնության երևույթների միջև զանգվածային համեմատությունները: Կարելի է ասել, որ քաղաքական համակարգը, որը ներկայացվել է անցյալ դարաշրջանի կեսերին, արտացոլում է քաղաքական աշխարհի ներկայիս իրավիճակը:

⁷⁰ Evans V. 2009. How Words Mean. New York. OUP.

⁷¹ Карасик В. И. Культурные доминанты в языке // Языковая личность: культурные концепты. - Волгоград - Архангельск, 1996.

⁷² Lakoff, G. and Johnson, M. *Metaphors we Live by*. Chicago: University of Chicago Press, 1980

⁷³ Orwell G. *Politics and the English Language*. London, 1946.

⁷⁴ Orwell G. *Animal Farm*. London, 1945.

Մ. Սեվիջը իր <<Քաղաքական գազանանոց>> գրքում արդի քաղաքագետների կարգավիճակը համեմատում է փեթակում ապրող մեղունների հետ՝ ցույց տալով, որ նրանք ձգտում են անսահմանափակ իշխանության և ժողովրդի լիարժեք վստահության “trained like dumb animals”⁷⁵: Ըստ նրա, արդի քաղաքական աշխարհը լի է անկիրթ, տգետ, մոնչացող, գիշատիչ կենդանիներով, որոնք անփորձ հիմարների նման ոչնչացնում են այն ամենը, ինչը թանկ է ժողովրդի համար. այն, ինչ ստեղծվել է մեծ ջանքերի շնորհիվ, ոչնչացման եզրին է:

Անգլիական և ամերիկյան մամուլում կատարած հետազոտությունները վկայում են, որ անգլոամերիկյան լեզվամշակույթում «Քաղաքականությունը կենդանական աշխարհ է» (“Politics is Animal World”) և «Քաղաքական գործիչները կենդանիներ են» (“Politicians are Animals”) հասկացական փոխաբերությունները լայն կիրառություն ունեն:

Ներքոգրյալ օրինակներում «քաղաքականություն» և «քաղաքական գործիչ» թիրախ ոլորտներն ընկալվում են «շուն» ակունք ուղրտի միջոցով: Այս փոխաբերություններում շան վարքագիծը, արտաքին տեսքը արտապատկերում է քաղաքական գործիչի արտաքին տեսքը, մարդկային որակներն ու վարած քաղաքականությունը:

Քաղաքական խոսքում լսելով a top dog, a lap dog, dog-eat-dog world փոխաբերությունները՝ մարդու գիտակցության մեջ ինքնաբերաբար որոշակի պատկերացում է ստեղծվում տվյալ քաղաքական գործիչի կամ քաղաքական համակարգի վերաբերյալ՝ հիմնվելով լեզվամշակութային մտածողության վրա:

Անգլալեզու լեզվամշակութային ճանաչողության մեջ շունը համարվում է հավատարմության, բարեկամության, անվերապահ սիրո խորհրդանիշ: Սակայն ուսումնասիրված նյութը ցույց է տալիս, որ այս կենդանունով փոխաբերությունները հիմնականում *բացասական իմաստ* են արտահայտում:

«Շուն» կենդանու բառարանային սահմանումներից մեկն է “a man who is unpleasant or not to be trusted”⁷⁶: Շուն բառին ավելացնելով «խելագար» (mad) ածականը, այն ձեռք է բերում մեկ այլ իմաստ. **mad dog** – someone who is fighting mad, perhaps a crazed fighter who has no thought for his own health and well being⁷⁷: Բառարանային սահմանումը հստակ պատկերացում չի տալիս, թե արդյոք այս փոխաբերությունն ունի բացասական, թե դրական գործածություն: Սակայն

⁷⁵ Savage, M. The political zoo [Text] / M. Savage. - Nashville, Tenn. : Nelson Current, 2006.- p. 6: ill.

⁷⁶ <http://dictionary.cambridge.org/dictionary/british/dog>

⁷⁷ <http://www.politicalmetaphors.com/category/metaphors/>

ուսումնասիրված օրինակներից պարզ է դառնում, որ այն քաղաքական խոսույթում ունի միայն բացասական կիրառություն:

- “*The mad dog of the Middle East* is dead, and the Libyan people can breathe a sigh of relief,” said [Sen. Lindsey Graham](#), South Carolina Republican. “[Libya](#) is trying to build a democracy out of the ashes of a dictatorship, and the United States should be a helpful partner in that endeavor.”⁷⁸

Այս արտահայտությունն առաջին անգամ օգտագործել է Ռոնալդ Ռեգանը: 1981 թվականին Ամերիկայի նորընտիր նախագահ Ռեգանը Գադաֆիին հռչակում է որպես “**the mad dog of the Middle East**”, քանի որ վերջինս աչքի էր ընկնում իր դաժանությամբ, փառամոլությամբ և պարծենկոտությամբ, և մամուլը ներկայացնում էր նրան որպես «ճնշված ժողովրդի դաժան դիկտատոր» (“vicious dictator of an oppressed people”): Այս փոխաբերությունը սկսեց լայնորեն կիրառվել մամուլում հատկապես 2011 թվականին, երբ սպանվեց Գադաֆին:

Ոչ միայն Ռեգանն էր Գադաֆիին անվանում խելագար շուն (mad dog), այլ նաև Եգիպտոսի նախկին նախագահ Անվար Սադատը, որն իր օրագրում նշել է, որ Գադաֆին հոգեկան հիվանդ է և բուժման կարիք ունի:

Այժմ անդրադառնանք մեկ այլ ճանաչողական փոխաբերության **attack dog** («հարձակվող շուն»), որը, ինչպես ցույց է տալիս օրինակների վերլուծությունը, լայն գործածություն ունի անգլոամերիկյան մամուլում: «Հարձակվող շներ» փոխաբերությունը վերաբերում է քաղաքական առաջնորդի վստահելի թիմակիցներին, որոնք անհրաժեշտության դեպքում կոչվում ու պայքարում են հակառակորդի դեմ, քննադատում հակառակորդի որդեգրած քաղաքականությունն ու քաղաքական հայացքները:

- Once considered primarily the Obama campaign's designated **attack dog**, Vice President [Joseph R. Biden](#) has adopted a role that is lower in profile but more versatile on the stump in this election season.⁷⁹

Ինչպես երևում է բերված օրինակից, Ամերիկայի ներկայիս վարչապետը՝ Ջոզեֆ Բայդենը, բնութագրվում է որպես Օբամայի ընտրարշավի «հարձակվող շուն», որպես ագրեսիվ ու հաստատակամ անձ, որին քաղաքական գործիչն օգտագործում է հակառակորդին պարտության մատնելու ակնկալիքով:

Այժմ դիտարկենք մեկ այլ ամերիկյան քաղաքական խոսույթում լայն տարածում ունեցող փոխաբերություն **blue dog**, որն ուսումնասիրվող բոլոր

⁷⁸ <http://www.washingtontimes.com/news/2011/oct/20/obama-tyranny-lifted-libya-gadhafis-death/?page=all>

⁷⁹ <http://www.washingtontimes.com/news/2012/aug/5/biden-diversifying-his-2012-campaign-portfolio/?page=all>

համատեքստերում բնութագրում է դեմոկրատական կուսակցության անդամներին, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի այն անդամներին, որոնք ավելի պահպանողական են իրենց քաղաքական տեսակետներում ու քաղաքական փոփոխության մեջ:

1. Remember, the target audience for Republicans is **Blue Dog Democrats** in Congress. They won't panic unless they perceive organic anxiety. The White House's goal was to prevent **the Blue Dogs** from panicking⁸⁰.

Կան տարբեր բացատրություններ, թե որտեղից է ի հայտ եկել այս անվանումը: Դրանցից մեկն այն է, որ դեմոկրատական կուսակցությունը սկզբնական շրջանում իր հավաքները կազմակերպում էր մի գրասենյակում, որի պատին պատկերված էր կապույտ շան նկար: Ըստ Լակոֆֆի և Թրների, նման փոխաբերությունները կոչվում են կերպարավոր⁸¹, քանի որ երկու ոլորտների միջև կապը հիմնված է ֆիզիկական նմանության վրա:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում **lap dog** և **watchdog** ճանաչողական փոխաբերությունների ուսումնասիրությունը, որոնք շատ հաճախ օգտագործվում են միևնույն համատեքստում՝ հակադրություն ստեղծելու նպատակով:

- The liberal media is the biggest culprit for not challenging Obama and the Democrats in the first place. Their job is to be the **watchdogs** of the government, not **the lap dogs** of Obama. They let Obama to get away with so much since the beginning of his presidential campaign that he now thinks that he can get away with anything.⁸²

Ինչպես երևում է բերված օրինակից, **lapdog** փոխաբերությունը, որի բառարանային իմաստներից մեկն է “a person who is under the control of another person or group”⁸³, քաղաքական խոսույթում բնութագրում է այն քաղաքագետներին, որոնք տվյալ քաղաքական ուժի, առաջնորդի հպատակներն են, մինչդեռ **watchdog** ճանաչողական փոխաբերությունն ունի *դրական գործածություն*, բնորոշում է քաղաքական գործիչների այն խմբերը, որոնք պայքարում են կառավարությունում տիրող անօրինականությունների դեմ,

⁸⁰ <http://www.theatlantic.com/politics/archive/2009/08/how-conservatives-are-blowing-their-chance/23084/>

⁸¹ Lakoff, George and Turner, Mark. 1989. *More Than Cool Reason: A Field Guide to Poetic Metaphor*. Chicago: University of Chicago Press.

⁸² <http://www.washingtontimes.com/news/2013/nov/13/democrats-abandon-obama-over-health-care-law/?page=all>

⁸³ <http://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/lapdog?q=lapdog>

մշտադիտարկում են քաղաքական ուժերի կողմից ձեռնարկվող քայլերը և ողջ ուշադրությունը սևեռում դրանց պատշաճ իրագործմանը՝ հետամուտ լինելով ժողովրդի շահերի պաշտպանությանը:

Դիտարկենք մեկ այլ իրարամերժ իմաստ կրող փոխաբերություններ **top dog** և **underdog** : Անգլալեզու քաղաքական խոսույթում **top dog** փոխաբերությունն օգտագործվում է այն քաղաքական գործիչներին բնութագրելու համար, ովքեր ընտրություններում ունեն հաղթելու առավել մեծ հնարավորություններ, մինչդեռ **underdog** փոխաբերությունը՝ այն քաղաքական գործիչին կամ կուսակցությանը, որն ընտրություններում համարվում է ամենաթույլը և ունի հաղթելու ամենաքիչ հավանականությունը⁸⁴:

- Election 2015: can **the underdog** beat the **top dog** in the UK's tightest race for years?

Could this be one of those elections in which, when the votes are counted, **the underdog** turns out to be **the top dog**? I can't tell you for sure. But finding out is another good reason to stay awake on the night of 7 May⁸⁵.

Բերված օրինակը պարզ կերպով արտացոլում է, որ այս երկու փոխաբերությունները (**top dog** և **underdog**) հակադրվում են միմյանց. երկու արտահայտություններն էլ բնութագրում են քաղաքական գործչի կարգավիճակը, առաջինը՝ *դրական* տեսանկյունից, իսկ երկրորդը՝ *բացասական*:

Ուսումնասիրելով այս երկու փոխաբերությունները, հարկ է նշել Լակոֆֆի և Ջոնսոնի հետևյալ տարածական կողմնորոշում ունեցող փոխաբերությունը՝ Վերև-Ներքև (Up-Down)⁸⁶, որտեղ ենթադրվում է, որ վերևը՝ *դրական* է, իսկ ներքևը՝ *բացասական*: Սրանք այնպիսի կերպարավոր սխեմաներ են, որոնք ընդհանուր են բոլոր մարդկանց համար՝ անկախ ազգային պատկանելիությունից և մշակույթից:

Այս իմաստների զարգացումը բխում է 19-րդ դարում մեծ հեղինակություն վայելող շների կովից: Կովի վերջում պարտվող շունը մնում է ներքևում, իսկ հաղթող շունը՝ վերևում: Այստեղից էլ ի հայտ է եկել դրանց իմաստները, որը կարելի է ներկայացնել հետևյալ հակադրությամբ՝ վերև (հաղթող) - ներքև (պարտվող) (top dog (winner) – underdog (loser)):

⁸⁴ <http://www.politicalmetaphors.com/category/metaphors/page/7/>

⁸⁵ <http://www.theguardian.com/commentisfree/2015/jan/25/can-underdog-beat-top-dog-tightest-race-years>

⁸⁶ Lakoff, G., & Johnson, M. *Metaphors we live by*. Chicago: University of Chicago Press, 1980.

Մյուս ուսումնասիրվող փոխաբերությունը «**շան կյանք/շան օրեր**» տիպիկ բնութագրում է կյանքի դժվարություններն ու խոչընդոտները, կյանքի անարդար վերաբերմունքը: Այս փոխաբերություններում «շուն» կենդանունը ասոցացվում է սովի, պայքարի, դաժան կյանքի հետ:

- President Obama says that he's aging rapidly in "**dog years**" but that he still has enough energy for a second term.

"These president years are **dog years**," Mr. Obama told supporters late Monday night at a swank fundraiser in Los Angeles. "Don't get tired. I may be gray, but I'm not tired. My passion is still there. My vision for this country is still there."⁸⁷

Ներքոգրյալ մյուս երկու փոխաբերությունները բնութագրում են քաղաքական համակարգը՝ **dog-eat-dog world** և **dog and pony show**:

Արդի քաղաքական աշխարհում գերիշխում են մրցակցությունն ու հակամարտությունը, որտեղ մարդը մարդուն գայլ է (**dog-eat-dog world** թարգմանաբար նշանակում է «միջավայր, ուր շունը շան միս է ուտում»):

Այս փոխաբերությունը ենթադրում է այնպիսի մի հասարակություն, ուր բոլորը թշնամի են միմյանց, յուրաքանչյուր ոք պայքարում է իր իսկ շահերի համար: Նման հասարակությունում անհատը պետք է նախ և առաջ հետապնդի իր սեփական շահերը և ձեռք բերի առավելություն մյուսի նկատմամբ:

- Competition, the essence of the capitalistic society, rewards those who make good decisions and punishes those who do not. The **dog-eat-dog world** relentlessly disposes of waste and inefficiency. Yet in doing so, it mercilessly shatters an untold number of inflated egos. It is truly shameful. ⁸⁸

Այս օրինակում շան կատաղի վարքագիծը արտապատկերում է քաղաքականության մեջ տիրող կատաղի ու անողորմ մրցակցությունը:

Մյուս քննարկվող փոխաբերությունը **dog and pony show** ունի հետևյալ իմաստը «ուռճացված ներկայացում, իրադարձություն, որն իրականացվում է, որպեսզի որոշակի ազդեցություն գործեն հասարակության կարծիքի վրա՝ հետապնդելով քաղաքական նպատակներ: Որպես կանոն, արտահայտությունը ունի բացասական իմաստ, արտացոլում է արհամարհանք, ներկայացվող տեղեկատվության նկատմամբ անվստահություն»⁸⁹:

⁸⁷ <http://www.washingtontimes.com/blog/inside-politics/2011/oct/25/obama-says-hes-aging-dog-years/>

⁸⁸ <http://communities.washingtontimes.com/neighborhood/businessliving/2013/aug/19/fundamental-flaws-capitalism/#ixzz2vB4Ur5ky>

⁸⁹ Cabana, Paul (January 31, 2001). "The Dog and Pony Show Must Go On!". *Fast Company*.

- “It is in the interest of the minority in the Congress to reach out, and we have continued to. But what we want to say is this: We’re not interested in a **dog-and-pony show** to trumpet failed bills that, in fact, the Democrats can’t even pass right now. We’re not interested in that because the American people aren’t, either,” House Minority Whip Eric Cantor, Virginia Republican, said.⁹⁰

Այս արտահայտությունն ի սկզբանե օգտագործվել է Միացյալ Նահանգներում 19-րդ և 20-րդ դարերում՝ նկարագրելու փոքր թափառաշրջիկ կրկեսներին, որոնց ներկայացումներում հանրության ուշադրությունը գրավելու հիմնական միջոցներն էին շները և պոնիները:

Քաղաքական շուռների հիմնական նպատակը հանրության ուշադրության կենտրոնում հայտնվելն է:

Այսպիսով, կարելի է ասել, որ քաղաքական խոսույթում արտացոլված է հասարակության գիտակցությունը, որը սերտ կապ ունի հասարակության արժեքային դիրքորոշումների հետ: Հիմնվելով օրինակների վերլուծության վրա, կարող ենք առանձնացնել քաղաքական խոսույթում հանդիպող «շուն» հասկացույթի հետևյալ հասկացական կաղապարները՝ շուն – քաղաքական գործիչ, շուն- քաղաքական համակարգ, որոնց ուսումնասիրությունը փաստում է, որ քաղաքական խոսույթում «շուն» հասկացույթի առկայացումը տեղի է ունենում մի շարք գործոնների հիման վրա՝ ազգային, մշակութային, քաղաքական և այլն:

«Շուն» հասկացույթը հիմնականում բացասական իմաստով է գործածվում քաղաքական խոսույթում, կիրառության հիմնական նպատակը քաղաքական համակարգին ու քաղաքական գործչին քննադատելն ու կշտամբելն է: Այս փոխաբերությունները քաղաքական խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզականություն և գնահատողականություն, հիմնվում են ընթերցողի կամ լսողի ունեցած գիտելիքի և սուբյեկտիվ ընկալման վրա, ինչն էլ ավելի մեծ գործաբանական ներուժ է հաղորդում «շուն» հասկացույթով ճանաչողական փոխաբերությունների գործածությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Cabana, Paul (January 31, 2001). "The Dog and Pony Show Must Go On!". Fast Company.

⁹⁰<http://www.washingtontimes.com/news/2010/feb/09/obama-rejects-starting-over-health-care/#ixzz2vAt6T1St>

2. Evans V. 2009. How Words Mean. New York. OUP.
3. Fauconnier, G. and Turner, M. "Conceptual Integration Networks." Cognitive Science. Volume 22, number 2 (April-June 1998), pages 133-187.
4. Lakoff, G. and Johnson, M. Metaphors we Live by. Chicago: University of Chicago Press, 1980
5. Lakoff, George and Turner, Mark. 1989. More Than Cool Reason: A Field Guide to Poetic Metaphor. Chicago: University of Chicago Press.
6. Orwell G. Politics and the English Language. London, 1946.
7. Orwell G. Animal Farm. London, 1945.
8. Savage, M. The political zoo [Text] / M. Savage. - Nashville, Tenn. : Nelson Current, 2006.- p. 6: ill.
9. Ungerer F., Schmid H.J. An Introduction to Cognitive Linguistics. L. and N.Y.: Longman, 1997.
10. Карасик В. И. Культурные доминанты в языке // Языковая личность: культурные концепты. - Волгоград - Архангельск, 1996.
11. <http://dictionary.cambridge.org>
12. <http://www.oxfordlearnersdictionaries.com>
13. <http://www.politicalmetaphors.com>
14. <http://www.washingtontimes.co.uk>
15. <http://www.theatlantic.com>
16. <http://www.theguardian.com>

АНИ АРУТЮНЯН - КОНЦЕПТУАЛЬНАЯ И ОБРАЗНО-СХЕМАТИЧЕСКАЯ ИЗОБРАЖЕНИЯ КОНЦЕПТА 'СОБАКА' В АМЕРИКАНСКОМ И БРИТАНСКОМ ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ

Данная статья посвящена концептуальному и образно-схематическому исследованию понятия “собака” с позиции когнитивной и лингвокультурологической лингвистики в американском и британском политическом дискурсе.

В настоящее время радикальные изменения в общественной и политической жизни стимулировали лингвистов исследовать проблемы концептуализации политического дискурса, моделирования структур сознания, обусловленных лингвокультурной средой и конкретной ситуацией общения.

ANI HARUTYUNYAN - CONCEPTUAL AND IMAGE-SCHEMATIC MAPPING OF THE CONCEPT “DOG” IN AMERICAN AND BRITISH DISCOURSE

The given article is devoted to the conceptual and image-schematic study of the concept “dog” in American and British political discourse by implementing both cognitive and linguocultural approaches.

At present, the radical changes in social and political life have stimulated linguists to focus their attention on the study of problems of conceptualization of political discourse, modeling the structures of consciousness due to linguistic-cultural environment and the specific situation of communication.

**ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՈՒՄԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ՄԻՋՈՑ ԴԱՏԱԼՍՄԱՆ ԲԱՑՄԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՒՄ**

**ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՌԱՖԻԿ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

*Հիմնաբառեր՝ պատճառականություն, «Ժողովուրդն ընդդեմ Օ. Զ. Սիմփսոնի»,
անձնական դերանուններ, իմաստային շրջանակներ, խոսության
մարտավարություններ*

Նախադեպային դատական համակարգում գործի քննության ընթացքում պատումակառուցման և պատճառականության առկայացման միջոցների կարևորությունը վերհանելու նպատակով այս հոդվածում կքննարկվի ինստունականների ամենաաղմկահարույց քրեական գործերից մեկի՝ *Ժողովուրդն ընդդեմ Օրենթալ Ջեյմս Սիմփսոնի* քրեական գործի ընթացքում հնչեցված բացման ելույթները: Գործի քննությունը տևել է ընդհանուր առմամբ ինն ամիս, իսկ դատալսումներից ստացված պաշտոնական տեքստերը հասնում են <<6.2 միլիոն բառի, որոնք խոսվել են դատալսումների ընթացքում>> [Cotterill 2003:2]: Մեր քննության համար այս գործի ընտրությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով՝

- Լեզվաիմաստաբանական վերլուծության համար սույն քրեական գործը տվյալների հարուստ աղբյուր է քննության նյութերի՝ հանրությանը մինչ օրս հասանելի լինելու պատճառով:
- Չնայած այն հանգամանքին, որ գործը մինչ օրս ամենաքննարկված քրեական գործերից մեկն է՝ պատճառականության կարգի առկայացման բառաքերականական միջոցները բացման ելույթներում չեն ուսումնասիրվել:
- Գործի դատալսումները հեռարձակվել են ԱՄՆ CourtTV հեռուստաալիքով, որը պայմանավորել է ելույթներում իրադարձությունների պատումայնացման եղանակները: Հեռարձակված լինելու այս հանգամանքն իր արտարկումն է ստացել համապատասխան լեզվաքերականական ընտրանու վրա (պատճառական բայեր, անձնական դերանուններ, բայի ժամանակաձևերի հակադրում)՝ հաշվի առնելով լսարանի բազմասեռությունը:

Այսպես, Օ. Ջ. Սիմփսոնի դեմ հարուցված այս գործը քննարկվում է Բուլյոսիի [Bugliosi 1996], Քոթերիլի [Cotterill 2002], Գեյնսի [Gaines 1999], Ջիլլի [Gill 1999], Հեյստիի և Փենինգտոնի [Hastie & Pennington 1996], Լիլլիի [Lilley 1999], Րայսի [Rice 1997], Շմալեգերի [Schmallegger 1996], Թուրինի աշխատանքներում [Toobin 1996], որոնք բազմազան կարգաչափով մոտեցում են ցուցաբերում այսպես կոչված «<դարի գործ>>-ին: Այս աշխատություններում, այնուամենայնիվ, հեղինակներն ուշադրությունը սևեռում են հիմնականում գործի քրեաիրավական առանձնահատկությունների վրա՝ ետնաբեմում թողնելով գործի լեզվաքերականական հատկանիշները: Ուշագրավ է, սակայն, Քոթերիլի [Cotterill 2003] աշխատանքը, որը համակարգված ուսումնասիրում է հատկապես բացման ելույթներում Օ. Ջ. Սիմփսոնի անձնային հատկությունների վերականգնումը՝ կիրառելով կորպուսային լեզվաբանության առաջարկած տվյալները: Հետաքրքրականն այն է, որ Քոթերիլի ուշադրության կենտրոնում են հայտնվում պատճառական⁹¹ բայերը, կամ բայական կրկնություններն ընդհանուր առմամբ, որոնց իմաստաբանական առադրման վերլուծության միջոցով հեղինակը վերհանում է կողմերի պատումների տարբերությունները: Ինչևէ, մենք փորձենք անդրադառնալ բայերին դրանց իմաստաբանական առանձնահատկությունների տեսանկյունից:

[...] **I am** here in front of you this morning to answer that question. And **we will answer** that question from the witness stand, and from the exhibits **you'll see** in this case, and from the evidence. And when **you see** the evidence, and when **you hear** the witnesses, and when **you put** it all together and consider the totality of circumstances in this case, the answer will be clear to you as well.

The answer to the question is yes. The **evidence will show** that the answer to the question is yes. O.J. **Simpson murdered** Nicole Brown and Ronald Goldman. . . .

Why? Why would he do it? Why would he do it? Not O.J. Simpson. Not the O.J. Simpson **we think** we know, not the O.J. Simpson we think we've **seen** over the years. We've **seen** him play football for USC, **we watched** him play against UCLA, play in the Rose Bowl, we **watched**

⁹¹ Քոթերիլն իր աշխատանքում բացարձակապես չի օգտագործում պատճառականություն եզրը, բայց քննարկում է բայական ընտրանու առանձնահատկությունները՝ հավանաբար կանխազգալով դրանց պատճառական բնույթի կարևոր դերը պատումակառուցման ժամանակ:

him win the Heisman Trophy. He may be the best running back in the history of the NFL.

We **watched** him leap turnstiles and chairs and run to the airplane in Hertz commercials. . . . We **watched** him with a 50-inch Afro in "Naked Gun 33 1/3." We've **seen** him time and time again.

Ինչպես երևում է, դատախազի բացման ելույթը հստակ փորձ է կատարում վերակառուցել և ներկայացնել սպանության իրավիճակը, որը հետայսու իր կենսունակությունը կարող է պահպանել միայն այստեսակ տեքստային տիրույթում: Դատավարության բացման խոսքում է ներկայացվում այն հիմնական փաստարկը որին պետք է տվյալ կողմը հարի և զարգացնի ամբողջ դատաքնության ընթացքում: Բնականաբար, և՛ դատարանի, և՛ բազմահազար հանդիսատեսի համար փաստարկը հնարավորինս կուռ կառուցելու նպատակով հեղինակը նախևառաջ նպատակ է հետապնդում ապակառուցել Օ. Ջ. Սիմփսոնի համբավը և տարանջատել Օջեյի՝ հանրությանը հայտնի և անհայտ հատկությունները:

[...]We came to think that **we know** him.

What we've been **seeing**, ladies and gentlemen, is just a public face, a public persona, a **face** of the athlete, a **face** of the actor. It is not the actor who is on trial here today, ladies and gentlemen. It is not that public face. There is that other face. [...] **the other side** of O.J. Simpson⁹²⁹³.

Այդ տարանջատումը հաջող ստեղծելու համար հեղինակը ստեղծում է անձնական դերանունների շարժական համատեքստ, որտեղ **ես**-ը վերածվում է **մենք**-ի, իսկ **մենք**-ը **դուք**-ի՝ կախված նրանից, թե ինչ գործողություն է իրականացվում դերանվամբ արտահայտված ենթակայի կողմից:

Անձնական դերանունների և դրանց վերագրված գործողությունների շարժական համատեքստը փորձենք ստորև ներկայացնել համապատկերի տեսքով՝

⁹² Օ. Ջ. Սիմփսոնի գործի քննության ընթացքում դատախազի բացման ելույթը (Հունվար 24, 1995 թ.): http://articles.latimes.com/1995-01-25/news/mn-24229_1_opening-statement առ՝ 09.02.2015

⁹³ Որոշ բառերի թավեցումը մերն է:

I	→	we	→	you
↓		↓		↓
am here [...] to answer		will answer 've seen watched think we know will expose		see hear put

Ակներև է, որ ելույթի հեղինակը դերանվանական ճկունության միջոցով ակտիվացնում է հասցեատիրոջը և մասնակիցը դարձնում ամբողջ ընթացքի: Երբ խոսքը գնում է **ես**-ի մասին, ապա այն այստեղ կարծես դեսպանն է **մենք**-ի և գալիս է ներկայացնելու այն, ինչը **մենք**-ը կարող է անել՝ պատասխանել, բայց իրավասու չէ: Այստեղ հեղինակը փորձում է նույնականացնել իրեն հանդիսատեսի և դատարանի հետ ասույթի նկատմամբ պատասխանատվությունը կիսելու նպատակով: Չափազանց հետաքրքրական է այն, որ երբ **մենք**-ը վերածվում է **դուք**-ի, ապա այն գործողությունները, որոնք իրականացվում են **դուք**-ի կողմից, չեզոքացնում են **դուք**-ի՝ գործողության ընթացքը ղեկավարելու հնարավորությունները: Այլ կերպ ասած՝ հեղինակը ընտրություն է կատարում **see-watch** և **hear-listen** բայական զույգերի միջև և ընտրում այն տարբերակը, որի արտահայտած գործողության ենթական EXPERIENCER⁹⁴ է, այսինքն չի կարող որևէ ազդեցություն ունենալ իրավիճակի նկատմամբ՝ ի տարբերություն օրինակ **watch** և **listen** տարբերակների, որոնց արտահայտած գործողության ենթական AGENT է՝ այսինքն գործողությունը մեկնարկողը: Փաստորեն հեղինակը, երբ օտարում է հասցեատիրոջը մենք-ից կամ ես-ից, տեղադրում է դուք-ին այնպիսի միջավայրում, որտեղ ամեն ինչ այնքան ակնբախ է, որ իրավիճակի նկատման համար հատուկ ջանք գործադրել հարկավոր չէ: Միայն երրորդ դեպքում է, երբ դուք-ին հեղինակը իրավասություն է տրամադրում պատճառել, հանգամանքներ ի մի բերել և հասկանալ: Այդուհանդերձ, մենք-ի պարագայում գործողությունների ենթական հիմնականում զբաղեցնում է ագենտի դերը, և վերահսկում ընդհանուր իրավիճակը՝ ընդհուպ մինչև կարևորագույն գործողության իրականացումը՝ բացահայտումը:

⁹⁴ EXPERIENCER-ը իմաստաբանական դեր է, որը ենթարկվում է գործողությանը, ինչպես օրինակ see (տեսնել) բայի ենթական ենթարկվում է իր կողմից կատարված գործողությանը՝ տեսնում է:


Այսպիսով, հեղինակի կողմից մշակված դերանվանական փոխակերպումները և դրանց ընտրությամբ պայմանավորված բայերի մարտավարական կիրառությունը ցույց տվեցին, որ իր հաղորդակցական նպատակին հասնելու համար հեղինակը տեղաշարժում է միտման/դիտավորության, հետևաբար նաև պատճառի իմաստային տարրերը՝ հասցեատիրոջը գործի քննության մեջ անուղղակիորեն ներգրավելու համար:

Դիտարկենք պատճառականության ներկայացվածությունը ելույթի հաջորդ հատվածում:

The other face that Nicole Brown **encountered** almost every day of her adult life, the face she **encountered** at the last moment of her adult life, the face that **encountered** Ronald Goldman during the last moments of his life.

The evidence will show that the face **you see**, and the man **you will see**, is the face of a **batterer**, a **wife beater**, an **abuser**, a **controller**. You will **see** the face of Ron and Nicole's **murderer**. [...]He **killed** her out of jealousy. He **killed** her because he couldn't have her. And if he couldn't have her, he didn't want anybody else to have her. He **killed** her to **control** her.

Ակնհայտորեն գործող անձինք այս հատվածում կրկին պատկերվում են համաձայն որոշակի օրինաչափության: Նկատելի է, որ հեղինակը քարտեզում է երեք հիմնական գործչի՝ **Nicole Brown (NB) և Ronald Goldman (RG)**, 2. **you** և 3. **the face**⁹⁵, որը երկակի գործառույթ է հետապնդում այստեղ. մի կողմից հղում է կատարում <<մարդասպանի>> հանրայնությանը, քանի որ հասցեատերները՝ դուք-ը, հիմնականում տեսել է այն հեռուստատեսությամբ, իսկ մյուս կողմից միաձուլում զոհերի կյանքում Օ. Ջ.-ի ֆիզիկական ներկայության հետ:



⁹⁵ Մեր կարծիքով պատահական չէ նաև այն, որ մեղադրյալը ներկայացվում է իր ֆիզիկական <<դեմք>>-ով: Սա անձնագերծման միջոց է, որը նպաստում է մեղադրյալի բացասական կերպարի կերտմանը, քանի որ մեղադրյալի անձնային հատկությունները մերժվում են և օբյեկտացվում ֆիզիկական դեմքի տեսքով:

encounter last minute
encounter [...]

beat

abuse
control
murder
kill

Դատախազն իր ելույթի կենտրոնում է դնում երեք հիմնական գործող անձանց, որոնցից յուրաքանչյուրին վերագրում է գործողության որոշակի տեսակ: Ձոհերի և կասկածյալ մարդասպանի հանդիպումների մասին խոսելիս դատախազը քանիցս կրկնում է *encounter* բառը, և կրկնությունն այստեղ պատահական չէ: Ըստ Քոթրիլի՝ հեղինակն իր համար որպես հիմնաբառ է վերցնում հենց այս բայը, որովհետև դրանով փորձում է ապակառուցել Օ. Ջ.-ի հանրային կերպարը և կերտել նոր՝ բացասական կերպար: Քոթրիլն իր փաստարկը հիմնում է կորպուսային տվյալների վրա, որի արդյունքում երևում է, որ *encounter* բայի առադրելի խնդիրը հիմնականում բացասական երևույթներ են և հազվադեպ՝ անհատ [Cotterill J. 2003: 69]: Բնականաբար կորպուսային տվյալները բավականին մեծ օգնություն են տրամադրում հասկանալու բառային միավորների գործաբանական ներուժը, սակայն ըստ մեզ, *encounter* բայի շեշտադրումն այստեղ նախևառաջ պայմանավորված է բայիս իմաստաբանական առանձնահատկություններով: Ինչդիրն այն է, որ հայտնի ամերիկյան ֆուտբոլիստի համբավը կոտրելու համար անհրաժեշտություն է առաջանում, ըստ հեղինակի, զոհի և անօգնականի կարգավիճակում տեղադրել ֆուտբոլային աստղի դեռ կենդանի կնոջը: Նիքոլին անօգնական պատկերելու լավագույն միջոցն այստեղ *encounter* բայի կրկնությունն է, քանի որ այն պատկանում իմաստաբանական պատճառականություն արտահայտող այն բայերի կարգին, որոնց իմաստաբանական ենթական հենց ազդյալ դերում է: Բացի նրանից, որ *encounter* բայը օգտագործվում է Նիքոլի նկատմամբ, այն նաև վերագրվում է *the face*-ին՝

[...] **the face** that encountered Ronald Goldman during the last moments of his life.

Առաջին հայացքից թվում է, թե հեղինակը շփոթմամբ է տեղադրում *the face*-ին ենթակայի դերում՝ նկատի ունենալով նախորդ նախադասություններում դրա ներկայացվածությունը: Թվում է նաև, թե սա դատախազի ելույթի թերություններից է և բխում է ուղղակի *encounter* բային հատուկ ուշադրություն դարձնելուց և այն որպես նախադասության հիմք ընտրելուց: Սակայն, ըստ մեզ,

սա հեղինակի ձեռնավարական խոսույթի կարևորագույն քայլերից է. այն հղում է կատարում գործողության պատահականությանը և ցույց է տալիս այն, որ որքան բացասական կերպար է հենց ինքը՝ Օջեյը Նիքոլի համար, այնքան բացասական կերպար է Օջեյի համար իր նախկին կնոջ սիրեկանը՝ Րոնալդ Գոլդմանը: Այս խաղն այստեղ անհրաժեշտ է, որովհետև, ինչպես արդեն քանիցս նշել ենք, Օջեյի հանրային կերպարի կոտրելու և հանրության աչքում նրան չարաքործ դարձնելու կարիք է առաջանում: Հանցագործի պատկերման համար մյուս կողմից հեղինակը բացատրական դաշտ է ստեղծում, որտեղ սպանյալ Րոնալդ Գոլդմանին ներկայացնում է որպես անցանկալի բացասական կերպար հայտնի և անհայտ **the face**-ի համար: Սա հիմք է դառնում դատախազի համար ասելու այն փաստարկը, որը զարգացվելու է ամբողջ դատավարության ընթացքում՝ Օջեյն է մարդասպանը և սպանել է խանդից՝

[...]He [O.J. Simpson] killed her out of jealousy. [...]

Բացման ելույթում ուսումնասիրվող այլ բայերի իմաստային կառույցները վերլուծելու համար կօգտագործենք ֆրեյմերի՝ իմաստաբանական շրջանակների էլեկտրոնային բազայի առաջարկած տվյալները: Ուրեմն, **encounter** բայի կորիզում անհատները ինքնաշարժ արգումենտներ են, որոնք հանդիպում են առանց ցանկության (FrameNet), ընդ որում քերականորեն ավելի ընդգծված դերով է հանդես գալիս Party 1-ը՝ այսինքն գործողության ենթական, որը հայտնվում է EXPERIENCER-ի դերում, չի ղեկավարում իրադարձությունը և տեսանելիորեն չի ազդվում գործողության կողմից: EXPERIENCER-ի դերում է նաև հայտնվում դուք-ը իրեն վերագրված *see* գործողությամբ: Փաստորեն, հեղինակի խոսույթում, հասցեատերը (հանդիսատես, դատարան) հայտնվում է նույն իմաստաբանական դերում, ինչ զոհը, այնինչ Օ. Ջ. Սիմփսոնին, որը ներկայացվում է երկիմաստ the face-ով, վերագրվում են այնպիսի արտակայորեն պատճառական իրադարձություններ, ինչպիսիք են *batter, beat, abuse, control, murder*: Դիտարկենք այս բայերի իմաստային շրջանակները:

Abuse բայի շրջանակում գործողություն կատարողը շարունակ վերաբերվում է գործողությանը ենթարկվողին դաժան և բռնի կերպով՝ ներառյալ ֆիզիկական վնաս կամ զոհին բռնի ուժով իր կամքին հակառակ սեռական գործողության մեջ ներքաշելը: Զոհն այս դեպքում սովորաբար չի տիրապետում

դիմադրելու կամ հակադարձելու ուժի⁹⁶: Abusing-ի շրջանակի բառային միավոր է նաև *batter-ը*:

Killing-ի իմաստաբանական շրջանակից *murder* իրադարձության համար հիմնական են շրջանակային այնպիսի տարրեր, ինչպիսիք են **պատճառը, գործիքը, մարդասպանը, միջոցը և զոհը**:

Իմաստաբանական շրջանակում բավականին շեշտակի պատճառականությամբ է հանդես գալիս նաև *control* իրադարձությունը, որը ենթադրում է ղեկավարող անձ, իրավիճակ կամ փոփոխակ, որը գործողությունն իրականացնում է առկա անձի, իրավիճակի կամ փոփոխակի նկատմամբ, ընդ որում առկա միավորը կամ դրա տարրերից մեկը ոչ թե ուղղակի ազդվում է, այլ ամբողջությամբ պայմանավորված է ղեկավարող տարրով:

Այսպիսով, այս հատվածում քննարկվեց նախադեպային դատական համակարգում քրեական գործի քննության կարևորագույն տեքստը՝ մեղադրող կողմի բացման ելույթը, որը գործնականում վերա/ապա/կառուցում է հանցանքի իրադրայնությունը և առաջադրում ամբողջ դատաքննության ընթացքում զարգացվելիք փաստարկը: Վերոնշյալ բացման ելույթում դերանունների և դրանց վերագրված գործողությունների իմաստաբանական շրջանակների վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ պատճառականության կարգը ընկած է հեղինակի խոսույթային մեխանիզմների հիմքում և ձեռնավարվում է հեղինակի կողմից որպես իրադրայնության մասնակիցների պատումայնացման միջոց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. (б.д.). Получено 09 фետրվար 2015 г., из FrameNet: <https://framenet.icsi.berkeley.edu>
2. (25 Հունվար 1995 г.). Получено 09 Фետրվար 2015 г., из http://articles.latimes.com/1995-01-25/news/mn-24229_1_opening-statement
3. Abraham, H. J. (1998). *The Judicial Process*. New York: Oxford University Press.
4. Bugliosi, V. (1996). *Outrage: The Five Reasons Why O. J. Simpson Got away with Murder*. New York: Island Books.

⁹⁶<https://framenet2.icsi.berkeley.edu/fnReports/data/frameIndex.xml?frame=Encounter>, առ՝ 09.02.2015

5. Cotterill, J. (2002). "Just one more time": aspects of intertextuality in the trials of O. J. Simpson. B J. Cotterill, *Language in the Legal Process* (стр. 147-161). Basingstoke: Palgrave.
6. Cotterill, J. (2003). *Language and Power in Court: A Linguistic Analysis of the O. J. Simpson Trial*. New York: Palgrave Macmillan .
7. Danet, B. (1980). "Baby" or "fetus"? Language and construction of reality in a manslaughter trial. *Semiotica* 32 , 187-219.
8. Duhaime, L. (б.д.). Legal Dictionary.
9. Gaines, P. (1999). *"Miss Nicole Brown Simpson": The Remaking of a Domestic Violence Victim*.
10. Gill, A. M. (1999). Race and money matter: justice on trial. B J. Schuetz, & L. S. Lilley (Ред.), *The O. J. Simpson Trials: Rhetoric, Media and the Law* (стр. 139-160). Carbondale, IL: Southern Illinois University Press .
11. Hastie, R., & Pennington, N. (1996). *Perceptions and decision making: the jury's view*. Colorado University Press.
12. Lilley, L. S. (1999). Opening arguments: lasting impressions. B J. Schuetz, & L. S. Lilley (Ред.), *The O. J. Simpson Trials: Rhetoric, Media and the Law* (стр. 36-57). Carbondale IL: Southern Illinois University Press.
13. Rice, E. J. (1997). *The O. J. Simpson Trial*. San Diego, CA: Lucent Books.
14. Schmallegger, F. (1996). *Trial of the Century: People of the State of California vs O. J. Simpson*. London: Prentice-Hall.
15. Toobin, J. (1996). *The Run of His Life: The People vs O. J. Simpson*. New York: Touchstone.

НАРИНЕ ОГАННЕСЯН, РАФИК САНТРОСЯН - КАУЗАТИВНОСТЬ КАК СРЕДСТВО НАРРАТИВИЗАЦИИ ТОПОСА ПОДСУДИМОГО

В данной статье анализируется вступительная речь прокурора уголовного дела "Народ против Симпсона" для выявления значимости средств выражения каузативности в ходе нарративизации топоса подсудимого. В частности, рассматриваются личные местоимения

и семантические фреймы глаголов, приписываемых этим местоимениям. Раскрывается функциональность каузативности, лежащей в основе дискурсивных механизмов, которыми автор манипулирует в качестве средств нарративизации убийцы.

NARINE HOVHANNISYAN, RAFIK SANTROSYAN - CAUSATIVITY AS A NARRATIVIZATION MECHANISM IN TRIALS

The paper analyses the prosecutor's opening statement in the *O. J. Simpson* murder trial to explore the role causativity performs as a narrativization mechanism in trials. The functionality of causative verbs is discussed through the semantic frame analysis of verbs attributed to varying personal pronouns. Pronominal variation is thus viewed as a discursive device maneuvered by the prosecutor.

**ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՑՎԱԾՔԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ԻՏԱԼԵՐԵՆՈՄ, ՀԱՅԵՐԵՆՈՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՄ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ**

**ՖՐՈՆՉԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԲԵԼԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Հիմնաբառեր՝ թվային ենթակարգ, եզականաձև, հոգնականաձև, կիրառական բազմաթիվություն, կառուցաձև, հոգնակիականություն, երկակի, թվակարգային արտահայտամիջոց

Գոյականի թվի կարգը, լինելով մարդկային մտածողության ամենավերացական հայեցակետերից մեկը, ծառայում է կեցության քանակական որոշակիության արտահայտմանը և ամեն մի փորձ ներկայացնելով այն որպես քանակականության մաքուր, իրականությունից կտրված կարգ՝ հանգեցնում է սխալի: Թվի կարգի տրամաբանական ձևավորման ընթացքում առանձնանում է փուլերի մի ամբողջ շարք, որն անմիջականորեն կապված է մարդկային մտածողության զարգացման հետ՝ սկսած առարկաների կոնկրետ բազմության քանակական բնութագրերի արտացոլման զգայական - դիտողական եղանակից, որն ընդհանուր է մարդու և կենդանու համար, մինչև հաշվելի առարկաներից քանակական առանձնահատկություններից լրիվ վերացարկում: Այդ ընթացքում թվի քերականական կարգը՝ որպես կեցության քանակական որոշակիության արտացոլման արդյունք, իր արտահայտությունն է գտնում լեզվում և առաջին հերթին՝ թվի քերականական կարգի ծագման ու զարգացման մեջ:

«Թվի կարգը, լինելով փիլիսոփայության կարևոր հայեցակետերից մեկը, իր արտահայտությունն է գտնում ժամանակակից բոլոր լեզուներում՝ լեզվական բացարձակություն»: [Beccaria 1996 : 357]

Քերականական թվի ծագումը կապված է հաշվելու կարողության զարգացման հետ, որը ենթադրում է միատեսակ առարկաների տարբերակում՝ ըստ քանակական հատկանիշի: «Հաշվելու համար ոչ միայն թվարկման ենթակա առարկաներ են հարկավոր, այլև հարկավոր է ունենալ ընդունակություն, որպեսզի այդ առարկաները դիտելու ժամանակ ուշադրությունը բևեռվի դրանց թվի վրա՝ անուշադրության մատնելով դրանց մնացած մյուս հատկությունները, - իսկ այս

ընդունակությունը պատմական մի երկարատև, փորձառական զարգացման արդյունք է»։ [Էնգելս1936:53]:

Որոշ լեզուներում, որոնք ունեն եզակի, երկակի, եռակի, քառակի և հոգնակի թիվ: Այդպես է, օրինակ, ավստրոնեզիական ընտանիքի մեջ մտնող լեզուներում:

Թվի քերականական կարգը հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզուների զարգացման վաղնջական ժամանակներում ունեցել է եզակի-երկակի-հոգնակի քերականական արտահայտությունը: Սակայն այսօր երկակի (dual) քերականական թիվը հնդեվրոպական լեզուներում չի պահպանվել և գործում է եզակի-հոգնակի հակադրությունը: Դեռևս կան փոքրաթիվ լեզուներ, որոնք ունեն երկակի թվի կարգ: Դրանք պապուասական և մալագիական մի քանի լեզուներ են: Կան լեզուներ էլ, որոնք ընդհանրապես թվի քերականական կարգն իր սովորական իմաստով չունեն, այսինքն՝ չունեն ենթադրվող եզակի-հոգնակի հակադրությունը, ինչպես, օրինակ, ճապոներենը և չինարենը, ինդոնեզիական լեզուն, մի քանի ավստրալիական և բրազիլական ցեղերի լեզուներ և այլն, սակայն դա չի նշանակում, թե այդ լեզուներում ընդհանրապես բացակայում է մեզ շրջապատող աշխարհի իրերի և երևույթների բազմակիության արտահայտման միջոցների համակարգը: Իսկ այդ համակարգն իր մեջ միայն եզակի-հոգնակի հակադրությունը չի ներառում: Թվի քերականական կարգը ձևավորվում է տարբեր մակարդակների լեզվական միջոցների ամբողջացման հիման վրա՝ բառային, քերականական, բառակազմական, ոճական և այլն:

Թվի քերականական կարգը ժամանակակից իտալերենում, հայերենում և անգլերենում միայն գոյականներին չի բնութագրում, այլ նաև դերանուններին, հոդին, բային, իտալերենում՝ նաև ածականներին: Ինչ վերաբերում է մնացած խոսքի մասերին, ապա, նրանց հետ հարաբերվելով, թվի քերականական կարգը ենթարկվում է համաձայնեցման սկզբունքին, խոսքի ձևավորման կառուցվածքային սկզբունքին: Միայն գոյական անունն է, որի համար թվի քերականական կարգը հանդիսանում է հիմնական և անհրաժեշտ բնութագիր. դա գոյականին ներհատուկ քերականական կարգ է:

Թվի կարգը այնքան բնորոշ է գոյականին և այնքան է համապատասխանում այս խոսքի մասի իմաստային էությանը, որ Հ.Գլինցը այն դիտում է որպես գոյականի գլխավոր հատկանիշ, որը հանդիսանում է գոյականի «ուղղակի կորիզը», և դրանով իսկ տալիս է գոյականի՝ որպես խոսքի մասի բնութագրությունը:

Ձևաբանական կարգերը հենվում են իրականության ընկալման տրամաբանական- իմացական որևէ հայեցակետի վրա: Այսպես են կազմավորվել հոլովի, դասի, շնչավորի և անշունչի, սեռի և այլ կարգեր: Թվի քերականական

կարգի հիմքում ընկած է առարկաների քանակային հարաբերության հատկանիշը՝ իբրև մեկի և մեկից ավելի գոյականի քանակային հարաբերության հայեցակետ: Այս ընդհանրական հայեցակետը, սակայն, լեզուներում ունի իր մասնավոր, կոնկրետ դրսևորումները, իր առանձին օղակները: Նշված հարաբերակցության առաջին եզրը ներկայանում է իբրև եզակի թիվ (ենթակարգ), իսկ երկրորդ եզրը՝ իբրև հոգնակի թիվ (ենթակարգ): Կարող է առաջին եզրում լինել մեկուսացում, առանձնացում նշված հարաբերակցությունից, ընդ որում մեկուսացած միավորը դրանով իսկ թվային հայեցակետի նկատմամբ դառնում է չեզոք (անհոգնականներ). կարող է իր հերթին երկրորդ եզրը մեկուսանալ (հաճախ նաև կառուցվածքայնորեն, արտահայտության պլանում), կազմել բառաքերականական առանձին եզր՝ բառաիմաստային ուրույն երանգավորումներով (անեզականներ): [Պետրոսյան 1972 : 86]

Մեկից ավելիի եզրը կարող է ընկալվել կապված զուգյնության գաղափարի հետ՝ կառուցվածքային կամ արտակառուցվածքային հանգամանքներով պայմանավորված, բնորոշ է հին լեզուներին, լեզվական վիճակներին, և նույն գործոնների շնորհիվ աստիճանաբար (որոշ լեզուներում ավելի վաղ, այլ լեզուներում համեմատաբար ուշ) վերանում է: Այս ենթակարգը չի պահպանվել նաև իտալերենում, հայերենում և անգլերենում:

Ամեն մի բառ իմաստային որոշակի ծանրաբեռնվածություն ունի: Եվ իբրև այդպիսին՝ նա ծառայում է մարդու իմացական (հոգեմտածողական, դատողական) պահանջներին: Բառը իր այդ դերը իրականացնում է այն հատկության շնորհիվ, որ նա ամենից առաջ հասկացության անվանում է: Սակայն մարդու և իրականության փոխհարաբերության բարդ գործընթացի հետ կապված շատ գործոններ, հոգեբանական զանազան ընկալումներ ինչ-որ չափով իմաստային այլևայլ երանգներ, նրբերանգներ ևս մտցնում են բառի (բառաձևի) բովանդակության մեջ: Եվ, այսպիսով, բառային այդ միավորը որոշ չափով կախման վիճակում է հայտնվում համատեքստային միջավայրից, խոսողական շրջապատից: Այս ամենը բառի իմաստային դաշտը դարձնում է բազմազան: Ավելին, կան բառաքերականական խմբավորումներ, որոնք հենց միայն թվային (քանակային) հատկանիշ են արտահայտում, ինչպես որ թվականներն են: Սակայն թվականները, ի տարբերություն թվի քերականական կարգի, նշում են որոշակի սահմանային հասկացություն թվարկվող առարկաների շարքում: Օրինակ հազար թվականը արտահայտում է ստույգ թվային գաղափար, որ կարող է վերցվել գրոյի, մեկի և այլ թվերի (ինչպես հազարից ավելիի այնպես էլ հազարից պակասի) հարաբերակցությամբ:

Մինչդեռ գոյականի թիվը ունի մեկ և մեկից ավելի առարկաների քանակային հարաբերության հայեցակետ, որը և նրա քերականական իմաստն է:

Մեկից ավելին, որ հոգնակին է, ոչ մի եզր չունի. նա ըստ էության կարող է ձգտել անսահմանության: Սեղան և սեղաններ / una tavola – tavole / a table – tables / стол-столы հարաբերակցությունը մեկի և մեկից ավելիի քանակային հարաբերություն է. այսպիսով՝ արդեն կարևոր չէ, թե այդ մեկից ավելին երկու՞ սեղան է, երեքն է, թե՞ հարյուրը: Թվական անունները վերացարկված ձևով (քանակային հատկանիշ՝ առարկայից կամ առարկաներից անկախ) որոշակի, ստույգ քանակային եզր են նշում:

Այստեղ գործ ունենք առարկաների քանակային կողմի ընկալման իմացական երկու եղանակի հետ՝ քերականական և բառային: Ընդ որում քերականական ընկալումը չի խանգարում բառայինին:

“Ho comprato due libri” /<< Գնեցի երկու գիրք>>/ “I’ve bought two books”/Я купил две книги

և “Ho comprato dei libri” / <<Գրքեր գնեցի>>/ “I’ve bought some books” / Я купил книги

Խոսքային որոշակի իրավիճակում իրար փոխարինում են: Բայց վերջավոր, սահմանային քանակության բառային ընկալումը (թվականներ) կարծես թե ավելորդ է դարձնում քերականական հայեցակետը, ինչպես նկատելի է հատկապես կցական տիպի լեզուներում. թվական լրացում ունեցող գոյականը սովորաբար եզակի թվով է. հինգ մարդ և ոչ թե հինգ մարդիկ: Պետք է նշել, որ, ի տարբերություն հայերենի, իտալերենում, անգլերենում և ռուսերենում թվական լրացում ունեցող գոյականը չի կարող դրվել եզակի թվով, այն միշտ դրվում է հոգնակի թվով: Օրինակ՝

She remained in the coma for almost two weeks and three days ago, she died without regaining consciousness and without pain they say, and whatever they mean... [Faulkner1936:174].

Due ragioni affrettarono principalmente quelle nozze memorabili: la prima, che Giannantonio Cocco Bertolli uscisse, guarito, dall’ ospedale; la seconda, che Biagio Speranza s’innamorasse nel frattempo, secondo il solito suo... [Pirandello 1990 : 1070].

Жили да были два генерала, и так как оба были легкомысленны, то в скором времени, по щучьему велению, по моему хотению, очутились на необитаемом острове [Салтыков-Щедрин 1979: 1].

Երեք տարի է ամուսնացած եմ, զավակ, սակայն, չունեմ: [Խանզադյան1993 :207]

Առաջինը վագոնից ցած թռավ Վանո Խանզադյանը, կոռնետ, այսինքն հեծելազորի սպա: - Արկղերը ցած տվեք: - Վագոնի բաց դռան միջով նրա ընկերները, որ տասներկու հոգի էին, մեկը իր հորեղբայր Արտեմ Խանզադյանը,

մյուսներն էլի իրենց Գորիս գաթալի չափ փոքրիկ քաղաքի տղաներ, սկսեցին երկարուկ, դագաղ- դագաղ արկղերն իջեցնել գետնին: [Խանգաղյան1993 : 67]
Այսպիսի լեզուներում բառաձևի քերականական ծանրաբեռնվածության «խտացված» է. բառաձևը հաճախ կաշկանդված է նաև համաձայնությամբ: Այս և նման հանգամանքները նպաստում են քերականական հայեցակետի պահպանմանը նաև թվական լրացման դեպքում, ինչպես իտալերենում և անգլերենում: Օրինակ՝

-Ah, padre mio! Jo parlo per suo bene... S'immagini che onore per me, che piacere averla a tavola, oggi... Guardi: prenda i due galletti, uno almeno, non me lo rifiutil. Glieli avvolgo in un giornale, va bene? E se li porterà con sn. Ma non rimanga per carità, se ha cara la vista, a desinar con noi! [Pirandello1990 : 911].

One man made three gestures at the barkeeper, and the latter, moving like a ghost, handed him a glass and a bottle. [Crane1898:6].

"Вчера, - читал взволнованным голосом один генерал, - у почтенного начальника нашей древней столицы был парадный обед. Стол сервирован был на сто персон с роскошью изумительною. Дары всех стран назначили себе как бы randevu на этом волшебном празднике. Тут была и "шекснинска стерлядь золотая", и питомец лесов кавказских, - фазан, и, столь редкая в нашем севере в феврале месяце, земляника..." [Салтыков-Щедрин 1979 : 1]

Ընդհանուր առմամբ թվակարգի մեջ եղած բոլոր հակադրությունները, չհաշված եռակի, քառակի և այլ ենթակարգեր, որոնք հազվադեպ են պատահում լեզուներում, կառուցվածքայնորեն ներկայանում են իբրև եզականաձև [կամ նաև երկակիաձև] և հոգնականաձև միավորների հարաբերակցություն: Յուրաքանչյուր միավոր ունի կազմավորման ինքնատիպություն և իմաստային արժեքներ: Դիտարկումները ցույց են տալիս, որ իտալերենում, հայերենում և անգլերենում եզականաձև և հոգնականաձև միավորները դրսևորում են կիրառական բազմարժեքություն:

Արտահայտության պլանում կարելի է ասել, որ թվակարգը իտալերենում, հայերենում և անգլերենում հանդես է գալիս եզականաձև և հոգնականաձև միավորների հակադրության տեսքով [չնչին բացառություններով, հնդեվրոպական երկակիի վերապրուկային տարրերով պայմանավորված]:

Այսպիսով՝ իտալերենում, հայերենում և անգլերենում զուտ թվակարգային [մեկ և մեկից ավելի գոյականների քանակային հարաբերակցություն արտահայտող] և բառաքերականական [հավաքականություն, վերացականություն, նյութայնություն, զանգվածայնություն, անհատականություն իմաստավորումներով պայմանավորված] կառույցները ամփոփվում են հիմնականում երկուսի՝ կա՞մ եզականաձև, կա՞մ հոգնականաձև

կազմավորումների մեջ, ընդ որում այս երկու եզրերը յուրովի բազմարժեքություն ունեն:

Վերը առանձնացրեցինք հակադրվող երկու հիմնական կառուցածներ: Հարց է առաջանում, իսկ դրանք ինչպիսի՞ կաղապարներով են կազմավորվում:

Ինչպես աշխարհի շատ լեզուներում, այնպես էլ իտալերենում, հայերենում և անգլերենում եզականաձև եզրը բնութագրվում է հակառակ եզրում [կամ եզրերում] հանդիպող թվակարգային արտահայտամիջոցի բացակայությամբ, այսինքն՝ զրո վերջավորությամբ: Սա այսպես է ոչ միայն զուտ թվակարգային հակադրություններում, այլև այն դեպքերում, երբ հոգնականի եզրը բառաքերականական միավորի արժեք ունի: Եթե նույնիսկ եզակին քանակ, շատություն, բազմություն նշող ածանց է ստանում, միևնույնն է, այն քերականորեն, արտահայտության պլանում մնում է եզականաձև.

Օրինակ՝

իտալերեն

la foglia -il fogliame

l' ossa – l' ossame

la bestia - il bestiame

la scuola – la scolaresca

lo studente – la studentesca

il giovane – la gioventù

հայերեն

ուսանող – ուսանողություն

երիտասարդ - երիտասարդություն

բանվոր – բանվորություն

աշակերտ-աշակերտություն

անգլերեն

star-stardom

fan-fandom

king - kingdom

brother - brotherhood

neighbour - neighbourhood

workman - workmanship

partner - partnership

peasant – peasantry

companion – companionship

fellow – fellowship

ռուսերեն

лист-листва

человек-человечество

студент-студенчество

король-королевство

брат-братство

сосед-соседство

Այստեղ նշանակություն չունի նաև այն հանգամանքը, որ տվյալ միավորը անհոգնակա՞ն է, թե՞ նրանից հոգնակի է կազմվում. միևնույնն է, այն գնահատվում է իբրև եզականաձև:

Ուրեմն եզականաձև խմբավորման մեջ մտնում են առհասարակ այն բոլորը գոյականները, որոնք հոգնակի նշող հատուկ մասնիկներ չունեն, անկախ նրանից դրանք մտնում են եզակի-հոգնակի թվային հարաբերակցության մեջ, թե չեզոք են այդ հակադրության նկատմամբ (ինչպես բուն անհոգնականները): Սա միաժամանակ նշանակում է, թե եզականաձև ասելով չպետք է հասկանալ միայն եզակի ենթակարգը, արտահայտության պլանում այն ավելի լայն հասկացություն է:

Եզակին թվակազմության առումով միշտ անվերջավոր է: Սակայն հոլով և հոլովումներ ունեցող լեզուներում, ինչպես հայերենն է, եզակի բառաձևերը ներկայանում են որոշակի հարացույցով, որի անդամների քանակը կախված է հոլովների թվից: Այս դեպքում եզակի բառաձևը կներկայանա որևէ հոլովաձևի տեսքով: Ուստի եզականաձև ասելով հասկանում ենք որոշակի կաղապարավորում ունեցող հոլովաձև: Եզակի հոլովական հարացույցի անդամների հիմքը կամ առանձին հոլովաձևը կարող է դառնալ կառուցվածքային ելահիմք հոգնականաձև միավորների կազմավորման համար:

Իսկ եզակի բառաձևը հակադիր՝ հոգնականաձև եզրում ինչպիսի՞ կաղապարներով կարող է հակադրվել: Յուրաքանչյուր լեզու զարգանում, փոփոխվում է և զարգացման ամեն մի փուլում այն ներկայանում է իբրև որոշակիորեն համակարգված վիճակ: Սա վերաբերում է նաև լեզվի կազմի առանձին համակարգերին, ընդ որում և թվակազմությանը: Նշանակում է՝ հոգնակիակազմությունն էլ լեզվական ամեն վիճակում յուրովի համակարգված է: Այսպիսի դեպքում գործ ունենք համակարգային հոգնակիակազմության հետ: Հոգնակին իր կառուցաձևերում հետևում է որևէ ընդհանրացված, տիրապետող

կաղապարի: Այսպիսիք են իտալերենում -i, -e, -ով զուգորդումները, -եր-ով և -ներ-ով զուգորդումները ժամանակակից հայերենում, համապատասխան հոլովականվերջավորություններով ռուսերենում , և s/es-ով regularitie զուգորդումները անգլերենում:

Դրոն ու Նժդեհը հանրապետական բանակի տեղական զորամասերին միացրին նաև Մեղրի- Արևիքի ուժերը, դա ևս դնելով Գարեգին Նժդեհի հրամանի տակ: [Խանզադյան1993: 91]

Նժդեհի տված նժույզը հոգատար մեղմությամբ նրան տանում էին լեռների դժվարին արահետներով:

Լեռներում նորից տազնապ է: [Խանզադյան1993: 216]

Tuttavia quella anche aveva avuto lo stordimento notturno nella capanna, era diventata la più scettica. Diceva che avevano girato per quelle montagne come in fondo a un sacco, senza vedere niente; e che non si ricordava di niente all'infuori della fame sofferta e della mortale stanchezza. [Romano 1975: 22]

Because now people – fathers and mothers and sisters and kin and sweethearts of those young men were coming to Oxford from further away that Jefferson – families with food and bedding and servants, the houses of Oxford itself, to watch the gallant mimic marching of the sons and the brothers... [Faulkne1936 : 128].

Полез сперва-наперво на дерево и нарвал генералам по десятку самых спелых яблоков, а себе взял одно, кислое. Потом покопался в земле - и добыл оттуда картофелю; потом взял два куска дерева, потер их друг об дружку - и извлек огонь. Потом из собственных волос сделал силок и поймал рябчика. Наконец, развел огонь и напек столько разной провизии, что генералам пришло даже на мысль: "Не дать ли и тунеядцу частичку?" [Салтыков-Щедрин 1979 : 1]

Բայց և այնպես լեզվի տվյալ վիճակին հատուկ են ոչ միայն համակարգային ձևեր, այլև այնպիսի ձևեր, որոնք այդ համակարգից չեն բխում, նրանով չեն պայմանավորված, բայց կիրառության որոշ ոլորտ ունեն, գործածական են: Սրանք ոչ համակարգային կազմավորումներ են, որ հատուկ են նաև թվակազմությանը: Հոգնակիակազմության մեջ ևս ոչ համակարգային ձևերը կա՞մ հին վիճակների մնացորդներ են, հնատիպ ձևեր կամ նորակազմություններ, կա՞մ տարբեր հանգամանքներով պայմանավորված շեղումներ և՛ իտալերենում, և՛ հայերենում, և՛ ռուսերենում և թե անգլերենում:

Այստեղից կարելի է հանգել այն եզրակացության, որ եզակի բառաձևը հոգնականաձև եզրում կարող է ունենալ համակարգային կամ ոչ համակարգային կառուցած, այսպես, իտալերենում – օ վերջավորությամբ արական եզակիները և

- a վերջավորությամբ իգական եզակիները կազմվում են հիմք +i և հիմք +e կաղապարով:

Օրինակ՝

il ragazzo – i ragazzi

il fuoco – i fuochi

il buco – i buchi

il parco – i parchi

il bambino – i bambini

la ragazza – le ragazze

la bambina –le bambine

հայերենում՝ քար, գիրք, փայտ միավանկ եզակիները հետևում են, ինչպես հայտնի է, միավանկ հիմք +-եր կաղապարին, ինչպես՝

հրեշտակ – հրեշտակներ

քար – քարեր

գիրք - գրքեր

սեղան – սեղաններ

փայտ – փայտեր

ուսանող - ուսանողներ

Իսկ անզլերենում գոյականների գերակշիռ մասը հետևում է հիմք + s/es կաղապարին, ինչպես՝

car – cars

park - parks

boy – boys

Greek - Greeks

dress – dresses

hotel - hotels

bush – bushes

pharmacy - pharmacies

tomato – tomatoes

uncle – uncles

Սա եզակի ձև - համակարգային հոգնակիակազմություն հարաբերակցության դրսևորում է, սակայն

Իգայերենում հայերենում

il muro – i muri - le mura

il ciglio – i cigli – le ciglia

il labbro – i labbri – le labbra

il dio – gli dei

անզլերենում

foot – feet

louse – lice

mouse – mice

ox – oxen

Ինչպես տեսնում ենք, վերջին դեպքում ունենք մասնակի կիրառությամբ կաղապարներ, որոնք իբրև այդպիսին՝ ոչ համակարգային են: Այստեղ թե՛ իտալերենում, թե՛ հայերենում և թե՛ անգլերենում առկա է եզակի ձև - ոչ համակարգային հոգնակիակազմության հարաբերակցություն:

Այսպիսով՝ բառային և բառաքերականական միավորները մի կողմ դնելով՝ մենք կունենանք բուն թվակարգը, որն ունի մեկ և մեկից ավելի գոյականների քերականական հայեցակետ, և այդ հայեցակետին համապատասխան արտահայտության պլանում առկա է երկանդամ հակադրություն եզակի-հոգնակի և իտալերենում, և թե՛ հայերենում և թե՛ անգլերենում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Պետրոսյան Հ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972.
2. Սերո Խանգադյան, Գարեգին Նժդեհ, Երևան, 1993.
3. Barron's Mastering Grammar Series, Barron's Educational Series, 2007
4. Beccaria Gian Luigi, Dizionario Di Linguistica e di Filologia, Metrica, Retorica, Torino, 1996.
5. Hans Glinz, Grammatiken im Vergleich, Tübingen : Niemeyer, 1994.
6. Lalla Romano, La Villeggiante, Torino, 1975.
7. Luigi Pirandello, La Signora Speranza, Milano, 1990
8. Luigi Pirandello, Novelle per un Anno, Corriere Della Sera, 1936.
9. Silvia Fogliato, Italiano: l'uso e la grammatica, Loescher, 1996.
10. Stephen Crane, The bride comes to yellow sky, England, 1898.
11. Williap Faulkner, Absalom, Absalom, 1936.
12. Михаил Евграфович Салтыков-Щедрин Повесть о том, как один мужик двух генералов прокормил, 1979

**ФРУНЗЕ ОГАННЕСЯН, БЕЛА МАРГАРЯН – СТРУКТУРНО -
СЕМАНТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ КАТЕГОРИИ ЧИСЛА ИМЕНИ
СУЩЕСТВИТЕЛЬНОГО В ИТАЛЬЯНСКОМ, АРМЯНСКОМ,
АНГЛИЙСКОМ И РУССКОМ ЯЗЫКАХ**

Статья посвящена сопоставительному анализу структурно-семантических особенностей категории числа имени существительного в итальянском, армянском, ианглийском и русском языках.

**FRUNZE HOVHANNISYAN, BELA MARGARYAN - SEMANTIC-STRUCTURAL
CHARACTERISTICS OF THE CATEGORY OF NUMBER OF NOUNS IN
ARMENIAN, ITALIAN, RUSSIAN AND ENGLISH**

The aim of this research work is to present the semantic-structural characteristics of the category of number of nouns in Armenian, Italian, Russian and English. Grammatical forms of different languages very seldom coincide fully as to the scope of their meaning and function. Thus, for instance, the category of number of nouns in Armenian, Italian, English and Russian seems to coincide and, indeed, does coincide in very many cases of their use. However, there are many instances where this is not the case.

**ՄՆՆԴԱՆՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՄ ԵՎ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՄ**

**ՖՐՈՆՁԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍՈՆԱ ԱՎԱԳՅԱՆ**

Հիմնաբառեր՝ սննդանուններ, դարձվածք, դարձվածային միավոր, մշակութային ընդհանրություններ, լրիվ համարժեք դարձվածքներ, մասնակի համարժեք դարձվածքներ, իմաստագործատական առնաձնահատկություններ

Լեզվի դարձվածքային ֆոնդը ազգային մշակույթի և մտածելակերպի տեղեկության ամենաթանկ աղբյուրն է, որտեղ ամփոփված են ազգի պատկերացումները՝ առասպելների, ավանդույթների, ծիսակարգերի, ծեսերի, սովորույթների, վարքագծի մասին: Դարձվածքները միշտ անուղղակիորեն արտագույում են ազգի հայացքները, հասարակական կարգը, ամբողջ դարաշրջանի գաղափարախոսությունը, ինչպես առավոտյան լույսն է արտացոլվում ջրի կարթիլում [Գևորգյան 1969:52]:

Դարձվածքները ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են և արտահայտում են լեզվի ազգային ինքնատիպությունը և յուրահատկությունը: Դարձվածքներում պատկերավոր մտածողության շնորհիվ իրենց արտահայտությունն են գտել ժողովրդի պատմական հարուստ կենսափորձը, նրա պատկերացումները օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների մասին, վերաբերմունքը մարդկային հարաբերությունների նկատմամբ: Չափազանց մեծ է դարձվածքների դերը խոսքի գեղեցիկ դրսևորման մեջ՝ դարձվածաբանական միավորները խոսքին տալիս են պատկերավորություն, արտահայտչականություն, դիպուկություն, ազատում խոսքը միապաղաղությունից, միօրինակությունից և չորությունից [Սուքիասյան, Գալստյան 1975:5]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դարձվածքի հիմնական, անքակտելի չափանիշներն են համարվում դարձվածաբանական միավորների կայունությունը, իմաստային ամբողջականությունը, տարածնությունը և անթարգմանելիությունը: Դարձվածքի կարևորագույն հատկանիշներից մեկը պետք է համարել նաև փոխաբերական-այլաբանական իմաստը, ուստի դարձվածքը արդի լեզվաբանության մեջ սահմանվում է որպես փոխաբերական-

այլաբանական միասնական իմաստ ունեցող ամեն մի կայուն բառային անբաժանելի, պատրաստի վերարտադրելի կապակցություն:

Գ. Ջահուկյանը և Ֆ. Խլղաթյանը նույնպես այն սահմանում են որպես միասնական իմաստով կապված և նույնությամբ վերարտադրվող կայուն կապակցություններ:

Իբրև այդպիսին դարձվածքները կյանքի, արտաքին աշխարհի բազմազան երևույթների են վերաբերում, պատկերավոր ձևով բազմաթիվ իրողություններ են արտացոլում և զանազան հասկացություններ արտահայտում [Մարգարյան 1990: 350]:

Դարձվածքների մեջ գերիշխում են մարդուն և նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող դարձվածքները, իսկ յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի, գործունեության կարևորագույն ոլորտներից ազգային խոհանոցը՝ սննդի պատրաստման և օգտագործման տարբեր տարատեսակները:

Սննդանուններ պարունակող դարձվածքները առօրյա խոսքում մեծ կիրառություն ունեն, քանի որ նրանք անմիջական կապ ունեն մեր առօրյա կյանքի և, հետևաբար, առօրյա խոսակցական լեզվի հետ: Դրանք կարևոր դեր ունեն ազգային ինքնության ձևավորման զարգացման և պահպանման գործընթացում: Սնունդը և սննդի պատրաստման և օգտագործման տարբեր ձևերը սերտ կապ ունեն այն լեզվական հանրության ավանդույթների և սովորությունների հետ, որում դրանք գործածվում են: Տարբեր տեսակի բանջարեղեններ, մրգեր և սննդանուններ դարձվածաբանական միավորների, ասացվածքների, ասույթների գլխաբառ են կազմում և՛ իտալերենում, և՛ հայերենում, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ յուրովի ներառում է ժողդրդական իմաստություն և ճշմարտություն: Երկու լեզուներում էլ դրանց բազմաքանակ լինելու փաստը վկայում է մշակութային կարևորությունը, որ սնունդն ունի լեզվի հարստացման գործընթացում:

Դարձվածքների մեծ մասը սովորաբար ունի կայուն ձև: Սակայն առանձին բառերի նման դարձվածքները ևս կարող են հանդես գալ տարբերակով [Ջահուկյան, Աղայան, Առաքելյան, Քոսյան 1980: 492]:

Որևէ բաղադրիչ դարձվածքի կազմում կարող է հանդես գալ քերականական տարբեր ձևերով՝ արտահայտելով նույն իմաստը՝

gettare un po' di olio sulle / nelle onde

կրակի վրա / կրակին յուղ լցնել

Դարձվածքային տարբերակներից մեկի բաղադրիչը կարող է լինել եզակի թվով, մյուսը՝ հոգնակի՝

lasciare correre l' acqua / le acque all'ingiù

բերանի ջուրը / ջրերը գնալ

Դարձվածքային տարբերակներից մեկի բաղադրիչը կարող է գործածվել առանձին կամ ունենալ լրացում՝

գլխին ջուր լցնել/գլխին (սառը) ջուր լցնել
mettere (molta/troppo) carne al fuoco

Դարձվածքային տարբերակների բաղադրիչները կարող են պատկանել գրական լեզվին և բարբառներին՝

մեկի գլխին ընկույզ / պոպոք կոտրել
scchiacciare le uova / acciaca l'ova

Դարձվածքային տարբերակները կարող են կազմվել տվյալ դարձվածքների մեջ նույն իմաստն արտահայտող և գրական լեզվին հավասարապես հարազատ հոմանիշ բաղադրիչներով՝

աղուհաց ուտել / կիսել
portare / tirare l'acqua al proprio mulino

Դարձվածքային տարբերակներ պետք է համարել նույն դարձվածքի որևէ բաղադրիչի կրճատումով առաջացած ելակետային ձևերը՝

մի կտոր չոր հաց / չոր հաց
nuotare in acque basse / acque basse

Դարձվածքները ոչ միայն լեզվի ներքին, այլև արտաքին՝ փոխառության միջոցով են աճում և հարստանում [Բեդիրյան 1973: 63]:

Ուսումնասիրելով սննդանուններ պարունակող հիմնական բաղադրիչներ ունեցող դարձվածային միավորները հայերենում և իտալերենում՝ առանձնացրել ենք հայերեն և իտալերեն համարժեք մի շարք դարձվածային միավորներ, որոնք շատ հաճախ հանդես են գալիս իրենց դարձվածային տարբերակներով: Համարժեք դարձվածքները որպես կանոն ունեն լեզուների համակարգերով պայմանավորված բառային-քերականական տարբերություններ: Լրիվ համարժեքության դեպքում տեղի է ունենում բովանդակության և արտահայտության պլանների լրիվ համընկնում: Իտալերենում և հայերենում սննդանուններ պարունակող դարձվածքների կազմում կան դարձվածքներ, որոնք ընդհանուր ծագում ունեն, նույնն են ըստ իրենց իմաստային և ռճական առանձնահատկությունների, այդպիսի դարձվածքները իրենց իմաստներով ակներև են դարձնում իրենց ծագումը, ցույց են տալիս, թե ինչից, ինչու և ինչպես են առաջացել: Նման միավորները վերաբերում են միջազգային դարձվածքաբանությանը: իտալերենում և հայերենում այդ դարձվածքների մի մասը կապվում է անտիկ դարաշրջանի՝ հատկապես հունա-հռոմեական դիցաբանության, պատմության, գրականության և մշակույթի հետ, իսկ մյուս մասը՝ աստվածաշնչյան ծագում ունի, դրանք մեծ մասամբ հանդիպում են նաև այլ լեզուներում և կարող են բնորոշվել որպես մշակութային ընդհանրություններ:

Ստորև ներկայացնենք սննդանուն պարունակող հայերեն և իտալերեն լրիվ համարժեք դարձվածքներ՝ պարզաբանելով դրանց ծագումնաբանությունը:

tempesta in un bicchere d'acqua - մի բաժակ ջրում փոթորիկ

Երկու լեզուներում էլ դարձվածքը փոխառվել է ֆրանսերեն ‘C'est line tempete dans un veired'eau’ արտահայտությունից, որը նշանակում է չնչին առիթով մեծ իրարանցում: Ինչպես նշում է ֆրանսիացի գրող Օ. դը Բալզակը «Թուրք քահանան» վեպում, այս արտահայտության հեղինակային իրավունքը պատկանում է ֆրանսիացի գրող, իրավագետ և փիլիսոփա Շառլ Լուի Մոնտեսքյոյին, (1698-1755), նա այդպես էր նկարագրել եվրոպական փոքր հանրապետությունում՝ Սան Մարինոյում առաջացած քաղաքական վեճը:

sali attici- ատտիկյան աղ

Առաջացել է լատ. «Sal Atticus» արտահայտությունից, ըստ Պլատոնի Ատտիկայում (շրջան Հին Հունաստանում), ինչպես նաև Հունաստանի մյուս մասերում, որոնք կապված էին ծովի հետ, աղը ստանում էին ծովի ջուրը արևի տակ գոլորշիացնելով կամ եռացնելով, որից էլ ատտիկյան աղը առավել նուրբ էր ստացվում, իսկ այդ շրջանը հայտնի էր մեծ մտածողներով, կիրթ մարդկանցով, որոնք իրենց մտքերն արտահայտում էին պարզ, բայց դիպուկ և սրամիտ ձևով: Այստեղից էլ այս դարձվածքի իմաստը՝ սրամիտ խոսք, որն այնքան նուրբ է, որքան ատտիկյան աղը:

pescare nell' acqua torbida - պղտոր ջրում ձուկ բռնել

Այս դարձվածքը լայն կիրառում ունի ոչ միայն հայերենում և իտալերենում, այլև այլ լեզուներում՝ ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ինչը վկայում է ձկնորսության դերի կարևորության մասին տվյալ ժողովուրդների մշակույթներում և կենսակերպում: Ձկնորսության տարբեր տեսակներից բացի դեռևս հնագույն ժամանակներում ձկնորսները դիմում էին հետևյալ հնարքին՝ նրանք պղտորում էին ջուրը, որպեսզի ձկները չկարողանային կողմնորոշվել պղտոր ջրում և հեշտությամբ թակարդն ընկնեին: Հետագայում այս դարձվածքը լայն տարածում գտավ նաև կյանքի այլ բնագավառներում ևս:

l'uovo di Colombo - Կոլումբոսի ձու

Այս թեմայի արտահայտությունը նշանակում է դժվար իրավիճակից պարզ, անսպասելի ելք գտնել: Ի պատասխան ընկերների այն քննադատության, որ Ամերիկայի հայտնագործությունը այնքան էլ դժվարին խնդիր չէր, անհրաժեշտ էր միայն ուղղություն վերցնել դեպի արևելք, Կոլումբոսն առաջարկում է ձուն «քթի» վրա կանգնեցնել: Երբ ընկերները չկարողացան կատարել առաջադրանքը, Կոլումբոսը վերցրեց ձուն, տափկեցրեց սուր ծայրը, ստանալով իր խոստացած արդյունքը: Բոլորն ընդդիմացան, ասելով, որ դա չափազանց պարզ լուծում էր: Կոլումբոսը պատասխանեց. «Այո, բայց անհրաժեշտ էր մտածել այդ մասին»:

buttare olio sul fuoco - կրակի վրա յուղ լցնել

Առաջացել է լատիներեն «Oleu addere camino » արտահայտությունից, որը հռոմեացի բանաստեղծ Հորացիոսը օգտագործել է «Սատիրաներ»-ի երկրորդ ժողովածույում, երկրում տիրող քաղաքական իրավիճակը նկարագրելիս, նշանակում է բարդացնել առանց այդ էլ բարդ իրավիճակը:

il pesce puzza dalla testa-ձուկը գլխից է հոսում

Տվյալ արտահայտությունն առաջին անգամ օգտագործել է հին հունական պատմիչ, կենսագիր, փիլիսոփա Պլուտարքոսը երկրում տիրող անօրինականությունները բնութագրելու համար, նշանակում է անօրինությունները, անպատշաճ արարքները ղեկավարներից են գալիս, թե սկիզբ առնում:

cavar le castagne dal fuoco con la zampa del gatto- ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանել

Արտահայտությունը ծագում է ֆրանսիցի գրող Լաֆոնտենի «Կապիկը և կատուն» առակից, առակում Բերտրան անունով կապիկը ստիպում է Ռատոն կատվին կրակից շագանակներ հանել:

essere il sale della terra-երկրի աղը

Դարձվածքը ծագում է Աստվածաշնչից, Քրիստոս իր աշակերտներին ասում է «Դո՛ւք էք երկրի աղը. սակայն եթե աղը անհամանայ, ինչո՞վ այն կ'աղուի. այնուհետև ոչ մի բանի պիտանի չի լինի, այլ միայն դուրս կը թափուի և մարդկանց ոտքի կոխան կը լինի»: [Մատթ. 5:13]

l'uomo non vive solo di pane- ոչ միայն հացիվ

«Ոչ միայն հացի կեցցե մարդ,

այլև ամենայն բանի, որ ելանէ

ի բերանոյ Աստուծոյ» [Մատթ. Դ 4]

Համարժեք բոլոր դարձվածքները չեն սակայն, որ փոխառյալ-պատճենումներ են [Մարգարյան 1990: 349]: Ուսումնասիրելով իտալերենի և հայերենի սննդանուններ պարունակող դարձվածքները, գտանք միանման-միատեսակ դարձվածքներ, որոնք մի կողմից նշում են դարձվածքների խորապես ազգային բնույթը, մյուս կողմից էլ հաստատում են երկու ժողովուրդների մտածելակերպի, լեզվական մտածողության միջև եղած ընդհանրությունները:

agitare le acque -ջուր պղտորել

sentirsi come pesce nell'acqua-զգալ, ինչպես ձուկը ջրում

il sangue non è acqua -արյունը ջուր չի դառնա

spargere sale sulle piaghe/ferite- աղ ցանել/լցնել վերքին/վերքի վրա

nascere d'un uovo-ծվից դուրս գալ

gettare olio sulle acque agitate- յուղ թափել փոթորկած ծովի վրա

*pane quotidiano- հանապազօրյա հաց
guadagnarsi un boccone di pane- հաց աշխատել
gettare dell' acqua sul fuoco-կրակի վրա ջուր լցնել
somiigliarsi come due goccioline d' acqua -երկու կաթիլ ջրի նման
toserebbe un uovo- հում հավկիթ խուզող
portare l'acqua al mulino di qualcuno-մեկի ջրաղացին ջուր լցնել
avere poco sale nel cervello/in zucca- խելքդ աղ անեմ
non avere sale si saliera- մեր հացի մեջ աղ չկա
caminare sulle uova- ոտքիդ տակ հավկիթ հո՞ չկա
mancare di pane - ցամաք հացի կարոտ*

Մասնակի համարժեք դարձվածքներում միևնույն իմաստն արտահայտվում է տարբեր սննդանուններով, երբեմն էլ այլ բնագավառի պատկանող բառերի գործածմամբ, դրանք իրենց հերթին հաստատում են երկու ժողովուրդների լեզվական մտածողության տարբերությունները, ինչը պայմանավորված է տարբեր պատմական, աշխարհագրական, կլիմայական հանգամանքներով:

essere fra le due acque- երկու քարի միջև

Իտալերենում ասում են երկու ջրի արանքում, մինչդեռ հայերենում երկու քարի կամ կրակի արանքում: Իտալերեն դրածվածքը ձկնորսական ծագում ունի, երկու ջրերը համարվում են մակերեսի և ծովի հատակի ջրերը, որոնք առանձին շերտեր են համարվում: Հայերենում քար բառի գործածումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանը լեռնային երկիր է և հարուստ է քարերի տարբեր տեսակներով: Այսպիսով՝ միևնույն իմաստն արտահայտելու համար երկու լեզուները աշխարհագրական առանձնահատկություններով պայմանավորված օգտագործում են տարբեր բառեր՝ իտալերենում՝ «ջուր», հայերենում՝ «քար»:

l' acqua e il popolo non si può tenere-գյուղ կանգնի գերան կկոտրի

Իտալերենում ժողովրդի միասնական ուժը ասոցացվում է ջրի կործանիչ հատկության հետ, իսկ հայերենում այն հղում է կատարում գյուղական կյանքին, քանի որ Հայաստանում հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ:

essere all' acqua e al sole- ջրի ու հրի միջով անցնել

Այս դարձվածքի արտահայտման տարբերությունը պայմանավորված է պատմական առանձնահատկություններով՝ հայ ժողովուրդը հաճախ ստիպված է եղել արտագաղթել, օվկիանոս հատել հաղթահարելով բազում դժվարություններ:

Այդպիսի տարբերություններ հաստատող այլ դարձվածքներից են նաև սննդանուններ պարունակող հետևյալ դարձվածքները՝

mangiare l' uovo in corpo alla gallina-ծուկը ջրում բազար անել

portare l'acqua con gli orecchi-մաղով ջուր կրել

gettare un po' di olio sulle onde -յուղ թափել ճանճի վրա

*non distinguere il pane dai sassi-թացը չորից չտարբերել
cuocere il pane mentre il forno è caldo-երկայթը տաք-տաք ծեծել
essere pani di una medesima pasta-նույն տաշտի խմոր լինել
date pane e pane avrete -ինչ ցանես այն էլ կինձես
prendere due piccioni con una fava-մի ձեռքով երկու ձմերուկ բռնել*

Ուսումնասիրելով և զուգադրելով սննդանոն պարունակող դարձվածքները երկու լեզվամշակույթներում կարող ենք հաստատել, որ երկու լեզուներում էլ կան սննդանոն պարունակող դարձվածային միավորներ, որոնք մշակութային ընդհանրությունների շարքին են դասվում: Սակայն կան նաև համարժեք դարձվածային միավորներ, որոնց արտահայտած խորհրդանշանային իմաստները ամբողջությամբ համընկնում են, բացի այդ կան սննդանոնների պարունակող դարձվածային միավորներ, որոնք մասնակի են համընկնում, այսինքն՝ նույն իմաստն արհայատելու համար երկու լեզուները օգտագործում են տարբեր սննդանոններ կամ այլ բնագավառին պատկանող հասկացություններ: Ուսումնասիրված լեզվանյութը և մասնագիտական գրականության տվյալները թույլ են տալիս հանգել այն եզրակացության, որ սննդանոն պարունակող դարձվածքները ունեն ոչ միայն ընդհանրություններ, այլև տարբերություններ, որոնք բացահայտում են տվյալ ժողովուրդների բնակլիմայական և մշակութային առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բադիկյան Խ. Գ., Ուսումնական դարձվածաբանական բառարան, Երևան, 2002
2. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայոց լեզվի դարձվածաբանություն, Երևան, 1973
3. Գևորգյան Ե. Հ., Հայերենի դարձվածքները, Երևան, 1969
4. Մարգարյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզու, ԵՊՀ, Երևան, 1990
5. Զահուկյան Գ. Բ., Աղայան Է. Բ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա., Հայոց լեզու I մաս Ա պրակ, «Լույս», Երևան, 1980
6. Զահուկյան Գ. Բ., Խլղաթյան Ֆ. Հ., Հայոց լեզվի Ոճաբանություն, Զանգակ-97, Երևան, 2007

7. Սուրիաւյան Ա. Ա., Գալստյան Ս.Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր. համ. հրատ., Երևան, 1975
8. Casadei F., Metafore ed espressioni idiomatiche. Uno studio semantico sull'italiano, Bulzoni, 1996
9. Lapucci C., Dizionario dei proverbi italiani, Mondadori, 2007
10. Quartu B. M., Dizionario dei modi di dire della lingua italiana, Biblioteca Universale Rizzoli, Milano, 1993
11. Quartu M., Rossi E., Dizionario dei modi di dire della lingua italiana, Ulrico Hoepli, Milano, 2012
12. Серов В., Энциклопедический словарь крылатых слов и выражений, Локид-Пресс, 2003
13. <http://www.bibliotekar.ru/encSlov/>

ՓՐՈՆԶԵ ՕԳԱՆՆԵՏՅԱՆ, ՏՈՆԱ ԱՎԱԳՅԱՆ - ՏԵՄԱՆՏԻԿՈ-ՓՈՒՆԿՑԻՈՆԱԿԱՆ ՕՍՈՅԵՆՈՒՄՆԵՐ ՓՐԱԶԵՕԼՈԳԻԶՄՈՎ Տ «ՔԻՇԵՎՅԻՄ» ԿՈՄՓՈՆԵՆՏՈՄ Բ ԻՏԱԼՅԱՆՔՈՄ Ի ԱՐՄՅԱՆՔՈՄ ԵԶՅԱԽ.

В каждом языке есть свой перечень фразеологических единиц. Они служат средством освоения мира и передают национально-культурное своеобразие языка. Данное исследование посвящено изучению семантических и функциональных характеристик фразеологизмов с «пищевым» компонентом в итальянском и армянском языках.

FRUNZE HOVHANNISYAN, SONA AVAGYAN - THE SEMANTIC-FUNCTIONAL PECULIARITIES OF FOOD IDIOMS IN ITALIAN AND ARMENIAN

Every language has its own collection of wise sayings: idioms. They offer advice about how to live, transferring some underlying national and cultural peculiarities of the language. This survey is dedicated to revealing semantic-functional characteristics of some food idioms in Italian and Armenian.

**ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ DOCH ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ՄԱՍՆԻԿԻ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԴԱՆՑ
ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հիմնաբառեր՝ եղանակայնություն, եղանակավորող մասնիկ, հակադրություն, վերաբերականներ, ընդհանուր իմացություն, հարդորդակցում, ենթադրություն, առարկություն, հարալեզվական երևույթներ, նախադասության տեսակներ

Գերմաներենում ասույթը եղանակավորելու բազմաթիվ միջոցներից են եղանակավորող մասնիկները: Մակբայների, բայի եղանակի, ժխտման և ուրիշ միջոցների շարքում նրանք ծառայում են նախադասության իմաստի վերաբերյալ խոսողի տարբեր դիրքորոշումներ նշելուն: Էսոսողի իմացական գնահատականները նրանք հարաբերության մեջ են դնում խոսակցի համապատասխան կամ հակառակ գնահատականների հետ: Այսպես՝ ԵՄ ja-ն ցույց է տալիս նախադասությամբ արտահայտված իմաստի նկատմամբ դրական գնահատական և ոչ բացահայտ կերպով նշում է, որ ունկնդիրը, հնարավոր է, արդեն գիտի, թե ինչ է ասում, պնդում կամ հաստատում խոսողը: ԵՄ doch-ը դրան հակառակ խոսողի իմացական դրական գնահատականը նախադասությամբ արտահայտված իմաստի մասին հարաբերում է լսողի հնարավոր հակառակ գնահատականին:

Այս հոդվածի շրջանակներում կանդրադառնանք գերմաներենի doch եղանակավորող մասնիկի իմաստագործառական առանձնահատկություններին, տարբեր տեսակի նախադասություններում նրա դրսևորումներին և հնարավոր թարգմանություններին:

Նախ և առաջ կարելի է նշել, որ ԵՄ doch-ը աչքի է ընկնում իր բազմակողմանիությամբ և լինելով գերմաներենի ամենահետաքրքիր մասնիկներից մեկը՝ արժանացել է հետազոտողների առավել մեծ ուշադրությանը /Wolski W. 1986; Bastert U. 1985/: Այն կարող է հանդես գալ գրեթե բոլոր տեսակի նախադասություններում և կիրառվել ամենատարբեր իլոկուտիվ նպատակների համար: ԵՄ doch-ի վերաբերյալ ուսումնասիրություններում կա միասնականություն այն բանի վերաբերյալ, որ նրա բոլոր կիրառություններում առկա է հակադրական բաղադրիչ [Weydt/Hentschel 1983: 9; Helbig G.. 1988: 111]: Դա վերաբերում է նաև doch-ի՝ պատասխան մասնիկ լինելու գործառույթին, որով

արձագանքում են նախորդող ժխտական ասույթին, ինչպես նաև շաղկապային գործառույթին և շեշտված *doch*-ի մակբայական կիրառությանը: Շաղկապը կարելի է փոխարինել *aber*-ով, շեշտված *doch*-ը՝ *dennoch*-ով և *trotzdem*-ով: Օրինակ՝

A: Glaubst du mir nicht? Դու ինձ չե՞ս հավատում:

B: *Doch*. Ինչպե՞ս չէ:

Ich habe ihn begrüßt, *doch/aber* er hat mich nicht erkannt.

Ես նրան բարևեցի, բայց նա ինձ չճանաչեց:

Die Ärzte haben getan, was sie konnten, aber sie konnten ihn *'doch /dennoch/ trotzdem* nicht retten.

Բժիշկներն ամեն հնարավոր բան արեցին, բայց / այդուհանդերձ/ չնայած դրան նրան չկարողացան փրկել:

ԵՄ *doch*-ը նշում է նաև ծանոթը, հայտնին կամ գոնե այն, ինչը կարող է հասկանալ, բացահայտել ունկնդիրը: Հայտնի լինելը բխում է *doch*-ի ցուցային բնույթից, որը ինչպես ցույց է տվել Հենչելը, առաջացել է *dieses /այս/ նշանակությամբ* ցուցական դերանունից: Ցուցաբառերի կիրառումը միշտ ենթադրում է, որ ունկնդիրը կամ ծանոթ է ասվածին, նշվածին, կամ էլ կարող է բացահայտել այն [Hentschel E. 1986: 148]:

ԵՄ *doch*-ի կիրառությունը հաստատական նախադասություններում վկայակոչում է անմիջապես նախորդ խոսքային գործողությունը, խոսակցի գործողությունը կամ թերացումը, որը քննադատվում կամ մերժվում է: *Doch* պարունակող ասույթը նշում է մի բան, որին խոսակիցը խոսողի կարծիքով անհրաժեշտ ուշադրության չի արժանացրել, թեև իմացել է կամ կարող էր իմանալ այդ մասին: Անմիջական արձագանքը *doch*-ով գործում է որպես հակափաստարկ նախորդող ասույթին: Շատ դեպքերում *doch*-ը հստակեցնում է նախատինքի, կշտամբանքի գործառույթը, հաճախ հանդես է գալիս նաև որպես պատասխան նախատինք կամ արդարացում նախորդ կշտամբանքը թուլացնելու նպատակով [Franck D. 1980: 177-180]: Հետևյալ օրինակում պատասխանը անկարևոր և հարցն էլ ավելորդ է գնահատվում, ինչպես՝

"Sag mal", fragte sie schließlich, "was ist denn die Zeit eigentlich? "

"Das hast du *doch* gerade selbst herausgefunden", ... [Ende M. 1973: 158].

- Ասա մի,- հարցրեց նա վերջապես, -ի՞նչ է, ըստ էության, ժամանակը:

Չէ՞ որ դու դա ինքդ հենց նոր պարզեցիր:

Doch պարունակող ասույթներով երբեմն մերժում են խոսակցի ենթադրությունները և մերժման դեպքում *doch*-ը հաճախ համակցվում է առարկություն արտահայտող ձայնարկությունների և շաղկապների հետ: Օրինակ՝

- ...Wie meine eigene Tochter werd ich sie bewachen.

- Aber du hast *doch* keine Kinder, Schekir Efendi. Und du hast auch keine Tochter /Hilsenrath E., 1989: 233/.

- Սեփական աղջկա պես ես նրան կհսկեմ:

- Բայց դու *այլ* երեխա չունես, Շեքիր էֆենդի: Ուրեմն ոչ մի աղջիկ էլ չունես [Հիլզենրաթ է 1994, հ.2: 68]:

ԵՄ *doch*-ը հաճախ հանդիպում է ասացական, իմացական և ընկալման իմաստ արտահայտող բայերի հետ: Դա այն դեպքն է, երբ հղում է կատարվում հաղորդակցման առկա իրադրությանը կամ ընդհանուր իմացությանը, և խոսողը կշտամբում է խոսակցին, որ նա հաշվի չի առնում հայտնին, ծանոթը կամ արդեն հիշատակվածը, կամ էլ նրա գործողություններն են դրանց հակասում: Այս կիրառությամբ *doch*-ը հայերենում հիմնականում վերարտադրվում է չէ՞ որ, ախր, հո վերաբերականներով, ինչը, սակայն հնարավոր չէ ընդհանրացնել բոլոր դեպքերի համար: Օրինակ՝

"Mein Gott, ich bin *doch* katholisch, das weißt du doch." [Böll H. 1997: 51]

- Աստված իմ, չէ՞ որ ես կաթոլիկ եմ, դու *հո* դա գիտես:

Պատասխանի մեջ կա նախատինքի երանգ, որն հատկապես ընդգծվում է *doch*-ի կիրառությամբ: Հաջորդ օրինակում *doch*-ը կարելի է փոխարինել *Ich gehe davon aus, dass du nichts dagegen hast* հարասությամբ:

"Du hast *doch* nichts dagegen, wenn ich dich Thowma nenne", sagte der Märchenerzähler zum letzten Gedanken. [Hilsenrath E. 1989: 31]

- Ուրեմն դու ամենևին դեմ չես, որ քեզ Թովմա եմ անվանում, -ասաց հեքիաթասացը Վերջին Մտքին: [Հիլզենրաթ է. 1993, հ.1: 32]

Թարգմանիչն այստեղ *doch*-ը վերարտադրել է ուրեմն եղանակավորող բառով, որը որպես *doch*-ի համարժեք այնքան էլ տիպական չէ: Մենք կառաջարկեինք «Դու դեմ չես, չէ՞ որ.... » տարբերակը:

Doch-ի մեկ այլ կարևոր գործառույթ է խոսքում հիմնավորում արտահայտելը, քանի որ *doch*-ը նշում է հայտնին և ծանոթը՝ թեման, իսկ հայտնին հատկապես հարմար է հիմնավորելու, փաստարկելու համար: *Doch*-ը ցույց է տալիս այն հակասությունը, որը կարող է գոյություն ունենալ հայտնի լինելու և այն հնարավորության միջև, որ խոսակիցը տվյալ իրողությունը չի հիշում կամ այն այլ կերպ է գնահատում, քան խոսողը:

ԵՄ *doch*-ով ասույթները նաև խոսակցից հավանություն հայցելու տարր են պարունակում: *Doch* կիրառելով խոսողն արտահայտում է, որ թեև ինքը մտածել է խոսակցի հնարավոր մտավախությունների կամ առարկությունների մասին, սակայն տվյալ դեպքում նա դրանք մերժում է և հորդորում կամ կոչ է անում նրան՝ ընդունելու իր տեսակետը: Այդպիսի ասույթներում *doch*-ը ներազդող, դրդող դեր է ստանձնում: Լյութենը *doch*-ի այդ գործառույթը նկարագրում է որպես

«խթանող դիմում, վկայակոչում ընդհանուր հիմքին» [Lütten J. 1977: 276]:
Ունկնդրին ուղղված doch-ով դիմումի ազդեցությունը Բուբլիցը վերարտադրում է
հետևյալ հարասություններով՝ "Das musst du zugeben"/ «Դու պետք է դա
ընդունես»/ կամ "Da kannst du sagen, was du willst" / «Կարող ես ասել, ինչ ուզում
ես: »/ [Bublitz W. 1978: 112]:

Մասնիկների ուսումնասիրության վերաբերյալ գրականության մեջ նշվում է, որ
doch-ը հաճախ ունենում է ne? /չէ? և nicht wahr- /այնպես չէ?-ի իմաստ և
ազդեցություն /Burkhardt, 1982: 96/: Հավանություն հայցող doch պարունակող
ասույթների հայերեն թարգմանություններում մասնիկի գործառույթն ավելի
հստակեցվում է՝ *անպես չէ՞, չէ՞* արտահայտություններ կիրառելով, որոնցով
խոսակցին կարծես հորդորում են համաձայնել խոսողի հետ: Հաջորդ օրինակում
թարգմանիչն ընդհանրապես անտեսել է doch-ը, ինչը, մեր կարծիքով, նվազեցրել
է թարգմանության հաղորդակցական ազդեցությունը:

Das kommt euch Kindern allen *doch* einmal zugute. [Fallada H. 1965: 49]

Այդ բոլորը ձեզ՝ երեխաներիդ է հասնելու: [Ֆալլադա Հ. 1981: 67]

Կարելի է թերևս առաջարկել հետևյալ տարբերակը. Այդ բոլորը մի օր ձեզ՝
երեխաներիդ է հասնելու, *չէ՞*:

Doch-ով հավանություն հայցող ասույթները հաճախ ունենում են ենթադրության
կամ հետևության իմաստ: Նման դեպքերում doch-ը համակցվում է können
/կաողանալ/ և müssen /ստիպված լինել/ մոդալ բայերի, ապանի կամ sicher
/անշուշտ/, bestimmt /հաստատ/, dann /այպա/ մակբայների և եղանակավորող
բառերի հետ, ինչպես՝

Und wovon soll ich leben? fragte ich.

Na, sagte er, ein bißchen wird Ihr Vater *doch* rausrücken. [Böll H. 1997: 122]

Իսկ ինչո՞վ եմ ապրելու, հարցրի ես:

-Դե, -ասաց նա, - մի քիչ ձեր հայրը կտա, *չէ՞*:

Շրջուն շարադասությամբ ԵՄ doch-ը հաճախ հանդես է գալիս
բացականչական նախադասություններում, որտեղ արտահայտվում է խոսողի
զարմանքը: Այդ կիրառությունը հիմնականում խոսակցական ոճում է հանդիպում:
Այդպիսի բացականչությունները կարող են զրույցը սկսելու և պատմողական
գործառույթ ունենալ և երբեմն նաև զարմանք արտահայտել անցած իրողության
վերաբերյալ: Դա հաստատվում է Հենչելի հետևյալ օրինակով. "Macht mir *doch*
gestern die Frau meiner Träume eine Liebeserklärung!" /*Իսկ* երեկ իմ երազների
կինն ինձ սիրո խոստովանություն է անում/ [Hentschel E. 1986: 143]: Doch-ով
զարմանք է արտահայտվում ոչ միայն շրջուն շարադասություն ունեցող
բացականչական նախադասություններում, այլ նաև հաճախ ուղիղ
շարադասություն ունեցող նախադասություններում: Այդ կիրառությամբ այն նշում

է խոսողի ակնկալիքի և փաստացիորեն տեղի ունեցող իրողության միջև հակադրությունը, ինչպես՝

Du hast *doch* Angst! *Բայց* դու վախենում ես:

ԵՄ *doch*-ով նախադասությունը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ ‘Մտքովս չէր անցնում, որ դու կարող ես վախենալ:’ Խոսակցից ակնկալվում է, որ նա կիսելու է խոսողի հուզմունքը, լինի դա վրդովմունք, ուրախություն թե մեկ այլ զգացում:

Քանի որ *doch*-ով կարելի է պաշտպանել գերադաս նախադասության միտքը հնարավոր առարկություններից, ապա այն շատ հարմար է պատմողական նախադասություններին հուզական երանգ տալու համար: Հուզական բնույթի նախադասություններին բնորոշ է բացականչական հնչերանգը: ԵՄ *doch*-ը նշում է հակադրություն, որն առաջանում է խոսողի գնահատականի և լսողի մոտ փաստացիորեն, իրականում կամ ենթադրաբար առկա հակառակ կարծիքի կամ գործողությունների միջև: Ասույթին *doch*-ը վավերականություն է հաղորդում:

Jeder wollte *doch* vorwärtskommen im Leben, und jeder sah gerne, wenn seine Kinder mehr wurden als er [Fallada H. 1965: 20].

Չէ՞ որ ամեն մարդ ձգտում էր առաջ գնալ կյանքում, և յուրաքանչյուրի համար հաճելի էր տեսնել, որ իր երեխաներն ավելի են առաջադիմել, քան ինքը [Ֆալլադա Հ. 1981: 40]:

Բացականչական նախադասություններում գերմաներենի *doch*-ը հայերենում սովորաբար միանշանակ առանձին համարժեք չունի, ավելի շուտ դրանք համատեքստային համապատասխանություններ են, ինչպես դա երևում է վերը բերված օրինակներից: Նույնը վերաբերում է նաև այլ՝ առավելապես արտահայտչական խոսքային գործողություններին, որոնց հավաստիությունը հաստատվում է գերմաներենում *doch*-ով, ինչպես՝ Ich hoffe *doch*,.../Դե ես հույս ունեմ... , Ich wünsche *doch*...; /Ես այնուամենայնիվ ցանկանում եմ.../ Ich nehme *doch* an, .../Դե, ես ենթադրում եմ .../ արտահայտություններում:

Անշեշտ *doch*-ը կարող է հանդես գալ ուղիղ շարադասությամբ հարցական նախադասություններում, որոնք որպես այդպիսին ճանաչելի են միայն հնչերանգով և կարող են անվանվել ‘հնչերանգային հարցեր’ [Hentschel E. 1986: 136] կամ ‘երկրորդական հարցեր’ [Doherty M. 1985: 31]: Օրինակ՝

Du kommst *doch* am Sonntag zum Ausflug? Կիրակի գալու ես չէ՞՞ էքսկուրսիայի:

Մինչդեռ շրջուն շարադասությամբ այդ կիրառությունը հնարավոր չէ, ինչպես՝ *Kommst du *doch* am Sonntag zum Ausflug?: ԵՄ *doch*-ով հնչերանգային հարցերը միշտ միտում ունեն, որ հարցնողը որոշակի պատասխանի ակնկալիք ունի, ինչը նա արտահայտում է *doch*-ով և պատմողական նախադասությամբ: Նա

արդեն ենթադրում է, որ հարցում արտահայտված իրողությունը համապատասխանում է իրականությանը, ուզում է հավաստիանալ դրանում և հույս ունի ունկնդրից ստանալ իր ենթադրության վերջնական հաստատումը: Հետևաբար *doch*-ով նշվող հակադրությունը իրադրության ենթադրվող իմացության և այն փաստի միջև է, որ խոսողն ընդհանրապես հարցնում է: «Այդպիսով՝ հակադրության երկու բևեռները մեկ հարթության վրա են, որը գտնվում է բառային ասույթից դուրս:» [Hentschel E. 1986: 138]:

Քանի որ հարցերում խոսողը որպես կանոն ենթադրում է, որ խոսակիցը տեղյակ է պատասխանին, ապա *doch*-ով հավաստիական հարցերով վկայակոչում են զրուցակիցների ընդհանուր իմացությունը: Սովորական հավաստիական հարցերում, որտեղ խոնարհվող բայը դրվում է երկրորդ տեղում, այդ ընդհանուր իմացությունը ստեղծվում է միայն հարցի միջոցով, իսկ հակադրություն կարելի է արտահայտել շեշտված *doch*-ի միջոցով [Helbig G. 1988: 114]: Եթե հարցական նախադասությունը ժխտում չի պարունակում, ապա խոսողն ակնկալում է հաստատական պատասխան, հակառակ դեպքում՝ ժխտական [Franck D. 1980: 186]: Օրինակ՝

Du hast *doch* daran gedacht? /Ակնկալվում է դրական պատասխան:/

Du hast *doch* nicht vergessen? /Ակնկալվում է ժխտական պատասխան:/

Այն, որ խոսողն արտահայտում է իր կողմից ակնկալվող պատասխանը, սահմանափակում է հասցեատիրոջը՝ հակադարձելու կամ սպասածից այլ պատասխան տալու հնարավորությունը [Helbig G. 1988: 115]: Այդ պատճառով *doch* պարունակող հարցերը նախընտրելի միջոց են զրույցը վարելու և այն հարցնողի ցանկությամբ ուղղորդելու առումով:

Doch nicht etwa պարունակող հարցերով խոսողը մտավախություն է արտահայտում, ինչի համար առիթ կարող է լինել առկա իրադրությունը կամ նախորդ արտահայտությունը: ԵՄ *etwa* ավելացնելով ընդգծում են բացասական արժևորումը: Խոսողն իր կողմից ակնկալվող պատասխանը չի համարում անպայման հավանական, դեռ ընդհակառակը: Այդպիսի հարցերով խոսողը մի կողմից սպասում է բացասական պատասխան, մյուս կողմից, սակայն, դրական պատասխանը, որը կհաստատեր իր մտավախությունը, ավելի հավանական է համարում: Օրինակ՝

"Du hast dich *doch* nicht etwa erkältet? " fragte Meister Hora besorgt [Ende M. 1973: 267].

«Հո չե՞ս մրսել», հարցրեց վարպետ Հորան անհանգստացած:

Doch nicht կամ *doch* nicht etwa պարունակող հորդորական հարցերը հաճախ կիրառվում են զրուցակցի ասույթը մերժելու համար: Օրինակ.

"Mein Lieber", sagte sie leise, "Sie erwarten *doch* von mir nicht, dass ich schwindele?" [Böll H. 1997: 196].

«Սիրելիս», ասաց նա կամացուկ, «Դուք *հո* ինձանից չե՞ք ակնկալում, որ ստեմ:»

Թե՛ ժխտում պարունակող և թե՛ առանց ժխտման *doch*-ով հարցական նախադասությունները լայն իմաստով արտահայտում են ենթադրություններ, որոնց վերաբերյալ խոսողը որոշակիություն է ուզում մտցնել: Մտավախություններն ու հույսերը ենթադրության հատուկ ձև են ներկայացնում. մինչ մտավախությունները անցանկալի իրողության գոյության մասին ենթադրություններ են, հիմնավորված հույսերը ենթադրություններ են ցանկալի իրողության գոյության մասին: Ապառնի ժամանակաձևը գերմաներենում, ինչպես նաև հայերենում, ենթադրություն արտահայտելու միջոց է:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ հաստատական հարցական նախադասություններում *doch*-ը հայերենում ունենում է համարժեքներ: Սակայն հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ *doch*-ն այստեղ հաճախ կիրառվում է ժխտման, ԵՄ *etwa*-ի և հավանություն հայցող այլ մասնիկների և արտահայտությունների հետ, որոնք նույնպես մասնակցում են ներգործելու, ազդեցություն թողնելու գործընթացին: Այդ առումով հայերենում կիրառված միջոցները միշտ չէ, որ *doch*-ի ստույգ համարժեքները կարող են լինել: Գրեթե բոլոր օրինակներում թարգմանությունները համատեքստային են: Այստեղ էլ հայերենում հաճախ օգտագործվում են «*հո, այնպես չէ՞, չէ՞ որ*»՝ արտահայտությունները, որոնք հատկապես հարմար են հարցերում ակնկալվող պատասխան արտահայտելու համար: Վերջինը */չէ՞ որ/* տրված է Անդրեասյանի գերմաներեն - հայերեն բառարանում որպես *doch*-ի եղանակային իմաստով միակ համարժեք /Անդրեասյան Գ., 1976: 151/: Բացի այդ, ինչպես գերմաներենում, հայերենում նույնպես հարցերին միտում կարող են հաղորդել ժխտական մասնիկը, հավանություն հայցող մասնատող ազդանշանները, ինչպես նաև կետադրությունը, զրույցը ձևավորող ձայնարկությունները */հըմ, ը/*: Երկու լեզուներում էլ կարևոր դեր է խաղում հնչերանգը: Քանի որ գրավոր տեքստերում հնչերանգը բացահայտորեն չի արտահայտվում, ապա միշտ չէ, որ լեզվական միջոցների ընտրությունը թարգմանության մեջ տեղին է լինում:

Միտումնավոր հարցերը և նրանց տարբեր երանգները կարող են լինել թարգմանական խնդիր, որը կհաղթահարվի, եթե թարգմանչին ծանոթ են միտում առաջ բերող միջոցները երկու լեզուներում: Ինքնին հասկանալի է, որ հարցի միտումն ու հաղորդակցական գործառույթը պարզելու համար կարևորվում է համատեքստի դերը: Ենթադրում ենք, որ հայերենում հնչերանգը հավանաբար ավելի մեծ դեր է խաղում, քան գերմաներենում, քանի որ հայերենը այնքան

հարուստ չէ եղանակայնություն արտահայտող մասնիկներով, ինչպես գերմաներենը:

Հրամայական ձևերում *doch*-ը նշում է կատարվելիք գործողության և տվյալ իրադրության միջև հակասությունը, սակայն *doch*-ով հրամանը լրացուցիչ շեշտադրում է ստանում: ԵՄ-ն այս դեպքում ասույթը կապում է իրադրային համատեքստի հետ [Hentschel E. 1986: 139]: ԵՄ *doch* պարունակող հրամաններով արձագանքում են խոսակցի գործողությանը կամ դրա չկատարելուն և կարող են քննադատություն պարունակել դրանց նկատմամբ կամ էլ մերժել նրա նախորդ ասույթը: Այդ դեպքում նախադասությունը հաճախ անհավանություն արտահայտող ծայնարկություն կամ դիմելաձև է ունենում, ինչպես՝

„Quatsch“, sagte er „lassen Sie *doch* die Seele aus dem Spiel“ [Böll H. 1997: 122].

-Հիմարություն՝ն, ասաց նա, - դե հանգի՛ստ թողեք հոգուն:

Ժխտական և *doch* պարունակող հրամանները կարող են միշտ այն ժամանակ կիրառվել, երբ քննադատվող գործողությունը խոսելու պահին արդեն կատարվել, ընթացքի մեջ է կամ առնվազն նախատեսվում է:

Հրամայական նախադասություններում *doch*-ի կիրառության մասին գրականության մեջ հակադիր կարծիքներ գոյություն ունեն: Մինչ, օրինակ, Ֆրանկը գտնում է, որ *doch*-ը հրամանին շտապեցնելու և անհամբերության երանգ է հաղորդում [Franck D. 1980: 188], Հելբիգը *doch*-ը դասում է նաև այն մասնիկների շարքը, որոնք 'հանգստացնող, քաղաքավարի, ավելի շուտ հպանցիկ ազդեցություն են թողնում' [Helbig G. 1988: 113] և դրա շնորհիվ հրամանը մեղմանում և ինչ-որ չափով խնդրանքի բնույթ է ստանում: Թե արդյոք *doch*-ով հրամանները սիրալիր, հորդորական կամ անհամբեր երանգ ունեն, հնարավոր է որոշել՝ ելնելով իրադրությունից և ուղեկցող հարալեզվական երևույթներից: Ընդ որում կարևոր է գրուցակիցների դերային հարաբերությունը: Լեզվական այլ միջոցները նույնպես դեր են խաղում: Այսպես *doch*-ի համակցությունը այլ ԵՄ-ների կամ որոշ մակբայների հետ կարող է նոր երանգ հաղորդել խոսողի դիրքորոշումը: *Doch mal* համադրությունը սովորաբար նշում է խորհուրդ, առաջարկ կամ խնդրանք, այսինքն ունենում է խոսքի մեղմացման գործառույթ: Օրինակ՝ *Geh doch mal zum Arzt!* - Գնա՛ բժշկի, *էլ/հ*: Ավելի մեղմ է *doch*-ի համակցությունը *bitte*-ի հետ՝ *Setzen Sie sich doch bitte!* - Խնդրում եմ նստե՛ք, *էլ/հ*: Դրան հակառակ՝ *doch endlich* համակցությունը նշում է խոսողի հանդիմանանքը կամ առնվազն անհամբերությունը, օրինակ՝ *Hör doch endlich auf mit dem Weinen!* - Դե վերջապես դադարեցրո՛ւ՝ լացը: *Endlich*-ը թույլ է տալիս

ենթադրել, որ հրամանն արդեն մի անգամ հնչել է, և որ պահանջվող գործողությունն արդեն վաղուց պետք է կատարված լիներ:

Օրինակների դիտարկումը թույլ է տալիս նկատել, որ հրամանների մեծ մասը անմիջականորեն վերաբերում է խոսքային հաղորդակցմանը, որոնք հիմնականում այնպիսի կոչեր են, ինչպես՝ *erzähl doch*, դե պատմի՛ր...; *sag mir doch*, ...; դե ասա ինձ... *versteh mich doch richtig* ճիշտ հասկացիր ինձ..., *bedenken Sie doch...*, դե մտածե՛ք, *sei doch vernünftig* դե եղի՛ր խիեմ, *stellen Sie sich doch mal vor* դե մի հատ պատկերացրե՛ք և այլն: Հրամայական նախադասություններում *doch*-ը հայերենում ունենում է միայն մասնակի համապատասխանություն: Անհամբեր և եռանդուն հրամաններում *doch*-ը համակցվում է *mal*-ի կամ *endlich*-ի հետ: Հայերենում այդ նախադասություններում *doch*-ը վերարտադրվում է հիմնականում դե-ով, օրինակ՝

Lassen Sie *doch* diese kindische Sauferei [Böll H. 1997: 113].

- Դե թողե՛ք այդ երեխայական հարբեցողությունը:

Այսպիսով, *doch*-ի կիրառության տարբեր տեսակների վերլուծությունը ի հայտ բերեց տարբեր տեսակի նախադասություններում որ մատնանշվող հակադրության բևեռները:

Հարցական նախադասություններում *doch*-ը նշում է հակասությունը հարցվող գործողության և այն փաստի միջև, որ հարցնողն արդեն ենթադրում է, կամ էլ նա մոռացել է իրեն իրականում ծանոթ իրողությունը:

Հրամայական նախադասություններում *doch*-ը նշում է տվյալ իրադրության և պահանջվող գործողության միջև գոյություն ունեցող հակասությունը, իսկ ցանկություն արտահայտող նախադասություններում՝ ցանկության և իրականության միջև հակասությունը:

Բացականչական նախադասություններում *doch*-ն ընդգծում է հակասությունը խոսողի ակնկալիքի և իրականում տեղի ունեցող գործողության միջև:

Պատմողական նախադասություններում մեծ մասամբ հակադրություն է ստեղծվում փաստացիորեն առկա և ենթադրվող կամ հնարավոր հակառակ կարծիքի միջև՝ խոսակցին խոսողի տեսակետում համոզելու նպատակով: Այդ պատճառով *doch*-ով պատմողական նախադասությունները արտահայտված համաձայնություն ակնկալող տարր են պարունակում:

Ինչպես արդեն նշել ենք հայերենում չկա *doch*-ի միանշանակ համարժեք: Կան միայն մասնակի համարժեքներ: Հրամայական նախադասություններում *doch*-ը հայերենում հիմնականում վերարտադրվում է դե եղանակավորող բառով, պատմողական և հարցական նախադասություններում՝ չէ որ, ախր արտահայտություններով: Հայերեն համարժեքների հարցը քննելիս կարելի է ընդհանրացնելով ասել, որ *doch*-ը դեպքերի մեծ մասում համարժեք չունի և որ այլ

միջոցները, ինչպես եղանակավորող բայերը, ապառնին և այլն, բավարար չեն թվում, doch-ի ներագրող գործառույթն ապահովելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անդրեասյան Գ., 1976: Գերմաներեն-Հայերեն բառարան, Երևան, 1976:
2. Քելման Դ. Աշխարհի չափագրումը, Երևան, ԻԿԿ, 2010:
3. Ֆալլադա Հ., Այն ժամանակ մեր տանը, Երևան 1981:
4. Հիլդենրաթ Է., Վերջին մտքի հեքիաթը, Երևան, Նաիրի, Հ.1, 1993:
5. Böll H., Ansichten eines Clowns, dtv, München, 1997.
6. Ende M., Momo, Stuttgart, Wien, 1973.
7. Fallada H., Damals bei uns daheim, «Просвещение», Москва, Ленинград, 1965.
8. Hilsenrath E., Das Märchen vom letzten Gedanken“, München, Wilhelm Heyne Verlag, 1989.
9. Kästner E., Das doppelte Lottchen, //Kästner E. Romane für Kinder, Bd II, München Wien, Carl Hanser Verlag 1998, S. 161-254.
10. Kehlmann D., Die Vermessung der Welt, Rohwolt Verlag GmbH, Reinbeck bei Hamburg, 2005.
11. Bastert U. Modalpartikel und Lexikographie. Eine exemplarische Studie zur Darstellbarkeit von *doch* im einsprachigen Wörterbuch. Tübingen (RGL 58), 1985.
12. Bublitz, W. Ausdrucksweisen der Sprechereinstellung im Deutschen und Englischen. Untersuchungen zur Syntax, Semantik und Pragmatik der deutschen Modalpartikeln und Vergewisserungsfragen und ihrer englischen Entsprechungen. Tübingen /LA 57/, Niemayer, 1978,
13. Burkhardt, A. Abtönungspartikeln als Mittel des Vollzugs präsuppositionaler Akte. // Zeitschrift für germanistische Linguistik 10-2, 1982b, S. 85-109.
14. Doherty M. «Doch». // Deutsch als Fremdsprache 3, 1982, S. 174-178.
15. Helbig G., Lexikon deutscher Partikeln, Leipzig, 1988.
16. Franck D., Grammatik und Konversation. Scriptor Verlag, Königstein/Ts., 1980.

17. Lütten J., Untersuchungen zur Leistung der Partikeln in der gesprochenen deutschen Sprache. Göppingen, Kümmerle (Göppinger Arbeiten zur Germanistik 218), 1977.
18. Hentschel E., Funktion und Geschichte deutscher Partikeln. Ja, doch, halt und eben. Reihe germanistische Linguistik, Tübingen, Niemeyer, 1986
19. Weydt H., Abtönungspartikel. Die deutschen Modalwörter und ihre französischen Entsprechungen. Bad Homburg, 1969.
20. Weydt H./Hentschel E. Kleines Abtönungswörterbuch // Weydt, H. (Hg.), 1983, S. 3-24.
21. Wolski W. Partikellexikographie. Ein Beitrag zur praktischen Lexikologie, Tübingen, 1986.

**КАРИНЕ ОГАНЕСЯН - СЕМАНТИКО-ФУНКЦИОНАЛЬНЫЕ
ОСОБЕННОСТИ МОДАЛЬНОЙ ЧАСТИЦЫ DOCH И ВОЗМОЖНЫЕ
ВАРИАНТЫ ЕЕ ПЕРЕВОДА**

Одним из многочисленных средств выражения модальности в немецком языке являются модальные частицы. Наряду с наречиями, наклонением глагола и отрицанием они служат для выражения отношения говорящего к смыслу предложения.

В статье обсуждаются семантико-функциональные особенности модальной частицы *doch*, ее проявления в разных типах предложений. Во всех употреблениях *doch* есть элемент противоположности, контрастности. Модальная частица *doch* соотносит положительную оценку говорящего с возможным противоположным восприятием смысла предложения со стороны реципиента.

KARINE HOVHANNISYAN - THE SEMANTIC AND THE FUNCTIONAL CHARACTERISTICS OF THE DOCH MP AND POSSIBLE WAYS OF ITS TRANSLATION

Modal particles are one of the various ways of expressing modality in German. MPs, as well as adverbs and the grammatical category of mood, reflect the attitude of the speaker towards the meaning of the sentence.

The article discusses the semantic and the functional characteristics of the *doch* MP, its detection in different types of sentences and possible ways of its translation. In all the *doch* usages a definite contrasting element may be signed out, which supposes the opposite meaning of the sentence.

Doch MP correlates the positive attitude of the speaker with the possible negative perception of the meaning expressed in the sentence by the recipient.

**ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
ՏԵՔՍՏԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

ՀԱՄԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ տեքստի տեսակ, տեքստի գործառույթ. տեղեկատվական և կոչական, տեքստերի դասկարգում, տեքստակազմական վերլուծություն

Տեղեկատվական և հաղորակցական տեխնոլոգիաների արագ զարգացման զուգընթաց նոր հնարավորություններ են ստեղծվում աշխատանք փնտրողների համար, ինչպես նաև նոր պահանջներ են ներկայացվում ձեռնարկությունների կողմից հայցորդներին: Այդ պահանջները ամրագրվում են թափուր տեղի հայտարարություններում:

Ձեռնարկությունների կողմից ներկայացվող պահանջները արտացոլում են տվյալ հասարակության նորմերն ու արժեքները, երևան են գալիս հասարակության և աշխատաշուկայի զարգացումները, աշխատանքային հարաբերությունները, նպատակները և սպասումները: Այդ գործընթացը պահանջում է համապատասխան լեզվական արտահայտություն, որը <խախտում է բնական լեզվի սահմանները> ստեղծելով յուրօրինակ մեթալեզվական նշանների համակարգ, որտեղ բառերը ստանում են նոր իմաստ ու արժեք:

Միջազգայնացման և գլոբալիզացիայի դարաշրջանում նեղ մասնագիտական գիտելիքները այլևս չեն կարող միակ նախապայմանը հանդիսանալ աշխատանք գտնելու համար: Կարևորվում են այլ հատկանիշներ, որոնք պայմանավորված չեն միայն զուտ մասնագիտական իրազեկվածությամբ: Գործատուները փնտրում են իրազեկ աշխատողների, որոնց առջև դրվում են բարձր մասնագիտական և վերջին տարիներին նաև ոչ մասնագիտական պահանջներ: Քաղաքատնտեսական և հասարակական բարեփոխումները ազդում են հայտարարությունների թե կառուցվածքի և թե իմաստի վրա: Այսպիսով՝ հայտարարությունները նոր տեսք ու բովանդակություն են ստանում ու նոր գործառույթ են կատարում:

Աշխատատեղի հայտարարությունները դարձել են ժամանակակից աշխարհում մեր առօրյայի անբաժանելի մասը: Հայտարարությունների լեզվի հետազոտման արդիականությունը բացատրվում է նրանով, որ մեր մրցակցային դարում մենք ստիպված ենք լինում հաճախ ոչ միայն աշխատանք, այլև աշխատող փնտրել: Վերջինիս համար դիմում ենք հայտարարությունների օգնությանը:

Գործատուի հայտարարության տեքստից է կախված, թե նա ինչ կոնտինգենտից ստիպված կլինի իր ապագա աշխատողին ընտրել, ուստի համապատասխան տեքստի ձևակերպումը շատ կարևորվում է: Նման տեքստերի ձևակերպումը ոչ միայն պարզապես անհրաժեշտ հմտություններ է պահանջում, այլև ժամանակի ընթացքում ձևավորում և թելադրում է պահանջներ ու կանոններ:

Թափուր տեղի համար հայտարարությունները որպես լեզվաբանական հետազոտման առարկա հայկական լազվաբանության մեջ չեն ուսումնասիրվել: Գոյություն չունեն նաև աշխատատեղի հայտարարության տեքստի գործառույթներին, տեքստակազմական և լեզվական առանձնահատկություններին նվիրված գիտական հետազոտություններ ոչ լեզվաբանությունից, ոչ էլ հաղորդակցական տեսություններից: Չնայած վերջին տարիներին տեքստի վերլուծությունը գրավում է երիտասարդ հայ գիտնականների ուշադրությունը, սակայն տեքստի լեզվագործաբանական ուսումնասիրության առանցքում գտնվում է մեծ մասամբ գրական տեքստը կամ գովազդային տեքստը:

Ներկայումս գոյություն չունեն գիտական կադապարներ տեքստի այս տեսակը ճշգրիտ վերլուծության ենթարկելու համար: Այդ պատճառով էլ աշխատատեղի հայտարարության վերլուծությունը որպես հաղորդակցության նոր ձև հայտնվել է մեր ուշադրության կենտրոնում:

Ուսումնասիրության նպատակն է թափուր տեղի համար հայտարարությունը որպես տեքստ դիտարկելով, ներկայացնել դրա կառուցվածքային, ոճական գործառական, հնարքները և առանձնահատկությունները: Վերջին շրջանում մեծացել է լեզվաբանների հետաքրքրությունը տեքստերի դասակարգման խնդրի հանդեպ, ինչպես նաև նրանց հետազոտմանը գործաբանական լեզվաբանության տեսանկյունից: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ 20-րդ դարի երկրորդ կեսից լեզվաբանության մեջ ի հայտ եկած և զարգացող լեզվաբանական նոր գիտակարգը՝ տեքստի լեզվաբանությունը, դարձավ լեզվաբանության առանձին բաժին: Տեքստի լեզվաբանության հիմնահարցը՝ տեքստի տեսակների նկարագրությունն է և տեքստերի դասակարգումը: Ինչպես վկայում է մասնագիտական գրականությունը, տեքստերի դասակարգումը դյուրին խնդիր չէ լեզվաբանների համար:

Մեր ուսումնասիրության համար հետաքրքրական է հատկապես գերմանական տեքստի լեզվաբանությունը, որտեղ տեքստերի դասակարգմանը առավել մեծ ուշադրություն է դարձվում: Նշենք, որ այսօր գերմանական մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն տեքստի տեսակների սահմանման տարբեր մոտեցումներ և դեռևս չի ստեղծվել հետազոտման միասնական մեթոդաբանություն:

Տեքստերի դասակարգման խնդիրներով զբաղվել են գերմանացի լեզվաբաններ՝ Բ. Բրինքերը, Հ. Հայնեմանը, Վ. Դրեսսլերը, Բ. Գանզելը, Բ. Ադամչիկը և այլոք: Տեքստի լեզվաբանության տեսությամբ զբաղվող գիտնականները իրենց աշխատություններում արտահայտել են տարբեր մոտեցումներ դասակարգման խնդրի վերաբերյալ:⁹⁷ Սակայն գոյություն չունի տեքստի տեսակների դասակարգման միասնական մոտեցում: Ցանկացած փորձ դասակարգել տեքստի տեսակները, խնդիրներ են առաջացնում տեքստի հիմնահարցերով զբաղվող տեսաբանների համար, քանի որ խոսքային և տեքստային ժանրերի և թեմաների բազմազանությունը անսպառ է և հնարավոր չէ սպառիչ կերպով ներկայացնել տեքստերի դասակարգումը: Տեքստերի դասակարգման հիմնահարցը, գտնվելով լեզվաբանների մշտական ուշադրության կենտրոնում, համարվում է մինչ օրս խնդրահարույց:

Լեզվաբանների փորձերը, տարբեր տեքստեր ըստ տեսակների “Sorten”, խմբերի “Klassen” կամ տիպերի “Typen” » դասակարգելու, առաջացել են այն անհարաժեշտությունից, որ տեքստերը և կառուցվածքային առանձնահատկությունները առաջ են գալիս հաղորդակցական տարբեր խնդիրներ հաղթահարելու նպատակով:

Գերմանական լեզվաբանական եզրույթաբանությունը բազմաբովանդակ է (*Textgruppe, Textklasse, Textgattung, Textart, Textbereich, Texttyp*) արտացոլում է այս խնդրի վերաբերյալ բազմակարծությունը, որն էլ կանխորոշում է տեքստերի դասակարգման տարբեր պնդումների բազմազանությունը: Տարբեր մոտեցումներ հետևյալ հասկացությունների *տեքստ, տիպ, տեսակ, ժանր, խումբ* սահմանելու համար անհուսալի են, նույնիսկ մասնագիտական գրականության մեջ դրանց կիրառման առումով:

“Textsorte” հասկացությունը, որը հատկապես կարևոր է մեր ուսումնասիրության համար կիրառվում է 20-րդ դարի 70-ական թվականներից ի վեր: Ընդհանուր առմամբ տեքստի տեսակ (Textsorte) հասկացությունը ընկալվում է որպես, լեզվաբանական և գործաբանական առանձնահատկություններով օժտված տեքստ: Ժամանակակից գիտության մեջ գոյություն չունի տեքստի տեսակ (Textsorte) հասկացության միայն մեկ սահմանում: Ներկայացնենք Բ. Բրինքերի տեքստի տեսակի (Textsorte) սահմանումը. «Տեքստի տեսակները հանդիսանում են որպես նմուշ բարդ լեզվական գործողությունները նկարագրելու համար, և առանձնանում են համատեքստային (իրավիճակային), հաղորդակցական-գործառական և կառուցվածքային (քերականական և թեմատիկ) առանձնահատկություններով: Զարգանալով պատմականորեն

⁹⁷ Համ. Krause 2000

լեզվական հասարակությունում, տեքստի տեսակները դարձել են լեզվակիրների առօրյա գիտելիքը. դրանք ունեն թերևս սահմանափակ ազդեցություն, բայց և այնպես հեշտացնում են հաղորդակցման գործընթացը, տալով հաղորդակցվողներին հստակ դիրքորոշում տեքստի ստեղծման և ընկալման համար»:⁹⁸ „Textsorten sind konventionell geltende Muster für komplexe sprachliche Handlungen und lassen sich als jeweils typische Verbindungen von kontextuellen (situativen), kommunikativfunktionalen und strukturellen (grammatischen und thematischen) Merkmalen beschrieben. Sie haben sich in der Sprachgemeinschaft historisch entwickelt und gehören zum Alltagswissen der Sprachteilhaber; sie besitzen zwar eine normierende Wirkung, erleichtern aber zugleich den kommunikativen Umgang, indem sie den Kommunizierenden mehr oder weniger feste Orientierungen für die Produktion und Rezeption von Texten geben.“ [Brinker 2000: 124]

Աշխատատեղի հայտարարությունները որպես տեքստ վերլուծելիս հիմնվել ենք Ք. Բրինքերի տեքստաբանական աշխատությունների վրա:

Գործաբանական լեզվաբանության առաջատար ներկայացուցիչ գերմանացի գիտնական Ք. Բրինքերը տեքստի տեսակի ավելի ճշգրիտ բնորոշման համար ներմուծում է համատեքստային, տեքստակազմական և գործառական չափանիշներ, նշելով, որ տեքստի գործառույթը տեքստի հիմնական հատկանիշներից է և կարևոր չափանիշ՝ տեքստերը ըստ խմբերի դասակարգելու համար: ⁹⁹ Ըստ Բրինքերի տեքստում խոսողական-կատարողական¹⁰⁰ ակտին համապատասխանում է տեքստի գործառույթը, ընդ որում տեքստերը կարող են պարունակել մի քանի խոսողական-կատարողական գործողություններ, սակայն միայն մեկն է բնորոշում հաղորդակցության իմաստը, մոդուսը, այսինքն խոսողի վերաբերմունքը «ասվածի» նկատմամբ: Այդ գերիշխող գործառույթը սահմանվում է որպես տեքստի գործառույթ: Տեքստի գործառույթի հիման վրա գիտնականը տարբերակում է տեքստի տեսակների հինգ խումբ. լեզվական կարգեր, որոնք համախմբում են այլ տեքստերի տեսակներ:

⁹⁸ Թարգմանությունը արված է հոդվածագրի կողմից

⁹⁹ “Vor dem Hintergrund des oben skizzierten Textsortenbegriffs handlungstheoretischer Prägung betrachten wir die Textfunktion als Basiskriterium zur Differenzierung von Textsorten. Dieses Kriterium erscheint- sprachtheoretisch gesehen- als ausreichend begründet, und es bestimmt auch in hohem Maße unsere alltagssprachliche Textklassifikation.“ (Brinker 1985: 125)

¹⁰⁰ Գերմաներեն illokutiv եզրույթի հայերեն համարժեքը՝ խոսողական-կատարողական վերցված է Ա. Նազարյանի «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարանից».

Այսպիսով՝ տեքստը, ընդհանուր առմամբ, կատարում է հինգ գործառույթ. տեղեկատվական (Informationsfunktion), կոչական (Appellfunktion), պարտավորությունների ստանձնում գործառույթը (Obligationsfunktion), շփում ապահովող գործառույթ (Kontaktfunktion), դեկլարատիվ (Deklarationsfunktion):

Տեղեկատվական գործառույթը իրականացվում է, երբ նոր գիտելիք է փոխանցվում կամ ձեռքբերվում, կամ էլ ունկնդրողը տեղեկացվում է ինչ- որ մի իրավիճակի մասին: Կոչական տեքստերը ազդում են ընթերցողի պահվածքի կամ կարծիքի վրա: Պարտավորությունների ստանձնում գործառույթը իրականացվում է, երբ հասցեագրողը իր պատրաստակամությունն է արտահայտում ունկնդրողին: Շփում ապահովող տեքստերի օգնությամբ միջանձնապիսի հարաբերություններ է ստեղծվում, իսկ դեկլարատիվ գործառույթը ունկնդրողի համար մի նոր իրականություն է ստեղծում: Գործողությունների շրջանակը և հաղորդակցական իրավիճակը կարևոր դեր են կատարում տեքստի գործառույթը որոշելու համար: Բրինքերը տալիս է « *տեքստի գործառույթ* » եզրույթի սահմանումը: «Տեքստի գործառույթ » եզրույթը նկարագրում է տեքստ կազմողի հաղորդակցական նպատակը տվյալ հասարակությունում ընդունված լեզվական միջոցների օգնությամբ: »¹⁰¹ Der Terminus „Textfunktion“ bezeichnet die im Text mit bestimmten, konventionell geltenden, d.h. in der Kommunikationsgemeinschaft verbindlich festgelegten Mitteln ausgedrückte Kommunikationsabsicht des Emittenten.” [Brinker 1985:86]

Համաձայն Բրինքերի տեսության հայտարարության տեքստը տեղեկատվական և կոչական տեքստի տեսակ է: Աշխատատեղի հայտարարությունները կատարում են տարբեր գործառույթներ:

Համաձայն այս պնդմանը, թափուր տեղի հայտարարության առաջին մասը տեղեկատվական բնույթ ունի, իսկ գլխավոր մասում իշխում է հորդորի կամ էլ կոչի խոսքային ակտը: Սա նշանակում է գործատուն դրդում է աշխատանք փնտրողին դիմել գործողության և շարժվել թվարկված աշխատանքային պայմաններին համաձայն:

Ի նկատի ունենալով, որ առաջին մասում տեղեկատվություն է տրվում գործատուի և նրա գործունեության մասին, կարող ենք պնդել, որ հայտարարություն կազմողը հայտնում է մեզ, թե ինչի մասին է խոսքը, ինչ է ներկայացվում: Այդ պատճառով առաջին մասը կրում է գլխավորապես տեղեկատվական գործառույթ: Երբ ուսումնասիրում ենք հայտարարության բովանդակությունը կարող ենք ասել, որ հայտարարությունը ոչ միայն տեղեկատվություն է փոխանցում, այսինքն, «հայտնում» թափուր տեղի մասին,

¹⁰¹ Թարգմանությունը արված է հոդվածագրի կողմից

նկարագրելով տվյալ ձեռնարկությունը. «*Auch in der dynamischen Automobilzulieferindustrie kommt es nicht allzu häufig vor, dass ein Unternehmen im Lauf von 10 Jahren seinen Umsatz vervielfacht...*». ¹⁰² այլ և կապ է հաստատում տեքստ կազմողի և տեքստն ունկնդրողի միջև, կատարելով կապի հաստատման գործառույթ: Հայտարարության մեջ կոչ է արվում նաև դիմել այս կամ այն թափուր տեղի համար: Այսպիսով, ունկնդրողի մոտ կատարելագործման և պարտավորվածության զգացում է առաջանում. «*Ich verpflichte mich, die Handlung X zu tun*». ¹⁰³ Իսկ երբ ապագային ուղղված խոստումներ են տրվում գործատուի կողմից, առաջանում է նաև կատարելագործվելու ցանկություն. «*Wir sichern Ihnen ein eigenständiges Arbeiten...und ein teamorientiertes Betriebsklima...*» (Obligationsfunktion)

Հաջորդիվ մեկ այլ նպատակ ենք տեսնում տեքստ կազմողի կողմից, երբ նա նշում է նախապայմաններ՝ անձնական հատկանիշներ կամ մասնագիտական որակավորումներ աշխատանքը ստանձնելու համար: Ինչպես նշեցինք, հասցեագրողը սահմանափակվում է հորդորման ուղիով և ազդում է աշխատանք փնտրողի վրա: Եվ քանի որ այստեղ հորդորման խոսողական խմբի առանձնահատկություններ են ի հայտ գալիս, ակնհայտ է, որ այս հատվածում տեքստը կոչական գործառույթի հատկանիշներ է պարունակում: Կոչական գործառույթը երևում է, երբ հայտարարություն կազմողը գործողությունների է մղում աշխատանք փնտրողին, ազդում է նրա կարծիքի կամ պահվածքի վրա: Որպես լեզվական առանձնահատկություններ կոչական տեքստերի համար Բրինքերը նշում է հրամայական նախադասություններ, անորոշ բայերով արտահայտություններ, պայմանական բարդ ստորադասական նախադասություններ. «*Wenn Sie diese Herausforderung in einem stark international geprägten Umfeld reizt, senden Sie bitte Ihre vollständigen Bewerbungsunterlagen an unser Personalmanagement.*»

Որպեսզի որոշվի ուսումնասիրվող հայտարարությունների գերիշխող գործառույթը, պետք է առաջին հերթին վերծանվի տեքստի գերակա նպատակը:

Տեքստի գործառույթը սպառիչ ներկայացնելու համար, պետք է ուսումնասիրել լեզվական միջոցները, օգտագործված արտահայտությունները և կառուցվածքը: Խոսքային ակտերը կարևոր չափանիշներ են տեքստի գործառույթի և տեքստի նպատակի համար:

Աշխատատեղի հայտարարություններում բովանդակային առումով գերիշխում է կոչի խոսքային ակտը: «*...Dann starten Sie bei einem der führenden*

¹⁰²F.A.Z. Stellenmarkt Online, gesehen am 04.02.2015

¹⁰³ Համ. Brinker (1998) S. 109

Weltmarktanbieter für Medizintechnik durch!, ” ¹⁰⁴ Ակնհայտ է, որ այսպիսի խոսքային ակտերը շարժառիթ են հանդիսանում ունկնդրողի համար արձագանքելու տվյալ հայտարարությանը:

Կոչական գործառույթը իրագործվում է նաև հայտարարություններում առկա հարցական. “ *Haben wir Ihr Interesse geweckt?*”, և հրամայական. “ *....dann senden Sie uns Ihre vollständigen Bewerbungsunterlagen* » նախադասությունների միջոցով: ” Կենտրոնանալով հատկապես հայտարարության բովանդակության վրա. “ *Bewerben Sie sich,Senden Sie bitte Ihre vollständigen Bewerbungsunterlagen* ” , կարող ենք հանգել այն եզրակացության, որ աշխատատեղերի հայտարարություններում որպես գերակա գործառույթ կարելի է համարել կոչական գործառույթը:

Հիմնվելով նշված գործառույթների վրա կազմենք հետևյալ հաղորդակցական ասույթները աշխատատեղի հայտարարությունների համար.

1. Տեղեկատվական
2. Կոչական
3. Համոզելու ¹⁰⁵

Ուսումնասիրության այս մասում կենտրոնանանք տեքստակազմական խնդիրների վրա: Տեքստի լեզվաբանական վերլուծությունը՝ տեքստակազմական վերլուծությունն է, այն է, ընդհանուր կանոնների և պայմանների ուսումնասիրությունը:

Նախադասությունների հերթականությունը կարող է տեքստ համարվել, եթե այն բովանդակություն և թեմատիկ կապակցություն ունի: Տեքստի հասկացության սպառիչ համապարփակ սահմանում, որը կարող է ընդունվել բոլորի կողմից, ըստ Բրինքերի գոյություն չունի: (1997:12-15)

Աշխատատեղի հայտարարության տեքստակազմական հիմնական առանձնահատկություններն այն են, որ տեքստի թեման առկա է արդեն իսկ աշխատանքի հայտարարության ձևակերպման մեջ:

Յուրաքանչյուր հայտարարության հիմքում կա բաժանում թեմատիկ մասերի: Այս հանգամանքը չպետք է աչքաթող արվի: Քանի որ աշխատանքի հայտարարությունները տարբերվում են ուրիշ բնագավառների հայտարարություններից նաև այս համգամանքով:

¹⁰⁴ F.A.Z. Stellenmarkt Online gesehen am 02.02.2015

¹⁰⁵ Աշխատատեղի հայտարարությունը հիմնված է նաև համոզելու(Persuasion) գործառույթի վրա: Եթե պահանջվող մասնագետի կարիք չլինի, համոզելու կարիք ևս չենք ունենա և այս գործոնը ավելորդ կդառնա, ինչպես նաև տնտեսական գովազդի պարագայում:

Աշխատատեղի հայտարարությունները կարելի է բաժանել հետևյալ հաստատումների:

« Ո՞վ » է փնտրում « ու՞մ » և « ի՞նչ կերպ »:

« Ո՞վ »-ը ձեռնարկությունն է, իր ներկայանալու ձևը, « ո՞ւմ »-ը աշխատանք փնտրողի անձնական և մասնագիտական որակավորումներն են, « ի՞նչ կերպ »-ը ցույց է տալիս կապը աշխատանք փնտրողի հետ: Այս երեք հիմնական բովանդակությունները կարող են լրացվել ոչ հիմնական բաղադրիչներով: Իսկ ի՞նչու աշխատանք փնտրողը պետք է դիմի հենց այս ձեռնարկությանը, և ինչու՞ է տվյալ ձեռնարկությանը անհրաժեշտ նոր աշխատակից և ի՞նչ նպատակով: Այսպիսով, ունենք հինգ թեմատիկ բաղադրիչներ, որը ստորև ներկայացնում ենք աղյուսակի տեսքով: Պարտադիր մասերը նշել ենք «Պ» տառով, իսկ «Լ» տառով՝ լրացուցիչները:

Պ	Ո՞վ	Ձեռնարկություն
Պ	Ու՞մ	Մասնագիտական որակավորումներ, անձնական հատկանիշներ
Պ	Ի՞նչպես	Ինչպես է գտել տվյալ ձեռնարկությունը հավակնորդին, ինչպես կապ հաստատել հավակնորդի հետ
Լ	Ի՞նչու Գործառույթ տեսանկյունից	Աշխատավարձ, աշխատանքային մթնոլորտը ձեռնարկությունում, կարիերայի հնարավորություններ, կատարելագործում
Լ	Ի՞նչ նպատակով	Պարզաբանում. իսկ ի՞նչու է պետք նոր աշխատող

Այսպիսով, աշխատատեղի հայտարարությունները ունեն երեք բովանդակային մաս.

1. Ձեռնարկության ընդարձակ նկարագիր
2. Մասնագիտական որակավորումներ, որոնք ներառում են նաև անձի գործնական հմտությունները:
3. Հասցե և կոնտակտային անձ:

Տեքստի հիմնական մասին հաջորդում է պարտադիր վերջնամասը: Մուտքը պարտադիր չէ: Տեքստի գործառույթը և թեմայի զարգացումը նկարագրական է, չնայած գերակա կոչական և տեղեկատվական գործառույթի: Տեքստի կազմությունը ամրագրված է հենց մակրոստրուկտուրայում:

Աշխատատեղի հայտարարության ներակա թեմայի մի մաս է կազմում ունկնդրողը, երբ նա հայտարարությունը ընկալում է որպես անմիջական զրույց իր

հետ և համարում է իրեն այդ զրույցի անմիջական մասնակից: Ընկալելով տեքստի բովանդակությունը, հասցեատերը մտնում է գործաբանական հարաբերությունների մեջ, քանի որ տեքստի բովանդակությունը ազդեցություն է գործում կարդացողի վրա, մղում գործողությունների, այդ թվում նաև կատարելագործվելու, և զարգացնելու մասնագիտական կարողությունները:

Ամփոփելով նշենք, որ հայտարարության տեքստը հաղորդակցություն է, ունի հասցեատեր և հասցեագրող, և առկա է այն նպատակը, որը կապում է նրանց: Աշխատատեղի հայտարարության հիմնական նպատակն է՝ իրազեկել ընթերցողներին թափուր տեղի առկայության մասին և մղել ընթերցողներին արձագանքման: Ուստի, այս տեքստի տեսակը բնորոշվում է իմաստային միասնականությամբ, ամբողջականությամբ և կապակցվածությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Adamzik, Kirsten 1991: Forschungsstrategien im Bereiche der Textsortenlinguistik. In: ZfG N.F. 1, 99-109
2. Busse, Dietrich 1992: Textinterpretation. Sprachtheoretische Grundlagen der explikativen Semantik. Westdeutscher Verlag. Opladen.
3. Brinker, Klaus 1983: Textfunktionen. Ansätze zu ihrer Beschreibung. In ZGL 11, 127-148
4. Brinker, Klaus 2000: Linguistische Textanalyse. Berlin.
5. Brinker, Klaus 1992: Linguistische Textanalyse. Erich Schmidt Berlin.
6. Gansel, Christina/ Frank, Jürgens 2007: Textlinguistik und Textgrammatik. Vandenhock&Ruprecht.
7. Grosse, Ernst Ulrich 1976: Text und Kommunikation. Eine linguistische Einführung in die Funktion der Texte. Stuttgart.
8. Hall, Anja 2002: „Multimedia/Internet/E-Business-neue Erwerbstätigkeiten in Stellenanzeigen“. In: Berufsbildung in Wissenschaft und Praxis 31: 37-42.
9. Handlos, Andrea 1995: Stellenanzeigen im Wertewandel. Wie Unternehmen um Mitarbeiter werben. Kommunikation & Gesellschaft in Theorie und Praxis, Verlag Reinhard Fischer, München.

10. Krause, Wolf-Dieter 2000: Zum Begriff der Textsorte. In: Textsorten: kommunikationslinguistische und konfrontative Aspekte/Wolf-Dieter Krause(Hrsg.)Sprache- System und Tätigkeit.- Band33.ВFrankfurt/Main;Berlin; Bern;
11. Sandig, Barbara. 1972: Zur Differenzierung gebrauchssprachlicher Textsorten im Deutschen / Textsorten. Differenzierungskriterien aus linguistischer Sicht. Frankfurt (Main).
12. Novak, Popovic 1976: Die Sprache der Stellenanzeigen in kommunikativer, persuasiver und sozialer Sicht. Hamburg.
13. Бахтин Михаил Михайлович.М.Проблема речевых жанров.Эстетика словесного творчества. М., 1979.
14. Гальперин, Илья Романович. Текст как объект лингвистического исследования. М. 2006.
15. Гальперин, Илья Романович. О понятии “текст”//”Вопросы языкознания”.-1974.-№6.
16. <http://www.faz.net/aktuell/>

АСМИК КАЗАРЯН - ФУНКЦИИ ТЕКСТА ОБЪЯВЛЕНИЯ О ПРИЕМЕ НА РАБОТУ В СИСТЕМЕ ТИПОЛОГИИ ТЕКСТОВ

Настоящая статья посвящена исследованию текста “объявления о приеме на работу” и проблемам типологии текстов. Целью статьи является анализ функций вида текста “объявления о приеме на работу” в системе текстовой классификации и определение специфики данного типа текста. Для достижения поставленной цели мы опираемся на концепцию немецкого лингвиста Клауса Бринкера.

HASMIK GHAZARYAN - FUNCTIONS OF THE TEXT “RECRUITMENT ADVERTISEMENTS” IN THE SYSTEM OF TEXT TYPOLOGY

The article is dedicated to the investigation of the text “recruitment advertisements” and the problem of text typology. It aims to analyze the functions of the text type “recruitment announcements” in the system of text classification, the definition of the peculiarities of this text type. To achieve this aim we turn to the concept offered by German linguist Klaus Brinker.

PRÄFIXVERBEN ODER VERBALKOMPOSITA: STRUKTUR UND FUNKTION
IM DEUTSCHEN UND ARMENISCHEN

ԷԼԻՉԱ ՂԱԶԱՐՅԱՆ
ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հիմնաբաներ՝ Präfixverb, Partikelverb, Betonung, trennbar, untrennbar, semantische Modifikation, syntaktische Modifikation

1. Einleitung

Die Präfigierung ist eines der produktivsten Wortbildungsmittel der indoeuropäischen Sprachen. Als Wortbildungsverfahren spielt sie sowohl im Deutschen als auch im Armenischen eine große Rolle bei der Bereicherung des Wortschatzes und ist von großem Interesse für viele Linguisten. Es gibt eine Reihe der sogenannten Verbpräfixe, deren Subklasse in dem Morphemensystem weitgehende Diskussionen erregt. Das Thema der Diskussion ist, wann die Erstglieder in Verben mit oben erwähnten Konstituenten als Präfixe gelten und wann diese Verbbildungen als Komposita angesehen werden sollen.

Grundsätzlich geht man im Deutschen davon aus, dass die zusammengesetzten Verben mit Hauptakzent auf dem Erstglied wie *'umgraben*, *'überordnen*, *'übersetzen* oder *'untergehen* als Verbalkomposita gelten (vgl. Fritz 2005, S. 38). Semantisch verursachen diese Elemente zwar vielfältige quantitative und qualitative Verschiebungen, die wörtliche Grundbedeutung des Verbs aber bleibt dabei erhalten (*'umgraben* ist eine Art von *graben*, *'übersetzen* bedeutet eine Art von Ortsveränderung von konkreten Objekten, wie *setzen*). Beim Hauptakzent auf dem Zweitglied (Verbstamm) geht dagegen die wörtliche Grundbedeutung verloren: Das *Übersetzen* eines Textes bedeutet keine Ortsveränderung eines konkreten Objektes.

Das Ziel des vorliegenden Beitrags ist die Beschreibung der verbalen Zusammensetzungen mit den Erstelementen *durch-*, *um-*, *über-*, *unter-*, das ambige Vorkommen dieser Elemente, dementsprechend Bedeutungsunterschiede der äußerlich fast gleichen komplexen Verben und deren Ausdrucksmittel im Armenischen.

In den folgenden Beispielen zeigen sich nun im Vergleich mit dem Armenischen interessante Korrelationen¹⁰⁶.

(1)	a.	d urchbraten	լավ lav gut	տապակ-ել tapak-el braten-INF
	b.	umgraben	նորից noric wiederum	փոր-ել por-el graben-INF
(2)	a.	durchl ében	ապրում-ներ aprum-ner Erlebnis-PL	ունեն-ալ unen-al haben-INF
	b.	um ármen	գրկ-ել grk-el Schoß- INF	

In den Beispielen in (1) wird die im Deutschen durch ein betontes Erstglied ausgedrückte semantische Modifikation gewährleistet, im Armenischen durch ein Adverb (freies Wort). In den Beispielen in (2) wird dagegen die Verschiebung von der wörtlichen zur metaphorischen Bedeutung des Verbs durch die Ersetzung eines einfachen Verbs, durch eine „Nominalisierung“ geleistet. In (2b) wird ein denominales Verb durch Verbindung eines (phonologisch reduzierten) Substantivs mit Verbsuffix (im Beispiel Infinitivsuffix) gebildet.

2. “Präfix” oder “Partikel”?

Im Zusammenhang mit den Wortbildungselementen *durch-*, *um-*, *über-*, *unter-* ist das Problem einer allgemeingültigen und widerspruchsfreien Terminologie bzw. Definition aufgeworfen worden. Von verschiedenen Grammatikern werden die Erstglieder der Verben unterschiedlich benannt, wie etwa: Präfixe, Halbpräfixe, Partikeln, ambivalente Präfixe oder Kompositionsglieder, Präposition-Präfixe. Die Uneinheitlichkeit entsteht aus der Fähigkeit dieser Elemente, als trennbare und/oder als untrennbare Wortbestandteile in Verbindung mit Verben aufzutreten. Die Duden Grammatik unterscheidet Präfixbildungen (Präfixverben) und Verbindungen mit Verbpartikel (Partikelverben) (vgl. Duden, 2005, S. 452). Präfixverben sind auf dem Verb betont (*unterschr'eiben*), Partikelverben - auf der Partikel (*'umwerfen*). Diese Akzentbesonderheit führt manchmal zu Gebrauchsunsicherheit, weil die Präfixverben leicht mit Partikelverben zu verwechseln sind. Die meisten Grundverben verbinden

¹⁰⁶ Transliteration des Armenischen nach dem Hübschmann-Benveniste-Meillet System, Glossierung nach den Leipzig Glossing Rules

sich entweder mit einem bestimmten Präfix oder mit der gleichlautenden Verbpartikel, manche aber, sowohl mit dem Präfix als auch mit der Verbpartikel. Nach der *Deutschen Grammatik* von J. Grimm werden komplexe Verben entweder durch Zusammensetzung oder durch Ableitung gebildet: "Ableitung heißt die zwischen Wurzel und Flexion eingeschaltete, an sich selbst dunkle Mehrung des Wortes, kraft welcher der Begriff der Wurzel weiter geleitet und bestimmt wird" (vgl. Grimm, 1826, S. 89). Und "Zusammensetzung (compositio) ist das Aneinanderfügen zweier deutlicher Wörter" (vgl. Grimm, 1826, S. 404). Das heißt, die Erstglieder abgeleiteter Verben sind Präfixe und die der zusammengesetzten Verben sind Partikeln. Den wesentlichen Unterschied zwischen den Elementen *durch-*, *um-*, *über-*, *unter-* und solchen wie *be-*, *er-*, *zer-* u.ä. könnte man mit der Tatsache begründen, dass die ersten neben gleichlautenden frei vorkommenden Morphemen (Präposition und Adverb) existieren. Eine Unterscheidung zwischen dem Präfix und der Partikel ist eben deshalb sinnvoll, weil die meisten Partikeln mit den separaten lexikalischen Einheiten korrespondieren - d.h. die Partikel ist ein freies Morphem, das auch allein, selbständig vorkommt (als Präposition oder Adverb), während das Präfix nur gebunden vorkommt.

Auch aufgrund ihrer historischen Entwicklung haben die Elemente *durch-*, *über-*, *um-*, *unter-* eine Sonderstellung und müssen von den untrennbaren Präfixen *be-*, *er-*, *zer-* u.ä. unterschieden werden. Diese Elemente gehen auf lokale Adverbien zurück, die als zunächst selbständige Redeteile existierten und später vermutlich durch häufigen kombinatorischen Gebrauch mit bestimmten Wörtern zu diesen Worteinheiten verschmolzen sind. Die heutigen untrennbaren Präfixe *be-*, *er-*, *zer-* etc. gehen auch auf ursprünglich freie Morpheme zurück, sind jedoch mit der verbalen Basis fest verschmolzen und können ausschließlich mit dieser gebunden verwendet werden. Die Elemente *durch-*, *über-*, *um-*, *unter-* hingegen treten in Verbindung mit der verbalen Basis, sowohl in trennbarer als auch untrennbarer Form auf. In der vorliegenden Arbeit werden die trennbaren Elemente als Partikeln, die untrennbaren als Präfixe und die Verbalzusammensetzungen mit diesen Elementen als Partikelverben bzw. Präfixverben bezeichnet. Mit der begrifflichen Schwierigkeit einer klaren Unterscheidung zwischen der Partikel und dem Präfix sowie einer terminologischen Identifizierung als Partikelverb geht die Schwierigkeit einher, Bildungen wie *durchführen*, *überwintern* eindeutig zu einer der Hauptwortbildungsarten bzw. -typen zuzuordnen. Als solche gelten die Derivation (die Präfigierung, Suffigierung etc.), die Komposition und die Konversion. So wird im Zusammenhang mit Partikelverben oft eine Komposition angenommen und somit jeweils ein Kompositum identifiziert. Eine Partikelzusammensetzung wird als Ergebnis

des Kompositionsvorgangs angesehen: "als Ergebnis des Wortbildungsvorgangs" und als "ein sprachlicher Ausdruck, der mindestens aus zwei frei vorkommenden Morphemen oder Morphemkonstruktionen zusammengesetzt ist" (Bußmann 2002, 360 u. 362).

Über die Termini նախածանցավոր բայ[naxacanc'avor bay] -Präfixverb und մասնիկավոր բայ [masnikavor bay] -Partikelverb besteht in der sprachwissenschaftlichen Forschungsliteratur des Armenischen ebenfalls kein Konsens. Manuk Abeghyan ist der Meinung, dass es im Armenischen keine Präfixe gibt, er nennt diese Elemente Erstglieder der Verben und meint, sie seien in der Analogie der Präpositionen und Adverbien der indoeuropäischen Sprachen nur wörtlich ins Armenische übersetzt worden, damit philosophische Texte übersetzt werden können. Aber in der einschlägigen Literatur findet man auch sehr oft die Bezeichnung Präfix. (Dschahukyan, 1980, S. 446, Galstyan 1978, S.210, u.a.).

3. Ausdruck von konkreter und abstrakter Bedeutung

Neben der Betonung als ein formelles Kriterium für den Unterschied zwischen den Partikeln und Präfixen ist auch ein anderes, ein semantisches Kriterium zu nennen: danach wird den trennbaren Varianten das Merkmal "konkret", den untrennbaren das Merkmal "abstrakt" zugewiesen.

Im Folgenden führen wir zwei Beispielsätze an, aus denen der Unterschied des Ausdrucks von konkreter und abstrakter Bedeutung deutlich wird.

(3) a. überwinden (ich überwinde) – հաղթահարել [hahthareh]

Der Mensch ist Etwas, das *überwunden* werden muss: und darum sollst du deine Tugenden lieben, - denn du wirst an ihnen zu Grunde gehn. (Nietzsche, 2005, S. 123)

Մարդ-ը	մի	բան	է,	որ-ը	պետք	է
Mard-ě	mi	ban	ē,	vor-ě	petk	ē
Mensch[SG]-DEF	ein	Ding[SG]	sein[3SG],	dass-DEF	müssen	AUX.3SG

հաղթահար-վի	և	այդ	պատճառ-ով	դու	պետք	է սիր-ես քո
hahth 'ahar-vi	ew	ayd	patčar-ov	du	petk	e sir-es k'o
überwinden-PASS	und	dieser	Grund-SG.INS	du	müssen AUX	lieben-2SG deine

անաքինություն-ներ-ը	այլապես	դու	նրան-ց-ից	կ-կործ-ան-վ-ես:
arak 'inutyun-ner-ě	aylapes	du	nran-c-ic	k-korc-an-v-es
Tugend-PL-DEF	sonst	du	sie PL-ABL COND-verderben-VERBDERV-PASS-2SG	

Das Verb im Relativsatz hat eine abstrakte Bedeutung in dem Sinn, dass *überwinden* praktisch keine gemeinsamen semantischen Merkmale mit dem Verb *winden* 'mit einer Winde auf oder abwärts bewegen, drehen, drehend bewegen, etc' hat. Im Deutschen wird diese "semantische Distanz" durch die Verwendung eines Präfixes ausgedrückt. Im Armenischen wird die Bedeutung durch das Verb հաղթահարել [hałt□aharel, 'überwinden'] ausgedrückt, das in keiner Beziehung zum armenischen Verb պտտել, դիզել [pttel 'drehen', 'wenden'] steht.

(3) b. übertreten (ich trete über) – համոզմունքը փոխել [hamozmunké poxel]
 Man soll in seinem Freunde noch den Feind ehren. Kannst du an deinen
 Freund dicht herantreten, ohne zu ihm *überzutreten*? (Nietzsche, 2005, S. 143)

Ընկեր-ոջ	մեջ	պետք է	մեծար-ել	նաև	թշնամուն:
Ĕnker-o□	me□	petk e	mecar-el	naev	tšnamun.
Freund[SG]-GEN	n	müssen AUX.3SG	ehren INF	auch	Feind\ACC.SG

Արդյոք	դու	կարող ես	քո	ընկեր-ոջ-ը	խիստ
Ardyok	du	karoł es	ko	ĕnker-o□-ĕ	xist
Ob	du	können AUX.2SG	dein	Freund-ACC.SG.DEF	streng

մոտ-են-ալ՝	առանց	նրա	կողմ-ն	անցնել-ու:
mot-en-al	aranc	nra	kołm-n	ancnel-u
nah-VERBDERIV-INF	ohne	sein	Seite-DEF	treten-FUT

In (3b) wird im Deutschen die Partikel *über-* verwendet, um eine Modifikation des Stammes *setzen* zu bewirken, dessen semantische Grundbedeutung der Ortsveränderung erhalten bleibt. Im Armenischen sehen wir, wie das Verb անցնել [ancnel 'treten'] durch eine Präpositionalphrase spezifiziert wird. Ob diese Beobachtungen (z.B. das Merkmal 'konkret' im Deutschen durch trennbare Partikel und im Armenischen immer durch freies Wort) generalisierbar sind, wird die weitere Untersuchung zeigen.

4. Semantische und syntaktische Besonderheiten im Deutschen und im Armenischen

Um das Problem sichtlicher zu machen, haben wir versucht, die oben erwähnten Präfixe bzw. Partikeln im Vergleich mit dem Armenischen zu analysieren. Das erste Merkmal, das die deutschen Präfixe bzw. Partikeln von den armenischen unterscheidet, ist, dass im Armenischen die Erstglieder, wie Abeghyan sie bezeichnet,

nie vom Verbstamm getrennt vorkommen. Ein ähnliches Phänomen ist im Armenischen bei Verbgefügen zu sehen (4), die aber eigentlich keine Präfix- oder Partikelverben sind.

(4) Nach einer Stunde, da kein Schlaf in seine Augen kam, *stand* der Brahmane von neuem *auf*, tat Schritte hin und her, trat vor das Haus, sah den Mond aufgegangen¹⁰⁷.

Մեկ	ժամ	չէր	անցել,	քանի որ	այդպես էլ քուն	չ-իջավ
Mek	žam	č'ēr	anc'el	kani vor	aydpes ēl k'un	č'-i□av
Eine	Stunde	AUX. NEG.PST	passen-PRF	da	so auch	Schlaf NEG-kam

նրա	աչք-եր-ին,	Բրահման-ը	նորից	վեր	կացավ,	ետ ու առաջ
nra	ač'k'-er-in	Brahman-ě	noric'	ver	kac'av	et u ara□
seine	Auge-PL-LOC	Brahman-DEF	wieder	auf	stand	zurück und vor

քայլեց,	տն-ից դուրս	եկավ ու տեսավ,	որ	լուսին-ը	հայտնվել է. ¹⁰⁸
k'aylec',	tn-ic' durs	ekav u tesav	vor	lusin-ě	haytnvel ē.
sritt	Haus-ABL	aus kam und sah	dass	Mond[SG]-DEF	erscheinen-PRF AUX.

Eine der Gebrauchsschwierigkeiten der deutschen Verben mit der Partikel und dem Präfix für einen Armenier besteht darin, dass sie im Armenischen oft keine Äquivalente haben und die Erstglieder nicht immer übersetzt werden. Meistens werden die Präfixverben durch zusätzliche lexikalische Einheiten oder durch ein neues Verb ersetzt, oft aber gehen diese Präfixe einfach verloren.

(5) Da riß Govinda sich los, *umarmte* noch einmal den Freund seiner Jugend...¹⁰⁹.

Այդժամ	Գովինդա-ն	պոկվեց	տեղ-ից, մեկ	անգամ ևս	գրկ-եց
Aydžam	Govinda-n	pokvec'	teł-ic' mek	angam ews	grk-ec'
Diese Zeit	Govnida-DEF	riß-REFL.PST	Platz- ABL	ein mal noch	Schoss-3PAST

¹⁰⁷ Hermann Hesse. Siddhartha-Bilingual edition, German&English. United States of America, 2005, S. 20

¹⁰⁸ Հերմանն Հեսսե. Ճանապարհ դեպի ներս/մանրավեպեր/ թարգմ գերմ Աշոտ Ալեքսանյանի, Երևան <Գրական հայրենիք> 2004, էջ 162

¹⁰⁹ Hermann Hesse. Siddhartha-Bilingual edition, German&English. United States of America, 2005, S. 62

իր	երիտասարդության	ընկեր-ոջ-ը ¹¹⁰ :
ir	eritasardutyān	ēnker-ō-ē.
sein	Jugend-GEN	Freund-GEN.SG.DEF

Durch- gibt die Richtung *durch etwas hindurch* an, z. B. *d'urchblasen, d'urchbohren, d'urchfahren*. Es signalisiert auch, dass etwas Räumliches von einer Seite zur anderen gequert, transportiert wird, z.B. *d'urchregnen, d'urchfallen, d'urchbrausen*. In diesem Falle kann “das Durchquerte” nicht genannt werden, und wir haben mit einer Verbpartikel zu tun, d.h. sie ist getrennt, betont (6).

(6) Es *regnet durch* das Dach. – Es *regnet durch*.

Wenn aber “das Durchquerte” genannt wird, dann steht es im Akkusativ und *durch-* kann in diesen Fällen sowohl untrennbar und unbetont, als auch trennbar und betont sein. Tritt *durch-* in konkreter Bedeutung auf, dann ist es trennbar (7) und in abstrakter Bedeutung untrennbar (8) (*durchdringen, durchbrechen, durchschauen, durchkreuzen, durchziehen*).

(7) Die Mauer ist zu dick, und kein Licht *dringt d'urch*. – konkret

Ցանկապատ-ը շատ հաստ է, և լույս չի ներթափանցում:
C `ankapat-ē šat hast ē ev luyš č `i ner-tapanč `um
Mauer-DEF sehr dick sein-3SG und Licht 3SGNEG.AUX durchdringen

(8) Und das Gefühl der Gegenwart und Gleichzeitigkeit *durchdr'ang* ihn völlig...¹¹¹. – abstrakt

Եվ ներկայի ու միաժամանակության զգացում-ը պաշարեց
Ew nerka-yi u miažamanakut `yan zgac `um-ē pašarec `
Und Gegenwart- GEN und Gleichzeitigkeit Gefühl-DEF
նրան ամբողջովին ¹¹² :
nran amboł `ovin
ihn völlig.

¹¹⁰ Հերմանն Հեսսե. Ճանապարհ դեպի ներս/մանրավեպեր/ թարգմ գերմ Աշոտ Ալեքսանյանի, Երևան <Գրական հայրենիք> 2004, էջ 178

¹¹¹ Hermann Hesse. Siddhartha-Bilingual edition, German&English. United States of America, 2005, S. 210

¹¹² Հերմանն Հեսսե. Ճանապարհ դեպի ներս/մանրավեպեր/ թարգմ գերմ Աշոտ Ալեքսանյանի, Երևան <Գրական հայրենիք> 2004, էջ 236

Durch- zeigt, dass sich die Grundverbhandlung ohne Unterbrechung vollzieht (Kühnhold, 1973, S.323), z. B. *durcharbeiten, durchtanzen, durchleiden, durchdulden*. Wenn es die Bedeutung „ohne große Unterbrechung“ hat, dann ist es trennbar (9a), wenn es aber „die Art und Weise“ der Handlung zeigt, dann ist es untrennbar (9b), z.B.

(9a) Er hat die Nacht *dúrchgearbeitet*. - ohne größere Unterbrechung¹¹³

Նա	<i>ամբողջ</i>	գիշեր	<i>աշխատել</i>	է:
Na	amboł□	gišer	ašxatel	ē
Er	ganz	Nacht	arbeiten-PRF	AUX

(9b) Er hat eine Nacht *durchárbeitet*. - arbeitend verbringen¹¹⁴

Նա	մի	<i>ամբողջ</i>	գիշեր	<i>աշխատել</i>	է:
Na	mi	amboł□	gišer	ašxatel	ē
Er	ein	ganz	Nacht	arbeiten-PRF	AUX

Es ist offensichtlich, dass *durch-* in beiden Beispielen nicht ins Armenische übersetzt wird, aber seine Bedeutung ist durch das Wort *ամբողջ* / amboł□ [ganze]/ ausgedrückt. Das zweite Beispiel haben wir als „*er hat eine ganze Nacht gearbeitet*“ übersetzt, um die Bedeutung „*arbeitend verbringen*“ behalten zu können.

Durch- signalisiert die vollständige Durchführung der Handlung (Kühnhold, 1973, S. 323), z. B. *durchatmen, durchforschen, durchfrieren*. Wenn *durch-* in konkreter Bedeutung auftritt, muss in Betracht gezogen werden, ob das Verb die Bedeutung "Resultat einer Handlung“ hat oder nicht, wenn ja, dann ist es betont, trennbar. Hat das Verb die Bedeutung „Verlauf, Art oder Weise der Handlung“, dann ist das Präfix unbetont und untrennbar (*durchbeißen, durchschlagen, durchbohren, durchdringen, durchschneiden, durchsuchen*). Der Unterschied zwischen beiden Verbformen ist gering und für einen durchschnittlichen Sprachbenutzer von kleiner Wichtigkeit.

(10a) Er hat das Tuch *durchgeschnitten* - Resultat der Handlung

Նա	<i>կտրել</i>	է	կտրո՞ւ:
Na	ktrel	ē	ktor- ě
Er	schneiden	PRF	AUX Tuch- DEF

¹¹³ http://www.duden.de/rechtschreibung/durcharbeiten_durcharbeiten_trennbar

¹¹⁴ http://www.duden.de/rechtschreibung/durcharbeiten_durcharbeiten_nicht_trennbar

(10b) Das Schiff *d'urchschneidet* die ruhige See. - Art, Verlauf der Handlung

Նավը	կտրում – անցնում	է	խաղաղ	ծովը:
Nav-ě	ktrum- anc `num	ē	xaʁaʁ	cov-ě
Schiff- DEF	schneiden-passen	3SGAUX	ruhig	See- DEF

Um- hat die folgenden Hauptbedeutungen:

a) „nieder, zu Boden“, z.B. *umfallen, umsinken, umstürzen*

b) “mit Basis umgeben”, z.B. *umfliegen, umfahren, umgeben, umschlingen, umhüllen* und ist ersetzbar durch *herum*, z. B. *umgehen, umblättern, umspringen, umschließen*

In einigen Verben zeigt *um-* die Bewegung in eine andere Richtung, z.B. *'umsteigen, 'umstellen, 'umziehen, 'umladen* oder Änderung der Richtung z.B. *'umfallen, 'umlaufen, 'umkehren*. Alle Verben dieser Gruppe sind betont und trennbar, z.B.

(11) Sie hat wieder die Möbel im Wohnzimmer *'umgestellt*. – Ortsveränderung

Նա	կրկին	տեղ-ա-փոխ-ել	է	հյուրասենյակ-ի	կահույք-ը:
Na	krkin	tef- a-pox-el	ē	hyurasenyak-l kahuyk-ě	
Er	wieder	umstellen-PRF	AUX	Wohnzimmer- GENMöbel- DEF	

Wenn sich aber der beschriebene Gegenstand nicht bewegt, sondern das Verb die Bewegung um den Gegenstand herum beschreibt, ist das Präfix untrennbar, z. B

(12) Er hat den Platz *uml'aufen*. – Bewegung um den Gegenstand

Նա	պտտվել է	հրապարակ-ի	շուրջ-ը
.Na	pttvel ē	hraparak-i	šur□- ě
Er	drehen-REFL-PRF	AUX	Platz-GEN um- DEF

Im Unterschied zu *durch-*, das keine Äquivalente im Armenischen hat, und nur durch andere lexikalische Mittel übersetzt wird bzw. meistens ganz verloren geht, hat das Präfix *um-* im Armenischen einige Äquivalente: die Präfixe *պար-* [par], *հեղ-* [heʃ], *վեր-* [ver] und das Präfixoid *շրջ-* [šr□]. Aber *um-* ist, wie wir es schon bemerkt haben, mehrdeutig, im Unterschied zu den armenischen Präfixen, die meistens eindeutig sind.

Das Präfix *պար-* [par], stammt aus dem Stammwort *Kreis* und wird in einigen Verben verwendet, z.B.

պարունակել [parunakel]- enthalten, umf'assen
պարփակել [parp `akel] – umf'assen

Das Präfix *հեղ-* [heʔ] bezeichnet die Umstellung oder die Veränderung einer Sache oder Handlung, *հեղափոխել* [heʔap ˈoxel] - 'umgestalten, 'umbilden, 'umformen

հեղաշարժել [heʔaʂarʒel] - 'umkrepeln

Das Präfix *վեր-* [ver] bedeutet *wieder, noch einmal*

վերակառուցել [verakaruc ˈel] - úmbauen

վերամշակել [veramšakel] - úmarbeiten

վերափոխել [verap ˈoxel] - úmarbeiten, úmformen, úmändern

վերակազմել [verakazmel] - úmbilden

վերադաստիարակել [veradastiarakel] - úmerziehen

վերանվանել [veranvanel] - úmbenennen

Das Präfixoid *շրջ* [ʂrɔ]- stammt aus dem Altarmenischen und bedeutet *um etwas herum,*

շրջահոսել [ʂrahosel] - umfließen

շրջանցել [ʂrɔanc ˈel] - umgehen

շրջապատել [ʂrɔapatel] - umgeben, umgürten

շրջահայել [ʂrɔahayel] - úmgucken

Es ist bemerkenswert, dass in der Bedeutung "Umstellung oder Veränderung einer Sache oder Handlung" und "Wiederholung einer Handlung" *um-* trennbar ist, und in der Bedeutung "um etwas herum" ist es bald trennbar, bald untrennbar.

Über- bezeichnet "eine Lokalisierung oberhalb von etwas anderm", bzw. „Überschreiten einer Begrenzung der Überlegenheit“ (Kühnhold, 1973, S. 239), und kann durch die Präposition *über* ersetzt werden, z. B. *überfahren, überrollen, überleben, übermalen*. Eine Reihe dieser Verben haben *über-* in konkreter Bedeutung, d.h., sie sind auch betont und trennbar, aber entweder haben sie auch eine basisbetonte Form, wie z. B. *überspringen, übersteigen, übersetzen*, oder sind selten, wie *überfahren, übergießen, überholen*. Bei den basisbetonten Verben überwiegen die figurativen oder abstrakten Bedeutungen, z.B. *übernehmen, überführen, überlassen, überliefern*.

(13a) Die Gangster sind vom Nachbarhaus *übergestiegen*.- konkret

Ոճրագործ-ներ-ը *վեր են բարձրացել* հարևան տն-ից:

Vočragorc-ner-ě ver en barjrac ˈel harewan tn-ic ˘

Gangster- PL-DEF über AUX.3PL steigen PRF Nachbar ADJ Haus-LOC

(13b) "... sie kann Freude, Leid, Schmerzen bis auf einen gewissen Grad ertragen und geht zugrunde, sobald der *überstiegen* ist¹⁵. – abstraktč ě

...նա	միայն	մինչև	որոշ	աստիճան	կարող է	դիմանալ
...na	miayn	minč 'ev	voroš	astičan	karot	ē dimanal
3SG PR	nur	bis	gewis	Grad	kann	AUX ertragen

ուրախության, տառապանքի,	ցավի.	Իսկ երբ այն <i>չափից</i>	<i>անցնում,</i>
uraxut 'yan tarapank 'l c 'avi	isk erb ayn	č 'ap 'ic ' anc 'num	
Freude Leid	Schmerzund wenn	es	Masse ausgehen

է,	մարդը	կործանվում	է ¹⁶ :
ē	mardē	korcanvum	ē
AUX	Mensch	zugrundegehen	AUX

Über- zeigt „den Weg jenseits der Normengrenze“ (Wirf Naro, 2007, S. 163). Die Normen stellen Grenzen dar, über die die *über-* Handlung hinausgeht. Es gibt zahlreiche basisbetonte Übermaß-Verben, z.B. *über'eilen*, *über'essen*, *überm'üden*, *übersp'annen*. Einige Verben haben auch eine abstrakte Bedeutung, z.B. *sich über'heben*, *überh'itzen*.

Über- existiert weiter in der Bedeutung „zu viel, zu stark oder zu lange“, z.B. *'überbewerten*, *'überbelichten*, *'übererfüllen*, *'überbezahlen*, *'überbetonen*. In diesem Fall ist *über-* betont und trennbar.

(14) Man sollte vermeiden, solche Faktoren *überzubewerten*.

Պետք է խուսափել	այդպիսի	գործոնները	<i>գերազնահատել:</i>
Petk ē xusapel	aydpisi	gorcon-ner-ě	ger-a-gnahatel
Müssen AUX.3SG	vermeiden	solche Faktor-PL-DEF	über-bewerten

Bei Verben in der Bedeutung „zu viel, mehr als genug“ (*überk'ochen*, *überfl'ießen*, *überl'aufen*, *überq'uellen*, *überb'orden*) entspricht das Trennen von

¹⁵ Johann Wolfgang Goethe, die Leiden des jungen Werthers, Suhrkamp Verlag, Frankfurt am Main, 1994, S. 50

¹⁶ Յոհանն Վոլֆգանգ Գյոթե, Երիտասարդ Վերթերի տառապանքները, թարգմ. գերմ. Լ. Տեր-Մինասյան, Երևան, «Սովետական գրող» հրատ. 1981, էջ 86

über- der syntaktischen Regel. Falls das Verb transitiv ist (d.h. es fordert das obligatorische Akkusativobjekt), ist es in der Regel untrennbar. Falls das Verb intransitiv ist (mit fakultativem Präpositionalobjekt), ist es meistens trennbar.

(15) Die Milch ist über den Rand *'übergekocht*.

Կաթը	եզերքից թափվել	է:	
Kat-ě	ezerkic tapvel	ē.	
Milch-SG DEF	Rand-ABL überfließen AUX.3SG		

Die Suppe muss noch mal *überkocht* werden.

Ասորը պէտք է մեկ անգամ էլ լավ եփել:	
Apur-ě petk ē mek angam ēl lav epel	
Suppe muss AUX.3SG ein mal noch gut kochen	

In einigen Verben kann *über-* durch “über eine Zeitspanne hinweg” ersetzt werden. Alle Verben dieser Gruppe sind unbetont und untrennbar, z.B. *übern'achten, überw'intern, überst'ehen*.

Das Präfix *über-* entspricht im Armenischen dem Präfix *գեր-[ger]*, das „zu viel, zu stark oder zu lange“ bedeutet, z. B.

գերբեռնել [gerbernel]- überl'aden
գերազանցել [gerazanc `el]- übersch'r'eiten
գերազնահատել [geragnahatel]- überbew'erten
գերակշռել [gerakšrel]- überw'iegen
գերնսակեցնել [gerbnakec `nel]- überbev'ölkern

Unter- bezeichnet die Lokalisierung unterhalb von etwas anderem, bzw. eine Unterlegenheit (Kühnhold, 1973, S. 248), z.B. *untergehen, unterstellen, unterliegen, unterschreiben*. In einigen Stichwörtern tritt *unter-* als Gegenteil von *über-* auf, z. B. *etw. überschätzen – etw. unterschätzen, etw. überbieten – etw. unterbieten*.

Unter- setzt eine Größe in Beziehung zu einer anderen, hat den Sinn einer Verbindung und kann mit *zwischen* ersetzt werden, z. B. *unterteilen, untermischen, unterreden, unterscheiden*.

Die Präfigierung der Grundverben *stehen, fangen, ziehen, sich winden* hat in allen Fällen neben einer Entfernung vom semantischen Ausgangspunkt eine Änderung in der Valenz zur Folge, z.B. *sich unterstehen (etw. zu tun)*

Unter- wird im Armenischen durch die Präfixe *ստոր-[stor]*, *թեր-[t `er]*, *ենթ-[ent `]* ausgedrückt. Das Präfix *ենթ-* [ent `] stammt aus der altarmenischen Präposition *ընդ-* [ěnd] und bezeichnet die Lokalisierung unterhalb von etwas anderm, z.B.

ենթազծել [ent `agcel]- *unterz'eichnen*

ենթարկել [ent `arkel]- *unterziehen, 'unterordnen, unterstellen, unterwerfen*

Auch das Präfix *ստոր*-[stor] bezeichnet die Lokalisierung unterhalb von etwas anderem, z.B.

ստորագրել [storagrel] – *unterschr'eiben*

ստորաբաժանել [storabažanel] – *unter'eilen, untergl'iedern*

ստորադասել [storadasel] – *'unterordnen, 'unterstellen*

Թեր-[t `er] bezeichnet die Unvollständigkeit der Handlung

թերբերնել [t `erbernel]- *unterbel'aden*

թերազնահանել [t `ergnahatel]- *untersch'ätzen, unterbew'erten*

5. Valenzveränderung

Dass Valenzänderungen bei den deutschen Präfix- und Partikelverben häufig auftreten, ist eine altbekannte Tatsache, auf die in den meisten deutschen einschlägigen Darstellungen hingewiesen wird (vgl. z.B. Fleischer/Barz, 2012, S. 378–390; Erben, 2000, S. 81–82; Wellmann, 1995, S. 439–440). Für die armenische Sprache dagegen fehlt eine entsprechende Forschungsgrundlage: Weil die Rolle der Verbpräfigierung im Armenischen marginal ist, ist verständlicherweise die Beschreibung der Valenzeigenschaften der wenigen vorhandenen Verben, die als Präfixverben bestimmbar sind, weniger interessant. Dass die armenischen Partikelverben bisher nicht ausführlich untersucht worden sind, bedeutet zugleich, dass zu ihrer Valenz keine Detailanalysen vorliegen.

Obwohl zu den deutschen Präfix- und Partikelverben zahlreiche Einzeluntersuchungen vorhanden sind, steht eine umfassende Beschreibung der Valenzänderungen noch aus. Dass die Präfixe und Partikeln polysem und polyfunktional sind, sich mit Basisverben mit unterschiedlicher Valenz kombinieren lassen und die Valenz der gebildeten Verben bei einem formal identischen Präverb variieren kann, erschwert das Erkennen von Systematizitäten (vgl. auch Fleischer/Barz, 2012, S. 378). Zusätzlich ist ein Teil der Valenzänderungen unsystematisch. Insbesondere bei semantisch verdunkelten und idiomatisierten Präfix- und Partikelverben können die Valenzeigenschaften synchron unmotiviert und unregelmäßig erscheinen. Es gibt aber viele Fälle, bei denen die Valenzänderungen einem regelmäßigen, sich wiederholenden Muster folgen und nicht ausschließlich Idiosynkrasien vereinzelter Verblexeme sind. Die Beschreibung der systematischen Änderungen ist eine Aufgabe von besonderem Interesse. Traditionell werden die Valenzänderungen mit Hilfe des Begriffs der so genannten syntaktischen Modifikation beschrieben (vgl. z.B. Fleischer/Barz, 2012, S. 378). Der Terminus bildet den Gegenpol zum Begriff der semantischen Modifikation, der davon ausgeht, dass die

Präfixe und Partikeln dem gebildeten Verb neue semantische Merkmale hinzufügen. Dass die Elemente einen Valenzeffekt, also eine syntaktische Modifikation, bewirken können und die Valenz des Präfix- oder Partikelverbs von der des Basisverbs abweichen kann, ist eine Begleiterscheinung der semantischen Veränderung der Verben.

Wichtige Arten syntaktischer Modifikation sind:

- Transitivity
- Transitivity with Incorporation
- Reflexivierung
- Incorporation

Mit Präfigierung ist i.d.R. Transitivity verbunden. Im Deutschen können intransitive Verben durch untrennbare Präfixe transitivity werden, wie Beispiel (17b) zeigt. Die direktionale Bedeutung des Adverbials wird mit der Verbpartikel *durch-* in die Verbbedeutung inkorporiert, sodass anstelle des Adverbials ein Akkusativkomplement erscheint. Im Armenischen sind dagegen Präfixe zur Transitivity selten. Häufiger sind Suffixe, wie Beispiel (18) zeigt.

- (16) a. *durch* den Tunnel *fahren*
 b. *den* Tunnel *durchfahren*

- (17) a. Երեխա-ներ-ը վազում են
 erexa-ner-ě vazum en
 Kind-PL-DEF laufen AUX.3PL
 [Die Kinder laufen]

- b. Հայր-ը վազ-եցն-ում է Երեխա-ներ-ին
 hayr-ě vaz-ecn-um e erexa-ner-in
 Vater-DEF laufen-TR.SUFF AUX.PRS.3SG Kind-PL-ACC
 [Der Vater lässt die Kinder laufen]

6. Fazit

Als Resümee der hier vorgestellten exemplarisch herausgegriffenen Ergebnisse unserer Untersuchung können wir feststellen:

Die Studie verfolgte das Ziel, den Unterschied zwischen Verben mit den Elementen *durch-*, *um-*, *über-*, *unter-*, zu definieren, ihren Status als Präfix- bzw. Partikelverben zu diskutieren sowie ihre Eigenschaften im Deutschen und Armenischen zu beschreiben und zu vergleichen. Der Terminus Präfixverb wurde für komplexe Verben reserviert. Die Partikelverben wurden als Ausdrücke mit einer syntaktischen Kombinationsstruktur betrachtet, d.h. Verben mit trennbarem Element.

Die Beispiele der deutschen Präfix-/ Partikelverben und der armenischen Verben zeigten, dass einander entsprechende Verbpartikelelemente in den beiden Sprachen über identische Bedeutungen verfügen können. Als Tertium comparationis diente die Semantik. Die Kontrastierung suchte nach Prozessen in den beiden Sprachen, die zu semantisch ähnlichen Effekten führen.

Die einfache Beobachtung zeigt, dass die abgeleiteten bzw. zusammengesetzten Verben im Deutschen und im Armenischen sowohl aus morphologischer, als auch aus syntaktisch-semantischer Sicht meist nicht übereinstimmen können. Dieses führt häufig zu Erwerb- und Gebrauchsschwierigkeiten der deutschen Präfix-/ Partikelverben. Wie bereits erwähnt werden die Erstglieder dieser Verben im Armenischen i.d.R. nicht übersetzt – um die Bedeutung des Verbs richtig ausdrücken zu können, muss man andere Mittel anwenden, wie z.B. die Erstglieder durch andere lexikalische Einheiten ersetzen oder sie einfach weglassen. Aber wie die aufgeführten Beispiele zeigen, haben diese Präfixe/ Partikeln manchmal ihre semantischen Äquivalente und werden im Armenischen wörtlich übersetzt.

Die Analyse der deutschen und armenischen Konstruktionen im Bereich der Valenz zeigte, dass die armenischen Präfixe nicht die selbe grammatische Bedeutung haben, wie die deutschen – sie führen nämlich zu keinen Valenzveränderungen. Diese Bedeutung tragen die Suffixe.

Die Systematisierung von angeführten Regeln, Gesetzmäßigkeiten und Ausnahmen, auch der aufgeführten Beispiele und deren Übersetzungen kann allenfalls als Richtlinie für die DaF-Lerner dienen.

7. Literaturverzeichnis

- Abeghyan, 1965, Աբեղյան, Մանուկ [Abeghyan Manuk], 1965. Հայոց լեզվի տեսություն [Hayoc lezvi tesutyun 'Theorie der armenischen Sprache']. Երևան [Erevan 'Eriwan']: Միտք [Mitq 'Der Gedanke']
- Duden, 2005. *Die Grammatik*. 7., völlig neu erarbeitete und erweiterte Auflage, Mannheim etc.: Dudenverlag.
- Eisenberg, Peter, 2004. *Grundriß der deutschen Grammatik. Band 1: Das Wort*. Stuttgart / Weimar: Metzler.
- Fritz, Matthias, 2007. *Verbalkompositum oder Präfixverb*. Verbale Wortbildung Verbale Wortbildung im Spannungsfeld zwischen Wortsemantik, Syntax und Rechtschreibung. Tübingen: Stauffenburg.
- Grimm, Jacob, 1826. *Deutsche Grammatik*. Erster Theil. Göttingen: Dieterich.

- Galstyan 1978 = Գալստյան, Սերգեյ [Galstyan, Sergey], 1978: *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*. [Acancumë ew acancnerë žamanakacic hayerenum 'Die Affigierung und die Affixe in der modernen armenischen Sprache'] Երևան [Erevan] Երևանի համալսարանի հրատարակչություն [Erewani hamalsarani hratarakčutyun 'Verlag der Universität, Eriwan']
- Ghazaryan 2010 = Ղազարյան, Էլիզա / Հարությունյան, Սոնա [Ghazaryan, Eliza / Harutyunyan, Sona] 2010: *Գերմաներենի բայակերտ նախածանցների ընդհանուր բնութագիրը հայերենի զուգադրությամբ* [Germanereni bayakert naxacancneri ëndhanur bnutagirë hayereni zugadrutyamb 'Allgemeine Charakteristik der deutschen Präfixverben im Vergleich mit dem Armenischen']: *Օտար լեզուները բարձրագույն դպրոցում Հ. 11* [Otar lezunerë barjraguyn dprocum“ H 11 'Die Fremdsprachen an der Hochschule' N. 11: Երևան [Erevan 'Eriwan'] ԵՊՀ Հրատարակչություն [EPH Hratarakčutyun 'Verlag der Staatlichen Universität']
- Gyurinyan 1988 = Գյուրյինյան, Դավիթ [Gyurinyan Davit], 1988: *Արդի հայերենի նախածանցակերպերը* [Ardi hayereni naxacancakerperë 'Die Präfixoide des modernen Armenischen']: Հայագիտության և զուգադրական լեզվաբանության հարցեր: [Hayagitutyán ew zugadrakan lezvabanutyán harcer 'Fragen der Armenologie und der kontrastiven Linguistik'] Երևան [Erevan] Երևանի համալսարանի հրատարակչություն [Erewani hamalsarani hratarakčutyun 'Verlag der Universität, Eriwan']
- Krause, Maxi, 2007. *Was ist eigentlich ein Partikelverb?* Verbale Wortbildung Verbale Wortbildung im Spannungsfeld zwischen Wortsemantik, Syntax und Rechtschreibung. Tübingen: Stauffenburg.
- Kühnhold, Ingeburg / Wellmann, Hans, 1973. *Deutsche Wortbildung. Typen und Tendenzen in der Gegenwartssprache. 1.Hauptteil: Das Verb*. Düsseldorf: Schwann.
- Paul, Hermann, 1920. *Deutsche Grammatik*. Band V. Theil V: Wortbildungslehre. Halle a. S.: Max Niemeyer.
- Wirf Naro, Maria, 2007. *Überlegungen zur Semantik komplexer Verben mit über-*. Verbale Wortbildung Verbale Wortbildung im Spannungsfeld zwischen Wortsemantik, Syntax und Rechtschreibung. Tübingen: Stauffenburg.

8. Quellenverzeichnis

COSMAS 2, *Archiv der gesprochenen Sprache des IDS*. URL: <https://cosmas2.ids-mannheim.de/cosmas2-web/>

Nietzsche, Friedrich, 2005. *Also sprach Zarathustra*. Москва [Moskva "Moskau"]: АСТ. Астрель [AST. Astral].

ԷԼԻԶԱ ԴԱԶԱՐՅԱՆ , ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - ՆԱԽԱԾԱՆՑԱԿՈՐ ԿԱՄ ԲԱՐԴ ԲԱՅԵՐ. ԴՐԱՑ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ Ա ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է գերմաներենի *durch-*, *um-*, *über-*, *unter-* երկրնույթ նախամասնիկներով կազմված բայերին: Հոդվածի նպատակն է ուսումնասիրել այդ բայերի իմաստաբանական կառուցվածքային, շարահյուսական և ձևաբանական առանձնահատկությունները հայերենի զուգարդությամբ, սահմանել դրանց դերը որպես նախածանցավոր կամ նախամասնիկավոր բայեր:

ELIZA GHAZARYAN, SONA HARUTYUNYAN - PREFIXAL VERBS OR COMPLEX VERBS: STRUCTURE AND FUNCTIONS IN GERMAN AND ARMENIAN

This paper is devoted to research the German verbs formed by the dual nature elements *durch-*, *um*, *über-*, *unter-*. The aim of the present paper is to study semantic, structural, syntactical and morphological peculiarities of these verbs in comparison with Armenian, define their role as prefix or particle verbs.

ЭЛИЗА КАЗАРЯН, СОНА АРУТЮНЯН - ПРЕФИКСАЛЬНЫЕ ИЛИ СЛОЖНЫЕ ГЛАГОЛЫ: СТРУКТУРА И ФУНКЦИИ В НЕМЕЦКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

В данной статье рассматриваются немецкие глаголы с первыми непосредственными составляющими *durch*, *um*, *über-*, *unter-*. Целью статьи является изучение семантики этих глаголов и тех закономерностей, которые определяют их структурные, синтаксические и морфологические особенности в сравнении с армянским языком, а так же определить их статус в грамматике.

**HEIM/ՕՋԱԽ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԼԵՉՎԱԿԱՆ ԱՌԿԱՅԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

**ԷԼԻԶԱ ՂԱԶԱՐՅԱՆ
ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ**

Հիմնաբառեր՝ ճանաչողական հայեցակարգ, մշակութային շերտ, հասկացույթ, բառարանային հիմաստ, շտեմարանային հիմաստ, բառիմաստի լայնացում, բառարանում չամրագրված հիմաստ

Վիլիելմ ֆոն Հումբոլդտի գաղափարների արդիականացումը, ըստ որոնց՝ լեզուն է, որ մարդուն մարդ է դարձնում, իր առջև խնդիր է դնում՝ ուսումնասիրել լեզուն մարդկային գիտակցության և մտածողության, մարդու հոգևոր-պրակտիկ գործունեության հետ սերտ կապի մեջ: Վ. Հումբոլդտը համարում է, որ լեզուն մարդկային ոգու կարևորագույն գործունեությունն է, որը ներթափանցում է մարդու կենցաղի և ճանաչողության բոլոր ոլորտները: Նա լեզվական տարբեր ձևերում տեսնում է տարբեր ժողովուրդների աշխարհընկալման և մտածելակերպի տարբերությունները: «Ամեն մի լեզու իր էությունն ունի, ուր միշտ գտնում ենք զուտ լեզվական բնույթի համաձուլվածքներ՝ վերցված ժողովրդի բնավորությունից» [Гумбольдт 1985:373]: Լեզուն ոչ միայն զուտ ճանաչողության և հաղորդակցության միջոց է, այլև՝ մշակութային կոդերի ձևավորման կարևորագույն գործոն: Ժամանակակից լեզվաբանության մեջ ուսումնասիրությունները կատարվում են ճանաչողական հայեցակարգով և այս տեսանկյունից կարևոր է անդրադառնալ խորքային հիմնարար մշակութային հասկացություններին, որոնցից է **«Heim/օջախ»** հասկացույթը: Այսպիսի հասկացությունները լեզվակիրների աշխարհընկալման և աշխարհապատկերման, արժեհամակարգի և խոսքային վարքագծի կարևոր բաղկացուցիչներից են: «Հասկացույթը առարկայական վերաբերությունից բացի ընդգրկում է հաղորդակցական տեսանկյունից կարևոր ողջ տեղեկատվությունը» [Воркачев С. 2001:64]: Տարբեր ժամանակաշրջանների վերաբերող մշակութային շերտերը բյուրեղանում են հասկացույթներում, և դրանց վերլուծությունները հաճախ ի հայտ են բերում կոնկրետ լեզվով խոսող հանրության կենսափորձն ու աշխարհայացքի յուրօրինակությունը: Հասկացույթների զուգադրական ուսումնասիրությունն էլ ավելի ակնառու է դարձնում տարբեր մշակույթներում առկա խորքային շերտերը:

«**Heim/օջախ**» հասկացույթի իմաստային դաշտի մասին ամբողջական պատկեր ստանալու նպատակով, ընդունված կարգով, զուգադրվող լեզուներում ուսումնասիրվել են դրանց բոլոր բառարանային, հանրագիտարանային և շտեմարանային իմաստները, ինչպես նաև դարձվածային միավորներում հանդիպող իմաստները:

«**Heim**» հասկացույթը հին վերին գերմաներենում նշանակել է՝ տեղ, որտեղ բնակություն են հաստատել, հայրենիք («*durch Abstammung oder Ansässigkeit vertrauter Lebensraum, Ort, wo j-d oder etw herkommt bzw hingehört; Vaterland, Heimatland eines Einzelnen, eines Volkes*» [<http://woerterbuchnetz.de/>]: Հին վերին գերմաներենի heim-ը (անգլերենում՝ home, գերմաներենում՝ *haima *haimi) հարաբերակցվում է հնդեվրոպական *hei «*liegen*», «*Niederlassung, Lager, Wohnsitz*»+mo վերջածանցի հետ, հին վերին գերմաներենում եղել է *heima* «*Wohnsitz, Heim, Heimat*», հին սաքսոներենում՝ *Hem*, հին անգլերենում՝ *ham* «*Landgut, Dorf*», անգլերեն՝ *home*, հին սեվ.՝ *Heimr* «*Heimat, Welt*», շվեդերեն՝ *hem* «*Wohnung, Haus, Heimat*», հին իռլանդերեն՝ *coim, come*, հին կիմրերեն՝ *cum* «*lieb, teuer*», լիտվերեն՝ *seima* «*Familie, Gesinde*», ռուսերեն՝ *семья*, գոթերեն՝ *haims* «*Dorf*», լատվիերեն՝ *ciems* «գյուղ»:

Ըստ Duden-ի Ունիվերսալ բառարանի «**Heim**»-ը այսօր հանդես է բերում հետևյալ իմաստները՝

- *Wohnung/Zuhause* (բնակարան, հարազատ տուն),
- *öffentliche Einrichtung, die der Unterbringung eines bestimmten Personenkreises dient* (մարդկանց որոշ խմբի համար նախատեսված կացարան),
- *Haus für Veranstaltungen* (որոշակի միջոցառումների համար նախատեսված շինություն),
- *Heimat* (ahd.) (հայրենիք) (հ.վ.գ.) [Duden 1996:680]:

Langenscheidt-ի բառարանը նոր իմաստներ չի հավելում [Langenscheidts Grosswörterbuch, 1997:452] , իսկ Wahrig-ի բառարանում առկա է նաև Heim-ի *Haushalt (bes. einer Familie)* «*բյուջե*» իմաստը [Wahrig, Deutsches Wörterbuch, 1997:1405]:

Meyer-ի հանրագիտարանում առկա շատ կարևոր իմաստ է «**Heim**»-ի «dem englischen «home» entsprechende, emotional gefärbte Bezeichnung für Haus oder Wohnung» (հարազատ կացարանի զգայական պատկեր) իմաստը [Meyers Enzyklopädisches Lexikon 1974:628]:

Հայերենում որպես համարժեք դիտարկվող «**օջախ**» հասկացույթը Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում չի հիշատակվում, իսկ **տուն**-ը համարվում է բնիկ հայ բառ՝ հնիս. dom- ձևից, սանսկրիտում dam- (dampatis

«տանուտեր»), dama-, mana- («տուն»): **Օջախ**-ը հիշատակված չէ նաև 1986 թվականին լույս տեսած Հայկական Սովետական հանրագիտարանում:

Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ի «**օջախ**»-ը ունի հետևյալ իմաստները.

1. *Պատի մեջ շինված առջևը բաց և վերևը ծագարածն ծխնելույզով կրակարան*
2. *Բացօթյա կամ տան մի բաժանմունքի մեջտեղում աղյուսից կամ քարերից շինված կրակարան*
3. *Փխբ. Տուն-տեղ*
4. *Ընտանիք, գերդաստան*
5. *Փխբ. որևէ ուսմունքի՝ վարդապետության՝ գիտության՝ մշակույթի տարածման կենտրոն*
6. *Փխբ. տեղ՝ վայր՝ բույն՝ կենտրոն, որտեղից մի բան տարածվում է (հիվանդությունների օջախ, պատերազմի օջախ, երկրաշարժի օջախ և այլն)* [Ժամանակակից հայոց լեզվի բառարան 1980:787]:

Ստ. Մալխասյանցի «Բացատրական բառարան»-ում «**օջախ**»-ը ներկայացված է **օջաղ** գրելաձևով և հետևյալ իմաստներով.

- *կրակատեղ, շինություն, որի մեջ օջախ է վառվում,*
- *շեն տուն /գերդաստան* [Մալխասյանց Ստ. 1945:609]:

Ա. Սուքիասյանը «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան»-ում նշում է «**օջախ**»-ի *կրակարան, ակութ, փուռակ, կրակ, աղյուսից կամ քարից կրակարան՝ եփելու համար* հոմանիշները և նշում է հետևյալ իմաստները.

- *տուն,*
- *բով* (որևէ բանի դրսևորման վայր),
- *կենտրոն* (մշակութային և այլն)
- *սկզբնակետ, բույն* (*հիվանդության և այլն*) իմաստները [Սուքիասյան Ա. 2003:1227]:

Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում «**օջախ**»-ը ունի *որևէ բանի բուռն դրսևորման տեղ, որևէ բանի առաջացման ծագման սկզբնակետ* իմաստները:

Ինչպես պարզ է դառնում բառարանային իմաստների զուգադրությունից «**Heim/օջախ**» հասկացությունները երկու լեզուներում ընդհանուր իմաստներից բացի ունեն նաև միայն կոնկրետ մեկ լեզվին և մեկ մշակույթին բնորոշ իմաստներ: «**Heim/օջախ**» հասկացության **սեփական տան, հարազատ կացարանի** զգայական պատկերը ընդհանուր է երկու լեզվամշակույթների համար: Գերմաներենում այդ իմաստը արտահայտվում է նաև **Zuhause** և **daheim**

բառույթների միջոցով, օրինակ, *das ist mein Zuhause* արտահայտությունը նշանակում է՝ սա իմ օջախն է (իմ հարազատ տունը) կամ՝ *Hier bin ich zu Hause* (Սա իմ տունն է):

Եթե հայերենում **օջախ**-ն ավելի շատ **ընտանիք** և **կացարան/բնակարան** իմաստներով է օգտագործվում, ապա գերմաներենում այն առավելապես **մարդկանց որոշակի խմբերի համար նախատեսված կացարան** իմաստն ունի: Հետաքրքրական փաստ է, որ **կրակատեղ** իմաստը, որից ծագում է հայերենի օջախը՝ որպես պաշտամունքի հասցված մի վայր, գերմաներենում ընդհանրապես չի հանդիպում: Այն, որ «**օջախ**»-ը շատ ավելին է, քան «տուն»-ը, և որ «տան»-ը ուրիշ հատկանիշներ էլ են հարկավոր «**օջախ**» դառնալու համար, ևս մեկ անգամ հաստատվում է հայկական ժողովրդական բանահյուսությունից վերցված ստորև ներկայացվող հետևյալ օրինակում.

Ծառը կանաչ լինի եւ պտղատու,

Տունը **օջախ** դառնա, երկիրը՝ օրրան,

Պանդուխտը

տուն

վերադառնա...

[http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am]:

Օջախի կարևորության միտքը հավաստում է նաև հայ արձակագիր Զ. Բալայանը, որը համարում է, որ «մեր հին ու մեծ լեզվի ոչ մի բառ, թերևս, հազեցված չէ այդքան խորին փիլիսոփայությամբ ու սոցիալական իմաստով, որքան օջախ բառը: Այդ բառը շատ են սիրել մեր մեծերը» [http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am]:

Գերմաներենի **ein Haus, aber kein Heim haben** թևավոր խոսքը ևս վկայում է այն մասին, որ **Heim**-ը միայն կացարան չէ, այն մարդու զգայական աշխարհի հետ է կապվում:

«Heim/օջախ» **հասկացույթի իմաստային դաշտի պատկերն ամբողջականացնում են ազգային շտեմարանների օրինակները (օրինակների համար առանձին հղումներ չեն կատարվել):** IDS Mannheim գերմանական ազգային շտեմարանում հանդիպում են «Heim» **հասկացույթի ստորև ներկայացվող հետևյալ իմաստները.**

1. Wohnung - տուն, բնակարան

ա) „*Ich habe kein Heim*“, *sagte Kasimir leise*,,.

2. Zuhause- օջախ

„...also ganz früher, nicht nur die Männer zum Jagen gegangen, während sich die Frauen um Heim und Kinder gekümmert haben?

3. Gebäude- շենք, շինություն

Neues Heim für die Schule, Neues Heim für Chor

4. Wohnstätte für einen bestimmten Personenkreis - (մարդկանց որոշ խմբի համար նախատեսված կացարան)

ա) Vorläufiges Heim - ժամանակավոր կացարան

Seite 25: *bietet Honeckers ein vorläufiges Heim: Objekt sowjetischer Streitkräfte in Beelitz, Herbst 1990.*

բ) Asylheim - փախստականների կացարան

Ewa-Maria Slaska, polnische Journalistin, lebt seit fünf Jahren in West-Berlin und arbeitet als Betreuerin in einem Heim des Deutschen Roten Kreuzes für Flüchtlingsfrauen sowie Aussiedlerinnen und Übersiedlerinnen.

գ) Jugendheim - երիտասարդական ճամբար

Die beiden jungen Männer,waren nach einem freien Wochenende nicht mehr ins Heim zurückgekehrt und hatten sich nach Deutschland abgesetzt.

դ) Altersheim - ծերանոց

„ Gunda hat von da an ihre Jahre in einem von Nonnen geführten Heim verbracht. Hier hast du ein Foto von dem Gebäude.

ե) Kinderheim/Waisenheim – մանկատուն/որբանոց

Herr und Frau Dupal hatten, nach langer Beratung, beschlossen, Itan zurück in das Heim zu geben, aus dem er gekommen war. Wenigstens bis auf weiteres und ihn wöchentlich dort zu besuchen.

զ) Erholungsheim - հանգստյան տուն

In Heringsdorf am Bahnhof stand zu unserem Glück ein Kleinbus, der alle ankommenden Kurgäste für das Heim „Vitorio de Sicca“ einlud und auch hin brachte

4. Heimat- հայրենիք

ա)...schickt unsere Soldaten heim, wir haben keine Feinde!

5. Tierheim - կենդանիների կացարան

Die Überraschung, mit der sie der Tierpfleger im Heim empfing, versöhnte Sandra wieder...

6. Unternehmen - հաստատություն, հիմնարկություն

ա) Klinik - բուժ. հիմնարկություն

"Der neue Leiter, ein Ungar, hat für Ordnung gesorgt", sagt Stritz. Mit internationaler Hilfe bekam das Heim Betten, Bettwäsche, Kleidung, Lebensmittel, Waschmaschinen und Trockner.

բ) Museum - թանգարան

Der Tourismus (Hauptattraktionen: Weltkulturerbe Falun und das Bergwerk zu Falun, das Heim des Malers Carl Larsson in Sundborn und das Schisprungzentrum Lugnet) spielt eine wichtige Rolle.

գ) **Restaurant - ռեստորան**

Heim kocht "bio."

7. Parliament - պառլամենտ

"Begrünung des Weißen Hauses" heißt das Projekt, mit dem die Clintons ihr Heim sowie die anschließenden Büroflügel in ein umweltfreundliches Zuhause verwandeln wollen.

8. Nest- կենդանու բույն (մեղվի փեթակ, կրծողների բույն, պատյան և այլն)

Und jeder goldene Apfel ist das geliebte Heim eines goldenen Wurmes.

Հայերենի «ԱՐԵՎԱԿ» ազգային շտեմարանում հանդիպում են «**օջախ**» հասկացույթի հետևյալ իմաստները՝

1. կացարան/բնակարան

«Հասավ Խուրթ՝ անցավ, հարմար ճամփա ընտրեց՝ սարեր ելավ— իջավ, ծորեր իջավ-ելավ, հասավ գյուղ՝ Գործվարք, անցավ դարբին Դավոյի դռնով, կանգնեց իրենց ընկուզենու տակ, սանդ քարի մոտ, Հարույթ որդուն ասաց, «էս է մեր **օջախ**, գառ»»:

2. ընտանիք

ա) «— էս ի՞նչ խաղք ի, Երեմո, մեր **հալալ օջախ** ինչի՞ կհարամես: Տղան սաստել էր նրան»:

3. կրակի օջախ

ա) «Անհոգ ասում — խոսում են: Բակի կենտրոնում **օջախ** են արել: Մի երկուրդ թիթեղի վրա հաց են թխում, հերթով բաժանում մյուսներին»:

բ) Սեղանից ոչ պակաս խայտաբղետ էր այն սենյակը, որտեղ նստել էինք: Ոչ մեծ տարածությունից մի ահագին կտոր յուրացրել էր **օջախ-կամինը**, այնպես զարդարուն, ինչպես մեր երևան յան նույնատիպ տներում:

Հարկ է նշել, որ օջախը մի դեպքում դրսում վառվող կրակի օջախն է, մյուս դեպքում՝ կամինը (տան ներսում գտնվող բուխարին):

4. հայրական/հարազատ տուն

Ապրում էինք մեր պապերի **օջախ** խնձորեակ գյուղում: Հողին կպած, հողի հետ կանաչող ու չորացող մարդիկ էինք:

5. հաստատություն/կենտրոն

ա) կրթական, գիտահետազոտական հաստատություն

«1977 թվականից եղել եմ աշխատակազմում, գրել եմ իմ հիմնական աշխատությունները, մենագրությունները, հոդվածները: Այս առումով **Մարենադարանն** ինձ համար հարազատ **օջախ** է»:

«Երևանի, պետական համալսարան՝ հանրապետության ուսումնական հաստատությունների մայր **օջախ**»:

բ) մշակութային հաստատություն

... Մասնավորապես, **երաժշտական օջախ** ղեկավարելը, իմ տպավորությամբ, պահանջում է որոշակի վեհանձնություն, եթե կուզեք՝ արհատկրատիզմ:

գ) հասարակական սննդի հաստատություն

...Այս անգամ պարզեատրման հանդիսավոր արարողությունը կայացավ «**Օջախ**» ռեստորանային համալիրում:

դ) (փխբ.) հասարակաց տուն

«Սիրահարների հովանավոր Սբ. Սարգսի եկեղեցի տանող գետնանցումի տակ արդեն երկու տարի է՝ բույն է դրել մի «**սիրո օջախ**», իսկ ավելի պարզ՝ ժամավճարով տրվող սենյակներով մի հաստատություն:

6. գործարան

Նախկին գիտաշխատողը՝ Գիտության նախկին հանրաճանաչ **օջախ** մաթեմատիկական հաշվիչ մեքենաների գ հ ինստիտուտի (կամ ինչպես ժողովուրդն էր ասում՝ Մերգեյանի ինստիտուտի) նախկին կրտսեր գիտաշխատող ...

7. համայնք

...Սփյուռքում չկա մի **օջախ**, ուր պարզապես չսիրեն անկրկնելի Բելլա Դարբինյանին:

8. պետություն

Ժամանակին Թեոդոր Հերցելը, գնալով Արդուլ Համիդի մոտ, խնդրում է օգնել իրեն Պաղեստինում **հրեաների Ազգային օջախ** ստեղծել՝ խոստանալով առատորեն վճարել հրեաների ստացած հողի դիմաց, չեզոքացնել Եվրոպայում Հայկական հարցի արժարժումները:

9. սարք

Եվ այդ «Հեյ գիդի»-ն ասվում էր մի քարե նոր տան մեջ, որտեղ ներկված հատակ ու առաստաղ կար, էլեկտրական լույս ու հեռուստացույց, **սառնարան ու գազի օջախ...**

10. հիվանդության օջախ

Չինաստանում **թռչնագրիպի նոր օջախ է բռնկվել:**

Շտեմարանների օրինակների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ շտեմարաններում առկա են ինչպես բառարանային բոլոր իմաստները, այնպես էլ բազմաթիվ նոր իմաստներ. **IDS Mannheim**-ում հանդիպում են *Gebäude, Tierheim, Museum, Restaurant, Parlament, Nest* բառարաններում չամրագրված իմաստները, իսկ «**ԱՐԵՎԱԿ**» -ում՝ *գործարան, համայնք, պետություն, սարք, (փխբ.) հասարակաց տուն* ոչ բառարանային իմաստները:

Ուսումնասիրվել են նաև հաճախականության և տեղանունների բառարանները: Ըստ «Գերմաներենի հաճախականության բառարան»-ի (Frequency dictionary of german(Randall L. Jones, Erwin Tschirner)) տվյալների՝ **Heim**-ը հանդիպում է **2613** անգամ (հետաքրքիր փաստ է, որ **Heim**-ի հաճախականությունը գերազանցում է **Haus**-ի հաճախականությանը 16,4 անգամ), իսկ ըստ «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան»-ի (Բ. Ղազարյան)՝ **օջախ**-ը հանդիպում է **765** անգամ:

Heim բաղադրիչը հանդիպում է գերմաներենի բազմաթիվ տեղանուններում, ինչպես օրինակ՝ **Germersheim, Heidenheim, Hildesheim, Rosenheim, Tauberbischofsheim, Weilheim in Oberbayern, Rüsselsheim, Hofheim** [<https://www.google.ru/maps/preview>] և այլն, ինչը հայերենին բնորոշ չէ: **Օջախ** բաղադրիչով տեղանուններ չեն հանդիպել Տեղանունների բառարանում, սակայն «ԱՐԵՎԱԿ» -ի օրինակներում հանդիպում է -օջախ բաղադրիչով մեկ տեղանուն, որը 20-րդ դարի սկզբին Արևմտյան Հայաստանի տարածքում է գտնվել. «Մարզում կար հինգ քաղաք՝ Կարս, Սարի ղամիշ..., **Օջախ ղուլի**, Օրթա կալա...»:

Heim-ը գերմաներենում նաև բավականին տարածված ազգանուն է և դա իր հավաստումն է գտնում IDS Mannheim շտեմարանի օրինակներում, հայերենի **օջախ**-ի մասին նույնը ասել չենք կարող:

Heim/օջախ բաղադրիչ պարունակող տեղանունների քանակի այս մեծ տարբերությունը երկու լեզուներում, ինչպես նաև **Heim**-ի առկայությունը գերմաներենում և **օջախ**-ի բացակայությունը հայերենում որպես ազգանուն, պայմանավորված են այդ ժողովուրդների լեզվական մտածողության առանձնահատկություններով, որոնք էլ ուղղակիորեն բխում են մշակութային տարբերություններից՝ պայմանավորված այդ ժողովուրդների պատմական փորձով և արժեհամակարգային ըմբռնումներով:

Բառակազմական առումով թե՛ **Heim**-ը, թե՛ **օջախ** -ը շատ մեծ ակտիվություն են հանդես բերում: Եթե գերմաներենում **Heim**-ը կարևոր բաղադրիչ է տարբեր հաստատությունների անվանումներում (Entbindunsheim, Jugendheim), ապա հայերենում դա առավելապես **տուն** բաղադրիչով կամ –անոց գոյականակերտ վերջածանցով է արտահայտվում (ծննդատուն, մանկատուն, ծերանոց, հիվանդանոց): **Heim**-ի առկայությունը որոշ հաստատությունների անվանակազմում (Kinderheim/Waisenheim -մանկատուն, Sozialheim- հաշմանդամների տուն, Altersheim-ծերանոց) զգալիորեն մեղմում է դրանց բացասական հարանշանակությունները **հարմարավետություն, պաշտպանվածություն** իմաստային հատկանիշների միջոցով և օգնում է ազատվելու ճնշող, ընտանիքից կտրված լինելու զուգորդումներից: **Heim**-ը (*nach*

Hause) ցույց է տալիս շարժման ուղղվածություն, որը կարելի է թարգմանել **դեպի տուն** (նաև՝դեպի հայրենիք): Այն հաճախ միանում է նաև շարժում ցույց տվող բայերին և հանդես է գալիս որպես բայական բաժանվող նախածանց, ինչպես օրինակ՝ **heimkommen, heimgehen, heimkehren** և այլն: **Heim-ը** որպես նախածանց շարժում ցույց տվող բայերից բացի այլ բայերի ևս կարող է միանալ, ինչպես օրինակ՝ **heimkönnen, heimmüssen, heimwollen, heimdürfen, heimfinden** [Harper Collins 2003: 296]: **Heimgehen** [Wahrig 1997:455] բառն ունի նաև փոխաբերական իմաստ, փոխաբերաբար գործածելիս այն նշանակում է *մեռնել*, իսկ **heimsuchen** բայը բացասական իմաստ ունի և նշանակում է՝ *պատռել, պատռուհասել, աղետ բերել*, օրինակ՝ *Auch Tsunamis suchen Japans Küsten von Zeit zu Zeit heim ...*

Հայերենում «**օջախ**»-ը, մեծ զգայականություն արտահայտելով, հաճախ ուղեկցվում է այնպիսի ածականներով, ինչպես՝ **սուրբ, սրբազին, հուսալի, հարազատ, հալալ, նվիրական** և այլն. «Արևելյան Հայաստանը դարձավ հայ ժողովրդի ազգահավաքման և ազգային համախմբման **հուսալի օջախ**»: Սակայն անհրաժեշտ է նշել «**օջախ**» հասկացույթի մի առանձնահատուկ՝ վերը նշված զգայական ընկալման տրամաբանորեն հակառակ իմաստը՝ որպես հիվանդությունների կամ անհաջողությունների բույն (**երկրաշարժի օջախ**, բժշկական տերմինաբանության մեջ՝ **գրգռման օջախ**, քաղաքականության մեջ՝ **լարվածության օջախ**, որը հղի է պայթյունով): Մեր կարծիքով, օջախ բառի համեմատաբար նոր իմաստ է շտեմարանում հանդիպող **թրաֆիկինգի օջախ** իմաստը: Նշված բոլոր իմաստները օջախը ներկայացնում են որպես թեժ կետ, որևէ բանի բուռն դրսևորման տեղ, որևէ բանի առաջացման սկզբնակետ իմաստը, որը նաև բառարանային իմաստ է:

«**Heim/օջախ**» հասկացույթի իմաստային դաշտը համալրվում և հարստանում է բազմաթիվ դարձվածային միավորներով, որոնք ձևավորվել են հազարամյակների ընթացքում: «Դարձվածքի բաղադրիչ դառնում են առաջին հերթին բառային հիմնական ֆոնդին պատկանող և հաճախակի գործածավող մի շարք բառեր» [Ջահուկյան, Աղայան, Առաքելյան, Քոսյան 1980:500]: Այս տեսանկյունից պատահական չէ **Heim/օջախ** բաղադրիչների առկայությունը երկու լեզուների բազմաթիվ դարձվածքներում: **Գ. Բրուտյանը** գրում է. «Որպես աշխարհի լեզվական պատկերման միջոցներից մեկը հանդես են գալիս քարացած արտահայտությունները և դարձվածաբանական միավորները, որոնց յուրօրինակությունը ցանկացած կոնկրետ լեզվում կասկած չի հարուցում» [Брутян 1968:50]: Դարձվածքները որպես ցանկացած լեզվի անքակտելի մաս կարող են առավելագույնս նպաստել որևէ լեզվամշակույթը հասկանալուն, քանի որ յուրաքանչյուր դարձվածաբանական միավորի մեջ դրված է աշխարհը լեզվի և

ազգային մշակույթի պրիզմայի միջով ընկալելու յուրահատկությունը: Դարձվածքները ճանաչողական, մշակութային և ազգային կարևոր նյութ են պարունակում և թույլ են տալիս վեր հանել հասկացությունների տարբեր իմաստային շերտերը: Ուսումնասիրվել են երկու լեզուների դարձվածային բառարանները և դուրս են բերվել **Heim/օջախ** բաղադրիչներով դարձվածքները: *Էլեկտրոնային կայքից (<http://woerterbuchnetz.de/>)* և Գերմաներենի Դարձվածքների բառարանից դուրս են բերվել 34 դարձվածք (**da**)heim բաղադրիչով, իսկ ժամանակակից Հայոց Լեզվի Բացատրական Բառարան-ից, Պ. Բեդիրյանի Հայերեն դարձվածքների ընդարձակ բառարան-ից և Առաձանի-ից դուրս են բերվել 36 դարձվածք **օջախ** բաղադրիչով:

Գերմաներենի դարձվածքներում ավելի շատ հանդիպում է (**da**)heim ձևը և այն ունի *տանը*, սակայն նաև *հայրենիք(ում)* իմաստը: Հաճախ այդ իմաստներն այնքան միախառնված են, որ պարզ չէ՝ խոսքը կոնկրետ (հարազատ) տան, թե՛ հայրենիքի մասին է (Es ist keinem besser als daheim): (**Da**)heim-ը դարձվածքներում հանդես է բերում *մարդու համար ամենասիրելի/ ամենանվիրական տեղ* իմաստային հատկանիշը (Jedem ist sein Heim das liebste (schönste): Կարմիր թելի պես անցնում է նաև այն միտքը, որ մարդը տանը/հայրենիքում իրենից ավելի մեծ արժեք է ներկայացնում, քան՝ օտարության մեջ (Daheim hat man hundert Augen und in der Fremde ist man blind./ Daheim ist einer ein Herr und König, draussen ein Diener./ Daheim oder im Gefängnis, nur nicht verbannt), որ անգամ հայրենի երկրի կանայք ավելի լավն են (Daheim im Nest ist's Mädchen am best): Ամեն լավ բան պարզապես հայրենի տան հետ է կապվում (Daheim ist der Himmel blauer und grüner sind die Bäume.) և մարդ իր մահկանացուն անգամ տանը պետք է կնքի (Daheim sterben wie d' Leut): Wer daheim ein halbes Vieh, wird auch in Jena kein Genie և Wer bei sich zu Hause verächtlich ist, der wird es auch in Sevilla sein դարձվածքներում այն միտքն է թևածում, որ սեփական տանը կամ հայրենիքում անարժան մարդը նաև դրսում է այդպիսին մնում:

«**Օջախ**»-ը դարձվածքներում հանդես է բերում *ընտանիք, գերդաստան, հայրենական տուն* իմաստները(*օջախ վառել*-տուն դնել, ընտանիք կազմել/ *օջախ շինել*- փխբ.ընտանիք շինել,կազմել, ամուսնանանալ/ *հոր հանգած օջախը շենացնել*- ամուսնանալ, զավակներ ունենալ, չթողնել որ հոր սերունդը վերջանա): *Օջախի աղջիկ/ տղա* նշանակում է՝ լավ, պատվավոր գերդաստանի աղջիկ/ տղա, իսկ *օջախի ծնունդ*՝ընտանեկան լավ դաստիարակություն ստացած անձ: *Գյուռ օջախ* (հարուստ տուն, ընտանիք) և *շեն օջախ* (հարուստ գերդաստան) թևավոր խոսքերին թերևս կարելի է հակադրել *օջախի մոխիրը քամուն տալ/ օջախը ավերել/քանդել* խոսքերը: *Օջախից կրակ առնել* ասում են հարսնախոսները, երբ

ուզում են մեկի տանից արջիկ առնել իրենց տղային: *Օջախս մարեցավ* ասում է մեկը, որ ընտանիքում ամենաձանր կորուստ է ունեցել: Հայերենում «**օջախ**»-ը հանդիպում է նաև օրհնանքներում և բարեմաղթություններում (*օջախը շեն մնա*) և անեծքներում (*օջախը քանդվի, օջախը մարի*):

Այսպիսով.

- «Heim/օջախ» հասկացույթի ծագումնաբանությունից ելնելով կարելի է ասել, որ երկու լեզուներում էլ տեղի է ունեցել բառիմաստի լայնացում. եթե հայերենում *կրակի օջախ* իմաստին (օջախի ջերմության շնորհիվ) ժամանակի ընթացքում ավելացել են *տուն* և *ընտանիք* իմաստները, ապա գերմաներենում *Heimat* իմաստին են ավելացել նոր *Wohnung, öffentliche Einrichtung, die der Unterbringung eines bestimmten Personenkreises dient, Haus für Veranstaltungen* իմաստները, *հարազատ տուն* ճանաչողական հատկանիշը մարդկանց մոտ ավելացել է ավելի ուշ և աստիճանաբար:

- Ինչպես «Heim»-ը, այնպես էլ «օջախ»-ը բնութագրվում են ոչ միայն որպես նյութական առարկա՝ *բնակարան/կացարան*, որպես *ընտանիք* և *ցեղ*, այլև որպես *հարազատ տուն*՝ զգացմունքային առումով շատ կարևոր տեղ, որը լցված է ջերմությամբ, սիրով, հարմարավետությամբ և հոգատարությամբ՝ ի հակադրություն շրջապատող աշխարհի սառնությանը և անտարբերությանը:

- «Heim/օջախ» հասկացույթի *բնակարան/կացարան, հարազատ տուն* և *հաստատություն* իմաստները ընդհանուր են երկու լեզվամշակույթների համար: Երկու լեզվամշակույթներում էլ տվյալ հասկացույթը կապված է մարդու զգայական աշխարհի հետ:

- Բառարանային և շտեմարանների իմաստները չեն ծածկում իրար, քանի որ բառարանը քարացած է, իսկ շտեմարանը իրական լեզվի արտացոլումն է: Երկու լեզուների շտեմարաններում էլ հանդիպում են բառարաններում չամրագրված նոր իմաստներ:

- Եթե գերմաներենում «Heim»-ի առկայությունը բարդ բառերում որպես բաղադրիչ օգնում է ազատվել բացասական հարանշանակություններից, ապա հայերենում «օջախ»-ը դրսևորում է նաև նաև թեժ կետ, որևէ բանի առաջացման սկզբնակետ բացասական իմաստները:

- Heim-ը շատ տարածված գերմանական ազգանուն և տեղանուններում հանդիպող բաղադրիչ է, ինչը օջախ-ի մասին չի կարելի ասել:

- (Da)heim բաղադրիչով դարձվածքներում *աչքի է ընկնում հարազատ տուն, ամենասիրելի/ ամենանվիրական տեղ* իմաստային հատկանիշը, իսկ *օջախ* բաղադրիչը հանդես է բերում *ընտանիք/գերդաստան, շեն տուն* իմաստները: **Օջախ**-ը հանդիպում է նաև օրհնանքներում և անեծքներում:

• **Heim/օջախ** բաղադրիչները շատ արդյունավետ են բառակազմական տեսանկյունից: Գերմաներենում **Heim**-ը հանդես է գալիս թե՛ որպես բայական տրոփվող նախածանց, թե՛ որպես կարևոր բաղադրիչ հաստատությունների անվանումներում, որը հայերենում առավելապես **տուն** բաղադրիչով կամ –անոց գոյականակերտ վերջածանցով է արտահայտվում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ «**Heim/օջախ**» հասկացույթը կարևորագույն մշակութային հասկացույթներից է թե՛ գերմաներենում, թե՛ հայերենում և նրանում ամփոփված են ինչպես երկու լեզվամշակույթների համար ընդհանուր իմաստային հատկանիշներ, այնպես էլ այդ ժողովուրդների լեզվական մտածողությամբ և մշակութային տարբերություններով պայմանավորված առանձնահատկություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան. Երևան, „Հայաստան“, հրատարակչություն, 1976, գիրք 1-930 էջ, գիրք 2-1616 էջ
2. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Հատոր Ե. Պետ. Համ. Հրատ. Երևան, 1962, էջ 172
3. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հատ. 1-4. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969-1980, Հ. 1-601 էջ, Հ. 2- 714 էջ, Հ. 3- 574 էջ, Հ. 4- 646 էջ
4. Ղանալանյան Ա., Առածանի ՀՍՍՀ Գիտությունների Ակադեմիա, Երևան, 1960, 396 էջ
5. Ղազարյան Բ., Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարան. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1982, 758 էջ
6. Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, Հատ. 4. Երևան, Հայպետհրատ., 1945, 609 էջ,
7. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, 1227 էջ
8. Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ. Հայոց լեզու 1-ին մաս, Ա պրակ, Ներածություն, հնչյունաբանություն,

բառափոխություն, դարձվածաբանություն, «Լոյս» հրատ., Երևան, 1980, 500

9. Брутян Г., Гипотеза Сепира-Уорфа Лекция, прочитанная в Лондонском университете в 1967 году, Луйс, Ереван, 1968 , 70 С.
10. Воркачев С. Г., Лингвокультурология, языковая ичность, концепт: становление антропоцентрической парадигмы в языкознании // Филологические науки- 2001- N 1- С.64-72
11. Гумбольдт В. фон., Характер языка и характер народа // Вильгельм фон Гумбольдт. Язык и философия культуры. - М: Прогресс, 1985, 452 с.
12. Duden, Das Bedeutungswörterbuch: 3.,neu bearbeitete und erweiterte Auflage.B.10 /Dudenverlag, Mannheim. Leipzig. Wien. Zurich, 2002.
13. Duden, Redewendungen. Wörterbuch der deutschen Idiomatik 3.,überarbeitete und aktualisierte Auflage. B.II / Dudenverlag, Mannheim, Zurich., 2008:959
14. Harper Collins, German College Dictionary William Collins Sons & Co. New York, 2003: 296
15. Langenscheidts Grosswörterbuch, Deutsch als Fremdsprache(Dieter Götz, Günther Haensch, Hans Wellmann), Berlin. München. Wien. Zürich. New York, 1996: 452
16. Meyers Enzyklopädisches Lexikon, Band 11, Bibliographisches Institut. Mannheim/Wien/Zürich, 1974:628
17. Randall L. Jones and Erwin Tschirner, Frequency dictionary of german, London and New York 2006, 189 S.
18. Wahrig Gerhard, Deutsches Wörterbuch 6, neu bearbeitete Auflage Auf der Grundlage der neuen amtlichen Rechtsschreibregeln /Bertelmann Lexikon Verlag, 1997, Gütersloh, 1405 S.

ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԿԱՅԲԵՐ

1. <http://www.dwds.de/>
2. <http://www.ids-mannheim.de/> (05.10. 2014)
3. www.eanc.net (16.11.2014)

ЭЛИЗА КАЗАРЯН, СИРАНУШ ПАПОЯН - СОПОСТАВИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ КОНЦЕПТА «ОЧАГ» В НЕМЕЦКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

В настоящей статье сопоставляются энциклопедические, словарные и корпусные значения немецкого концепта «Heim» и армянского концепта «օջիւր». В ней выявляются как общие, так и разные значения, присущие только одной отдельной культуре. Статья завершается заключением, в котором отмечается что в обеих лингвокультурах приоритетными являются такие когнитивные признаки концепта «очаг», как *уют, душевность, семейность*. «Очаг» рассматривается не только как материальный объект, но и как явление, которое связано с чувственным миром человека.

ELIZA GHAZARYAN, SIRANUSH PAPOYAN – CONTRASTIVE LINGUISTIC ANALYSIS OF THE CONCEPT “HOME” IN GERMAN AND ARMENIAN.

In this article the concept of «home» is compared in German and Armenian Languages and cultures. It is examined as general, as the only one cultural typical meanings. The article comes to the conclusion, that in both linguocultures dominate cognitive characters of concept «home» as *comfort, spirituality, homly*. «Home» is not only material subject, but also is connected with the emotional world of the human being.

**ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ
ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԱԼԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հիմնաբառեր՝ ճանաչողական փոխաբերություն, բժշկագիտական տերմինահամակարգ, բժշկագիտական տեսություն, կլինիկական իրողություն

Ակնհայտ է, որ բժշկագիտության տերմինահամակարգի զարգացումը ներկայումս մեծապես պայմանավորված է բժշկության ոլորտում գրանցվող գիտական նվաճումներով, ինչպես նաև նորանոր տեխնոլոգիաների և լուծումների ներդրմամբ: Այս ամենի արդյունքում անհրաժեշտություն է առաջանում ստեղծել, առկայացնել և կիրառել բառապաշարային նոր միավորներ, որոնք կներկայացնեն բժշկական որևէ երևույթի էական հատկանիշները և համալիր բնութագիրը՝ միաժամանակ լինելով պարզ, որոշակի և ճշգրիտ: Բժշկության մեջ նորահայտ, նախկինում գոյություն չունեցող կլինիկական իրողությունների, գործընթացների լեզվականացման նպատակով տերմինաբանական միավորների ստեղծման առավելապես արդյունավետ մեխանիզմներից եղել է և ցայսօր համարվում է հասկացական կամ ճանաչողական փոխաբերությունը:

Վերլուծելով տարբեր մտեցումներ՝ գալիս ենք այն եզրակացության, որ տարբեր ժամանակներում փոխաբերության գիտագործնական կարևորությունը մղվել է ետին պլան՝ դիտելով այն որպես խոսքի դրվագագարդմանն ուղղված հնար: Անգլիացի ականավոր փիլիսոփա և գրող Թոմաս Հոբսն, օրինակ, իր «Լևիաթան» աշխատությունում թվարկում է անհեթեթության մի շարք պատճառներ, որոնցից վեցերորդն, ըստ նրա, «*փոխաբերության ... գործածությունն է բառերն ուղիղ իմաստով օգտագործելու փոխարեն*» [Hobbes 1909:36]:

Բրիտանացի մեկ այլ հեղինակ է՛լ ավելի է զարգացնում փոխաբերության կիրառությունը գիտության ասպարեզում բացասող այս տեսակետը: Առաջին անգամ 1690 թվականին լույս տեսած «Ակնարկ մարդկային դատողության մասին» էսսեում բրիտանացի մանկավարժ և փիլիսոփա Ջոն Լոքը արտահայտում է այն միտքը, որ լեզուն հաճախակի է աղավաղվում փոխաբերական միջոցների օգտագործմամբ [Locke 1959]:

Այս տեսակետների շրջանառությունից մոտ երեք դար անց Ա. Ռիչարդսն [Richards 1936] առաջինն էր, ով հանրությանը ներկայացրեց ճանաչողական փոխաբերության գաղափարը, որով էլ նոր հուն առաջադրեց փոխաբերության վերաբերյալ ուսումնասիրություններում: Ըստ Ռիչարդսի բնորոշման՝ «... երբ կիրառում ենք փոխաբերություն, մենք ունենք երկու միտք երկու տարբեր առարկաների մասին՝ համադրված և մեկ վերտառությամբ կամ արտահայտությամբ ձևակերպված, և այս առարկաների փոխներգործության արդյունքում ի հայտ է գալիս իմաստը» [Richards 1936: 93]: Եթե հետևենք այս տեսությանը, կարող ենք եզրահանգել, որ փոխաբերական իմաստը տեղակայվում է մեկ այլ՝ բառացի, անվանողական իմաստի շրջանակում՝ ներազդելով այդ իմաստի վրա և հանգեցնելով այդ իմաստի փոփոխմանը:

Փոխաբերությանը հատկապես լրջագույն դերակատարում վերագրվեց 1980 թվականին «Փոխաբերությունը, որով ապրում ենք» աշխատության հրատարակությունից հետո, որը հեղինակել էին Ջ. Լեքոֆը և Մ. Ջոնսոնը: Այս աշխատությունը բեկումնային էր մարդկային հասկացության մասին ուսումնասիրությունների շրջանում, քանի որ առաջադրում և հիմնավորում էր այն գաղափարը, որ փոխաբերությունը մարդու ճանաչողական համակարգի առանցքային տարր է և հանդիսանում է հիմնարար հասկացական կառույց մտքի զարգացման գործընթացում: Լեքոֆը և Ջոնսոնը գրում են, որ «...առօրյա կյանքը, ոչ միայն լեզվի, այլև մտածողության և գործունեության մակարդակներում գերհագեցած է փոխաբերությամբ: Մեր հասկացական համակարգը, որով մտածում և գործում ենք, ըստ էության, փոխաբերական է» [Lakoff, Johnson 2003:4]:

Համաձայն մի շարք այլ մոտեցումների՝ փոխաբերությունը ոչ միայն հասկացական գործառույթ է իրականացնում, այլև անհատի լեզվամտածողության համակարգի մաս է կազմում: Քիթեյը [Kittay 1987:13] պնդում է, որ «պարզագույն խոսույթի շրջանակում չենք կարող շարադրել նույնիսկ երեք նախադասություն առանց դրա [փոխաբերություն կիրառելու] ...»: Ուեյը [Way 1994:2] նշում է, որ «առօրյա խոսքը հագեցած է փոխաբերության այնպիսի չափաբաժնով, որ մենք հազվադեպ ենք գիտակցում վերջինիս առկայության մասին»:

Փոխաբերությունն, առավել ընդհանրացված բնորոշմամբ, աշխարհը հասկացական մակարդակում առկայացնելուն ուղղված մտածական գործընթացների հիմնատարր է և անբաժանելի մասնիկ, որը ձևավորում է աշխարհընկալում և իրականության վերաբերյալ պատկերացումներ՝ համաձայն այն պնդման, որ «փոխաբերություններն ունեն ներակա իմաստներ, որոնք ընդգծում են ... մեր կենսափորձի որոշ հայեցակետեր» [Lakoff, Johnson 2003:156]:

20-րդ դարը փոխաբերության մասին ուսումնասիրություններում նշանավորվեց այն պատճենի անկումով, որը կանգնեցվել էր գիտության ոլորտում բառացի կիրառություն ունեցող լեզվամիավորների և փոխաբերության միջև: Այս արհեստածին տարանջատումը վերացավ գիտության լեզվի և ճանաչողականության ոլորտում մի շարք համալիր հետազոտությունների, և մասնավորապես, փոխաբերությունը՝ որպես ճանաչողականությանն ուղղված միջոց, հասկացական գործիք մեկնաբանելու շնորհիվ: Դարասկզբին, այդպիսով, տեսաբանները նպատակ էին հետապնդում բացահայտել, թե ինչպիսի գործառույթ է իրականացնում փոխաբերությունը ճանաչողականության, աշխարհընկալման և լեզվագիտակցության ձևավորման տեսանկյունից՝ տեղաշարժելով այն լեզվական տիրույթից դեպի ճանաչողականության հարթակ: Ըստ այդմ, տեսաբանները սկսեցին դիտարկել հասկացական կամ ճանաչողական փոխաբերություններ, որոնք հնարավորություն են տալիս ընկալել հասկացական մի տիրույթը մյուսի միջոցով: Հարկ է նշել, որ տվյալ պարագայում փոխաբերությունը գլխավորապես ծառայում է մարդու՝ գիտակցությամբ, գիտելիքներով և կենսափորձով ամրագրված աշխարհընկալման բացատրությանը: Ճանաչողական փոխաբերությունը հիմնականում ձևավորվում է այնպիսի գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են ազգային ավանդույթը, գաղափարախոսությունը, տվյալ ժամանակահատվածում կարևորվող արժեհամակարգը և մշակութափոփոխ աշխարհընկալումը:

Ինչ վերաբերում է գիտության ոլորտում կիրառությանը, այստեղ փոխաբերությունը անհրաժեշտ բաղադրատարր է գիտական տեսության ձևավորման, ինչպես նաև գիտական երևույթների ընկալման գործում: Ինչպես նշում են Լեքոֆն ու Ջոնսոնը, փոխաբերական մտածողության շնորհիվ հնարավոր է լինում լեզվականացնել վերացականը գիտության ոլորտում [Lakoff, Johnson 1999: 128]:

Հատկանշական է, որ անհատի կողմից գիտության երևույթների ընկալումը նույնպես ձևավորվում է անհատի կենսափորձի և մշակութափոփոխ համոզմունքների արդյունքում: Լեհ մանրէաբան Լ. Ֆլեքը [Fleck 1979] պնդում է, որ այդպիսի ընկալումը արգասիքն է այն համոզմունքների, որոնք առկա են անձի գիտակցության մեջ տվյալ ժամանակահատվածում, իսկ բազմաթիվ գիտական բացահայտումների հիմքում ընկած են որևէ իրողության վերաբերյալ ունեցած նախնական գաղափարները: Այս նախնական գաղափարները, համաձայն հեղինակի, առկա են գիտական ապացույցների երևան գալուց դեռ շատ առաջ: Օրինակ, նախքան վարակաբանության տեսության և մանրադիտակի հայտնագործումը գոյություն է ունեցել այն գաղափարը, որ հիվանդության հարուցիչները փոքրիկ և անտեսանելի կենդանի օրգանիզմներն են: Ֆլեքն իր

«Գիտական փաստի ծնունդն ու զարգացումը» [Fleck 1979] աշխատությունում գալիս է այն եզրահանգման, որ գիտական տեսությունը շատ հաճախ ձևավորվում է ոչ հստակ, դեռևս աղոտ, սոցիալական իրողություններով պայմանավորված գաղափարներից: Ֆլեքը պնդում է, որ տեսաբանը, տեսություն ձևավորելիս, սովորաբար հղում է անում հանրային փորձին և հասարակությանը մատչելի գիտելիքին, որպեսզի կազմավորի իր կողմից առաջարկվող տեսության համար անհրաժեշտ հասկացությունները: Համաձայն Ֆլեքի՝ *«հասկացությունները հանպատրաստից չեն ստեղծվում, այլ սահմանվում են իրենց «նախահայրերի» հիմքով»* [Fleck 1979:20]: Հատկանշական է, որ գիտության ոլորտում կիրառվող փոխաբերությունները նույնպես սերում են հանրամատչելի գիտելիքի շրջանակից: Որպեսզի ապացուցի այն ենթադրույթը, որ գիտության հասկացությունները և տեսությունները պայմանավորված են սոցիալ-մշակութային գործոններով և հանրային ընկալումներով, Ֆլեքը հղում է կատարում սիֆիլիս հասկացությանը և Վասերմանի ռեակցիային: Հեղինակը բացատրում է, թե ինչպես է սիֆիլիսը անվանվել **«the carnal scourge»** փոխաբերությամբ, երբ առաջին անգամ այն տարածվել է Եվրոպայում 15-րդ դարում՝ որակվելով որպես պատիժ մեղսածին, ապօրինի կենակցության և հեշտասիրության համար: Թարգմանաբար «the carnal scourge» փոխաբերությունը նշանակում է «մարմնական պատիժ»: Նկատենք, որ այս արտահայտությունը գործածական է եղել հասարակության լայն շրջաններում՝ պայմանավորելով, ըստ էության, հիվանդության հետազոտությամբ զբաղվող գիտնականների անհատական ընկալումները: Հետագա տարիների ընթացքում, երբ այս հիվանդությունն ունեցողների արյան մեջ նկատվեցին ախտաբանական փոփոխություններ, ի հայտ եկավ **«foul blood»** արտահայտությունը, որը բառացի նշանակում է «կեղտոտ արյուն»: Այսպիսով, սիֆիլիսը սկսեց զուգորդվել արյան հետ և, աստիճանաբար, հիվանդներից պահանջվեց հանձնել արյան թեստեր: Արդյունքում, հիվանդի արյան շիճուկի հատուկ հակամարմնի ռեակցիան, որը կոչվում է Վասերմանի ռեակցիա (the Wassermann reaction), ինչպես նաև վարակի հարուցիչի՝ «*Spirochaeta pallida*»-ի բացահայտումը գիտական հիմք ապահովեցին հիվանդության մասին ժամանակակից բժշկագիտական տեսությունների մշակման համար: Կարելի է ասել, որ ժամանակին սիֆիլիսի մասին հանրայնորեն ամրագրված ընկալումները լեզվականացվել են փոխաբերության հասկացական և արժեքային զուգորդումների շնորհիվ:

Ինչ վերաբերում է մինչ այժմ բժշկագիտության մեջ գործածական «սիֆիլիս» տերմինին, նշենք, որ որոշ ստուգաբանական աղբյուրների և տվյալների համաձայն, այն սերում է «*Syphilis Sive Morbus Gallicus*» պոեմի վերնագրից, որը պատկանում է Զիրոլամո Ֆրակաստորոյի՝ իտալացի բժշկի, բանաստեղծի և գիտնականի գրչին: Ստեղծագործությունը հրատարակվել է 1530

թվականին և ներկայացնում է Syphilis անունով հովվի պատմությունը, որը հավանականորեն եղել է հիվանդության առաջին կրողը
[<http://www.etymonline.com/index.php?term=syphilis>,
<http://www.sciencefriday.com/segment/05/27/2011/science-diction-the-origin-of-the-word-syphilis.html>, <http://www.npr.org/2011/05/27/136717683/science-diction-the-origin-of-the-word-syphilis>]:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ գիտության մեջ գործածվող փոխաբերությունները սերում են հանրամատչելի գիտելիքից, կարելի է մտահանգել, որ դա է պատճառը, որ բժշկագիտության զարգացման պատմության մեջ հանդիպում ենք կլինիկական իրողությունների և ախտաբանական վիճակների մատչելի այնպիսի արտահայտչաձևերի, որոնք մասնագիտական խրթին գիտելիքը դարձնում են գիտահանրամատչելի: Այսպիսի փոխաբերություններից են, օրինակ, կազմախոսական դաշտի ճանաչողական փոխաբերությունները, որոնք օգտագործվում են՝ լեզվականացնելու անատոմիայի և ներքին հիվանդությունների ոլորտներում որևէ ախտաբանություն: Տվյալ դեպքում, օրինակ արդի կիրառություն ունեցող «**ballerina's pose**» փոխաբերությունը բնորոշում է գլխուղեղի կաթվածի ենթատեսակ, որը բնութագրվում է ստորին վերջույթների սպաստիկ պարալիզով:

Ճանաչողական այս փոխաբերության հիմքում ընկած է այն, որ ստորին վերջույթների մկանների և պարանոցի մկանների տոնուսի բարձրացման հաշվին առաջացած դիրքը հիշեցնում է բալետի պարուհուն՝ իրար միացված և ձգված ոտքերով, իսկ պարանոցը թեքված որևէ ուղղությամբ: Ահավասիկ, պատկերային և հասկացական զուգորդումը բալետարվեստում այս դիրքի հետ, կամ վերջինիս վերաբերյալ արմատացած նախնական գաղափարը, նպաստում է ախտահարումն անվանող հասկացույթ ձևավորելուն:

Մեկ այլ փոխաբերություն՝ «**caput medusa**»-ն կամ բառացիորեն «**head of the medusa**»-ն ներկայումս լայնորեն կիրառվում է՝ նկարագրելու հիպերտենզիայից և յարդի ցիռոզից տառապող հիվանդի որովայնի մակերեսին փքված և գալարուն, խոպոպներ հիշեցնող, ճյուղավորված արյունատար անոթները, ինչպես «Caput medusae and palmar erythema are cardinal signs in cirrhosis of liver with portal hypertension» [Hari Kumar, Rastogi 2011], կամ «Caput medusae is a network of dilated veins surrounding the umbilicus» [http://www.hopkinsmedicine.org/gastroenterology_hepatology/_pdfs/liver/portal_hypertension.pdf] օրինակներում: Առասպելական կերպարի՝ Գորգոն Մեդուզայի մասին մտավոր ընկալումը զուգորդվում է նրա վարսերի հետ, որոնք գալարվող օձերի տեսք ունեն: Ըստ այդմ, այս փոխաբերության շնորհիվ առկայացվել է այս

ախտահարման անվանումը՝ տվյալ դեպքում հասկացական և պատկերային զուգորդումների բացահայտման միջոցով:

Ելնելով վերոնշյալից՝ կարելի է եզրահանգել, որ ճանաչողական փոխաբերությունը բժշկագիտության ոլորտում երկու տարբեր, հակադիր տիրույթներից, տվյալ դեպքում՝ հանրամատչելի գիտելիքից մասնագիտական գիտելիքի հարթակ ներթափանցած միավոր է, որն իրապես մեծ ներդրում ունի թե փորձարարական, թե գիտականորեն ապացուցված իրողությունների մասին ընկալումների կամ հասկացումների ձևավորման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Fleck, L., *Genesis and Development of a Scientific Fact*. Chicago and London: The University of Chicago Press, 1979.
2. Hari Kumar, K.V., Rastogi, S.K., *Caput medusae in alcoholic liver disease*, 2011, Available at: <http://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/22248963>. Last retrieved on March 26, 2015.
3. *Hobbes's Leviathan*, Reprinted from the edition of 1651, With an Essay by the late W.G. Pogson Smith, Oxford: Clarendon Press, 1909.
4. Kittay, E.F., *Metaphor: Its Cognitive Force and Linguistic Structure*. Oxford: Oxford University Press, 1987.
5. Lakoff, G. and Johnson, M., *Metaphors we live by*. London: The University of Chicago Press, 2003.
6. Locke, J., *An Essay Concerning Human Understanding*. New York: Dover Publications, 1959.
7. Way, E.C., *Knowledge Representation and Metaphor*. Oxford: Intellect, 1994.
8. <http://www.etymonline.com/index.php?term=syphilis>
9. http://www.hopkinsmedicine.org/gastroenterology_hepatology/_pdfs/liver/portal_hypertension.pdf
10. <http://www.npr.org/2011/05/27/136717683/science-diction-the-origin-of-the-word-syphilis>

11. <http://www.sciencefriday.com/segment/05/27/2011/science-diction-the-origin-of-the-word-syphilis.html>

**СВЕТЛАНА МАРКАРЯН, АЛИНА ПЕТРОСЯН - НАУЧНЫЕ КОНЦЕПЦИИ
КОГНИТИВНОЙ МЕТАФОРЫ В МЕДИЦИНСКОЙ СФЕРЕ**

В данной статье анализируются научные концепции когнитивной метафоры в области медицины. Рассматривается вопрос о когнитивной роли метафорической номинации в структурировании восприятий, которые связаны с клиническими явлениями и патологиями.

**SVETLANA MARGARYAN, ALINA PETROSYAN - SCIENTIFIC
CONCEPTIONS OF COGNITIVE METAPHOR IN THE MEDICAL SPHERE**

The article is an endeavor towards examining the scientific conceptions cognitive metaphors entail when used in the medical sphere. These metaphors are specifically used as cognitive instruments in structuring understanding and facilitating comprehension on various clinical conditions and medical phenomena.

THE CHARACTERISTIC FEATURES OF LEXICO-SEMANTIC AND LEXICO-
STYLISTIC TRANSFORMATIONS IN TRANSLATING FICTION
(ON THE MATERIAL OF SHORT STORIES BY O. HENRY)

NAIRA MARTIROSYAN

Key words: translation transformation, lexico-semantic, lexico-stylistic, equivalence, stylistic devices

The current paper aims at studying some lexico-semantic and lexico-stylistic transformations in translating literary texts.

On different stages of the scientific thought development a number of outstanding linguists have highlighted the problem of the literary text translation. Irrespective of the latest studies, as well as their depth and specificity, and achievements in the present field, the problem of literary text translation still remains full of gaps, and an exigency arouses for a thorough analysis of lexico-semantic and lexico-stylistic transformations by the example of literary texts. "Translation is an ancient human's activity. From its very beginning translation played a significant social function allowing people of different languages communicate. Spreading of written translations gave people access to cultural achievements of other people and it made interacting and inter-saturation of literatures and cultures feasible" [Breus 2001:562]. It is common knowledge that in the course of time the perception, evaluation and quality of translation change; it is the literary text that requires an adequate, highly literary translation. "Translation, like other human activities, is influenced by socio-cultural factors which take on importance through norms" [Toury 1995:55].

On analyzing the peculiarities of some lexico-semantic devices, it becomes clear that the translation of suchlike means requires a complex of translation transformations to preserve the emotional value of a statement and to perform the functional tasks of a stylistic technique. In most cases translation is carried out with the help of various translation modifications like **lexico-grammatical replacement**, **interpretation**, as well as by means of **additions** and **omissions**.

Some short stories by O. Henry have been chosen as the subject matter of our survey. When describing O. Henry's writing style, they always use the term "**smile with tears**," which implies his twisted way of thoughts and endings about every story. These stories usually end in a humorous but also cruel kind of way. It's absolutely

useful to elevate the artistic thought in writing a thoughtful story.
www.123helpme.com/o-henrys-writing-style-view

O. Henry's writing style speaks of love and compassion for people. His stories concentrate on the personalities of his characters and their life experiences, and one of America's favorite authors, O. Henry wrote from the heart and touched millions of hearts in the process. www.life123.com › ... › [Reading & Literature](#)

Now we will refer to some stylistic devices (SD) and interpret their usage, as well as the equivalence of their translation into Armenian through examples extracted from O. Henry's short stories.

One of the lexico-semantic means which has been under our consideration is **lexical emphasis**. It is achieved by means of special words or phrases; certain words tend to be emphatic because of their lexical and semantic content.

Contrastive emphasis is one of the patterns of lexical emphasis.

1. "The restaurant catered to **large** appetites and **modest** purses. Its crockery and atmosphere were **thick**; its soup and napery very **thin**." ("The Cop and the Anthem", p.40)

<<Ռեստորանը նախատեսված էր մեծ ախորժակների և պարսպ քսակների համար: Այդտեղ ամանեղենն ու օղը ծանր էին, սփռոցներն ու սուպերը՝ ջրալի>>:(<<Փարավոնը և Խորալը>>, էջ 20)

In the sentence cited above the author has preserved the value of **contrastive emphasis** with the help of antonymic pairs "**large-modest**" and "**thick-thin**" and use of parallel structures. On the whole the author's intention is conveyed in the Armenian translation though the translator has applied some transformations. If the adjective **ծանր** can be applied as an attribute for the nouns **ամանեղեն** and **օղ**, the usage of the adjective **ջրալի** with the nouns **սփռոցներ** and **սուպեր** is not justified because in English the word **thin** has the meanings of "containing a lot of liquid and relatively little substance" and "small in width or thickness", whereas in Armenian the adjective **ջրալի** doesn't.

We think that the cited sentence would sound better, if the translator had translated **modest purses** into **համեստ քսակներ**, not **պարսպ քսակներ**, **soup** into **ապուր**, **thin** into **անհիրապուր**, i.e. <<Ռեստորանը նախատեսված էր մեծ ախորժակների և համեստ քսակների համար: Այդտեղ ամանեղենն ու օղը ծանր էին, ապուրներն ու սփռոցները՝ բարակ>>:

The stylistic devices **metaphor**, **simile**, **personification** have served as a subject for our survey, too.

2. "Arrest **seemed** but a **rosy dream**. The island **seemed** very **far away**." ("The Cop and the Anthem", p.40)

<<Ձերբակալությունը սկսեց նրան **ծիածանագույն երազ թվալ**, Կղզին՝ **հեռավոր տեսիլք**>>:(<<Փարավոնը և Խորալը>>, էջ 20)

In the example under study the author has successfully utilized **simile** and the emphatic conjunction **but**. The aim of the author transmitted through the Armenian translation is somewhat different; the translator has combined the parallel structures in which he has omitted the emphatic **but**. Besides this omission, the translator has transformed the epithet **rosy dream** into **ծիածանագույն երազ** irrespective of the fact that in Armenian we have the exact equivalent of **rosy-վարդագույն**. The translator has also replaced the adjective **far way** by the word combination **հեռավոր տեսիլք**.

Let's refer to another example of simile:

3. *Jim stopped inside the door, as immovable as a setter at the scent of quail.* .("The Gift of the Magi, p.34)

Ջիմն **անշարժ քարացավ** դռների մոտ, **ինչպես լորի հոտ անզլիական քերձե**: (<<Մոգի ընծաները>>, էջ 34)

On observing the sentences given above we see that the author has used the stylistic device **simile**, and we can say that the author's intention and the stylistic device of simile have been mainly preserved by the translator. However, in the Armenian version one can easily single out some tautology- **անշարժ քարացավ**. Instead, to our mind, the translator should have translated either **անշարժ կանգնեց** or **քարացավ**. One may wonder why the translator has translated **setter** as **անզլիական քերձե** when the dictionary definition of the word states that it is "a breed of dog with long hair that can be trained to find animals and birds in a hunt", not highlighting any particular species. Moreover, the English **inside the door (singular)** is translated into Armenian with the noun in plural-**դռների մոտ**.

Thus, we suggest the following version of translation:

Ջիմը դռան մոտ այնպես **անշարժ կանգնեց**, **ինչպես կկանգներ լորի հոտ ատած որսկան շունը**:

4. "Oh, and the next two hours **tripped by on rosy wings**."("The Gift of the Magi, p.33")

<<Ետևյալ երկու ժամերը **ճախրեցին վարդագույն թևերով**>>: (<<Մոգի ընծաները>>, էջ 31)

In the above-cited sentence the author has successfully implemented the trite metaphor " **tripped by on rosy wings**" (*to trip-the third dictionary meaning of the verb is "to walk, run, dance with quick light steps"*) and the translator has smoothly transmitted its essence <<**ճախրեցին վարդագույն թևերով**>>: both the meaning and form are what is found in the original. At the same time the translator has omitted

the interjection **Oh**, and the conjunction **and**. However, the reader gets the same impact as in the target language.

Another lexical stylistic device which is of great interest is **personification**.

Whenever emotions, desires, sensations, physical gestures and speech are stated in the context of non-living things, **personification** is said to have taken place. **Anthropomorphism**, or **personification**, attribution of **human** form or other characteristics to anything other than a human being, has **ancient** roots as a **literary device** in **storytelling**, and also in **art**. Most cultures have **traditional fables** with anthropomorphised animals, who can stand or talk as if human, as characters.

Through anthropomorphisms authors depict **deities** with human form, create fictional non-human animal characters with human physical traits, and ascribe human **emotions** or motives to forces of **nature**, such as **hurricanes** or **earthquakes, winds, frosts, diseases** as it is in our case ,e.g.

5. “A **dead leaf** fell in Soapy’s lap. That was Jack Frost’s card. Jack is kind to the regular denizens of Madison Square, and gives fair warning of **his** annual call. At the corners of four streets **he hands his** pastboard to **the North Wind, footman of the mansion of All Outdoors**, so that the **inhabitants** thereof may make ready”. (“The Cop and the Anthem”, p.37)

<<Ղեղին մի տերև ընկավ Սոպիի ծնկին: Դա **Ձմեռ պապի** այցեքարտն էր. այդ **ծերուկը** բարի է Մեդիսն պուրակի մշտական բնակիչների նկատմամբ և ազնվորեն նախազգուշացնում է նրանց իր մոտալուտ գալստյան առթիվ: Չորս փողոցների խաչմերուկում նա իր այցեքարտը հանձնում է **Հյուսիսային քամուն**, <<Բայց երկնքի տակ>> հյուրանոցի **բարապանին**, որպեսզի նրա բնակիչները պատրաստվեն>> (<<Փարավոնը և Խորալը>>, էջ 15)

In the sentence cited above the author has used personification, and the translator has preserved the SD and the overall impact of the original.

Here both **frost** and **wind** embody human characteristics. **Frost** has got a card, he is very kind to other citizens, has a friend- **the North Wind, footman of the mansion**, whom he passes his card. The translator has used the adjective **ղեղին** when translating the word combination “**a dead leaf**” which could also have been translated as **չորացած տերև**. He has also replaced **Jack Frost** by **Ձմեռ պապի**, and the word combination **annual call** is replaced **մոտալուտ գալուստ**: Besides, the translator has interpreted **the mansion of All Outdoors** as <<Բայց երկնքի տակ>> **հյուրանոց** in which the verbal irony is quite obvious.

The next sentence we intend to dwell on is another vivid example of personification.

6. “In November a cold, **unseen stranger**, whom the doctors called **Pneumonia**, stalked about the colony, touching one here and there with its **icy fingers**”. (“The Last Leaf”, p.80)

<<Նոյեմբերին անհամբույր այն **օտարականը**, որին բժիշկներն անվանում են <<**Պնևմոնիա**>>, անտեսանելիորեն անցավ գաղութով, իր **սառցե մատները** դիպցնելով մերթ մեկին, մերթ մյուսին: (<<Վերջին տերևը >>, էջ 80)

In the above cited example the author has on the whole successfully utilized personification. In this case a disease embodies human characteristics. In both languages the usage of the given stylistic device is justified with the help of such lexical units as **unseen stranger**, **icy fingers** and **օտարական, սառցե մատներ**.

Thus, the surveyed examples come to show that the choice of each of the translation transformations requires a careful evaluation of the language situation/context in which this or that stylistic device is used. The transmission of an author’s style, even with the help of complex translation transformations, causes a number of problems for a translator, and the solution to them requires uniqueness on his part.

REFERENCES

1. Breus Ye. V. Theory and practice of translation from English language into Russian. - M.: 2001.
2. Toury G. Descriptive Translation Studies and Beyond. Amsterdam and Philadelphia: John Benjamins, 1995.

FICTION CITED

1. O. Henry, Selected Stories Progress Publishers, Moscow, 1977.
2. Օ’Հենրի., Վերջին տերևը, <<Անտարես>>, Երևան 2008.

URLs:

1. www.123helpme.com/o-henrys-writing-style-view....
2. www.life123.com › ... › [Reading & Literature](#)

ՆԱԻՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ - ԲԱՌԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԲԱՌԱՈՃԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ (Օ. ՀԵՆՐԻԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Հոդվածում վերլուծվում է Օ.Հենրիի պատմվածքներում առկա այն արտահայտչամիջոցները, որոնց միջոցով առկայանում են գեղարվեստական պատկերները: Ուսումնասիրվում են նաև այն տեղաշարժերը, որոնք տեղի են ունենում արտահայտչամիջոցների հայերեն թարգմանության մեջ:

НАИРА МАРТИРОСЯН - ЛЕКСИКО-СЕМАНТИЧЕСКИЕ И СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ТРАНСФОРМАЦИЙ В ЛИТЕРАТУРНОМ ПЕРЕВОДЕ (НА МАТЕРИАЛЕ РАССКАЗОВ О. ГЕНРИ)

В статье рассматриваются стилистические приемы и средства их актуализации в рассказах О. Генри. Анализируются семантические и стилистические особенности трансформаций стилистических средств в армянском переводе.

**ԻՏԱԼԵՐԵՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԵԶՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ արվեստի եզր պարունակող դարձվածքներ, զուգահեռ (դարձվածային) և ոչ զուգահեռ (դարձվածային համաբանությամբ) համարժեքներ, դիպվածային պատճենման եղանակ, նկարագրական արտահայտություն, արտալեզվական գործոններ, ազգային լեզվամտածողություն, իրակույթ, բովանդակային պլան, արտահայտության պլան

Դարձվածի առաջացումը պայմանավորված է լեզվական նշանով, արտաքին աշխարհի առարկաների ու երևույթների հետ ունեցած կապով: Յուրաքանչյուր դարձվածային միավոր արտահայտում է մեկ հասկացություն, այսինքն այն ինչ-որ առարկաների, երևույթների նշանն է: Դարձվածի նշանային բնույթով է պայմանավորված այն փաստը, որ երբեմն տարբեր ժողովուրդների մոտ գոյություն ունեցող համանման երևույթների վերաբերյալ տարբեր ԴՄ-ներ են ստեղծվում, քանի որ դրանց հիմքում ընկած են տվյալ ժողովրդի կենցաղին, սովորույթներին, կրոնին և հոգեբանությանը բնորոշ գործոնները: Լեզվական նշանի հետ են առնչվում նաև ԴՄ-ի ազգային բնույթն ու ազգային լեզվամտածողությունը, որոնք նրա կարևորագույն առանձնահատկություններն են, քանի որ ամեն մի դարձված կապված է այդ լեզուն կրող ժողովրդի ու նրա մտածողության հետ և հարազատ է միայն այդ ազգին:

Համադրելով երկու լեզուների արվեստի դարձվածապաշարի (մասնավորապես, Կ. Լապուչիի «Իտալերեն դարձվածքների բառարան»-ի և «Իտալերեն ասացվածքների բառարան»-ի 313, Ֆ. Կազադեիի բառացանկի 195, ինչպես նաև Ա. Սուքիսայանի և Ս. Գալստյանի «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ի 500 և Պ. Բեդիրյանի «Հայերենի դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան»-ի՝ 600 դարձվածքները) դարձվածքները, նկատվեց, որ թարգմանաբանության տեսանկյունից երկու լեզուներում առկա են «միևնույն պատկերն արտահայտող զուգահեռ (դարձվածային) և ոչ զուգահեռ (դարձվածային համաբանությամբ) համարժեքներ,

ինչը վկայում է դրանց հիմքում ընկած մշակութային ընդհանրությունների մասին»¹¹⁷:

Արվեստի եզր պարունակող իտալերեն դարձվածքները և նրանց հայերեն տարբերակները դասակարգվել են ըստ թարգմանության եղանակների: Այսպես, հետևյալ դարձվածքները կազմում են **զուգահեռ (դարձվածային) համարժեքների** ստվար խումբը, օրինակ՝ *essere la colonna (di qc)*՝ բառացի՝ *ինչ-որ բանի սյունը լինել* դարձվածքը նույնությամբ առկա է նաև հայերենի դարձվածապաշարում, ինչը երկու լեզուներում էլ նշանակում է *ինչ-որ բանի հենարանը, նեցուկը լինել*: Երկու լեզուների դարձվածապաշարում էլ առկա են միևնույն՝ *սյուն* ճարտարապետական եզրով կազմված ևս երկու դարձվածքներ, որոնք միևնույն իմաստն են արտահայտում: Դրանք են՝ *colonna d'infamia*՝ *անարգանքի սյուն* (հրապարակային անարգանք) և *colonna d'Ercole*՝ *հերակլյան սյուններ*, որը նշանակում է *ծայրահեղություն, արսույր, far salire sul trono (qn)*՝ *մեկին գահ (կամ գահին) բարձրացնել՝ թագավոր դարձնել, թագավորեցնել, մեծարել*: Այս դարձվածքներում գործ ունենք թարգմանական զուգահեռ համարժեքների հետ, ինչը նշանակում է, որ երկու լեզուների դարձվածքները համընկնում են ոչ միայն իրենց արտահայտած փոխաբերական պատկերներով, այլև արտահայտման լեզվական միջոցներով՝ բառային, քերականական և այլն:

Իտալերենի *salire/ascendere al trono*՝ բառացի՝ *գահ (կամ գահին) բարձրանալ, թագավոր դառնալ, թագադրվել* դարձվածքը նույնությամբ առկա է նաև հայերենում, սակայն իտալերենում այն ունի նաև հավելյալ նշանակություն, այն է՝ *օձվել պապ*, ինչը մշակութային տեսանկյունից բնորոշ է իտալական հոգևոր իրականությանը:

Իտալերենի *essere/salire sul palcoscenico (di qc)*՝ բառացի՝ *լինել/բարձրանալ/գալ թատերաբեմ*, իսկ հայերենի՝ *թատերաբեմ դուրս գալ* կամ *ելնել* դարձվածքը, նշանակում է *ասպարեզ գալ, գործունեություն սկսել*: Առկա է նաև վերջինիս հակահիշը՝ *scendere dal palcoscenico*՝ բառացի՝ *իջնել թատերաբեմից* դարձվածքը, որը երկու լեզուներում էլ նշանակում է *դուրս գալ ասպարեզից, գործունեության բնագավառը թողնել*:

Non lasciare pietra su pietra (di qc)՝ *քարը քարին չթողնել* դարձվածքը երկու լեզուներում էլ նշանակում է *ավերել, հիմնահատակ կործանել* (այս դարձվածքի հիմքում ընկած է քարե կառույցի ավերման գաղափարը) և ունի արտահայտության միևնույն պլանը, ուստի գործ ունենք զուգահեռ համարժեքի հետ:

¹¹⁷ նույն տեղում, էջ 363:

Essere/stare sulla pista/sulla strada giusta/buona՝ բառացի՝ լինել/մնալ ճիշտ/լավ արահետի/ճանապարհի վրա դարձվածքը միևնույն փոխաբերական նշանակությամբ (կյանքի ճիշտ ուղին ընտրել) առկա է նաև հայերենի դարձվածապաշարում՝ ուղիղ ճանապարհի վրա լինել: Ուստի, թարգմանաբանության տեսանկյունից կրկին գործ ունենք զուգահեռ համարժեքի հետ:

Իտալերենի *essere/stare/trovarsi/finire in un vicolo cieco/in una strada senza uscita*՝ բառացի՝ լինել/մնալ/գտնվել/հայտնվել փակուղու կամ առանց ելքի ճանապարհի առջև դարձվածքը, որը հայերենում ունի փակուղու առաջ կանգնել կամ փակուղում գտնվել երկու լեզուներում ունի դժվար, անելանելի դրության մեջ ընկնել փոխաբերական իմաստը:

Իտալերենի՝ *tagliare/bruciare i ponti* և հայերենի՝ կտրել/այրել կամուրջներն ունեն միևնույն՝ հարաբերությունները խզել փոխաբերական նշանակությունը և միևնույն արտահայտության ձևերը:

Իտալերենի *tirare l'acqua al proprio mulino*՝ բառացի՝ սեփական ջրաղացին ջուր լցնել և հայերենի՝ ջրաղացին ջուր ածել/ավելացնել/լցնել դարձվածքները ունեն ի նպաստ իրեն գործել նշանակությունը:

Uscire dalla porta e rientrare dalla finestra՝ բառացի՝ դռնից դուրս գալ և լուսամուտից մտնել իտալերեն դարձվածքը հայերենում ունի դռնից դուրս անես/հանես՝ լուսամուտից /պատուհանից/պատուհանեն/երդիկից կմտնի/կերևա ձևը: Ինչպես երևում է, այստեղ նույնպես գործ ունենք զուգահեռ համարժեքի հետ (բացառությամբ երդիկ բաղադրիչով տարբերակի գործածության, որտեղ թարգմանության եղանակը ոչ զուգահեռ համարժեքն է):

Non vedere la trave nel proprio occhio՝ բառացի՝ իր աչքի գերանը չտեսնել դարձվածքը հայերենում նույնպես արտահայտվում է զուգահեռ համարժեքով, այն է՝ իր աչքի գերանը մոռանալ՝ ուրիշի աչքի շրուղը (խիլը, ծեղը) նկատել կամ տեսնել, որը նշանակում է իր մեծ պակասությունները անտեսել, ուրիշի չնչին, աննկատելի թերությունները մատնացույց անել:

Վերևում հանդիպած որոշ դարձվածքների ընդհանրություններ երբեմն արդյունք են դասական լեզուներից արված թարգմանության սովորական պարզենման կամ դիպվածային պարզենման եղանակների, օրինակ՝ *torre di Babele*՝ Բաբելոնի կամ բաբելոնյան աշտարակաշինություն (խառնաշփոթ), *colonna d'Ercole*՝ հերակլյան սյուններ, որը նշանակում է ծայրահեղություն, արսուրդ, *città eterna*՝ հավերժական քաղաք (Հոռոմ), *costruire castelli in aria/aerei*՝ բառացի՝ օդային ամրոցներ կառուցել՝ ցնորական, անիրագործելի ծրագրերով տարվել:

Իտալերենի և հայերենի արվեստի դարձվածքներում բավականին մեծ է նաև **ոչ զուգահեռ համարժեքների** կամ **դարձվածային համաբանությունների** թիվը, երբ երկու լեզուներում միևնույն նշանակությունն ունի տարբեր արտահայտության ձևեր: Օրինակ՝ իտալերենի *essere dello stesso stampo*՝ բառացի՝ *միևնույն կաղապարի լինել* դարձվածքը, որը նշանակում է *նույնատիպ, իրար նման լինել*, հայերենում ունի *մի կտավից կտրած, մի սանրի կտավ լինել* ձևերը: Երկու լեզուներում միևնույն պատկերն է, միայն թե իտալերենում այն արտահայտված է *stampo*՝ *կաղապար* խեցեգործության բնագավառին բնորոշ եզր-բաղադրիչով, իսկ հայերենում՝ *կտավ* բաղադրիչով:

Իտալերենի *essere/stare/premere alle porte*՝ բառացի՝ *լինել/մնալ/հրել դռներին/դռները*, *essere/stare/trovarsi alla soglia /soglie di qc*՝ բառացի՝ *լինել/մնալ/գտնվել մեկի շեմին/շեմերին* և *bussare/picchiare alla porta*՝ բառացի՝ *թակել/ծեծել մեկի դուռը* և հայերենի *տուն ու երդիկ լինել* դարձվածքներն արտահայտում են միևնույն՝ *ինչ-որ բանի մոտ գտնվելու* կամ *պատահելու* նշանակություն: Սակայն ինչպես երևում է, հայերենում գործածված **երդիկ** եզրը (ի դեպ իտալերենում համարժեք եզրն է՝ *lucernario*) առավել բնորոշ է հայերենին, քանի որ անցյալում հայկական մշակույթի՝ ճարտարապետության մասն է կազմել:

Ոչ զուգահեռ համարժեքով է արտահայտվում նաև իտալերենի՝ *prendere/ricevere una tegola in testa/tra capo e collo*՝ բառացի՝ *գլխին/գլխի և պարանոցի միջև (հավանաբար՝ ծոծրակին) կղմինդր վերցնել/ստանալ* դարձվածքը, որը երկու լեզուներում ունի *անսպասելիորեն պատահել* նշանակությունը, հայերենում արտահայտվում է այլ՝ *քար բաղադրիչով*, այն է՝ *գլխին քար ընկնել*: Այստեղ ևս առկա է լեզվամշակութային գործոն, քանի որ Իտալիայի տանիքների ծածկը թե՛ նախկինում, թե՛ այժմ կղմինդրից է, իսկ Հայաստանում մի ժամանակ այն քարից է եղել:

Arrivare al tetto՝ բառացի՝ *հասնել տանիքին* և *andare/giungere in porto*՝ բառացի՝ *հասնել նավահանգիստ* դարձվածքները հայերենում ունեն *վարագույրը իջեցնել* ձևը, և պատկերն ընդհանուր է, այն է՝ *հասնել ինչ-որ բանի ավարտին*, թեև արտահայտության ձևերը տարբեր են: Իտալերենի տարբերակներում այն արտահայտվում է տարբեր՝ *tetto*՝ *տանիք/կտուր* և *porto*՝ *նավահանգիստ* բաղադրիչների միջոցով, իսկ հայերենում *վարագույր* (թատետաբեմի) եզրով: Այսպիսով, ոչ զուգահեռ դարձվածային համարժեքների դեպքում առկա են միջմշակութային ընդհանրություններ, քանի որ փոխաբերացման պատկերները միևնույնն են, սակայն տարբեր են դրանց արտահայտման լեզվական միջոցները, մասնավորապես՝ բառային:

Իտալերենում *tirare avanti la baracca*՝ բառացի՝ *խրճիթը առաջ տանել*, դարձվածքը նշանակում է *քրտնաջան աշխատել՝ տունը կամ ձեռնարկությունը*

պահելու համար, հայերենում արտահայտվում է ազատ (փոփոխուն) բառակապակցությամբ, այն է՝ *տունը պահել* ձևով:

Երբեմն իտալերենի որոշ դարձվածքներ հայերենում ունեն և՛ զուգահեռ, և՛ ոչ զուգահեռ համերթերներ: Դրանցից է՝ *i muri hanno orecchie*՝ բառացի՝ *պատերն ականջներ ունեն* դարձվածքը հայերենում ունի *պատերը ականջ(ներ) ունեն, պատերն էլ ականջ ունեն* զուգահեռ համարժեքները: Սակայն հայերենում կան նաև միևնույն դարձվածքի ոչ զուգահեռ համարժեքները, օրինակ՝ *պատերն էլ լեզու ունեն, կտուրը ծակ է, պատը ծակ է*, ինչպես նաև *պատի վրա ճանճ լինել*: Անկախ իրենց արտահայտման ձևերից՝ և՛ զուգահեռ, և՛ ոչ զուգահեռ համարժեքներն ունեն միևնույն բովանդակությունը, այն է՝ *խոսակցությունը լսող կա*:

Vedere il mondo dipinto di rosa՝ բառացի՝ *աշխարհը վարդագույն ներկված տեսնել* դարձվածային պատկերը, մոտավորապես նույն արտահայտությամբ, առկա է նաև հայերենում, միայն թե այստեղ բացակայում է *dipinto*՝ *ներկված* բաղադրիչը, սակայն փոխարենը հայերենում առկա է *ակնոց* բաղադրիչը, այն է՝ *վարդագույն ակնոցով դիտել* կամ *նայել*:

Իտալերենում *dipingere*՝ *նկարել* բայ-բաղադրիչով առկա են՝ *dipingere a colori vivaci* (*զգ*)՝ բառացի՝ *վառ գույներով նկարել*, դարձվածքը նշանակում է *ինչ-որ բանը նկարագրել հետաքրքիր, աշխույժ ձևով*, մինչդեռ *dipingere a forti tinte* (*զգ*)՝ բառացի՝ *նկարագրել ուժեղ/մուգ գույներով*, որը նշանակում է *հոռետեսորեն նկարագրել*: Հայերենում առաջինն առկա է *վառ գույներով նկարագրել* ձևով, մինչդեռ երկրորդը՝ *սև գույներով նկարագրել* կամ *նկարել* ձևով (վատաբանել, պախարակել):

Ուսումնասիրության արդյունքում նկատվեց, որ, բացի վերևում նշված ընդհանրություններից, խնդրո առարկա երկու լեզուների՝ արվեստի եզրով դարձվածքների շարքերում գոյություն ունեն նաև տարբերություններ: Այս դեպքում արդեն խոսքը գնում է ոչ միայն լեզվական դրսևորման միջոցների, այլև միջնակության իրողությունների տարբերության, ինչպես նաև իրակությունների առկայության մասին:

Այսպես՝ *միայն իդալերենին բնորոշ* դարձվածքներից նշենք մի քանիսը:

Riportare a casa la pelle՝ բառացի՝ *մաշկը տուն տանել* դարձվածքը, նշանակում է *փրկվել*, իսկ հայերենի դարձվածապաշարում այն առկա է *կաշին փրկել* տարբերակով:

Fare naufragio in porto՝ բառացի՝ *նավահանգստում խորտակվել* դարձվածքը, որը նշանակում է *ձախողվել ավարտի պահին* դարձվածքը, նույնպես հայերենում բացակայում է, հավանաբար *ծով, նավահանգիստ* և միևնույն իմաստային դաշտի մասը կազմող իրողությունների բացակայության պատճառով:

Ի դեպ, հայերենում *ծով* բառով առկա են **քարը ծովը գցել** և **քարը ծովի հատակը գլորվել** դարձվածքները, որոնք ունեն *ծախողել, դժբախտանալ* իմաստը, որտեղ, թերևս, *ծով* բառն ընկալվում է որպես անսահման, անհուն երևույթ:

Fare tre passi su un mattone՝ բառացի՝ *աղյուսի վրա երեք քայլ կատարել*, որը նշանակում է *գործելու մեջ դանդաղաշարժ* լինել: Հայերենում այս դարձվածքը չկա, քանի որ նրա հիմքում ընկած են երկու մշակույթների, ինչպես նաև երկու երկրներում առկա ճարտարապետության զանազան տարրերի (տվյալ դեպքում՝ *շինանյութի*, քանի որ մինչ օրս Իտալիայում որպես *շինանյութ* է ծառայում *աղյուսը*, մի իրողություն, որ Հայաստանի ճարտարապետությունից գրեթե բացակայում է) տարբերություններ:

Fuggire d'acqua sotto le grondaie՝ բառացի՝ *փախչել/խուսափել ջրից՝ ջրհորդանների տակ* դարձվածքը, որը նշանակում է *ջանալ լուծել խնդիրը և հայտնվել մեկ այլ՝ ավելի մեծ խնդրի առջև* հայերենի դարձվածապաշարում բացակայում է, սակայն այն մոտավորապես կարող է համապատասխանել հայերենի՝ *ցեխից դուրս գալ՝ ցեխաջուրն ընկնել* տարբերակին:

Non passare (neanche) per l'anticamera del cervello՝ բառացի՝ *չանցնել (նույնիսկ) ուղեղի նախասենյակով* դարձվածքը նշանակում է՝ *մտքի ծայրով անգամ չանցնել/չանցկացնել*:

Միայն հայերենին բնորոշ արվեստի եզր պարունակող դարձվածքների առնչությամբ հարկ է նշել, որ հայ մշակույթի զարգացման ընթացքում ևս կազմվել են բազմաթիվ դարձվածքներ, որոնց հիմքում ընկած են տարբեր մշակութային, սովորութային, կրոնական իրողություններ և իրակություններ: Այսպես՝ **պապը չոփ խրել/կոխել** կամ **պապերը խազել, թոնրի մոխիր թափող**՝ չարածճի, կրակի կտոր, **թոնիր գցես՝ շորահոտ չի գալ**՝ ծայրահեղ աղքատության մեջ է, պաղ **թոնրի** վրա նստել՝ տանն ուտելու ոչինչ չունենալ, **կրուրից չիջնել/կրուրը թողնել**՝ նեղանալ, բարկանալ, **կրուրը մոխիր գցել**՝ գործը հաջողեցնել, **խոսքը կրուր գցել**՝ խոսակցության թեման փոխել, **դուռ ու երդիկ է** (բրբ.)՝ գալու վրա է, **դուռ ու երդիկ առնել/բռնել**՝ ամբողջ գյուղով տարածվել՝ ծավալվել, **ծխնելույզից ծուխ դուրս գալ**՝ համաձայնության գոյացման նշան է, **կամուրջի վրա պար գալը բռնել**՝ վտանգավոր քայլ ձեռնարկել՝ խաղ խաղալ, **մանրանկարային ձևի տակ**՝ նույն բանը փոքր մասշտաբով, **քանդակել-թողնել** (խսկց.)՝ կոպտաբար ավարտել որևէ գործ, **մի բան հողմադացների վրա կախել**՝ անորոշ, անհավաստի վիճակի մատնել, **խելքիդ դուռը պաչեմ (պազնեմ)**՝ անխելք, **բերանդ փաճար**՝ լավ ասացիր, **բաղնիքդ անուշ**՝ բարեմաղթություն՝ բաղնիքից դուրս եկածին, **բաղնիքի թասը կորավ**՝ իրարանցում ընկավ, **արևը մուրջում պոռնկ է արել**՝ արևը մայր մտնելու մոտ է, **առաստիղ սևացնող**՝ տուն ու տեղ դնող՝ ծնողներին նվիրված մարդ, **ջաղացը մաճուն աղալ**՝ զուր տեղը խոսել, հոգնել կամ աշխատել, **վանքի**

հավերժ ուսել՝ մեղքը ուխտավորների վրա գցել՝ ինքը մեղավոր լինելով՝ մեղքը անմեղի վրա բարդել, **տունդ չքանդվի**՝ տունդ թող չավերվի, **օջախը շեն կենայ /պահել** (օրհնություն)՝ տունը կանգուն մնալ, կամ մաղթանք՝ բարեկարգ, հարուստ մնալ դարձվածքները և ոչ էլ նրանց արտահայտած պատկերները իտալերենում գոյություն չունեն:

Արվեստի բնագավառի գործուն՝ **երդիկ** և **թոնիր** եզր-բաղադրիչով նշված դարձվածքները, որոնք բնորոշ են միայն հայերենի դարձվածապաշարին, առավել մեծ թիվ են կազմում: Այստեղ ևս հարկավոր է այդ տարածվածության հիմքերը որոնել հայ մշակույթի պատմության առանձնահատկությունների մեջ: Այն դարձվածքները, որոնք քիչ թե շատ թափանցիկ են, այսինքն՝ բաղադրիչներից որևէ մեկի (մասնավորապես արվեստի եզրով արտահայտված գլխավոր բաղադրիչի) իմակը թեկուզ նվազագույն չափով պարունակվում է ընդհանուր դարձվածքի փոխաբերական իմաստում, ապա անխուսափելիորեն պատկերացում է տալիս նաև արվեստի տվյալ բնագավառի և նրա որոշ առանձնահատկությունների մասին:

Վերևում նշված միայն իտալերենին և միայն հայերենին բնորոշ դարձվածքները իրակույթ են պարունակում, իսկ նման դարձվածքները երբեմն անթարգմանելի են լինում: Այս դեպքում որպես թարգմանության հնար գործածում են **ազադ (փոփոխուն) բառակապակցությունը** կամ **անհատական-հեղինակային դարձվածք** և երբեմն էլ թարգմանության համար դիմում են **նկարագրական արտահայտության**¹¹⁸:

Այսպիսով, բացի լեզվական գործոններից արտալեզվական գործոնները նույնպես իրենց ուրույն ազդեցությունն ունեն լեզուների ԴՄ-ների ձևավորման վրա: Ամեն մի լեզվի ԴՄ-ների իմաստի համար հիմք են հանդիսացել տվյալ լեզուն կրող ժողովրդի պատմությունն ու ազգագրությունը, աշխարհագրական տարածքն ու բնակլիմայական պայմանները, տնտեսական կյանքն ու կենցաղը, մշակութային կյանքն ու արհեստները. դարձվածքներում արտացոլվում են նաև տվյալ ժողովրդի ոգին ու հոգեբանությունը, մտածելու և դատելու կարողությունները և այլն: Ինչպես երևաց վերևում, դարձվածքների մի մասը թարգմանելի է լինում այն դեպքում, երբ երկու երևույթների միջև առկա է լինում նմանության, ընդհանրության, զուգորդման հանգամանքը, իսկ մյուս մասը անթարգմանելի՝ քանի որ բնորոշ է միայն տվյալ ժողովրդի կյանքին ու լեզվամտածողությանը:

¹¹⁸ նույն տեղում, էջ 364:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1986. - 363 էջ:
2. Բեդիրյան Պ. Ս., Ժամանակակից հայոց լեզվի դարձվածաբանություն, «Լույս» հրատ., Ե., 1973. - 231 էջ:
3. Գալստյան Ա. Ս., Փոխաբերացման հոգելեզվաբանական վերլուծություն, ԵՊՀ հրատ., Ե., 2008. - 115 էջ:
4. Եղիազարյան Ա. Կ., Գեղարվեստական թարգմանությունը և ժողովուրդների մերձեցումը, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1977. - 143 էջ:
5. Հովհաննիսյան Գ., Հոգելեզվաբանություն, «Լինգվա» հրատ., Ե., 2011. - 175 էջ:
6. Նազարյան Ա. Հ., Բաղդասարյան Հ. Գ., Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Ամարաս, Ե., 2000. - 399 էջ:
7. Baraldi C., Comunicazione interculturale e diversità, Carocci editore, Roma, 2009. - 255 p.
8. Bettoni C., Usare un'altra lingua, Guida alla pragmatica interculturale, Roma, 2006. - 276 p.
9. Casadei F., Metafore ed espressioni idiomatiche, Uno studio semantico sull'italiano, Bulzoni Editore, Roma, 1996. - 496 p.
10. Fabietti U., L'identità etnica, Carocci editore, Roma, 2002. - 181 p.
11. Osimo B., Manuale del traduttore, Ulrico Hoepli Editore, Milano, 1998. - 152 p.
12. Леонтьев А. А., Основы психолингвистики, «Смысл», М., 2003. - 287 с.
13. Назарян А. Г., Фразеология современного французского языка, «Высшая Школа», М., 1987. - 288 с.
14. Пермяков Г. Л., От поговорки до сказки. Заметки по общей теории клише, «Наука», М., 1970. - 239 с.
15. Психолингвистические проблемы семантики, под редакцией А. А. Леонтьева, А. М. Шахнаровича, Изд. «Наука», М., 1983. - 284 с.
16. Черданцева Т. З., Язык и его образы, изд. «Международные отношения», М., 1977. - 140

17. Բեդիրյան Պ. Ս., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 2011. - 1404 էջ:
18. Բեդիրյան Պ. Ս., Դարձվածաբանական բացատրական բառարան (դպրոցական, համառոտ), «Լույս» հրատ., Ե., 1971. - 126 էջ:
19. Բեդիրյան Պ. Ս., Հայերեն շրջասութիւնների բառարան, Էդիթ պրինտ, Ե., 2010. - 315 էջ:
20. Թոսունյան Գ. Բ., Թևակոր խոսքեր, «Խորհրդային գրող», Ե., 1989. - 113 էջ:
21. Silvestrini C., Dizionario illustrato plurilingue di arte italiana, Guerra Edizioni, Perugia, 2005. –
22. Черданцева Т. З., Рецкер Я. И., Зорько Г. Ф., Итальянско-русский фразеологический словарь, «Русский язык», Москва, 1982. - 1056 с.
23. Lapucci C., Dizionario dei proverbi italiani, Le Monnier, Firenze, 2006. - 1354 p.
24. Lapucci C., Modi di dire della lingua italiana, Garzanti Editore, Milano, 1984. - 420 p.

АНАИТ МКРЯН - ИТАЛЬЯНСКИЕ ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ С ЭЛЕМЕНТОМ ИСКУССТВА И СЕМАНТИЧЕСКИЕ И ФУНКЦИОНАЛЬНЫЕ ОСОБЕННОСТИ ИХ ЭКВИВАЛЕНТОВ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Данная статья посвящена сопоставлению семантических и функциональных особенностей фразеологических единиц с элементом искусства в итальянском и армянском языках, которые представлены в фразеологических словарях. Исследование показало, что итальянские фразеологические единицы с элементом искусства иногда имеют соответствующие эквиваленты в армянском языке, когда план выражения и план содержания совпадают. Однако преобладают также фразеологические единицы, у которых нет прямых соответствий, когда план содержания одинаковый, а план выражения отличается. В обоих языках присутствуют такие фразеологические единицы, которые свойственны лишь этому конкретному языку, такие единицы часто содержат реалии из за которых возникают трудности перевода и тогда в

процессе перевода используются свободные словосочетания или индивидуальный фразеологизм автора а также прибегают к описательным приемам.

ANAHIT MKRYAN - THE SEMANTIC-FUNCTIONAL PECULIARITIES OF THE IDIOMS CONTAINING ART TERMS IN ITALIAN AND ARMENIAN

The paper focuses on semantico-functional characteristics of frequently used idioms containing an art term in Italian and Armenian. The author points out the most specific features of the above mentioned idioms. The present paper intends to elaborate on the features and necessity of equivalence in translating the above mentioned idioms from Italian into Armenian. Since translation is a kind of cross-linguistic, cross-cultural and cross-social communication our main purpose is nothing but to establish equivalence between the source text and the target text.

**ԿԱԶՄԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՌԵՐՈՎ ԿԱՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՐՎԵՏՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ
(ԻՏԱԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՆՅՈՒԹԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

ԱՐԱՄ ՄԿՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ արվեստագիտություն, կազմաբանական բառեր, բաղադրություն - եզր, բառակապակցություն, համադրական բաղադրություն, հիմնանշանակություն, իմասկ, դարձվածապաշար, լեզվամտածողություն

Իտալերենում և հայերենում կազմաբանական բառերը բառապաշարի հարուստ շերտն են կազմում և կարող են ցույց տալ մարմնի տարբեր մասեր ու դրանց զանազան գործառույթներ: Դրանք բոլորն օժտված են բառակազմական արդյունավետ գործառույթով: Կազմաբանական բառերը հիմք են ծառայում կերտելու ոչ միայն ածանցավոր, բարդաձանցավոր բառեր, այլև՝ համադրական և հարադրական բաղադրություններ: Վերջիններս կարող են լինել և՛ մեկ բառային իմաստ արտահայտող բաղադրյալ եզրեր, և՛ փոխաբերական՝ դարձվածային իմաստ պարունակող կայուն արտահայտություններ: Բացի այդ, կազմաբանություններով կազմված բոլոր բառային միավորները հաճախ գործածվում են նաև այլ ոլորտների բառապաշարում: Ըստ Ֆ.Կազադեիի՝ «որպես նշանագիտական առարկա և խորհրդանշանային ու փոխաբերական հաղորդակցական միջոց՝ մարմինը եղել է նշաններն ուսումնասիրող բոլոր գիտաճյուղերի՝ հոգեվերլուծությունից մինչև սոցիոլոգիա, ուսումնասիրության առարկա: Ըստ լեզվաբանական մոտեցումների՝ տարբերակվում է երեք ուղղություն. մարմնի և նրա մասերի բառապաշարի ուսումնասիրություն, մարմնի և ներքին օրգանների անունների բառապաշարի նշանագիտական-փոխաբերական ընդլայնման ուսումնասիրություն, վերացական ոլորտները՝ մարմնի և ֆիզիոլոգիական-ընկալողական ոլորտին կապող փոխաբերությունների ուսումնասիրություն: Առաջին դեպքում կատարվում է կազմաբանությունների բառային դաշտի կառուցվածքի և այն բնութագրող կարգային դասակարգման սկզբունքների ուսումնասիրություն: Երկրորդ և երրորդ դեպքերում ուսումնասիրության առարկա են մարմնի մասերի հետ կապված փոխաբերությունները, այսինքն՝ ծագումով մարմնի մասեր ցույց տվող բառերի տարածում՝ մարմնի ոլորտից դեպի այլ ոլորտներ»¹¹⁹: Այսպես, իտալական

¹¹⁹ Casadei F., *Metafore ed espressioni idiomatiche, Uno studio semantico sull'italiano*, Bulzoni Editore, Roma, 1996, p. 235.

«*Treccani*» հանրագիտարանում հնագիտության ոլորտի բառապաշարի *anfora* - սափոր բառի բառահոդվածում տեղ են գտել սափորի տեսքը նկարագրող հետևյալ կազմախոսությունները. *collo* - վիզ, *bocca* - բերան, *labbro* - շրթունք, *spalla* - ուս, *fianchi* - կոնքեր, *piede-nunp*: Բուսաբանության մեջ *piede* - *nunp* բառը կամ նրա *peduncolo*, *pedicello* ածանցյալները հանդես են գալիս *բույսի, ծաղկի ցողուն* նշանակությամբ, *lobo* - *ականջի բլթակ* մարդու մարմնի կազմախոսությունը՝ *բույսի կլորավուն մաս, օրգան* նշանակությամբ, *ascella* - *թևատակ* կազմախոսությունը բուսաբանության մեջ նշանակում է *տերևի հիմքը, որով միանում է ցողունին* կամ *ճյուղին, սոցիա* - *եղունգ* բառն ունի *բույսերի տարբեր օրգանների ներքևի հատվածի նեղ և երկար մասի* (որը ձևով նման է մարդու եղունգին) նշանակություն:

Իտալերենում և հայերենում կազմաբանական բառեր առկա են նաև արվեստի ոլորտում: Դրանք կարող են լինել թե՛ զուտ կազմախոսությունների, թե՛ դրանց հիմքի վրա կառուցված բաղադրություն-եզրերի, թե՛ դարձվածքների ձևով: Դրանք առավելապես ճարտարապետության բնագավառի բառապաշարի մասն են կազմում, պահպանում կազմախոսության տարրական իմաստը և գլխավոր գործառույթները: Օրինակ՝ քանդակագործության բնագավառի *acefalo* գոյականը բառացի նշանակում է *գլխատված, առանց գլխի* (ծագել է 14-րդ դարում լատիներեն *acephalus* բառից, որը հունարենում եղել է՝ *aképhalos*, կազմված՝ *kephalē*՝ գլուխ՝ բառից և *a*- ժխտական նախածանցից, որը նշանակում է *ինչ-որ բանից զերծ*) և գործածվում է նշելու համար անգլուխ արձանները: *Occhio* - *աչք* կազմախոսությունը ճարտարապետության բնագավառում նշանակում է *շենքի կլոր կամ էլիպսաձև պատուհան*: Նկարչության բնագավառի *mano* - *ձեռք* կազմաբանական բառը գործածվում է՝ նշանակելու համար նկարի վրա ավելացվող ներկի շերտի համապատասխան քանակությունը: Այն կարող է նշանակել նաև արվեստագետի անհատական ոճ՝ *ձեռք, ձեռագիր* իմաստով: Վերականգնողական արվեստի՝ ռեստավրացիայի, բնագավառում նկարի մակերեսի վերականգնման նպատակով ավելացված յուրաքանչյուր ներկի շերտը նույնպես կոչվում է *mano* - *ձեռք*: *Pelo* - *աղվամազ* կազմախոսությունը քանդակագործության բնագավառում նշանակում է *մարմարի կտորում կամ քանդակում նյութի քայքայման հետևանքով գոյացած* ճաք: *Busto* - բառացի՝ *կրծքավանդակ* մարմնի մասի անունը քանդակագործության մեջ գործածվում է որպես *կիսանդրի*: *Gola* - *կոկորդ* կազմախոսությունը ճարտարապետության բնագավառում նշանակում է *քիվի պարզամաս*: Գործածվում է նաև՝ *gola dritta* - (բառացի՝ *ուղիղ կոկորդ*), *ուղիղ պարզամաս, gola dorica* - (բառացի՝ *դորիական կոկորդ*), *դորիական ոճի պարզամաս* բաղադրություն-եզրերում: *Spalla* - *ուս* կազմաբանական բառը ճարտարապետության բնագավառում նշանակում է՝ *կառույցի հիմքի կամ կողմնային մասի հենարան*: *Piede* - *nunp* կազմախոսության *peduccio*, *pedestallo* կամ *pedistallo* ածանցյալները ճարտարապետության բնագավառում նշանակում են *քարե պատվանդան*, իսկ նույն բառի *pieditto* համադրական բաղադրությունը՝ *պատի, կամարի նեցուկ, հենարան*: Լսողական ընկալման գործառույթ ունեցող *sordo* - *խուլ* հատկանիշը գունանունների հետ գործածվելիս նշանակում է *աղոտ գույն*: *Facciata* - *ճակտոն* եզրը կազմվել է *faccia* -

դեմք, երես կազմախոսության հիմքի վրա ավելացնելով գոյականակերտ *-ta* վերջածանց: *Avancorpo - շենքի ճակտոնից առաջ ընկած մաս* ճարտարապետության բնագավառի համադրական բաղադրությունը կազմված է *avan - առաջ (avanti - առաջ մակբայի կրճատ տարբերակն է) նախա-* նախածանցով և *corpo - մարմին* բաղադրիչի միաձուլումով: Ֆրանսերենից փոխառված *barbacane* համադրական բաղադրությունն իր մեջ պարունակում է *barba - մորուք* կազմախոսությունը և *cane - շուն* բաղադրիչը: Այն գոթական ճարտարապետության մեջ գործածվում է՝ նշանակելու համար *քաղաքների և ամրոցների պարիսպների պաշտպանական կառույց*: *Testata* եզրը նշանակում է *ճարտարապետական կառույցի արտաքին վերին և ստորին մասեր* (օրինակ՝ *testate di una croce - խաչի գլուխը*՝ վերին և ստորին մասերը): Այն կազմվել է *testa - գլուխ* կազմախոսության և *- ta* վերջածանցի միաձուլումով: *Unghia - եղունգ* կազմախոսությունը ճարտարապետության բնագավառում ցույց է տալիս եղունգի ձև ունեցող բարձրաքանդակ, որն այլ կերպ կոչվում է նաև՝ *stalattiti - ստալակտիտներ*: *Ugnello/unghiello - բրիչ* եզրերը ծագել են լատիներենի *ungulam* եզրի և *-ello* փոքրացուցիչ գոյականակերտ վերջածանցի միաձուլումով: Այն սրածայր գործիք է, որով քանդակագործության բնագավառում կարծր նյութերի վրա (քար, մարմար, մետաղ և այլն) ակոսներ են փորում: Եզրի համանուններ են նաև տառադարձությամբ կազմված *ugnetto* և *unghietto* եզրերը: *Candelabro - մոմակալ* ճարտարապետական պարզամասը նախատեսված է մոմերը կամ լամպերը վրան կանգնեցնելու համար: Եզրը կազմված է *candela - մոմ* բառի մի մասի և *labro - շրթունք* կազմաբանական բառի միաձուլումով: *Mano - ձեռք* կազմախոսությունը հիմք է հանդիսացել *manifattura - ձեռքով պատրաստված* (ծագել է 14-րդ դարում լատիներենի *manufactura* համադրական բաղադրությունից, որը կազմված է *manu facere 'ձեռքով պատրաստել'* բառակապակցությունից) և *manutenzione - արվեստի գործերի պահպանման գործողությունների շարք* (ծագել է 17-րդ դարում լատիներենի *manutentio -onis* բարդ բառից, որը կազմված է *manu tenere 'ձեռքում պահել'* բառակապակցությունից) համադրական բաղադրությունների կազմության համար: *Faccia - դեմք, երես* և *faccetta* բառերը (ի դեպ, վերջինս *faccia* բառի ածանցյալն է՝ կազմված *-etta* փոքրացուցիչ մասնիկի հավելումով) որպես արվեստագիտության եզրեր, ունեն *նիստ, երեսակ, թրաշ* նշանակությունները: *Tallone կրունկ* կազմաբանական բառը ճարտարապետության մեջ ունի *կրնկիկ* ձևը (կազմվում է հայերենի *-իկ* փոքրացուցիչ մասնիկի օգնությամբ) և նշանակում է *հիմք*: *Dentello* կազմաբանական բառը եզակի թվում նշանակում է *ատամիկ, ատամնաշար*, մինչդեռ ճարտարապետության բնագավառում գործածվելով հոգնակի թվով՝ *dentelli*, թեպետև միևնույն հիմնանշանակության ձևերով, ձեռք է բերում *ատամնաձև զարդաքանդակ, զարդաքեկոր* և այլ իմաստներ: Այսպիսով, հոգնակի թիվն այս դեպքում ունի իմաստազատիչ հատկանիշ: *Timpano* կազմաբանական բառը անատոմիայում նշանակում է՝ *միջին ականջն ամբողջությամբ* կամ *միայն նրա մասը կազմող թմբկաթաղանթը*: Այն իտալերենի բառապաշարին է անցել լատիներենից՝ 16-րդ դարում *tympānum* ձևով: Հունարենում ունեցել է *tōmpanon* ձևը, և հին հունական ճարտարապետության մեջ նշում է հեթանոսական տաճարի

ճակտոնի մասը (ճակտոնի եռանկյունաձև պատը, կամարի և բարավորի միջև գտնվող պատը): Հայերենում համարժեք ճարտարապետական եզրերն են՝ *թմբկազյան, տիմպան, ճակատնոց*: *Frontone* բառը, որի հիմքում ընկած է կազմաբանական *fronte* արմատը, առավել ընդհանուր ձևով վերցված, նշանակում է՝ *ճակտոն*: *Collare* - *վզիկ, պարանոց* և *collarina* - *սյան պարանոց* ճարտարապետական եզրերի հիմքում նույնպես ընկած է կազմաբանական բառ՝ *collo* - *վիզ*: *Gomito* - *արմունկ* կազմաբանական բառը ճարտարապետության բնագավառում գործածվում է և՛ *արմունկ*, և՛ *ճկում* նշանակություններով, այսինքն՝ նաև իրեն բնորոշ ֆիզիկական հատկանիշներից մեկի անունով: *Struttura, intelaiatura* և *armatura* հոմանիշներից որևէ մեկը իտալերենում արտահայտված չէ մարմնի մասի անվամբ և ոչ էլ պարունակում է կազմաբանական բառի արմատ, սակայն հայերեն թարգմանության հիմքում առկա է *կմախք* կազմախոսությունը՝ *հիմնակմախք*: *Campata, luce* - *հենամեջ, սյունամեջ, բացվածք* ճարտարապետական եզրերը հայերենում ունեն նաև *աչք* տարբերակը, որը, ինչպես նկատելի է, առկա չէ իտալերենի եզրերում: *Fronte* - *ճակատ* կազմաբանական բառը երկու լեզուներում՝ ճարտարապետության բնագավառում, ունի *շենքի ճակատ* նշանակությունը, միայն թե հայերենում արտահայտված է հարադրական բաղադրությամբ: Հոմանիշն է նաև *facciata* - *շենքի ճակատ* ճարտարապետական եզրը, որը կազմված է *faccia* - *դեմք, երես* կազմաբանական բառից և *-ta* գոյականակերտ ածանցից: *Imposta* - *կրունկ* ճարտարապետական եզրն ունի *շենքերում կամարակապ կամ թաղակապ կառույցների հենարանային մակերևույթ* նշանակությունը: *Frontespizio* - *գլխավոր ճակատ, ճակատազարդ* ճարտարապետական եզրը ծագել է լատիներենի *frontispicium, frons frontis* 'ճակատ' և *specere* 'դիտել' բառերից: Այն մուտք է գործել իտալերենի բառապաշար 1619 թ.:

Ինչպես նշվեց վերևում, արվեստագիտության բառապաշարում առկա են ոչ միայն կազմաբանական բառեր, այլև՝ դրանց որոշ գործառույթներ, հատկանիշներ ցույց տվող բառեր և դրանցով կազմված բաղադրյալ եզրեր: Հետաքրքրական է այն փաստը, որ իտալերենի և հայերենի ճարտարապետության բնագավառի բառապաշարի որոշ պարզամասերի դեկորատիվ մասեր բնութագրվում են տարբեր զգայարանների գլխավոր գործառույթների բացակայություն նշանակող տարբեր անուններով: Օրինակ՝ իտալերենի *ancora cieca* - բառացի՝ *կույր խարիսխ* բաղադրյալ եզրի հայերեն թարգմանությունն է՝ *խուլ խարիսխ*, այսինքն՝ մի լեզվի մի զգայարանի գործառույթի բացակայությունը մյուս լեզվում արտահայտվում է մեկ այլ զգայարանի գործառույթի բացակայություն նշանակող բառով: Նույն երևույթն է ընկած նաև հետևյալ օրինակի հիմքում. իտալերենի *arco cieco* - բառացի՝ *կույր կամար* բաղադրյալ եզրը հայերենում ունի *խուլ (դեկորատիվ) կամար* համարժեքը: Իտալերենի ճարտարապետության բառապաշարում առկա է նաև լսողական զգայարանի գլխավոր գործառույթի բացակայություն նշող պարզ եզր՝ *sordo/sordino* (*arco*), որի հայերեն թարգմանության մեջ այն բացակայում է և ունի հետևյալ ձևը՝ *բեռնաթափիչ (կամար)*: Իտալերենի ճարտարապետության

բնագավառի բառապաշարում առկա է նաև *gelosia* - *խանդ* զգացողությունն արտահայտող բառը, որն իբրև եզր հայերենում ունի *շերտավարագույր* տարբերակը: Իտալերեն եզրի իմաստի հիմքում ընկած է այն երևույթը, որ *շերտավարագույրը* կիրառվել է տան ներսը դրսից անտեսանելի դարձնելու նպատակով, որը չի խոչընդոտել ներսից դեպի դուրս նայելու հնարավորությունը: Ի դեպ, *gelosia* եզրն ունի նաև *persiana* - բառացի՝ *պարսկական* հոմանիշը, քանի որ ըստ իտալացիների, այն մուտք է գործել Իտալիա Իրանից: Իտալերենի ճարտարապետության բնագավառի բառապաշարում առկա է նաև մարդուն բնորոշ *anima* - բառացի՝ *հոգի, ոգի* բառով կազմված բաղադրյալ եզր, մասնավորապես՝ *anima della colonna* օրինակում, որի հայերեն թարգմանությունն է՝ *սյունաքուն*:

Fronte կազմաբանական եզրը իտալերեն որոշ բառակապակցություններում հանդես է գալիս կա՛մ որպես պարզ բաղադրիչ, կա՛մ հիմք է ծառայում այլ ածանցյալ կամ բաղադրյալ եզրերի կազմության համար և իբրև այդպիսին հանդես գալիս բաղադրիչի դերում: Դրանք են՝ *di fronte* - առջևից, *arco frontale* - ճակատային կամար, *vista frontale* - տեսքն առջևից, *di frontone* - ճակտոնային/ճակտոնավոր, *frontone a gradini* - աստիճանավոր: *Faccia* - *դեմք, երես* կազմաբանական բառը *facciata* - *ճակատ/ճակտոն* ածանցյալի ձևով հանդես է գալիս արվեստի հետևյալ բաղադրյալ եզրերում *facciata laterale* - կողքի/կողքային ճակտոն, *facciata principale* - գլխավոր ճակտոն, *facciata posteriore (di dietro)*- հետևի ճակտոն, *facciata anteriore / frontale* - առջևի ճակտոն, *di facciata* - ճակատային, *sporgenza della facciata* - ճակտոնի ելուստ և այլն: *Braccio* - *թև* կազմաբանական բառով է կազմված *braccio per lampada* - որմնալամպ բաղադրյալ եզրը: *Dentato* - *ատամնավոր 'ատամ'* կազմաբանական բառի ածանցյալը իբրև բաղադրիչ գործածված է արվեստի հետևյալ բաղադրյալ եզրերում՝ *corona della torre dentata* - աշտարակի ատամնապսակ, *ornamento dentato* - ատամնավոր զարդաքանդակ/պարզամաս: *Arco nervato/a costole* - կողավոր կամար և *collarino del capitello* - խոյակի պարանոց իտալերենի և հայերենի բաղադրյալ եզրերի կազմում առկա են բառակազմական՝ *nervo, collo* բառերով կազմված ածանցյալները և *costola* - *կողոսկր* բառը: *Piano d'imposta dell'arco* և *piano d'imposta della volta* իտալերեն բաղադրյալ եզրում կազմաբանական բառով արտահայտված բաղադրիչ առկա չէ, մինչդեռ հայերեն համարժեքում այն պարունակում է *կրունկ* կազմաբանական բառը՝ համապատասխանաբար՝ *կամարի կրունկ, թաղի կրունկ*: *Rampa delle scale* իտալերեն բառակապակցության մեջ նույնպես առկա է նույն երևույթը՝ կազմաբանական բառի բացակայություն իտալերեն օրինակում և առկայություն՝ հայերեն օրինակում՝ *սանդուղքի բազուկ*: Առկա է նաև հակադարձ երևույթը, երբ

իտալերեն բառակապակցության մեջ առկա կազմաբանական բառը բացակայում է հայերեն համարժեքից: Օրինակ՝ *piede della volta* - թաղի հենարանային պատ/որմ/պարիսպ, *occhio di bue* - բառացի՝ *եզան աչք*, դարձվածքը նշանակում է՝ *ձեղնահարկի կլոր* կամ *էլիպսածև պատուհան*:

Արվեստագիտության հայերեն բառապաշարում իբրև պարզ եզրեր հանդես են գալիս հետևյալ կազմախոսությունները. *պորտ (կամարի)*, *ականջ (կամուրջի)*, *գլուխ (կամուրջի)*, *կոնք (կիսագմբեթ)*, *ճակատ (ճակտոն)*, *ողնաշար (ողնասյուն)*: *Գլուխ* կազմաբանական բառով կազմված են նաև համադրական բաղադրություն-եզրեր, ինչպիսիք են՝ *կամրջագլուխ*, *սյունագլուխ*: Ճարտարապետության բնագավառում *ճակատ* հիմնական ձևայնությամբ կազմված են *ճակտոց*, *ճակատազարդ* և *ճակտոնազարդ* ածանցավոր և բարդ եզրերը: *Կմախք* կազմաբանական բառը, որպես հիմնական ձևայնությամբ հանդես է գալիս *հիմնակմախք* ճարտարապետական համադրական բաղադրություն-եզրի կազմում: *Ուտ(ք)* կազմաբանական բառը հանդես է գալիս *բազրոտ* համադրական բաղադրության կազմում և նշանակում է *աստիճան*:

Իտալերենի կազմաբանական բառերով կազմված բազմաբաղադրիչ դարձվածքների շարքում առկա են այնպիսիք, որոնց բաղադրիչներից մեկը կազմախոսություն է, իսկ մյուսը՝ արվեստի ոլորտի եզր: Օրինակ՝ *essere/stare/trovarsi con le spalle al muro* - բառացի՝ *լինել/մնալ/գտնվել ուտերով դեպի պատը*, նշանակում է *անելանելի վիճակում լինել*: *Gettare il sasso e nascondere la mano* - բառացի՝ *քարը նետել և ձեռքը թաքցնել*, որը նշանակում է *վատ արարք գործել և թաքնվել*: *Mettere con le spalle al muro qn* - բառացի՝ *մեկին պատին դեմ անել* դարձվածքի նշանակությունն է՝ *մեկին անելանելի վիճակի մեջ դնել*: *Non passare (neanche) per l'anticamera del cervello (qc a qn)* - բառացի՝ *ուղեղի նախասենյակով անգամ չանցնել* դարձվածքը նշանակում է՝ *մտքի ծայրով անգամ չանցկացնել*: *Prendere/ricevere una tegola in testa/tra capo e collo* - բառացի՝ *գլխին/գլխի և պարանոցի հատվածում կղմինդր վերցնել/ստանալ* դարձվածքի նշանակությունն է՝ *անսպասելի վատ բան պատահել*: *Pancia mia fatti capanna* ! - բառացի՝ *որովայն/կիր իմ, խրճիթ դարձիր* դարձվածքը գործածվում է այնպիսի իրավիճակներում, երբ մեծ քանակությամբ համեղ ուտեստներ կան, իսկ մարդիկ դրանք չեն կարող ամբողջը համտեսել:

Հայերենի դարձվածապաշարում միաժամանակ կազմաբանական բառերով և արվեստագիտության եզրերով կազմված դարձվածքների թիվը բավականին մեծ է: Այնտեղ առկա են գրեթե բոլոր կազմաբանական բառերն ու արվեստագիտության եզրերը. համապատասխանաբար՝ *գլուխ*, *արյուն*, *բերան*, *սիրտ*, *աչք*, *մազ*, *դեմք*, *ականջ*, *ոտք*, *բերան*, *դեմք*, *երես*, *ձեռք*, *լեզու* և այլն, ինչպես նաև՝ *քար*, *սյուն*, *տուն*, *պատ*, *գերան*, *կավ*, *բաղանիք*, *գույն*, *բեմ*, *դրոտ*,

տաճար, թաղիք, շինել, ճամփա/ճանապարհ, շենք և այլն: Օրինակ՝ **քար** եզրով դարձվածքներից են՝ քարը գլուխը դարձվածքը, որը նշանակում է՝ *աստված իր հետ, ինչպես ուզում է թող վարվի*. քարը գլխին տալ, իսկ գլուխը՝ քարին դարձվածքի նշանակությունն է՝ *ամեն հնարավոր միջոց գործի դնել*: **Սյուն** ճարտարապետական եզրով առկա են՝ սրտին սյուն լինել, որը նշանակում է՝ *ապավեն, հենարան լինել/դառնալ*, մինչդեռ սրտի սյուն լինել՝ ամենասիրելի անձը լինել: Ինչպես կարելի է նկատել, վերջին երկու օրինակներում հոլովի քերականական կարգը (առաջին օրինակում՝ *սրտին*, առկա է գոյականի տրական հոլովի ձևը, իսկ երկրորդում՝ սեռական հոլովինը) դրսևորում է իմաստագատիչ հատկանիշ, քանի որ փոխում է դարձվածքի նշանակությունը: Սրտին սյուն տալ դարձվածքն ունի *ոգևորել, ոգեշնչել* նշանակություն: **Տաճար** ճարտարապետական եզրը հայերենի դարձվածապաշարում առկա է քերանդ տաճար դարձվածքի մեջ, որի նշանակությունն է՝ *լավ ասացիր, միանգամայն տեղին էր ասածը* և քերան չէ, տաճար է, որն ասվում է հաճելի, իմաստալից, ոգևորիչ խոսքեր ասող մարդու մասին: **Քեմ** ճարտարապետատերական եզրը արյան քեմ դարձվածքում ունի *արյունահեղության, կռիվների, սպանությունների վայր* նշանակությունը: **Տուն** եզրով և միաժամանակ կազմաբանական բառերով կազմված դարձվածքները հայերենում ամենամեծ թիվն են կազմում: Օրինակ՝ տունը գլուխ դարձվածքը նշանակում է *ամեն մի տուն, ամեն մի տնից*, իսկ տան գլուխ դարձվածքը՝ *ընտանիքի մեծը, այր ամուսինը*: Ակնհայտ է, որ այստեղ նույնպես գոյականի հոլովի քերականական կարգն ունի իմաստագատիչ հատկանիշ, քանի որ փոխում է դարձվածքի նշանակությունը: *Տան դուռը ձեռք առնել* դարձվածքի նշանակությունն է՝ *դուռը անընդհատ ձեռել՝ պահանջելով ապրողին դուրս գալ*: *Տուն արած՝ դուռն երեսին փակած* դարձվածքը նշանակում է՝ *անտեր, անտիրական*: *Տունը գլխին փուլ գալ* դարձվածքի նշանակությունն է՝ *մեծ դժվարության մեջ ընկնել*: *Տունը գլխին քանդել* դարձվածքում առկա բայ-բաղադրիչը, արտահայտված լինելով ներգործական սեռի բայով, ցույց է տալիս ներգործություն, ազդեցություն՝ *սաստիկ վնասել, դժբախտացնել, փորձանքի մեջ գցել*, մինչդեռ *տունը գլխին քանդվել* դարձվածքինը՝ կրավորական սեռի բայով, որը նշանակում է *դժբախտանալ, փորձանքի մեջ ընկնել*, որտեղ առկա չէ ներգործության գաղափարը: Ի դեպ, *տունը գլխին փուլ գալ* և *տունը գլխին քանդվել* դարձվածքները կարող են համարվել դարձվածային տարբերակներ, որոնցում առկա տարբերությունը բայ-բաղադրիչների տարբեր լինելու մեջ է, այսինքն՝ բառային: *Գլուխը շինել* բարբառային դարձվածքում, որն ունի *մազերը հարդարել, ձևավորել* նշանակությունը, առկա է փոխանունության երևույթ, քանի որ *գլուխ* կազմաբանական բառը գործածված է *մազերի* փոխարեն: Բացի այդ, թե՛ վերջին, թե՛ նախորդ դարձվածքներում նկատելի է ճարտարապետաշինա-

րարական եզրերի կրկնակի առկայություն՝ *քանդել, քանդվել, փուլ գալ, շինել* բայ-բաղադրիչների արտահայտությամբ: **Պար** եզրով դարձվածքներից *ծեռ/քը պատը քսել*-ն ունի *պատը խազել* կամ *պատի մեջ չոփ խրել* դարձվածքների նշանակությունը, այսինքն՝ նրանց հոմանիշն է: *Պատն երեսին* դարձվածքը նշանակում է՝ *բոլորովին մենակ*: *Պատերն էլ ականջ/լեզու ունեն* (ի դեպ, առկա է նաև *պատերը ականջ(ներ) ունեն* տարբերակով), *գաղտնիքը կտարածվի, հայտնի կդառնա, կլսեն* նշանակությամբ դարձվածքի առաջին տարբերակը՝ *ականջ* բաղադրիչով, զուգահեռ համարժեքով, առկա է նաև իտալերենում՝ *i muri hanno orecchie* տարբերակով: **Շեն/շենք** եզրի և կազմաբանական բառերի հետ միաժամանակյա գործածություն առկա է հետևյալ դարձվածքներում. *վիզը շենին դնել*, որը նշանակում է *մեկի ողորմածությանը ենթարկվել* և *ոտը շենքից դուրս դնել*, որը երկիմաստ է՝ առաջին՝ *վննդել, դուրս քշել, դուրս անել* և երկրորդ՝ *տնից դուրս գալ* նշանակություններով: **Գերան** եզրով դարձվածքներն են՝ *իր ասքի գերանը մոռանալ՝ ուրիշի ասքի շյուղը (խիլը, ծեղը) նկատել* կամ *տեսնել*, որը նշանակում է *իր մեծ պակասությունները անտեսել, ուրիշի չնչին, աննկատելի թերությունները մատնացույց անել*: *Մագը գերան* դարձնել դարձվածքի նշանակությունն է՝ *չափազանցել*: *Ասքի միջի գերանը դուրս հանել* դարձվածքը նշանակում է *սեփական ավելի մեծ թերությունը վերացնել ու նոր միայն ուրիշինը մատնացույց անել*: **Գույն** եզրով դարձվածքներից են՝ *դեմքի գույնը տեղը գալ*, որը նույնպես երկիմաստ դարձվածք է և ունի հետևյալ նշանակությունները. 1. *հուզմունքը, շփոթմունքը անցնել, հանգստանալ*, 2. *կազդուրվել, առողջանալ*: Հայերենում *առողջ լինելու* գաղափարը նույնպես արտահայտվում է *գույն* բառով, որն այստեղ դիտարկվում է իբրև նկարչության բնագավառի եզր, այն է՝ *երեսի գույնը գետին կաթել*: *երեսի վրա գույն չլինել* դարձվածքը նշանակում է՝ *գունատ լինել*: **Քար** բառով հայերենի դարձվածապաշարում տեղ գտած դարձվածքներից են՝ *քարը գոգից թափել*, որի նշանակությունն է՝ *համաձայնվել*: Նույն եզրով կազմված *ոտը քարին դիպել* դարձվածքը նշանակում է՝ *խոչընդոտի, արգելքի հանդիպել* (հատկապես ասվում է, երբ մեկի խորհուրդը անտեսում են, չեն կատարում): **Դուռ** եզրով դարձվածքներից Ա.Սուքիասյանի և Ա.Գալստյանի Հայերենի դարձվածաբանական բառարանում առկա է *բեր(ա)նին դուռ դնել* դարձվածքը, որի բառարանային բացատրությունն է՝ *մեկի լեզուն սանձահարել, մեկին գատել*:

Արյունը քսել մեկի դռանը դարձվածքի նշանակությունն է՝ *սպանության հանցանքը մեկի վրա գցել՝ բարդել, մեկին գրպարտել*: **Ճամփա /ճանապարհ** եզրով հայերենի դարձվածապաշարում առկա է *ոտագ ճամփա/ճանապարհ* դարձվածքը, որի սահմանումը նշված դարձվածաբանական բառարանում հետևյալն է՝ *ոտատեղ, արտաքնոց*: **Կավե** խեցեգործության ոլորտի նյութ

նշանակող եզրով հայերենի *կավե ոտքերով հսկա* դարձվածքի նշանակությունն է՝ *արտաքննապես մեծ, ազդու, բայց ներքնապես թույլ ու նվաստ*: **Քաղ(ա)նիք** եզրով և *արյուն* կազմաբանական բառով կազմված *արյան քաղ(ա)նիք* դարձվածքի նշանակությունն է՝ *արյունահեղություն, զանգվածային սպանություն*:

Այսպիսով, հայերենի դարձվածապաշարում միաժամանակ կազմաբանական բառերից և արվեստագիտության եզրերից բաղկացած դարձվածքներն առավել կենսունակ և տարածված են, քան իտալերենում: Դրանք գրեթե բոլորը հայկական լեզվամտածողության և մշակույթի արդյունքն են, քանի որ պարունակում են մեր ժողովրդի բարքերո ու սովորույթները նշանակող իմակներ: Այդ մասին է վկայում այն փաստը, որ վերևում նշված հայերեն բազմաթիվ դարձվածքներից միայն *պատերն էլ ականջ ունեն - i muri hanno orecchie* տարբերակն է առկա իտալերենի դարձվածապաշարում, մյուսները բնորոշ են միայն հայերենի դարձվածապաշարին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է. Բ., *Արդի հայերենի բացատրական բառարան*, «Հայաստան» հրատ., Երևան, 1976. - 1615 էջ:
2. Բեդիրյան Պ.Ս., *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան*, ԵՊՀ հրատ., Երևան, 2011. - 1404 էջ:
3. Բեդիրյան Պ. Ս., *Դարձվածաբանական բացատրական բառարան (դպրոցական, համառոտ)*, «Լույս» հրատ., Երևան, 1971. - 126 էջ:
4. Պետրոսյան Հ. Զ., Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարազյուլյան, *Լեզվաբանական բառարան*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975. - 316 էջ:
5. Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա., *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան*, ԵՊՀ հրատ., Երևան, 1975. - 614 էջ:
6. Սուքիասյան Ա. Մ., *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*, ԵՊՀ հրատ., Երևան, 2009. - 1237 էջ:
7. Հացագործյան Զ.Ա., Դարբինյան Ա.Հ., Հովունյան Ն.Գ., ՍրվանձությանԳ.Հ., *Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան*,

- Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1988. – 672 էջ:
8. Cardona G. R., *Introduzione all'etnolinguistica*, De Agostini Scuola SpA, Novara, 2006. - 282 p.
 9. Casadei F., *Metafore ed espressioni idiomatiche, Uno studio semantico sull'italiano*, Bulzoni Editore, Roma, 1996. - 496 p.
 10. De Mauro T., Mancini M., *Dizionario etimologico*, Garzanti Linguistica, Milano, 2000. - 2317 p.
 11. Lapucci C., *Dizionario dei proverbi italiani*, Le Monnier, Firenze, 2006. - 1354 p.
 12. Lapucci C., *Modi di dire della lingua italiana*, Garzanti Editore, Milano, 1984. - 420 p.
 13. Черданцева Т. З., Рецкер Я. И., Зорько Г. Ф., *Итальянско-русский фразеологический словарь*, «Русский язык», Москва, 1982. - 1056 с.
 14. Silvestrini C., *Dizionario illustrato plurilingue di arte italiana*, Guerra Edizioni, Perugia, 2005. -486.
(http://www.grandidizionari.it/Dizionario_Italiano/parola/d/devoto.aspx?query=devoto)[http://www.treccani.it/enciclopedia/anfora_\(Enciclopedia-Italiana\)/](http://www.treccani.it/enciclopedia/anfora_(Enciclopedia-Italiana)/)

ԱՐԱՄ ՄԿՐՅԱՆ - ՏԵՄԱՆՏԻԿԵՍԻ ԵՎ ՓՈՒՆԿՑԻՈՆԱԿԱՆ ԵՍՈՅԵՆՈՒԹՅԱՆ ՖՐԱՅԵՕԼՈԳԻԿԵՍԻ ԵԴԻՆԻՑ ԿՍ ՏՕՄԱՏԻԿԵՍԻ ԿՕՄՓՈՆԵՆՏՈՄ ԵՎ ԼԵԿՍԻԿԵ ԻՏԿՍՏՎՈՎԵԴԵՆԻՅԱ (ՈԱ ՄԱՏԵՐԻԱԼԵ ԻՏԱԼՅԱՆՏՕԳՈ ԵՎ ԱՐՄՅԱՆՏՕԳՈ ՅԱԿՕՎ)

ՅՎ ճԱՆՈՒՄ ԵՄՅԱՆ ՖՐԱՅԵՕԼՈԳԻԿԵՍԻ ԵԴԻՆԻՑ ԻՏ ՕԲԼԱՏԻ ԻՏԿՍՏՎԱ ԿՕՐՅԵ ՏՕԴԵՐՅԱՏ ՏՕՄԱՏԻԿԵՍԻ ԵԼԵՄԵՆՏՅԱ. ԵՏՕ ՄՕԴՄ ԵՄՅԱ ՓՐՍՏՅԵ ԵՎ ՏԼՕՅՆՅԵ ԵԼԵՄԵՆՏՅԱ, Ա ՏԱԿՅԵ ՍՅՕԻԿԻՎՅԵ ՎՅԱՐՅԱԿՅԱ. ՕՓՐԵԴԵԼԵՆՆԵ ԴԵԿՕՐԱՏԻՎՆԵ ԿԱՏԻ ԼԵԿՍԻԿԻ ԻՏ ՕԲԼԱՏԻ ԱՐԽԻՏԵԿՏՄՅԱ ՕՓԻՏՅԱՎՅԱՆՅԱՆ ԴԱՅՆԻՄԻ ՆԱՅՎԱՆՅԱՄԻ ՕԲՅՈՒՇԱԿՕՒՄԻ ՕՏՍՏՅՈՒՏԻՆԵ ՕՍՈՒՆՅԱՆ ՓՈՒՆԿՑԻՈՆՅԱՆ ԴԱՅՆԻԿՆՅԱՆ ԿՅՈՒՏՎԵՆՆՅԱՆ ՕՐԳԱՆՅԱ. ՏՐԵԴԻ ՄՆՕԿՕՄՓՈՆԵՆՏՆՅԱՆ ՓՐԱՅԵՕԼՈԳԻՅՈՒՄ Կ ՏՕՄԱՏԻՅՄԱՄԻ ԵՎ ԻՏԱԼՅԱՆՏՕԳՈ ԵՎ ԱՐՄՅԱՆՏՕԳՈ ՅԱԿՕՎ ՓՐԱՅԵՕԼՈԳԻԿԵՍԻ ԵԴԻՆԻՑ ԵՍՈՒՆ ԿՕՄՓՈՆԵՆՏՈՄ ԿՕՐՅԱ

является Կազմախոսութիւն, а другой արվեստի դիրքի եզր: Они являются результатом языкового мышления и культуры, так как содержат образы с предпочтениями и привычками данного народа.

ARAM MKRYAN - THE SEMANTIC-FUNCTIONAL PECULIARITIES OF THE IDIOMS CONTAINING SOMATIC COMPONENTS IN ART TERMINOLOGY (ON THE MATERIAL OF ITALIAN AND ARMENIAN)

The article comprises a comparative analysis of the idioms containing a somatic term in art terminology in Italian and Armenian. It aims to reveal the linguo-cultural peculiarities of the above mentioned idioms. As far as languages are concerned there are no two absolute synonyms within one language. Quite naturally no two words in any two languages are completely identical in meaning. The present paper proposes an exploratory cross-linguistic and cross-cultural eye-view of some idioms containing both an art term and a somatic component. The study shows the systematic analysis of the above mentioned idioms makes it possible to identify the major semantic and functional dissimilarities in the two languages investigated.

**ՕՐԵՍՏԵՍԻ ՄԻԹՈՍԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԺԱՆ-ԺԱԿ
ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՔԱՂԱՔԸ ԲԼՐԻ ԲԱՐՁՈՒՆՔՈՒՄ» ԴՐԱՄԱՅՈՒՄ**

ԱՆԻ ԶԱՆԻԿՅԱՆ

Հիմնաբառեր՝ Օրեստ, Էլեկտրա, միթոս-հակամիթոս, եղեն, պատմական հիշողություն

Մարդկության պատմության բոլոր փուլերում արվեստի տարբեր բնագավառի ներկայացուցիչները՝ գրողները, նկարիչները, քանդակագործները իրենց ստեղծագործություններում անդրադարձել են հունական, հռոմեական միջերին, յուրովի վերաիմաստավորել: Այլ կերպ ասած՝ միջերը տվյալ ժամանակի հրատապ հիմնախնդիրները արծարծելու, մեկնաբանելու ուրույն միջոց են հանդիսացել:

Հաճախ հեղինակները այնպիսի առանձնահատուկ մոտեցումներ են ցուցաբերում միջի հանդեպ, այնքան են հեռանում սկզնաղբյուրից, որ միջը դառնում է հակամիջ, վերաիմաստավորման հետևանքով փոփոխվում թե՛ կառուցվածքային և թե՛ բովանդակային առումներով: Եթե նախնադարյան հասարակարգում միջերն արտացոլում էին ընդհանրական մտածելակերպ ու աշխարհընկալում, ապա 20-րդ դարի հեղինակները, անդրադառնալով նույն միջերին՝ իրենց ուշադրությունը սևեռում են անհատի, նրա գոյության ու էության առանձնահատկությունների վրա, արծարծում են ընտրության ազատության, պատասխանատվության հիմնահարցերը:

Փորձենք հայազգի ֆրանսագիր գրող Ժան-ժակ Վարուժանի «Քաղաքը բլրի բարձունքին» դրամայում դիտարկել Օրեստեսի միթոսի վերաիմաստավորումն ու հակամիջի փոխակերպումը:

Ժան-ժակ Վարուժանը (1927-2005 թթ.) ցեղասպանությունից մազապուրծ ընտանիքի զավակ է, ծնվել է Մարսելում, երկար տարիներ ապրել է Ալֆորվիլում, մահացել Փարիզում: Իր կտակի համաձայն՝ հուղարկավորվել է Հայաստանում: Հայկական անուն-ազգանունը Վարուժան Ուզունյան է: Նա եղել է լրագրող, բեմադրիչ, սցենարիստ, գրել է բազմաթիվ թատերախաղեր հատուկ հեռուստառադիոյի համար: Ժան-ժակ Վարուժանի մոտ հարյուր բեմական թատերգությունների հիմնական մասը տպագրված է, զգալի մասը բեմադրված է ոչ միայն Ֆրանսիայի տարբեր քաղաքների, այլև Պեկինի, Տոկիոյի, Երևանի թատրոններում:

«Քաղաքը բլրի բարձունքում» դրաման գրվել է 1967 թ.-ին՝ Մաղեն Ռենոյի հորդորներով և ունեցել է հետաքրքիր ճակատագիր: Այն առանձին գրքով լույս է ընծայել «Գալիմար» հեղինակավոր հրատարակչությունը, առաջին անգամ 1987 թ.-ի նոյեմբերին «Պալաս» թատրոնում բեմ է հանել Պիեր Օրման, իսկ 1988 թ.-ին «Արդի ֆրանսիական լավագույն տեքստ» անվանակարգում ստացել է «Ոսկե Դիմակ» մրցանակը: Ստեղծվել է նաև դրամայի հեռուստատարբերակը:

Տրոյական շարքի Օրեստեսի և Էլեկտրայի միֆերին անդրադարձել են նաև 20-րդ դարի թատերագիրներ Ժան Ժիրոդուն՝ «Էլեկտրա» 1937 թ., Ժան-Պոլ Սարտրը՝ «Ճանճերը» 1943 թ., Մարգրիտ Յուրսենարը՝ «Էլեկտրա կամ դիմակների անկումը» 1943 թ. դրամաներում: Հարկ է նշել, որ երեք թատերագիրների երկերն էլ աչքի են ընկնում գաղափարական, դրամատիկական, և սյուժետային ինքնատիպությամբ, չնայած հեղինակները հիմնականում հավատարիմ են մնացել սկզբնաղբյուրին:

Նույնը սակայն չի կարելի ասել Վարուժանի «Քաղաքը բլրի բարձունքում» դրամայի մասին: Վարուժանը Օրեստեսի միթոսը տեղափոխում է ժամանակակից միջավայր, փորձում քննել *մոռացումի* խնդիրը՝ ակնարկը ուղղելով 20-րդ դարասկզբի իրադարձություններին՝ հայերի ցեղասպանության, ապա և թուրք՝ իրարհաջորդ կառավարությունների՝ աննախադեպ ոճրի ուրացման, երկրի պատմության այդ էջը ամեն կերպ շրջելու ճիգի վրա:

Վարուժանի դրամայի գործողությունների վայրը Պլանիցան է՝ նախկին Արգոսը: Դիցաբանական աստվածները փոխարինվել են մահկանացուներով՝ հանգամանք, որը ակնհայտ է դարձնում հեղինակի՝ սկզբնաղբյուրից շեղվելու, միթոլոգեմը հակամիֆի վերածելու միտումը: 20-րդ դարի «Դիցաբանական թատրոնի» ներկայացուցիչները՝ Ժ.-Պ. Սարտրը, Ա. Կամյուն, Ժ. Անույը, Ժ. Ժիրոդուն, Ժ.Կոկտոն իրենց դրամաներում հիմնականում հավատարիմ են մնում միթոսի սկզբնաղբյուրին, աստվածային ուժերն ամեն դեպքում իրենց կամքը թելադրում են մահկանացու հերոսներին: Վարուժանի դրամայում գործող միֆական կերպարները չորսն են՝ Կլիտեմնեստրան, Էլեկտրան, Օրեստեսը, Էգիսթոսը, Ագամեմնոնը և թատերգուի կողմից հորինված Զբոսավարը՝ Յուպիտերի նախատիպը:

Դժվարանցանելի, խորդուբորդ ճանապարհը տանում է յուրաքանչյուրին տեսանելի, սակայն բլրի բարձունքին մեկուսացած Պլանիցա քաղաքը, որտեղ քաոսն ու ստորակարգություն են տիրում: Ըստ Օրեստեսի՝

Օրեստես- *Ճշմարիտ է, որ Պլանիցան գոյատևում է այնպես, ասես չկա էլ քարտեզի վրա : Որ կառավարիչն ամբողջովին խույս է տալիս պետության*

օղակներից ու վերահսկումից : Մեր օրերի համար դա գրեթե աներևակայելի է :
120

Կառավարչի հրամանով Պլանիցայի բնակչությունը դատապարտված է մեկուսացման, և ով հանդգնում է անցյալի որևէ մանրամասն հիշել, համարվում է խելագար: Այդ պատճառով բնակիչներն իրենց համար նոր անուններ են ընտրում, կառավարիչն սկսում է ինքնասովորել էգիթոս, հետևաբար կինը Կլիտեմնեստրա: Անվանափոխությունը զբոսավարը մեկնաբանում է հետևյալ կերպ .

Զբոսավար- *Մտքիզմը անուն-ազգանունների հորձանք առաջացրեց : Յուրաքանչյուրը տիրոջը դուր գալու համար, ով օրինակ էր հանդիսացել, մեկն ընտրեց : Այդպես մենք ունեցանք Յիցերոններ, (Նապոլեոնների մասին չխոսենք), Գեբելսներ...նույնիսկ մի գիրուկ Բերտա ունենք... : Բանը հասավ կենդանիներին, որոնք անուններով կնքվեցին : Գիտե՞ք, ես մի ճաշարանատեր գիտեմ, որ երկու շուն ունի: Մեկի անունը Մուստաֆա է դրել, մյուսինը՝ Քեմալ :¹²¹*

Ուշագրավ է, որ բլրաքաղաքի ռեստորանի շները Մուստաֆա և Քեմալ են կոչվում: Հեղինակն ակնհայտորեն նկատի է ունեցել հանրապետական Թուրքիայի հիմնադիր ու առաջին նախագահ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքին, որն իշխանության անցնելուց հետո ցեղասպանությունը վերապրած հայերին ստիպեց վերջնականապես հեռանալ իրենց պատմական հայրենիքից:

Քանի որ հեղինակն այդ բռնագաղթի հետնորդներից է, չի կարողանում քողարկել իր վերաբերմունքը:

Զբոսավար- *Իմիջայլոց, ես այնքան էլ տեղյակ չեմ, որոշակի ո՞ր պատերազմի մասին է խոսքը :*

Օրեսպետ- *Ձե՞ռ եք առնում ինձ :*

Զբոսավար- *Կարևոր չէ, ի վերջո, բոլորն էլ նման եմ իրար : ...Բացի, իհարկե, այն դեպքից, երբ շներն են իրար կծում ... Ներողություն, ուզում եմ ասել թուրքերը: Մի ժամանակն ես կռվել եմ նրանց դեմ : Ո՞ր սերունդը, հենց դա է մխիթարականը, իր պատերազմը չի ունեցել: Կռվելը նկարագիր է, քանի որ թուրքը չափվում է կանանցով ու երեխաներով :¹²²*

Զինվորական ծառայությունն ավարտելով, 10 տարվա բացակայությունից հետո բլրաքաղաք է վերադառնում մի երիտասարդ, ում անունն անհայտ է : Փոքր տարիքում ծնողները լքել են նրան, այժմ նա որոշել է գտնել իր արմատները: Հարկ եմ համարում ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ

¹²⁰ Jean-Jacques Varoujean «La ville en haut de la colline. Gallimard, 1969, p. 13 (այս և հետագա թարգմանությունները՝ հեղինակի)

¹²¹ Ibid.p.15

¹²² Ibid. p.12

Օրեստեսի միջին առնչվող գրեթե բոլոր դրամաներում հերոսը հայրենիք է վերադառնում մոտավորապես 16 տարվա բացակայությունից հետո : Վարուժանը ընտրում է 10 տարին : Կարծում եմ դա պատահական չէ : Հեղինակը ծնվել է, ինչպես վերը նշեցի, 1927 թվականին, անմիջական ժառանգորդն է 1915 թվականի ցեղասպանության: Վարուժանը, կրկնում եմ, ձգտում է հնարավորինս չհեռանալ աննախադեպ ոճրագործությունից, դրաման հենց դրա դրսևորումն է: Հաջորդ կարևոր հանգամանքը. Օրեստեսի միջի հիմնախնդիրը վրեժն է, մինչդեռ Վարուժանի դրամայում Օրստեսը Պլանիցա՝ Արգոս է վերադառնում ոչ թե վրեժխնդրության, այլ միմիայն ծնողներին գտնելու, ճշմարտությունը բացահայտելու համար: Այս առումով էլ է նա հեռանում սկզբնաղբյուրից:

Կ.Յունգը իր «Ոգի և միջ. վեց արքեսիպ» աշխատությունում վերլուծում է միջն ընկալելու և մեկնաբանելու մեթոդները, ինչպես նաև միջի և գրականության առնչությունը. «Հարկավոր չէ չափից շատ խոսել «սկզբնաղբյուրների մասին» : Որպեսզի ջուրը, անցնելով մեր միջով, արթնացնի մեր թաքնված միջուկիական ծիրքը, այն պետք է վերցնել և խմել առանց որևէ խառնուրդի»¹²³ : Յունգը շեշտում է այն մեթոդի կարևորությունը, որով պետք է ուսումնասիրել միջը : Վերջինս թելադրում է միջը մեկնաբանել՝ առանց արհեստականորեն կտրելու այն միջավայրից և ժամանակից, որտեղ կազմավորվել և շրջանառվել է, քանի որ հակառակ դեպքում կկորցնի իր առանձնահատուկ բնույթը, կսկսվի դիտարկվել որպես պատրանք : Ճիշտ է, Վարուժանը հեռացել է Օրեստեսի միջի նախնական տարբերակից, սակայն նրա դրամայի իրադարձությունները չեն վերաձվում պատրանքի: Հարկ է չանտեսել նաև այն կարևոր հանգամանքը, որ ո՛չ դիցաբանությունը, ո՛չ միթոլոգեմները քարացած համակարգեր չեն, վերջիններս միշտ ենթակա են զարգացման, որի շնորհիվ ծնվում են արվեստի նոր գործեր, ինչի դիպուկ ապացույցը կարող է հանդիսանալ «Քաղաքը բլրի բարձունքին» դրաման:

Այսպես՝ զբոսավարը, ինչպես վերը նշեցի՝ Յուպիտերի նախատիպը, որ այս դրամայի միակ միստիկ կերպարն է, չի տառապում հիշողության կորստից, երիտասարդին ուղղորդում է դեպի այն իրադարձությունները, որոնք տեղի են ունենալու դրամայում : Ընդ որում՝ գործողությունները կատարվում են կլասիցիստական ողբերգությանը հատուկ 24 ժամվա ընթացքում : Կլիտեմնեստրան ասում է.

Լիտեմնեստրա - *Ես այնքան դժվարությամբ եմ հիշողությունս պրպտում : Այդ ամենի համար մեկ օրում չափազանց մեծ ջանք պահանջվեց* .¹²⁴

¹²³ πῖα Ἐ. Ἄ. Ἄοφα ἐ ἰεὸ, Փᾶκὸν ἀδὸἀδὲῖᾶ, Ἐεᾶᾶ 1996, թ. 90

¹²⁴ Jean-Jacques Varoujean «La ville en haut de la colline., , Gallimard, 1969, p.97

Երիտասարդ գինվորականը Պլանիցայում «պատահաբար» նախ ծանոթանում է Էլեկտրայի հետ: Բնականաբար նրանք միմյանց չեն հիշում, քանի որ Էլեկտրան ևս տառապում է հիշողության կորստով: Առաջին իսկ հանդիպումից կարելի է ենթադրել, որ Էլեկտրան սիրահարվածության որոշակի զգացումներ է տածում երիտասարդի հանդեպ, իսկ Էգիսթոսը, ծանոթանալով Օրեստեսի հետ, նրան Էլեկտրայի նշանածն է կոչում: Հենց Էլեկտրան էլ, որոշում է երիտասարդին Օրեստես անվանել: Օրեստեսականներում շատ հավանական կարող էր լինել այդ հանգամանքը, հնարավոր է, որ Էլեկտրան սիրահարվեր Օրեստեսին: Բոլոր թատերագիրները անտեսել են այս հավանականությունը, մինչդեռ երիտասարդները միշտ՝ առաջին իսկ հայացքից, միմյանց կապվել են ջերմ, մաքրամաքուր զգացումներով: Ժամանակակից թատերագիրը շեղվել է անգամ Օրեստեսի միջին հատուկ Էսքիլեսյան Քոնփորների և Եվմենիդների դիցուհիներից, սարտրյան ճանճերից, որոնք վրիժառության խորհրդանիշներն են հանդիսանում: Դրամայի ավարտին, երբ գաղտնիքը կբացահայտվի, Էլեկտրան Օրեստեսի կյանքում կփորձի վերածվել յուրահատուկ Վրիժառության դիցուհու, չնայած քննարկվող դրամայում Օրեստեսը չի սպանում ո՛չ մորը, ո՛չ էլ Էգիսթոսին: Էլեկտրան ինքն է հետապնդում Օրեստեսին և ահա՛, թե ինչ բառերով է արտահայտում իր սիրուն միախառնված ցասումը.

Էլեկտրա- *Ես քեզ կհետևեմ, քեզ բաց չեմ թողնի, կհետամտեմ և՛ մտքով, և՛ սրտով, և՛ արյամբ: Ես էգ շուն, այն զամփոռներից մեկը կդառնամ, որոնցից դու այնքան վախենում էիր:*

Օրեստես- *Ջուլիե՛տ:*

Էլեկտրա- *Իսկ դո՞ւ, քո անունն ի՞նչ է: Հիմա կարող ես ինձ ասել:*

Օրեստես- *Դա ի՞նչ կփոխի:*

Էլեկտրա- *Ամեն ինչ: Մենք խաղն ավարտեցինք...*

Օրեստես- *Ու մենք կխաղայինք Ջուլիետ և... Չեմ պատկերացնում, դա ի՞նչ կփոխի:*

Էլեկտրա- *Ամեն ինչ մի բարդացրու, ենթարկվիր ինձ:*

Օրեստես- *Ինչպես կուզես: ¹²⁵*

Ինչպես նկատեցիք, մեջբերումը հաստատում է վերևում արտահայտված այն կարծիքը, որ Վարուժանի դրամայում Օրեստեսն ու Էլեկտրան կարող էին միմյանց սիրահարվել: Օրեստես ասում է. «Մենք կխաղայինք Ջուլիետ և...», ակնհայտ է, որ բազմակետը պետք է փոխարինվեր Ռոմեոյով, հեղինակը, բնականաբար, շեքսպիրյան հայտնի ողբերգությունն է նկատի ունեցել: Չմոռանանք, որ համաշխարհային գրականությունում քիչ չեն նաև Օրեստես-

¹²⁵ Ibid.p.91

Համլետ համադրությանը վերաբերող աշխատությունները. բավական է հիշատակել թեկուզ Ջոյսին, ում «Ուլիսես» վեպում որոշակի ուրվագծվում են այս հայտնի կերպարների նմանությունները:

Ժան-ժակ Վարուժանի դրաման կազմված է երկու մասից, որոնք բաժանված են ինտերմեդիայով: Ինտերմեդիայում լավում է Ագամեմնոնի ծայնը, նա փորձում է հասկանալ, թե ի՞նչ է կատարվում Պլանիցայում՝ իր վաղեմի Արգոսում: Ինչ որ առումով զորավարը զղջում է, որ ինքը չի կարող պատմել մարդկությանը, այն, ինչը տարիներ ի վեր մտատանջում է նրանց: Ագամեմնոնի մենախոսությունից կարելի է ենթադրել, որ նա որևէ մեկին ո՛չ դատապարտում, ոչ էլ որևէ մեկից բացատրություն է պահանջում: Ագամեմնոնի խոսքն ընդհատվում է երեք թակոցով, որոնք ամենայն հավանականությամբ խորհրդանշում են անցյալում մեծ զորավարի համար ճակատագրական եղած երեք հարվածները: Ստացվում է, որ պատմությունը հերթական անգամ կրկնվում է, Ագամեմնոնը մեռնում է երկրորդ անգամ:

Եթե դրամայի առաջին մասն աչքի է ընկնում գործողությունների բազմազանությամբ, ապա երկրորդն առավել ողբերգական հնչերանգ ունի, գործողություններ գրեթե չկան: Կլիտեմնեստրան դժվարությամբ փորձում է դուրս գալ մոռացումի թմբիրից, հերոսների խոսքերն անվերջ ընդհատվում են (*Ժամանակ*) հեղինակային ռեմարկով:

Կլիտեմնեստրան Օրեստեսին հանդիպելուց ի վեր փորձում է իր հիշողությունը վերականգնել, աստիճանաբար սկսում է մտաբերել ու պատմել Էլեկտրային, թե ինչպես է ինքը հիասթափվել նախկին ամուսնուց՝ Ագամեմնոնից: Պարզվում է՝ Ագամեմնոնն է եղել իրենց երիտասարդ աղջկա մահվան պատճառը: Վերջինս սիրահարված է եղել հինդու ուսանողական ընկերոջը, ու քանի որ հայրը դեմ է եղել ամուսնությանը, ի նշան ընդվզման, իրեն ողջակիզել է քաղաքային հրապարակում: Ինչ խոսք, թատերագիրը քաջ գիտակցել է, որ 20-րդ դարի հանդիսատեսը չի կարող հավատալ Իփիգենիայի զոհաբերմանը՝ հանուն հետագա հաղթանակների: Այս դեպքում թատերգուն՝ հավատարիմ մնալով հանդերձ միֆի սկզբնաղբյուրին, գործողությունները փոխադրում է ժամանակակից իրականություն, ուստի նախամեղքը հերթական անգամ բարդվում է Ագամեմնոնի վրա, ումից հետագայում Կլիտեմնեստրան պետք է արդարացի «վրեժ» լուծեր: Հետագայում Կլիտեմնեստրան պարզել էր, որ պատերազմի գնացած տարիներին Ագամեմնոնը կապված է եղել մի դեռատի թրքուհու հետ, ով ավելին էր, քան սոսկ գերուհին: Թրքուհու կերպարը ամբողջովին մտացածին է՝ հերթական անգամ Վարուժանը, այս անգամ էլ Կլիտեմնեստրայի միջոցով, արտահայտում է է իր վերաբերմունքը այդ ազգի

նկատմամբ: Կլիտեմնեստրան ի զորու չէ ներել ամուսնու դավաճանությունը թրքուհու հետ:

Ուշագրավ է, որ Կլիտեմնեստրայի հիշողությունը պայծառանում է, երբ Էլեկտրային քնեցնելու համար սկսում է հետաքրքիր պատմություն պատմել : Դժվարությամբ մտքերը ժողովելով՝ նա աղջկան պատմում է հայկական՝ Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելական սիրո պատմությունը : Հայկական ժողովրդական առասպելը թերևս օգնի Կլիտեմնեստրային արդարացումներ գտնելու իր՝ սիրահարված կնոջ և ճակատագրական կնոջ կարգավիճակներում :

Վարուժանի դրամայում բազում խորհրդանշանների կողքին իր ուրույն տեղն է զբաղեցնում հայելու խորհրդանշանը. Կլիտեմնեստրան դրամայի սկզբում որոշում է Էլեկտրային նվիրել ադամանդներով ազուցված հայելի, որն իրեն նախկինում Ագամեմնոնն էր ընծայել: Դրամայի վերջում այդպես էլ նա չի կարողանում այն գտնել ու տալ աղջկան, ինչպես որ խոստացել էր.

Կլիտեմնեստրա- *Երբ մտածում եմ այդ մասին ... հայելին, հիշո՞ւմ ես, որ քեզ խոստացել էի...: Չեմ կարողանում գտնել : Դու ինձ ասող ւ՞մ ես :*

Էլեկտրա- *Իհարկե ոչ :*

Կլիտեմնեստրա- *Ինչո՞ւ : Այն շատ գեղեցիկ է : Ի վերջո կգտնեմ իհարկե...*

Էլեկտրա- *Պետք չի, հավատացնում եմ ::*

Կլիտեմնեստրա- *Ես քեզ համար կյանքում ոչինչ չեմ արել :*

....

Կլիտեմնեստրա- *Ես կգտնեմ այդ չարաբաստիկ հայելին, որն ինձ հունից հանում է : Բոլոր դեպքերում հաստատ չեմ վաճառել : ¹²⁶*

Վարուժանի դրամայում Կլիտեմնեստրան բարդ, հակասական կերպար է: Առաջին իսկ տողերից, երբ զբոսավարը երիտասարդ գինվորականին ներկայացնում է Կլիտեմնեստրային, նրան բնութագրում է որպես քաղաքում տիրող քաոսի պատճառ, միակը, որ ի զորու շրջանցել օրենքը: Վերը բերված մեջբերումը վկայում է, որ Կլիտեմնեստրայի անձը երկատված է, սկզբում նա հայելին որպես իր համար թանկ իր է ներկայացնում աղջկան, վերջում չգտնելով, զայրանում և անպետքություն է կոչում: Հայելին Կլիտեմնեստրայի կյանքի արտացոլանքն է, նրա կրկնապատկումն է խորհրդանշում: Աղջկան գեղեցիկ հայելի ընծայելու ցանկությունը իմաստավորվում է նրանով, որ Էլեկտրան այդ հայելու մեջ մոր արտացոլանքը տեսնելով, պիտի ապրեր նույն մոռացումը, որ տարիներով ապրել էր մայրը և ողջ քաղաքը : Հայելու կորուստը վկայում է, որ Էլեկտրան ազատված է պատմությունը կրկնելու ծանր լծից : Դրամայի ավարտին Կլիտեմնեստրան առեղծվածայնորեն՝ անսպասելի մահանում է, և Օրեստեսն

¹²⁶ Ibid.p.74

ազատվում է դարերից եկած մայրասպանի ու Էգիսթոսի մահվան ծանր մեղքը կրելուց : Օրեստեսն ազատ է : Այս դրամայում ազատ լինելու գաղափարը Վարուժանը տեղափոխել է ժամանակակից իրականություն : Օրեստեսականներում աստվածների շուրթերից հնչում էր այն միտքը, որ մարդը, եթե գիտակցի իր ազատությունը՝ աստվածներից ուժեղ կարող է լինել : Հիշենք Սարտրի «Ճանճերը» դրաման.

Յուպիտեր- Ես քո թագավորը չեմ, հանդուգն ճիճու : Քեզ ո՞վ է ստեղծել :

Օրեստ- Դու : Բայց հարկ չկար ինձ ազատ ստեղծելու :

Յուպիտեր- Ես քեզ ազատություն եմ տվել ինձ ծառայես :

.....

Օրեստ- Ես ոչ տերն եմ, ոչ ստրուկը, Յուպիտեր : *հնքս* եմ իմ ազատությունը : Հենց այն պահից, ինչ դու ինձ ստեղծեցիր, ես դադարեցի քեզ պատկանել :¹²⁷

Ազատության գիտակցումը և աստվածայինի ու մարդկայինի հակամարտությունը նման փիլիսոփայական ընդհանրացման է հանգում Սարտրի թատերախաղում, մինչդեռ Վարուժանի դրամայում Օրեստեսին ձերբակալելով, նրանից խլում են իր ազատությունը, քանի որ քաղաքի համար վտանգ էր ներկայացնում:

Էգիսթոս- Մի դողդողա : Պարզապես ես նրան մի փոքր վախեցրել եմ : Քո բոյ-սկառուղը, վերջիվերջո, վատը չէ :

Գնա ասա, որ այլևս չտանջվի: Նա ազատ է :¹²⁸

Եթե գրականությանը հայտնի մյուս Օրեստեսականներում ազատության այդ զգացումը հաղթանակ է, ապա այստեղ ոչնչի չի ծառայում, քանի դեռ քաղաքը թաղված է գործած անպատիժ մեղքի ու մոռացումի մեջ : Այս դրամայում Օրեստը միջոց է հանդիսանում, քաղաքը մոռացման թմբիկից դուրս բերելու համար՝ Կլիտեմնեստրան վաղաժամ մահանում է, առանց գաղտնիքը մինչև վերջ հայտնելու: Իսկ գաղտնիքն այն է, որ ժողովուրդը պետք է գիտակցի կառավարության գործած ոճիրն ու ձերբազատվի մոռացման հավերժական քնից : Ինչ խոսք, Վարուժանի ակնարկը ուղղված է թուրք ժողովրդին՝ մեղքը գիտակցելու ու մոռացման թմբիկը թոթափելու առումով: Դրամայի վերջում Կլիտեմնեստրան դողդոջուն ձայնով հայտարարում է.

Կլիտեմնեստրա- ...Բլրի բարձունքին գտնվող քաղաքը թաքցնել չի լինի...¹²⁹

¹²⁷ Ժան-Պոլ Սարտր, «Թատերգություն», , «Սովետական գրող», հր., թարգմ. Վ. Նալբանդյան, Երևան-1985, էջ254-255

¹²⁸ Jean-Jacques Varoujean «La ville en haut de la colline», , Gallimard, 1969, p88

Աս է Եղեռնը վերապրած, արմատներով հայ, ֆրանսագիր գրողի ուղերձը մարդկությանը, այս չլուծված խնդիրն է թերևս Վարուժանին դրդել դիմել հայտնի միջին ու այն վերաիմաստավորել: Մարդկությանը հայտնի այս միջը, որը կենտրոնացած է մայրասպան զավակի վրա, ով ոճիր է գործում՝ Արգոսը մեղքի գիտակցումից ազատագրելու համար, ոճիր չգործելով հակամիջակա կերպարի է վերածվում: Բլրի բարձունքին տեղակայված քաղաքը պետք է ազատագրվի ոճրից՝ գործած մեղքը գիտակցելու գնով : Վարուժանի դրամայի գլխավոր հերոսները՝ Օրեստեսը և Էլեկտրան վերջում որոշակի եզրակացության չեն հանգում, չեն կողմնորոշվում, թե ինչ պիտի անեն: Հեղինակը պատասխան չունի, ինչպես մենք մինչ օրս չունենք :

Այսպիսով՝ Տրոյական շարքից Օրեստեսի միջը Վարուժանի դրամայում վերածվում է հակամիջի : Հայագի գրողը միջակա կերպարները տեղափոխելով ժամանակակից աշխարհ, նրանց շնորհելով առօրյա խոսելաոճ, գործող անձանց զրկելով գերբնական ուժից, հեռանում է Օրեստեսի միջակա սկզբնաղբյուրներից, իրեն հուզող հիմնահարցերը քննում, թուրքերի՝ իրենց իսկ գործած ոճիրը գիտակցելու և ընդունելու շրջանակում :

АНИ ДЖАНИКЯН - ПЕРЕОСМЫСЛЕНИЕ МИФА ОБ ОРЕСТЕ В ДРАМЕ «ГОРОД НА ВЕРШИНЕ ХОЛМА» Ж.-Ж.ВАРУЖАНА

Статья посвящена переосмыслению мифа об Оресте из Троянского цикла в пьесе французского драматурга армянского происхождения Жан-Жака Варужана «Город на вершине холма». Видоизменяя традиционные представления о данном мифе, автор преобразовывает его в антимиф, наполняя его аллюзиями на события геноцида армян в Османской империи.

ANI DJANIKYAN - REINTERPRETATION OF THE MYTH OF ORESTES IN "CITY ON THE HILLTOP" BY JEAN- JACQUES VAROUJEAN

The article discusses the reinterpretation of the myth of Orestes in the "City On the Hilltop" by a French playwright of Armenian descent Jean-Jacques Varoujean. Shifting the traditional idea of the myth, Varoujean transforms it into an anti-myth, using allusions to the events of Armenian Genocide in Ottoman Empire.

¹²⁹ Ibid. p.98

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

**ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈՂԻԿՅԱՆ
ԱՆՆԱ ՇԱՀՐԱԶՅԱՆ**

Հիմնաբառեր՝ թարգմանաբանություն, թարգմանության տեսություն, ներլեզվական թարգմանություն, միջլեզվական թարգմանություն, միջնշանային թարգմանություն, համարժեքություն, նույնականացում, հավաստարմություն, հերմենևտիկ շարժում

Լեզուների բազմազանությունը դեռևս անհիշելի ժամանակներից ծնել է թարգմանության պահանջ: Միջմշակութային փոխհարաբերությունների զարգացման այս բուռն դարաշրջանում անգնահատելի է թարգմանության դերը, քանի որ հենց թարգմանությունն է միջմշակութային հաղորդակցման միակ և հիմնական գործիքը: Թարգմանական գործունեության և տեսական դրույթների առաջադրման արդյունքում՝ ստեղծվեց թարգմանության գիտակարգը (թարգմանաբանությունը), որը թույլ է տալիս գիտական տեսանկյունից դիտարկել թարգմանության՝ որպես մշակութային միջև տեղեկատվության փոխանցելիության ապահովման միակ միջոցի էությունն ու հիմնական խնդիրները:

Թարգմանաբանությունը հատկապես ուշագրավ է դիտարկել վերջինիս միջգիտակարգային փոխառնչությունների տեսանկյունից: «Թարգմանաբանություն» գիտակարգը, այսպիսով, մշտապես հանդես է գալիս մի շարք հարակից գիտությունների հետ սերտ փոխհարաբերությունների մեջ: Այսպես, թարգմանությունն առնչվում է միաժամանակ լեզվաբանության, նշանագիտության, մշակութաբանության, ինչպես նաև փիլիսոփայության հետ: Թարգմանության տեսության մեջ փիլիսոփայական հայեցակարգն ուսումնասիրում է թարգմանության էությունը, ուղղությունները, տեսակներն ու խնդիրները՝ լեզվա-փիլիսոփայական տեսանկյունից:


Թարգմանության փիլիսոփայության զարգացումը ընդունված է բաժանել պատմականորեն երեք հիմնական շրջանների, որոնք էլ ցույց են տալիս թարգմանություն և փիլիսոփայություն գիտակարգերի փոխհարաբերությունների զարգացման հիմնական ուղղությունները: Թարգմանական գործունեության

ծագումը, ուստի և վաղ շրջանը կապված էր կարևոր կրոնական և մշակութային տեքստերի թարգմանության պահանջի հետ: Այս շրջանը կապված է «Աստվածաշնչի» հունարենից լատիներեն թարգմանության հետ: Վաղ շրջանում թարգմանության հիմնական մոտեցումները մշակվել են Ցիցերոնի և Հորացիոսի կողմից (Ք.ա. առաջին դար): Թարգմանաբանության վաղ փուլի զարգացման հիմնաքարն է համարվում ս. Ջերոմի կողմից Աստվածաշնչի լատիներեն թարգմանությունը՝ չորրորդ դարի սկզբին: Հնագույն շրջանին հաջորդեց թարգմանաբանության զարգացման այսպես կոչված միջին շրջանը, որը հիմնականում կապված էր գրական, մասնավորապես՝ բանաստեղծական թարգմանությունների զարգացման հետ: Այս շրջանում թարգմանիչները առավելագույն ազատություն էին վայելում՝ ներգործելով թարգմանվող տեքստի վրա, հարմարեցնելով այն սեփական ոճին և արտահայտելով սեփական ստեղծագործականությունը: Մինչև մոտավորապես 20-րդ դարի կեսերը թարգմանաբանությունը, այնուամենայնիվ, շարունակեց զարգանալ հենց Ս. Ջերոմի կողմից առաջ քաշված «բառացի թարգմանությունից՝ իմաստային թարգմանություն» գաղափարային ուղղվածության հիմքով¹³⁰: Մինչ 1970-ական թվականները թարգմանաբանական դիտարկումները, դիտողությունները, մտորումները, դրույթները հատվածաբար, առանց որևէ լուրջ կամ գիտական համակարգման, հրապարակվում էին թարգմանված գործերի նախաբաններում՝ որպես թարգմանչի խոսքն ընթերցողին: Եվ միայն 1970-ական թվականներին սկիզբ դրվեց թարգմանաբանության՝ որպես գիտակարգ զարգացմանը:

Այս հետազոտության մեջ կփորձենք բացահայտել թարգմանաբանության փիլիսոփայական հիմնական ուղղությունները և տեսությունները՝ առաջնորդվելով նախ թարգմանության էության բացահայտմամբ: Թարգմանությունն, ըստ էության, տեղեկատվության փոխանցում է՝ լեզվական կոդի փոփոխությամբ: Սա հաղորդակցման մի յուրահատուկ գործընթաց է, որտեղ հաղորդակցման հիմնական մասնակիցներն երեքն են՝ հեղինակը, թարգմանիչը և ընթերցողը: Թարգմանիչն այս դեպքում միջնորդի դեր է տանում, որը փոխանցում է տեքստը՝ հեղինակից ընթերցողին: Այստեղ կարևոր է հասկանալ, թե տվյալ հաղորդակցման մասնակիցներից ում ազդեցությունն է ավելի մեծ թարգմանվող տեքստի վրա. հեղինակի՞, որը հաղորդում է գրվածքին իմաստ և ձև, թարգմանչի՞, որը փորձում է ներդրված իմաստը հաղորդել թարգմանության լեզվում առկա ձևերով, որոնք հայտնի են ընթերցողին, թե՞ ընթերցողի, ում հարմարեցվում է այն ձևը, որով փորձ է արվում փոխանցել բովանդակությունը:

¹³⁰ Munday, J., “Introducing Translation Studies”, 3rd edition, Routledge, New York, 2012, p. 29-31

Եվ եթե համարում ենք, որ մեկ լեզվով հաղորդակցման կաղապարում ունենք երկու տեքստ՝ տեքստ, որը կողավորում և փոխանցում է հասցեագրողը և այն, որն ընկալվում է հասցեատիրոջ կողմից, այսինքն՝ վերծանված հաղորդագրությունը, ապա հարկ է նշել, որ թարգմանության հաղորդակցման կաղապարում գործ ունենք արդեն իսկ երեք տեքստերի կամ հաղորդագրությունների հետ. այն, ինչ ստեղծում է հեղինակը, այն, ինչ ստանում է թարգմանիչը թարգմանության արդյունքում և այն, ինչ ընկալվում է ընթերցողի կողմից.



Եթե սահմանենք թարգմանությունը նշանագիտության տեսանկյունից, ապա հարկ է նշել, որ այն նշանների փոխարինումն է այլ նշաններով՝ կարևոր տեղեկատվության պահպանմամբ: Այս սահմանմամբ առաջնորդվելով՝ թարգմանությունը կարող ենք դիտարկել ոչ միայն որպես մեկ լեզվի նշանների փոխարինումը մեկ այլ լեզվի նշաններով, այլ կարող ենք խոսել նաև մեկ լեզվի շրջանակներում թարգմանության՝ այսինքն՝ մեկնաբանության, վերաձևակերպման մասին. այն ամենը, ինչ ենթադրում է իմաստի պահպանում՝ նշանային կոդի փոփոխությամբ:

Թարգմանության նման լայն դիտարկմամբ հանդես է եկել Ռոման Յակոբսոնը՝ առանձնացնելով թարգմանության երեք հիմնական տեսակները.¹³¹

1. **Ներլեզվական թարգմանություն** կամ վերանվանում (վերանշանակում)՝ լեզվական նշանների մեկնաբանությունը՝ միևնույն լեզվի այլ նշանների միջոցով:
2. **Միջլեզվական թարգմանություն** կամ բուն թարգմանություն՝ լեզվական նշանների մեկնաբանությունը՝ մեկ այլ լեզվի նշանների միջոցով:
3. **Միջնշանային թարգմանություն** (տրանսմուտացիա)՝ լեզվական նշանների մեկնաբանությունը ոչ խոսքային նշանային համակարգերի միջոցով:

¹³¹ Якобсон, Р., “О лингвистических аспектах перевода”, сост. С. Т. Золян, К. Ш. Абраамян, Лингвистические аспекты теории перевода, Хрестоматия, Ереван, Лингва, 2007, с. 33

Այսպիսով թարգմանությունը շատ ավելի լայն հասկացություն է, քան պարզապես մեկ լեզուն մյուսով փոխարինելու անհրաժեշտությամբ դրդված գործունեությունը: Ինչպես գերմանական փիլիսոփայական տեսության ներկայացուցիչ Ֆրիդրիխ Շլեյերմախերն էր նշում իր «Թարգմանության տարբեր մեթոդներ» աշխատության մեջ. «Մի՞թե մենք հաճախ ստիպված չենք լինում մեզ համար թարգմանել մեկ ուրիշի խոսքերը՝ նրա, ով մեզ շատ նման է, բայց տարբերվում է իր բնավորությամբ և մտածողությամբ: Երբեմն մենք ստիպված ենք լինում թարգմանել անգամ մեր սեփական բառերը, երբ ցանկանում ենք դրանք ևս մեկ անգամ դարձնել մեր սեփականը»:¹³² Այնուամենայնիվ, Յակոբսոնն ինքն էր պնդում, որ թարգմանության զուտ իրացումը հենց բուն թարգմանությունն է, այսինքն՝ միջլեզվական թարգմանությունը:

Թարգմանաբանության փիլիսոփայական մոտեցման ուսումնասիրության հիմնական առարկան, այսպիսով, լեզուների միջև գոյություն ունեցող տարբերությունների հետևանքով բուն թարգմանության մեջ առաջացող խնդիրներն են: Ինչպես պնդում է Հյուգո Ֆրիդրիխը. «Թարգմանության արվեստը հավերժ ստիպված կլինի պայքարել մեկ լեզվից մյուսը անթարգմանելիության խնդրի հետ: Թարգմանչի արվեստը անընդհատ սահմանափակվում է լեզուների միջև գոյություն ունեցող սահմանների պատճառով»:¹³³

Լեզուների բացարձակ թարգմանելիության անհնարինությամբ պայմանավորված՝ թարգմանության հիմնական խնդիրների շարքին են դասվում համարժեքության և նույնականացման հասկացությունները: Նույնականությունը թարգմանության ճշգրիտ համապատասխանությունն է բնագրի տեքստի հետ, իսկ համարժեքությունը՝ բնագրի յուրաքանչյուր բառի կամ բառակապակցության համապատասխանությունը թարգմանության լեզվում:¹³⁴ Լեզուների միջև գոյություն ունեցող սահմանները, ինչպես Հյուգո Ֆրիդրիխն է անվանում դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունները, իհարկե բացառում են լեզուների միջև բացարձակ համարժեքության կամ նույնականության գոյությունը: Այստեղ

¹³² Schleiermacher, F., “On the Different Methods of Translating”, in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992, p. 36

¹³³ Friedrich, H., “On the Art of Translation”, in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992, p. 11

¹³⁴What is Translational Equivalence?

<http://www01.sil.org/linguistics/glossaryoflinguisticterms/WhatIsTranslationalEquivalence.htm>

կարելի է անդրադարձ կատարել Սոսյուրի նշանների տեսությանը, որտեղ, առաջարկելով լեզվական նշանների կամայական բնույթի գաղափարը, Սոսյուրը պնդում է, որ եթե բառերը նշանակեին նախապես գոյություն ունեցող հասկացություններ, ապա բոլոր լեզուներում կլինեին իմաստային համարժեքներ, բայց դա, իհարկե, այդպես չէ:¹³⁵

Նույն խնդրին թարգմանության իր տեսության մեջ անդրադարձել է նաև Արթուր Շոպենհաուերը՝ նշելով. «Յուրաքանչյուր բառ չէ, որ գոյություն ունենալով մեկ լեզվում, իր բացարձակ համարժեքն ունի մեկ այլ լեզվում: Երբեմն լեզվում բացակայում է այս կամ այն հասկացությունը նշանակող բառը՝ չնայած, որ այն կարելի է գտնել մի շարք այլ լեզուներում»:¹³⁶

Ռոման Յակոբսոնը, այնուամենայնիվ, գտնում էր, որ ողջ ճանաչողական փորձը և դրա դասակարգումը կարելի է արտահայտել ցանկացած լեզվով: Երբ չենք գտնում, այսինքն, երբ լեզվում բացակայում է այս կամ այն բառը կամ հասկացությունը, ապա կարող ենք հարստացնել լեզվի տերմինաբանությունը փոխառված բառերի, նորաբանությունների, վերաձևակերպումների (պարաֆրազ) և մի շարք այլ հնարներով: Յակոբսոնը համարում էր, որ այս կամ այն լեզվում որևէ քերականական կաղապարի բացակայության խնդիրը թարգմանելիս կարելի է լուծել բառապաշարի միջոցով: Ավելին, լեզվում այս կամ այն քերականական կարգի բացակայությունը ամենևին էլ չի նշանակում բնագրում պարունակվող ողջ տեղեկատվության փոխանցման անհնարինություն:¹³⁷

Լեզուների միջև բացարձակ թարգմանելիության անհնարինությամբ պայմանավորված՝ հատկապես գրական ստեղծագործությունների թարգմանության անհրաժեշտության ծագմամբ՝ թարգմանության փիլիսոփայական մոտեցման մեջ կենտրոնական է դառնում ձևի և բովանդակության փոխհարաբերության խնդիրը: Թարգմանություն կատարելիս՝ թարգմանիչը մշտապես բախվում է ձևի և բովանդակության փոխհարաբերության խնդրին: Իհարկե, կատարյալ է այն թարգմանությունը, որում ամբողջովին

¹³⁵ Saussure F., “Course in General linguistics”,
<http://home.wlu.edu/~levys/courses/anth252f2006/saussure.pdf>

¹³⁶ Schopenhauer, A., “On Language and Words”, in R. Schulte, J. Biguenet (ed.),
Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida, University of Chicago Press, 1992, p. 32

¹³⁷ Jakobson, R., “On Linguistic Aspects of Translation”, in R. Schulte, J. Biguenet (ed.),
Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida, University of Chicago Press, 1992, p. 147-148

պահպանված է աղբյուր տեքստի բովանդակությունը և որը արտահայտված է թիրախ լեզվում լավագույն հնարավոր ձևով: Երբեմն, այնուամենայնիվ, թարգմանչի առջև խնդիր է ծառանում զոհաբերել թարգմանության ձևը՝ փոխանցելու համար բովանդակության ողջ էությունը, բայց սա, իհարկե, մեծապես կախված է նաև թարգմանվող տեքստի տեսակից: Այսպես օրինակ, պոեզիայում առաջնությունը տրվում է թարգմանվածքի ձևին:

Թարգմանության ձևի և բովանդակության փոխհարաբերության տեսանկյունից՝ Ֆրիդրիխ Շլեյերմախերը առանձնացնում էր թարգմանության երկու հիմնական տեսակ: Դրանք են վերաձևակերպումը (պարաֆրազը) և նմանակումը (իմիտացիան):¹³⁸ Վերաձևակերպումը թույլ է տալիս հնարավորինս ճշգրիտ փոխանցել բովանդակությունը՝ առանց փոխանցելու բնագրի հնչողությունը: Հետաքրքրական է այն, որ չնայած պարաֆրազի միջոցով փորձ է կատարվում հաղթահարել լեզուների անտրամաբանությունը՝ այն ստիպված է ենթարկվել այդ անտրամաբանությանը:

Մյուս կողմից՝ նմանակումը (իմիտացիան) բովանդակային առումով փոքր-ինչ տարբերվում է բնագրից. այն մի ամբողջություն է՝ կազմված բաղադրիչներից, որոնք էականորեն տարբերվում են բնագիր տեքստի բաղադրիչներից: Այնուամենայնիվ, ի տարբերություն վերաձևակերպման մեթոդի՝ իմիտացիան թույլ է տալիս փոխանցել բնագիր տեքստի ստեղծած տպավորությունը: Այսպիսի վերաձևումը, թերևս, այլևս բուն ստեղծագործությունը չէ, քանի որ թարգմանիչը այս կերպ զոհաբերում է ստեղծագործության ինքնությունը: Վերաձևակերպումը կիրառվում էր առավելապես գիտության ոլորտում, մինչդեռ նմանակումը կիրառվում էր հիմնականում արվեստի ոլորտում՝ գրական ստեղծագործությունների թարգմանության մեջ:

Ֆրիդրիխ Շլեյերմախերը համարում էր, որ թարգմանչի հիմնական նպատակը պետք է լինի ընթերցողին տալ այն հիմնական պատկերը և հաճույքը, որ ապահովում է ստեղծագործության ընթերցումը բնագրի լեզվով: Այնուամենայնիվ, Շլեյերմախերը միևնույն ժամանակ փաստում էր, որ անհնար է թարգմանել այնպես, ինչպես հեղինակը նախապես կգրեր թարգմանության լեզվով:

Այս խնդրի շրջանակներում՝ Հյուգո Ֆրիդրիխը պատմական անդրադարձ է կատարում թարգմանության ընկալմանը հոռմեական

¹³⁸ Schleiermacher, F., “On the Different Methods of Translating”, in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992, p. 40-45

դարաշրջանում և այդ ընկալման զարգացման ուղղություններին: Ըստ նրա՝ դեռևս Ցիցերոնն էր անդրադառնում այն փաստին, որ թարգմանությունը գաղափարների փոխանցումն է մեկ լեզվից մյուսը, այլ ոչ պարզապես բառերի, որոնք մարմնավորում են այդ գաղափարները: Ուստի և անհրաժեշտ է խուսափել բառացի թարգմանությունից՝ անհրաժեշտության դեպքում օգտագործելով նորաբանություններ և նոր կապակցություններ՝ փորձելով փոխանցել օտար տեքստի ոճը և բովանդակությունը մեր սեփական մշակույթ: Իր դիտարկումներում Ցիցերոնն ակնարկում էր, որ լատիներենը ոչ մի կերպ չի տուժել և չի ոտնահարվել՝ թարգմանության արդյունքում ձեռք բերած նորաբանությունների և նոր կապակցությունների, անսովոր ոճական և քերականական արարումների ներմուծման պատճառով: Այս մոտեցումը կատարելագործվել է արդեն հետագայում՝ ս. Ջերոմի կողմից, որը պնդում է, որ թարգմանչի համար մտքի բովանդակությունը բանտարկյալ է, որին թարգմանիչը՝ նվաճողի հպարտությամբ տեղափոխում է իր սեփական լեզու: Հետագայում հռոմեացիները ավելի են կատարելագործում այս դատողությունը և թարգմանությունը դիտարկում են որպես մրցույթ բնօրինակ տեքստի հետ: Թարգմանչի նպատակն է գերազանցել բնօրինակը և այդ ճանապարհով բնօրինակը դիտարկել որպես ոգեշնչման աղբյուր՝ սեփական լեզվում նոր արտահայտություններ ստեղծելու համար:¹³⁹

Այսպիսով՝ ձևի և բովանդակության պահպանմանը զուգահեռ՝ թարգմանաբանության փիլիսոփայական հայեցակարգում կենտրոնական գաղափար է դառնում թարգմանչի դիտավորյալ ներգործությունը և ստեղծագործականության արտահայտումը գրական տեքստերի թարգմանության մեջ: Թարգմանաբանության ուսումնասիրությամբ զբաղվող շատ գիտնականներ են անդրադարձել թարգմանվածքի գեղագիտական արժեքի պահպանման և փոխանցման խնդրին, որոնցից, մասնավորապես, Ֆրիդրիխ Նիցշեն լայն դիտարկումներ է անում՝ կապված թարգմանության մեջ բնագրի խաթարման խնդրի հետ:

Ֆ. Նիցշեն հատկապես անդրադառնում է ֆրանսիացիների կողմից հռոմեական հնաբանությունների թարգմանությանը և հռոմեացիների կողմից՝ հունարենից արված թարգմանություններին: Նա քննադատում է այն առանձնակի «դաժանությունը» և միևնույն ժամանակ պարզամտությունը, որ բնորոշ է նմանատիպ թարգմանություններին՝ թարգմանություններ, որոնցում փորձ է արված ներմուծել սեփականը՝ անտեսելով բնագրի արժեքը, այն հարմարեցնելով

¹³⁹ Friedrich, H., “On the Art of Translation”, in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992, p. 11-16

սեփական ժամանակաշրջանին: «Մտահոգում էր արդյոք այս թարգմանիչներին գործի հեղինակը՝ իրական արարիչը, սեփական ստեղծագործության մեջ հեղինակային փորձի արտացոլումը»: Այսպես Ֆ. Նիցշեն շատ խիստ քննադատում է այն պոետ-թարգմանիչներին, որոնք, ոտնահարելով ստեղծագործության ծագումը և հեղինակի մտադրությունը, փորձում էին հարմարեցնել և ծառայեցնել այդ ստեղծագործությունը՝ թարգմանվածքի տեսքով՝ իրենց սեփական կարիքներին, իրենց սեփական շունչն էին հաղորդում և իրենց հոգին էին ներդնում դրա մեջ: Ըստ Ֆրիդրիխ Նիցշեի՝ այն օրերում թարգմանել նշանակում էր «նվաճել», քանի որ թարգմանիչը, անտեսելով ստեղծագործության պատմական հիմքը, թարգմանվածքին ավելացնում էր ժամանակակցության ինչ-որ բաղադրիչ՝ շատ հաճախ հեղինակի անվան փոխարեն ստեղծագործության տակ թողնելով հենց իր անունը:¹⁴⁰

Այնուամենայնիվ, թարգմանության մեջ հավատարմության խնդիրը (fidelity՝ հավատարմություն բնագրին) ծագել է թարգմանական գործունեության զարգացման դեռևս ամենավաղ շրջանում: Նախ, այս գաղափարը հանդիպում ենք Հորացիոսի մոտ, որը հավատարմությունը դիտարկում էր «բառացի» թարգմանության տեսանկյունից: Այսինքն՝ բնագրին հավատարիմ մնալու համար՝ թարգմանությունը պետք է բառացի բնույթ կրեր: Սա կապված էր հատկապես սուրբ գրքերի թարգմանության հետ: Պատահական չէ, որ Աստվածաշնչի թարգմանության մեջ ս. Ջերոմը կարևորում էր բնագրի ամբողջական փոխանցումը՝ առանց այս կամ այն ներգործության, քանի որ այդ կերպ միայն հնարավոր կլիներ պահպանել և փոխանցել «սուրբ հոգին»: Եվ միայն տասնյոթերորդ դարի վերջում է «հավատարմությունը» սկսում դիտարկվել բովանդակության պահպանության, այլ ոչ թե բնագրի բառ առ բառ փոխանցման տեսանկյունից:¹⁴¹

Հյուզո Ֆրիդրիխի պնդմամբ՝ թարգմանչի կողմից բնագրի խաթարումը դադարում է, և թարգմանության մեջ հավատարմության մոտեցումը վերականգնվում է արդեն իսկ տասնութերորդ դարի կեսերին, երբ թարգմանությունը ձեռք է բերում նոր ուղղվածություն՝ կապված մշակույթների միջև հանդուրժողականության առաջացման հետ: Այս դարաշրջանում փոխվում է վերաբերմունքը լեզուների միջև տարբերությունների, դրանց դասակարգման

¹⁴⁰ Nietzsche, F., "On the Problem of Translation", in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992, p. 68-70

¹⁴¹ Munday J., "Introducing Translation Studies", 3rd edition, Routledge, New York, 2012, p. 39-41

նկատմամբ, քանի որ մշակույթները սկսում են դիտարկվել որպես հավասարապես յուրահատուկ:

Այս առումով կարելի է անդրադառնալ Հումբոլդտի այն պնդմանը, որ թարգմանության ժամանակ, հատկապես՝ գեղարվեստական թարգմանության մեջ, պետք է ոճական փոխանցում լինի աղբյուր լեզվից թիրախ լեզու՝ խուսափելու ոճի թերազնահատման վտանգից: Այս պահանջները այլևս չեն կարող դուրս մնալ թարգմանության արվեստի վերաբերյալ որևէ հետագա տեսությունից: Այնուամենայնիվ, թարգմանությամբ զբաղվողները նույնիսկ այսօր հազվադեպ են հետևում այս տեսության առաջադրած դրույթներին: Եվ սա վերաբերում է հատկապես այն թարգմանիչներին, որոնք հենց իրենք էլ ականավոր գրողներ են: Այս դեպքում գրող-թարգմանիչները ստեղծագործությունը հարմարեցնում են իրենց անհատական գրելաոճին՝ այդպիսով չարտացոլելով բնագիր տեքստի ոճական առանձնահատկությունները:

Դեռևս տասնութերորդ դարի կեսին, թարգմանաբանությամբ զբաղվողների՝ մասնավորապես գերմանական փիլիսոփայական տեսության մեջ կենտրոնական գաղափար է դառնում լեզուների՝ որպես մարդկային մտածողության մարմնավորման միջոցների դիտարկումը և առավել հանդուրժողական մոտեցում է որդեգրվում դրանց տարբերությունների և անկատարության նկատմամբ:

Նման տեսություններով հանդես են գալիս Արթուր Շոպենհաուերը¹⁴² և Վիլհելմ ֆոն Հումբոլդտը¹⁴³: Արթուր Շոպենհաուերը պնդում է, որ երբ մենք որևէ լեզու ենք սովորում, մեր հիմնական խնդիրն է դառնում հասկանալ յուրաքանչյուր հասկացությունը, որը տվյալ լեզվում արտահայտված է բառով, բայց որի համարժեքը մեր լեզվում բացակայում է (իսկ այդպես բավականին հաճախ է լինում): Հետևաբար, մենք ոչ թե պարզապես բառեր ենք սովորում, այլ ձեռք ենք բերում նոր հասկացություններ:

Վիլհելմ ֆոն Հումբոլդտը առավել մանրամասն է անդրադառնում այս դիտարկմանը՝ նշելով, որ լեզուները հոմանիշային են: Յուրաքանչյուր լեզու արտահայտում է միևնույն հասկացությունները՝ մի փոքր տարբերությամբ: Յուրաքանչյուր լեզու նշանային համակարգ է և յուրաքանչյուր լեզու յուրահատուկ

¹⁴² Schopenhauer, A., “On Language and Words”, in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992, p. 32-35

¹⁴³ Humboldt, W., “Translation of Agamemnon”, in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992, p. 55-58

է: Վիլիելմ ֆոն Հումբոլդտը այն կարծիքին էր, որ թարգմանությունը ոչ թե նսեմացնում է թիրախ լեզուն՝ մատնանշելով դրա անկատարությունը, այլ ընդհակառակը՝ հարստացնում է այդ լեզուն՝ արդյունքում հարստացնելով նաև մշակույթը և ժողովրդին, քանի որ լեզվի և դրա նշանների հետևում առարկաներ և գաղափարներ են: Հումբոլդտը մասնավորապես նշում է, թե ինչպես է զարգացել գերմաներենը՝ հունարենից թարգմանությունների արդյունքում:

Այսպես՝ ի տարբերություն թարգմանության նկատմամբ նախկինում ընդունված մոտեցման, ըստ որի հեղինակը մեծ ներգործություն էր ունենում թարգմանվածքի վրա՝ հաճախ հարմարեցնելով այն սեփական ոճին, դարձնելով այն իր սեփական ստեղծագործությունը, այս շրջանում կարևորվում է հավատարմությունը բնագիր տեքստին: Հումբոլդտը պնդում է, որ թարգմանությունը չի կարող և չպետք է դառնա զուտ մեկնաբանություն: Այն չպետք է պարունակի անորոշություններ՝ միայն թարգմանչի կողմից աղբյուր լեզվի ընկալման անբավարար մակարդակի և ոչ պատշաճ ձևակերպումների պատճառով:

Եվ հավատարմությունը բնագիր տեքստին ամենևին էլ չի նշանակում, որ թարգմանիչը այդպիսով կխթանի տվյալ լեզվի ազատ ներգործությունը և ազդեցությունը թիրախ լեզվի վրա: Հումբոլդտը հավելում է, որ, չնայած հիմնական հունարեն և գերմաներեն ստեղծագործությունները բազմիցս են թարգմանվել ֆրանսերեն, դրանց ոգին և հնությունը երբեք էլ չեն փոխանցվել ֆրանսիական ժողովրդին՝ առավել ևս ներխուժել նրանց մշակույթ:

Իր հերթին Գյոթեն նշում է, որ գոյություն ունի թարգմանության երեք տեսակ: Դրանք Գյոթեն նկարագրում է նաև որպես թարգմանաբանության զարգացման հիմնական շրջանները, այսինքն՝ յուրաքանչյուր շրջանում գերիշխում էր տեսակներից մեկը:¹⁴⁴ Այսպես, առաջինը մեզ ծանոթացնում է օտար երկրի և մշակույթի հետ՝ մեր սեփական լեզվի տերմինների միջոցով: Դրա լավագույն օրինակը արձակի թարգմանությունն է: Այստեղ ամբողջովին չեզոքացված են բանաստեղծական արվեստի ձևական տարրերը: Արձակ թարգմանությունը ավելի պարզ է, հազեցած չէ բանաստեղծական թարգմանության ճոխ արտահայտչականությամբ:

Երկրորդը շրջանը, կամ թարգմանության երկրորդ ուղղությունը, ըստ Գյոթեի, այն շրջանն է, երբ թարգմանիչը փորձում էր տեղափոխվել օտար իրավիճակ, բայց արդյունքում միայն հարմարեցնում էր օտար լեզվով

¹⁴⁴ Goethe, J. W., “Translations” in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992, p. 60-63

արտահայտված գաղափարը և ներկայացնում այն՝ որպես իր սեփականը: Այսպիսի շրջանը թարգմանության զարգացման մեջ Գոթեն անվանում է ծաղրանմանակում: Այստեղ կարող ենք վերհիշել և նորից անդրադառնալ Շլեյերմախերի կողմից առանձնացված նմանակմանը (իմիտացիային)՝ որպես թարգմանության կարևոր տեսակ: Այսպիսով այն, ինչ Գոթեն անվանում է ծաղրանմանակում՝ Շլեյերմախերը դիտարկում էր որպես իմիտացիա՝ բնագիր տեքստի նմանակում թիրախ լեզվում: Գոթեի կարծիքով՝ այսպիսի թարգմանության առավել հաճախ դիմում էին ֆրանսիացիները՝ բանաստեղծական թարգմանության մեջ, քանի որ վերջիններս ոչ միայն իրենց էին հարմարեցնում օտար բառերի արտասանությունը, այլ նաև բնագիր տեքստի արտահայտած զգացմունքները, հնչողությունը և գաղափարները:

Եվ քանի որ, ինչպես Գոթեն է նշում, մենք երբեք չենք կարող երկար գտնվել մի վիճակում՝ կատարյալ թե անկատար, թարգմանության ուղղվածությունը թևակոխել է նաև երրորդ շրջան, որը վերջինն է և երեքից ամենաբարձրը: Այս շրջանում թարգմանության նպատակն է հասնել բնագրի հետ կատարյալ նույնականացման: Թարգմանության այս տեսակը առավելագույն հակազդումների է ենթարկվել՝ տեսության առաջացման դեռևս վաղ շրջանում, քանի որ նման մոտեցման դեպքում թարգմանիչը այնքան է նույնանում բնագրի հետ, որ սկսում է ոտնահարել իր ժողովրդի և մշակույթի յուրահատուկ լինելու փաստը՝ ստեղծելով մի տեքստ, դեպի որը հարկ է ուղղել մարդկային զանգվածների ճաշակը:

Ի լրումն գերմանական դպրոցի դիտարկումների, հարկ է ուսումնասիրել նաև համաշխարհային այլ ուղղությունների տեսակետները թարգմանության փիլիսոփայական հայեցակերպի վերաբերյալ:

Լեվին գտնում է, որ թարգմանաբանությունը մի կողմից հարում է գիտության, մյուս կողմից՝ արվեստի ոլորտներին:¹⁴⁵ Թարգմանության նպատակն է հասնել, պահպանել և փոխանցել բնագիրը (տեղեկատվությունը), այլ ոչ թե ստեղծել նոր ստեղծագործություն, որը չունի իր նախատիպը: Թարգմանության նպատակը վերարտադրությունն է: Թարգմանության ընթացքում մի լեզվի բովանդակությունը փոխարինվում է մեկ այլ լեզվի բովանդակությամբ, այսինքն՝ թարգմանիչը վերստեղծում է ուղերձը իր սեփական լեզվով: Այդ պատճառով էլ թարգմանությունն արարում է:

¹⁴⁵ Левый, И., “Искусство перевода”, сост. С. Т. Золян, К. Ш. Абрамян, Лингвистические аспекты теории перевода, Хрестоматия, Ереван, Лингва, 2007, . 194-206

Համեմատելով թարգմանությունը արվեստի հետ՝ Լեվին նույնպես հանգում է դրա գեղագիտական արժեքի գաղափարին: Նա գտնում է, որ վերարտադրող այս գործունեությունը ուսումնասիրող գիտության զարգացման մեջ կարևոր նշանակություն ունեն երկու սահմանված կարգեր՝ վերարտադրության սահմանված կարգը (ընագրին հավատարմության չափանիշները և այլն) և գեղագիտական կողմը (ինչդուռայան գեղեցկության չափանիշը): Եվ ահա նորից հանգում ենք ձևի և բովանդակության փոխհարաբերությանը: Այստեղ գործ ունենք նույնական թարգմանության և ազատ թարգմանության հակադրության հետ: Լեվին առանձնացնում է երկու տեսակի թարգմանիչներին. նրանք, ովքեր առաջնորդվում են հստակ, իսկ ավելի կոնկրետ՝ բառացի թարգմանությամբ, ում հիմնական խնդիրը հավաստի տեղեկատվության փոխանցման ապահովումն է, և նրանք, ովքեր նախ և առաջ հոգ են տանում թարգմանության գեղագիտական արժեքի մասին: Թարգմանության պատմության մեջ կարելի է տեսնել, որ Վերածննդի դարաշրջանում հավատարմության ներքո հասկանում էին թարգմանության ճշգրտությունը, իսկ Ռոմանտիզմի դարաշրջանում՝ ազգա-մշակութային և անհատական առանձնահատկությունների պահպանումը և վերարտադրումը:

Ինչպես արդեն նշել ենք, թարգմանությունը զարգացման նոր փուլ թևակոխեց ոչ շատ վաղ անցյալում՝ մոտավորապես քսաներորդ դարի վերջին, երբ հիմք դրվեց դրա ավելի գիտակարգային մոտեցմանը, իսկ թարգմանության ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունն էլ վերջապես անվանվեց թարգմանաբանություն:

Գոյություն ունեն թարգմանության մի քանի ժամանակակից փիլիսոփայական տեսություններ, որոնցից առավել ուշագրավ են.

1. Ստայների Հերմենևտիկ շարժման տեսությունը,
2. Բենյամինի Թարգմանչի խնդրի՝ տեսությունը,
3. Դերիդայի ապակազմավորման (դեկոնստրուկցիայի) տեսությունը

Հերմենևտիկ շարժումը ծագել է մոտավորապես տասներորդ և տասնիններորդ դարերում՝ գերմանական ռոմանտիզմի շրջանում: Այս շարժման հիմքերը նկատվել են դեռևս Հումբոլդտի, Գյոթեի, Շլեյերմախերի մոտ: Ակնհայտ է, որ այս տեսությունն առավելապես զարգացել է դեռևս քսաներորդ դարում՝ Ստայների կողմից:

Ստայների «After Babel» ստեղծագործությունը թարգմանության մեջ հերմենևտիկայի գաղափարի ժամանակակից տեսության հիմնաքարն է: Ստայները ձևակերպում է հերմենևտիկ մոտեցումը՝ որպես բանավոր կամ գրավոր խոսքը «հասկանալու» գաղափարի ուսումնասիրությունը և հասկացողության այդ գործընթացն ախտորոշելու փորձը: Ստայների ուսումնասիրության հիմնական

առարկան թարգմանչի մտածողության հոգեբանական և մտավոր գործունեությունն է: Թարգմանության հերմենևտիկայի՝ որպես «իմաստի դուրս բերման և պատշաճ փոխադրման գործողություն» Ստայների բնորոշումը հիմնված է թարգմանության՝ ոչ թե որպես գիտություն, այլ՝ որպես արվեստ ընկալման վրա: Ստայները գտնում է, որ իրական ընկալումը և թարգմանությունը տեղի են ունենում այն կետում, երբ լեզուները միախառնվում են: Ստայների կարծիքով՝ որքան ավելի մոտ են երկու լեզուներն ու մշակույթներն, այնքան ավելի բարձր է լարվածությունը և ավելի հրաշալի է ստացվում թարգմանությունը:¹⁴⁶

Վոլթեր Բենյամինը (1892-1940), մյուս կողմից, անդրադառնում է թարգմանչի հիմնական խնդրին: Բենյամինի ուսումնասիրության և քննադատության հիմնական առարկաներն են լեզուն և լեզվի փիլիսոփայությունը: Բենյամինը ժխտում էր լեզվի ժամանակակից ռացիոնալիստական ընկալումը և լեզուն դիտարկում էր որպես կախարդական երևույթ, իսկ դրա հիմնական առաքելությունը համարում էր հոգևոր բովանդակության բացահայտումը:¹⁴⁷

Ըստ Բենյամինի՝ թարգմանության հիմնական խնդիրն է՝ արտահայտել լեզուների միջև կենտրոնական փոխադարձ կապը: Այն բացահայտում է ներքին փոխհարաբերություններ, որոնք թեև գոյություն ունեն, սակայն թաքնված են և կարող են բացահայտվել միայն թարգմանության արդյունքում: Թարգմանությունը բացահայտում է լեզուների միջև փոխհարաբերությունները՝ ոչ թե փորձելով նույնանալ բնագրի հետ, այլ ստեղծելով ներդաշնակություն և հարաբերելով երկու տարբեր լեզուներ: Այս ստեղծագործական եղանակով թարգմանիչը ոչ միայն նպաստում է սեփական լեզվի զարգացմանը, այլ նաև նպատակ է հետապնդում՝ հասնել «մաքուր» և «բարձր» լեզվի: Իսկ այս «մաքուր լեզուն» ձևավորվում է թարգմանության և բնագրի համատեղման արդյունքում:

Թարգմանության փիլիսոփայական ժամանակակից տեսությունների շարքում կարևորվում է նաև Դերիդայի ապակազմավորման (դեկոնստրուկցիայի) տեսությամբ: Ֆրանսիացի փիլիսոփա Ժակ Դերիդան զարգացրել է ապակազմավորման տեսությունը՝ թարգմանության հետ առնչվող իր մի շարք գրվածքների արդյունքում: Նրա համար չափազանց կարևոր էր տեքստի վերլուծությունը, որը հնարավոր էր դառնում բուն թարգմանության միջոցով: Դերիդան ասում է. «Եթե թարգմանիչը չի վերականգնում և չի արտագրում

¹⁴⁶ Munday, J., “Introducing Translation Studies”, 3rd edition, Routledge, New York, 2012, p. 243-250

¹⁴⁷ Translation, Philosophy and the Search for Truth

http://www.academia.edu/2528079/Translation_Philosophy_and_the_Search_for_Truth

բնագիրը, ապա դա այն պատճառով է, որ բնագիրը շարունակում է ապրել և ինքնուրույնաբար փոխակերպվել»:¹⁴⁸

Թարգմանության փիլիսոփայության հնագույն տեսություններից ընդհուպ մինչև ժամանակակից տեսությունների ուսումնասիրության սույն փորձը թույլ է տալիս եզրակացնել, որ տարբեր ժամանակաշրջաններում թարգմանության տեսաբանները մտահոգված են եղել գրեթե միևնույն թարգմանաբանական խնդիրներով և հաճախ առաջադրել են բավականին նման տեսություններ: Ինչպես տեսնում ենք՝ դեռևս հնագույն շրջանում գերիշխում էր այն գաղափարը, որ թարգմանությունը լոկ բառերի փոխարինում չէ այլ լեզվի բառերով, այլև՝ ավելի վեհ գործընթաց, որը թույլ է տալիս մի լեզվից մյուսը փոխանցել մտածողությունն ու դրա արդյունքը՝ միտքը: Բառերը միայն անոթներ են, որոնք կրում են մարդկային գաղափարներն ու մտածողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Friedrich, H., “On the Art of Translation”, in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992
2. Goethe, J. W., “Translations” in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992
3. Humboldt, W., “Translation of Agamemnon”, in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992
4. Jakobson, R., “On Linguistic Aspects of Translation”, in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992
5. Munday, J., “Introducing Translation Studies”, 3rd edition, Routledge, New York, 2012

¹⁴⁸Translation, Philosophy and the Search for Truth

http://www.academia.edu/2528079/Translation_Philosophy_and_the_Search_for_Truth

6. Nietzsche, F., "On the Problem of Translation", in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992
7. Schleiermacher, F., "On the Different Methods of Translating", in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992
8. Schopenhauer, A., "On Language and Words", in R. Schulte, J. Biguenet (ed.), *Theories of Translation: An Anthology of Essays from Dryden to Derrida*, University of Chicago Press, 1992
9. Saussure, F., "Course in General linguistics", available online at [<http://home.wlu.edu/~levys/courses/anth252f2006/saussure.pdf>]
10. Translation, Philosophy and the Search for Truth, available online at [http://www.academia.edu/2528079/Translation_Philosophy_and_the_Search_for_Truth]
11. What is Translational Equivalence?, available online at [<http://www01.sil.org/linguistics/glossaryoflinguisticterms/WhatIsTranslationalEquivalence.htm>]

КРИСТИНЕ СОГИКЯН, АННА ШАХБАЗЯН - ФИЛОСОФСКИЕ АСПЕКТЫ ТЕОРИИ ПЕРЕВОДА

Данная статья рассматривает теорию перевода с точки зрения ее междисциплинарных связей, в частности, ее взаимосвязь с философией. В ней представлены три основных периода развития философии перевода, в которых, с философской точки зрения, были выдвинуты основные проблемы теории перевода, а именно диалектика формы и содержания, проблема эквивалентности, передаваемость культурных ценностей, сохранение тождества автора и т.д. В статье рассматриваются основные теории таких видных представителей философской науки, как Ф. Ницше, В. Гумбольдт, А. Шопенгауэр, И. В. Гете и т.д.

KRISTINE SOGHIKYAN, ANNA SHAHBAZYAN - PHILOSOPHICAL ASPECTS OF TRANSLATION THEORY

The present article discusses the theory of translation from the point of view of its interdisciplinary relations, in particular, its correlation with the philosophical science. It focuses on the three main periods of the development of translation philosophy, in which the main issues of the theory of translation, namely the relation of form and content, the problem of equivalence, transferability of cultural values and the preservation of the author's identity were put forward from the philosophical point of view. Throughout the article, we discuss the main approaches of such prominent representatives of the philosophical science, as F. Nietzsche, V. Humboldt, A. Schopenhauer, J. W. Goethe, etc.

**ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԽՆԴԻՐ**

**ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈՂԻԿՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ԳԻՇՅԱՆ**

Հիմնաբառեր՝ թարգմանության տեսություն, համարժեքություն, աղբյուր տեքստ, թիրախ տեքստ

Թարգմանության տեսության մեջ կենտրոնական դիրք է զբաղեցնում բավականին հակասական համարժեքության հասկացությունը, որը, սովորաբար, դիտարկվում է որպես թարգմանություն կատարելու համար հիմնական պայման: Չնայած համարժեքության մասին գոյություն ունեցող տարածայնություններին՝ դեռևս չկա մեկ ընդհանուր կարծիք, թե ինչպիսի թարգմանվածքը կարելի է համարել բնագրին համարժեք թարգմանություն: Հետևաբար, սույն հոդվածի նպատակն է անդրադառնալ համարժեքության հասկացության շուրջ տեսության զարգացման ուղուն անտիկ ժամանակաշրջանից մինչև մեր օրերը՝ համառոտ պատմական ակնարկի ձևաչափով:

Թեև լեզուների բազմազանությամբ պայմանավորված՝ թարգմանական պրակտիկան դարերի պատմություն ունի, թարգմանական ուսումնասիրությունները համակարգվել և գիտակարգի են վերածվել միայն 1960-ականներից ի վեր՝ միավորվելով «Թարգմանության տեսություն» անվան տակ, որն առաջարկվել է Ջ. Հոլմզի կողմից:

Թարգմանության տեսության խնդիրներին առաջիններից անդրադարձել է հույն պատմիչ Հերոդոտոսը դեռևս մ.թ.ա. հինգերորդ դարում՝ առաջնային համարելով միջմշակութային հաղորդակցությունը և տարբեր լեզուներով խոսող մարդկանց մտքերի փոխանակումը: Սակայն Հերոդոտոսի՝ թարգմանիչների մասին նկարագրությունները չընդգրկվեցին թարգմանության տեսության մեջ, հավանաբար այն պատճառով, որ նա ցուցումներ չէր տալիս այն մասին, թե ինչպես է պետք թարգմանել:

Արևմտյան մտածողության մեջ թարգմանության տեսության հիմք համարվում են Ցիցերոնի¹⁴⁹ ակնարկները թարգմանչի հոռոտրական

¹⁴⁹ Douglas Robinson, ed. 2002. Translation Theory From Herodotus to Nietzsche. Manchester: St. Jerome

կարողությունների բարելավման վերաբերյալ, որը ըստ Հիերոնիմոսի հնարավոր է միայն իմաստային թարգմանության դեպքում: Իմաստային թարգմանությունը (Sense-for-sense translation), հակադրվելով Հորացիոսի առաջարկած բառ առ բառ թարգմանությանը (word-for-word translation), մատնանշում է բովանդակության կարևորությունը՝ թարգմանելով ամբողջական նախադասության իմաստը, մինչ բառ առ բառ թարգմանության դեպքում փոխանցվում է նախադասության յուրաքանչյուր բառային միավորի իմաստը: Թե՛ իմաստային, թե՛ բառ առ բառ թարգմանությունները համարվում են համարժեքության խնդրի նկատմամբ դրսևորվող կարևորագույն մոտեցումներ:

Դեռևս անտիկ ժամանակաշրջանում համարժեքության նկատմամբ մոտեցումները պայմանավորված էին բառ առ բառ և իմաստային թարգմանությամբ: 4-րդ դարի թարգմանիչ, Աստվածաշնչի պաշտոնական թարգմանիչ Ս. Ջերոմը¹⁵⁰ գտնում էր, որ բառացի թարգմանությունը չի կարող փոխանցել բնագիր տեքստի բովանդակությունը, և, որ թարգմանության գործընթացում հարկ է ձգտել թարգմանել իմաստը, ոչ թե առանձին բառերը:

Ինչպես և Ս. Ջերոմը, 6-րդ դարում Գրիգոր I-ին Պապն¹⁵¹ առաջնային էր համարում իմաստային թարգմանությունը, քանի որ կարծում էր, որ նույնիսկ բառացի փոխադրության դեպքում իմաստային ազդեցությունը չի պահպանվում:

Միջնադարում արդեն առաջնային էր համարվում ոչ այնքան իմաստային և բառ առ բառ թարգմանության տարբերակներից մեկի ընտրությունը, որքան թարգմանության համարժեքության պահպանման եղանակներ գտնելը: 15-րդ դարի իտալացի հումանիստ, թարգմանիչ Լ. Բրունին¹⁵² գտնում էր, որ թարգմանության էությունը աղբյուր տեքստը թիրախ տեքստ ճշգրիտ փոխանցելու մեջ է: Սակայն աղբյուր տեքստի թիրախ տեքստ ճշգրիտ փոխանցումն անհնար է, առանց երկու լեզուներին հավասարապես տիրապետելու: Թարգմանվածքում թարգմանիչը պետք է պահպանի ոչ միայն բնագրի բովանդակությունը, այլև ոճական առանձնահատկություններն ու հնարները, ինչը ենթադրում է աղբյուր և թիրախ լեզուների նրբություններին կատարյալ տիրապետում:

¹⁵⁰ Jerome, 1958. "On the Best Side of Translation". In "Satirical Letters of St. Jerome", Chicago

¹⁵¹ Greagory the Great, 2002, "Giving the Sense", "Mangling the Sense" in D. Robinson "Western Translation Theory", Manchester

¹⁵² Bruni, L., 1987. "On the Correct Way to Translation". In "The Humanism of Leonardo Bruni: Selected Texts", Binghampton, N. Y.

17-րդ դարի հայտնի բանաստեղծ, թարգմանիչ, դրամատուրգ և քննադատ Ջոն Դրայդենն¹⁵³ այն համոզմունքն ուներ, որ համարժեքության հասնելու նպատակով թարգմանիչը չպետք է խեղաթյուրի նյութը, քանի որ յուրաքանչյուր լեզու ունի իրեն բնորոշ լեզվական առանձնահատկություններ, և այն, ինչ իմաստալից ու ներդաշնակ է հնչում մեկ լեզվում, կարող է անիմաստ հնչել մեկ այլ լեզվում: Համարժեքության հասնելու համար թարգմանիչն ազատ է բառերի ընտրության հարցում, քանի դեռ հաջողվում է պահպանել իմաստը:

Ջ. Դրայդենն առաջ քաշեց թարգմանության երեք տեսակները՝

1. Բառացի (metaphrase). հեղինակը/ թարգմանիչը թարգմանում է բառ առ բառ, տող առ տող:
2. Վերարտադրություն (paraphrase). հեղինակը/ թարգմանիչը առանցքային է համարում իմաստի պահպանումը:
3. Ընդօրինակում (imitation). հեղինակը/ թարգմանիչը ազատ է շեղվել ոչ միայն ճշգրիտ բառերի ընտրությունից, այլ նաև՝ իմաստից:

18-րդ դարում առաջ եկավ հավատարիմ թարգմանության գաղափարը, որը ենթադրում էր ձևի և բովանդակության հնարավորինս ճշգրիտ փոխանցում: Գերմանացի դիվանագետ, փիլիսոփա, լեզվաբան Վ. Հումբոլդտը¹⁵⁴ գտնում էր, որ ինչպես յուրաքանչյուր լեզու յուրահատուկ է և ունի իր սեփական ներքին լեզվական առանձնահատկություններն, այնպես էլ յուրաքանչյուր բառ յուրահատուկ է և չունի համարժեք ոչ մի այլ լեզվում: Համարժեքության հարցում Վ. Հումբոլդտն այն կարծիքն ուներ, որ չպետք է հետևել պարզ հավատարմությանը, քանի որ, որքան հավատարիմ է թարգմանությունն, այնքան մեծանում է բնագրից իմաստային շեղումներ թույլ տալու հավանականությունը:

«Պարզ հավատարմության» դեպքում, փորձելով փոխանցել աղբյուր տեքստի լեզվական միավորների ճշգրիտ իմաստը և պահպանել շարահյուսական առանձնահատկությունները թիրախ տեքստում, թարգմանիչը երբեմն շեղվում է բուն իմաստից, քանի որ շեշտը դնում է ոչ այնքան իմաստի պահպանման, որքան առանձին բառերի ճշգրիտ թարգմանության վրա: Շատ հաճախ նման դեպքեր կարելի է հանդիպել փոխաբերությունների, դարձվածային արտահայտությունների հավատարիմ թարգմանության դեպքում:

Ավելի ուշ՝ 19-րդ դարում, թարգմանիչները սկսեցին կարևորել ոչ միայն տեքստերի հավատարիմ փոխադրումը, այլ այդ տեքստերի ազդեցությունը ընթերցողի վրա: 19-րդ դարի անգլիացի բանաստեղծ, գրաքննադատ Մ.

¹⁵³ Dryden, J. 1680. "Preface to Ovid's Epistles". In Steiner, T.

¹⁵⁴ Humboldt, Wilhem von, 1816. "The More Faithful, The More Divergent.. "From Einleitung"" Leipzig

Առնուիլը¹⁵⁵ գտնում էր, որ թարգմանությունը պետք է ընթերցողի մոտ բնագիր տեքստի պատրանք ստեղծի, իսկ թարգմանչի առաջնային պարտականությունը հավատարմությունն է: Միաժամանակ նա համարում էր, որ անիմաստ է խոսել բնագիր և թիրախ լեզվի տեքստերի հավասար ազդեցության մասին, քանի որ, որքան էլ պահպանվի համարժեքությունը, բնագիր և թիրախ տեքստերը, ինչպես նաև դրանց ընթերցողները տարանջատվում են ժամանակի և տարածության մեջ, ինչն էլ գրեթե անհնար է դարձնում թիրախ տեքստի համարժեք ներգործությունը ընթերցողի վրա:

Շատ դեպքերում թարգմանիչը ստանձնում է հեղինակի դերը և, լինելով տվյալ դարաշրջանի կրողը, փորձում է բնագիր տեքստի ազդեցությունը թողնել տվյալ ժամանակաշրջանի ընթերցողի վրա: Որքան էլ թարգմանիչն աշխատի բնագիր տեքստի պատրանք ստեղծել, նրա ջանքերը արդարացված կլինեն հիմնականում իրեն ծանոթ տարածության մեջ և իր ժամանակաշրջանում:

Համարժեքության խնդրին անդրադարձել են նաև 20-րդ դարի թարգմանիչներ Պ. Վինայն ու Ժ. Դարբելեն¹⁵⁶, որոնք առաջնայնորեն հետաքրքրված էին մշակույթով պայմանավորված լեզվամտածողությամբ: Ըստ Պ. Վինայի ու Ժ. Դարբելենի՝ գոյություն ունեն թարգմանության երկու հիմնական մեթոդներ՝

- ուղիղ կամ բառացի (direct or literal)՝ փոխառություն (borrowing), պատճենում (calque), բառացի թարգմանություն (literal translation)
- անուղղակի կամ մոտավոր (indirect or oblique)՝ դրափոխություն (transposition), տատանում (modulation), շարակարգի ընդհանուր փոփոխություն (total syntagmatic change), հարմարեցումը (adaptation):

Բոլոր այս թարգմանական ընթացակարգերը կարելի է կիրառել արտահայտության երեք մակարդակներում՝ բառային, շարահյուսական և հաղորդակցական:

Հիմնվելով լեզվի համակարգային բնույթի վրա՝ 20-րդ դարի լեզվաբան, գրականագետ Ռ. Յակոբսոնը¹⁵⁷ առանձնացրեց թարգմանության իր երեք տեսակները՝ ներլեզվական (intralingual), որտեղ բառային նշանները թարգմանվում են միևնույն լեզվին պատկանող այլ բառային նշանների միջոցով,

¹⁵⁵ Arnold, M., 2002. "The Translator's Tribunal" in D. Robinson "Western Translation Theory", Manchester

¹⁵⁶ Vinay, J. P. and Darbelnet, J., 1958/1969. "Stylistique comparée du Français et de l'anglais". Paris: Didier

¹⁵⁷ Jakobson, R., 1969. "Linguistics And Poetics". In T. Shebeok (ed.) "Style in Language". Cambridge, Massachusetts: MIT Press

միջլեզվական (interlingual), որտեղ բառային նշանները թարգմանվում են մեկ այլ լեզվի միջոցով, և միջնշանային (intersemiotic), որտեղ բառային նշանները թարգմանվում են ոչ բառային նշանների միջոցով:

Ռ. Յակոբսոնի այս մոտեցումը դիտարկում է թարգմանությունը նախ և առաջ որպես նշանային համակարգի տարր, որտեղ թարգմանիչը նախ պետք է ապակոդավորի աղբյուր լեզվի տեքստը և ապա փոխանցի համարժեք հաղորդագրությունը թիրախ լեզու:

Թարգմանության տեսության կարևորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Յուլիան Նայդան¹⁵⁸ առաջինն էր, որ լեզվաբանական գիտակարգային ուսումնասիրությունների հիման վրա շրջանակավորեց թարգմանության տեսությանն առնչվող, նախկինում հատվածական դիտարկումները: Հիմնվելով Ն. Խոմսկու¹⁵⁹ սերող քերականության մոդելի վրա՝ Յ. Նայդան դիտարկում է թարգմանությունը նաև իմաստաբանական և գործաբանական առումներով: Կառուցվածքային հարաբերությունները, նկարագրված Ն. Խոմսկու մոդելում, համարվում են մարդկային լեզվի համընդհանուր հատկանիշները: Նման կառուցվածքներից են միջուկային (kernel) նախադասությունները, որոնցից զանազան փոխակերպումներով (տեղաշրջում, հավելում և բացառում) ստացվում են մյուս կառույցները: Ն. Խոմսկու մոդելում հետագայում ուշադրության կենտրոնում է հայտնվում իմաստային բաղադրիչը, և միջուկային կառույցների փոխարեն՝ առաջ է քաշվում խորքային և մակերեսային կառուցվածքների գաղափարը: Խորքային կառուցվածքը ընդգծում է նախադասության իմաստը, իսկ մակերեսայինը նրան տալիս է հնչյունական տեսք:

Ըստ Յ. Նայդայի՝ Ն. Խոմսկու մոդելը թարգմանչին զինում է աղբյուր տեքստը ապակոդավորելու մեթոդով և թիրախ տեքստը կոդավորելու գործընթացներով: Ինչ վերաբերում է առանձին բառերի իմաստներին՝ Յ. Նայդան դիտարկում է դրանք և՛ իմաստաբանական, և՛ գործաբանական տեսանկյուններից՝ առաջարկելով համարժեքության երկու տեսակ՝ ձևական/ֆորմալ (formal) և դինամիկ/ֆունկցիոնալ (dynamic):

Քանի որ բառերը իրենց իմաստները ձեռք են բերում համատեքստից, ապա դրանք կարող են փոխվել՝ տվյալ մշակույթի առանձնահատկություններից ելնելով:

¹⁵⁸ Nida, E. A., 1976. "A Framework for the Analysis and Evaluation of Theories of Translation". In R.W. Brislin. (ed)

¹⁵⁹ Chomsky, N. 1957. Syntactic Structure, Gravenhage: Mouton. – (1965) Aspects of the Theory of Syntax, Cambridge, MA: MIT Press

Այս տեսությունն առաջնային է համարում տեքստի հաղորդագրությունը, որը պետք է լինի պարզ և հասկանալի թիրախ տեքստում: Հաղորդագրության իմաստային արժեքի պահպանումը հնարավոր է, երբ թարգմանիչը փոխանցում է բովանդակությունը՝ չառանձնացնելով այն համատեքստից և մշակույթից:

Ձևական/ֆորմալ համարժեքությունը դիտարկում է տեքստի և՛ ձևը, և՛ բովանդակությունը: Ֆորմալ համարժեքությունը ենթադրում է, որ պետք է լինի սերտ նմանություն բնագրի և թարգմանվածքի միջև: Դինամիկ/ֆունկցիոնալ համարժեքությունը դիտարկվում է որպես համարժեքության ազդեցության սկիզբ: Դինամիկ համարժեքությունը փոխանցում է բնագիր տեքստի բովանդակությունը, միտքը, իսկ ֆորմալ համարժեքությունը՝ տեքստը բառ առ բառ:

Թարգմանության տեսությունը, որպես լեզվաբանական գիտակարգ դիտարկելով, Յ. Նայդան, առանձնացնում է երեք խումբ՝ բանասիրական (philological), որտեղ ուսումնասիրության կենտրոնում գրական տեքստն է, լեզվաբանական (linguistic), երբ հիմքում աղբյուր լեզվի և թիրախ լեզվի կառուցվածքային տարբերություններն են և լեզվահասարակական (socio-linguistic)՝ հաղորդակցման գործընթացի դեպքում:

Կարող ենք եզրակացնել, որ թիրախ լեզվում համարժեքության հասնելու համար տեքստը պետք է կառուցվածքային, իմաստաբանական վերլուծության ենթարկվի, փոխանցվի թիրախ լեզու՝ պահպանելով հաղորդագրության իմաստը և արտահայտի այն երանգները, որոնք ընդունելի են ինչպես աղբյուր լեզվում, այնպես էլ թիրախ լեզվում: Թիրախ լեզվի տեքստը պետք է լինի քերականորեն ճշգրիտ և իմաստային տեսանկյունից՝ վստահելի:

Զարգացնելով Յ. Նայդայի կողմից առաջարկած ժամանակակից քննարկումները համարժեքության խնդրի շուրջ՝ Վ. Քոլլերը¹⁶⁰ տարբերակում է համարժեքության հինգ տեսակ՝ հիմնանշանակային (*denotative*) համարժեքություն, երբ բնագիրն ու թարգմանվածքն ունեն միևնույն բառը, որը փոխանցում է միևնույն լեզվական միավորը: Հարանշանակային (*connotative*) համարժեքություն, երբեմն նաև ոճական համարժեքություն, որը ենթադրում է մոտ հոմանիշների բառային ընտրություն: Տեքստի նորմատիվ (*text-normative*) համարժեքությունը վերաբերում է տեքստի տեսակներին, դրանց վերլուծությանն ու նկարագրությանը: Գործաբանական (*pragmatic*) համարժեքություն, երբ թարգմանվածքը ընթերցողի վրա թողնում է այն տպավորությունը, որը թողնում է բնագիրը: Ֆորմալ/զեղազգիտական (*formal/aesthetic*) համարժեքության հիմքում

¹⁶⁰ Koller, W. 1979. Einführung in die Übersetzungswissenschaft. Heidelberg: Quelle and Meyer.

ծնն ու տեքստի գեղագիտական առանձնահատկությունն է (բառախաղերը, աղբյուր տեքստի ոճական առանձնահատկությունները):

Վերոնշյալ տեսակետը ենթադրում է, որ աղբյուր տեքստի և թիրախ տեքստի միջև համարժեքություն հնարավոր է, եթե թիրախ տեքստը հետևում է համապատասխան պայմաններին, մասնավորապես՝ բովանդակությանը, ձևին, ոճին, գործառույթին ու կիրառությանը:

Համարժեքության կարևորությունն ընդգծել է նաև պրոֆեսոր Ջ. Քեթֆորդը¹⁶¹, որի թարգմանության համարժեքության նկատմամբ ունեցած մոտեցումը տարբերվում է Յ. Նայդայի մոտեցումից, քանզի այն լեզվական է և հիմնված է գործնական աշխատանքի վրա: Ըստ նրա՝ թարգմանությունը աղբյուր լեզվի տեքստի փոխարինումն է թիրախ լեզվի համարժեք տեքստով, որի առանցքային նպատակը թարգմանվող լեզվի մեջ համարժեք գտնելն է:

Այս տեսության մեջ հետաքրքրաշարժ է համարվում այն, որ Քեթֆորդը թարգմանության համարժեքությունը դիտարկում է իրավիճակի տեսանկյունից՝ թարգմանության գործընթացում առաջնային համարելով տեքստային, մշակութային և իրավիճակային գործոնները:

Համարժեքության խնդրին անդրադարձել է նաև Պ. Նյումարքը¹⁶², որը Յ. Նայդայի ֆորմալ և դինամիկ համարժեքությունները փոխարինում է թարգմանության երկբնույթ դասակարգմամբ՝ իմաստային (semantic) և հաղորդակցական (communicative): Հաղորդակցական թարգմանության նպատակը, ըստ Պ. Նյումարքի, ընթերցողի վրա բնագիր տեքստին մոտ ազդեցություն թողնելն է: Իմաստային թարգմանությունը, որի հիմքում ընկած է «հավատարմությունը», փորձում է վերարտադրել ճշգրիտ բովանդակային իմաստն այնքանով, որքանով թույլ են տալիս թիրախ լեզվի իմաստային և շարահյուսական կառույցները:

Կարևորելով գործառույթային և իմաստային համարժեքությունը՝ Ջ. Հաուզն¹⁶³ առաջարկում է թարգմանության մոդել, համաձայն որի՝ համարժեքության հասնելու համար աղբյուր տեքստն ու թիրախ տեքստը պետք է գործառույթային տեսանկյունից համապատասխանեն միմյանց: Թարգմանությունը որպես համարժեք կարելի է դիտարկել միայն, եթե այն համապատասխանում է աղբյուր լեզվի տեքստի գործառույթային բնույթին, և կիրառում է իրավիճակային համարժեք միջոցներ այդ գործառույթին հասնելու համար: Զուգադրելով անգլերենի և գերմաներենի խոսույթները՝ Հաուզն

¹⁶¹ Catford, J. C. 1965. *A Linguistic Theory of Translation*. Oxford University Press.

¹⁶² Newmark, P. 1988. *a./b. Approaches to Translation*. Hertfordshire: Prentice Hall.

¹⁶³ House, J. 1997. *Translation Quality Assessment: A Model Revisited*. Tübingen: Narr

առանձնացնում է թարգմանության երկու հիմնական տեսակ՝ բացահայտ (overt) և գաղտնի (covert): Բացահայտ թարգմանությունն ուղղված է թիրախ տեքստին, որտեղ լեզվական տարրերը «մատնում» են, որ դա թարգմանություն է, իսկ գաղտնի թարգմանությունն ուղղված է թիրախ տեքստին, որի գործառույթը համապատասխանում է աղբյուր տեքստի գործառույթին, իսկ թարգմանիչն իր հերթին արել է ամեն հնարավորը՝ մշակության տարբերությունները նվազագույնին հասցնելու համար:

Համարժեքության խնդիրը շարունակում է մնալ թարգմանության առանցքային խնդիրը նույնիսկ 21-րդ դարում: Ա. Փիմը¹⁶⁴ ևս անդրադառնում է համարժեքության խնդրին՝ նշելով, որ լեզուների միջև գոյություն չունի կատարյալ համարժեքություն: Ըստ Փիմի՝ համարժեքությունը «հավասար արժեքների» հարաբերությունն է աղբյուր տեքստի և թիրախ տեքստի հատվածների միջև և կարող է հաստատվել ցանկացած լեզվական մակարդակում՝ ձևից մինչև գործառույթ: Նա տարբերակում է բնական (natural) և ուղղորդված (directional) համարժեքություններ, նշելով, որ լեզուների միջև բնական համարժեքություն ստեղծվում է նախքան թարգմանություն կատարելը, իսկ ուղղորդված թարգմանությունը հնարավորություն է ընձեռում թարգմանչին՝ ընտրել թարգմանության մի քանի ռազմավարություններից մեկը կամ մի քանիսը, որոնք չեն պարտադրվում աղբյուր տեքստի կողմից: Թեև թարգմանության տարբեր եղանակներ կան, ուղղորդված համարժեքության ռազմավարությունը կարելի է դիտարկել որպես երկու հակառակ բևեռներ՝ մեկը հավատարիմ է աղբյուր տեքստին, մյուսը՝ թիրախ տեքստին: Ուղղորդված համարժեքությունը ենթադրում է որոշակի անհամաչափություն, քանի որ թարգմանության մի եղանակ ընտրելը և համարժեք ստեղծելը՝ չի ենթադրում միևնույն համարժեքի ստեղծումը՝ այլ եղանակի միջոցով:

Ամփոփելով, հարկ է նշել, որ դեռևս անտիկ ժամանակներից համարժեքության խնդիրը եղել և շարունակում է մնալ թարգմանության տեսության ամենահակասական խնդիրներից մեկը: Գրեթե բոլոր տեսաբաններն շեշտում են համարժեքության երկակիության բնույթը: Անտիկ ժամանակներում այդ երկակիությունն արտացոլվում էր իմաստային կամ բառացի թարգմանության միջոցով, այսինքն՝ ուշադրության կենտրոնում ձևի կամ իմաստի պահպանումն էր: Հետագայում առաջ է գալիս հավատարիմ թարգմանության հասկացությունը, որը ենթադրում է ոչ միայն ձևի և բովանդակության ճշգրիտ փոխադրում, այլև այնպիսի գործոնների հաշվառում, ինչպիսին է փոխադրվող տեքստի ներգործությունն ընթերցողի վրա: Արդիական են Ն. Խոմսկու սերող

¹⁶⁴ Pym, A., 2010. Exploring Translation Theories. London and New York: Routledge.

քերականության մոդելի հիման վրա Յ. Նայդայի թարգմանության իմաստային և գործաբանական դիտարկումները, խորքային կառույցների միջոցով հասանելի դարձող ձևական և դինամիկ համարժեքությունը: Կարևորվում են նաև համարժեքության դիտարկումները մշակութային և իրավիճակային տեսանկյունից: Վերոնշյալ տեսակետները վկայում են, որ համարժեքությունը կամայական է և հարաբերական, քանի որ դժվար է օբյեկտիվորեն որոշել այն սահմանը, երբ թիրախ տեքստը կարելի է համարել աղբյուր տեքստի համարժեք: Կարելի է եզրակացնել, որ միայն վերոհիշյալ տեսությունների համալիր պրիզմայի միջոցով է հնարավոր գնահատել թարգմանվածքի համարժեքության աստիճանը՝ միշտ մտքում պահելով համարժեքության հարաբերական բնույթը: Հետևաբար, համարժեքության մասին խոսելիս՝ նկատի ենք ունենում համարժեքության աստիճան, քանզի բացարձակ համարժեքությունն օբյեկտիվորեն անհասանելի է:

КРИСТИНЕ СОГИКЯН, НАРИНЕ ГИШЯН – ЭКВИВАЛЕНТНОСТЬ КАК ЦЕНТРАЛЬНАЯ ПРОБЛЕМА ПЕРЕВОДА

Данная статья посвящена изучению понятия эквивалентности, как центральной проблемы перевода. Учитывая неоднозначность понятия, теория эквивалентности рассматривается в хронологическом порядке, для точной диагностики динамики развития различных подходов к понятию эквивалентности. Краткий исторический обзор показал, что оценка степени эквивалентности перевода можно достичь через призму этих теорий, хотя трудно найти единый подход к этому понятию и достичь полной эквивалентности.

KRISTINE SOGHIKYAN, NARINE GISHYAN - EQUIVALENCE AS A CENTRAL PROBLEM IN TRANSLATION THEORY

This article aims to consider equivalence as a central issue in translation theory. Given its controversial character, equivalence is regarded from the chronological perspective to trace the dynamic development of various approaches to the notion of equivalence. The brief historical review revealed that the assessment of the degree of translation equivalence is possible through the complex prism of these theories, bearing in mind the relative nature of the notion.

**О СООТНОШЕНИИ РИТМИКО-СТРУКТУРНОЙ ОРГАНИЗАЦИИ И ЕЕ
ГРАММАТИЧЕСКОГО СОСТАВА В НАУЧНОМ ДИСКУРСЕ
(КОНТРАСТИВНЫЙ АНАЛИЗ)**

ЛУСИНЕ ВАНЯН

Ключевые слова: ритмическая структура, акцентная структура слов, грамматико-фонетический интерфейс, частотность распределения лингвистических единиц, сопоставительный анализ

Данная статья является результатом исследования типов РС в научном дискурсе с точки зрения их акцентной и слоговой структуры и соотношения этих фонетических единиц с морфологическими, которое предполагает как их качественное описание, так и количественный анализ. В связи с этим следует отметить известную зависимость места ударения английского слова от его морфологических характеристик, влияющее на акцентную структуру РС. Из акцентологических тенденций английского языка, выделяется локализация ударения на конечном слоге глаголов и прилагательных, в то время как для существительных характерна постановка ударения на начале структур. В армянском языке воздействие морфологии на ударение проявляется, например, посредством ритмического ударения на семантически важных префиксах [վերջնական, ներջնական]:

Учитывая текстовые особенности научного дискурса, а именно его упорядоченность, эксплицитность и логичность в изложении мысли, рассматриваемый стиль позволяет наиболее последовательно и точно выявить наряду с фонетическим наполнением рассматриваемых структур, их количественной дистрибуцией в тексте. Реальное основание количественного изучения языка нужно видеть в том, что частотность различных элементов языка в речевом потоке подчиняется, определенным статистическим закономерностям. Под РС в данной статье мы понимаем периодичность единства ударного и безударного элементов, которая задается ритмо-фонологическими схемами и их когнитивной предсказуемостью. Первичная роль РС при восприятии речи и механизмах запоминания относит ее к универсалиям, что в свою очередь позволяет сопоставить ритмическую организацию языков относящихся к различным ритмическим стереотипам [Потапова, 1986].

Анализ РС по частичному критерию охватил количественную дистрибуцию и среднюю слоговую длину каждой из основных частей речи РС, их частичную сочетаемость, а также локализацию ударения.

Анализ соотношения ритмико-структурной организации, а именно наиболее частотных РС и ее грамматического состава в научном дискурсе выявил определенные закономерности.

В английском языке существительные максимально представлены двусложными структурами с ударением на первом слоге, в меньшей степени — трехсложными с ударением на втором слоге, а также односложными структурами. Субстантивные структуры в армянском языке максимально представлены проклитическими трехсложными, в меньшей степени — двусложными и четырехсложными структурами.


Глагольные структуры английского языка преимущественно представлены двусложными РС с ударением на втором слоге, трехсложными РС с ударением на втором и на третьем слогах. Целостные глагольные РС в армянском языке представлены двусложными, трехсложными и четырехсложными структурами с локализацией ударения на последнем, структуры со вспомогательным глаголом – на предпоследнем слоге. В сложных глаголах ударение отмечает последний слог первого номинального компонента структуры, как գլուխ գտի, փշիւն դնի:

Прилагательные максимально представлены двусложными и трехсложными РС с ударением на первом слоге. Как и глагольные, так и атрибутивные РС в армянском языке представлены трехсложными и четырехсложными структурами, в меньшей степени — двусложными и пятисложными структурами с финальным ударением.

По классу целостных РС, т.е. его слоговому составу, к зоне сходства относятся трехсложные и двусложные, к зоне различий – односложные в английском языке и четырехсложные в армянском. Таким образом, по акцентному критерию рассматриваемые языки обнаруживают определенные различия.

Что касается сложных структур, охватывающие более чем одну морфологическую единицу, межязыковые морфо-структурные различия более значительны.

Таблица 1



Как видно из таблицы 1

1. В английском языке сложные структуры, как например, *under scrutiny, by the credibility, of discourse, of the issue, throughout a text*, наиболее выражены сочетанием *предлог + существительное* и составляет 9-10%. Для английского характерны двусложные РС с ударением на втором слоге, четырехсложные с ударением на третьем слоге, как например, *of the discourse*, которое состоит из односложного *предлога+артикли+двусложное существительное* с ударением на первом слоге, а также трехсложные РС с ударением на втором слоге. В армянском тип *предлог+существительное* не выражен.
2. Сочетание *союз+существительное* в английском, составляет 4% и представлено проклитическими двусложными структурами, пятисложными и четырехсложными структурами с ударением на третьем слоге, как например в структурах *and Ann, that the concept, or disciplines*. В армянском данное сочетание, как например в структурах типа *և նրա արվեստը ցուցաբերում է*, представлено 2%, трехсложными, четырехсложными и семисложными проклитическими структурами.
3. *предлог+[артикли]+прилагательное* составляет 4%, как например в структурах *of consistent, in conceptual, of architectural* в английском выражен семисложными структурами с ударением на пятом,

- пятисложными структурами с ударением на третьем и четвертом, и четырехсложными на третьем слогах. Данный тип не характерен для армянского языка.
4. союз+прилагательное, как например в структурах *and the diachronic, and cognitive, as a word-alone, and noncontrived*, составляет 2.5%. Данный тип преимущественно выражен пятисложными структурами с ударением на третьем слоге, а также с ударением – на четвертом и пятом слогах. Сочетание "союз и прилагательное" в армянском представлен четырехсложными структурами с ударением на последнем слоге , как например в структурах *և դիախրոնիկ, և բերանաշար*, и составляет 1,2%.
 5. К частотным глагольным сочетаниям в английском относятся в основном трехсложные структуры проклитического типа *местоимение + глагол*, как например в структуре *we need, it contains* . Данные структуры составили 2% в научной прозе английского. В армянском глагол чаще сочетается с союзом, как например в структуре *և անհրաժեշտ է* [1%]. РС , содержащие наречия в английском не обладают высокой частотностью [1,5%] , и представлены типом 3/1 . В используемых структурах наречие часто сочетается с глаголом [4,5%]. В армянском языке наблюдается обратное соотношение: преобладают структуры 3/3¹⁶⁵ и 4/4, при этом простые структуры составляют 2,3%, сложные 1,7%. РС, включающие числительные в английском моносиллабичны, в армянском [3%] преимущественно выражены трехсложными или четырехсложными типами.
 6. Синтаксические особенности английского языка определили высокую встречаемость структуры *предлог+местоимение+существительное* [4/3] и составили 1% , как например в структуре *in that scope* и меньшую частотность типа *местоимение+существительное* [0.6%]. В армянском обоим типам соответствует сочетание *местоимение + существительное* как например в структурах *այն հանգամանքը, այն էլը* . данное сочетание встречается в трех-, четырех- и пятисложных структурах [3/3, 4/4, 5/5], и составляет [1.5%].
 7. 4% РС научного стиля английского языка составили комбинации двух служебных слов , как например в структурах *of any, by those, in which* , менее часто трех служебных слов, например *each of which*, в армянском - 2,5%, например *ընդամենը, հրեղիկ*. Что касается служебных слов,

¹⁶⁵ В статье используется цифровой способ обозначения РС, где числитель указывает на количество слогов, а знаменатель — на место ударения.

оформляющих автономную РС, то в этом случае наблюдается обратное соотношение: в армянском они более выражены, 1-4% РС образуют ударные местоимения, 3,5-6% РС образуют ударные предлоги и союзы, в отличие от английского [0.4% и 1.3% соответственно].

Сочетание двух существительных почти отсутствует в английском в отличие от армянского, в котором сочетание двух знаменательных частей в рамках одной РС более выражено. К ним относятся *прилагательные*, часто несущие логическое ударение + *существительное*, как например в структуре *տիրր Հակոբյանց, հայրնայնական*, [1,4%] и номинальная часть, выраженная *существительным/прилагательным + глагол*, например *գույզգույն ներկել, ավանդապահ է եղել* [1%]. Ударение, как правило, маркирует первый компонент сочетания. Возможно менее частотное объединение трех словоформ *глагол+местоимение+прилагательное*, как например *will have its own*, *глагол+местоимение+существительное*, как например *it is a part*, *союз+прилагательное+существительное*, как например *that our genes*, проклитика, *որի թեք ցիտերը*.

Таблица

Тип РС	Суц	Глагол	прил	Суц+клитики	прил+клитики		Суц	Глагол	прил	Суц+клитики	прил+клитики
1/1	0.6	-	0.1			X	5.8	1.2	0.5		
2/1	-	-	-			Xx	6.9	1.2	1.7		
3/1	-	-	-			Xxx	3.5	1.2	2.3		
4/1	-	-	-			Xxxx	1.2	0.5	1.2		
5/1									1.2		
6/1									0.5		
2/2	4.8	2.6	2.6		2.6	xX	2.3	3.5		3.5	
3/2	1.7	2.6	-	1.3	2.6	xXx	4.6	3.5	0.5	2.3	1.2
4/2	-	0.6	-		1.3	xXxx	2.3	0.5	1.2		
5/2						xXxxx		0.5	0.5		
3/3	9.0	4.5	6.5	2.6		xxX?		3,0		2,3	
4/3	1.0	1.3	-	2.6		xxXx	1.2	1,5		3,5	0,8
5/3	-	0.6	-			xxXxx	1.2	0.5	0.5	2.3	1.0
4/4	6.5	2.5	5.0	2.6	1.3			1.3			1.3
5/4	4.5	1.3	-	0.7	1.0		5.8	1.3			
5/5	5.0	1.3	-		0.7		6.9				1.3
6/6	2.6	-	-		0.7		3.5				
7/7				0.4							

**Соотношение РС и частей речи
в армянском /нглийском языках (в %)**

Таким образом, частотность РС [их морфологический состав] в потоке речи на материале английского и армянского языков подчиняется определенным статистическим законам. Различия в их распределении обусловлены морфологическими и акцентными особенностями исследуемых языков.

1. Различия РС, наиболее ярко проявляющиеся в комбинаторных структурах объясняется в первую очередь аналитическим способом

- образования грамматических форм английского языка в отличие от преимущественно флективно-аналитических форм армянского. Синтаксические особенности исследуемых языков обусловили отсутствие в армянском языке сочетаний местоимение+глагол, меньшую встречаемость типа союз + прилагательное / существительное, сочетания предлог + [местоимение+] существительное и сочетанием местоимение + существительное.
2. Вместе с морфо-синтаксическими признаками, к факторам обуславливающим конкретно-языковые признаки относится многосложность армянских РС, в результате чего наречия и числительные составляют отдельную РС, образование распространенных структур прилагательное+ существительное , существительное +существительное, и отсутствие типа наречие+глагол.
 3. Одной из отличительных особенностей армянского языка является слабое примыкание служебного слова к знаменательному, обусловленная ритмическими свойствами армянского языка, для которой характерна сильная динамика служебных слов. РС из служебных слова образуют 6-7% от всего массива РС армянского языка, 3-4% которых приходятся на местоимения, 1-3% - на союзы и предлоги.
 4. Различия ритмических структур английского и армянского языков объясняются особенностями ударения в рассматриваемых языках.. В английском целостные субстантивные и атрибутивные структуры коррелируют соответственно с начальным и срединным местом ударения, ударение в целостных отглагольных и смешанных структурах смещается к финальной части. В армянском ударение, как правило, закреплено за конечной частью структуры. Таким образом, согласно полученному экспериментальному свидетельству, РС академической прозы в английском языке выражены энклитическими и смешанными типами. [3/2, 2/1, 2/2, 1/1, 4/3 [50%]. Финальное фиксированое ударение армянского языка придает определенную устойчивость типам РС, 56% которых выражено типами 2/2, 3/3 и 4/4.
 5. Что касается классов РС, армянский тяготеет к большей полисиллабичности по сравнению с английским. Количество слогов, входящих в состав английских РС варьирует в пределах 1-6, в состав

армянских - 1-7 слогов. В английском языке большая слоговая длина коррелирует с центральным и конечным ударением, что свойственно сложным структурам, в частности сложным глагольным [4/3]. Полисиллабические структуры больше выражены структурами клитики +прилагательное, меньше - сложными субстантивными структурами английского языка.

6. Армянские структуры как целостного, так и смешанного типа на 1-2 слога превосходят английские структуры сходного морфологического состава, за исключением структуры союз+прилагательное, слоговой состав менее выражен в армянском по сравнению с английским. Ввиду фиксированного ударения в армянском и свободного ударения в английских зоны сходства по типом РС ограничены.

	Английский	Армянский
Существительное	45%	32%
Глагол	11%	9%
Прилагательное	10%	13%

Согласно полученным данным, анализ грамматического состава РС английской академической прозы позволяет констатировать, что в английском и в армянском языках доминируют целостные субстантивные РС, которые более выражены в английском [45%] чем в армянском [35%]. В английском языке второе место занимает глагол [11%], третье – прилагательное [10%]. В армянском языке наблюдается противоположное распределение: атрибутивные РС [13%] доминируют над отглагольными [9%].

Что касается смешанных РС в английском, то их основные типы – *клитик+существительное*, а также сложная структура *клитик+прилагательное* выражены в равных пропорциях [10% каждый]. В армянском языке I тип *клитики+прилагательные* встречаются в три раза меньше типа *клитики+номинативные структуры*.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

1. Златоустова Л.В., Потапова Р.К., Потапов В.В., Трунин-Донской В.Н., “Общая и прикладная фонетика”, Москва: УРСС,1997
2. Кривнова, О. Ф., Ритмизация и интонационное членение текста в процессе речи-мысли ”, диссертация на соискание ученой степени доктора филологических наук, 2007: 13-18
3. *Потапов В.В.* 2-й ed.: Потапов В.В. Динамика и статика речевого ритма: Сравнительное исследование на материале славянских и германских языков. Москва: УРСС, 2004: 257-265
4. Ռ. Թոխմախյան, «Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը», Երևան, 1988

LUSINE VANYAN - ON THE CORRELATION OF RHYTHMIC AND GRAMMATICAL STRUCTURE IN ACADEMIC DISCOURSE (A CONTRASTIVE STUDY)

The article reviews the grammatical-phonetic interface in terms of rhythmic filling of morphological categories and the frequency of their distribution in English and Armenian. English simple structures display a tendency to enclitic rhythm and monosyllabicity, this tendency is being weakened in complex structures while in Armenian both types tend to polysyllabicity and proclitic rhythm.

Simple nominal, attributive and verbal rhythmic structures prevail in both languages, as compared with complex ones. However, English is characterized by a wider use of nominal structures as compared with attributive and adverbial structures .

In Armenian nominal structures are also structures of high frequency but attributive structures are more frequent while verbal structures are less frequent than in English. Complex structures in both languages consist of two *form words*, and also of the structures *pronoun+noun*, *conjunction+noun/adjective*. Characteristic structures of English are

preposition+noun/ adjective, pronoun+verb, while typical Armenian structures are made up of *form words*, structures *adverb+verb*, *conjunction+verb* and *two notion words*.

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՆՅԱՆ - ՌԻԹՄԻԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ (ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Հոդվածում ներկայացված է անգլերենի խոսքի մասերի շեշտավանկային ձևավորումը և նրանց քանակական բաշխվածությունը հայերենի համադրությամբ: Ուսումնասիրվող լեզուներում գերակշռում են գոյականական կառույցները, որոնք գերազանցում են բայական և ածականական կառույցների հաճախականությունը: Անգլերենի գոյական և բայական կառույցները գերազանցում, սակայն ածականականը զիջում է հայերենի նույնատիպ կառույցների հաճախականությանը:

Երկու լեզուների համար ընդհանուր են երկու ծառայողական բառ, դերանուն+գոյական, շաղկապ+գոյական / ածական կառույցները, տարբերակիչ են՝ անգլերենի նախդիր+գոյական/ ածական, դերանուն + բայ և հայերենի ծառայողական բառ, մակբայ + բայ, շաղկապ+բայ, երկու իմաստային բայ կառույցները: Անգլերենին բնորոշ է սակավավանկ և էնկլիտիկ կառույցների նկատմամբ միտումը, որը նվազում է բարդ կառույցներում: Հայերենին հատուկ են բազմավանկ և վերջնավանկ ուղիղ կառույցները:

**ՀԱՆՐԱԼԵԶԿԱՐԱՆԱԿԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ. ԱՆԳԼԵՐԵՆԻ
ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ
ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ**

ԿԱՐԵՆ ՎԵԼՅԱՆ

Հիմնաբառեր՝ հանրաբարբառներ, հասարակական դասակարգային բարբառ, շարահյուսական առաձնահատկություններ, գենդերային խոսվածքներ, զուգամետություն, տարամետություն, շարահյուսական զուգամետումներ և տարամետումներ

Ներածություն

Ինչպես հայտնի է, հանրային բարբառների, կամ հանրաբարբառների (socio-lects), սահմանման և դասակարգման հիմքում ընկած են տարբեր հասարակական կատեգորիաներ, այն է. հասարակական-տնտեսական կարգավիճակը, սեռը (գենդերը), տարիքը, էթնիկական(ազգային) խումբը, աշխատանքի տեսակը: Նշվածներից առաջինը ենթադրում է լեզվակիրի տարբեր հասարակական խավերին պատկանելությունը, որը պարունակում է այնպիսի հասարակական կատեգորիաներ, ինչպիսիք են աշխատանքային պաշտոնը, ֆինանսական- տնտեսական վիճակը, կրթության մակարդակը: Բոլոր նշված արտալեզվական գործոնները իրենց ուղղակի արտացոլումն են գտնում անձի խոսքի մեջ: Ուստի այս տեսակի հանրային բարբառները կոչվում են հասարակական դասակարգային բարբառ (social-class dialect), կամ ինչպես երբեմն հայերենում են ասում, խոսվածք:

Տարիքային բարբառները՝ որպես հանրային բարբառների մի տարատեսակ, առանձնացվում են այն պարզ պատճառով, որ տարբեր տարիքի ներկայացուցիչներին հատուկ է, եթե ոչ ներհատուկ, գործածել տարբեր լեզվամիջոցներ՝ թե բառապաշարի, թե շարահյուսական մակարդակներում: Ինչպես նշում է ամերիկացի լեզվաբան Ջին Հերնդոնը, “...անհատների լեզուն տարբերվում է կյանքի տարբեր ժամանակահատվածներում” [Հերնդոն 1970:112]: Կարելի է ենթադրել, որ լեզվակիրները տիրապետում և գործածում են տարբեր տեսակի բառապաշար և շարահյուսական կառույցներ իրենց կյանքի տարբեր ժամանակահատվածներում: Մարդիկ կյանքի տարբեր ժամանակահատվածներում ականա հայտնվում և շփվում են տարբեր

հասարակական իրավիճակներում, ինչի արդյունքում նրանք ձեռք են բերում արտահայտման նոր տեսակի շարահյուսական միջոցներ:

Յուրաքանչյուր հանրությունում կարող են համագոյատևել տարբեր ազգային խմբեր կամ ազգային փոքրամասնություններ: Նման ազգային փոքրամասնությունների լեզուները կազմում են էթնիկական բարբառները: Այսպես, օրինակ՝ ազգային փոքրամասնության վառ օրինակ է ԱՄՆ-ի աֆրո-ամերիկյան էթնիկական բարբառը, որը ամերիկյան անգլերենի համակարգում կազմում է առանձին ենթահամակարգ [Փայլզ, Էլջիո 1993: 228]:

Ինչպես արդեն նշվել է, հանրային բարբառների շարքում տարբերակում են նաև գենդերային բարբառները: Այն գաղափարը, որ արական և իգական սեռի ներկայացուցիչների խոսքում նկատելի են զգալի տարամետումներ, գալիս է դեռ բանահյուսությունից: Վաղ հետազոտություններում շեշտադրվում էին գենդերային ընդհանրացված տարբերություններ: Մինչդեռ վերջին շրջանի հետազոտություններում ավելի մեծ տեղ են տալիս *իրավիճակի* և *համատեքստի* գործոններին, դրանով իսկ փորձելով ցույց տալ լեզվակիրների խոսքի իրավիճակային պայմանավորվածությունը [Մեսթրի, Սվոն, Դյումերթ, Լիփ 2009: 213]:

Գենդերի և լեզվի փոխհարաբերության վերաբերյալ բավականին ծավալուն գրականություն կա: Առ այսօր երկու տարբեր, բայց միևնույն ժամանակ իրար չհակասող կարծիք է առաջ քաշվել: Համաձայն մի տեսակետի, լեզվում գենդերային տարբերությունները արտացոլում են այն, թե ինչպես է գործում հասարակությունը: Համաձայն մյուս տեսակետի, լեզուն ծառայում է ոչ միայն որպես միջոց այդ հասարակությունը արտացոլելու, այլև պահպանելու համար [Օ Գրեյդի, Դոբրովոլսկի, ԱրոնՖ, 1997:517]: Իրոք, լեզուն արտացոլում է հասարակությունը և վերջինիս կառուցվածքը: Լեզուն իրավամբ համարվում է հասարակության հայելի, որն արտացոլում է հասարակական կարևոր տարբերություններ [Մեսթրի, Սվոն, Դյումերթ, Լիփ 2009:218]:

Գենդերի և լեզվի միջև փոխհարաբերությունների հիմնահարցը, ավելի կոնկրետ գենդերի և լեզվական ձևերի միջև փոխհարաբերությունների հարցը անբաժանելի է գենդերի և հասարակական շերտավորման միջև փոխհարաբերությունների հարցից: Դեռ Ուիլյամ Լաբովը Նյու Յորքում և Փիթեր Թրաշիլը Նորվիչում իրենց հետազոտություններում հայտնաբերել են, որ յուրաքանչյուր սոցիալական դասակարգային (խավային) խմբում և տարաբնույթ ոճական համատեքստում՝ ռեգիստրում իգական սեռի ներկայացուցիչները միտում ունեն գործածել ավելի հեղինակային՝ գրական կամ բարձր հանրալեզվական կարգավիճակ ունեցող արտահայտչամիջոցները, և այդ գենդերային տարբերությունները ցուցաբերում էին *վիճակագրական միտում*: Թրաշիլը այս

գենդերային տարամետումները մեկնաբանում է այն փաստով, որ 'կանայք գործածում են առավել հեղինակային արտահայտչաձևեր, քանի որ առավել լավ են գիտակցում կարգավիճակի գործոնը, ուստի առավել լավ են հասկանում լեզվի հասարակական կարգավիճակի կարևորությունը: Հաճախ դասակարգը (խավը) դիտում են որպես *հիմնական հասարակական բաժանում* (primary social division) և գենդերային տարածություններն ուսումնասիրվում են միևնույն սոցիալական դասակարգի սահմաններում [Թրաշիլ 2000]:

Ուստի միևնույն հասարակական դասակարգային բարբառը կարող է ունենալ որոշակի տարբերություններ՝ կախված հաղորդակցվողի սեռից, քանի որ, ինչպես ենթադրում են, թե՛ արական, թե՛ իգական սեռի ներկայացուցիչները լեզուն տարբեր կերպ են կիրառում, ինչը խոսում է այն փաստի մասին, որ սեռային տարբերությունները լեզվում պարզապես արտացոլում են հասարակության գործածությունը՝ [Օ Գրեյդի, Դոբրովոլսկի, Արոնսոն 1997: 517]:

Տեսական նախապայմաններ

Լեզվի և գենդերի միջև փոխհարաբերությունների խնդիրը, գենդերի արտացոլումը խոսքում վերջին տասնամյակներում բազմաթիվ հետազոտությունների խնդրո առարկա է դարձել: Ավելին՝ ընդհանուր լեզվաբանության մեջ կարծես թե ձևավորվում է նոր ուղղություն՝ *գենդերային լեզվաբանություն*, և որպես այդպիսին այն համարվում է միջառարկայական ուղղություն: Իրոք, լեզվի և գենդերի փոխհարաբերությունների հիմնահարցը կարևոր է, քանզի այն կնպաստի լեզվի առավել խորը հասկանալուն և ցույց կտա, թե ինչպես է այն գործում, և դրանով իսկ կնպաստի լեզվի հանրալեզվաբանական ուսումնասիրմանը:

Լեզվի և սեռի միջև փոխհարաբերությունների փորձապաշտ, այն է՝ էմպիրիկ հետազոտություններ սկսել են իրականացնել 20-րդ դարի 20-ական, 30-ական, 40-ական թվականներին: Սակայն նպատակաուղղված ուսումնասիրությունները այս ոլորտում սկսվեցին 20-րդ դարի 70-ականներից: Հիմնականում այս հիմնախնդրով զբաղվել և զբաղվում են ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Գերմանիայում: Հայաստանում այս հիմնախնդրով առ այսօր խորը չեն զբաղվել: Լեզվի և գենդերի միջև փոխհարաբերությունների հիմնախնդրին իր "Язык и гендер" (2008) մենագրության մեջ անդրադարձել է պրոֆեսոր Լ.Բրուտյանը, որը իր վերլուծություն է կատարում անգլերենի նյութի հիման վրա: Կարծում ենք, ժամանակն է սույն խնդրով զբաղվել նաև հայ լեզվաբաններին՝ ընդգրկելով հետազոտության մեջ նաև այերենի յուրահատկությունները:

Ավելին՝ լեզվի և գենդերի միջև փոխհարաբերությունների հիմնախնդիրը առավել մեծ կարևորություն է ստանում, հատկապես երբ զուգադրվում են

տարբեր լեզուների, տարբեր մշակույթներում լեզվի և գենդերի միջև փոխհարաբերությունները, առավել ևս, երբ խոսքը գնում է տարբեր քերականական կառուցվածք ունեցող լեզուների մասին, ինչպիսիք են անգլերենը և հայերենը: Նման հանրալեզվաբանական և միևնույն ժամանակ զուգադրական վերլուծությունը, կարծում ենք, հնարավորություն կընձեռի անցկացնել ոչ միայն միջմշակույթային լեզվական զուգահեռներ, տեսնել ազգային նմանություններ և տարբերություններ, այլ նաև ինչ-որ տեղ արտացոլել տարբեր լեզուների կրողների մտածելակերպը, քանզի լեզուն համարվում է մշակույթ, իսկ լեզվակիրները այդ մշակույթի կրողներ:

Հեղազոտության նպատակները.

Տուրք տալով բոլոր այն հանրալեզվաբաններին, որոնք անդրադարձել են լեզվի և գենդերի փոխհարաբերությունների հիմնախնդրին, նշենք, սակայն, որ բոլոր աշխատանքներում, ավանդաբար, վերլուծության նյութ են դառնում գենդերային լեզվի զուտ **բառային** և **հնչյունական** առանձնահատկությունները: Առ այսօր պատշաճ ուշադրության չեն արժանացել գենդերային խոսվածքների շարահյուսական առանձնահատկությունները, մինչդեռ վերջիններս կարող են նույնպես որոշակի լույս սփռել լեզվի հասարակական գործառության վրա: Սույն հետազոտության հիմնական նպատակն է փաստական նյութի հիման վրա ուսումնասիրել անգլախոս, մասնավորապես ամերիկացի և անգլիացի, և հայ իգական և արական սեռի ներկայացուցիչների բանավոր խոսույթի շարահյուսական առանձնահատկությունները, փորձելով ի հայտ բերել գենդերի շարահյուսական զուգամետումները և տարամետումները: Այս հիմնական նպատակի շրջանակներում փորձել ենք լուծել մեր առջև դրած մի շարք խնդիրներ.

ա. ուսումնասիրել և զուգադրել անգլախոս լեզվակիրների որոշակի հանրային զանգվածի իգական և արական սեռի ներկայացուցիչների բանավոր խոսույթի շարահյուսական առանձնահատկությունները,

բ. ուսումնասիրել և զուգադրել հայ լեզվակիրների որոշակի հանրային զանգվածի իգական և արական սեռի ներկայացուցիչների բանավոր խոսույթի շարահյուսական առանձնահատկությունները,

գ. զուգադրել անգլախոս և հայ լեզվակիրների որոշակի հանրային զանգվածի իգական և արական սեռի ներկայացուցիչների բանավոր խոսույթի շարահյուսական առանձնահատկությունները, մասնավորապես շարահյուսական տարամետումները:

Հետազոտության մեթոդները

Ցանկացած հանրալեզվաբանական հետազոտության սկզբնական փուլում առաջ է գալիս է լեզվակիր-ինֆորմանտների ընտրության խնդիրը՝ այն

լեզվակիրների, որոնց լեզվական պահվածքի հիման վրա կարելի է կառուցել հիպոթեզներ և այնուհետև ստուգել դրանք: Սույն վերլուծության համար լեզվակիր-ինֆորմանտ են հանդիսացել անգլիացի, ամերիկացի և հայ ուսանողները, մասնավորապես և մագիստրատուրայի և բակալվրատուրայի վերջին կուրսի ուսանողները: Փաստական նյութի համար կիրառել ենք հանրալեզվաբանության մեջ լայն տարածում գտած բանավոր *հարցազրույցների* մեթոդը: Այս նպատակով ձայնագրել ենք 16 ամերիկացի և բրիտանացի և 28 հայ ուսանողների հարցազրույցները: Ինֆորմանտները տարբեր բուհերի տարբեր ֆակուլտետների ուսանողներ են: Ավելին՝ լեզվակիրների հանրային բազմազանությունը ապահովելու նպատակով հարցազրույցներին ընդգրկվել են ԱՄՆ-ի և Հայաստանի տարբեր մարզերի լեզվակիրներ: Հավասար հաղորդակցական պայմաններ ապահովելու նպատակով՝ բոլոր ինֆորմանտներին տրվել են նույն հարցերը՝ կրթության , ուսանողների հասարակական կյանքի և երկրագիտական թեմաների հետ կապված: Թեմաների և հարցերի ընտրությունը դարձյալ պատահական չէ: Հաղորդակցական հավասարությունը ապահովելու նպատակով յուրաքանչյուր լեզվակիրին՝ թե՛ ամերիկացի, թե՛ անգլիացի և թե՛ հայ տրվել են նույնատիպ հարցեր, ձայնագրվել, վերածվել գրավոր տեսքի և այնեհետև զուգադրվել: Ելնելով մեր առջև դրված նպատակից, հիմնական մեթոդն է հանդիսացել լեզվաբանության մեջ կիրառվող **զուգադրական մեթոդը** և սոցիոլոգիայի մեջ կիրառվող **վիճակագրական մեթոդը**:

Ինչպես արդեն նշվել է ընդհանուր առմամբ ձայնագրվել են 16 անգլախոս և 26 հայ ուսանողների հետ հարցազրույցներ: Սակայն սույն վերլուծության համար քննվել են ընդհանուր առմամբ 28 հարցազրույց՝ 14 յուրաքանչյուր լեզվում, ընդ որում գենդերային քանակության հավասարությունը ապահովելու համար ընտրվել են 7 արական և 7 իգական սեռի ներկայացուցիչներ յուրաքանչյուր լեզվում:

Հանրալեզվաբանական վերլուծության համար կարևոր է նաև իրավիճակի հաշվի առնելը և վերջինիս այնպիսի բաղադրիչների, ինչպիսին են **հանգամանքները (setting)** և **դերային հարաբերությունները (social roles)**, քանզի վերջիններս պայմանավորում են ռեզիստորը՝ հաղորդակցական իրավիճակը: Ելնելով մեր հանգամանքներից և դերային հարաբերություններից՝ դասախոս – ուսանող, մեր հարցազրույցները տեղի էին ունենում **կիսապաշտոնական** մթնոլորտում: Կարծում ենք, որ նման հաղորդակցական-իրավիճակային պայմանները նպատակահարմար են մեր ուսումնասիրության խնդիրների պարզաբանման համար:

Մեր վերլուծության արդյունքների հիման վրա կարող ենք փաստել հետևյալ լեզվական իրողությունները՝ կապված անգլերենի և հայերենի գենդերային խոսվածքների շարահյուսական առանձնահատկությունների հետ:

1. Ինչպես փաստում են մեր տվյալները, ամերիկացի երիտասարդ հասակի լեզվակիրների բանավոր խոսույթի կենտրոնական առանձնահատկություններից է **and** համադաս շաղկապի հաճախակի կիրառումը պարզ նախադասության առաջադաս դիրքում և բարդ համադասական նախադասություններում: Սույն հետազոտությունում **and** շաղկապով նախադասությունները կազմում են առավելագույն թիվը, իսկ **and** շաղկապի կիրառության թիվը հասնում է **131**-ի: Ի դեպ **and** շաղկապի բարձր հաճախականությունը հավասարապես վերաբերում է թե՛ արական, թե՛ իգական սեռի ներկայացուցիչներին: Այսպես, մեր տվյալները փաստում են, որ արական սեռի ներկայացուցիչները գործածել են **and** շաղկապը **65** անգամ, իսկ իգական սեռի ներկայացուցիչները՝ **66**, ինչը խոսում է՝ տվյալ դեպքում, գենդերային խոսվածքների շարահյուսական զուգամետ հատկանիշի մասին:
2. Նման լեզվական իրողություն՝ այն է անգլերենի **and** շաղկապի հայերեն համարժեքների՝ **և**, **ու** շաղկապներով նախադասությունների բարձր հաճախականություն, հայերենում չենք կարող փաստել: Այսպես, նշված երկու շաղկապների կիրառությունը մի ամբողջության մեջ հասնում է **78**-ի, ինչը գրեթե **երկու** անգամ քիչ է, քան թե անգլերենում, ինչն էլ իր հերթին խոսում է՝ տվյալ դեպքում, այս երկու լեզուներում սույն շարահյուսական կապի գործածման տարածև հատկանիշի մասին: Նշենք նաև, որ հակառակ մեր կանխատեսումների, **և** շաղկապի գործածումը մի քանի անգամ գերազանցում է **ու** շաղկապի գործածմանը՝ **և** շաղկապը գործածվել է **62** անգամ, իսկ **ու** շաղկապը՝ ընդամենը **16**: Սակայն անգլերենի և հայերենի միջև զուգամետությունը դրսևորվում է նրանում, որ ,ինչպես և անգլերենում, հայերենում նույնպես սույն համադասական շաղկապով նախադասությունները գործածվում են առավելագույնս, այսպես տոկոսային հարաբերությամբ նրանց գործածումը կազմում է **43%**: Տարամետումը ակնհայտ է դառնում, եթե համեմատում ենք հայերենի գենդերային խոսվածքներում գործածվող այս շաղկապներով նախադասությունների քանակը: Այսպես, մեր տվյալները փաստում են, որ այս շաղկապներով ասույթների գործածման քանակը գերակշռում է **իգական** սեռի ներկայացուցիչների խոսություն. այն կազմեց **52**, իսկ արական սեռի

ներկայացուցիչների խոսքում այն կազմեց **26**, ինչը ուղիղ երկու անգամ սակավաթիվ է: Ի դեպ, հակառակ մեր կանխատեսումների, արական սեռի ներկայացուցիչների խոսքում **և** շաղկապը գործածվել է **24** անգամ, իսկ **ու** շաղկապը ընդամենը **2**, ինչը կազմում է մոտ **9%**: Մինչդեռ իգական սեռի ներկայացուցիչների խոսքում **և** շաղկապը հանդիպում ենք **38** անգամ, իսկ **ու** շաղկապը **14** անգամ, ինչը կազմում է մոտ **35%**:

3. Հաճախականության տեսակետից **and** շաղկապով նախադասություններին հաջորդում են **but** համադասական շաղկապով նախադասությունները. պարզ հաստատական նախադասությունների առաջադաս դիրքում և բարդ համադասական նախադասություններում: Ընդհանուր առմամբ **but** շաղկապով նախադասությունների քանակը կազմել է **54**, ինչը գրեթե երեք անգամ քիչ է, քան **and** շաղկապով նախադասությունների քանակը: Գենդերային խոսվածքների առումով այստեղ դարձյալ նկատվում է զուգաձևություն, քանի որ թե՛ առական, թե՛ իգական սեռի ներկայացուցիչների խոսքում, ինչպես փաստում են մեր տվյալները, **but** շաղկապով նախադասությունները ունեն գրեթե նույն հաճախականությունը. **25** անգամ արական սեռի ներկայացուցիչների մոտ և **28** իգական սեռի ներկայացուցիչների մոտ:
4. Հայերենում՝ անգլերենի համեմատությամբ, նկատվում է տարամետ դրսևորում. **բայց** համադասական շաղկապով նախադասությունների քանակը կազմել է **26**, ինչը, ինչպես պարզ երևում է, ավելի քան երկու անգամ քիչ է, քան անգլերենում: Գենդերային խոսվածքների տեսակետից, ինչպես և անգլերենում, այստեղ դրսևորվում է զուգաձևություն, քանի որ թե՛ առական, թե՛ իգական սեռի ներկայացուցիչների խոսքում, ինչպես փաստում են մեր տվյալները, **բայց** շաղկապով նախադասությունները գործածվում են նույն հաճախականությամբ՝ 12 անգամ՝ առական սեռի ներկայացուցիչների խոսքում, 14 անգամ՝ իգական: Գենդերային ասպեկտով նկատելի է ևս մեկ տարամետ հատկանիշ՝ իգական սեռի ներկայացուցիչների խոսքում հաճախ է հնչում **սակայն** շաղկապը՝ **բայց** շաղկապի գրական հոմանիշը և թերևս առավել հեղինակային ձևը, մինչդեռ արական սեռի ներկայացուցիչների խոսքում, ինչպես փաստում են մեր տվյալները, այն չի հնչել, ինչը խոսում է այն փաստի մասին, որ **սակայն** շաղկապը արական սեռի ներկայացուցիչների համար այդքան էլ տիպիկ չէ:

5. Ջուգամետ հատկանիշ է դրսևորվում *որոշիչ երկրորդական* նախադասությունների գործածման առումով, քանի որ թե անգլերենում(41), թե հայերենում(31) նշված տեսակի նախադասությունները հաճախականության տեսակետից զբաղեցնում են երրորդ տեղը: Սակայն գենդերային խոսվածքներում նշված տեսակի որոշիչ երկրորդական նախադասությունների առումով դիտվում է տարամետություն: Այսպես, եթե անգլերենում արական սեռի ներկայացուցիչները՝ հակառակ մեր կանխատեսումների, ավելի հաճախ են գործածում տվյալ տեսակի երկրորդական նախադասությունները(23), քան իգական սեռի ներկայացուցիչները(18), ապա հայերենում՝ հակառակն է՝ արական սեռի ներկայացուցիչների խոսքում այն գրեթե երկու անգամ քիչ է հնչում(12), քան իգական սեռի ներկայացուցիչների խոսքում(19):
6. Թե՛ անգլերենում, թե՛ հայերենում հարաբերական հաճախականություն է դիտվում **պատճառի պարագա երկրորդական նախադասություն** պարունակող բարդ ստորադասական նախադասությունների գործածման առումով, թեև անգլերենում դրանց հաճախականությունը գերազանցում է. անգլերեն հարցազրույցներում արական և իգական սեռի ներկայացուցիչների պատասխաններում պատճառի պարագա ստորադասական երկրորդական նախադասությունները գործածվել են 37 անգամ, իսկ հայերեն հարցազրույցներում՝ 27: Սակայն զուգամետություն է դրսևորվում գենդերային ասպեկտով. թե՛ անգլերենում, թե՛ հայերենում պատճառի պարագա երկրորդական նախադասությունները գրեթե հավասարապես գործածվում են թե՛ արական, թե՛ իգական սեռի ներկայացուցիչների խոսքում և թե՛ անգլերենում, թե՛ հայերենում իգական սեռի ներկայացուցիչների խոսքում դրանք ավել են 3-ով: Հետաքրքիր է նկատել, որ հայերենում **որովհետև** շաղկապով ներմուծվող պատճառի պարագա երկրորդական նախադասությունները հավասարապես գործածելի են թե առական, թե իգական սեռի ներկայացուցիչների խոսքում, մինչդեռ **քանի որ** շաղկապով ներմուծվող պատճառի պարագա երկրորդական նախադասությունները ավելի բնորոշ են իգական սեռի ներկայացուցիչների խոսքին:
7. Հետաքրքիր գենդերային-շարահյուսական յուրահատկություն է երևան եկել այսպես կոչված լրացուցիչ իմաստ պարունակող որոշիչ երկրորդական նախադասությունների, այն է attributive non-restrictive

clauses և attributive non-restrictive continuative clauses տեսակների հետ կապված: Վերջին ենթատեսակը համապատասխանում է հայերենի երկրորդական նախադասություններին, որոնք լրացնում են ամբողջ գլխավոր նախադասությանը: Անգլերենում որոշիչ երկրորդական նախադասությունների այս վերջին երկու ենթատեսակները, ինչպես երևում է մեր փաստական նյութից, ավելի հատուկ են առական սեռի ներկայացուցիչների խոսքին. նրանք գործածվում են վերջիններիս բանավոր խոսույթում գրեթե երկու անգամ հաճախ, քան իգական սեռի ներկայացուցիչների բանավոր խոսույթում:

Նույն հարաբերությունը դրսևորվում է նաև հայերենում, քանզի, ինչպես ցույց են տալիս մեր փաստական տվյալները, լրացուցիչ իմաստ պարունակող որոշիչ երկրորդական նախադասությունները (attributive non-restrictive clauses) գործածվել են արական սեռի ներկայացուցիչների խոսքում 9 անգամ, մինչդեռ հակառակ սեռի ներկայացուցիչների խոսքում՝ ընդամենը 2: Իսկ երկրորդական նախադասությունները, որոնք լրացնում են ամբողջ գլխավոր նախադասությանը (attributive non-restrictive continuative), արական սեռի ներկայացուցիչների խոսքում գործածվել են 4 անգամ, մինչդեռ իգական սեռի ներկայացուցիչների խոսքում՝ 2, ինչը մեզ թույլ է տալիս կարծել, որ հայերենում իգական սեռի ներկայացուցիչների բանավոր խոսքի համար վերջին երկու ենթատեսակները այդքան էլ տիպիկ չեն:

Այսպիսով, ի մի բերելով անգլերենի և հայերենի գենդերային բարբառների շարահյուսական հատկանիշները, ուրվագծվում են հետևյալ հանրալեզվաբանական տիպաբանական հարաբերությունները, որոնք կներկայացնենք ամփոփ ձևով: Տվյալ երկու լեզուների զուգադրական տիպաբանական շարահյուսական հատկանիշների առումով դիտվում է հիմնականում **զուգաձևություն**, քանի որ երկու լեզուներում էլ վերլուծված տեսակի շարահյուսական կառույցները գործածվում են գրեթե նույն հաճախականությամբ: Գենդերային շարահյուսական հարաբերությունների հայեցակերպով անգլերենում զուգաձևությունը նկատվում է հիմնականում բարդ համադասական և պատճառի պարագա երկրորդական նախադասություն-անդամ պարունակող բարդ ստորադասական նախադասությունների գործածման առումով, քանզի թե՛ արական, թե՛ իգական սեռի ներկայացուցիչները գործածում են նշված տեսակի նախադասությունները գրեթե նույն հաճախականությամբ: Տարամետումը հիմնականում դրսևորվում է որոշիչ երկրորդական նախադասություն-անդամ պարունակող բարդ ստորադասական նախադասությունների գործածման առումով, քանի որ առական սեռի

ներկայացուցիչները առավել հաճախ են գործածում տվյալ տեսակի նախադասությունները, քան հակառակ սեռի ներկայացուցիչները:

Հայերենում գենդերային-շարահյուսական հարաբերությունների առումով **տարամետությունը** հասնում է ավելի մեծ ծավալի: Բարդ համադասական նախադասությունները առավել տիպիկ են իգական սեռի ներկայացուցիչների խոսքին: Որոշիչ երկրորդական նախադասություն-անդամ պարունակող բարդ ստորադասական նախադասությունները առավել տիպիկ են իգական սեռի ներկայացուցիչների խոսքին, մինչդեռ լրացուցիչ իմաստ պարունակող երկրորդական նախադասությունները առավել բնորոշ են արական սեռի ներկայացուցիչների խոսքին: Սակայն զուգամետ հատկանիշը դրսևորվում է պատճառի պարագայով բարդ ստորադասական նախադասությունների դեպքում, քանզի թե՛ իգական, թե՛ արական սեռի ներկայացուցիչների խոսքին տիպիկ է հավասար կիրառություն:

Այսպիսով ամփոփելով մեր զուգադրական վերլուծությունը, նշենք որ գենդերային-շարահյուսական հարաբերությունների տարամետումը դիտվում է ավելի շատ հայերենում, քան անգլերենում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Jeanne H. Herndon (1970) A Survey of Modern Grammars. Holt, Rinehart and Winston, INC.
2. Th. Pyles, J. Algeo. The Prigins and development of the English Language, Heinle and Heinle publishers, Fourth edition.
3. R. Mesthrie, J. Swann, A. Deumert, W. Lip. Introducing Sociolinguistics. Second Edition.
4. P.Trudgill.Sociolinguistics: An Introduction to Language and Society, Penguin Books Limited, 2000.
5. W. Grady, M. Dobrovolsky, M. Aronoff. Contemporary Linguistics. An Introduction. Third Edition, St. Martin's Press, Inc. 1997

КАРЕН ВЕЛЯН - К СОЦИОЛИНГВИСТИЧЕСКОЙ ТИПОЛОГИИ: СИНТАКСИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ГЕНДЕРНЫХ ДИАЛЕКТОВ В АНГЛИЙСКОМ И АРМЯНСКОМ ЯЗЫКАХ

В настоящей статье представлен сопоставительный анализ синтаксических особенностей спонтанной речи лиц мужского и женского пола в английском и армянском языках. Методом сопоставления были выявлены конвергентные и дивергентные синтаксические характеристики речи лиц мужского и женского пола в двух языках. В плане частотности использования синтаксических конструкций, описанных в статье, наблюдается изоморфизм, поскольку в обоих языках проанализированные конструкции используются с одинаковой частотностью. В плане лингво-гендерных особенностей в двух языках, наблюдается алломорфизм. В частности, в английском языке проанализированные синтаксические конструкции используются, главным образом, с одинаковой частотностью в речи лиц как мужского, так и женского пола. В армянском языке наблюдается алломорфизм, поскольку данные синтаксические конструкции имеют различную степень частотности в речи лиц мужского и женского пола.

KAREN VELYAN - ON SOCIOLINGUISTIC TYPOLOGY: SYNTACTIC FEATURES OF GENDER DIALECTS IN ENGLISH AND ARMENIAN

The article presents a contrastive analysis of syntactic features in females' and males' spontaneous speech in English and Armenian. The analysis has revealed convergent and divergent syntactic features in the speech of females' and males' in English and Armenian. Similarities are observed in the frequency of the use of syntactic constructions in English and Armenian. As far as lingual-gender features are concerned, differences stand out. Specifically, the syntactic constructions analyzed are in equal frequency both in females' and males' speech in English, whereas, in contrast, the syntactic constructions are in different frequency in females' and males' speech in Armenian.

**ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՐԼՁ ՍԱՆԴԵՐՍ
ՓԻՐՍԻ ԵՎ ՖԵՐԴԻՆԱՆԴ ԴԸ ՍՈՍՅՈՒՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ
ՆՇԱՆԱՅԻՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

ՍՈՒՍԱՆՆԱ ՏԵՐ - ԱՎԱԳՅԱՆ

Հիմնաբառեր՝ խորհրդանիշ, նշանային մոդել, նշանակիչ, նշանակյալ, կամայականություն

Տարբեր գիտությունների պատմության մեջ էլ կան բախտորոշ ժամանակներ և դրանց մեջ առանցքային անուններ, որոնցով վաղ թե ուշ առանձնացվում է տվյալ գիտության ծաղկման համապատասխան փուլը՝ որպես նրա առաջընթացն ապահովող հայեցակարգային ու հայեցակերպային հիմնարարությամբ հագեցած խոսուն ժամանակաշրջան:

Նշանագիտության պատմության մեջ այդպիսի առանցքային անուններ են համարվում շվեյցարացի լեզվաբան Ֆերդինանդ դը Սոսյուրի և ամերիկացի փիլիսոփա Չարլզ Սանդերս Փիրսի անունները, քանի որ նշանների վերաբերյալ երկու գլխավոր ժամանակակից մոդելները առաջադրվել են նրանց կողմից, և այդ նշանային մոդելները շատ կարևոր ազդեցություն են ունեցել նշանագիտության կայացման և հետագա զարգացման գործընթացում:

Ներկայումս խորհրդանիշների ուսումնասիրությունը բավականին արդիական բնույթ է կրում, որն իրականացվում է տարբեր գիտությունների՝ լեզվանշանաբանության, լեզվամշակութաբանության, իմացական իմաստաբանության կողմից և մեր նպատակն է համարվում՝ ուսումնասիրել խորհրդանիշները Չարլզ Սանդերս Փիրսի և Ֆերդինանդ դը Սոսյուրի կողմից առաջադրված նշանային մոդելների շրջանակներում:

Նշանների մասին տեսությունների մենք հանդիպում ենք փիլիսոփայության ողջ պատմության ընթացքում հնագույն ժամանակներից ի վեր: Այնուամենայնիվ, ժամանակակից նշանագիտության երկու հիմնական ուղղությունները կապված են շվեյցարացի լեզվաբան Ֆերդինանդ դը Սոսյուրի և ամերիկացի փիլիսոփա Չարլզ Սանդերս Փիրսի անունների հետ, ովքեր համարվում են նշանագիտության համահիմնադիրները: Ուսումնասիրության ոլորտը, որ Չարլզ Փիրսը նշանագիտություն է անվանում, նշանների մասին հիմնական ուսմունքն է, որն ըստ նրա սերտորեն կապված է տրամաբանության հետ: Փիրսն ասում է. «Ոչ մի

բան նշան չէ, մինչ մենք այն չենք մեկնաբանում որպես նշան» [Chandler 2007: 13]:

Այս առնչությամբ պետք է նաև նշել, որ Փիրսն առաջարկել է նշանաբանության ելակետային հասկացություն համարել ոչ թե նշանը, այլ նշանային իրադրությունը, այսինքն՝ նկատի առնել այն իրավիճակը, երբ ինչ-որ բան ասվում է, որն էլ լսողի կողմից ընկալվում է որպես նշան և մեկնաբանվում է այս կամ այն կերպ՝ կախված իրադրությունից: Նշանների համակարգը ոչ թե նշանային միջոցների, այլ իմաստների համակարգ է: Ժամանակակից նշանագետները ուսումնասիրում են նշանները ոչ թե մեկուսացված ձևով, այլ որպես նշանագիտական նշան-համակարգի մաս: Նրանք ուսումնասիրում են, թե ինչպես են իմաստները ստեղծվում և ինչպես է իրականությունը ներկայացվում: Մենք ստեղծում ենք իմաստներ նշանների՝ մեր կողմից ստեղծման և մեկնաբանման արդյունքում: Եվ իսկապես ըստ Փիրսի՝ «Մենք մտածում ենք նշաններով»: Նշանները ընդունում են բառերի, պատկերների, հնչյունների, բուրմունքների, գործողությունների կամ առարկաների ձև, որոնք չունեն որևէ ներհատուկ իմաստ և նշան են դառնում միայն այն ժամանակ, երբ մենք դրանց որոշակի իմաստներ ենք վերագրում [Chandler 2007: 13]:

Նշանի մասին Սոսյուրյան մոդելը երկտարր բնույթ ունի: Սոսյուրի կարծիքով ցանկացած նշան բաղկացած է նշանակիչից և նշանակյալից: Նշանակիչը այն ձևն է, որ նշանը ստանում է, իսկ նշանակյալը գաղափարն է, որին այն վերաբերում է: Սոսյուրի դիտարկմամբ նշանն այն ամբողջությունն է, որն առաջանում է նշանակիչի և նշանակյալի միջև եղած փոխհարաբերությունից: Նշանը միշտ պետք է բաղկացած լինի թե՛ նշանակիչից, թե՛ նշանակյալից: Միևնույն նշանակիչը կարող է հանդես գալ տարբեր նշանակյալների համար:

Սոսյուրի դիտարկմամբ լեզվական համակարգում ամեն ինչ կախված է հարաբերություններից, և ոչ մի նշան ինքնուրույն իմաստ չի կազմում, այլ միայն այլ նշանների հետ ունեցած հարաբերության արդյունքում: Սոսյուրը շեշտադրում էր նշանների միջև եղած տարբերությունները: Նա պնդում էր, որ գաղափարները սահմանվում են ոչ թե ըստ իրենց ունեցած իմաստների, այլ միևնույն համակարգում այլ առարկաների հետ ունեցած հակադրության արդյունքում: Այսպիսով՝ նշանները գտնվում են հակադրության մեջ, և լեզվի ամբողջ մեխանիզմը հիմնված է այս տեսակ հակադրությունների վրա: Սոսյուրը մատնանշում է, որ չկա որևէ անհրաժեշտ, ներհատուկ կամ անխուսափելի հարաբերություն նշանակիչի և նշանակյալի միջև: Նա շեշտում է նշանի կամայականությունը, հատկապես նշանակիչի և նշանակյալի միջև եղած կապի կամայականությունը: Նշանի կամայականությունը արմատական գաղափար է, որովհետև այն սահմանում է լեզվի ինքնուրույնությունը իրականության համեմատ:

Սույուրի կողմից առաջադրված նշանային մոդելը, շեշտը դնելով նշանների համակարգում ներքին կառուցվածքների վրա, առաջ է քաշում գաղափար այն մասին, որ լեզուն չի արտացոլում իրականությունը, այլ կառուցում է այն [Chandler 2007: 14-25]:

Այն ժամանակ, երբ Սույուրը ձևակերպում էր նշանի վերաբերյալ իր մոդելը, Չ. Սանդերս Փիրսը նույնպես առաջադրեց նշանի վերաբերյալ եռակողմ մոդել, որը բաղկացած էր.

1. Ձևից (representamen)
2. Իմաստից (interpretant)
3. Առարկայից (object)

Փիրսի կողմից առաջադրված մոդելում մենք հանդիպում ենք նշանների այնպիսի դասակարգման, որի հիմքում գտնվում է նշանակիչի և նշանակյալի միջև եղած կապը: Նշանի եռակողմ մոդել են կիրառել Պլատոնը, Արիստոտելը, Լայբնիցը, Էդմունդ Հոտեռը և Չարլզ Մորիսը [Chandler 2007: 29-33]: Նշենք նաև, որ ըստ Փիրսի՝ կարելի է առանձնացնել հասկացությունների նշանային արտահայտման գործընթացի երեք բնագավառներ.

1. Շարահյուսություն. բնութագրում է նշանի՝ մյուս նշանների նկատմամբ ունեցած հարաբերությունը:
2. Իմաստաբանություն. բնութագրում է նշանի և նշանակության փոխհարաբերությունը:
3. Գործաբանություն. բնութագրում է նշանի և այդ նշանը կիրառողի միջև եղած փոխհարաբերությունը:

Սույուրի տեսությունը, որն ընդունում է շարահյուսությունն ու իմաստաբանությունը, տեղ չի հատկացնում գործաբանությանը, քանզի նշանը միշտ որոշ չափով արտահայտվում է անհատական և հասարակական կամքից անկախ, և հենց դա էլ համարվում է նշանի ամենաբնորոշ հատկանիշը:

Ըստ Փիրսի կողմից առաջադրված դասակարգման՝ առանձնացվում են նշանների հետևյալ տեսակները՝

1. Պատկերային. Սրանք նշանների այն տեսակն են, որոնցում նշանակիչն ու նշանակյալը նման են իրար: Նշանակիչը նման է նշանակյալին՝ ունենալով դրա հատկանիշներից մի քանիսը: Լուսանկարները կարող են լինել պատկերային նշաններ, որովհետև դրանք վերարտադրում են առարկաները տեսողական ձևով: Բնաձայնական բառերն էլ են պատկերային նշաններ, որովհետև դրանք նմանակում են առարկաները լսողական ձևով: Օձանելիքները նույնպես պատկերային նշաններ են, որովհետև նմանակում են հոտերը արիեստական ճանապարհով [Sebeok 2001:10]: Այս շարքը կարող է անվերջ շարունակվել: Ընդունենք, որ

Ջոկոնդա հայտնի նկարի լուսանկարը պատկեր է, որ պատճենի համար դառնում է նշանակյալ, բայց որն իրենով պատկերային նշան է Լուվրում գտնվող բնօրինակ դիմանկարի համար, և այս նկարն էլ իր հերթին պատկերային նշան է Լեոնարդոյի մոդելի համար, իսկ Մոնա Լիզա անունով կինը դրա նշանակյալն է: Այսպիսով՝ տարժամանակյա հաջորդականությամբ Մոնա Լիզան առաջինն էր, հաջորդը՝ նրա դիմանկարը, հետո նրա լուսանկարը [Sebeok 2001:51]:

2. Ինդեքսային. Սրանք նշանների այն տեսակն են, որոնց դեպքում նշանակիչը համարվում է նշանակյալի հետևանքը: Ինդեքսի օրինակներ են հանդիսանում բնական նշանները (ծուխ, ամպրոպ, մատնահետքեր, արձագանքներ), բժշկական ախտանիշները (ցավ, պուսի արագություն), չափող գործիքները (ջերմաչափ, ժամացույց), ազդանշանները (դռան թակոց, հեռախոսազանգ) և այլն: Ծուխը կրակի ինդեքսն է, հազը մրսածության ինդեքսն է: Ինդեքսայնության ամենատիպիկ արտացոլումը ցուցամատն է, որ ամբողջ աշխարհում մարդիկ կիրառում են բնազդաբար՝ առարկաները, մարդկանց և իրադարձությունները մատնանշելու նպատակով: Շատ բառեր նույնպես պարունակում են ինդեքսայնության թաքնված իմաստ, օրինակ՝ այստեղ, այնտեղ, վերև, ներքև բառերը վերաբերում են իրերի հարաբերական տեղակայմանը [Chandler 2007:38]:

3. Խորհրդանիշներ. Սրանք նշանների այն տեսակն են հանդիսանում, որոնցում կապը նշանակիչի և նշանակյալի միջև պայմանական բնույթ է կրում: Ի սկզբանե խորհրդանիշները համարվել են ճանաչմանը նպաստող նշաններ, որոնք կարծես թե բաղկացած են մետաղադրամի երկու կողմերից: Այս երկու կողմերը լրացնում են մեկը մյուսին՝ կազմելով մեկ միասնական ամբողջություն:

Ըստ սահմանման՝ խորհրդանիշն այն է, ինչը ներկայացնում է մեկ այլ բան՝ շնորհիվ համաբանական համապատասխանության, օրինակ՝ արքայական գավազանը թագավոր լինելու խորհրդանիշն է [Eco 1986: 130-131]:

Խորհրդանիշներն առաջանում են մի շարք գործոնների փոխազդեցության արդյունքում՝ մշակութային, հասարակական, հոգեբանական, իմացական և այլն: Մշակութային այնպիսի սովորույթներ, ինչպիսիք են՝ քաղաքավարության կանոններ, հագուստ և այլն, համարվում են խորհրդանիշներ: Մարդը կարողանում է ըմբռնել խորհրդանիշների իմաստն այն ժամանակ, երբ մուտք է գործում մշակույթ: Օրինակ՝ որոշ երկրներում սպիտակը սգի գույն է, իսկ

մյուսներում մաքրության խորհրդանիշն է. դրա համար էլ հարսնացուն սպիտակ է հագնվում հարսանիքի ժամանակ: Միևնույն երևույթը բնորոշելու համար մարդիկ տարբեր խորհրդանիշներ են կիրառում՝ դուրս գալով իրենց աշխարհընկալումից: Խորհրդանիշների ստեղծման հզոր միջոց է համարվում գովազդը: Գովազդվող առարկաները մատուցվում են մեզ՝ որպես որոշակի կենսակերպ արտահայտող խորհրդանիշներ: Օրինակ՝ մեքենան ընկալվում է որպես ազատության խորհրդանիշ: Խաչածն պատկերը կարող է արտահայտել քրիստոնեության գաղափարը: “V” նշանը, որ արվում է ցուցամատի և միջնամատի օգնությամբ, խորհրդանշում է հաղթանակի գաղափարը: ՁԼՄ-ների ոլորտից ամենավառ օրինակն այն է, երբ միևնույն իրադարձությունը մամուլի կողմից տարբեր կերպ է մեկնաբանվում. մի դեպքում որպես ահաբեկչություն, մյուսում՝ որպես իրավունքների համար մղվող պայքար, երրորդ դեպքում՝ բռնություն, չորրորդ դեպքում՝ հայրենասիրություն, հինգերորդ դեպքում՝ հարձակում խաղաղ բնակիչների վրա, վեցերորդ դեպքում՝ որպես խաղաղապահական գործողություն է մեկնաբանվում: Բոլոր այս խորհրդանիշները սահմանվում են հասարակական պայմանականությամբ [Болодина 2008: 86-90]:

Այն, ինչ կիրառության մեջ կոչվում է խորհրդանիշ, նշանագետների կողմից դիտարկվում է որպես նշանի որոշակի տեսակ, բայց ոչ բոլոր նշաններն են խորհրդանիշ համարվում: Փիրսի դիտարկմամբ խորհրդանիշները հիմնվում են պայմանական զուգորդման վրա: Քանի որ Փիրսը որոշել էր նշանը կիրառել որպես նշանաբանության ընդհանրական եզրույթ, նա պետք է խորհրդանիշը բնորոշեր կամ որպես պատկերային կամ որպես կամայական նշան, քանզի նրա կարծիքով խորհրդանիշները ձևավորվում են այլ նշանների զարգացման արդյունքում, հատկապես պատկերների: Նա կատարեց իր ընտրությունը՝ հետևելով բավականին հաճախակի կրկնվող գիտական կիրառությանը՝ ըստ որի խորհրդանիշները պայմանականորեն փոխարինում են քիմիական, ֆիզիկական կամ մաթեմատիկական երևույթներին: Ճշմարիտ է, որ Փիրսը լավատեղյակ էր այն մասին, որ այս գիտական խորհրդանիշները ունեն նաև պատկերային հատկանիշներ, բայց պետք է մատնանշել այն փաստը, որ Փիրսը երբեք ոչ մի բան չի համարում պարզապես խորհրդանիշ կամ պատկեր, և ցանկացած խորհրդանիշի ամբողջական բովանդակությունը բացահայտվում է միայն մշտական մեկնաբանությունների արդյունքում:

Ներկայումս լեզուն համարվում է խորհրդանշանային համակարգ, չնայած Սոսյուրը խուսափում է լեզվաբանական նշանները խորհրդանիշներ անվանել՝ կիրառության մեջ շփոթմունք առաջացնելու վտանգի պատճառով: Նա նշում է, որ խորհրդանիշները երբեք ամբողջապես կամայական չեն. Նրանք ցույց են տալիս

բնական կապի հետք նշանակիչի և նշանակյալի միջև, կապ, որը նա հետագայում անվանեց ռացիոնալ:

Փիրսի համար խորհրդանիշը նշան է, որ վերաբերում է առարկային ընդհանուր գաղափարների ամբողջություն կազմող որոշակի օրենքի հիման վրա: Մենք մեկնաբանում ենք խորհրդանիշները՝ ըստ ընդունված կանոնի: Խորհրդանիշը պայմանական նշան է, որը կախված է սովորույթից: Խորհրդանիշները չեն սահմանափակվում միայն բառերով: Խորհրդանիշը նշան է, որի կարևորությունը կայանում է որոշակի սովորույթ, տրամադրվածություն կամ այլ ընդհանուր կանոն ներկայացնելու մեջ, որոնց հիման վրա այն մեկնաբանվում է, և Փիրսն ավելացնում է նաև, որ խորհրդանիշն իրականացնում է իր գործառույթը՝ անկախ առարկայի հետ ունեցած նմանությունից կամ համաբանությունից [Chandler 2007: 38-39]:

Այսպիսով՝ Չարլզ Սանդերս Փիրսի և Ֆերդինանդ դը Սոսյուրի կողմից առաջադրված նշանային մոդելները բավականին տարբեր են միմյանցից: Մեր կարծիքով չնայած այն հանգամանքին, որ երկու մոդելներում էլ նշանը սահմանվում է որպես նշանակիչի և նշանակյալի ամբողջություն, այնուամենայնիվ, երբ խոսքը վերաբերում է նշանների դասակարգմանը, ակնհայտ է, որ Սոսյուրը չի առաջադրում նշանների դասակարգում, այլ պարզապես հպանցիկ կերպով անդրադառնում է միայն խորհրդանիշներին և նույնիսկ խուսափում է «սիմվոլ» եզրույթի կիրառությունից, քանի որ ինչպես արդեն նշվեց, վերջինս նշանները կամայական է համարում և գտնում է, որ չկա որևէ ներհատուկ կամ պարտադրված կապ նշանակիչի և նշանակյալի միջև, իսկ խորհրդանիշների դեպքում նա արդեն բացառում է կամայականությունը նշանակիչի և նշանակյալի միջև, քանի որ ըստ նրա՝ խորհրդանիշները տարբեր մշակույթների մեջ տարբեր կերպ են մեկնաբանվում, և ցանկացած մարդկային լեզու աշխարհընկալման յուրահատուկ ձև է և երևույթների գաղափարայնացման եզակի միջոց, ուստի խորհրդանիշներում կապը նշանակիչի և նշանակյալի միջև ոչ թե կամայական, այլ հիմնավորված բնույթ է կրում: Խորհրդանիշները կարող են հանդես գալ բառերի, հնչյունների, ժեստերի և տեսողական պատկերների միջոցով և կիրառվում են զանազան մտքեր, համոզմունքներ արտահայտելու նպատակով: Խորհրդանիշների կիրառումը հեշտացնում է աշխարհի ըմբռնումը՝ հիմք ծառայելով մեր կողմից արվող դատողությունների համար: Խորհրդանիշների գոյությունը կայանում է նրանում, որ որոշակի բան կընկալվի միայն այն դեպքում, եթե բավարարված են որոշ պայմաններ և եթե խորհրդանիշը ազդում է այն մեկնաբանողի մտքի և վարքի վրա:

Ինչ վերաբերում է Չարլզ Սանդերս Փիրսի կողմից առաջադրված նշանային մոդելին՝ կարելի է ասել, որ վերջինս, դասակարգելով նշանները՝ պատկերների,

ինդեքսների և խորհրդանիշների, հանգամանալից կերպով վերլուծում է խորհրդանիշները և գտնում է, որ **խորհրդանիշների դեպքում կապը նշանակիչի և նշանակյալի միջև սահմանվում է արհեստականորեն, որն հետագայում ամրանում է մշակույթի օգնությամբ**: Մեծ կարևորություն տալով նշանի գործաբանությանը՝ նա մատնանշում էր նաև այն փաստը, որ ցանկացած նշան դառնում է նշան միայն սեմիոզիսի՝ հասկացությունների նշանային արտահայտման գործընթացում [Володина 2008: 94-95]: Փիրսը վերաբերվում է խորհրդանիշներին՝ որպես առարկաների նշանակության արտահայտման սահմաններից դուրս գալու բարձրագույն արտահայտվածություն: Փիրսի համար սիմվոլիզացիան մտածողության և դրա նշանային արտահայտման միջոցների ինքնազարգացման արդյունքն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Chandler, D. *Semiotics. The Basics*, Second Edition. USA, 2007, pp.13-25, 29-39.
2. Eco, U. *Semiotics and the Philosophy of Language*. USA, 1986, pp. 130-131.
3. Sebeok, Thomas A. *Signs: An Introduction to Semiotics*, Second Edition. Canada, 2001, p.10, p.51.
4. Володина М.Н. *Язык средств массовой информации*. Москва , 2008, С. 86-90, 90-95.

СУСАННА ТЕР-АВАГЯН - ИНТЕРПРЕТАЦИЯ СИМВОЛОВ В РАМКАХ ЗНАКОВЫХ МОДЕЛЕЙ ПРЕДЛОЖЕННЫХ ЧАРЛЬЗОМ САНДЕРСОМ ПИРСОМ И ФЕРДИНАНОМ ДЕ СОССЮРОМ

Данная статья посвящена изучению знаковых моделей выдвинуты Чарльзом Сандерсом Пирсом и Фердинандом де Соссюром, которые в достаточной степени различаются друг от друга. Соссюр считал, что связь между означающим и означаемым не бывает обязательным, а в случае символов связь между означающим и означаемым является обоснованным.

Чарльз Сандерс Пирс подробным образом анализирует символы и утверждает о том, что в случае символов связь между означающим и означаемым устанавливается искусственно и закрепляется культурой.

SUSANNA TER-AVAGYAN - THE INTERPRETATION OF SYMBOLS WITHIN THE FRAMEWORK OF THE SIGN MODELS SUGGESTED BY CHARLES SANDERS PEIRCE AND FERDINAND DE SAUSSURE

The article is devoted to the study of the sign models suggested by Charles Sanders Peirce and Ferdinand de Saussure, which differ from each other to a great extent. Saussure says, that the relationship between the signifier and the signified is not compulsory, but in case of symbols the relationship between the signifier and the signified is motivated.

Charles Sanders Peirce gives a detailed analysis of symbols and claims that in case of symbols the relationship between the signifier and the signified is established artificially and is consolidated through culture.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

ԴԻԱՆԱ ԱԴԻԿՅԱՆ - դասախոս, անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոն, ԵՊԼՀ

ДИАНА АДИКЯН – преподаватель кафедры английской лексикологии и стилистики, ЕГУЯСН

DIANA ADIKYAN – lecturer, Chair of English Lexicology and Stylistics, YSULS

ՍՎԵՏԼԱՆԱ ԱԶԻԶՅԱՆ - Մանկավարժական գիտությունների թեկնածու, անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոնի դոցենտ, ԵՊԼՀ

СВЕТЛАНА АЗИЗЯН – к. п.н., доцент кафедры фонетики и грамматики английского языка, ЕГУЯСН

SVETLANA AZIZYAN – Ph.D., Associate Professor, Chair of English Phonetics and Grammar, YSULS

ՄԱՆԱՆ ԱՂԱԲԵԿՅԱՆ - Անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ, ԵՊԼՀ

МАНАН АГАБЕКЯН - Аспирант кафедры фонетики и грамматики английского языка, ЕГУЯСН

MANAN AGHABEKYAN - Post- graduate student at the Chair of English Phonetics and Grammar, YSULS

ՍՈՆՅԱ ԱՊՐԵՍՈՎԱ - ք.գ.թ., դոցենտ, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն, ԵՊԼՀ

СОНЯ АПРЕСОВА - к.ф.н., доцент кафедры мировой литературы и культуры, ЕГУЯСН

SONYA APRESOVA – Ph.D., Associate Professor, Chair of World Literature and Culture, YSULS

ԱՆԱՀԻՏ ԱՆՎԵՐԴՅԱՆ – ք.գ.թ., անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի դասախոս, ԵՊԼՀ

АНАИТ АЛАВЕРДЯН – к.ф.н., преподаватель кафедры английской лексикологии и стилистики, ЕГУЯСН

ANAHIT ALAVERDYAN – Ph.D., lecturer, Chair of English Lexicology and Stylistics, YSULS

ԼԻԼԻԹ ԲԱԴԱԼՅԱՆ - ք.գ.թ., անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի դոցենտ, ԵՊԼՀ

ЛИЛИТ БАДАЛЯН - к.ф.н., доцент кафедры английской лексикологии и стилистики, ЕГУЯСН

LILIT BADALYAN - Ph.d., Associate Professor, Chair of English Lexicology and Stylistics, YSULS

ՍԵՂԱ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ - ք.գ.թ., դոցենտ, անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոն, ԵՊԼՀ

СЕДА БАГДАСАРЯН - к.ф.н., доцент кафедры фонетики и грамматики английского языка, ЕГУЯСН

SEDA BAGDASARIAN - PhD, Associate Professor, Chair of English Phonetics and Grammar, YSULS

ԳԱՅԱՆԵ ԲԱՐՍԵԴՅԱՆ – դասախոս, անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոն, ԵՊԼՀ

ГАЯНЕ БАРСЕГЯН – преподаватель кафедры английской лексикологии и стилистики, ЕГУЯСН

GAYANE BARSEGHYAN – lecturer, Chair of English Lexicology and stylistics, YSULS

ՔՐԻՍՏԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ – ք.գ.թ., անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի դոցենտ, ԵՊԼՀ

КРИСТИНЕ ГРИГОРЯН – к.ф.н., доцент кафедры английской лексикологии и стилистики, ЕГУЯСН

CHRISTINE GRIGORYAN – Ph.d., Associate Professor, Chair of English Lexicology and Stylistics, YSULS

ՋԵՄՄԱ ՍԱՖԱՐՅԱՆ – լեզվաբանության և տեղեկատվական տեխնոլոգիաների մագիստրոս, ԵՊԼՀ

ДЖЕММА САФАРЯН – магистр лингвистики и информационных технологий, ЕГУЯСН

JEMMA SAFARYAN – Master of Linguistics and Information Technologies, YSULS

ՄԱՐԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ – դասախոս, եվրոպական և արևելյան լեզուների ամբիոն, ԵՊԼՀ

МАРИНА ГРИГОРЯН – преподаватель кафедры европейских и восточных языков, ЕГУЯСН

MARINA GRIGORYAN – lecturer, Chair of the European and Oriental Languages, YSULS

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲԱԴՐԱՄՅԱՆ – դասախոս, եվրոպական և արևելյան լեզուների ամբիոն, ԵՊԼՀ

МАРГАРИТА БАГРАМЯН – преподаватель кафедры европейских и восточных языков, ЕГУЯСН

MARGARITA BAGHRAMYAN – lecturer, Chair of the European and Oriental Languages, YSULS

ԿԱՐԻՆԵ ԳՈՒԼԱՆՅԱՆ - ք.գ.թ., դոցենտ, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն, ԵՊԼՀ

КАРИНЕ ГУЛАНЯН - к.ф.н., доцент кафедры мировой литературы и культуры, ЕГУЯСН

KARINE GULANYAN - Ph.D., Associate Professor, Chair of World Literature and Culture, YSULS

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ք.գ.դ., հայագիտության ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ

ГАЯНЕ ГЕВОРГЯН - д.ф.н., зав. кафедрой арменоведения, ЕГУЯСН

GAYANE GEVORGYAN – Doctor in Philology, Head of the Chair of Armenology, YSULS.

ԳԱՅԱՆԵ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ - ք.գ.թ., դոցենտ, անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ

ГАЯНЕ ЕГИАЗАРЯН - к.ф.н., доцент, зав. каф. английской лексикологии и стилистики, ЕГУЯСН

GAYANE YEGHIAZARYAN – Ph.D., Associate Professor, Head of the Chair of English Lexicology and Stylistics, YSULS

ԲԵԼԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ - ք.գ.թ., դոցենտ, ուսումնական գծով պրոռեկտոր, ԵՊԼՀ

БЕЛА МАРГАРЯН - к.ф.н., доцент, проректор по учебной части, ЕГУЯСН

BELA MARGARYAN - Ph.D., Associate Professor, Vice - rector for Education Matters, YSULS

ՀԱՍՄԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ - ք.գ.թ., համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն, ԵՊԼՀ

АСМИК ЕГИАЗАРЯН - к.ф.н., каф. мировой литературы и культуры, ЕГУЯСН

HASMIK YEGHIAZARYAN - Ph.D., Chair of World Literature and Culture, YSULS

ԱՆՆԱ ԹՈՒՄԱՍՅԱՆ – դասախոս, անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոն, ԵՊԼՀ

АННА ТУМАСЯН - преподаватель кафедры английской лексикологии и стилистики, ЕГУЯСН

ANNA TUMASYAN – lecturer, Chair of English Lexicology and Stylistics, YSULS

ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ – դասախոս, եվրոպական և ասիական լեզուների ամբիոն, ԵՊԼՀ

ЛУСИНЕ КАЗАРЯН – преподаватель кафедры европейских и азиатских языков, ЕГУЯСН

LUSINE GHAZARYAN – lecturer, Chair of European and Asian Languages, YSULS

ՍՈՆԱ ՀԱՎՈՐՅԱՆ – լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի հայցորդ, ԵՊԼՀ

СОНА АКОБЯН – соискатель кафедры языкознания и теории коммуникации, ЕГУЯСН

SONA HAKOBYAN – Post-graduate student, Chair of the Linguistics and Theory of Communication, YSULS

ԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – դասախոս, անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոն, ԵՊԼՀ

АНИ АРУТЮНЯН – преподаватель кафедры фонетики и грамматики английского языка, ЕГУЯСН

ANI HARUTYUNYAN – lecturer, Chair of English Phonetics and Grammar, YSULS

ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ – բ.գ.թ., դոցենտ, անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ

НАРИНЕ ОГАННЕСЯН- к.ф.н., доцент, зав. каф. фонетики и грамматики английского языка, ЕГУЯСН

NARINE HOVNANNISYAN – Ph.D., Associate Professor, Chair of English Phonetics and Grammar, YSULS

ՌԱՖԻԿ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ - անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոնի ասպիրանտ, ԵՊԼՀ

РАФИК САНТРОСЯН – аспирант каф. фонетики и грамматики английского языка, ЕГУЯСН

RAFIK SANTROSYAN- PhD Student, Chair of English Phonetics and Grammar, YSULS

ՖՐՈՒՆՉԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ -բ.գ.թ., դոցենտ, եվրոպական և ասիական լեզուների ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ

ФРУНЗЕ ОГАННЕСЯН -к.ф.н., доцент, зав. каф. европейских и азиатских языков, ЕГУЯСН

FRUNZE HOVHANNISYAN - Ph.D., Associate Professor, Head of the Chair of European and Asian Languages, YSULS

ՍՈՆԱ ԱՎԱԳՅԱՆ – մագիստրոս, լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոն, ԵՊԼՀ

СОНА АВАГЯН – магистр, каф. языкознания и теории коммуникации, ЕГУЯСН

SONA AVAGYAN – Master, Chair of the Linguistics and Theory of Communication, YSULS

ԿԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - ք.գ.թ., գերմաներենի ամբիոն, ԵՊԼՀ

КАРИНЕ ОГАНЕСЯН - к.ф.н., кафедра немецкого языка, ЕГУЯСН

KARINE HOVHANNISYAN - Ph.D., Chair of German Language, YSULS

ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ - գերմաներենի ամբիոնի հայցորդ, ԵՊԼՀ, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի դասախոս

АСМИК КАЗАРЯН - Соискатель кафедры немецкого языка, ЕГУЯСН преподаватель кафедры теории языка и межкультурной коммуникации Российско-Армянского (Славянского) университета

HASMIK GHAZARYAN- Post-graduate student at the Chair of German language, YSULS, lecturer at the Chair of the Theory of Language and Intercultural Communication, Russian-Armenian (Slavonic) University

ԷԼԻԶԱ ՂԱԶԱՐՅԱՆ - ք.գ.թ., դոցենտ, գերմաներենի ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ

ЭЛИЗА КАЗАРЯН - к.ф.н., доцент, зав. каф. немецкого языка, ЕГУЯСН

ELIZA GHAZARYAN – Ph.D., Associate Professor, Head of the Chair of German language, YSULS

ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - գերմաներենի ամբիոնի ասպիրանտ, ԵՊԼՀ

СОНА АРУТЮНЯН - аспирантка кафедры немецкого языка, ЕГУЯСН

SONA HARUTYUNYAN –Ph.D. student, Chair of German Language, YSULS

ՍԻՐԱՆՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ – ք.գ.թ., դասախոս, գերմաներենի ամբիոն, ԵՊԼՀ

СИРАНУШ ПАПОЯН - к.ф.н., преподаватель, каф. немецкого языка, ЕГУЯСН

SIRANUSH PAPOYAN – Ph.D., lecturer, Chair of German language, YSULS

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ – ք.գ.թ., անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի դոցենտ, ԵՊԼՀ

СВЕТЛАНА МАРКАРЯН – к.ф.н., доцент кафедры английской лексикологии и стилистики, ЕГУЯСН

SVETLANA MARGARYAN – Ph.D. in Philology, Associate Professor at the Chair of English Lexicology and Stylistics, YSULS

ԱԼԻՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ – անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի հայցորդ, ԵՊԼՀ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի օտար լեզուների ամբիոնի դասախոս

АЛИНА ПЕТРОСЯН – соискатель кафедры английской лексикологии и стилистики, ЕГУЯСН, преподаватель кафедры иностранных языков, Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци

ALINA PETROSYAN – Post-graduate student at the Chair of English Lexicology and Stylistics, YSULS, Lecturer at the Department of Foreign Languages, Yerevan State Medical University after Mkhitar Heratsi

ՆԱԻՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ - անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի հայցորդ, ԵՊԼՀ,

НАИРА МАРТИРОСЯН – соискатель кафедры английской лексикологии и стилистики, ЕГУЯСН

NAIRA MARTIROSYAN - Post-graduate student, Chair of English Lexicology and Stylistics, YSULS

ԱՆԱՀԻՏ ՄԿՐՅԱՆ– դասախոս, եվրոպական և ասիական լեզուների ամբիոն, ԵՊԼՀ

АНАИТ МКРЯН – преподаватель кафедры европейских и азиатских языков, ЕГУЯСН

ANAHIT MKRYAN - lecturer, Chair of European and Asian Languages, YSULS

ԱՐԱՄ ՄԿՐՅԱՆ - Կրտսեր գիտաշխատող, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

АРАМ МКРЯН- младший научный сотрудник, Национальная академия наук, РА

ARAM MKRYAN - assistant professor, the National Academy of Sciences of the Republic of Armenia

ԱՆԻ ԶԱՆԻԿՅԱՆ - ք.գ.թ., դոցենտ, համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոն, ԵՊԼՀ

АНИ ДЖАНИКЯН - к.ф.н., доцент каф. мировой литературы и культуры, ЕГУЯСН

ANI DJANIKYAN - Ph.D., Associate Professor, Chair of World Literature and Culture, YSULS

ՔՐԻՍՏԻՆԵ ՍՈԴԻԿՅԱՆ – ք.գ.թ, դոցենտ, անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի վարիչ, ԵՊԼՀ

КРИСТИНЕ СОГИКЯН – к.ф.н., доцент, зав. каф. английской коммуникации и перевода, ЕГУЯСН

KRISTINE SOGHIKYAN – Ph.D., Associate Professor, Head of the Chair of English Communication and Translation, YSULS

ԱՆՆԱ ՇԱՀԲԱԶՅԱՆ – դասախոս, անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոն, ԵՊԼՀ

АННА ШАХБАЗЯН – преподаватель кафедры перевода и коммуникации английского языка, ЕГУЯСН

ANNA SHAHBAZYAN – lecturer, Chair of English Communication and Translation, YSULS

ՆԱՐԻՆԵ ԳԻՇՅԱՆ - դասախոս, անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոն, ԵՊԼՀ

НАРИНЕ ГИШЯН – преподаватель кафедры перевода и коммуникации английского языка, ЕГУЯСН

NARINE GISHYAN – lecturer, Chair of English Communication and Translation, YSULS

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՆՅԱՆ - դասախոս, անգլերենի ամբիոն, Արցախի պետական համալսարան

ЛУСИНЕ ВАНЯН - преподаватель, кафедра английского языка, Арцахский государственный университет

LUSINE VANYAN - lecturer, The English Chair, Artsakh State University

ՎԱՐԵՆ ՎԵԼՅԱՆ – ք.գ.թ., դոցենտ, անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոն, ԵՊԼՀ

КАРЕН ВЕЛЯН - к.ф.н., доцент каф. фонетики и грамматики английского языка, ЕГУЯСН

KAREN VELYAN – Ph.D., Associate Professor, Chair of English Phonetics and Grammar, YSULS

ՍՈՒՍԱՆՆԱ ՏԵՐ-ԱՎԱԳՅԱՆ - անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի հայցորդ, ԵՊԼՀ

СУСАННА ТЕР-АВАГЯН – соискатель кафедры английской лексикологии и стилистики, ЕГУЯСН

SUSANNA TER-AVAGYAN - Post-graduate student, Chair of English Lexicology and Stylistics, YSULS

Համակարգչային ձևավորումը՝

Հասմիկ Փիլավջյանի

Տպաքանակը՝ 200

Հանձնված է տպագրության՝ 22.06.2015

«Լինգվա» հրատարակչություն

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական
համալսարան

Հասցեն՝ Երևան, Թումանյան 42

Հեռ.՝ 53-05-52

Web: <http://www.brusov.am>

E-mail: yslu@brusov.am